Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝* **http://www.armin.am**

*Էլ. փոստ՝* **info@armin.am**

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ

# ՄԵԾ ԵՂԵՌՆ

## ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՑ ԲԱՆԱՎՈՐ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Նվիրվում է Հայոց Մեծ եղեռնի անմեղ զոհերի
80-ամյա հիշատակին

# Զ Ո Ն

**ՄԵՐ ԽՈՐԻՆ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ ԵՆՔ ՀԱՅՏՆՈՒՄ**

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ**

**Ն. Ս. Օ. ՏԵՐ ՏԵՐ ԳԱՐԵԳԻՆ Բ-ին,**

**ՔԱՆԶԻ ԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԱՐԵՃՆՈՐՀ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ**

**ՀՐԱՏԱՐԱԿԵԼՈՎ ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ**

**ԱԿԱՆԱՏԵՍ-ՎԿԱՆԵՐԻ ՀՈՒՇԵՐՆ ՈՒ ԵՐԳԵՐԸ,**

**ՆՈՐՈՎԻ ՈԳԵԿՈՉԵՑ ԱՅԴ ՄԵԾԱԳՈՒՅՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ**

**ԱՆՄԵՂ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻՆ,**

**ՈՐՈՆՑ ՍՈՒՐԲ ՀԻՇԱՏԱԿԻՆ Է ՆՎԻՐՎՈՒՄ**

**ՄԵՐ ՀԱՄԵՍՏ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ։**

**Վ. Ս.**

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ВЕРЖИНЕ СВАЗЛЯН

# ГЕНОЦИД

## УСТНЫЕ СВИДЕТЕЛЬСТВА ЗАПАДНЫХ АРМЯН

---

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

VERJINÉ SVAZLIAN

# GENOCIDE

## ORAL EVIDENCES OF WESTERN ARMENIANS

---

ACADEMIE NATIONALE DES SCIENCES DE LA
REPUBLIQUE D'ARMENIE
INSTITUT D'ARCHEOLOGIE ET D'ETHNOGRAPHIE

VERJINÉ SVAZLIAN

# GENOCIDE

## TÈMOIGNAGES ORAUX DES ARMENIENS OCCIDENTAUX

ЕРЕВАН—YEREVAN—ÉRÉVAN
1995

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ

# ՄԵԾ ԵՂԵՌՆ

## ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՑ ԲԱՆԱՎՈՐ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ—1995

ԳՄԴ 63.3 (2Հ) 52+82.3 (2Հ)
Ս 850

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ բանասիրական գիտ. դոկտոր **ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝ բանասիրական գիտ. թեկնածուներ՝
**Ռ. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆԸ, Ս. Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆԸ,**
պատմական գիտ. թեկնածու՝ **Լ. Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԸ**

**Սվազլյան Վ. Գ.**
Ս 850 Մեծ եղեռն. *Արևմտահայոց բանավոր վկայություններ /Խմբ.՝ Ս. Հարությունյան։ ՀՀ ԳԱԱ Հնագիտ. և ազգագր. ինս-տ.— Եր.։ ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1995. 224 էջ, 1 մամ. նկ.։*

*Ժողովածուն ընդգրկում է Մեծ եղեռնից վերապրած, Կիլիկիայի և արևմտահայ տարբեր շրջաններից տարագրված ու Հայաստանում և Սփյուռքում բնակություն հաստատած արևմտահայերից գրի առնված Հայոց ցեղասպանության վերաբերյալ ժողովրդական բանավոր զրույցները, հուշերն ու երգերը։ Բարբառային ու թուրքալեզու բնագրերին կցված են գրական լեզվով թարգմանություններ։ Պատմաբանագիտական ակնարկում պատմական ու ժողովրդագիտական տվյալների հիման վրա ներկայացված են արևմտահայությանը բաժին ընկած ողբերգական կյանքի դրվագները, նրանց ազնիվ ու արդար ոգորումները՝ իրենց մարդկային տարրական՝ ապրելու իրավունքը պաշտպանելու համար։ Ժողովածուն ունի նաև բառարան, ծանոթագրություններ, երգերի նոտագրություններ, բանասացների ու պատմական լուսանկարներ, տեղահանության ու կոտորածների մասին քարտեզներ, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն ամփոփումներ։*

*Նախատեսվում է պատմաբանների, բանասերների, ազգագրագետների և ժողովրդագիտությամբ հետաքրքրվող ընթերցող լայն շրջանների համար։*

Ս 0506020918 / 706(02)—94 Հայտ.

ԳՄԴ 63.3 (2Հ)+82.3 (2Հ)

ISBN 5<8080—0336—9

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1995.

## ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Սույն ժողովածուն ընդգրկում է Մեծ եղեռնից վերապրած սերնդից անմիջականորեն գրի առնված ժողովրդական բանավոր վկայությունները, երգերը, որոնք տասնամյակների ընթացքում, մեծ համբերությամբ ու նվիրվածությամբ, գրի է առել բանասիրական գիտությունների թեկնածու Վերժինե Սվազլյանը:

Ժողովածուն ունի հույժ պատմական, անգամ քաղաքական արժեք ու նշանակություն, մասնավորապես այնտեղ զետեղված Մեծ եղեռնի սահմռկեցուցիչ տեսարանները պատկերող բազմաթիվ հուշապատումներով և դերզորյան տառապանքներն ու ողբերգական մտորումներն արձանագրող ժողովրդական հայերեն ու թուրքալեզու երգերով:

Կատարված է տքնաջան ու շնորհակալ մեծ աշխատանք Մեծ եղեռնից վերապրողների (որոնցից շատերն այսօր արդեն չկան) խամրող հիշողությունից և հավերժ մոռացության վտանգից հայ ժողովրդի արևմտահայ հատվածի ողբերգական ու հերոսական պատմության անզուգական հուշերն ու երգերը փրկելու և անմահացնելու ուղղությամբ:

Այդ նյութերն, իսկապես, պատմական կարևորագույն վավերագրեր են հայոց մեծագույն ողբերգության ցնցող պատկերները ժողովրդական կենդանի լեզվով վերարտադրելու առումով:

Բացի բնագրերից ժողովածուն ունի Պատմաբանասիրական ակնարկ, որտեղ հեղինակն իր գրառած հարուստ ու բազմազան նյութերը հմտորեն զուգակցել է պատմական ստույգ փաստերի հետ և առաջինները դարձրել պատմական ճշմարտությունները հավաստող, խորացնող, մանրամասնող ժողովրդական յուրօրինակ վավերագրեր: Հարկ է նշել, որ հեղինակն առաջին անգամ է գիտական շրջանառության մեջ դնում Մեծ եղեռնի շուրջ հյուսված հիշյալ նյութերը՝ հատկապես ժողովրդական թուրքալեզու երգերը:

Ժողովածուն օժտված է բառարանով, անհրաժեշտ ծանոթագրություններով, երգերի նոտագրություններով, լուսանկարներով և ամենակարևորը՝ թուրքալեզու երգերին ու բարբառային բնագրերին կցված գրառողի կատարած թարգմանություններով, որոնք մեծապես դյուրացնում են նյութերի ընկալումը:

Ականատեսների այդ հուշերն ու մանավանդ թուրքալեզու երգերն ունեն պատմական վավերագրերի արժեք ոչ միայն հայ ժողովրդի ողբերգական այդ շրջանի պատմությունը ճիշտ հասկանալու և ըմբռնելու իմաստով, այլև Հայ Դատի պաշտպանությունն առավել հիմնավորելու և հատկապես թուրք ու թուրքամետ պատմաբաններին հենց թուրքալեզու երգերով ու նրանցում հընչող մեղադրանքներով հակահարված տալու առումով:

Բանասիրության դոկտոր՝

**Սարգիս Հարությունյան**



## ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱՋԼՅԱՆ

Բանահավաք, բանագետ, ժողովրդագետ Վերժինե Սվազլյանը ծնվել է 1934 թ. Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում, գրող-հասարակական գործիչ Գառնիկ Սվազլյանի ընտանիքում: Նախնական կրթությունն ստացել է տեղի հայկական, ապա՝ ֆրանսիական դպրոցներում:

1947 թ. ծնողների հետ հայրենադարձվել է Մայր-Հայաստան:

1956 թ. ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի Հայոց լեզվի և գրականության բաժինը՝ «Գերազանցությամբ»:

1956 թվից, մանկավարժական աշխատանքի հետ զուգընթաց, անձնական նախաձեռնությամբ, անհետ կորստից փրկելու նպատակով, սկսել է գրի առնել Արևմտահայաստանից, Կիլիկիայից և Անատոլիայի հայաբնակ գավառներից բռնագաղթված, տարագիր-հայրենադարձների հաղորդած բանահյուսական բազմազան ստեղծագործություններն ու Մեծ եղեռնից վերապրողների պատմած հարյուրից ավելի հուշերը:

1958 թվից աշխատել է ՀՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտում: 1958—60 թթ. ասպիրանտական ուսումնառության շրջանում եղել է Մ. Աբեղյանի անվան անհատական թոշակառու:

1961 թվից աշխատել է ՀՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հայ ժողովրդական բանահյուսության բաժնում:

1965 թ. պաշտպանել է ազգագրագետ-բանահավաք «Սարգիս Հայկունի. Կյանքն ու գործը» թեմայով թեկնածուական թեզը, որը լույս է տեսել 1973 թ.:

Մասնակցել է «Հայ ժողովրդական հեքիաթներ» գիտական բազմահատորյակի կազմման աշխատանքներին՝ հրատարակության պատրաստելով «Արցախ-Ուտիք» (1973 թ.), «Տարոն-Տուրուբերան» (1984 թ.), «Վան-Վասպուրական» հատորները:

1972—84 թթ. բանահյուսական սկզբնաղբյուրների վավերագրման բաժնում, բանագիտության մեջ կիրառելով քանակական վերլուծման նորագույն մեթոդը, մասնակցել է ինստիտուտի բանահյուսության արխիվի համակարգման աշխատանքներին՝ հրատարակության պատրաստելով «Հայ ժողովրդական խաղիկներ» համահավաք ժողովածուն:

1984 թ. լույս է ընծայել «Մուսա լեռ» բանահյուսական ժողովածուն, որն արժանացել է ՀՀ ԳԱ Նախագահության «Գովեստագրին» և Մուսա լեռան Հայրենակցական Ընդհանուր Միության Նախագահության շնորհած «Պատվավոր մուսալեռցի» ոսկե մեդալին:

1986 թվին նրան շնորհվել է դոցենտի կոչում:

1994 թվին լույս է ընծայել «Կիլիկիա. արևմտահայոց բանավոր ավանդությունը» պատմաբանահյուսական ստվարածավալ ժողովածուն:

Հեղինակ է գիտական բազմաթիվ հոդվածների, որոնք լույս են տեսել Հայրենիքում և Սփյուռքում:

Մասնակցել է հանրապետական ու միջազգային գիտաժողովներին՝ հանդես գալով բանագիտության, ժողովրդագիտության և Հայ Դատին առնչվող թեմաներով:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*Վերջին տարիներին ավելի է մեծացել հետաքրքրությունը հայ ժողովրդի համար ճակատագրական դարձած Մեծ եղեռնի իրադարձությունների նկատմամբ, քանի որ թուրք և թուրքամետ պատմաբանները փորձում են խեղաթյուրել պատմական ստույգ իրողությունները։ Այդ իսկ առումով հրատարակված պաշտոնական փաստաթղթերից բացի, պատմաճանաչողական կարևոր արժեք են ներկայացնում նաև հիշյալ դեպքերի անմիջական տպավորությունների ազդեցության տակ հաղորդված ժողովրդական հուշապատումներն ու պատմական բնույթի երգերը, որոնք տարբեր պատճառներով մեզանում ցարդ գրեթե չեն գրառվել և ուսումնասիրվել։*

*Արևմտահայի արյան կանչով, դեռևս 1950-ական թվականներից, սկզբում անձնական նախաձեռնությամբ, հետագայում նաև՝ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կազմակերպած անհատական գիտարշավների շնորհիվ, գիտական այլ աշխատանքներին զուգընթաց, գրի ենք առել (նաև ձայնագրել) Մեծ եղեռնից վերապրած ականատես-վկաների պատմած հուշերը, պատմական բնույթի զրույցներն ու երգերը[1]։*

*Ժողովրդագիտական այդ նյութերը հաղորդող բանասացներն իրենց պատմական բնօրրանից արտաքսված հայերն են, որոնք 1915 թվականի Մեծ եղեռնի և նրան հաջորդող իրադարձությունների հետևանքով բռնագաղթվել են Արևմտահայաստանից, Կիլիկիայից (1921 թ.) և Անատոլիայի հայաբնակ գավառներից (Իզմիրի աղետ, 1922 թ.)։*

*Պատմական այդ իրադարձությունների հետևանքով արևմտահայության զգալի մասը բնաջնջվել էր, իսկ մազապուրծ փրկվածները՝ սփռվել աշխարհի տարբեր երկրներ՝ ստեղծելով Հայ Սփյուռքը որպես պատմական իրողություն։*

*Այդ ողբերգական տեսարաններին ականատես-վկաներից շատերը Կ. Պոլսից, Հունաստանից, Ֆրանսիայից, Սիրիայից, Լիբանանից, Իրաքից, Եգիպտոսից և այլ երկրներից հետագայում պարբերաբար ներգաղթել են Մայր-Հայաստան և բնակություն հաստատել իրենց երբեմնի բնօրրանների հիշատակները խորհրդանշող, Երևանին մերձակա նորաշեն թաղամասերում և ավաններում (վասպուրականցիները՝ Նոր Այգեստան, մյուսները՝ Նոր Բութանիա, Նոր Արեշ, Նոր Խարբերդ, Նոր Քղի, Նոր Սեբաստիա, Նոր Մալաթիա, Նոր Եդեսիա, Նոր Այնթապ, Նոր Մարաշ, Նոր Հաճըն, Նոր Զեյթուն, Նոր Արաբկիր, Մուսա լեռ, Կիլիկիա...)։*

*Մեծ եղեռնից հրաշքով վերապրած սերնդի շուրջ երկու հարյուր երեսուն ներկայացուցիչներ, տեղի տալով մեր հետևողական հորդորներին, արցունքն աչքերին սկսել են պատմել իրենց տխուր անցյալը, թե ինչպես իրենց աչքերի առաջ թուրքերը գազանաբար հոշոտել են իրենց հայրերին ու մայրերին, պատվազրկել իրենց քույրերին...*

*Մեր գրառած հուշապատումների թիվն անցնում է հարյուրից, սակայն խուսափելով նույնանման դեպքերի անհարկի կրկնություններից, հատորում ներկայացրել ենք սոսկ յոթանասունը։*

*Այդ բազմաթիվ հուշապատումները Մեծ եղեռնի ականատես-վկաների անմիջական տպավորությունների վերհուշերն են, նրանց խոհերն ու մտորումները՝ արևմտահայությանը բաժին ընկած ճակատագրի կենդանի պատկերների ստույգ ու ճըշմարտացի վերարտադրությամբ։*

*Բացի մեզ հաղորդված հուշապատումներից և իրական, պատմական հենք ունեցող զրույցներից, վերապրողներից գրի ենք առել նաև իրենց մտապահած երկու հարյուրից ավելի պատմական բընույթի երգերն ու վիպերգերը, որոնք պատմական ստուգության հետ միասին բնութագրվում են սեղմ պատկերավորությամբ ու մեր միջնադարյան լալյաց երգերը հիշեցնող մեղեդայնությամբ։ Յուրաքանչյուր բանաստեղծական տող կամ բառակապակցություն մի ավարտուն պատկեր է, զանգվածային ողբերգության մի սահմռկեցուցիչ տեսարան, իսկ լալահառաչ կրկներգերը լրացնում են բանաստեղծական պատկերի հուզական-հոգեբանական կողմը։*

---

*1 Սույն ժողովածուի նյութերի բնագրերը, մեր այլ գրառումների հետ միասին, պահվում են ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվում, Վերժինե Սվազլյանի ֆոնդում։*

Ականատես-վկա ժողովրդի ներկայացուցիչների հաղորդած այդ նյութերի մեջ արտացոլված են նրանց ապրած ժամանակաշրջանը, հասարակական-քաղաքական կյանքը, նշանակալից պատմական իրադարձությունները, թուրքական (սուլթանական, երիտթուրքական, քեմալական) ղեկավարների (Սուլթան Համիդ, Թալեաթ, Էնվեր, Ջեմալ փաշաներ, Քեմալ Աթաթուրք) գործադրած դաժանությունները (հարկահավաք, զորահավաք, զինահավաք, բռնագաղթ, ջարդ, կոտորած), նրանց կազմակերպած բռնի տեղահանությունները դեպի ամայի անապատներ (Դեր Զոր, Ռաս էլ Այն, Ռաքքա, Հոմս-Համմա, Սուրուչ...), ինչպես նաև արևմտահայ տարբեր հատվածների մղած արդար ու ազնիվ ոգորումներն ընդդեմ բռնության՝ պաշտպանելու իրենց մարդկային տարրական՝ ապրելու իրավունքը (1915 թ. Վանի հերոսամարտ, Մուշի, Սասունի գոյամարտեր, Մուսա լեռան, Շատախի, Շապին-Գարահիսարի, Ուրֆայի, ավելի ուշ՝ 1920-21 թթ. Այնթապի, Հաճընի հերոսամարտեր), այդ դիմադրողական-ինքնապաշտպանական հերոսամարտերում մարտիրոսացած հերոսները (շապինգարահիսարցի Զորավար Անդրանիկ Օզանյան, վանեցի Արմենակ Եկարյան, սեբաստացի Մուրադ (Համբարձում Պոյաճյան), մուսալեռցի Եսայի Յաղուբյան, ուրֆացի Մկրտիչ Յոթնեղբայրյան, այնթապցի Ադուր Լևոնյան, զեյթունցի Արամ Չոլաքյան, ազգային վրիժառու Սողոմոն Թեհլիրյան) և բազմաթիվ հայտնի ու անհայտ այլ հայորդիներ, որոնք ժողովրդական զանգվածների հետ միաձուլված պայքարել են, խոշտանգվել, նահատակվել, բայց նաև դիմակայել են ու վերապրել...

Դեպքերի ու դեմքերի այս իրարհաջորդ ու անվերջանալի հիշողություններն անընդհատ ուղեկցել են Մեծ եղեռնից վերապրած մեր բանասացներին, որոնց մշտապես հանդիպել ենք ինքնամփոփ ու լուռ՝ իրենց մտորումների մեջ խորասույզ։ Այդ խորհրդավոր լռությունը ևս ունեցել է իր պատճառը, քանի որ տասնամյակներ շարունակ Հայրենիքում տիրող քաղաքական արգելքները թույլ չեն տվել իրենց անցյալի մասին ազատ ու բարձրաձայն պատմել կամ վիպել։ Հետևաբար, այդ կարգի նյութերը մեծ դժվարությամբ ենք հայտնաբերել ու գրառել։

Անցյալում, երբ մեզանում քաղաքական պարտադրանքով արգելված էր ազգային-ազատագրական, հայրենասիրական երգերի կատարումը, մեզ հաջողվել էր գրի առնել ժողովրդի կողմից դեռևս հիշվող, հեղինակային ծագում ունեցող բազմաթիվ երգեր, իրենց մեղեդային ձայնագրություններով, որոնցից, սակայն, ներկա ժողովածուի մեջ ընդգրկել ենք սոսկ ժողովրդական ծագում կամ ժողովրդայնացման (ֆոլկլորիզացիա) ենթարկվածները։ Վերջիններս իրենց ժամանակին հորինվելով՝ ունեցել են լայն տարածում, ապա, անցնելով բերնեբերան, ենթարկվել են ժողովրդական մշակման և ծնունդ տվել նորանոր տարբերակների։

Այդ բնույթի երգերը հորինվել են ոչ միայն հայերեն, այլև՝ թուրքերեն, քանի որ պատմաքաղաքական վերոհիշյալ հանգամանքներում Օսմանյան Թուրքիայում հայերեն խոսելն արգելված է եղել, հետևաբար հայ ժողովուրդն իր վիշտն ու տառապանքն ստիպված արտահայտել է նաև թուրքերեն։

Չբացառելով երկարատև համատեղ կեցության պայմաններում երկու ժողովուրդների հոգևոր մշակույթների ազդեցություններն ու փոխազդեցությունները, հարկ է նշել, որ վկայություններ կան, թե «Հայ բառ արտասանողներու լեզուները կտրած էին, հետևաբար Կիլիկիայի մի շարք քաղաքների (Սիս, Ադանա, Տարսոն, Այնթապ) և անոնց շրջակայքում ապրող հայերը կորուցել էին իրենց մայրենին»[1]։ Եվ կամ՝ «Թուրքերուն հարստահարությունն ու հալածանքն այնքան խիստ եղավ, որ հայախոս Անթեպ եղավ թուրքախոս, Փոքր Ասիո ուրիշ գլխավոր քաղաքներուն պես։ Եվ վերջին կտրուկ սաստիկ հարվածը հայախոսությանը ենիչերիններն էին, որ տվին՝ ծայրատելով հայերեն խոսողներուն լեզուները»[2]։

Մեր գրառած հուշապատումներում ևս բազմաթիվ վկայություններ կան այդ մասին. «...Ժամանակին հայերու լեզուները կտրած էին, որ հայերեն չխոսին,— պատմել է կեսարացի Պայծառ Երկաթը (ծնվ. 1887 թ.),— անոր համար Քյոթահիայի, Բուրսայի, Ադանայի, Կեսարիայի, Էսքիշեհիրի հայերը թուրքերեն կխոսեին»[3]։

Եվ կամ՝ «Արդեն արգելված էր հայերեն խոսիլը և սորվիլը,— պատմել է ադանացի Քեշիշյան Միքայելը (ծնվ. 1904 թ.),— ոչ միայն լեզուն կկտրեին, նաև թևերուն տակ խաշած տաք հավկիթ կդնեին, որ խոստովանվի, թե հայերեն կսորվեցնե ուրիշներուն։ Եթե կխոստովանվեր՝ կտանեին կկախեին կամ՝ կսպանեին»[4]։

Նկատի ունենալով լեզվական ձուլման նախնական մակարդակը ներկայացնող այդ տխուր երևույթի քաղաքական-հասարակական պայմանները, զանազան բարբառներով նյութեր գրի առնելու հետ միասին, մեր ուշադրությունից չեն վրիպել նաև հայության այդ հատվածի բանավոր ավանդության մեջ զգալի տեղ գրավող թուրքալեզու, սակայն բացահայտ հայկական ծագմամբ ժողովրդական երգերը, որոնք թեպետ հորինվել են ոչ կատարյալ թուրքերենի իմացությամբ (հաճախ հիշատակվում են հայերեն բառեր ու արտահայ-

---

1 Գր. Գալուստյան, Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, Նյու Յորք, 1934, էջ 698։

2 Գ. Սարաֆյան, Պատմություն Անթեպի հայոց, Հ. Ա, Լոս Անջելես, 1953, էջ 5։

3 Վերժինե Սվազլյանի ֆոնդ, վավերագիր, 1440։

4 Տե՛ս նույն տեղում, վավ. 1409։

տություններ), սակայն իրենց գաղափարական բովանդակությամբ ունեն պատմաճանաչողական կարևոր արժեք։ Վերջիններս, ինչպես և բարբառային բնագրերը, հատորում ներկայացված են մեր իսկ կատարած զուգահեռ գրական հայերեն բառացի թարգմանություններով՝ նույնանիշ համարակալմամբ։

Հատուկ նպատակադրումով ջանացել ենք ընդգրկել Կիլիկիայի, Արևմտահայաստանի և Անատոլիայի հայաշատ մի շարք գավառներից վերապրող բանասացների, որպեսզի առավել ամբողջական պատկերացում տրվի ողջ արևմտահայության կրած տառապանքների, նրանց հուզաշխարհի և մտորումների մասին։

Գրառումների ընթացքում աշխատել ենք անաղարտորեն հավատարիմ մնալ բանասացների բանավոր խոսքին՝ գրառումները կատարելով բարբառագիտական ընդունված տառադարձությամբ։

Բարբառային նյութերը գրի առնելիս հաշվի ենք առել Կիլիկիայի (Զեյթուն, Ֆրնդրջագ, Հաճըն, Մուսա լեռ, Քեսաբ, Մարաշ, Բեյլան, Այնթապ, Դյորտյոլ, Սիս, Տարսոն, Ադանա, Հասան-Բեյ, Մերսին) արդեն իսկ քայքայվող ու անհետացող բարբառների, ինչպես նաև արևմտահայ որոշ շրջանների (Եդեսիա (Ուրֆա), Տիգրանակերտ, Բիթլիս, Էրզրում, Վան, Խարբերդ, Քղի, Բալու, Մալաթիա, Կեսարիա, Սեբաստիա, Շապին-Գարահիսար, Նիդե, Արաբկիր, Յոզղատ, Կոնիա, Աֆիոն-Գարահիսար, Ադաբազար, Էսքիշեհիր, Բուրսա, Բիլեջիկ, Նիկոմիդիա, Զմյուռնիա, Չանաքկալե, Ռոդոսթո, Կ. Պոլիս) արևմտահայության լեզվական առանձնահատկությունները։

Պատմական բնույթի երգերը հատորում ներկայացված են ժամանակագրական հաջորդականությամբ, իսկ հուշապատումները՝ խմբավորված ըստ բանասացների ծննդավայրերի ու տարիքային առանձնահատկությունների։

Սույն հատորով սերունդներին ավանդվող ժողովրդական երգերն ու հուշերն իրենց պատմաճանաչողական արժեքով դառնում են Հայոց Մեծ եղեռնն ու նրան հաջորդող պատմական իրադարձությունները ժողովրդական պարզ լեզվով լուսաբանող վկայություններ, գեղարվեստական, բայց և հավաստի, առարկայական ու փաստագրական վավերագրեր։

Ահա թե ինչու առանձնապես կարևորվում են Հայոց ցեղասպանության անմեղ նահատակների ու կորցրած Երկրի մասին ժողովրդական խոհերն ու մտորումները սույն հատորով լույս աշխարհ հանելն ու սերունդներին ավանդելը..., քանի որ ականատես-վկա ժողովրդի ներկայացուցիչներն են հաղորդել իրենց տեսածն ու հիշածը՝ յուրովի վերապրելով իրենց ողբերգական անցյալը։ Անցյալ, որը հայ ժողովրդի անցյալն է՝ նրա պատմությունը, իսկ ժողովրդի պատմությունը նրա հավաքական հիշողությունն է, որը եղծել չի՛ լինի։





Ժողովրդագետ Վերժինե Սվազլյանը մուսալեռցի Մարիամ Բաղդիշյանի եղերական պատմածները գրի առնելիս:

**Տասնամյակների ընթացքում բառ առ բառ, պատառիկ առ պատառիկ գրի առնելով ստեղծվել ու ամբողջացվել են սույն ժողովածուի բազմաթիվ նուշարձանները:**

**Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում Մեծ եղեռնից հրաշքով վերապրած այն սերունդներին, որոնք հերոսաբար դիմագրավելով կյանքի դաժան պայմաններին, իրենց հիշողության խորքում անթեղած պահել, պահպանել ու մեզ են հաղորդել իրենց տեսածն ու լսածը, իսպառ կորստից փրկելով արևմտահայոց հոգևոր մշակույթի բազմաթիվ նշխարները, որպեսզի քոնը քեզ նվիրեմ, իմ Հայ ժողովուրդ:**

**Վ. Ս.**

# ՊԱՏՄԱԲԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

*Սուլթան Համիդի իշխանության տապալումից և 1908 թ. Սահմանադրության ընդունումից հետո[1] կառավարության գլուխն անցած երիտթուրքերը, որդեգրելով համիդյան ջարդարարական քաղաքականությունը և դավանելով պանթուրքական ու պանիսլամական գաղափարախոսությունը, ձգտում էին ոչ միայն պահպանել Օսմանյան կայսրությունը, այլև բռնությամբ ոչնչացնել կամ ձուլել, թուրքացնել հայերին և քրիստոնյա մյուս հպատակ ժողովուրդներին, ստեղծել համաթուրանական տերություն՝ Միջերկրականից մինչև Արալյան ծով, որի մեջ պիտի մտնեին բոլոր մահմեդականները։*

*Թուրքական Սահմանադրության հռչակման մեկ տարին դեռ չէր բոլորել, երբ համիդյան կոտորածներից զերծ մնացած Ադանան ու նրա շրջակա հայաշատ գյուղերը իթթիհատականների ատելության թիրախ դարձան։*

*1909 թ. Ս. Զատկի շաբաթը արյան ծարավ ամբոխը հարձակվում է Ադանայի հայկական թաղամասերի և շրջակա գյուղերի վրա, կողոպտում բոլոր խանութները, կոտորում անզեն ու անպաշտպան հայերին՝ առանց խնայելու կանանց ու երեխաներին.*

**Կոտորածն անգութ հայերը քող լաճ.**
**Անապատ դարձավ շէնք Ադանան...**[2]

*Ադանայի կոտորածը կանխամտածված բնույթ էր կրում։ Այդ բացահայտվում է Ներքին գործերի խորհրդական Ադիլ բեյի հեռագրից, որն ուղղված էր Կիլիկիայի շրջանի բոլոր թուրք պաշտոնյաներին, որտեղ ասվում էր. «Մեծագույն ուշադրությամբ հոգ տարվի, որ վնաս չի հասնի օտար կրոնային հաստատությանց և հյուպատոսարաններուն»[3]։*

*Պատմաքաղաքական այդ դեպքերը կիլիկիացիների հիշողության մեջ մնացել են որպես «Ղըյմա (ջարդված) Ադանա»[4]։*

*Ադանայի կոտորածի անմիջական տպավորության տակ է ստեղծվել արտահայտչական խորությամբ ու գեղարվեստական պատկերավորությամբ հագեցած հետևյալ եղերերգը.*

*Հէ՜յ, չամլա՜ր, չամլա՜ր, ալ-աչըխ, չամլա՜ր,*
*Հէր գöնէշ վուրունջա՝ սաքըզ դամլար,*
*Ադանա ըրմաղը լէշ իլան քանլար.*
*Իշդէ գէլդիմ սանա, ղըյմա՜ Ադանա,*
*Իշդէ գöրդիմ սիզէ, ղըյմա՜ չօջուքլար*[5]*։*

**Հէ՜յ, մայրինե՜ր, մայրինե՜ր, գույն-գույն**
**մայրինե՜ր,**
**Ամեն արև դիպչելիս՝ խեժը ծորում է կաթ-կաթ,**
**Ադանայի գետակում՝ արյուն և դիակ.**
**Ահա քեզ եկա, ջարդվա՜ծ Ադանա,**
**Ահա ձեզ տեսա, մանուկնե՜ր ջարդված**[5]**։**

*Ադանայի կոտորածին զոհ են դառնում շուրջ երեսուն հազար հայեր։ Ավերվում ու հրկիզվում են տասնյակ հայաբնակ քաղաքներ ու գյուղեր։ Իսկ Մուսա լեռը, Դյորտյոլը, Հաճընը, Սիսը, Զեյթունը, Շեյխ-Մուրադը, Ֆընդըջագը և մի շարք այլ բնակավայրեր իրենց հերոսական ինքնապաշտպանությամբ կասեցնում են տասնյակ հազարավոր թուրքերի հարձակումը և փրկվում ջարդերից։*

*Ըստ էության այդ Մեծ եղեռնի սկիզբն էր, երբ երիտթուրքերը տենդորեն նախապատրաստվում էին հիմնովին բնաջնջել հայ ժողովրդին՝ սպասելով հարմար առիթի։ Այդ առիթն ստեղծվեց, երբ բռնկվեց Առաջին համաշխարհային պատերազմը։ Թուրքիան պատերազմի մեջ մտավ զավթողական նպատակներով և հայերի բնաջնջումն իրականացնելու իր հրեշային ծրագրով։ Դեռևս 1915 թ. ապրիլի 15-ին թուրքական կառավարության Ներքին*

---

1 *Երիտթուրքերը շուտով հրաժարվեցին իրենց խոստումներից և իրենց հռչակած Սահմանադրության «Արդարություն, ազատություն, ազգերի հավասարություն» կարգախոսներից։*

2 *Զեյթունցի պատմավիպասան Սմբատ Բյուրատի բանաստեղծության ժողովրդականացած տարբերակը. տե՛ս* Վերժինե Սվազլյանի ֆոնդ *(այսուհետև՝ կնշվի միայն վավերագրի թիվը), վավ. 447։*

3 Մ. Ճիզմեճյան, *Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցությանց 1890—1925, Ֆրեզնո, 1930, էջ 174։*

4 *Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս ադանացի Միքայել Քեշիշյանի պատմած հուշը, վավ. 1409։*

5 *Վավ. 446։*

գործերի նախարար Թալեաթ փաշայի, ռազմական նախարար Էնվեր փաշայի և Իթթիհատի գլխավոր քարտուղար ու լուսավորության նախարար դոկտ. Նազըմի ստորագրությամբ գաղտնի հրաման է ուղարկվում իշխանություններին՝ հայերի տեղահանության ու բնաջնջման վերաբերյալ[6]։ Եվ Թալեաթ փաշան կատաղի ատելությամբ ազդարարում է. «Պետք է մաքրել հայերի հաշիվը»՝ խոստանալով ոչինչ չխնայել այդ նպատակի համար[7]։

Իթթիհատի գործադիր կոմիտեի նիստերից մեկում Բեհաեդդին Շաքիրը հայտարարում է, որ անհրաժեշտ է անմիջապես սկսել և վերջացնել հայերի տեղահանությունը և այդ ընթացքում կոտորել ժողովրդին. «Պատերազմի մեջ ենք,— ասել է նա,— Եվրոպայի և մեծ պետությունների միջամտության վախ չկա, աշխարհի մամուլն ալ չի կրնար բողոք բարձրացնել։ Եթե ըլլա իսկ, ոևէ արդյունք չունենար, առաջիկային խնդիրը կատարված իրողություն մը կդառնա»[8]։

Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան հատուկ հրաման էր արձակել. «Թուրքական հողի վրա հայերի ապրելու և աշխատելու իրավունքը լիովին վերացված է։ Դրան համապատասխան կառավարությունը իր վրա է վերցնում ամբողջ պատասխանատվությունը և հրամայում է չխնայել անգամ օրորոցի երեխաներին...»[9]։

Իթթիհատի գործադիր կոմիտեն նախատեսում էր այդ տեղահանությունը և կոտորածը կատարել ոչ թե բանակի և ոստիկանության միջոցով, այլ՝ բանտից ազատելով ոճրագործներին, մարդասպաններին և նրանց հանձնելով այդ գործը։

Պատմաքաղաքական այս հանգամանքներում Թուրքիայում ապրող քրիստոնյա ազգերի, այդ թվում նաև հայերի համար մեծագույն չարիք էր դարձել սեֆերբերլիքը (ընդհանուր զորակոչ)։ 20—45 տարեկան տղամարդկանց, զորահավաքի անվան տակ, ներգրավում էին աշխատանքային գումարտակների մեջ և, ըստ պատերազմական նախարար Էնվեր փաշայի հատուկ հրահանգի, աչքից հեռու, ծածուկ վայրերում՝ սպանում։

Ահա թե ինչու թուրքական բանակին բռնի զորակոչված, վեսիկա (վկայագիր) ստացած հայ երիտասարդը նախազգում էր, որ այդ «մահվան ճամփա» է.

*Անա՜, օյանդըր բէնի, գիդէլիմ Թաալիմէ,*
*Այնալը մարթինը ալայըմ էլիմէ,*

6 Տե՛ս Ջ. Կիրակոսյան, *Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը*, Երևան, 1965, էջ 244։
7 Ա. Անտոնյան, *Մեծ ոճիրը*, Բոսթըն, 1921, էջ 232։
8 *Տեր Զոր*, Փարիզ, 1955, էջ 258։
9 Մ. Գ. Ներսիսյան, *Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու)*, Երևան, 1991, էջ 564—565։

*Բունա օլում յօլը դէրլէր,*
*Ալլահ սաքլասըն,*
*Էրմէնիլէր չօք դըր դէրլէր,*
*Ալլահ քուրթարսըն*[10]։

Մա՜յր, արթնացրու ինձ, գնամ վարժանքի,
Հայելիով հրացան վերցնեմ իմ ձեռքին,
Սրան մահվան ճամփա կասեն,
Աստված պահպանի,
Հայերն այնտեղ շատ ու շատ են.
Աստված քող փրկի[10]:

Եվ նա հանգում է ճիշտ եզրակացության.

*Թուրքի բանակ երթալու եմ,*
*Հրացան վերցնելու եմ,*
*Ես ի՞նչ ընեմ Տաճկաստան.*
*Ահա կերթամ Հայաստան*[11]։

Թուրքական զորահավաքն ուղեկցվում էր համատարած շուրջկալներով, որոնց ընթացքում, «զենք» հավաքելու պատրվակի տակ, ավերում էին հայերի տները, կողոպտում նրանց ունեցվածքը, ձերբակալում ու սպանում շատերին։ Արևմտահայության մեջ տարածված թուրքախառն հետևյալ երգի մեջ թուրք զինվորական պաշտոնյան հարցնում է հայ երիտասարդին.

*— Օլան գյավո՛ւր, դօղրու սօյլէ,*
*Սէնին մարթին վարըմը՞չ։*

— Չե՛յ, գյավուր, ճիշտն ասա,
Քեզ մոտ հրացան կա՞:

Հայ երիտասարդը ժխտում է՝ այն համարելով զրպարտություն.

*— Հայըր էֆէնդիմ, իֆդիրա՜ դըր,*
*Բիլմէ՛մ, գօրմէդի՛մ, բիլմէ՛մ, գօրմէդի՛մ։*

— Հարգարժան տեր, հերյուրա՜նք է.
Չգիտե՛մ, չե՛մ տեսել, չգիտե՛մ, չե՛մ տեսել:

*Բայց հետո՝ ծածուկ, ավելացնում.*

*Պատեն կախված է, չե՛մ ըսեր,*
*Հայոց ազգը չե՛մ մատներ*[12]։

Զորահավաքին ու զինահավաքին հաջորդում է հայ մտավորականների ձերբակալությունը. 1915 թ. ապրիլի 24-ին, շաբաթ կեսգիշերին, Կ. Պոլսում

10 Նույն. 424։
11 Նույն. 423։
12 Նույն. 437։

ապրող 270 երևելի դեմքեր բռնությամբ տարվում են ոստիկանատուն, որոնք հաջորդ օրն իսկ աքսորվում են։ Դեպի Ջանգըրըի և Այաշի անապատներն են քշվում օսմանյան խորհրդարանի անդամ, իրավաբան-գրող Գրիգոր Զոհրապը, բանաստեղծ Դանիել Վարուժանը, Սիամանթոն, բժիշկ-գրող Ռուբեն Սևակը, Նազարեթ Տաղավարյանը, զեյթունցի պատմավիպագիր Սմբատ Բյուրատը, մեծ երգահան Կոմիտասը և շատ ու շատ հայտնի դեմքեր Սվազից, Դիարբեքիրից, Մարզվանից, Էրզրումից, Կեսարիայից, Իզմիրից և այլ հայաբնակ վայրերից։

Ամենուրեք փակվում են հայկական դպրոցներն ու վարժարանները.

*Դպրոցը մտան, վարժուհուն բռնեցին,*
*Վա՜յ, աման,*
*Բերանը բացեցին, լեզուն կտրեցին,*
*Ա՜խ, աման[13]։*

Քանի որ վարժուհին հանդգնել էր հայ մանուկներին հայերեն սովորեցնել։

Հայկական ուսումնական օջախների հետ միասին ավերվում են նաև հայկական եկեղեցիները։ Կ. Պոլսի հայոց պատրիարքությունը միացվում է Սիսի կաթողիկոսությանը, և Թուրքիայի հայության հոգևոր պետ է ճանաչվում Սահակ Բ կաթողիկոս Խապայանը։

Ռուսական հետախուզությունը 1915 թ. մարտի 15-ին և ապրիլի 3-ին Թուրքիայի վերաբերյալ հաղորդումների մեջ նշել է, որ ամբողջ երկրում տեղի են ունենում հայերի ձերբակալություններ, սիստեմատիկ կոտորածներ՝ Էրզրումում, Դյորտյոլում, Զեյթունում և շրջակայքում, արյունալի ընդհարումներ՝ Բիթլիսում, Վանում, Մուշում։ Բռնություններ, թալան, սպանություններ՝ Ակնում և ամբողջ Փոքր Հայքում, ժողովրդի տնտեսական քայքայում, ընդհանուր կոտորած...

Պատերազմական գործողություններին առնչվող Վանի վիլայեթում, հակառակ քաջարի վանեցիների կազմակերպած մեկամսյա հերոսական ինքնապաշտպանության, թուրքերը հասցրել էին այն ոչ միայն ճնշել, այլև տեղում բնաջնջել հազարավոր հայերի։ Եվ երբ ռուսական զորքերը մտնում են Վան, նրանց հետևից նաև հայ գրողներ Հովհաննես Թումանյանն ու Ալեքսանդր Շիրվանզադեն, ականատես են դառնում սահմռկեցուցիչ տեսարանների. «Որտեղ հասցրել են կոտորել են հայերին,—գրել է Հովհ. Թումանյանն իր հուշերում,— գլխավորապես՝ տղամարդկանց, ու հետները տարել են գեղեցիկ կանանց և եթե ժամանակ են ունեցել, ռուսական բանակի և հայ կամավորների սարսափը շատ չի մոտ եղել, բարբարոսական զվարճություններ են հորինել. խաչել են, կենդանի մարդկանց զանազան մասերը կտրատել են, զանազան կերպ դասավորել, խաղեր են արել՝ մինչև կեսը դրել են պղնձի մեջ ու կեսից ներքև եփել, որ մյուս կեսը՝ կենդանի տեսնի ու զգա...։ Շիկացած երկաթներով կտրել են մարմնի զանազան տեղերը և կրակի վրա խորովել, կենդա՜նի խորովել են։ Ծնողների առաջ երեխաներին են կոտորել, երեխաների առաջ՝ ծնողներին»[14]։

Եվ երբ ռուսական զորքերը նահանջում են, նրանց հետևից Արևելահայաստան է գաղթում նաև ինքնապաշտպանական մարտերում հերոսաբար մարտնչած Վասպուրականի և Սասունի հայությունը.

*Վան փոքրիկ քաղաք գավառակներով,*
*Լցվան դիակներ հարյուր հազարով,*
*Ներկվեցավ դաշտը կարմիր արյունով.*
*Ջայն տվին ամպեր, երկինք ու աստղեր.*
*Այնպես կգոռան, կհրամայեն,*
*Որ Եվրոպան ու Ամերիկան լսեն[15]։*

Սակայն ո՛չ Եվրոպան, ո՛չ Ամերիկան չմիջամըտեցին. միայն ազգային հերոսներն էին սատար կանգնում անօգնական ժողովրդին, իսկ նրանց թիվը սակավ էր, այնինչ թշնամու ուժերը՝ անթիվ, անհամար.

*Սասուն գավառ անտառներով,*
*Պարսպապատ բարձր լեռներով,*
*Դեմ կանգնեց միշտ թուրք զորքին.*
*Սասուն բուրե տաք արյան հոտ[16]։*

«Տաք արյան հոտ էր բուրում» նաև հերոսական Շապին-Գարահիսարում, Շատախում, Կարինում, Պոնտոսում, Մուշում, Սվազում, Խարբերդում, Մալաթիայում, Դիարբեքիրում, Արևմտյան և Կենտրոնական Անատոլիայի հայաբնակ վայրերում՝ Իզմիթում, Բուրսայում, Անկարայում, Կոնիայում և այլուր։ Աննկարագրելի դաժանությամբ ոչնչացնում էին բոլորին՝ չխնայելով նույնիսկ մանուկներին։

Ահավոր մղձավանջ ապրեց նաև Կիլիկիայի հայությունը։ Հայաշատ Կիլիկիայով էր անցնում բացառիկ կարևորություն ներկայացնող Բաղդադի երկաթուղին։ Այդ հանգամանքը մտահոգում էր Թուրքիայի կառավարությանը, քանի որ Կիլիկիայի աշխատասեր ու գործունյա հայությունն իր բարգավաճ վիճակով կարող էր տիրապետող դառնալ

13 Վալ. 448։

14 Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1959, էջ 212—213։

15 Տե՛ս Վ. Սվազլյան, Մեծ եղեռնի իրադարձություններն արտացոլող ժողովրդական երգերը, «Նորք», Երևան, 1990, № 12, էջ 127։

16 Նույն տեղում, էջ 128։

թուրքական տնտեսության մեջ։ Լեռնային Կիլիկիայում Հաճընից, Զեյթունից մինչև Դյորտյոլ սփռված էին հայկական գյուղերն ու ավանները, որոնց բնակիչները թեև զբաղվում էին մետաքսագործությամբ, ջուլհակությամբ, զորգագործությամբ և այլ տոհմիկ արհեստներով, սակայն նոր սերունդը բավական լուսավորյալ էր այնտեղ գործող հայ և օտար դպրոցների ու վարժարանների շնորհիվ, որոնք կարևոր դեր էին խաղացել նրանց հոգեգիտակցական աշխարհի ձևավորման վրա։ Բացի այդ, ռուս-թուրքական պատերազմից հետո խոստացված, բայց չիրականացած «բարեփոխումների» հետ կապված, Թուրքիայի շատ գավառներում ծայր առած բռնությունների ու կոտորածները դեռևս իսպառ չէին բնաջնջել ի բնե ազատատենչ կիլիկիացիներին, որոնք առիթ էին փնտրում անկախանալ։ Կիլիկիայի արծվաբույն Զեյթունն արդեն վաղուց թուրքական բռնակալության զայրույթի կիզակետն էր։ Հետևաբար ժամանակն էր հին հաշիվները մաքրել նաև համարձակ զեյթունցիների հետ։

Զեյթունցիները, որ անցյալի ազգային-ազատագրական պայքարի փառապանծ ավանդույթներ ունեին, կարող էին այս անգամ ևս անձնվեր պայքարի դուրս գալ, բայց դրան խանգարում են Կիլիկիայի կաթողիկոս Սահակ Խապայանն ու հայ երևելիները, որոնք, խաբվելով թուրքական կառավարության կեղծ խոստումներից, «հնազանդության» կոչ են անում, պատճառաբանելով, որ «Փոքր շարժում մը կրնա վտանգել Թուրքիո նահանգներու ամբողջ հայությանը»։ Վերևից պարտադրված այս «անգործնականությունը» ողբերգական տողերով է նկարագրված «Կաթօղիկօսդան գէլդի քարա խաբարը» (Կաթողիկոսից եկավ սև լուրը, այսինքն՝ զենքի չդիմելու լուրը.—Վ. Ս.) ծավալուն վիպերգում[17]։

Արդեն թուրքական կառավարությունը, ինչպես այլ վայրերում, այստեղ ևս հավաքել էր հայերի զենքերը, երիտասարդներին զորակոչել թուրքական բանակ, բայց նրանցից շատերը կարողացել էին բանակից փախչել և թաքնվել Զեյթունում։ Խուրշիդ փաշան իր երեք հազար զորքով գալիս պահանջում է դասալիքներին, որոնք ապաստանել էին Բերզնկա լեռան վրա կառուցված հինավուրց Ս. Աստվածածնի վանքում։ 1915 թ. մարտի 25-ին թշնամին սկսում է գնդակոծել վանքը։ Զեյթունի ինքնապաշտպանները, Փանոս Չագրյանի գլխավորությամբ, պատասխանում են թշնամուն՝ խնայելով իրենց սահմանափակ փամփուշտները.

Չախըր օղլու Փանօս աղամ դէր քի.
— Բու իշ բիզէ գ̈ուջ օլդու,
Դուշմանըն էլինդէ ալթունըմըզ թ̈ուջ օլդու,
Աչըլմադան ս̈օլդ̈ու գ̈ուլը Զէյթունը[18]։

**Պարոն Չագրյան Փանոսն ասաց.**
**— Այս գործն արդեն դժվարացավ,**
**Մեր ոսկին թշնամու ձեռքին անագ դարձավ,**
**Չբացված թառամեց վարդը Զեյթունի[18]։**

«...Վանքը Զեյթունի ճիշտ դիմացն էր,— մեզ պատմել է ականատես Կ. Թոզլյանը (ծնվ. 1903 թ.),— մենք՝ զեյթունցիներս, կանգնած սեյիր կընեինք։ Մեյ մըն ալ քանի մը ասկյարներ թենեքեով գազյաղը տարին, որ վանքը այրեն։ Ամմա էշխիները վանքին մեջեն անոնց սպանեցին...»[19]։

Տասներկու ժամ տևող այդ կռվից հետո, զեյթունցի երիտասարդները գիշերով, վանքի ետևի պատուհաններից դուրս թռչելով, բարձրանում են՝ լեռ[20]։

Հաջորդ օրը թուրքական զորքերը դարձյալ են հարձակվում վանքի վրա, կարծելով, որ ապըստամբները դեռ այնտեղ են, հրկիզում են վանքը։

Ապրիլի 9-ին Զեյթունի երևելիները տարվում են զորանոց, ապա՝ նաև նրանց ընտանիքները, որոնց բոլորին քշում են դեպի անծանոթ վայրեր։ Սրանք առաջին տարագրվողներն էին։ Սկսվում է Զեյթունի բռնագաղթը։ Նախ դատարկվում է վանքի թաղը, հետո՝ Զեյթունի շրջակա գյուղերը։ Այնուհետև ավերվում է արծվաբույն Զեյթունը...

Մերձավոր արևելքի միսիոներների նախագահ Յոհան Լեփսիուսը, «Հայաստանի ջարդերը» գաղտնի տեղեկագրի մեջ, անդրադառնալով Զեյթունի տեղահանությանը, նշում է. «...Քիչ ատենեն տեղի ունեցավ ամբողջ Զեյթունի հայ բնակչության տարագրությունը՝ իրարու ետևե շատ մը կարավաններով։ Շուրջ 20 հազար հոգի էին անոնք։ Քաղաքը չորս թաղեր ուներ։ Բնակիչները տարվեցին՝ մեկը մյուսի ետևեն, շատ անգամ կիները և մանուկներն այրերեն զատված։ Յուրաքանչյուր արհեստե միայն մեյ մեկ հոգի ըլլալով միայն վեց հայեր կրցան մնալ։ Տարագրությունը շաբաթներ տևեց։ Մայիսի երկրորդ կեսին Զեյթունն ամբողջովին պարպված էր։ Զեյթունի բնակիչներեն 6—8 հազար հոգի, Կոնիայի և Էրեյլիի մեջտեղ, Քարափունարի և Սյուլեյմանիեի ճախճախուտ մարզերը ղրկվեցան

17 Վավ. 406։

18 Վավ. 398։

19 Վավ. 1393։

20 Վանքի կռվողներից վաթսուն կտրիճներ, մահու կենաց կռիվ մղելով, օգնության են հասնում Զեյթունի մոտակա Ֆրնդըջագցի իրենց եղբայրներին, որոնց ևս թշնամին սպառնում էր ոչնչացնել։ Ինն օր տևող այդ հերոսամարտում թըշնամին մի քանի հարյուր զոհեր է տալիս։ Հայերի փամփուշտներն սպառվում են։ Նրանք սկսում են կռվել քարերով։ Այդ մարտերում զոհվում է օգնության հասած քսանվեց զեյթունցի, փրկվում են մի քանիսը, այդ թվում՝ Զեյթունի անվանի հերոս Արամ Չոլաքյանն իր զինակիցներով։

և 15—16 հազար հոգի՝ դեպի Դեր Զոր, Եփրատի վրա, Միջագետքի տափաստանը։ Անվերջանալի կարավաններն անցան Մարաշեն, Ադանայեն և Հալեպեն։ Անունդն անբավարար էր, բան մը չեղավ զանոնք տեղ մը հաստատելու համար կամ նույնիսկ իրենք իրենց տարագրության վախճանին հասցնելու համար...»[21]։

Սկսվում է Կիլիկիայի հայության բնաջնջումն ու կոտորածը։ Մեկը մյուսի ետևից դատարկվում են Մարաշը, Այնթապը, Սիսը, Տարսոնը, Մերսինը, Յարփուզը, Ալբիստանը, Ադանան, Հաճընը, Անտիոքը, Իսկենդերունը, Քեսաբը, Բեյլանը։ Թուրքական բռնակալության կազմակերպած ցեղասպանությունը մի քանի ամսվա ընթացքում ընդգրկում է Օսմանյան կայսրության գրեթե բոլոր հայաբնակ վայրերը՝ Մուշ, Կարին, Պոնտոս, Սվազ, Շապին-Գարահիսար, Խարբերդ, Մալաթիա, Դիարբեքիր, Արևմտյան ու Կենտրոնական Անատոլիայի հայաբնակ վայրեր՝ Իզմիթ, Բուրսա, Անկարա, Կոնիա՝ հասնելով մինչև Ջանաքկալե, Ռոդոսթո և այլուր[22]։

Անզեն ու անղեկ մնացած անօգնական հայերը, թուրքական զաբիթների մտրակների ու սվինների հարվածների ներքո, արցունքն աչքերին, ծարավ ու նոթի քշվում էին իրենց հայրենի շեն օջախներից։ «Հայերի բնաջնջումը լոկ ննենգամտորեն քողարկված մահվան դատավճիռ էր»[23],— գրել է ֆրանսիացի հրապարակախոս Ռընե Պինոն։ Տարագրության ճամփաներին անխիղճ ոստիկաններն ու զինվորական համազգեստ հագած հանցագործ մարդասպանները կողոպտում, թալանում էին բոլորին, առևանգում, պատվազրկում կանանց ու աղջիկներին։

Հայերի բնաջնջումն իրականացվում էր թե՛ տեղերում և թե՛ աքսորավայրերում՝ Միջագետքի անծայրածիր անապատներում, հատկապես Ռաքքայում, Հավրանում, Ռաս էլ Այնում և Դեր Զորում.

Բլբուլն ալ կկանչե. գարո՜ւն է, գարո՜ւն,
Մի բանար յարանիս. խորո՜ւն է, խորո՜ւն,
Ամա՜ն, ողորմա՜ծ Տեր, աս ի՞նչ Դեր Զոր է.
Լալեն աչվընիս կապեր է փերդե[24]։

21 Գր. Գալուստյան, Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, Նյու Յորք, 1934, էջ 178։

22 Այդ և այլ բնակավայրերից հրաշքով վերապրողներից մեր գրառած բազմաթիվ ողբերգական հուշապատումներից յոթանասունը տե՛ս սույն ժողովածուի III բաժնում։

23 R. Pinon, La suppression des Armeniens Méthode allemande-travail turc, Paris, 1916, p. 27:

24 Վավ. 451։

25 Այդ մասին նաև տե՛ս Վ. Սվազլյան, Մեծ եղեռնի իրադարձությունների արտացոլող թրքալեզու երգերը. «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1987, № 5, էջ 38—47։

Եվ քանի որ հայերեն խոսելն արգելված էր. նրանք ստիպված իրենց վիշտն ու տառապանքը մեծ մասամբ արտահայտել են թշնամու լեզվով[25].

Դէր Զօր չօլընա բիւրիթդի դուման,
Ամանը՜մ, յամա՜ն, հալըմըզ յաման,
Սարախդան քալքդըմ, գիւնէշ փառլըյօր,
Չէթէլէր օթուրմուշ սիլահ յաղլըյօր,
Էրմէնիա բաքդըմ՝ յամա՜ն աղլըյօր,
Դինինըն ուղրընա öլէն էրմէնի[26]։

Մշուշն է պատել Դեր Զորի անապատին,
Ավա՜ղ, ավա՜ղ, մեր վիճակն է ողբալի,
Առավոտյան արթնացա, արևն էր փայլում,
Չեթեները նստած զենքերն են յուղում,
Հայերին տեսա սաստի՜կ էին լաց լինում,
Հանուն հավատի հայերն են զոհվում[26]։

Քրիստոսի հարության տոնով սկսվում են հայերի աննկարագրելի տառապանքներն ու նրանց նահատակությունը.

Զատիկ-կիրակի չաղըր սöքդիւլէր,
Բիւթիւն էրմէնիլէրի չöլա դöքդիւլէր,
Քէչի գիբի էրմէնիլէրի քէսդիլէր,
Դինինըն ուղրընա öլէն էրմէնի[27]։

Զատիկ-կիրակի վրաններ քանդեցին,
Ողջ հայությանն անապատ քշեցին,
Այծերի պես հայերին մորթեցին,
Հայերն են զոհվում հանուն հավատի[27]։

Եվ «հանուն հավատքի զոհվող» հայերի դիակները սփռված էին ամենուրեք.

Դէր Զօր դէզիքլէրի բöյիւգ քասաբա,
Քէսիլէն էրմէնի գէլմէզ հէսաբա,
Օսմանլը էֆրադը դöնմիշ ղասաբա,
Դինինըն ուղրընա öլէն էրմէնի[28]։

Դեր Զոր կոչվածն էր մի մեծ տեղավայր,
Մորթված հայերին էլ հաշիվ չկար,
Օսմանցի մեծերը մսագործ դարձան,
Հայերն են զոհվում հավատի համար[28]։

Անհաշիվ էին ոչ միայն «մորթված հայերը», այլև հիվանդներն ու մահամերձները, քանի որ մոլեգնում էր նաև տիֆի համաճարակը.

26 Վավ. 481։

27 Վավ. 473։

28 Վավ. 460։

*Դէր Զօր չöլընդա բիր սրա միշմիշ,*
*Էրմէնի մուհաջըրը Թիֆօյա դöւշմիշ,*
*Ամանը՜մ, յամա՜ն, հալըմըզ յաման,*
*Դէր Զօր չöլընդա քալդըղըմ զաման*[29]։

**Դեր Զորի անապատում մի շարք ծիրանի,**
**Հայ գաղթականները վարակվել են տիֆ,**
**Ավա՜ղ, ավա՜ղ, ողբալի է մեր վիճակը,**
**Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը**[29]։

*Դեր Զորի անապատը դարձել էր կենդանի գերեզմանոց.*

*Դէր Զօրըն իչինդէ նանէլէր բիթէր,*
*Öլöւշլէրի քօքուսը դöւնյայա յէթէր,*
*Բու մուհաջըրլըք öլöւմդէն բէթէր,*
*Դինինըն ուղրընա öլէն էրմէնի*[30]։

**Դեր Զորի անապատում անանուխն է բուսել,**
**Դիակների նեխահոտն աշխարհն է բռնել,**
**Այս աքսորը մեզ մահից էլ վատ է,**
**Հանուն հավատքի զոհվում են հայեր**[30]։

*Ու միմյանց են հաջորդում մեկը մյուսից սահմռկեցուցիչ տեսարանները, իսկ հայ ժողովուրդըն իր տառապանքի մեջ մենակ էր ու անօգնական.*

*Դէր Զօր չöլէրինդէ յարալը չօ՜ք դըր,*
*Գէ՛լմէ, դօքդօ՜ր, գէ՛լմէ. չարասը յօք դըր,*
*Ալլահդան բաշխա քիմսիմիզ յօք դըր,*
*Դինինըն ուղրընա öլէն էրմէնի*[31]։

**Դեր Զորի անապատում վիրավոր շա՜տ կա,**
**Մի՛ գա, բժի՜շկ, մի՛ գա. մեկ է ճարը չկա,**
**Աստծուց բացի էլ ոչ ոք չկա,**
**Հայերն են զոհվում հավատքի համար**[31]։

*Եվ մահվան ճամփան անցնող ժողովուրդն իր ցասումն անեծքով է բանաձևել.*

*Քöռ օլասըն սէն, Էնվէ՛ր փաշա,*
*Էրմէնի ջահէլ քալմադը...*[32]

**Կուրանաս դու, Էնվե՛ր փաշա,**
**Հայ երիտասարդ էլ չմնաց...**[32]։

*Եվ կամ՝*

*Շու սöւրգöւնլըք իչար էդէն*
*Ջէհէնէմ յօլընա ղուրբան օլասըն*[33]։

**Այս աքսորը ճնարողը**
**Դժոխքի ճամփին թող զոհվի**[33]։

[29] Վավ. 466։
[30] Վավ. 468։
[31] Վավ. 496։
[32] Վավ. 531։
[33] Վավ. 519։

*Առանձնապես ծանր է եղել կողոպտված, որդեկորույս մայրերի վիճակը։ Ապրելու տարրական պայմաններից զրկված մայրերն իրենց ունեցվածքը թուրքական կառավարության ու զինված ավազակներին թողնելուց հետո, զգալով իրենց մոտալուտ վախճանը, իրենց սիրասուն զավակներին պահ են տվել բարի արաբներին կամ քրդերին, որպեսզի, եթե իրենք նահատակվեն, գոնե իրենց երեխաները ողջ մնան.*

*Յօլ վէր, Խարո՜ւր*[34]*, յօլ վէր. գէչէիմ չօլը.*
*Էվլադըմ չըռ-չըըլախ արաբըն քöյը*[35]։

**Խարո՜ւր**[34]**, ճամփա տուր, անապատն անցնեմ.**
**Որդիս մերկ-տկլոր արաբի գյուղումն է**[35]։

*Իր հուշերում 90-ամյա Գրիգոր Գյոզալյանն անհուն երախտագիտությամբ է հիշում Հոմս-Համմայի ճամփին, Մուհարդի գյուղի արաբ քրիստոնյա բարի պառավին, որն ամեն երեկո իր եփած փլավն ու զոտու մեջ խցկած հացի կտորները պատերի տակ ուժասպառ ծվարած հայ որբուկներին գաղտագողի բաժանելուց հետո, անհետանում էր մթության մեջ...*[36]։

*Զարդի ու կոտորածի աննկարագրելի թոհ ու բոհի մեջ երեխաները կորցրել են իրենց ծնողներին.*

*Դէր Զօր չöլընդա շաշըրդըմ, քալդըմ,*
*Յիթիրդիմ անամը, յիթիրդիմ բաբամը,*
*Վա՜յ անամ, վա՜յ անամ, հալըմ փէգ յաման,*
*Դէր Զօր չöլէրինդէ քալդըղըմ զաման*[37]։

**Դեր Զորի անապատում շվարեցի, մնացի,**
**Մորս ու հորս այնտեղ կորցրեցի,**
**Վա՜յ մայրիկ, վա՜յ մայրիկ, ողբալի է վիճակս,**
**Դեր Զորի անապատում եղած ժամանակս**[37]։

*Մեր գրառած հուշապատումների մեջ բազմաթիվ վկայություններ կան հայ երեխաներին բռնությամբ հավատափոխ անելու մասին։ Ցրնդըջագցի Հարություն Ալբոյաջյանն առանց հուզմունքի չէր կարողանում հիշել թուրքական որբանոցում անցկացրած իր ծանր օրերը, երբ ծնողներին կորցրած մեծ ու փոքր (նույնիսկ ծծկեր) հարյուրավոր քաղցած հայ մանուկներ վխտում էին թուրքական որբանոցի մեծ սրահի մեջտեղում, հարդի կույտի վրա, չզգալով որ իրենցից շատերն արդեն սովից անշնչացած են, իսկ ողջ մնացողներին*

[34] *Դեր Զորի մոտակայքից հոսող գետ։*
[35] Վավ. 500։
[36] Վավ. 1400։
[37] Վավ. 492։

քաշկռտելով տանում էին թլփատելու՝ անունն ու հավատը փոխելու...[38]։

Հավատափոխ չլինելու, թուրքի կին չդառնալու, թուրք երեխաներ չծնելու համար.

Հայ աղջիկներ ձեռնե ի ձեռ բռնելով
Իրենք զիրենց Եփրև[39] գետը նետեցին...[40]։

Ու որպես բողոք՝ հնչել է հայ աղջիկների երգումը.

Գիդէն, գիդէն, էրմէ՜նի քըզլար,
Բիր գün öլüմ բիզէ դüշար,
Թէք դüշմանա ավրադ օլմայըմ.
Յէփրադըն իչինդէ öլüմ բուլայըմ[41]։

Գնացող, գնացող, հա՜յ աղջիկներ,
Մի օր մահը դեմ կգա մեզ,
Թշնամուն կին չդառնանք.
Եփրատի մեջ գտնենք մահ[41]։

Իսկ Եփրատ գետը հայերի արյունով կարմիր էր ներկվել.

Դէր Զօր չöլլէրի դաշլը դըր. գէչիլմէզ,
Յէփրադ գէտի սուլար աջի դըր.
Բիր թաս իչիլմէզ.
Էրմէնի քանինան սու դա իչիլմէզ[42]։

Դեր Զորի անապատը քարոտ է. անցնել չի լինի,
Եփրատ գետի ջրերը դառն են.
Մի թաս խմել չի լինի.
Հայերի արյունով ջուրը խմել չի լինի[42]։

Մերսինցի ականատես-վկա Սողոմոն Եթենեկյանը, որ այն ժամանակ տասնհինգ տարեկան է եղել, մեզ հաղորդել է. «...Երեք-չորս հարյուր հոգի գոտիներնին հանած, իրար կապած, իրար հետևից, յալլա՜, Եփրատ գետը կնետվեին։ Ջուրին երթալը չէիր տեսնար. լեշերը դուրս էլած, բերդի պես իրար վրա դիզված էին. շուները կատղած էին մարդու միս ուտելեն»[43]։

Այդ իրադարձությունների ականատես մուսալեռցի Պողոս Սուպկուկյանը (աշուղ Դեռլի, ծնվ. 1887 թ.) Կիլիկիայի տեղահանության մասին իր տպավորությունները դեռևս 1956 թ. մեզ է հաղորդել վիպերգի ձևով.

Հազուր էննը հարէր դըռնըհէնգ դարէն
Իղուվ փըրթըվիւը Կիլիկը էրմանէն,
Էնվէր վէ Թալաթ դիժգը փաշինէն
Սաբաբ իղուն մըհաչըրլըքէն.
Բըթըն մաֆ իրէն էրմէնը միլլäթէն.
Լիզվընէն թըղ չիրնիր չվա՞ զադ äցէն,
Ջա՞ միղք գունէրէն մախսըմ չուջըխնէն,
Տաովընէն թըղ գդրիր քըլընչ գիխüղնէն
Ջ՞ուց մինք բըր մառնունք Կիլիկը բալէն,
Ծօրը քարվիցուն հիդվէն քուրվըդէն,
Դիր գայնüղ չիղուվ էրմանը միլլäթէն[44]։

Հազար ինն հարյուր տասնհինգ թվին
Եղավ կոտորածը Կիլիկիո հայության,
Էնվեր և Թալեաթ թուրք փաշաները
Պատճառ դարձան գաղթականության.
Լրիվ ոչնչացրին հայ ժողովրդին.
Լեզուները չորանար թող չհրամայեին,
Ի՞նչ մեղք ունեին մատղաշ մանուկները,
Թող կոտրվեին սուր բռնող ձեռքերը,
Ինչպե՞ս մոռանանք Կիլիկիո աղետը,
Ջուրը նետվեցին քույրերով միասին,
Տեր կանգնող չեղավ հայ ժողովրդին[44]։

Եվ, իրոք, «տեր կանգնող չեղավ հայ ժողովրդին», որը զինաթափ ու հուսահատ քշվում էր աքսորի ճամփաներով։

Թուրքական բռնակալության նախաձեռնած տեղահանությունն ու կոտորածը մի քանի ամսվա ընթացքում արդեն ծավալուն բնույթ էր ստացել՝ ընդգրկելով Փոքր Հայքն ու Անատոլիան։ Մեկը մյուսի հետևից դատարկվում էին Սվազը, Շապին-Գարահիսարը, Խարբերդը, Մալաթիան, Դիարբեքիրը, Իզմիթը, Բուրսան, Անկարան, Կոնիան և Կենտրոնական ու Արևմտյան Անատոլիայի այլ հայաբնակ վայրերը։

Հուլիսի 28-ին ստացվում է Քեսաբի հայության բռնագաղթի հրամանը։ Տեսնելով, որ հերթն իրենց է հասնելու, հուլիսի 19-ին Մուսա լեռան յոթ գյուղերի գրեթե բոլոր բնակիչները միաբանվելով, որոշում են՝ չենթարկվել տեղահանության կործանարար հրամանին[45]։

Խուսքը լսվիցուվ Յաղուբինց Իսայէն.
— Լիռը թըղ ըննին,— äսուց կէղանդէն,

---

38 Վաւ. 1410։
39 Իմա՝ Եփրատ։
40 Վաւ. 450։
41 Վաւ. 568։
42 Վաւ. 506։
43 Վաւ. 1425։

44 Տե՛ս Վ. Սվազլյան, Մուսա լեռ, «Հայ ազգագրություն և բանահյուսություն», հատոր 16, Երևան, 1984, էջ 128։

45 Արդեն պատվելի Տիգրան Անդրեասյանը Զեյթունից բռնագաղթված թափորներից ճողոպրելով հասել էր հայրենի Մուսա լեռ ու պատմել թշվառ տարագիրների կրած տառապանքների մասին։ Նա եղել է Մուսա լեռան հերոսամարտի գործուն մասնակիցներից և, ըստ Ալեքսանդր Փաշայանի, Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» գրքի հերոսներից Արամ Թովմասյանի նախատիպն է (Տե՛ս Տ. Անդրեասյան, Սվեդիայի բարբառը, Երևան, 1967, էջ 5)։

Վէզ չը՛բըր ձոինք մինք միր դուշմանէն.
Նիդինք, նիդըդինք՝ միոնիք միր խուղէն[46]։

Նայի Յաղուբյանի խոսքերով ճնչեցին.
— Լեռ բարձրանալ,— ասաց բոլորին,
Թշնամու առաջ վիզ չե՛նք ծռի մենք.
Զարկենք, զարկվենք՝ մեր հողում մեռնենք[46]։

Մուսա լեռան հերոսամարտի վերջին մասնակից, 106 տարեկան Մովսես Փանոսյանն իրեն հատուկ երիտասարդական ավյունով մեզ է պատմել այդ դեպքերը՝ վերհիշելով մուսալեռցիների երգումը.

Իս հուս ձննաձ իմ. հուս ա՛լէ բըր միռնիմ,
Իս չը՛մ ուրթօ յասսէր քիմը միռնիլ.
Թվունգը ծառիս գըմիռնէմ յաս դիղը,
Թարքա մուհաջըր չը՛մ ըննօ[47]։

Ես այստեղ եմ ծնվել. այստեղ էլ կմեռնեմ,
Ես չե՛մ գնա ստրուկի պես մեռնելու,
Հրացանը ձեռքիս կմեռնեմ այստեղ,
Բայց գաղթական չե՛մ դառնա[47]։

Բողոքի ու վրեժխնդրության կոչը համակում է բոլորին։ Այր ու կին, մանուկ ու ծեր, թողնելով իրենց տունն ու այգին, բարձրանում են Մուսա լեռան անմատչելի գագաթը՝ պաշտպանելու իրենց պատիվն ու արժանապատվությունը, կռվով դիմադրելու թշնամու բազմահազար զորքերին։

Բոլորն անխտիր, առանց ժամանակ կորցնելու, կազմակերպված ձևով սկսում են հյուղակներ կառուցել, խրամատներ փորել, ամուր պատերով պատնեշներ բարձրացնել՝ կրակելու համար ներսից փոքրիկ անցքեր թողնելով։ Որոշ տեղերում, թշնամուն տեսնելու համար, կտրատում են խիտ անտառները։ Նույնիսկ փոքրիկ տղաները՝ «թելեֆոնի տղաները», կապավոր են դառնում։ Կանայք կազմակերպում են սնունդը, աղջիկներն ու հարսները հեռվից ջուր են կրում՝ կռվողներին հասցնելու։ Թշնամին քայլ առ քայլ մոտենում է մուսալեռցիների զորանոցին, բայց տարբեր կետերից բացված կրակը կատարյալ պաշտպանման տպավորություն է ստեղծում, և թուրքերը սարսափահար փախչում են՝ թողնելով հարյուրավոր սպանվածներ։

Հիսուներեք օր համառ մարտեր են մղվում։ Այդ ընթացքում Քըդըլչայի, Քուզչըղազի, Դամլաջըքի և Քափլան-Դուզաղի բարձունքներում չորս լուրջ ճակատամարտ է տեղի ունենում։ Հակառակորդը նորանոր ուժեր է կենտրոնացնում ըմբոստ հայերին պատմելու համար։ Մուսալեռցիների պարենն ու զինամթերքն սպառվում է։ Հորդառատ անձրևն անօգտագործելի է դարձնում նրանց ունեցած ընդամենը երեք հարյուր որսորդական հրացանը, բայց նրանք չեն հուսահատվում և շարունակում են կռվել դյուցազնաբար.

Մենք մուսալեռցի հայ կտրիճներ ենք,
Բոլորս ալ վարժ զենք կրողներ ենք,
Թուրքը մեզ կուզե տեղահան ընել,
Անապատներում մեզ բնաջնջել։

Մենք չենք կամենար լինել շանսատակ.
Մենք կուզենք թողնել մի լավ հիշատակ.
Փառքով մեռնիլը մեզի պատիվ է,
Նահատակվիլը ազգին պարծանք է[48]։

Թշնամին Մուսա լեռը պաշարել էր երեք կողմից։ Դրսից՝ Միջերկրական ծովի կողմից, օգնություն ստանալու հույսով, մուսալեռցիները ճարահատյալ իրար են միացնում սպիտակ սավանները՝ վրան կարմիր խաչի նշանով, և ամրացնում լեռան լանջին։ Օրեր անց, ֆրանսիական «Գիշեն» ռազմանավը հեռվից նկատում է և սեպտեմբերի 13-ին 4200 մուսալեռցիներին փոխադրում Պորտ Սայիդ[49]։

Մուսա լեռան հերոսամարտն աշխարհը ցնցեց։ Այն ցույց տվեց մարդկությանը, թե ինչի է ընդունակ մի բուռ ժողովուրդ, եթե ունի հերոսական ավանդույթներ ու միասնական կամքի ուժ[50]։

Դեռևս 1915 թ. մայիսից Ուրֆայի (Եդեսիա) Նոր մյութեսարիֆ իթթիհատական Ալի Հայդարը կազմակերպել էր տեղի քառասուն երևելիների ձերբակալությունն ու բոլոր հայերից պահանջել քառասուն ութ ժամվա ընթացքում հանձնել զենքերը։ Հուլիսի վերջին ձերբակալվել էր Ուրֆայի հայ թեմի լուսավորյալ առաջնորդ Արտավազդ վրդ. Գալենտերյանը։ Օգոստոսին՝ Գուտեմե և Քարաքյոփրի վայրերում ոչնչացվել էին զորակոչված հազար հինգ հարյուր ուրֆացի հայ երիտասարդներ։ Այնուհետև ձերբակալել էին հարյուրի չափ առևտրականների ու նրանց հարազատներից կաշառք հավաքել, թե իբր պիտի ազատեն, բայց նրանց բոլորին տարել, ոչնչացրել էին։ Ապա ձերբակալել էին ևս հարյուր հոգու, որոնք նույն բախտին էին արժանացել։ Այդ օրերին Ուրֆա են հասնում, իրենց քա-

46 Վիպերգն ամբողջությամբ տե՛ս Վ. Սվազլյան, Նշվ. աշխ. էջ 128—129։

47 Վավ. 1397։

48 Վավ. 402։

49 Մուսա լեռան հերոսամարտի մասնակիցներ Մովսես Փանոսյանից (ծնվ. 1885 թ.), Մովսես Բալաբանյանից (ծնվ. 1891 թ.), Հովհաննես Իփրեշյանից (ծնվ. 1896 թ.) և ուրիշներից մեր գրառած հուշապատումները տե՛ս սույն ժողովածուի III բաժնում։

50 Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Տ. Անդրեասյան, Զեյթուն և Սվեդիո ապստամբությունը, Հալեպ, 1935 և Մ. Գուշագճյան, Հուշամատյան Մուսա լեռան, Բեյրութ, 1970, իսկ այդ դեպքերի մասին պատմաբանահյուսական երգերն ու վիպերգերը տե՛ս Վ. Սվազլյան, Նշվ. աշխ., էջ 128—133։

ջարի երիտասարդներից զրկված, աքսորյալ զեյթունցիների, ապա՝ Թուրքիայի վեց նահանգներից աքսորված թշվառ հայերի քարավանները, որդեկորույս մայրերի ողբն ու հեծեծանքը, դեռատի աղջիկների և անմեղ մանուկների սահմռկեցուցիչ պատմությունները...

Ի տես այդ բոլորին Ուրֆայում բնակվող երեսունհինգ հազար հայեր, հատուկ խորհրդակցությամբ որոշում են մուսալեռցիների պես զենքի դիմել։

Հոկտեմբեր ամսին կազմակերպվում է Ուրֆայի հերոսական ինքնապաշտպանությունը Մկրտիչ Յոթնեղբայրյանի և Հարություն Ռասթկելենյանի գլխավորությամբ։ Ոտքի է կանգնում Ուրֆայի ողջ հայությունը։ Մանուկ ու ծեր, տղա ու աղջիկ, բոլորը մեկ մարդու պես ինքնամոռաց կռվում են քսանհինգ օր ու գիշեր անդադար։ Հայոց թաղամասերը բաժանվում են վեց մարտական շրջանների, որտեղ տեղաբաշխված էին ութ հարյուր մարտիկներ։ Ուրֆացիները երդվում են. «Մենք պատրաստ ենք մեռնելու զենքը ձեռքներիս...»[51]։

Սակայն թուրք աստիկաննե‹ր›ն ու խուժանն անցնում են նոր հարձակման. գրավում են հայ կաթոլիկ եկեղեցին։ Ուրֆացիները թշնամուն թույլ են տալիս ներխուժել հայկական թաղամասը և, դարանակալելով, ոչնչացնում։ Անելիք էր դարձել նրանց խիզախությունը.

Ուրֆա բöյüգ՝ այրըլմազ,
Դիբի ղայիմ՝ դագըլմազ,
Ուրֆանըն իգիթլէրի
Հէչ բիր յէրէ բուլունմազ[52]։

**Ուրֆան մեծ է՝ չի բաժանվի,**
**Հատակը պինդ է՝ չի փլվի,**
**Ուրֆայի կտրիճները**
**Ոչ մի տեղում չես գտնի[52]։**

Հանդիպելով համառ դիմադրության, Ֆախրի փաշայի հրամանատարությամբ Ուրֆա է ուղարկվում կանոնավոր զորք (վեց հազար զինվոր և թնդանոթ), որին միանում են տասներկու հազար հրոսակներ։

Ուրֆայի ինքնապաշտպաններն զգալի կորուստներ են պատճառում թուրք ջարդարարներին։ Կատաղած Ֆախրի փաշան մտահոգ ասում է. «Ի՞նչ կլինի մեր վիճակը, եթե այս ծանր օրերին մի քանի Ուրֆաներ մեր դեմ այսպես ծառանան»[53]։

Ծնկից ծանր վիրավոր Մ. Յոթնեղբայրյանը պատգարակով դիրքից դիրք էր անցնում, ոգևորում կռվողներին։

Ֆախրի փաշան Մ. Յոթնեղբայրյանի մոտ բանագնաց է ուղարկում գործի հայտնի փորձարանատեր, գերմանացի Մ. Էքարտին, որը նրան հորդորում է դադարեցնել կռիվը և հանձնվել։ Սակայն հերոսական Ուրֆայի որդին պատասխանում է. «Եթե ձեր մեջ քաղաքակիրթ և քրիստոնյա մարդու զգացում կա՝ փրկեցեք անապատներում մեռնող կոտորվող անմեղ հայ ժողովուրդը...»[54]։

Հաջորդ օրն իսկ թշնամին ավելի է սեղմում պաշարման օղակը և հուժկու թնդանոթաձգությամբ ոչնչացնում հայկական թաղամասը։ Հայերի դրությունն օրըստօրե ծանրանում է։ Հոկտեմբերի 23-ին թուրքերը ներխուժում են հայկական թաղամասը և դաժան հաշվեհարդար տեսնում Ուրֆայի անձնըվեր հերոսների հետ։ Իսկ մերձակա հայաբնակ Կարմուջ գյուղի կենդանի մնացած ութ հարյուր բնտանիքներին քշում են Դեր-Զոր և մեծ մասին անխնա կոտորում...

Տեղահանությունն ու կոտորածն արդեն ընդգրկել էին ոչ միայն Կիլիկիան ու Արևմտահայաստանը, այլև Փոքր Հայքը, Արևելյան ու Կենտրոնական Անատոլիայի հայաբնակ գավառները. այլ կերպ ասած՝ ամբողջ Օսմանյան Թուրքիան։ Մեծ եղեռնին զոհ դարձան և ցիր ու ցան եղան մոտ երկու միլիոն արևմտահայեր[55]։

Հայ ժողովրդի դահիճ Թալեաթը չկտիրոբեն պարծենում էր, թե ինքը մի քանի ամսվա ընթացքում լուծեց հայկական հարցը, ինչը սուլթան Համիդին չէր հաջողվել անել տասնամյակների ընթացքում։

Դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի օրերին՝ 1916 թվին, դաշնակից երկրների՝ Անգլիայի և Ֆրանսիայի գաղտնի պայմանավորվածությամբ (Սայքս-Պիկո), Թուրքիայի պարտության դեպքում երկու միլիոն վեց հարյուր հազար հեկտար մշակովի, բերքառատ հողեր ունեցող Կիլիկիան անցնելու էր Ֆրանսիայի հովանավորության տակ։ Անգլիայի և Ֆրանսիայի իշխանությունները Հայկական Ազգային պատվիրակության հետ նախապես համաձայնվել էին, որ եթե հայ կամավորները կռվեն Թուրքիայի դեմ, հաղթական ելքից հետո, հայերին կտրվի քաղաքական լայն հնարավորություններ և հայ կամավորները կդառնան նորակազմ Ինքնավար Հայկական Կիլիկիայի քաղաքապահ զինվորներ։

Ուստի թուրքական բանակից, աքսորի ճամփաներից ու տարբեր վայրերից, նույնիսկ հեռավոր Ամերիկայից ժամանած հայ երիտասարդներ (մու-

---

51 Ա. Սահակյան, *Դյուցազնական Ուրֆան և իր հայորդիները*, Բեյրութ, 1955, էջ 818։

52 Վալ. 404։

53 Մ. Արզումանյան, *Հայաստան. 1914—1917*, Երևան, 1969, էջ 453։

54 *Հուշամատյան Մեծ եղեռնի*, Բեյրութ, 1965, էջ 804։

55 Ավելի մանրամասն տե՛ս Ջ. Կիրակոսյան, *Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը*, Երևան, 1965։

սալեոցի, զեյթունցի, այնթապցի, մարաշցի, քեսաբցի, հաճընցի, հուսենիկցի, չնգուշցի, սեբաստացի, խարբերդցի, արաբկիրցի և այլ վայրերից) զինվորագրվում են ֆրանսիական բանակին՝ ստեղծելով Արևելյան (Հայկական) լեգեոնը։

Հայ կամավորներն, իրենց միլիոնավոր անմեղ նահատակ հարազատների վրեժով լցված, արհամարհելով մահը, պարտության են մատնում գերմանա-թուրքական զորքերին՝ նվաճելով Արարայի փայլուն հաղթանակը Պաղեստինի մոտ։ Հայ քաջարի լեգեոնականներն արժանանում են ֆրանսիական հրամանատարության դրվատանքին։ Գեներալ Ալենբին, 1918 թ. հոկտեմբերի 12-ին, Հայ Ազգային պատվիրակության նախագահ Նուպար փաշային հղած հեռագրում գրել է. «Ես հպարտ եմ հրամանատարությանս տակ հայկական զորամաս ունենալուս համար։ Նրանք կռվեցին փայլուն կերպով և մեծ բաժին ունեցան հաղթանակի մեջ»[56]։

Պատերազմից հետո կնքված Սևրի պայմանագրով Կիլիկիայի վրա հաստատվելու էր Անտանտի երկրների հսկողությունը, և թուրքական զորքերն իբր արդեն դուրս էին բերվելու Կիլիկիայից»[57]։

Դեր Զորի, Ռաս էլ Այնի և այլ կենդանի գերեզմանոցներից հրաշքով փրկված, ուժասպառ, հյուծված և ունեզրկված հայ աքսորականները աստիճանաբար գալիս տեղավորվում են Կիլիկիայում։ Նրանք, ապագայի նկատմամբ վառ հույսով ու հավատքով, սկսում են վերականգնել ավերվածը, մշակել խոպանացած այգիները։ Սակայն իշխանության գլուխն անցած քեմալականներին հաջողվում է լեզու գտնել դաշնակից տերությունների հետ և ստիպել ֆրանսիացիներին իրենց զորքերը դուրս բերել Կիլիկիայից։ Դժբախտաբար, ֆրանսիական զինվորական վարչությունը ոչ միայն լուրջ միջոցներ չի ձեռնարկում հայերի անվտանգությունն ապահովելու ուղղությամբ, այլև տեղերում իշխանությունը թողնում է թուրքական զինվորական պաշտոնյաների ձեռքին, և մահմեդականները չեն զինաթափվում։

Զճանաչելով Սևրի պայմանագիրը և օգտվելով ֆրանսիական զինվորական վարչության անվճռականությունից ու թուլությունից, քեմալական զորքերն ու տեղի չեթեներն իրենց զենքն ուղղում են Կիլիկիայի հայության դեմ։

1920 թ. հունվարից քեմալական զորքերը գրոհում են Կիլիկիայի հայկական բնակավայրերը։ Քսաներկու օր տևող կատաղի մարտերում Մարաշ քաղաքի տասնմեկ հազար հայեր կոտորվում են ու մոխրանում.

Մարաշըա Մարաշ դէըլէր, յամա՛ն-յամա՛ն,
Մարաշ, բու նա՞սըլ Մարաշ դէըլէր,
Մարաշըն իչինդէ քիլիսէ յանար,
Քիլիսէ իչինդէ էրմէնի յանար[58]։

Ավա՜ղ Մարաշին Մարաշ են ասում,
Մարաշ, քեզ ինչպե՞ս Մարաշ են ասում,
Երբ քո մեջ եկեղեցի են հրկիզում,
Եկեղեցու մեջ՝ հայեր մոխրացնում[58]։

Մարաշից մազապուրծ վերապրող ականատեսվկա Վերգինե Մայիկյանը (ծնվ. 1898 թ.) մեզ պատմել է. «...Մարաշի Քառասուն Մանկանց եկեղեցին շինված էր բարձունքի վրա։ Եկեղեցիին մեջը լցված հայերը կսպասեին, որ գիշերը պիտի դուռը բանան, բայց գիշերվա ժամը տասը, տասնմեկը, տասներկու եղավ. դուռը բացող չկա։ Հայ ժողովուրդը՝ մեջը լիքը... ո՛չ ջուր կա, ո՛չ լույս, ամեն ինչը մեջը, ալ կեղտոտություն. մեկը. կուլա, մյուսը՝ կողքա, մեկալը՝ կաղոթե։ Մեկ խոսքով չտեսնվա՜ծ իրարանցում։ Անոնց ձայները մենք լսում էինք մեր տունին նկուղեն, ուր մենք ալ պահմտած էինք։ Մեյ մըն ալ պզտիկ լուսանցքեն տեսանք, գիշերվա ժամը մեկ անց կեսին քանի մը թուրք եկեղեցիին կամարաձև կտուրին վրա են բարձրացած, նավթոտած վառվող շորի կտորները կնետեին եկեղեցիին գմբեթեն ներս... Խանձահոտը աշխարհը բռնեց։ Եկեղեցիեն եկող ձայները մարդու սիրտն էին փլում ...Հրեշներն իրենց ընելիքը ըրեր էին։ Ալ ոչ ոք ողջ կար եկեղեցիին և մեր տուներուն շրջակայքը։ Եկեղեցիին մեծ քարերով սալահատակված տարածությունը, որը քանի մը հարյուր մետր էր, կարծես օճառի հաստ շերտով էր ծածկված. մոտ երկու մատ հաստությամբ մարդկային ճարպը հալեր, հոսեր էր ու թանձրացեր...»[59]։

Այնուհետև ողջ մնացած ութ հազար մարաշցիներ, Ուրֆայի վեց հազար հայ բնակչության հետ միասին, հարկադրված բռնում են գաղթի ճամփան՝ դեպի Սիրիա՝ Հալեպ, Դամասկոս, Բեյրութ, Երուսաղեմ, Բաղդադ և դեպի Անատոլիայի հունական շրջաններ...

1920 թ. ապրիլի 1-ին քեմալականները պաշարում են Այնթապը։ Պատերազմի ավարտից և զինադադարից հետո այնտեղ վերաբնակված շուրջ տասը հազար այնթապցի և ութ հազար սեբաստացի հայ գաղթականների հազիվ խաղաղված կյանքը նորից է փոթորկվում։ Տեղում Ազգային միության կից ստեղծվում է Զինվորական կենտրոնական մարմին Ադուր Լևոնյանի գլխավորությամբ։ Վերջինս հաշվառման է ենթարկում եղած զենքն ու

56 Մ. Քելեշյան, Նշվ. աշխ., էջ 592։

57 Ավելի մանրամասն տե՛ս Ռ. Գ. Սահակյան, Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919—1921 թթ., Երևան, 1970, էջ 117։

58 Վավ. 539։

59 Վավ. 1414։

զինամթերքը և կազմակերպում ռումբեր պատրաստելու գործը։

Պատմական այդ իրադարձությունները ներշընչանքով է մեզ պատմել այնթապցի Գևորգ Հեքիմյանը. «... Աղուր փաշան այնթապցիներու կերակուրի պղինձներն անգամ հալեցնել տվավ, որ ռմբաններ շինեն։ Ան իր կամավորներով հարձակվեցավ թշնամու վրա և դուրս եկավ պաշարումեն։ Ալի Քըլընչի քանչորս հազարանոց զորքը մեկ գիշերվա մեջ սարսափահար ետ փախավ՝ «Գյավուրըն գöզի քան դօլդու» գոռալով, այսինքն՝ հայու աչքն արյուն լցվեց, որը կնշանակե՝ հայերը վրեժով լցվեցին։ Մեր Այնթապում Աղուր փաշային վրա այս երգը հանել էին.

*Աղո՜ւր փաշա, քա՛լք սէնի,*
*Զամ չըրայը յա՛ք սէնի,*
*Թöւրքլար հöւջöւմ էդիյօր.*
*Կամավօրլար ա՛րշ էդիք[60]։*

**Աղո՜ւր փաշա, արթնացի՛ր,**
**Քո ռումբերը շուտ նետի՛ր,**
**Թուրքերը գրոհում են.**
**Կամավորներով արշավի՛ր[60]։**

Այնթապի հայերը կազմակերպում են ինքնապաշտպանությունը։ Ստեղծվում է շուրջ յոթ հարյուր հիսուն հոգուց բաղկացած զորախումբ։ Անհավասար այդ կռիվը, որոշ ընդհատումներով, շարունակվում է...

Այդ ընթացքում Կիլիկիայի գրավման ընդհանուր հրամանատար Գոզան օղլու Դողան բեյն իր բազմահազար զորքով պաշարում է նաև Հաճըն քաղաքը, որի 30—35 հազար հայ բնակիչներից Մեծ եղեռնից փրկվել էին միայն վեց հազարը։ Քեմալականների կարծիքով «Կիլիկիո հայկական միջնաբերդը՝ Հաճընը, հիմնովին կործանելն ու բնաջնջելը մեկ ժամվա գործ էր և աննշան հարձակումով մը պիտի կրնան թաղել վեց հազար հայությունը[61]»։ Սակայն հաճընցիները լի էին վրճռականությամբ։ Նրանք իրենց կառավարիչ-փաստաբան Կարապետ Ջալյանի ղեկավարությամբ կազմում են Հաճընի ինքնապաշտպանության բարձրագույն խորհուրդը։ Պաշտպանության հրամանատար են ընտրում Զորավար Անդրանիկի զինակից, ապա Սարգիս Ճեպեճյանին։ Կազմակերպում են չորս վաշտ, վաթսուն հեծյալից բաղկացած էսկադրոն։ Հաճընն ու իր շրջակայքը բաժանում են պաշտպանական չորս շրջանների։ Փորում են խրամատներ։ Կառուցում են դիրքեր և այլ ամրություններ։ Մարտական տրամադրությունը համակում է բոլորին։ Ամենուրեք հնչում են ազատատենչ երգեր.

*Հառա՛ջ, հառա՛ջ, հաճընցի՜ներ,*
*Մեր ոխերիմ թուրքն է եկել.*
*Հառա՛ջ, կռվենք՝ ի զեն, ի զեն,*
*Տեսնենք թշնամին ի՞նչ կուզե[62]։*

Զենք կրելու ընդունակ 16—50 տարեկան 1200 տղամարդկանց բաժանվում է եղած-չեղած 132 հրացանը։ Հետագայում ձեռք է բերվում նաև 300 հրացան, սակայն այդ ևս խիստ անբավարար էր բոլշևիկյան անսպառ ռազմամթերքով զինված քեմալական բանակի դեմ կռվելու համար[63]։

Ահա թե ինչու զենքի խիստ կարիք զգացող հաճընցիներն անհամբերությամբ սպասում էին Ադանայի Ազգային միության միջոցով դրսից ակնկալվող օգնությանը, որի շնորհիվ ոչ միայն զենք ու զինամթերք, այլև կռվող նոր ուժեր պիտի հասնեին։ Վերջապես երկնքում հայտնվում է բաղձալի օդանավը.

*Օդանավն եկավ մեծ հավետիսով,*
*Մեր սրտերը լցվան ուրախ հույսերով,*
*Թափառին բոլոր մարտիկներն անզեն.*
*Անոնք հոգիով թուրք ջարդել կուզեն։*

*Եղբայրներն արդեն նամակ գրեցին.*
*«Կռվեցե՛ք, եղբա՜յրք, կհասնինք»,— ըսին,*
*Սակայն ի՞նչ խաբար. օրերնիս անցան.*
*Հազար հոգիեն երկուք չերևցան[64]։*

Եվ հաճընցի «անզեն մարտիկների» վիճակը դառնում է հուսահատական։ Ֆրանսիական զինվորական ներկայացուցիչներ Թեյարտան և գընդապետ Բրեմոնը վարում էին երկդիմի քաղաքականություն. թեպետ խոստացել էին ինքնապաշտպանության համար տրամադրել սննդամթերք, զենք ու զինամթերք, սակայն իրենց խոստումը ոչ միայն չեն հարգում, այլև թուրքերին տեղեկացնում են հայերի ինքնապաշտպանության կազմակերպման մասին.

*Ապրիլ կամ՝ մեռնիլ, կտրիճ հաճընցի,*
*Գրավենք՝ ըսին, թե չէ՝ կմեռնինք,*
*Գրավենք զմեզ թնդանոթն ահեղ.*
*Թող հաղթանակը տանինք փառահեղ...[65]։*

---

60 Վավ. 407։

61 Ս. Տ. Թերզյան, *Հաճընի ութամսյա դյուցազնամարտը*, Բուենոս-Այրես, 1956, էջ 241։

62 Վավ. 413։

63 Այդ և հետագա դեպքերի մասին տե՛ս զեյթունցի Հովսեփ Բշտիկյանի հուշը, վավ. 1392։

64 Արամ Ասպետի այս բանաստեղծությունը երգի վերածած, հպարտության զգացումով, բայց նաև ափսոսանքի արցունքներով մեզ հաղորդել է հաճընցի Նազենի Սաթամյանը, տե՛ս վավ. 414։

65 Նույն տեղում։

Հաճընցի ազատամարտիկները մեծ դժվարությամբ գրավում են թշնամու հսկա թնդանոթը, սակայն արկեր չեն գտնում, որ կրակեն ու պաշտպանվեն։

Սովը նեղում է հաճընցիներին. «... ժողովուրդը կստիպվի ուտել կատու, մուկ, շուն, կաշի, ծառի կեղև, տրեխ...»[66]։ Թշնամին նորանոր թնդանոթներով ու անհամար կանոնավոր զորքով համալրում է իր ուժերը։ Յոթամսյա երկարատև ու համառ դիմադրությունից հետո քեմալական զորքերին հաջողվում է հրետանու խաչաձև կրակոցների հեղեղով ավերել ու հրկիզել նաև Հաճընի քարաշեն տները։ Հարյուրավոր քաջարի մարտիկներ ընկնում են դիրքերում, հազարավոր հաճընցիներ անխնա կոտորվում են։ Միայն 380 հոգու հաջողվում է կռվելով ճեղքել թշնամու պաշարման շղթան և դուրս գալ ահավոր հրդեհի շրջապատումից.

Երեք հարյուր հայ քաջերով,
Բոլոր զինված մոսիններով,
Դողան բեյին մենք ջարդ տալով,
Հաճըն ինկավ՝ «Վրե՛ժ» գոռալով...[67]

«Վրե՛ժ» գոռալով ընկնում են նաև ընդհատումներով 314 օր հերոսաբար դիմադրած Այնթապը, հինավուրց քաղաքամայր Սիսը, պատմական անցյալ ունեցող Տարսոնը, առևտրի կենտրոն Ադանան և հայերով բնակեցված Կիլիկիայի այլևայլ բնակավայրեր, քանի որ ֆրանսիական կառավարությունը, դրժելով իր կնքած դաշնակցային պարտավորությունները, 1921 թ. հոկտեմբերի 20-ին, Անկարայի պայմանագրով Կիլիկիան հանձնում է թուրքերին՝ կոտորածի վտանգի մատնելով Կիլիկիայի հայությանը... Իսկ արծվաբույն Զեյթունը, որը դեռևս 1862 թ. ապստամբությամբ առաջին գնդակն էր արձակել օսմանյան բռնակալության դեմ, հայաբույր Զեյթունը, որի 30 000 կայտառ ու շեն բնակիչներից միայն 1058-ն էր Մեծ եղեռնից մազապուրծ վերադարձել ու հազիվ սկսել էր վերականգնել ավերվածն ու հրկիզվածը, այդ զեյթունցիներից շատերը, իրենց ազգային հերոս Արամ Չոլաքյանի գլխավորությամբ և նրա զինակիցներ Հովհաննես Սիմոնյանի, Էշխիա Կարապետի, Մանուկի և այլ կտրիճների հետ, միանում են Ամանոսի լեռներում ամրացած Հասանբեյլի (Ադանա) Ավետիսի հերոսների խմբին[68]։ Հետզհետե ստվարացող, 500-ի հասնող, այր ու կին քաջերի այդ հսկա խումբը, Տավրոսի անանցանելի լեռներում զենքը ձեռքներին, գիշեր-ցերեկ կռվելով, ահ ու սարսափ են մատնում շրջակա թուրք գյուղերը և թեպետ հետապնդվում են ասկյարներից, սակայն, անասելի դժվարություններ հաղթահարելով, մինչև զինադադարը շարունակում են մարտնչել թուրքական զորքերի դեմ՝ հույս ունենալով փրկել իրենց նախնիների օրրան, Ռուբինյանների հիմնադրած, երբեմնի շենշող Կիլիկիան...

Թեպետ թուրքական բռնակալությունը դաժանորեն ընկճում էր տարբեր վայրերում ծայր առած դիմադրողական-ինքնապաշտպանական հերոսամարտերը, սակայն իրենց մարդկային տարրական իրավունքների և ազգի ֆիզիկական գոյության համար մարտնչող անձնուրաց հայ հերոսները փայլուն հետք թողեցին հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմության մեջ... Այդ ժամանակ է, որ Հայոց Մեծ եղեռնի միլիոնավոր զոհերի վրեժը լուծեց ազգային վրիժառու Սողոմոն Թեհլիրյանը։

Ժողովուրդն այդ ցնցող իրադարձությանը ևս բանաստեղծական շունչ է հաղորդել.

Թալեաթ փաշան փախավ Բեռլին,
Թեհլիրյանը հասավ ետին,
Զարկավ ճակտին՝ փռեց գետնին.
Գինի լից, ախպե՛ր ջան,
Գինի լից, խմողաց անո՜ւշ։

Թալեաթ փաշան դրին հողը,
Լուրը դրկին ցնկած մորը,
Կեցցե՛, գերման դատավորը.
Գինի լից, ախպե՛ր ջան,
Գինի լից, խմողաց անո՜ւշ[69]։

Թեպետ «գերման դատավոր»-ներն արդարացրել էին հայ վրիժառուին, բայց դրանով չէր բարվոքվել արևմտահայության վիճակը...

1921 թ. Կիլիկիայի հայության պարպումից հետո հերթը հասել էր Անատոլիայի հայերին, որոնց մեծ մասն արդեն եղեռնի ժամանակ անխնա կոտորվել էր, իսկ հրաշքով փրկվածներն իրենց գոյությունը շարունակում էին որոշ հայաբնակ վայրերում և հատկապես նավահանգիստ Իզմիրում (Զմյուռնիա)։

1922 թ. քեմալականները հրո ճարակ են դարձնում նաև Զմյուռնիայի հայկական և հունական թաղամասերը՝ քրիստոնյաներին քշելով ծովափ[70], Այդ ահասարսուռ իրադարձությունը ժողովրդի հիշողության մեջ մնացել է որպես «Իզմիրի աղետ»։ Հուզումով վերհիշելով այդ ահավոր տեսարանները, 1915 թ. եղեռնից վերապրող Արփինե Բարթիկյանը

---

66 Արամ Ասլետ, Դրվագներ Հաճընո հերոսամարտեն, Բեյրութ, 1961, էջ 242։

67 Վաւ. 415։

68 Տե՛ս Ամանոսի քաջերի խմբանկարը և զեյթունցի Հովսեփ Բշտիկյանի հուշը. վաւ. 1392։

69 Վաւ. 390։

70 Ավելի մանրամասն տե՛ս Մ. Գ. Ներսիսյան, Մի բանավեճ Զմյուռնիայի 1922 թ. ողբերգության մասին, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1992, 2—3, էջ 87—93։

(ծնվ. 1903 թ.) մեզ պատմել է. «...Հոն (Իզմիրում.— Վ. Ս.) Հայոց թաղը կայրեին։ Հազիվ քիչ մը շունչ պիտի քաշեինք, մեյ մըն ալ սկսավ քեմալականների շարժումը։ Իզմիրը կրակի տվին։ Առաջին կրակը Հայնոցը տվին. Ս. Ստեփանոս եկեղեցին այրեցին, քանի որ մենք հայերս այդ եկեղեցին մտած էինք, որ պաշտպանվենք։ Վերջը մենք փախանք ծովեզերք։ Ծովին վրա լիքը նավակներ էին, բայց թուրքերը նախօրոք բոլոր նավակները ծակել էին, որ ջուրը մեջը լցվի, ու հայերը չկրնան ազատվիլ։ Խեղճ հայերը նստում էին նավակը, ան քիչ մը կլողար, վերջը՝ լը՛կ-լը՛կ ջուրը կլցվեր մեջը, նավակին մեջ եղողները բոլոր շուռ կուգային... ծովի վրա լիքը ուռած մարմիններ էին։ Մեզի տարին Բալչովա։ Ծովուն եզերքը փայտե բարակներ կային, հոն լեցուցին մեզի. սկսան աչքե անցնել բոլորիս. սիրուն աղջիկներուն բռնում, քաշում, քաշքշում, տանում էին...»[71]։

Եվ ժողովրդի տառապանքի հետ միասին հյուսվել է նաև տխրաթախիծ երգը.

Աֆիոնեն դուրս էկանք,
Իզմիր քաղաքը մտանք,
Ազիզ մորս չգտա.
Հոնգուր-հոնգուր լաց էղա։

Ա՛խ, մամա ջան, խաբեցին,
Ինձի քեզնից բաժնեցին,
Քեզ ալ կրակը նետեցին.
Ջըթը՛ր-չըթը՛ր այրեցին[72]։

Դրությունն օրհասական էր ու անել. ետևը՝ հուր, առաջը՝ ջուր։ Թոհ ու բոհի այդ գեհենից ազատվում էին միայն նրանք, ովքեր իրենց մնացած վերջին ոսկեդրամներն ու զարդերը տալիս էին թուրքերին՝ իրենց կյանքը փրկելու համար, իսկ նրանք, ովքեր ոչ մի միջոց չունեին, արհամարհելով մահը, նետվում էին ծովի հուժկու ալիքների մեջ՝ լողալով հասնելու հեռվում խարիսխ գցած եվրոպական դրոշներ կրող շոգենավերին, որոնք հայ անտուններին տանելու էին ուր որ պատահեր...

Էլանք Պոլիս գնացինք,
Ժամուն դուռը մնացինք,
Հաց ու զեյթուն տվեցին,
Իրեք օր մեզ պահեցին։

Անկե փախանք Հունաստան,
Շատ-շատերն ալ՝ Ֆրանսա,
Մեկալները՝ Եգիպտոս,
Սապես ցրվանք ամեն կողմ[73]։

Պապենական տներից ու արտերից արմատախիլ եղած հայ գաղթականներն օտար երկրներում, անտեղյակ օտար լեզուներին ու օրենքներին, միայն էժան աշխատում էին, ինչքան էլ որ օտարների հիացմունքին արժանանային հայկական տոհմիկ արհեստավորների բազմաշնորհ վարպետությունը և պատվախնդիր, աշխատասեր հայ կանանց նրբագեղ ձեռագործներն ու գորգերը։

Այնինչ ձուլումի, այլասերումի և մանավանդ գործազրկության սարսափը հանգիստ չէր տալիս աստանդական հայերին.

Օտարության մեջ ինկեր ենք,
Կուլամ՝ կարոտո՛վ, կարոտո՛վ,
Հայ խնդիրը լուծվի շուտով.
Համբերե՛, հոգի՛ս, համբերե՛։

Ուրախացի՛ր, մի՛ լար տխուր,
Ոտքիդ վրա կայնի՛ր ամուր,
Շուտով կլսես ներգաղթի լուր.
Համբերե՛, հոգի՛ս, համբերե՛[74]։

Ու ներգաղթի իրարահաջորդ քարավաններով սկսվում է հայրենադարձությունը. նախ՝ 1920—30-ական թթ. Կոստանդնուպոլսից, Ֆրանսիայից և Հունաստանից։ Ապա՝ 1946—48 թթ. զանգվածային հայրենադարձությունը Սիրիա-Լիբանանից, Եգիպտոսից, Իրաքից, Ֆրանսիայից, Հունաստանից, Բալկաններից...

Գալիս էին հայրենադարձները՝ լի կարոտով ու խանդավառությամբ։ Գալիս էին երգելով. «Սովետական ազա՛տ աշխարհ Հայաստան...»։ Գալիս էին նրանք իրենց հայրենի քույր-եղբայրների հետ ձեռք-ձեռքի տված՝ Երկրորդ աշխարհամարտից Հայրենիքի ստացած վերքերին սպեղանի դնելու։ Այդ ազնիվ ու վեհ նպատակի համար բանվորները բերում էին իրենց բազկի ուժը, արհեստավորներն՝ իրենց ձեռքի շնորհքը, մտավորականներն՝ իրենց գիտելիքները, հարուստներն՝ իրենց ունեցվածքն ու գործարանները, ծնողներն՝ իրենց զավակներին...

Հայաստան երթալու եմ,
Մշտական մնալու եմ,
Ես ի՞նչ ընեմ օտար աշխարհ.
Ահա կերթամ Հայաստան[75]։

Գալիս էին հայրենադարձների խուռներամ քարավանները՝ ոգեշնչված Խորհրդային Միության հաղթանակով և մանավանդ նրա 1945 թ. նոյեմբերի 1-ին Թուրքիային առաջադրած հայկական ու վրացական հողերի պաշտոնական պահանջով...։ Ու մեծ հույսերի հետ միասին բերնից բերան հյուսվում էր նաև ժողովրդական երգը.

---

71 Վավ. 1455։
72 Վավ. 546։
73 Վավ. 547։
74 Վավ. 603։
75 Վավ. 605։

Հայաստան երթալ կուզեմ,
Երևան տեսնալ կուզեմ,
Մասիս սարի կատարին
Դրոշակ պարզել կուզեմ[76]։

Եվ կամ՝

Կուզենք զայն, կուզենք զայն.
Մերն է Կարսն ու Արդահան...

Կարս—Արդահանը մեզի
Շուտով պիտի դարձվի,
Որ այդ հողերն ամայի
Փոխակերպենք դրախտի[77]։

Սակայն թուրքական դիվանագետները, մոռացության մատնելով մոտիկ անցյալի իրադարձությունները, պատասխանում են. «...Ոչ ոքի պարտք ունինք թուրք հողերեն և իրավունքներեն։ Պիտի ապրինք իբրև պատվավոր մարդիկ, պիտի մեռնինք իբրև պատվավոր մարդիկ...»[78]։

Եվ թեպետ անտուն ու անհայրենիք մնացած արևմտահայերն Երևանի շրջակայքում սկսում են հիմնադրել իրենց բնօրրանների հիշատակները խորհրդանշող ավաններ ու թաղամասեր, սակայն երբեմնի ավերակված տան, հանգած օջախի մրրմուռը շարունակում է մնալ նրանց հիշողության մեջ ու կորցրած Երկրի երազանքը հոգու կանչ դարձած ավանդվում սերնդից սերունդ.

Երբ որ բացվին դռներն հույսի,
Եվ մենք երկիր դառնանք կրկին,
Չքնաղ երկիր մեր Ռուբինյան,
Որ բռնությամբ առին մեզնից։

Ցանկամ տեսնել իմ Կիլիկիան.
Օդը՝ մաքուր, ջուրը՝ զուլալ,

78 Վավ. 606։
77 Վավ. 611։
78 Գ. Լազյան, *Հայաստանը և Հայ Դատը (վավերագրեր)*, Կահիրե, 1946, էջ 372։

Ցանկամ տեսնել իմ Կիլիկիան,
Վանքեր, բերդեր, հոնտեղ շատ կան։

Երբ որ լուծվի Հայոց Հարցը,
Եվ մեզ տրվի նախնյաց հողը,
Մենք կվարենք մեր արտերը,
Կշենացնենք մեր գյուղերը։

Ցանկամ տեսնել իմ Կիլիկիան՝
Զեյթուն, Հաճըն և Մուսա դաղ,
Տարսոն, Մարաշ, Սիս ու Այնթապ,
Կծաղկեցնենք մենք անպայման[79]։

Մեր բանասացների հաղորդած բանահյուսական նյութերի մեջ արծարծվել է նաև ժողովրդական հստակ մտածելակերպն արդի միջազգային քաղաքական հարաբերությունների և Արցախյան հիմնահարցի վերաբերյալ.

Ղարաբաղը մեր փոքրիկ
Մասն է Հայոց աշխարհի,
Ինչո՞ւ թողնենք օտարին
Երբ հայերն են հոն բնիկ[80]։

Եվ ժողովրդական երգը հնչում է որպես միասնական պայքարի համազգային պատգամ.

Մեր հա՜յ եղբայրներ, մենք շատ լռեցինք,
Բավական է մեզ այսչափ համբերենք.
Մեր Ղարաբաղը մեզնից խլեցին,
Հիմա ուժ ունենք՝ ետ առնենք նորից[81]։

Արցախահայերի պատմական մեծ խիզախումը ես դարձել է այսօրվա արևմտահայերի ստեղծագործական ներշնչանքի աղբյուր, քանզի այն մարմնավորում է նաև իրենց կորցրած Երկրի ազատագրման նվիրական երազը...

79 Վավ. 597։
80 Վավ. 603։
81 Նույն տեղում։



# I

# ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԳԵՐ

## 1. ԶՈՐԱՀԱՎԱՔԻ, ԶԻՆԱՀԱՎԱՔԻ ԵՎ ԲԱՆՏԱՐԿՅԱԼԻ ԵՐԳԵՐ

### 1(1).
### ԶԻՆՎՈՐԻ ՀՐԱԺԵՇՏԸ

*Հազար ինն հարյուր տասնչորս թվին*
*Հանեցին, կարդացին սոսկալի ֆերման,*
*Ջա՜ն կերթամ, մայրի՜կ, ջա՜ն կերթամ, քույրի՜կ,*
*Զինվոր եմ՝ կերթամ, մուրադըղ կերթամ։*

*Մայրի՜կ, աստվա՜ծ սիրես, չանթաս լավ կարե,*
*Հայրը թե պզտիկ է՝ խաթըրը նայե,*
*Ջա՜ն կերթամ, մայրի՜կ, ջա՜ն կերթամ, քույրի՜կ.*
*Զինվոր եմ՝ կերթամ, մուրադըղ կերթամ։*

### 2(2).
### ՄՆԱ՜Ս ԲԱՐՅԱՎ, ՔԱ՜ՂՑՐ ՄԱՅՐԻԿ

*Մնա՜ս բարյավ, քա՜ղցր մայրիկ,*
*Ես պիտի երթամ,*
*Տուր մայրական համբույր վերջին.*
*Սիրտս թող հովնա։*

*Երկնքի մութ ամպերը*
*Կամար են կապել,*
*Մեր հայ տղերքի սիրտը*
*Խավար է պատել։*

*Հայրեր կուլան, մայրեր կողբան.*
*Սո՜ւգ է, վայնասո՜ւն,*
*Բաժանումի ժամն է հասել.*
*Սիրտ չի դիմանում։*

### 3(3).
### ԱՀԱ ԿԵՐԹԱՄ, ՍԻՐԵ՜ԼԻ ՄԱՅՐ

*Ահա կերթամ, սիրե՜լի մայր,*
*Մնա՜ս բարով դու հիմա,*
*Այսքան ճնշման տակ ընկած,*
*Հայը ի՞նչպես դիմանա։*

*Սեբաստիա երբ կերթայի,*
*Երկու օրեն կուգայի,*
*Երկու օրս կըլլար տարի,*
*Ես քեզ կկարոտնայի։*

*Մնա՜ս բարով, սիրելի մայր,*
*Վերադարձիս սպասե,*
*Պատերազմի դաշտին վրա*
*Ընկերս ինձ կսպասե։*

### 4(4).
### ՍԵՎ ԾՈՎԻՆ ՎՐԱ

*Սև ծովին վրա, մայրի՜կ,*
*Ղայըղ չի բանիր,*
*Ձեռքերնիս թուլցած է, մայրի՜կ,*
*Հրացան չի բռնիր։*

*Լաղըմ-լաղըմ կուգան, մայրի՜կ,*
*Գետերուն ջուրը,*
*Ինչ սաստիկ կկտրե, մայրի՜կ,*
*Թուրք ազգին սուրը։*

*Ճամփա չկա, մայրի՜կ,*
*Գամ հասնիմ քեզի,*
*Աշխարհը պատել է, մայրի՜կ։*
*Հայ ազգին վիշտը։*

## 5(5).
### ՄԱՄԻ ՀԱՎԱՍԸ

*Ջութ, եզ ունիմ կուտամ ծախու,*
*Քանի կուզեն՝ թող ծախվին,*
*Թյուֆանգմ առնեմ զիմ Գիգոյին,*
*Տանեմ գրեմ ֆեդայի։*

*Ամիսմ մինակ մնացել է՝*
*Թամամ քսանմեկ տարի,*
*Ջիմ Գիգոյի ի՞նչն է պակաս,*
*Որ չեն գրի ֆեդայի։*

*Ելի՛ր, լա՛ո, մի՛ քնանար,*
*Զգենք մեր ժամ, աշխատանք,*
*Օտարը մեզ ֆայդա չունի,*
*Ելի՛ր, կապեմ քո թյուֆանգ։*

*Ա՛խ, տե՛ր Աստված, հոգիս շառնես,*
*Ես իմ Գիգոյին տեսնեի՝*
*Թևին՝ թյուֆանգ, դոշին՝ ֆիշենգ,*
*Ա՛խ, այդ օրը մեռնեի։*

## 6(6).

*Թուրքի բանակ երթալու եմ,*
*Հրացան բռնելու եմ,*
*Ես ի՞նչ ընեմ Տաճկաստան.*
*Ահա կերթամ Հայաստան։*

*Երկինք նայելս կուգա,*
*Դար վեր հայիլս կուգա,*
*Էկավ անցավ վատ թուրքը.*
*Վրեժ լուծելս կուգա։*

## 7(7).
### ԱՆԱ՛, ՕՅԱՆԴԸ՛Ր ԲԷՆԻ, ԳԻԴԷԻՄ ԹԱԱԼԻՄԷ

*Անա՛, օյանդըր բէնի, գիդէիմ թաալիմէ,*
*Այնալը-մարթի՛ը ալայըմ էլիմէ,*
*Գէթմէյէ դօղրու վաթան յօլընա,*
*Բունա öլում յօլու դէրլէր.*
*Ալլա՛հ սաքլասըն,*
*Էրմէնիլէր չօք դըր դէրլէր.*
*Ալլա՛հ քուրթարսըն։*

## 7(7).
### ՄԱՅՐ, ԱՐԹՆԱՑՐՈՒ ԻՆՁ, ԳՆԱՄ ՎԱՐԺԱՆՔԻ

*Մա՛յր, արթնացրո՛ւ ինձ, գնամ վարժանքի,*
*Ձեռքս վերցնեմ հայլեպատ-մարթին,*
*Գնալու եմ ուղիղ ճամփով հայրենի,*
*Սրան մահվան ճամփա կասեն.*
*Աստվա՛ծ պահպանի,*
*Հայերն այնտեղ շատ ու շատ են.*
*Աստվա՛ծ թող փրկի։*

## 8(8).
### ԱՍՔՅԱՐԸՆ ԱՎԱԶԼԱՐԸ

*Սարախդան քալքդըմ, անամ աղըյօր,*
*Բաբամ աթընը զէնգüնը բաղըյօր,*
*Բաքդըմ քի գիզլիչա, յամա՛ն, աղըյօր։*
*Բինը բիր ուղրընա գիդէն յավրուլար։*

## 8(8).
### ԱՍԿՅԱՐԻ ԵՐԳԵՐ

*Առավոտյան վեր կացա՝ մայրս էր լաց լինում,*
*Հայրս ձիուս ասպանդակն էր կապում,*
*Տեսա՝ ծածուկ սաստիկ էր լաց լինում,*
*Հազարը մեկի պես գնում են որդիները։*

## 9(9).

*Գէթի՛ր, անա՛մ, գէթի՛ր, էլինի öփէյիմ,*
*Էմզիին սüւդը հէլալ էդէիմ,*
*Ասքէրէ գիդէրսէմ՝ բէլլքի գէլէմէմ,*
*Բինը բիր ուղրընա գիդէն յավրուլար։*

## 9(9).

*Մոտեցրո՛ւ, մա՛յր, ձեռքդ համբուրեմ,*
*Ծծած կաթս ինձ հալալ անես.*
*Ասկյար թե գնամ, գուցե ետ չգամ,*
*Հազարը մեկի պես գնում են որդիները։*

## 10(10).

*Թրէնա բինդինջէ՝ ղուշ գիբի ուչար,*
*Մէմլէքէթ յօլլարը գöզüմդէն ուչար,*
*Բինը բիր ուղրընա գիդէն յավրուլար։*

## 10(10).

*Գնացք նստեցի՝ ծտի պես թռավ,*
*Հայրենիքի ճամփան աչքիցս թռավ,*
*Հազարը մեկի պես գնում են որդիները։*

11(11).

Ղշլաղըն իչինդէ բիր փունար աքար,
Ասքերլէր օթուրմուշ չամաշըր յըքար,
Բինը բիր ուղըրընա գիդէն յավրուլար։

12(12).

Յորուլա-յորուլա թարուըըմա քավուշդըմ,
Էվէլ ալլահ մարթինիմէ գüվէնդիմ,
Բինը բիր ուղըրընա գիդէն յավրուլար։

13(13).

Գիդէ, գիդէ ղօնդուրամա ղում դօլդու,
Ղում յէրինէ յուրէիմէ քան դօլդու,
Բինը բիր ուղըրընա գիդէն յավրուլար։

14(14).

Ղըյմա՛, չէրքէ՞զ, ղըյմա՛ դաթըը չանըմա,
Յէնի նշանլըմ վար քարալար բաղլար,
Բինը բիր ուղըրընա գիդէն յավրուլար։

15(15).

Ասքյարա գէթդիմ՝ գէլէրիմ դէի,
Մարթինիմը դօլդուրդըմ՝ վուրալըմ դէի.
Հէչ աքլըմդա գէչմէդի öլէրիմ դէի,
Բինը բիր ուղըրընա öլէն յավրուլար։

16(16).

Չըքդըմ Գյավուր դաղըն[1] բաշընա՝
Քարը դիզլայա-դիզլայա,
Յարալար գöզ-գöզ օլդը՝
Ջերահ բէքլէյէ-բէքլէյէ։

17(17).

Ջէհիզըմ սանդըքդա բասըլը քալդը,
Սէվգüլի նշանլըմ քիմլէրէ՞ քալդը,
Արաբ չöլէրինդէ բէնի արադը,
Բինը բիր ուղըրընա գիդէն յավրուլար։

11(11).

Ձորանոցի մեջ մի աղբյուր է հոսում,
Ասկյարները նստած լվացք են անում,
Հազարը մեկի պես գնում են որդիները։

12(12).

Քայլելով-քայլելով ես հասա գնդիս,
Աստծուց առաջ հրացանիս ապավինեցի,
Հազարը մեկի պես գնում են որդիները։

13(13).

Քայլելով, քայլելով ոտնամանս ավազ լցվեց.
Ավազի տեղ սրտումս արյուն լցվեց,
Հազարը մեկի պես գնում են որդիները։

14(14).

Խնայի՛ր, չերքե՞զ, խնայի՛ր դու ինձ.
Նշանածս նոր է՝ սևեր կկապի,
Հազարը մեկի պես գնում են որդիները։

15(15).

Ասկյար գնացի՝ ետ գալու համար,
Հրացանս լցրեցի՝ խփելու համար,
Թե ինձ կսպանեն՝ մտքովս չանցավ.
Հազարը մեկի պես մեռնում են որդիները։

16(16).

Բարձրացա Գյավուր լեռան[1] վրա
Ձյան վրա մագլցելով,
Վերքերս աչք-աչք դարձան
Մի բժշկի սպասելով։

17(17).

Օժիտս սնդուկում դարսված մնաց,
Սիրած նշանածս արդյոք ո՞ւմ մնաց,
Նա ինձ փնտրում է արաբի անապատում.
Հազարը մեկի պես գնում են որդիները։

---

[1] Գյավուր լեռ է կոչվել, որովհետև այնտեղ շատ հայեր են զոհվել։

## 18(18).

*Բիթլիս քափուսընդա չինար աղաջը,*
*Այրըլըք շէրբէթի գէհիրդէն աջը,*
*Սöյլէին անէմէ. անէմ աղլասըն,*
*Անէմդէն բաշխա յալան աղլար։*

## 18(18).

*Բիթլիսի դարբասի մոտ մի ծառ կա չինարի,*
*Բաժանման օշարակը դառն է թույնից,*
*Ասացեք մորս, մայրս թող լաց լինի.*
*Բացի նրանից ուրիշը կեղծ կլացի։*

## 19(19).

*Սöյլէսին դէստանլար դիլէրդէն-դիլէ,*
*Գէլին դէ գöրին Ջէյթուն դաղլարդա*
*Էրմէնի ֆէդայի չօք դըր դաղլարդա,*
*Բինը բիր ուղրընա öլէն յավրուլար։*

## 19(19).

*Բերնից բերան վիպերգ թող ասեն,*
*Զեյթունի լեռներում թող գան ու տեսնեն,*
*Հայ ֆիդայիներ շատ կան լեռներում.*
*Հազարը մեկի պես մեռնում են որդիները։*

## 20(20).

ՕԼԱՆ ԳՅԱՎՈՒՐ, ԴՈՂՐՈՒ ՍՕՅԼԷ

*— Օլան գյավո՛ւր, դօղրու սöյլէ,*
*Սէնդէ մարթին վա՞րմըշ։*
*— Հայը՛ր էֆենդիմ, իֆդիրա դըր,*
*Բիլմէ՛մ, գöրմէ՛դիմ, բիլմէ՛մ, գöրմէդի՛մ։*
*(Պատեն կախված է՝ չե՛մ ըսեր)։*

*— Օլան գյավո՛ւր, դօղրու սöյլէ,*
*Սէն թüրք զաբիթ öլդüրմի՞շսըն։*
*— Հայը՛ր էֆենդիմ, իֆդիրա դըր,*
*Բիլմէ՛մ, գöրմէ՛դիմ, բիլմէ՛մ, գöրմէդի՛մ։*
*(Վեց-յոթը հատ սպանած եմ)։*

*— Օլան գյավո՛ւր, դօղրու սöյլէ,*
*Սէնին արքադաշըն վա՞րմը դըր։*
*— Հայը՛ր էֆենդիմ, իֆդիրա դըր,*
*Բիլմէ՛մ, գöրմէ՛դիմ, բիլմէ՛մ, գöրմէդի՛մ։*
*(Հինգ հարյուր հոգի ենք՝ չե՛մ ըսեր)։*

*— Օլան գյավո՛ւր, դօղրու սöյլէ,*
*Սէրօփ փաշայը թանը՞ր սըն։*
*— Հայը՛ր էֆենդիմ, իֆդիրա դըր,*
*Բիլմէ՛մ, գöրմէ՛դիմ, բիլմէ՛մ, գöրմէդի՛մ։*
*(Գիտեմ՝ չե՛մ ըսեր, գիտեմ՝ չե՛մ ըսեր)։*

*— Օլան գյավո՛ւր, դօղրու սöյլէ,*
*Սէն Մէրսինէ բօմբա յօլադըն։*
*— Հայը՛ր էֆենդիմ, իֆդիրա դըր,*
*Բիլմէ՛մ, գöրմէ՛դիմ, բիլմէ՛մ, գöրմէդի՛մ։*
*(Այո՛, ղրկե՛լ եմ, չե՛մ ըսեր)։*

## 20(20).

ԾՈ՜, ԳՅԱՎՈ՜ՒՐ, ՃԻՇՏՆ ԱՍԱ

*— Ծո՛, գյավո՛ւր, ճիշտն ասա,*
*Քո մոտ հրացան կա՞։*
*— Հարգե՛լի տեր, հերյուրանք է,*
*Չգիտե՛մ, չե՛մ տեսել, չգիտե՛մ, չե՛մ տեսել։*
*(Պատեն կախված է՝ չե՛մ ըսեր)։*

*— Ծո՛, գյավո՛ւր, ճիշտն ասա,*
*Դու թուրք զաբիթ սպանե՞լ ես։*
*— Հարգե՛լի տեր, հերյուրանք է,*
*Չգիտե՛մ, չե՛մ տեսել, չգիտե՛մ, չե՛մ տեսել։*
*(Վե՛ց-յո՜թը հատ սպանած եմ)։*

*— Ծո՛, գյավո՛ւր, ճիշտն ասա,*
*Դու ընկերներ շատ ունե՞ս։*
*— Հարգե՛լի տեր, հերյուրանք է,*
*Չգիտե՛մ, չե՛մ տեսել, չգիտե՛մ, չե՛մ տեսել։*
*(Հի՛նգ հարյուր հոգի ենք՝ չե՛մ ըսեր)։*

*— Ծո՛, գյավո՛ւր, ճիշտն ասա,*
*Սերոբ փաշային ճանաչո՞ւմ ես։*
*— Հարգե՛լի տեր, հերյուրանք է,*
*Չգիտե՛մ, չե՛մ տեսել, չգիտե՛մ, չե՛մ տեսել։*
*(Գիտեմ՝ չե՛մ ըսեր, գիտեմ՝ չե՛մ ըսեր)։*

*— Ծո՛, գյավո՛ւր, ճիշտն ասա,*
*Դու Մերսին ռումբ ուղարկե՞լ ես։*
*— Հարգե՛լի տեր, հերյուրանք է,*
*Չգիտե՛մ, չե՛մ տեսել, չգիտե՛մ, չե՛մ տեսել։*
*(Այո՛, ղրկե՛լ եմ. չե՛մ ըսեր)։*

— Օլան գյավո՛ւր, դօղրու սö՛յլէ,
Բանքայը բասան սէ՞ն մի սըն[1]։
— Հայըր էֆէնդիմ, իֆդի՛րա դըր,
Բիլմէ՛մ, գöրմէ՛դիմ, բիլմէ՛մ, գöրմէդի՛մ։
(Մե՛նք էինք՝ չե՛մ ըսեր, հայոց ազգը չե՛մ
մատներ)։

— Ո՞ո՛, գյավո՛ւր, ճիշտն ասա,
Բանկը ներխուժողը դո՞ւ էիր[1]։
— Հարգե՛լի տեր, հերյուրանք է,
Չգիտե՛մ, չե՛մ տեսել, չգիտե՛մ, չե՛մ տեսել։
(Մե՛նք էինք՝ չե՛մ ըսեր. հայոց ազգը չե՛մ
մատներ)։

## 21(21).
### ՓՐԿԻՉԻՆ[2] ՅՕԼԼԱՐԸ

Փրկիչին յօլլարը դաշ ինան թիքէն,
Օլմասըն չիհանդա թիքէնի էքէն,
Փրկիչին քափուսը դաղլարա բաքար,
Հասդալար օթուրմուշ սըրայա բաքար։

Դօքթօրլար գէլինջէ՝ յուրէգլէր քալքար,
Քօրքարըմ. Զարդարյան բանա բաքաջաք,
Բիրազ դո՛ւր, Զարդարյա՛ն, սօլուք ալայըմ,
Ջանըմ ինան թէնիմի թէսլիմ օլայըմ։

Ղըյմա՛, դօքթօ՛ր Զարդարյան, ղըյմա՛ ջանըմա,
Ցիրմի բէշ յաշընդա քօ՛յմա թօփրաղա,
Չօլուք-չօջուղըմ վար քալըր մէյդանդա,
Չöւնքի յազըք օլաջաք յարիմ իլէն բանա։

Մէզարըմը Բալըքլըյա[3] քօյսունլար,
Թասֆիրիմը բաշ ուջունա քօյսունլար,
Գէլէն-գէչէն՝ ջահիլ öլմüշ դէսինլէր,
Հէ՛մ հասրէթլիք, հէ՛մ ղուրբէթլիք բաշըմա։

## 21(21).
### ՓՐԿԻՉԻ[2] ՃԱՄՓԱՆԵՐԸ

Փրկիչի ճամփաները քար ու տատասկ,
Աշխարհում ոչ ոք չի աճեցնի տատասկ,
Փրկիչի դուռը լեռներին է նայում,
Հիվանդները նստած հերթի են սպասում։

Բժիշկների գալով՝ սրտերն են թունդ ելնում,
Վախենում են Զարդարյանն ինձ է քննելու,
Զարդարյա՛ն, թույլ տուր, շունչ առնել մի քիչ.
Մարմինս ու հոգիս քեզ եմ հանձնելու։

Խնայի՛ր, բժի՛շկ, խնայի՛ր իմ հոգին,
Քսանհինգ տարեկան ինձ հող մի՛ մտցնի,
Անտեր կմնան մանուկներն իմ
Ափսոս կլինի ինձ ու իմ յարին։

Շիրիմս Բալըկլըյում[3] թող փորեն,
Նկարս գլխիս վրա թող դնեն,
Եկող-գնացողը՝ վաղամեռ էր թող ասեն,
Ե՛վ կարոտ, և՛ պանդխտություն իմ գլխին։

## 22(22).
### ԲԱՆՏԱՐԿՅԱԼԻ ԵՐԳ

Ես ծնվել եմ Աղաբազար,
Կանչեցին ինձ զինվորության,
Ես ալ ըսի շատ համարձակ.
— Ձգելով ես սիրելի մայր,
Չորս քույրեր ալ պատվական.
Եթե վիզս անգամ կտրեք,
Թուրքի զինվոր չե՛մ ըլլար ես։
Բռնեցին ինձ, տարին խասկալ,
Ծեծով, ջարդով նետեցին բանտ,
Չեն հասկանար հասարակ բան.
Փոխանակ թուրք ասկյար դառնամ,
Անդրանիկին զինվոր կըլլամ։

## 23(23).
### ԲԱՆՏԻՍ ԴՌՆԵՐՆ ԷԻՆ ՅՈԹԸ ՔԱՐԵՐՈՎ

Բանտիս դռներն էին յոթը քարերով,
Շենքն էր ամուր պատած երկաթ ջաղերով,
Հանկարծ լսվեց դռներու ձայն,
Թուրք զինվորներ ներս նետվեցան։
Առտուն կանուխ ժամը չորսին,
Մահվան յաֆթան կրծքիս դրին,

1 Պատմական շերտավորումներ ունեցող այս երգի հատվածները գրի ենք առել մի քանի բանասացներից։ Ըստ ադաբազարցի երգասաց Մաննիկ Կիրակոսյանի (ծնվ. 1929 թ.) երգի այս մասը հորինվել է Սոլոս գյուղից Զարեհ Խաչոյանի շուրջ։ Նա Բանկ Օտոմանի դատավարության ժամանակ խնդրում է զուգարան գնալ։ Մտնում է, ծորակի բռնիչը հանում, դրանով իր փորը պատռում, աղիքները դուրս թափում ու մեռնում է, բայց չի խոստովանում։

2 Պոլսո ս. Փրկիչ հայկական հիվանդանոցը։

3 Ս. Փրկիչ հիվանդանոցին կից գերեզմանատունը։

Կախաղանին առաջը տարին,
Վերջին խոսքս ըսել տվին.
— Բաճկոնակս նվեր տարեք մայրիկիս,
Մի՛ ըսեք, թե որդիդ կախվավ,
Այլ՝ պանդուխտ է բանտին մեջ։
Ժամացույցս նվեր տվեք քույրիկիս,
Մի՛ ըսեք, թե եղբայրդ կախվավ,

**24(24).**
ՂԱՍԱԲ ՄԻՍԱԿ[1]

Ասլան գիբի էջէլիմ բու.
Մահգիւբիմէ սէբէբ օլանըն
Աջաբ բու հալըմ քընանը՞ր մը,
Քէնդիրլէր, անէ՛մ, յաղլանը՞ր մը,
Բաշը աշըք, այաըն յաղնագ
Բէնիմ գիբի սալլանը՞ր մը։

Բու նէ հալ դըր, ղասա՛բ Միսակ,
Բու հալինէ ջան դայանը՞ր մը,
Ղօյուն գիբի ասըլմըշ սըն,
Սէնի գö՞րէն դայանը՞ր մը,
Էֆէնդի՛մ, ամա՛ն, ամա՛ն։

Բաքըըմ՝ բէյազ էնթարը գէյդիրդիլէր
Գէչէ վաքըդ՝ ռուսյա գիբի,
Դարաղաջըմըն աշըիբինդէն
Թէշլիմ աքար Ջըհան[2] գիբի,
Դարաղաջըմ հազըրդըլար,
Անէմ բէքլէր մö՞հբան գիբի։

Բու նէ՞ հալ դըր, ղասա՛բ Միսակ,
Բու հալինէ ջան դայանը՞ր մը,
Ղօյուն գիբի ասըլմըշ սըն,
Սէնի գö՞րէն դայանը՞ր մը,
Էֆէնդի՛մ, ամա՛ն, ամա՛ն։

**25(25).**
ՀԱՆԻՅԱԴԱ ԲԷՆԻՄ ԴՈՒԶ-ԷՔՄԷԻՆ ՅԷՅԷՆԼԷՐ

Հանիյադա բէնիմ դուզ-էքմէկին յէյէնլէր,
«Էխբաբ öլմէդէն՝ բէն öլէրիմ»,— դէյէնլէր,
Բէն բանա էթդիմ, անա՛մ, քի՞մէ նէ՛ դէյիմ.
Էլիմ լէ դö՞շդիմ, քի՞մէ նէ՛ դէյիմ։

Ջըքա-չըքա շու բեքադա բաքարըմ,
Դէլի գöյնիմ աթէշլարա յաքարըմ,
Մէվլամ իզին վէրիրսէն, մախբուսդան չքարըմ,
Բէն բանա էթդիմ, անա՛մ, քի՞մէ նէ՛ դէյիմ։

Այլ՝ պանդուխտ է բանտին մեջ։
Հոգիս տարեք իմ սիրելի Նազլուին,
Մի՛ ըսեք, թե յարդ կախվավ,
Այլ՝ պանդուխտ է բանտին մեջ։
Գերեզմանս դո՛ւք փորեցեք,
Գերեզմանիս քարին վրա՝
Նահատակ է, գրեցեք։

**24(24).**
ՄՍԱԳՈՐԾ ՄԻՍԱԿԸ[1]

Առյուծի պես օրհասն իմ.
Մահվանս պատճառ դարձողը
Արդյոք ինձ պես կծաղրվի՞,
Կախօղակից կկախվի՞.
Ոտաբոբիկ ու գլխաբաց,
Արդյոք ինձ պես կճոճվի՞։

Սա ի՞նչ վիճակ է, մսագո՛րծ Միսակ,
Այս վիճակիդ մարդ կդիմանա՞,
Քեզ կախ տվին ինչպես ոչխար,
Քեզ տեսնողը կդիմանա՞,
Տե՛ր իմ, ավա՛ղ, ավա՛ղ։

Տես՝ ճերմակ շապիկ հագցրեցին
Երազի պես մութ գիշերվա,
Վշտիս արցունքները կախաղանից
Ջրհանի[2] պես հոսում էին,
Կախաղանս հապճեպ պատրաստեցին.
Սպասում է մայրս որպես զոհի։

Սա ի՞նչ վիճակ է, մսագո՛րծ Միսակ,
Այս վիճակիդ մարդ կդիմանա՞,
Քեզ կախ տվին ինչպես ոչխար,
Քեզ տեսնողը կդիմանա՞,
Տե՛ր իմ, ավա՛ղ, ավա՛ղ։

**25(25).**
ՈՒՐ ԵՆ ԻՄ ԱՂ ՈՒ ՀԱՑՆ ՈՒՏՈՂՆԵՐԸ

Ո՞ւր են իմ աղ ու հացն ուտողները.
«Ընկերս չմեռած՝ ես մեռնեմ»,— ասողները,
Ես ի՞նչ անեմ, մայրի՛կ, ո՞ւմ ի՛նչ ասեմ.
Ձեռքովս ընկա, ո՞ւմ ի՛նչ ասեմ։

Շուլըլվեցի, պատուհանից նայեցի,
Ջահել կյանքս կրակներում վառեցի,
Աստված կամենա՝ բանտից կազատվեմ.
Ձեռքովս ընկա, մայրի՛կ, ո՞ւմ ի՛նչ ասեմ։

---

1 Այս վիպերգը երգել է այնթապցի Հեքիմյան Գևորգը։ Ըստ նրա, Միսակը 1909 թ. Ադանայի կոտորածի ժամանակ մսագործ (ղասաբ) է եղել։ Տեսնելով այդ ահավոր ջարդը նա, վրեժով լցված, իր խանութի նկուղում մի քանի թուրք է սպանել, մսերը խորոված արել ու կերցրել է թուրքերին։ Վերջում թուրքական կառավարության կողմից գործը բաց է, և մսագործ Միսակին ոչխարի պես կախաղան են բա րացրել։ Երգասացն ավելացնում է. «Արդյոք ճիշտ է, սխալ, ստույգ չեմ կարող ասել»։

2 Կիլիկիայի կենտրոնով հոսող գետ։

Սօվարլարը աթլարը չէմլիյօր,
Մախբուսխանա ո̈ւսդո̈ւմիզէ դամլըյօր,
Բէն բանա էթդիմ, անա՛մ, քի՞մէ նէ՛ դէյիմ.
Էլիմ լէ դո̈ւշդիմ, քի՞մէ նէ՛ դէյիմ։

Բաբամը չադըրլարը դօլանըյօր,
Անամ դա բաշ ո̈ւսդո̈ւնէ աղլըյօր,
Բէշարա նիշանըմ քարալար բաղլըյօր,
Բէն բանա էթդիմ, անա՛մ, քի՞մէ նէ՛ դէյիմ.
Էլիմ լէ դո̈ւշդիմ, քի՞մէ նէ՛ դէյիմ։

Արարա դաղդա[1] դուման բո̈ւրո̈ւթդի,
Տղլիգ* Սարգիս, Թաալաք* Միսակ վուրուլմըշ,
Բէն բանա էթդիմ, անա՛մ, քի՞մէ նէ՛ դէյիմ.
Էլիմ լէ դո̈ւշդիմ, քի՞մէ նէ՛ դէյիմ։

Ջիապանները ձիերին են կերակրում,
Բանտի կտուրից մեր վրա է կաթկթում,
Ես ի՞նչ անեմ, մայրի՛կ, ո՞ւմ ի՛նչ ասեմ.
Ձեռքովս ընկա, ո՞ւմ ի՛նչ ասեմ։

Հայրս վրաններն է լցնում,
Մայրս՝ գլխիս վրա լաց լինում,
Խեղճ նշանածս սևեր է կապում,
Ես ի՞նչ անեմ, մայրի՛կ, ո՞ւմ ի՛նչ ասեմ.
Ձեռքովս ընկա, ո՞ւմ ի՛նչ ասեմ։

Արարա լեռան[1] մշուշն է պատել,
Տղլիկ* Սարգիսն ու Թաալաք* Միսակը խփվել են,
Ես ի՞նչ անեմ, մայրի՛կ, ո՞ւմ ի՛նչ ասեմ.
Ձեռքովս ընկա, ո՞ւմ ի՛նչ ասեմ։

## 26(26).
### ԷՖԷ ԹՕՐՕՍ[2]

Էնգո̈ւրիդէն չըքդըղըմը գöրմիշլէր,
Քրադըմըն յօրուշուդէն բիլմիշլէր՝
Շու գէլէն էֆէ Թօրօս դէմիշլէր։
Դօղուրմազ օլայըդըմ, ա՛յ անամ, բաշըմ բէլալը·
Էլլէրիմ՝ քէլէփչէ, բօղազըմ՝ լալալը։

Էնգո̈ւրիդէն չըքդըմ սահաթ բէշ իդի,
Բէնիմ արխադաշլարը՝ օն բէշ իդի,
Öլդո̈ւրդո̈ւիմ չէրքէզ՝ յուզ օն բէշ իդի։
Դօղուրմազ օլայըդըմ, ա՛յ անամ, բաշըմ բէլալը·
Էլլէրիմ՝ քէլէփչէ, բօղազըմ՝ լալալը։

Անքարանըն ըշըքլարը փառլըյօր,
Ջալըմ դո̈ւշմանլարը ուռգան յաղլըյօր,
Ուռգանըն ո̈ւսդո̈ւնէ քանըմ դամլըյօր։
Դօղուրմազ օլայըդըմ, ա՛յ անամ, բաշըմ բէլալը·
Էլլէրիմ՝ քէլէփչէ, բօղազըմ՝ լալալը։

— Ասմայը՛ն օղլումը, ալայըմ սաթըն,—
Թօրօսըն անասը՝ բիր քյուչյուք քադըն,—
Ջէբիմիդէ բուլունըր բին բէշ յո̈ւզ ալթուն։

## 26(26).
### ԹՈՐՈՍ ԷՖԵՆԴԻՆ[2]

Էնգյուրիից դուրս գալս տեսան,
Նժույգիս դոփյունից հասկացան՝
Այս եկողը Թորոս էֆենդին է, ասացին։
Չծնված լինեի փորձանքի մեջ, մա՛յր իմ.
Ձեռնակապ՝ ձեռքիս, շղթաներ՝ վզիս։

Էնգուրիից դուրս եկա ժամը հինգին,
Իմ ընկերները՝ տասնհինգն էին,
Սպանածս չերքեզները՝ հարյուր տասնհինգ էին։
Չծնված լինեի փորձանքի մեջ, մա՛յր իմ.
Ձեռնակապ՝ ձեռքիս, շղթաներ՝ վզիս։

Անկարայի լույսերն են փայլում,
Նենգ թշնամին կախաղանն է յուղում,
Պարանի վրա արյունս է կաթում։
Չծնված լինեի փորձանքի մեջ, մա՛յր իմ,
Ձեռնակապ՝ ձեռքիս, շղթաներ՝ վզիս։

— Մի՛ կախեք որդուս՝ կվճարեմ փրկագին,—
Թորոսի մայրը՝ մի փոքրիկ տիկին,—
Գրպանումս կգտնվի հազար հինգ հարյուր ոսկի։

---

1 Հայ կամավոր լեգեոնականները 1918 թ. Արարա լեռան (Պաղեստին) մոտ պարտության են մատնել գերմանա-թուրքական զորքերին՝ արժանանալով ֆրանսիական ու անգլիական դաշնակիցների խրախուսանքին։ Այդ խիզախ մարտերում զոհվել են նաև Տղլիկյան Սարգիսն ու Թաալաքյան Միսակը, իսկ երգասաց Մարիամ Բաղդիշյանի ամուսինը՝ Կարապետը, հաղթական վերադարձել է տուն և իր կնոջը սովորեցրել կռվի ժամանակ հորինված այս երգը։

* Կրճատված է Հայկական ազգանվան «յան» վերջավորությունը։

2 Այս երգի խոսքերը հագիվ վերհիշեց չալղարանցի (էսքիշեհիր) Փարթըրյան Սամվելը (ծնվ. 1900 թ.)։ Ըստ նրա, էֆե՝ էֆենդի (պարոն) Թորոսն իր վրիժառու խմբով շատ վնասներ է հասցրել թուրքերին, որոնք նրան մահվան են դատապարտել։ Թորոսի մայրը փորձել է փրկագնով ազատել իր որդուն, բայց թուրքերը յուղոտած պարանով կախել են նրան։

— Վարը՛ն, սöյլէ՛յին անէմէ, բօղչամ աչմասըն,
Ջուխա շալվարըմա ուշղուր դաքմասըն,
«Օղլուն Թօրօս գէլիր դէյի» յօլա բաքմասըն.
Ղայրը բէն սիլամա վարամազ օլդում,
Ըսկուհի նըշանլըմ գöրէմէզ օլդում,
Դարաչըք սօքաքդան գէչիրմէզ օլդում։

Շու դաղըն արդընդա բիր գէզէն օլսա,
Ջայըրը-չըրփըյը յօքլայան օլսա,
Էրմէնի միլլէթէ բիր բէյլիք օլսա՝
Ղուշ գիբի գöնöլէրիզ մէյդանդա,
Բիզ öլöրէդիզ միլլէթ յօլընա։

— Գնացե՛ք, ասացե՛ք մորս՝ օժիտս չբացի,
Բրդյա շալվարիս խոնջան չանցկացնի,
«Թորոս որդին գալիս է» ասելով՝ ճամփին չնայի.
Արդեն ես օգնել չեմ կարող հայրենիքիս,
Տեսնել չեմ կարող Իսկուհի նշանածիս,
Դուրս գալ չեմ կարող այս նեղ վիճակից։

Եթե լեռները մի հսկող լինի,
Թուփ ու ծառ խուզարկող լինի,
Հայ ազգին մի թագավոր լինի՝
Արծվի պես երկնքում կսավառնենք,
Մեր ազգի փառքի համար կզոհվենք։

## 2. ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԿՈՏՈՐԱԾԻ ԵՐԳԵՐ

### 1(27).
### ՕՅԱ՛Ն, ՍՈՒԼԹԱ՛Ն ՀԱՄԻԴ, ՕՅԱ՛Ն

*Փէնչէրէդէն քար գէլիյօր,*
*Բաք ղըշարը քի՞մ գէլիյօր,*
*Օյա՛ն, սո՛ւլթան Համիդ, օյա՛ն.*
*Քան աղլյօր բու̈թու̈ն ջիհան[1]։*
*Ամա՛ն, ամա՛ն, մայրի՛կ։*

*Ջայա էնդիմ. չայ գէչիլմէզ,*
*Սու բուլանդը, հէչ իչիլմէզ,*
*Օյա՛ն, սո՛ւլթան, զա՛լըմ սուլթան.*
*Քան աղլյօր բու̈թու̈ն ջիհան։*
*Ամա՛ն, ամա՛ն, մայրի՛կ։*

*Դուզլու օլուր Ստամբուլըն ֆադըղը,*
*Դաշդան օլուր էրմէնինին յասդըղը,*
*Քöռ օլասըն չու մէյդանըն դօսթլըղը[2].*
*Ալդըլար նազլը յարիմ, դույան աղլասըն*
*Ամա՛ն, ամա՛ն, մայրի՛կ։*

### 1(27).
### ՋԱՐԹՆԻ՛Ր, ՍՈՒԼԹԱ՛Ն ՀԱՄԻԴ, ՋԱՐԹՆԻ՛Ր

*Պատուհանից ձյուն է գալիս,*
*Տեսեք դրսից ո՞վ է գալիս,*
*Զարթնի՛ր, սուլթա՛ն Համիդ, զարթնի՛ր.*
*Ողջ աշխարհն արյուն է լալիս[1]։*
*Ավա՛ղ, ավա՛ղ, մայրի՛կ։*

*Գետափ իջա. գետն անցնել չի լինի,*
*Ջուրը պղտոր է. խմել չի լինի.*
*Զարթնի՛ր, սուլթա՛ն, ահե՛ղ սուլթան.*
*Ողջ աշխարհն արյուն է լալիս։*
*Ավա՛ղ, ավա՛ղ, մայրի՛կ։*

*Աղի է լինում Ստամբուլի պիստակը.*
*Քարից է լինում հայերի բարձը.*
*Կուրանար այս ձևական բարեկամությունը[2].*
*Տարան սիրած յարիս, լսողը թող լաց լինի։*
*Ավա՛ղ, ավա՛ղ, մայրի՛կ։*

### 2(28).
### ՓԱԴԻՇԱՀ ՕԹՈՒՐՄՈՒՇ ԹԱԽԴԸՆԴԱՆ ԲԱՔԱՐ

*Փադիշահ օթուրմուշ թախդընդան բաքար.*
*Թախդընըն ալթընդա ալ-քանլար աքար.*
*Բալթայը վուրընջա՝ յաթդը öլէչլէր.*
*Աջայիբ հալլէրէ դու̈շդի էրմէնի։*

*Շէֆքէթլիմ օթուրմուշ թախդընդան բաքար.*
*Գյավուրըն քանլարը սէլ գիբի աքար.*
*Հու̈րյէթ խոդիյէնլէր դէրէդէ քօքար.*
*Աջայիբ հալլէրէ դու̈շդի էրմէնի։*

### 2(28).
### ՏԻՐԱԿԱԼԸ ՆՍՏԱԾ՝ ԳԱՀԻՑ Է ԴԻՏՈՒՄ

*Տիրակալը նստած՝ գահից է դիտում,*
*Գահի տակից ալ արյուն է հոսում.*
*Կացնի հարվածով դիակներն են փռվում.*
*Ողբալի վիճակի հասան հայերը։*

*Տիրակալը նստած՝ գահից է դիտում,*
*Հայերի արյունը հեղեղի պես է հոսում.*
*Ազատության ձգտողները ձորերում են նեխում.*
*Ողբալի վիճակի հասան հայերը։*

### 3(29).
### ՂԸՑՄԱ ԱԴԱՆԱ[3]

*Հէ՜յ, չամլա՛ր, չամլա՛ր, ալ-աչըխ, չամլա՛ր,*
*Հէր գու̈նէշ վուրընջա՝ սաքըզ դամլար,*

### 3(29).
### ՋԱՐԴՎԱԾ ԱԴԱՆԱ[3]

*Հե՜յ, մայրինե՛ր, մայրինե՛ր, գույն-գույն*
*մայրինե՛ր,*
*Ամեն արև դիպչելիս՝ խեժը ծորում է կաթ-կաթ,*

---

1 Ակնարկում է 1894—96 թթ. հայկական կոտորածները։

2 Նկատի ունի 1908 թվի Օսմանյան Թուրքիայի Սահմանադրությունը, որը, Թուրքիայում ապրող բոլոր ժողովուրդներին, անկախ ազգությունից ու դավանանքից, խոստանում էր «Ազատություն, Արդարություն, Եղբայրություն, Հավասարություն»։

3 Այս երգը հորինվել է 1909 թ. Ադանայի կոտորածի առիթով (Սանոթություն բանասացի) այսուհետև կրճատ՝ (Ս. Բ.)։

Մաքրոզ դամլար սա՝ յուրէիմ աղլար.
Ադանա ըրմաղը սէլ գիբի աքար.
Օ՜ֆ, իշդէ գէլդիմ սանա, ղըյմա՜ Ադանա,
Օ՜ֆ, իշդէ գörդիմ սիզէ, ղըյմա՜ չօջուքլար։

Ադանա քöփրիսը թախդա դըր, թախդա,
Էրմէնի մուհաջիրը գէլիր բու հավթա,
Ադանա ըրմաղը լէշ իլան քանլար,
Քալդըրը՛ն լէշլէրի՝ Ադանա քոքար.
Օ՜ֆ, իշդէ գէլդիմ սանա, ղըյմա՜ Ադանա,
Օ՜ֆ, իշդէ գörդիմ սիզէ, ղըյմա՜ չօջուքլար։

Խեժք ծորալիս՝ սիրտս է լաց լինում.
Ադանայի գետն է հեղեղի պես հոսում.
Ավա՜ղ, քեզ եկա, ջարդվա՜ծ Ադանա,
Ավա՜ղ, ձեզ տեսա, մանուկնե՜ր մորթված։

Ադանայի կամուրջը փայտյա է, փայտյա,
Հայ գաղթականները կգան այս շաբաթ,
Ադանայի գետում՝ արյուն ու դիակ,
Հավաքե՛ք դիակները. կհոտի Ադանան.
Ավա՜ղ, քեզ եկա, ջարդվա՜ծ Ադանա,
Ավա՜ղ, ձեզ տեսա, մանուկնե՜ր մորթված։

## 4(80).
### ԱԴԱՆԱՅԻ ԿՈՏՈՐԱԾԸ

Առավոտյան արշալույսին
Չորս կողմերնիս պատեցին.
Հազարավոր գնդակներ
Կարկուտի պես տեղացին։

Արյան կարմիր գույներով
Խեղճ Ադանան ներկեցին

Եվ հայերուն դիակները
Ասդին, անդին փռեցին։

Կացիններու հարվածներով
Դուռ, պատուհան կոտրեցին.
Չթողեցին փայլուն տուն
Ու բոլորն ալ այրեցին։

## 5(81).
### ԱԴԱՆԱՅԻ ՈՂԲԸ[1]

Կոտորածն անգութ՝ հայերը թող լան,
Անապատ դարձավ շքեղ Կիլիկիան,
Կրակն ու սուրը և անխիղճ թալան,
Ռուբինյանց տունը, ա՜խ, ըրին վերան։

Բախտ մը չանցավ ու անզեն հայեր
Ինկան սուրին տակ խուժանին առջև,
Ժամեր, դպրոցներ բոցի մեջ կորան,
Բյուրավոր հայեր անխնա մեռան։

Անգութ թուրքերը որբացրին, թողին.
Զավակը՝ մորմեն, հարսը՝ իր փեսեն,

Ջարդ ու խուրդ ըրին ինչ որ պատահեց,
Կերան, կշտացան հայու արյունեն։

Երեք օր-գիշեր կրակը՝ ներսեն,
Թշնամու սուրը, գնդակը՝ դուրսեն,
Ջնջեցին հայեր երկրի երեսեն,
Արյուն կվազեր հայ փողոցներեն։

Պարապ է, հե՜յ վախ, հարուստ Ադանան,
Մոխիր է դարձեր ամբո՜ղջ Կիլիկիան,
Միայն ապրեցավ Հաճընը սիրուն,
Ինչո՞ւ չի շարժիր ապառաժ Զեյթուն։

## 6(82).
### ՎԱ՜Յ, ԱՄԱ՜Ն

Ես ի՞նչ պիտ ընեմ տառապյալ կյանքը,
Վա՜յ, ամա՜ն,
Ես պիտի անցնիմ սատծո փառքը,
Ա՜խ, ամա՜ն։

Յոթը աղջիկ փախան, գնացին,
Վա՜յ, ամա՜ն,
Երեքին՝ զարկին, չորսին՝ բռնեցին,
Ա՜խ, ամա՜ն։

---

1 Սմբատ Բյուրատի բանաստեղծության ժողովրդականացած այս տարբերակը մեզ է հաղորդել զեյթունցի Կարապետ Թողլյանը (ծնվ. 1903 թ.)։ Թեպետ նա անգրագետ էր, բայց իր բացառիկ հիշողությամբ մտապահել էր իր լսած գրեթե բոլոր երգերը, որոնք, ինչպես ինքն է պատմել, «ամեն իրիկուն քնանալեն առաջ աղոթքի պես» մրմնջացել է ինքն իր համար, քանի որ «եթե լսեին՝ կըռնեին...»։ Հետևաբար նա մեծ ուրախությամբ էր մեզ հաղորդում իր հիշածները, որպեսզի գրի առնվեն, «չմոռացվին, գալիք սերունդներն ալ սորվին...»։

Պզտիկ Տիգրանուհիին տունը այրեցին,
Վա՜յ, ամա՜ն,
Անոր պես հարուստը մոլլային տվին,
Ա՜խ, ամա՜ն։
Երեք խոջաներ գետին փորեցին,
Վա՜յ, ամա՜ն,
Երիտասարդ հայ տղուն ողջ-ողջ թաղեցին,
Ա՜խ, ամա՜ն։
Անոր քույրիկը տարին խաչեցին,
Վա՜յ, ամա՜ն,
Խաչեն վեր առին՝ ծովը նետեցին,
Ա՜խ, ամա՜ն։
Դպրոցը մտան, վարժուհուն բռնեցին,
Վա՜յ, ամա՜ն,
Բերանը բացեցին՝ լեզուն կտրեցին,
Ա՜խ, ամա՜ն։
Մայրի՛կ, բողջադ առիր, ելար, ո՞ւր գացիր,
Վա՜յ, ամա՜ն,
Դեր Զորի ճամփաները մեռնելո՞ւ գացիր,
Ա՜խ, ամա՜ն։

## 7(83).
### ՀԱԼԱԾՎԱԾ ԵՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՌՆԵՐԵՆ

Հալածված ենք Հայաստանի լեռներեն,
Ո՞վ չի վախնար հուրով սրով մեռնելեն,
Դար ու սարեր անցանք դադար չունեցանք,
Դիակներեն անցանք արցունք չունեցանք։

Արևին տակ մեռնիլն, Աստվա՜ծ իմ, վատ է,
Պուտ մը ջուրի մեր շրթունքը կարոտ է,
Մանուկները կուրծքերուն վրա մորթեցին,
Հորերուն մեջ ողջ մայրերը լեցուցին։

— Ո՞ւր է, մայրի՛կ, ո՞ւր է իմին հայրիկը։
— Չե՞ս գիտեր, որ վատ է թուրքին դանակը։
— Ո՞ւր է, մայրիկ, ո՞ւր է անոր դիակը,
— Արցունքն իջավ մինչև սրտիս հատակը։

Կույս աղջիկներ իրարու ձեռք բռնեցին,
Իրենք զիրենք Եփրա[1] գետը նետեցին։
Երկու օր վերջն ալ խեղճ մայրերուն գիտցուցին,
Խեղճ մայրերուն անմխիթար լացուցին։

## 8(84).
### ԲԼԲՈՒԼՆ ԱԼ ԿԿԱՆՉԵ. ԳԱՐՈ՜ՒՆ Է, ԳԱՐՈ՜ՒՆ

Բլբուլն ալ կկանչե. գարո՜ւն է, գարո՜ւն,
Մի՛ բանար յարանիս. խորո՜ւն է, խորո՜ւն,
Աման, ողորմած Տեր, աս ի՜նչ Դեր Զոր է.
Լալեն աչվնիս կապեր է փերդե։

## 9(85).
### ԴԵՐ ԶՈՐ ԿԵՐԹԱՆՔ ՇԱՐՎԵ-ՇԱՐԱՆ

Դեր Զոր կերթանք շարվե-շարան,
Ուտել, խմել մենք մոռցանք,
Աչվընիրս էղեր են ցավ,
Աչաբ Աստված մեզ մոռցա՞վ։

Դեր Զոր կերթանք լալագին,
Մեր վիճակն է ցավալի.
Չիկա լույս մը, որ բացվի
Ճամփուն վրա ավազի։

Դեր Զոր կերթանք լալագին,
Ցավերուն մեջ մտացրիվ.
— Էլե՛ք, քելե՛ք,— կմխտեն
Խամշիներով ահագին։

Տարագիր ենք, տուն չունինք,
Աքսորված ենք, քուն չունինք,
Չկա մեկը, որ չափե
Մեր տառապանքն աըքան մեծ։

Վրանին առջև ուժասպառ
Հայրս է պառկած հոգեվարք,
Մայրս ալ՝ սիրտով հրեշտակի.
Հացի կարոտ կմեռնի։

Լալեն արցունքս ցամքեցավ՝
Կաթիլ-կաթիլ հոսելեն,
Անմեղ հոգիս մաշեցավ՝
Աս ամենը տեսնալեն։

1 Իմա՝ Եփրատ։

**10(86).**

ՍՈՒՐԳՈՒՆԸՆ ԲԱՑՐԱՂԸ ԱՉԴԸ

*Սüրգüնըն բայրաղը աչդը,*
*Դույումջա գիմի Թափդիլդը,*
*Գէնչ օլանլար դաղլարա քաչդը,*
*Ջանընդան վազ գէչէն դաղլարա քաչդը։*

*Սüրգüնլըք չըքդը, քöյը բոշանդը,*
*Բէնիմ ըըյմէթլը մալըմը Թüրքլէրէ քալդը,*
*Չօլուք-չօջուք յօլչը օլդը,*
*Ալան-Թալանը բաշլադը։*

*Ադանա յափըլըսը բօզ քիրամիԹդէն,*
*Յախամըզ բիԹմէդի քարադան, բիԹդէն,*
*Ալլահ բիզէ քուրԹարսըն բու սէֆիլլիքդէն.*
*Բիշէ դէմէմ՝ սէն դէ դöնէսի՛ն բէնէ.*
*Էլինդէքին սիլահ իլան öլէսի՛ն սէ՛ն։*

ԴԷՐ ԶՕՐ ՉÖԼԸՆԴԱ[1]

**11(87).**

*Աղաչլարդան ղուշ ուչդը,*
*Յանդը յուրէգ Թուխուչդը,*
*Յա՛նմա, յու՛րէիմ, յա՛նմա,*
*Բու այրըլըք բիզէ դüշդը,*
*Բու մուհաջըրլըք բիզէ դüշդը,*
*Բու դերզորլըք բիզէ դüշդը։*

**12(88).**

*Դէր Զօրա գիդէրսէմ՝ գէլէմէմ բէլքի,*
*Նէ՛ էքմէգ, նէ՛ սու՝ öլէրիմ բէլքի.*
*Դէր Զօր վարմադան էրմէնի մուհաջըրը*
*ՕԹուրմըշ հունգո՛ւր-հոնգո՛ւր աղլըյօր։*

**10(86).**

ԱՔՍՈՐԻ ԱՀԱԶԱՆԳԸ ՀՆՉԵՑ

*Աքսորի ահազանգը հնչեց,*
*Լավելուն պես ամեն ինչ փոխվեց*
*Երիտասարդները փախան լեռներ,*
*Կյանքից ձանձրացողը փախավ լեռ։*

*Աքսորն սկսվեց. գյուղը դատարկվեց,*
*Իմ ճոխ ունեցվածքը Թուրքը խլեց,*
*Քայլել սկսեցին մանուկ ու ծեր,*
*Ահավոր կողոպուտն սկսվեց։*

*Ադանան ծեփված է աղյուսից շեկ,*
*Ոչխից, կեղտից չազատվեց օձիքը մեր.*
*Աստված Թող փրկի այս Թշվառությունից մեզ,*
*Ոչինչ չեմ ասում՝ դո՛ւ ես դառնաս մեզ պես.*
*Ձեռքիդ հրացանովը դո՛ւ ես մեռնես։*

ԴԵՐ ԶՈՐԻ ԱՆԱՊԱՏՈՒՄ[1]

**11(87).**

*Ծառերին հավք Թառեց,*
*Վառեց սիրտս՝ բռնկեց,*
*Մի՛ վառվիր, սիրտ իմ, մի՛ վառվիր.*
*Այս բաժանումն է մեր բաժին,*
*Այս գաղԹականուԹյունն է մեր բաժին,*
*Այս դերզորականուԹյունն է մեր բաժին։*

**12(88).**

*Դեր Զոր որ գնամ՝ գուցե չգամ ետ,*
*Առանց հաց, առանց ջուր գուցե և մեռնեմ.*
*Դեր Զոր չհասած հայ գաղԹականը նստած*
*Հոնգուր-հոնգուր լաց է լինում։*

---

1 *1888 Թվին Մուսա լեռում ծնված Քալաշյան Եղիսաբեթը դեռևս 1956 Թվականին առաջին անգամ մեզ հաղորդել է սույն վիպերգից հատվածներ (Տե՛ս* Սվազլյան Վ., *Նշված ժողովածուն, էջ 130—131)։ Նա միաժամանակ մեզ պատմել է. «Արաբստանի անապատում մեր եղած ժամանակ կենդանիների պես էինք. ո՛չ հագուստ, ո՛չ ապրուստ, ո՛չ լվացվել, ո՛չ խմել...։ Բնական պետքի համար անգամ չանդարմը գլխուդ կայնած կըլլար. ո՛չ կին կճանչնային, ո՛չ աղջիկ, ո՛չ նամուս...։ Կերակո՞ւր, ի՞նչ կերակուր. խոտ էինք հավաքում, անասունների պես խո՛տ էինք արածում։ Աղ գտնվեր նե՝ աղեկ. կԹաԹխեինք աղին. ավելի համով կըլլար։ Մեկ-մեկ հեռուեն արաբներ կերևային. բեդևի արաբները ոչխար-մոչխար շատ ունեին, ամմա տուն-տեղ չունեին. չադըրներուն տակ կապրեին։ Աղ քրիստոնյա արաբները մեզի կմեղքնային. քիչ մը փիլավ տային նե՝ ձեռքով-մատներով կլփռտեինք, կուտեինք. չունքի չիգյարը անո՛ւշ է...։ Իմին երեք պզտիկ ձագուկներս ալ աքսորի ճամփաները մեռան։ Անոր համար աս տարիքիս մեն-մենակ մնացած եմ...»։*

*70-ամյա այս խեղճ կինը հավաքարար էր աշխատում Վարդաշենի դպրոցում, հազիվ իր գոյուԹյունը պահպանում։ Վիպերգի հատվածները կատարելիս նա վերհիշում էր իր դառն անցյալն ու իր կորցրած զավակներին. արցունքներն անվերջ հոսում էին նրա աչքերից, ձայնը խզվում էր, ու չէր կարողանում երգել. մի փոքր շունչ էր առնում, կրկին սկսում էր երգել ու կրկին արտասվել...*

*Հետագա տասնամյակներին՝ իմ երկար որոնումների ընԹացքում, երբ նոր բանասացի մոտ սկսում էի արտասանել կամ երգել արդեն ինձ ծանոԹ քառյակները, նրանցից շատերը սկսում էին կամաց-կամաց վերհիշել ու վերապրելով իրենց ողբալի անցյալը, դժվարուԹյամբ, հառաչանքներով, արցունքախառն հեկեկոցներով սկսում էին երգել՝ նորանոր դրվագներ վերհիշելով սրտակեղեք ու երկարապատում այս եղերերգից։*

**13(39).**

Վարա-վարա, վարդըմ Դէր Զօր չöլընա,
Էնդիրդիլէր բիզէ Դէր Զօր դո̈ւզընա,
Դէր Զոր դէդիքլէրի բէյո̈ւգ քասաբա,
Քէսէլէն քէլլէլէր գէլմէզ հէսաբա։

**14(40).**

Դէր Զօր չöլլէրինդէ բո̈ւրիթդի դուման,
Ամանը՜մ, յա՜ման, հալըմըզ յաման,
Ինսան վէ յէշիլ բօյանդը քանա,
Դինինըն ուղրընա öլէն էրմէնի։

**15(41).**

Դէր Զօր չöլընա բո̈ւրիթդի դուման,
Ամանը՜մ, յա՜ման, հալըմըզ յաման,
Ալլահդան բաշխա յօք դըր դէրման,
Դինինըն ուղրընա öլէն էրմէնի։

**16(42).**

Դէր Զօր չöլընա չադըր քուրդուլար.
Էրմէնի միլլէթի չöլա դöքդիլար,
Քալանլարը ըրմաղլարա դöքդիլար,
Քո̈ւքո̈ւրդ իլան քո̈՜ւքո̈ւր-քո̈՜ւքո̈ւր յաքդըլար։

**17(43).**

Դէր Զօր դէդիքլէրի բէյո̈ւգ քասաբա,
Քէսիլէն էրմէնի գէլմէզ հէսաբա,
Օսմանլը էֆրադը դöնմիշ ղասաբա,
Դինինըն ուղրընա öլէն էրմէնի։

**18(44).**

Յօզղատ քասաբա շիրին քասաբա,
Քէսիլէն էրմէնի գէլմէզ հեսաբա,
Օսմանլը էֆրադը դöնմիշ ղասաբա,
Դինինըն ուղրընա öլէն էրմէնի։

**19(45).**

Ուրֆա դէդիքլէրի իգիթ քասաբա,
Քէսիլէն էրմէնի գէլմէզ հեսաբա,
Օսմանլը ասքյարը դöնմիշ ղասաբա,
Դինինըն ուղրընա öլէն էրմէնի։

**13(39).**

Գնացինք, հասանք Դեր Զորի անապատը,
Իջեցրին մեզ բաց դաշտը,
Դեր Զորն էր մի մեծ տեղավայր,
Մորթված գլուխներին էլ հաշիվ չկար։

**14(40).**

Մշուշն է պատել Դեր Զորի անապատին,
Ավա՜ղ, ավա՜ղ, մեր վիճակն է ողբալի.
Մարդիկ ու բույսեր արյունով ներկվեցին,
Հայերն են զոհվում հանուն հավատի։

**15(41).**

Մշուշն է պատել Դեր Զորի անապատին,
Ավա՜ղ, ավա՜ղ, մեր վիճակն է ողբալի.
Աստծուց բացի չունենք մենք ոչինչ,
Հայերն են զոհվում հանուն հավատի։

**16(42).**

Դեր Զորի անապատում վրան լարեցին,
Հայերին անապատը լցրեցին,
Մնացածներին գետերում խեղդեցին.
Կամ՝ անխղճորեն ծծմբով վառեցին։

**17(43).**

Դեր Զոր կոչվածն էր մի մեծ տեղավայր,
Մորթված հայերին էլ հաշիվ չկար,
Օսմանցի մեծերը մսագործ դարձան,
Հայերն են զոհվում հավատի համար։

**18(44).**

Յոզղատն էր մի սիրուն բնակավայր,
Մորթված հայերին էլ հաշիվ չկար,
Օսմանցի մեծերը մսագործ դարձան,
Հայերն են զոհվում հավատի համար։

**19(45).**

Ուրֆա կոչվածն էր հերոս բնակավայր,
Մորթված հայերին էլ հաշիվ չկար,
Օսմանցի ասկյարները մսագործ դարձան,
Հայերն են զոհվում հավատի համար։

20(46).

Քըրըխան գէդիքլէրի քöւչիք քասաբա,
Քէսիլէն էրմէնի գէլմէզ հեսաբա,
Օսմանլը զաբիթլէր դöնմիշ ղասաբա,
Դինինըն ուղրընա öլէն էրմէնի։

21(47).

Սվազդան չխդըմ բաշըմ սէլամէթ,
Դէր Զօրա վարընջա ղօփդը-ղըյամէթ,
Բու քադար մուհաջըր քիմէ՞ էմանէթ,
Դինինըն ուղրընա öլէն էրմէնի։

22(48).

Սուարդան չխդըմ բաշըմ սէլամէթ,
Դէր Զօրա վարընջա ղօփդը-ղըյամէթ,
Էրմէնի շաշըրդը՝ բու նէ՞ դըր հիքմէթ,
Դինինըն ուղրընա öլէն էրմէնի։

23(49).

Դէր Զօր չöլընդա բիր սըրա միշմիշ,
Էրմէնի մուհաջըրը Թիֆօյա դöւշմիշ,
Ամա՛նըմ, յա՛ման, հալըմըզ յաման,
Դէր Զօր չöլընդա քալդըղըմ զաման։

24(50).

Դէր Զօր չöլընդա բիր սըրա միշմիշ,
Էրմէնի մուհաջըրը աչըդան öլմիշ,
Ամա՛նըմ, յա՛ման, հալըմըզ յաման,
Դէր Զօր չöլընդա քալդըղըմ զաման։

25(51).

Դէր Զօրըն իչինդէ նանէլէր բիթէր,
Öլöւշլէրին քօքուսը դöւնյայա յէթէր,
Բու մուհաջըրլըք öլöւմդէն բէթէր,
Դինինըն ուղրընա öլէն էրմէնի։

26(52).

Գիդէ-գիդէ՝ գիդմէզ օլդու դիզլէրիմ,
Աղլա-աղլայա՝ գöրմէզ օլդու գöզլէրիմ,
Ամա՛նըմ, յա՛ման, հալըմըզ յաման,
Դէր Զօր չöլընդա քալդըղըմ զաման։

20(46).

Քըրըխան կոչված էր մի փոքրիկ ավան,
Մորթված հայերին էլ հաշիվ չկար,
Օսմանցի սպաները մսագործ դարձան,
Հայերն են զոհվում հավատի համար։

21(47).

Սվազից դուրս եկանք հանգիստ գլխով,
Դեր Զորում խրարանցում էր ահավոր,
Այսքան գաղթական վստահված է ո՞ւմ.
Հանուն հավատի հայերն են զոհվում։

22(48).

Հանգիստ գլխով դուրս եկանք Սուարից,
Դեր Զորում աղմուկ էր ահռելի,
Հայերն ապշեցին՝ սա ի՞նչ արհավիրք,
Հայերն են զոհվում հանուն հավատի։

23(49).

Դեր Զորի անապատում մի շարք ծիրանի,
Հայ գաղթականները վարակվել են տիֆ,
Ավա՛ղ, ավա՛ղ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը։

24(50).

Դեր Զորի անապատում մի շարք ծիրանի,
Հայ գաղթականները մեռնում են սովից,
Ավա՛ղ, ավա՛ղ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը։

25(51).

Դեր Զորի անապատում անանուխն է բուսել.
Դիակների նեխաչոտն աշխարհն է բռնել,
Այս աքսորը մեզ մահից էլ վատ է,
Հանուն հավատի զոհվում են հայեր։

26(52).

Քայլելով-քայլելով հոգնեցին ծնկներս,
Լալով-ողբալով կուրացան աչքերս,
Ավա՛ղ, ավա՛ղ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը։

27(53).

Դէր Զօր գիդէրքէն լասդիգիմ քայդը,
Ինէգէն-իփլիէ Թöւրքլէրէ քալդը,
Խաբէրի դույանըն բէլի բիքöւլդը,
Դինինըն ուղրընա öլէն էրմէնի։

27(53).

Կոշիկս սահեց Դեր Զորի ճամփին,
Ասեղն ու թելը մնաց Թուրքերին,
Մեջքը կոտրվեց լուրը լսողի,
Հայերն են զոհվում հանուն հավատի։

28(54).

էրմէնի՛, էրմէնի՛, շաշխըն էրմէնի,
Բու գöւնա օլաշմըշ քöռ վէ Թօփալը,
Ամա՛նըմ, յա՛ման, հալըմըզ յաման,
Դէր Զօր չöլընդա քալդըղըմ զաման։

28(54).

Հայե՛ր, հայե՛ր, շվարած հայեր,
Այս օրվան հասան կույր ու կաղերը,
Ավա՜ղ, ավա՜ղ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը։

29(55).

Զատիկ-կիրակի չադըր սöքդöւլէր,
Զօլուխ-չօջուխ յօլա դöքդöւլէր,
Ամա՛նըմ, յա՛ման, հալըմըզ յաման,
Դէր Զօր չöլընա քալդըղըմ զաման։

29(55).

Զատիկ-կիրակի վրանները քանդեցին,
Մանուկ ու ծեր անապատ քշեցին,
Ավա՜ղ, ավա՜ղ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը։

30(56).

Զատիկ-կիրակի չադըր սöքդöւլէր,
Բöւթöւն էրմէնիլէրի չöլա դöքդöւլէր,
Քէչի գիբի էրմէնիլէրի քէսդիլէր,
Դինինըն ուղրընա öլէն էրմէնի։

30(56).

Զատիկ-կիրակի վրանները քանդեցին,
Ողջ հայությանն անապատ քշեցին,
Այծերի պես հայերին մորթեցին,
Հայերն են զոհվում հանուն հավատի։

31(57).

Դէր Զօր չöլընա բիթմէդի յէշիլ,
Աղարդը սաչլարըմ, դöքöւլդի դիշիմ,
Ամա՛նըմ, յա՛ման, հալըմըզ յաման,
Դէր Զօր չöլընա քալդըղըմ զաման։

31(57).

Դեր Զորի անապատում կանաչ չի բուսնի,
Մազերս ճերմակեցին, ատամներս թափվեցին,
Ավա՜ղ, ավա՜ղ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը։

32(58).

Դէր Զօր չöլընա բիթմէդի յէշիլ,
Ղուրշունա դöւզդöւլէր էլլի բին քիշի,
Մէրաքդան դöքöւլդի միլլէթին դիշի,
Դինինըն ուղրընա öլէն էրմէնի։

32(58).

Դեր Զորի անապատում կանաչ չի բուսնի.
Հիսուն հազար հայ գնդակահարեցին.
Տեսնողների ատամները վշտից թափվեցին,
Հայերն են զոհվում հանուն հավատի։

33(59).

Դէր Զօր չöլընա բիթմէդի յէշիլ,
Բիր գöւզէլ բաջըմ վար՝ աթէշա դöւշմիշ,
Անալար-բաբալար յէսիրա դöւշմիշ,
էրմէնի միլլէթը դաղլարա դöւշմիշ։

33(59).

Դեր Զորի անապատում կանաչ չի բուսնի,
Գեղեցիկ քրոջս կրակով վառեցին,
Հայրերին-մայրերին գերեվարեցին,
Հայ ժողովրդին լեռները գցեցին։

**34(60).**

Էրմէնիլէրի մաղարայա դոլդուլար,
Քիրէչ բöքդüւ, աթէշ վէրիբ յաքդըլար,
Ամա՜նըմ, յա՜ման, հայըմըզ յաման,
Դէր Զօր չöլընդա քալդըղըմ զաման։

**35(61).**

Դէր Զօր չöլընդա öւչ աղաչ ինջիր,
Էլիմդէ՝ քէլէփչէ, բօյնըմդա՝ զէնջիր,
Զէնջիր քըմըլդըքչա՝ յուրէիմ ինջիր.
Դինինըն ուղրընա öլէն էրմէնի։

**36(62).**

Սաբախդան քալքդըմ՝ քափու քափալը,
Բին բաշի գէլիյօր էլի զօփալը,
Ուղրընա բրաքմըշ քöռ վէ թօփալը,
Դինինըն ուղրընա öլէն էրմէնի։

**37(63).**

Սաբախդան քալքդըմ՝ գüւնէշ փառլըյօր,
Չէթէլէր օթուրմուշ մարթին յաղըյօր,
Դիլէդիմ Ալլահդան՝ վէրսին բիր իման,
Դինինըն ուղրընա öլէն էրմէնի։

**38(64).**

Սաբախդան քալքդըմ՝ գüւնէշ փառլըյօր,
Օսմանլը ասքյարը սիլահ յաղըյօր,
Էրմէնիա բաքդըմ՝ յա՜ման աղըյօր,
Դինինըն ուղրընա öլէն էրմէնի։

**39(65).**

Սաբախդան քալքդըմ՝ գüւնէշ փառլըյօր,
Գüւնէշըն աթէշը բէնի յաքըյօր,
Ջուլում չէչէնլէր մավզէր յաղըյօր,
Դինինըն ուղրընա öլէն էրմէնի։

**40(66).**

Սաբախդան քալքդըմ՝ գüւնէշ փառլըյօր,
Չէչէնլէր օթուրմուշ թüւֆէնգ յաղըյօր,
Անալար-բաբալար քան-յաշ աղըյօր,
Դինինըն ուղրընա öլէն էրմէնի։

**34(60).**

Հայերին քարանձավի մեջ լցրեցին,
Այրած կիրը կրակի տվեցին՝ վառեցին,
Ավա՜ղ, ավա՜ղ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը։

**35(61).**

Դեր Զորի անապատում երեք թզենի,
Ձեռներիս՝ ձեռկապ, շղթան՝ վզներիս,
Շղթան զնգզնգում է, սիրտս՝ մղկտում,
Հանուն հավատի հայերն են զոհվում։

**36(62).**

Առավոտյան վեր կացա՝ դուռը փակ գտա,
Հազարապետն եկավ ձեռքին կար մահակ,
Կույր ու կաղերին գցել էր իր առաջ,
Հայերն են զոհվում հավատի համար։

**37(63).**

Առավոտյան վեր կացա՝ արևն էր փայլում,
Չեթեները նստած հրացան են յուղում,
Խնդրեցի Աստծուց, որ ցույց տա հնար,
Հայերն են զոհվում հավատի համար։

**38(64).**

Առավոտյան վեր կացա՝ արևն էր փայլում,
Օսմանցի ասկյարները զենքերն են յուղում,
Հայերին նայեցի՝ սաստի՜կ էին լաց լինում,
Հանուն հավատի հայերն են զոհվում։

**39(65).**

Առավոտյան վեր կացա՝ արևն էր փայլում,
Արևի շողերն ինձ էին այրում,
Կատաղի չեչենները զենքերն են յուղում,
Հանուն հավատի հայերն են զոհվում։

**40(66).**

Առավոտյան վեր կացա՝ արևն էր փայլում.
Չեչենները նստած հրացանն են յուղում.
Մայր ու հայրերը՝ արյուն-արցունք են թափում,
Հանուն հավատի հայերն են զոհվում։

**41(67).**

Սարախդան բաքդըմ՝ գöւնէշ փարլըյօր,
Անամ-բաբամ դուրմադան աղլըյօր,
Դöւշման գէլմիշ քօլլարըմը բաղլըյօր,
Դինինըն ուղրընա öլէն էրմէնի։

**41(67).**

Առավոտյան նայեցի՝ արևն էր փայլում,
Հայրս-մայրս անընդհատ լաց էին լինում.
Թշնամին եկավ ձեռքերս է կապում,
Հանուն հավատի հայերն են զոհվում։

**42(68).**

Սաբախդան քալքըդըմ՝ չանթամա բաքդըմ,
Աղլայա-սըզլայա բöյնըմա դաքդըմ,
Մալըմը մöւլքիմը դօվլաթա սաթդըմ,
Բահաթըսը սօ՞ր աա՝ յարըմ էքմէյէ։

**42(68).**

Առավոտյան վեր կացա, պայուսակս նայեցի,
Լաց ու կոծով վզիցս կախեցի,
Ունեցվածքս պետությանը հանձնեցի,
Գինը թե հարցնես՝ կես կտոր հացի։

**43(69).**

Սաբախդան քալքդըմ՝ չանթամա բաքդըմ,
Աղլայա-սըզլայա բօյնըմա դաքդըմ,
Բիր լօխմա էքմէյէ հասրէթլըք չէքդիմ,
Դինինըն ուղրընա öլէն էրմէնի։

**43(69).**

Առավոտյան վեր կացա, պայուսակս նայեցի,
Լաց ու կոծով վզիցս կախեցի,
Մի պատառ հացի կարոտ մնացի,
Հայերն են զոհվում հանուն հավատի։

**44(70).**

Սաբախդան քալքդըմ՝ հավա դուման դըր,
Անամ-բաբամ յօք դըր՝ հալիմ յաման դըր,
Բունդան սօրա գöւլմէք բանա հարամ դըր,
Դինինըն ուղրընա öլէն էրմէնի։

**44(70).**

Առավոտյան վեր կացա, երկինքն էր մշուշոտ,
Հայր-մայր չունեմ. վիճակս է թախծոտ,
Սրանից հետո ժպտալ չե՛մ կարող,
Հայերն են զոհվում հանուն հավատի։

**45(71).**

Դէր Զօր դէդիքլէրի բöյöւք քասաբա,
Ջալանլար քըզլարը գէլմէզ հէսաբա,
Ամա՛նըմ, յա՛ման, հալըմըզ յաման,
Դէր Զօր չöլընդա քալդըղըմ զաման։

**45(71).**

Դեր Զոր կոչվածն է մի մեծ տեղավայր,
Առևանգված կույսերի հաշիվը չկա,
Ավա՛ղ, ավա՛ղ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը։

**46(72).**

Թöւրքլէր բաշլադը էվլադ քաչմայա,
Անալար ղըյմըյօր յöւզի öփմէյա,
Բաքդըմ քի գիզլիջա աղլըյօր յամա՛ն,
Դինինըն ուղրընա öլէն էրմէնի։

**46(72).**

Թուրքերն սկսեցին աղջիկ փախցնել,
Մայրերը չհասցրին երեսը համբուրել,
Տեսա՝ ծածուկ սաստիկ էին լաց լինում,
Հավատի համար հայերն են զոհվում։

**47(73).**

Բինդիք արաբայա, ինդիք Քաթմայա,
Օրադա բաշլադը էվլադ քաչմայա,
Թöւրքլէր բաշլադը ալըբ-քաչմայա,
Դինինըն ուղրընա öլէն էրմէնի։

**47(73).**

Բարձրացանք սայլը, Քաթմայում իջանք,
Այնտեղ սկսեցին փախցնել զավակ,
Թուրքերն սկսեցին առնել ու փախչել,
Հավատի համար զոհվում են հայեր։

**48(74).**

Դէր Զօր չօ̈լընա յօրըլդըմ, քալդըմ,
Անամը, բաբամը յօլդա բրաքդըմ,
Ամա՜նըմ, յա՜ման, հալըմըզ յաման,
Դէր Զօր չօ̈լլէրինդէ քալդըղըմ զաման։

**49(75).**

Դէր Զօր չօ̈լընդա շաշըրդըմ, քալդըմ,
Ցիթիրդիմ անամը, յիթիրդիմ բաբամը,
Ամա՜նըմ, յա՜ման, հալըմըզ յաման,
Դէր Զօր չօ̈լլէրինդէ քալդըղըմ զաման։

**50(76).**

Դէր Զօր չօ̈լընդա վուրըլդըմ, քալդըմ,
Անէ՛, բէն բու ջանդան բըքդըմ, օսանդըմ,
Ամա՜նըմ, յա՜ման, հալըմըզ յաման,
Դէր Զօր չօ̈լլէրինդէ քալդըղըմ զաման։

**51(77).**

Դէր Զօր չօ̈լընդա դու̈շդիմ յարալը,
Բիր դօքթօր յօք դըր՝ յարամ բաղլայը,
Ամա՜նըմ, յա՜ման, հալըմըզ յաման,
Դէր Զօր չօ̈լլէրնիդէ քալդըղըմ զաման։

**52(78).**

Դէր Զօր չօ̈լլէրինդէ չու̈րիդիմ, քալդըմ,
Ղարղալարա թային օլդում, քալդըմ,
Ամա՜նըմ, յա՜ման, հալըմըզ յաման,
Դէր Զօր չօ̈լլէրինդէ քալդըղըմ զաման։

**53(79).**

Դէր Զօր չօ̈լլէրինդէ յարալը չօք դըր,
Գէ՛լմէ, դօքթօ՜ր, գէ՛լմէ՝ չարասը յօ՜ք դըր,
Ալլահդան բաշխա քիմսիմիզ յօ՜ք դըր,
Դինինըն ուղրընա օ̈լէն էրմէնի։

**54(80).**

Օթուրմըշլար հօջա-քէշիշ աղլըյօր,
Ջանդարմալար քօլլարընը բաղլըյօր,
Իրիցկին դա բաշ ուջունդա աղլըյօր,
Դինինըն ուղրընա օ̈լէն էրմէնի։

**48(74).**

Դեր Զորի անապատով անցա, գնացի,
Մորս ու հորս ճամփին թողեցի,
Ավա՜ղ, ավա՜ղ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը։

**49(75).**

Դեր Զորի անապատում շվարեցի, մնացի,
Մորս ու հորս այնտեղ կորցրեցի,
Ավա՜ղ, ավա՜ղ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը։

**50(76).**

Դեր Զորի անապատում խփվեցի, մնացի,
Մայրի՜կ, ես այս կյանքից ձանձրացա, զզվեցի,
Ավա՜ղ, ավա՜ղ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը։

**51(77).**

Դեր Զորի անապատում վիրավոր ընկա,
Վերքս կապելու մի բժիշկ չկա,
Ավա՜ղ, ավա՜ղ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը։

**52(78).**

Դեր Զորի անապատում նեխվեցի, մնացի,
Կերակուր դարձա սև ագռավներին,
Ավա՜ղ, ավա՜ղ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը։

**53(79).**

Դեր Զորի անապատում վիրավոր շատ կա,
Մի՛ գա, բժի՜շկ, մի՛ գա. մեկ է հույս չկա.
Աստծուց բացի էլ ո՜չ ոք չկա,
Հայերն են զոհվում հավատի համար։

**54(80).**

Տեր հայրը նստած արցունք է թափում,
Ոստիկանները ձեռքերն են կապում,
Իրիցկինը նստած լաց է լինում,
Հանուն հավատի հայերն են զոհվում։

## 55(81).

*Դէր Զօր չöլլէրինդէ ջան թալաֆ օլդու,*
*Գիդէ-գիդէ ղունդուրամա ղում դօլդու,*
*Ղում յէրինէ յուրէիմէ քան դօլդու,*
*Դինինըն ուղըրընա öլէն էրմէնի։*

## 56(82).

*Յօ՜լ վէրին էրմէնիա, դումանըը դաղլար,*
*Էլլէրի քօյնընդա քըզ-գէլին աղլար,*
*Ամա՜նըմ, յա՜ման, հալըմըզ յաման,*
*Դէր Զօր չöլընդա քալդըղըմ զաման։*

## 57(83).

*Յօ՛լ վէր, խաբո՜ւր[1], գէչէլիմ չöլը,*
*Էվլադըմ չըս-չըբլախ արաբըն քöլը,*
*Ամա՜նըմ, յա՜ման, հալըմըզ յաման,*
*Դէր Զօր չöլընդա քալդըղըմ զաման։*

## 58(84).

*Յօ՛լ վէր, խաբո՜ւր, յօ՜լ վէր, գէչէլիմ չöլը,*
*Ջըս-չըբլախ յէթիշէրիմ ղարիբ յէրլէրէ,*
*Ամա՜նըմ, յա՜ման, հալըմըզ յաման,*
*Դէր Զօր չöլընդա քալդըղըմ զաման։*

## 59(85).

*Յօ՛լ վէր, խաբո՜ւր, յօլ վէր, գէչէլիմ չöլը,*
*Դօնարզ արաբա օլայըմ քöլէ,*
*Ամա՜նըմ, յա՜ման, հալըմըզ յաման,*
*Դէր Զօր չöլընդա քալդըղըմ զաման։*

## 60(86).

*Մուխդաջ օլդուք սու իչմէյէ[2].*
*— Խուդամըն աշքընա իմդադ օլասըն,—*
*Սու դա իչմէք իզին վէրմէդի,*
*Դինինըն ուղըրընա öլէն էրմէնի։*

## 55(81).

*Դեր Զորի անապատում ինչքա՜ն մարդ զոհվեց,*
*Գնալով-գնալով կոշիկս ավազ լցվեց,*
*Ավազի տեղ սրտումս արյուն լցվեց,*
*Հանուն հավատի զոհվում են հայեր։*

## 56(82).

*Ճամփա՛ տվեք հայերին, մշուշո՜տ լեռներ,*
*Ջեռները ծոցում կուլան հարս ու աղջիկներ,*
*Ավա՜ղ, ավա՜ղ, ողբալի է մեր վիճակը,*
*Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը։*

## 57(83).

*Ճամփա տո՛ւր, Խաբո՜ւր[1], անապատն անցնեմ.*
*Զավակս մերկ-տկլոր արաբի գյուղումն է,*
*Ավա՜ղ, ավա՜ղ, ողբալի է մեր վիճակը,*
*Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը։*

## 58(84).

*Ճամփա՛ տուր, Խաբո՜ւր, անապատն անցնեմ,*
*Մերկ-տկլոր հասնեմ ես օտար վայրեր,*
*Ավա՜ղ, ավա՜ղ, ողբալի է մեր վիճակը,*
*Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը։*

## 59(85).

*Ճամփա տուր, Խաբո՜ւր, անապատն անցնեմ,*
*Անվարտիք արաբին գնամ, ծառայեմ,*
*Ավա՜ղ, ավա՜ղ, ողբալի է մեր վիճակը,*
*Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը։*

## 60(86).

*Խնդրատու դարձանք, որ ջուր խմեինք[2].*
*— Աստծո՜ սիրուն. դա՜ մեզ կփրկի,—*
*Ջուր խմել անգամ մեզ չթողեցին,*
*Հայերն են զոհվում հանուն հավատի։*

---

[1] Դեր Զորի մոտով հոսող գետ։

[2] Ուժասպառ ու պապակ գաղթականներին բերում, նըս-տեցնում էին ջրի մոտ, բայց չէին թույլ տալիս խմել, իսկ մոտեցողներին գնդակահարում էին,— պատմել է զեյթունցի Եվա Զուլյանը (ծնվ. 1903 թ.)։

### 61(87).

Յէփրատ գէտի քöփրիսը դար դըր· գէչիլմէզ,
Քանլը դըր սուլարը· բիր Թաս իչիլմէզ,
Էրմէնի քան ինան սու դա իչիլմէզ,
Դինինըն ուղրընա öլէն էրմէնի։

### 61(87).

Եփրատ գետի կամուրջը նեղ է. անցնել չի լինի,
Ջրերն արնոտ են. մի թաս խմել չի լինի,
Հայերի արյունով ջուրը խմել չի լինի,
Հայերն են զոհվում հանուն հավատի։

### 62(88).

Դէր Զօր չöլլարը Թիքէն դըր· գէչիլմէզ,
Յէփրատ գէտին սուլարը աջի դըր· բիր Թաս
իչիլմէզ·
Էրմէնի քան ինան սու դա իչիլմէզ,
Դինինըն ուղրընա öլէն էրմէնի։

### 62(88).

Դեր Զորի անապատը փշոտ է. անցնել չի լինի.
Եփրատ գետի ջրերը դառն են. մի թաս խմել
չի լինի,
Հայերի արյունով ջուրը խմել չի լինի,
Հայերն են զոհվում հանուն հավատի։

### 63(89).

Դէր Զօր չöլլարը դաշլը դըր· գէչիլմէզ,
Յէփրատ գէտին սուլար աջի դըր· բիր Թաս
իչիլմէզ,
Էրմէնի քան ինան սու դա իչիլմէզ,
Դինինըն ուղրընա öլէն էրմէնի։

### 63(89).

Դեր Զորի անապատը քարոտ է. անցնել չի լինի,
Եփրատ գետի ջուրը դառն է, մի թաս խմել չի
լինի,
Հայերի արյունով ջուրը խմել չի լինի,
Հայերն են զոհվում հանուն հավատի։

### 64(90).

Դէր Զօրըն իչինդէ գէնջիրլի ղույը,
Էրմէնիլէր իչդի զէհիրլի սույը,
Ամա՜նըմ, յա՜ման, հալըմըզ յաման,
Դէր Զօր չöլլէրինդէ քալդըղըմ զաման։

### 64(90).

Դեր Զորի մեջ շղթայով ջրհոր,
Հայերը խմեցին ջուրը թունավոր,
Ավա՜ղ, ավա՜ղ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը։

### 65(91).

Դէր Զօր քöփրիսը դար դըր· գէչիլմէզ,
Քան օլմուշ սուլար· բիր Թաս իչիլմէզ,
Անադան-բաբադան վազ գէչիլմէզ,
Դինինըն ուղրընա öլէն էրմէնի։

### 65(91).

Դեր Զորի կամուրջը նեղ է. անցնել չի լինի,
Ջրերն արնոտ են. մի թաս խմել չի լինի,
Մորից-հորից բաժանվել չի լինի,
Հայերն են զոհվում հանուն հավատի։

### 66(92).

Դէր Զօր քöփրիսը դար դըր· գէչիլմէզ,
Քանադլը ղուշ օլսան· գէրի գէչիլմէզ,
Էրմէնի միլլէթի դինդէն վազ գէչմէզ,
Դինինըն ուղրընա öլէն էրմէնի։

### 66(92).

Դեր Զորի կամուրջը նեղ է. անցնել չես կարող,
Թևավոր հավք լինես. ետ գալ չես կարող,
Հայ ազգն իր հավատն ուրանալ չի կարող,
Հայերն են զոհվում հանուն հավատի։

### 67(93).

Դէր Զօր յօլլարը ուզա՜խ դըր, ուզա՜խ,
Յօլլարա բաքար բաջը-անալար,
Գէջէլլէր ուզուն· օլմըյօր սաբախ,
Չօլուխ-չօջուխդա քալմըյօր դէրման։

### 67(93).

Դեր Զորի ճամփաները հեռո՜ւ են, հեռո՜ւ,
Քույր ու մայրերը ճամփաներին են նայում.
Գիշերներն են երկար. առավոտ չի բացվում.
Մեր խեղճ երեխաներին մի ճար չի մնում։

**68(94).**

Դէր Ջօր յօլլարը ուզա՛խ դըր, ուզա՛խ,
Ըխդիար փէդէրիմ յօլլարա բաքար,
— Հէ՜յ, մուհաջիրլէ՜ր, յօլ գօրինդի՝
Բէնիմ ղարիբ բաշըմա,
Ալթըմ՝ չամուր, ուստիմ՝ յաղմուր։
Դաղլար-դաշլար դայամազ բիզիմ ահուզարընա։

**68(94).**

Դեր Զորի ճամփաները հեռո՜ւ են, հեռո՜ւ,
Ծերունի հայրս ճամփաներին է նայում.
— Հե՜յ, գաղթականնե՜ր, ճամփան երևաց
Իմ տարագիր գլխին,
Տակս՝ ցեխ, վրաս՝ անձրև,
Լեռներ-ժայռեր չեն դիմանա մեր տառապանքին։

**69(95).**

Ամա՜ն, Մահմո՜ւդ փաշա, սէ՜ն գէլ իմանա,
Ջանդարմալար դօնմիշ ղասաբա,
Ամա՜նըմ, յա՜ման, հալըմըզ յաման,
Դէր Ջօր չօլընդա քալդըղըմ զաման։

**69(95).**

Վա՜յ, խղճի արի, դո՜ւ, Մահմո՜ւդ փաշա,
Ոստիկանները մսագործ դարձան,
Ավա՜ղ, ավա՜ղ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը։

**70(96).**

Դէր Ջօր գէլդի բիր Շէքիր փաշա,
Աթընը բաղլադը Դէլիքլի դաշա[1],
Էրմէնի սըմադը դաղ ինան դաշա,
Դինինըն ուղըընա օլէն էրմէնի։

**70(96).**

Դեր Զոր եկավ մի Շեքիր փաշա,
Նժույգը կապեց Ծակ քարի[1] վրա,
Հայերը տեղ չարեցին լեռ ու անապատ,
Հայերն են զոհվում հավատի համար։

**71(97).**

Դէր Ջօր չօլլէրինդէ թօզդան-դումանդան,
Գօզլէրիմ գօրմիյօր չիմլար-չիմանլար,
Ջաբիթլէր չըքմըշլար դինդէն-իմանդան,
Դինինըն ուղըընա օլէն էրմէնի։

**71(97).**

Դեր Զորի անապատում փոշու մշուշից,
Աչքերս չեն տեսնում դաշտ-մարգագետին,
Ոստիկանները կորցրել են հավատ ու խիղճ,
Հայերն են զոհվում հանուն հավատի։

**72(98).**

Դէր Ջօր չօլլէրի թօզդան-դումանդան,
Մուսլումանլար չըքմըշ դինդէն-իմանդան,
Ամա՜ն, փադիշա՜հըմ, նէ՞ օլդուք, նէ՞ օլաջայըք,
Էրմէնի միլլէթի մա՞ֆ մը օլաջաք։

**72(98).**

Դեր Զորի անապատում փոշու մշուշից,
Մուսուլմանները դուրս են եկել հավատից,
Վա՜յ, իմ թագավո՜ր, արդյոք ի՞նչ դարձանք,
Մի՞թե հայ ազգը պիտի վերջանա։

**73(99).**

Դէր Ջօր չօլընդա ուզանմըշ, յաթմըշ,
Քէլլէսի յօք դըր, քի յուզինէ բաքայըմ,
Էրմէնիլէր բու գունա օլաշմըշ,
Դինինըն ուղըընա օլէն էրմէնի։

**73(99).**

Դեր Զորի անապատում փռվել, պառկել է,
Գլուխ չկա, որ դեմքը տեսնեմ,
Այս օրվան հասան խեղճ հայերը,
Հանուն հավատի զոհվում են հայերը։

**74(100).**

Չըխա-չխա, չխըըմ յօխուշ բաշընա,
Նէ՜լէր գէլդի էրմէնինին բաշընա,
Հըզըր Ալլա՜հըմ, հը՜զըր, յէթի՛շ,
Էրմէնի միլլէթի քուրթա՜ր, գէչի՜ր։

**74(100).**

Ելա, բարձրացա գագաթը սարի,
Ինչե՜ր ասես չեկավ գլուխը հայի,
Հզո՜ր Աստված, օգնության հասիր,
Հայ ժողովրդին, փրկի՜ր, ազատի՜ր։

---

1 Մարաշում մի մեծ ժայռ կար, որի միջից ջուր էր հոսում. Դէլիքլի դաշ (Ծակ քար) էինք ասում (Ծ. Բ.)։

**75(101).**

*Դիքդիիմ աղաչլար մէյվայա դօնդի,*
*Մուհաջըր գիդէնէն յարըսը դօնմէդի,*
*Շու մուհաջըրլըք իչյադ էդէն*
*Ջէննէթ յիւզի գօրմէսին։*

**76(102).**

*Մէյվասըզ աղաչլար մէյվանա դօնդի,*
*Մուհաջըր գիդէնէն յարըսը դօնմէդի,*
*Շու սիւրգինլըք իչյադ էդէն*
*Ջէհէնէմ յօլընա դուրբան օլասըն։*

**77(103).**

*Յաշա՛, Պօղոս Նուբար փաշա, սէն բինլէ՛ր*
*յաշա.*
*Էրմէնիլէրի թօփլաթդը դաղլարդան դաշդան,*
*Յաշա՛, Անդրանի՛կ փաշա, սէն բինլէ՛ր յաշա.*
*Էրմէնիլէրի թօփլաթդը Էրմէնիսդանա։*

**78(104).**

*Դիլլէրդէն դիլէ սօյլէսին դէսթանըմ,*
*Ղարիբ էլլէրէ յանայըմ դէրդիմը,*
*Սէֆիլ էրմէնիլէր դէսթան սօյլէդին,*
*Դինինըն ուղրընա՝ յա՛շա էրմէնի...*

ՍՈՒՐԳՈՒՆԸՆ ԱՎԱԶԼԱՐ

**79(105).**

*Սամսօն, Տրապիզօն, Ամասիա, Կիւրին,*
*Գէլի՛ն դէ Սվազըն հալընը գօրի՛ն,*
*Դաշընա՞ն մը յօղուրդմըշ սըն, ջանըմ Կէմէրէկ,*
*Բիր Ջէյթուն քալմըշ դըր էշին, Կէմէրէ՛կ։*

**80(106).**

*Հալէբդէն[1] չքդըմ յայան,*
*Դայան, դադիշլէրիմ, դայան,*
*Շիմդիք ջանդարմալար գէլիր.*
*Քիմի՝ աթլը, քիմի՝ յայան։*

[1] *Հայերին բոլոր վայրերից բերում-հավաքում էին Հալեպ, հետո խումբ-խումբ քշում դեպի Դեր Զորի անապատները (Ս. Բ.)։*

**75(101).**

*Տնկած ծառերս պտղավորվեցին,*
*Կեսը ետ չեկավ գաղթականների,*
*Այս գաղթականություն հնարողը*
*Թող չարժանանա դրախտի։*

**76(102).**

*Անպտուղ ծառերը պտղավորվեցին,*
*Կեսը ետ չեկավ գաղթականների,*
*Այս աքսորը հնարողը*
*Դժոխքի ճամփին թող զոհվի։*

**77(103).**

*Պողոս Նուբար փաշա, դու հազա՛ր ապրես,*
*Անապատներից հայերին հավաքեց,*
*Անդրանի՛կ փաշա, դու հազար ապրես,*
*Հայերին Հայաստանում հավաքեց։*

**78(104).**

*Բերանից բերան վիպերգն այս հյուսենք,*
*Օտարներին մեր վիշտը պատմենք,*
*Վիպերգը հյուսեցին տանջված հայերը,*
*Հանուն հավատի հայերը՝ կապրեն...*

ԱՔՍՈՐԻ ԵՐԳԵՐ

**79(105).**

*Սամսոն, Տրապիզոն, Ամասիա, Կյուրին,*
*Եկե՛ք, տեսե՛ք վիճակը Սվազի,*
*Քարի՞ց ես կերտված, հոգիս Կեմերեկ.*
*Զեյթունն է միայն ընկերդ, Կեմերե՛կ։*

**80(106).**

*Հալեպից[1] դուրս եկանք ոտքով,*
*Դիմացե՛ք, իմ ծնկնե՛ր, դիմացե՛ք.*
*Հիմա ոստիկանները կգան.*
*Ոմանք՝ հեծյալ, ոմանք՝ հետիոտն։*

### 81(107).

*Հէ՜յ, նէ՛ դէիմ, նէ՛ դէիմ,*
*Վա՜յ, հալընա, էրմէնի,*
*էվի բարխիթէր գիդէիմ,*
*Յավրումը ալըբ գիդէիմ։*

### 81(107).

*Հե՜յ, ի՛նչ ասեմ, ի՛նչ ասեմ,*
*Վա՜յ, մեր վիճակին, հայե՜ր,*
*Տուն ու տեղս թողեցի,*
*Ձավակս առի, գնացի։*

### 82(108).

*Հէ՜յ, Գյավուր դաղլար[1],*
*Դէրդէ դայանան աղլար,*
*էվլիլէր էվէ վարմըշ.*
*Ղարիբ էրմէնի նէրդէ՞ աղլար։*

### 82(108).

*Հե՜յ, Գյավո՜ւրի լեռներ[1],*
*Վշտին դիմացող, հայե՜ր,*
*Բոլորը տուն-տեղ ունեն.*
*Անտուն հայն ո՞ւր արցունք թափե։*

### 83(109).

*Սու բաղլադըմ քիլիգէ,*
*Դաղըթդըմ էրիքլիքէ.*
*Բէն բուրդա յէսիր քալդըմ.*
*Դայամամ ղարիբլիքէ։*

### 83(109).

*Ջուրը կապեցի առվին,*
*Բաժանեցին մարգերին,*
*Ես այստեղ գերի մնացի,*
*Օտարության չտոկացի։*

### 84(110).

*Ջայ դաշը օխա դէի դութարլար,*
*Սարը ջուզում լէբլէբիյա ղաթարլար,*
*էրմէնի միլլէթի Դէր Զօր աթարլար,*
*Ալլահ սահբաթլըք էթսին բու չօլլէրէ։*

### 84(110).

*Գետաքարն իբր կշռաքար են դնում,*
*Դեղին խաղողն իբր լեբլեբի ծախում,*
*Հայ ժողովրդին Դեր Զոր են քշում,*
*Աստված անապատին անի տերություն։*

### 85(111).

*Դէրսիմ գօրթ դաղ իչինդէ,*
*Գիւլ-բաղլար իչինդէ,*
*Դէրսիմ դէ հար սաքլասըն.*
*էրմէնի չօք իչինդէ։*

### 85(111).

*Դերսիմն է չորս լեռան մեջ,*
*Վարդ-այգիների մեջ,*
*Դերսիմը հար թող ապրի.*
*Շատ հայեր կան նրա մեջ։*

### 86(112).

*Դիարբէքիր օջախ դըր,*
*Մէրդին[2] յըխըլաջախ դըր,*
*Ամա՜ն, ֆիդա՜, ա՛լ մարթինը,*
*Վէ՛ր դիւշմանըն ջուղաբը։*

### 86(112).

*Դիարբեքիրն է օջախ,*
*Մերդինը[2]՝ լվացքի համար,*
*Ֆիդա՜, հրացանդ ա՛ռ,*
*Թշնամուն տո՛ւր պատասխան։*

### 87(113).

*Շու Ցընտըճաղըն դա հէր թարաֆը դաղըք,*
*Դաղլարընըն դա հէր թարաֆը բաղըք,*
*էրմէնիլէր վար իդը հէ՛մ իգիթ, հէ՛մ խաթըրընազ.*
*Ö յէրլէր դէ մէյսիւս քալդը, աման Ալլահ։*

### 87(113).

*Ցընդըջագի շուրջ բոլոր՝ լեռներ,*
*Լեռների շուրջ բոլոր՝ այգիներ,*
*Հայերն ուրախ էին և կտրիճ,*
*Ավա՜ղ, այդ վայրերն անտեր մնացին։*

---

1 Գյավուր դաղ (Գյավուրի լեռ) են անվանել, որովհետև այնտեղ շատ հայեր են նահատակվել (Ծ. Բ.)։

2 Հոսող գետ Մերդինում։

### 88(114).

Աթըմ բաղլադըմ Դէլիքլի դաշա[1],
Քöռ օլասըն սէն, էնվէ՛ր փաշա, էրմէնի ջահէլ
քալմադը,
Գէթդի գöւլ, գէթդի բöւլբöւլ, նէ՛ դէյէլիմ,
Իսդէրսէն՝ աղլա, իսդէրսէն՝ գöւլ, նէ՛ դէյէլիմ։

### 89(115).

Աթըմ բաղլադըմ Դէլիքլի դաշա,
Քöռ օլասըն սէն, էնվէ՛ր փաշա,
Սէն օլամայըն, սէն գէբէրէյըն, շո՛ւն-Քէմալ
փաշա.
Էրմէնիլէրի դաղըթդըն դաղլարդա դաշա։

### 90(116).

Աթըմ բաղլադըմ Դէլիքլի դաշա,
Օնիքի գայմագամ, բիր էնվէր փաշա,
Բու քադար մուհաջըր քիմէ՞ էմանաթ.
Էրմէնիլէրի դաղըթդըն դաղլարդա դաշա։

### 91(117).

Բիրէմ, բիրէմ սայդըմ դöրթ սէնէ օլդը,
Էրմէնի ասքյարը Նաբլուսը ալդը[2].
Էրմենի ասքյարը բին բէշ յöւզ քիշի.
Ինգլիզ, Ֆրանսըզ շաշդը բու իշի։

### 92(118).

Թալեաթ փաշա հէչիմ գիբի,
Բըյըքլարը սիչիմ գիբի,
Բըյըքընա թէլ-թէլ սըչդըմ.
Սէ՞ն դէ մը օլդուն բիզիմ գիբի։

### 93(119).

Թալիաթ փաշա էշագ գիբի,
Բըյըքլարը յուլար գիբի,
Բըյըքընա թէլ-թէլ սըչդըմ.
Սէ՞ն դէ մը օլդուն բիզիմ գիբի։

### 88(114).

Նժույգս կապեցի Ծակ քարի[1] վրա,
Կուրանա՛ս դու, էնվե՛ր փաշա, հայ երիտասարդ
էլ չմնա՛ց,
Անցավ վարդը, անցավ սոխակը, ի՛նչ ասեմ,
Կուզես՝ լաց, կուզես՝ խնդա, ի՛նչ ասեմ։

### 89(115).

Նժույգս կապեցի Ծակ քարի վրա,
Կուրանաս դու, էնվե՛ր փաշա,
Դու չծնվեի՛ր, դու սատկեի՛ր, շո՛ւն-Քեմալ
փաշա.
Հայերին ցրեցին լեռ ու անապատ։

### 90(116).

Նժույգս կապեցի Ծակ քարի վրա,
Տասներկու կայմակամ, մեկ էնվեր փաշա,
Այսքան գաղթական ո՞ւմ է վստահված.
Հայերին ցրեցիր լեռ ու անապատ։

### 91(117).

Մեկիկ-մեկիկ հաշվեցի չորս տարին,
Հայ կամավորները Նաբլուսը[2] վերցրին.
Նրանք հազար հինգ հարյուր հոգի էին.
Անգլիան, Ֆրանսիան ապշած մնացին։

### 92(118).

Թալեաթ փաշան հսկայի պես,
Բեղերը բարակ պարանի պես.
Թել-թել ք...քեմ քո բեղերին.
Դո՞ւ էլ մեզ նմանվեցիր։

### 93(119).

Թալեաթ փաշան ավանակի պես,
Բեղերը բարակ սանձի պես.
Բեղերիդ թել-թել ք...քեմ.
Դո՞ւ էլ նմանվեցիր մեզ։

---

1 Մարաշում մի մեծ խոռոչով ժայռ կար, որի միջից ջուր է հոսել, այն անվանել են Դելիքլի դաշ (Ծակ քար— Ս. Բ.)։

2 1918 թ. հայ լեգեոնականները Արարայի ճակատամարտով նվաճեցին Նաբլուսի անառիկ դիրքերը։

## 94(120).
### ԷՐՄԷՆԻՆԻՆ ՔԱԴԷՐԸ[1]

*Ախշամդան յաղդը շիդէդլի յաղմուր,*
*Վուրմա՛, չէչէ՛ն, վուրմա՛. սօխախլար չամուր,*
*Յարամ բէյուգ դըր. քանըմ աքըյօր,*
*Վուրմա՛, չէչէ՛ն, վուրմա՛. դօրթ ղուրշուն յէթէ՛ր,*
*Չէչէնըն ղուրշունը օլումդէն բէթէր։*

*Սիլահըն սէսինէ անամ օյանդը,*
*Ուսդումէ քափանդը. քանա բօյանդը,*
*Նէ՛ զուլում ըմըշ էրմէնինին քադէրը,*
*Վուրմա՛, չէչէ՛ն, վուրմա՛, դօրթ ղուրշուն յէթէ՛ր,*
*Չէչէնըն ղուրշունը օլումդէն բէթէր։*

## 94(120).
### ՀԱՅԵՐԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ[1]

*Հորդ անձրև տեղաց գիշերով,*
*Մի՛ խփիր, չեչե՛ն, փողոցներն են ցեխոտ,*
*Վերքս մեծ է, չեչե՛ն, դիմանալ չեմ կարող,*
*Մի՛ խփիր, չեչե՛ն, չորս գնդակը հերի՛ք է,*
*Չեչենի գնդակը վատթարից վատ է։*

*Ջենքի ձայնից մայրիկս զարթնեց,*
*Ընկավ կրծքիս. արյունով ներկվեց,*
*Հայերի ճակտի գիրն ի՛նչ սև է եղել,*
*Մի՛ խփիր, չեչե՛ն. չորս գնդակը հերի՛ք է,*
*Չեչենի գնդակը վատթարից վատ է։*

## 95(121).
### ՄՈՒՐԱԴԸՆ[2] ՉԷՎՐԻՍԸ

*Մուրադըն չէվրիսը դումանլար չօքդի,*
*Ղարիբ էրմէնինին բէլինի բուքդի,*
*Չէրքէզ էլի իլէն քանլար դօքուլդի,*
*Հէ՛չ քիմսէ աչըշըբ իմդադ վէրմէդի.*
*Դինսիզ օսմանըլը վուրդը, չալդը, օյնադը,*
*Քյաֆիր ալաման դա սէյիր էյլէդի։*

*Մուրադ ըրմաղը քանա բօյանդը,*
*Սահաբսըզ էրմէնի այաղ ալթը գէթդի,*
*Դօսթ-դուշման քալմադը սէյիր էյլէդի,*
*Հէ՛չ քիմսէ աչըշըբ իմդադ վէրմէդի.*
*Դինսիզ օսմանըլը վուրդը, չալդը, օյնադը,*
*Քյաֆիր ալաման դա սէյիր էյլէդի։*

*Մուրա՛դ սույը, նէ՞րդէ սէնին դուրաղը,*
*Չօ՛ք չաղըրդըմ. իշիդմէդի ղուլաղըն.*
*Սահաբսը՛զ էրմէնի գէթդի այաղ ալթը.*
*Հէ՛չ քիմսէ աչըշըբ իմդադ վէրմէդի.*
*Դինսիզ օսմանըլը վուրդը, չալդը, օյնադը,*
*Քյաֆիր ալաման դա սէյիր էյլէդի։*

## 95(121).
### ՄՈՒՐԱԴԻ[2] ՇՈՒՐՋ

*Մուրադի շուրջ ամպերն են կուտակվել,*
*Գաղթական հայի մեջքն է կոտրել,*
*Չերքեզի ձեռքով արյուն է հեղվել,*
*Ո՛չ ոք չօգնեց ու չցավակցեց.*
*Անհավատ օսմանցին նվագեց ու պարեց,*
*Նենգ գերմանացին հմայված դիտեց։*

*Մուրադ գետն արյունով ներկվեց,*
*Ոտնատակ գնացին անհաշիվ հայեր,*
*Թշնամի-բարեկամ դիտեցին անտարբեր,*
*Ո՛չ ոք չօգնեց ու չցավակցեց.*
*Անհավատ օսմանցին նվագեց ու պարեց,*
*Նենգ գերմանացին հմայված դիտեց։*

*Որտե՞ղ է քո հանգրվանը, Մուրա՛դ գետ,*
*Շա՛տ կանչեցի. քո ականջը չլսեց.*
*Նահատակվեցին անհաշի՛վ հայեր.*
*Ո՛չ ոք չօգնեց ու չցավակցեց.*
*Անհավատ օսմանցին նվագեց ու պարեց,*
*Նենգ գերմանացին հմայված դիտեց։*

## 96(122).
### ՄԱՐԱՇԸՆ ԷՐՄԷՆԻԼԷՐԻ ՔՕՄՕՒԼԴԻԼԷՐ[3]

*Մարաշ դա Մարաշ դէրլէր, յամա՛ն, յամա՛ն,*
*Մարա՛շ, բու Նա՞սըլ Մարաշ դէրլէր,*

## 96(122).
### ՄԱՐԱՇԻ ՀԱՅԵՐԻՆ ՄՈԽՐԱՑՐԻՆ[3]

*Ավա՛ղ, Մարաշին Մարաշ են ասում,*
*Մարա՛շ, քեզ ինչպե՞ս են Մարաշ ասում,*

---

[1] Իր դառն ճակատագիրը հիշելով, արցունքներով է մեզ այս երգը հաղորդել Հայկուհի Միկյանը։ Նա ծնվել է 1912 թվին Կեսարիայում։ Հալածվելով քեմալականներից՝ ընտանիքով ապաստանել են Իզմիրում։ Իզմիրի աղետից մազապուրծ՝ մտել են նավ և հասել Հունաստան, բայց գործազրկությունից հուսահատված՝ փոխադրվել Եգիպտոս։ 1948 թ. հայրենադարձվել են Հայաստան։ 1949 թ. շատ ուրիշների հետ աքսորվել են Սիբիր։ 1956 թվին ինքն արդարացվել ու վերադարձել է Երևան, բայց արդեն բոլոր հարազատներին կորցրած, մենակ, լքված ու հետին չքավորության մեջ։

[2] Եփրատ գետի թուրքերեն անվանումն է։

[3] Նկատի ունի Մարաշի Ս. Քառասուն Մանկանց եկեղեցին լցված հայերի ողջակիզումը քեմալականների կողմից, երբ բարձունքի վրա կառուցված եկեղեցու շեմից մարդկային հալված ճարպը հոսել է վար ու սառել։ Այդ մասին ավելի մանրամասն տես մարաշցի բանասաց Եվգինե Մայիկյանի (ծնվ. 1898 թ.) հուշը, տե՛ս վավ. 1414։

*Մարաշըն իչինդէ քիլիսէ յանար,*
*Քիլիսէ իչինդէ էրմէնի յանար։*

*Ուֆաջըդ դաշ իլան յօլ յափդըլար,*
*Ջիգիլ-ջիգիլ յօլարընա բասըլմազ,*
*Էրմէնիլէրին Քöմüլդիլէր, յամա՜ն,*
*Սէւ գիբի յա՜ղ գիդիյօր, յամա՜ն։*

*Երբ քո մեջ եկեղեցի են վառում,*
*Եկեղեցու մեջ՝ հայեր մոխրացնում։*

*Փոքրիկ քարերով էր շինված ճամփան,*
*Ճամփով քայլելը դարձավ անհնար.*
*Հայերին մոխրացրին, ավա՜ղ,*
*Ճա՜րպն է հոսում հեղեղ դարձած։*

## 97(123).
### ՅԱԶԸԽԼԱՐ ՕԼԴՈՒ ԷՐՄԸՆԻԼԵՐԸ[1]

*Յազըխլա՜ր օլդու բէնիմ խօջամըն աշիրաթիմը,*
*Դüշման ղօնդու դաթլը յուրդլարըմըզը,*
*Ջաթ Օլըխ սույը աքդը,*
*Ջանդըրլար[2] Հաճընը յաքդը,*
*Յազըխ օլդու սանա, ղօջա՜ Հաճընը,*
*Վէրանայա բայղուշլար öթդը.*
*Բինդիրդիլէր դէվէլէրէ անա, բաջըյը…*

*Գուռնաշէնէ[3] ուղրադը գöչիմիզ,*
*Գուռնաշէն ղափըշդը էփէյի բիզիմ մալըմըզ,*
*Քիրազդան[4] գէչդի օբամըզ,*
*Թափանա դüշդի յօլըմըզ,*
*Դիյնէյի՛ն, է՛յ, անա՜, բա՜ջը, քարդաշլա՜ր.*
*Յաղմայա գէթդի թü՜մ բիզիմ մալըմըզ։*

*Ղըսուխդան էնդի գöչիմիզ,*
*Ղարս-բազարա ուղրաթդը օբամըզ,*
*Ջհանդան գէչիրդիլէր անա, բաջը, քարդաշլարը.*
*Այաղ ալթընա գէթդի նամուսըմըզ, ջանըմըզ,*
*Օսմանիէդա ղօնդու գöչիմիզ,*
*Հասան-բէյա դüշդի յօլըմըզ։*

*Խանէյէրի խարաբ օլմուշ.*
*Օ դա էրմէնի դիր դէյի,*
*Աղբէզ մէյդանընդա ղօնդու էչիմիզ.*
*Օրդա քöմüլդի անա, բաջը, քարդաշլարը,*
*Հալեպդէն գէչդի քալանըմըզ.*
*Դէր Զօր չöլը օլդու բիզիմ վաթանը.*
*Այաղ ալթընա գէթդի սահաբսը՜զ էրմէնի։*

## 97(123).
### ԱՓՍՈ՜Ս ԵՂԱՆ ՀԱՅԵՐԸ[1]

*Ափսո՜ս եղավ ամուսնուս կալվածքը,*
*Թշնամին զավթեց մեր շեն տները,*
*Հոսում էր Ջաթ Օլըխի աղբյուրը,*
*Երբ շանդրները[2] այրեցին Հաճընը,*
*Ափսո՜ս եղավ քեզ, հսկա՜ Հաճըն,*
*Ավերակներից վայում են բվերը.*
*Մայրերին, քույրերին բարձեցին ուղտերը…*

*Գուռնաշենից[3] անցավ մեր թափորը,*
*Այնտեղ թալանեցին մեր ունեցվածքը,*
*Քիրազից[4] անցավ մեր թափորը,*
*Դեպի Թափան ուղղվեց մեր ճամփան,*
*Լսեցե՛ք, հե՜յ, մա՜յր, քո՜ւյր, եղբայրնե՛ր.*
*Կողոպուտի գնաց մեր ո՜ղջ ունեցվածքը։*

*Կածանից իջեցրին մեր բեռները,*
*Ղարս-բազար ուղևորվեց մեր թափորը,*
*Ջըհան գետից անցան մայր, քույր, եղբայրները.*
*Ոտնատակ գնաց մեր ո՜ղջ կյանքն ու պատիվը,*
*Օսմանիեում իջևանեց մեր թափորը,*
*Հասան-բեյ հասավ մեր ճանապարհը։*

*Քանդվել էին նաև իջևանները,*
*Քանի որ հայերն էին տերերը,*
*Աղբեզ հրապարակում մեզ նստոտեցրին.*
*Այնտեղ մոխրացրին մայր, քույր, եղբայրներին,*
*Հալեպից անցկացրին ողջ մնացածներիս.*
*Մեր հանգրվանը դարձավ անապատը Դեր Զորի.*
*Անհաշի՜վ հայերը նահատակվեցին։*

## 98(124).
### ՇԻՄԴԻԳ ԱԴԱՆԱՅԱ ԳԸԹՄԸԼԻ ԴԸԻԼ[5]

*Շիմդիգ Ադանայ գէթմէլի դէիլ,*
*Գէդիբ դէ օ հալլարը գöրմէլի դէիլ,*
*Զօրէքշաբթի գüն կոշնակ չէքիլդի,*
*Բüթüն էրմէնիլէր ժամա դöքüլդի։*

## 98(124).
### ՀԻՄԱ ԱԴԱՆԱ ԳՆԱԼ ՊԵՏՔ ՉԷ[5]

*Հիմա Ադանա գնալ պետք չէ,*
*Գնալ, այդ վիճակը տեսնել պետք չէ,*
*Զորեքշաբթի օր կոչնակ հնչեցրին,*
*Բոլոր հայերին եկեղեցու մեջ լցրին։*

---

1 *Հաճընցի Խաչեր Դաքեսյանը (ծնվ. 1896 թ.) արցունքներով էր վերհիշում այս բոլոր իրադարձությունները։*
2 *Թուրք կանայք։*
3 *Հայկական գյուղ Հաճընում։*
4 *Լեռ Հաճընի մոտ։*
5 *Այս երգերը հորինվել են ֆրանսիական զորքերի նահանջից հետո՝ քեմալականների հարձակման և 1921 թ. Կիլիկիայի հայության բռնագաղթի օրերին։*

*Բէնի öլդüրէն դօյդո՞ւ մը օլա,*
*Լիռալարըմը սայդը՞ մը օլա,*
*Բէնիմ բուրդա վուրուլդըղըմ*
*Անամ, բարամ դույդո՞ւն մը օլա։*

*Աղանանըն յօլլարը դաշըք,*
*Ջէբիմիզդէ քալմադը բէշ փարա խաշըլըխ,*
*Ամա՜ն, աղանա՜լը, ջանը՜մ աղանալը,*
*Ջէբիմիզդէ քալմադը բէշ փարա խաշըլըխ։*

*Ինձ սպանողը կշտացա՞վ արդյոք,*
*Ոսկիներս մեկ առ մեկ հաշվե՞ց արդյոք,*
*Այստեղ իմ զոհվելս*
*Մայրս, հայրս լսեցի՞ն արդյոք։*

*Ադանայի ճամփաներն են քարոտ,*
*Մեր գրպանում չմնաց հինգ գռոշ,*
*Ավա՜ղ, ադանա՜ցի, հոգի՜ս ադանացի.*
*Գրպանումս չմնաց հինգ գռոշ։*

**99(125).**
ԳԻԴԷՐԻՄ ԷԼԻՆԻԶԴԷՆ

*Գիդէրիմ էլինիզդէն,*
*Քուրթարըմ դիլինիզդէն,*
*Ցէշիլ բաշ öրդէգ օլսամ.*
*Սու իչմէմ գöլինիզդէն։*

**99(125).**
ՓԱԽՉՈՒՄ ԵՄ ՁԵՐ ՁԵՌՔԻՑ

*Փախչում եմ ձեր ձեռքից,*
*Պրծնում եմ ձեր լեզվից,*
*Վայրի բադ թե դառնամ,*
*Ջուր չե՛մ խմի ձեր լճից։*

**100(126).**
ՆԷԼԷՐ ԳԷԼԴԻ ԷՐՄԷՆԻՆԻՆ ԲԱՇԸՆԱ

*Օդալար յափդըրդըմ բիր ուժդան ուջա,*
*Իչինդէ յաթմադըմ բիր գüն, բիր գէջա,*
*Ղօնմա՛, բüլբü՜լ, ղօնմա՛ միզար դաշընա,*
*Նէլէ՜ր գէլդի էրմէնինին բաշընա։*

*Թփէնգըմ չադըրըդա ասըլը քալդը,*
*Ջէհիզըմ սանդըղդա բասըլը քալդը,*
*Ղօնմա՛, բüլբü՜լ, ղօնմա՛ միզար դաշընա,*
*Նէլէ՜ր գէլդի էրմէնինին բաշընա։*

**100(126).**
ԻՆՉԵ՞Ր ԵԿԱՎ ՀԱՅԵՐԻ ԳԼԽԻՆ

*Ծայրից ծայր շինեցի սենյակներ,*
*Մեջը չքնեցի մի օր, մի գիշեր,*
*Մի՛ թառիր, սոխա՜կ, շիրմաքարիս,*
*Ինչե՜ր եկավ հայերի գլխին։*

*Հրացանս վրանում կախ տված մնաց,*
*Օժիտս սնդուկում դարսված մնաց,*
*Մի՛ թառիր, սոխա՜կ, շիրմաքարիս,*
*Ինչե՜ր եկավ հայերի գլխին։*

**101(127).**
ԱՍԼԱՆԲԵԿԸ ՎԱՌԵՑԱՎ[1]

*Ասլանբեկը վառեցավ, յոթը տուն մնաց,*
*Նշանլու աղջիկները կարգելու մնաց։*

*Խոսե՛, ժիժի՛, խոսե՛, տանձերը հասնին.*
*Պապասըզ տղաքը մուրազնուն հասնին։*

*Տանձերը հասել են. ժողվող մը չի՛կա.*
*Պապասըզ տղաքը կարգող մը չիկա։*

**102(128).**
ԻԶՄԻՐԸՆ ԶՈՒԼՈՒՄԸ

*Քարա դէնիզ՝ ֆըրթընա,*
*Ալ փըրթընը սըրթընա,*

**102(128).**
ԻԶՄԻՐԻ ԱՂԵՏԸ

*Սև ծովում՝ ահեղ փոթորիկ,*
*Ունեցածդ առ շալակիդ,*

---

1 «Թուրքերը Ասլանբեկը (Նիկոմեդիա) յոթ անգամ վառեր էին։ Մեր հայերը յոթ անգամ՝ նորեն նոր շիներ, նստեր էին։ Վերջին անգամը՝ 1921 թ., թուրք չեթեները էկան, Ասլանբեկը չորս կողմեն պաշարեցին։ Մենք հայերս, հազիվ Իզմիր փախանք, ամմա Իզմիրն ալ կրակի ավին. հայերուն և հույներուն ծովը թափեցինս։ Այս դեպքերին ականատես ասլանբեկցի Հայրապետյան Մաննիկը (ծնվ. 1915 թ.) արցունքներով էր հիշում այս բոլորը և հեկեկալով երգում այս սրտառուչ երգը։

Մայրի՜կ, դուշման գէլիյօր
Քըզը քալմըշ յօլընա։

Ա՜խ, մայրի՜կ ջան, աղլարըմ,
Ցուրիէիմէ յարա բաղլարըմ,
Անէմի ղայիբ էթդիմ,
Գէջէ — գունդիզ աղլարըմ։

Յազը յազդըմ դաշընա.
Գէլէն-գէչէն օքուսըն,
Դաշ աթդըմ. թուֆենգ շըքդը,
Նէլէ՞ր գէլդի բաշըմա։

Մա՜յր, թշնամին է գալիս,
Աղջիկդ մնացել է ճամփին։

Ա՜խ, մայրի՜կ ջան, ես կուլամ,
Սրտիս վերքեր փաթթվան,
Մայրիկիս եմ ես կորցրել,
Գիշեր-ցերեկ կուլամ ես։

Գիր գրեցի ես քարին.
Անցնող-դարձողն ընթերցի,
Քար գցեցի. ձայն լսեցի,
Ինչե՞ր եկավ իմ գլխին։

## 103(129).
## ԻԶՄԻՐԻ ԱՂԵՏԸ

Աֆիոնեն դուրս էկանք.
Իզմիր քաղաքը մտանք,
Ազիզ մորս չգտա,
Հոնգո՞ւր-հոնգո՞ւր լաց էղա։

Ա՜խ, մամա՛ ջան, խաբեցին.
Ինձի քեզնից բաժնեցին.
Քեզ ալ կրակը նետեցին.
Ջըթը՛ր-շըթը՛ր այրեցին։

Սև պոեզը գալիս ա,
Հույն զինվորներ բերում ա,
— Ամա՜ն, տղե՛րք, շուտ հասե՛ք,
Մամաս ձեռքից գնում ա։

Իզմիր քաղքեն դուրս էկանք,
Սալոնիկի մեզ տարան,
Ազիզ մորս չգտա,
Թալան ախպորս գտա։

Ախպարս ինձ հարց տվավ.
— Ո՞ւր թողուցիր մեր մաման։
— Իզմիրի ճամփին նա մեռավ,
Առանց թաղել նա մնաց,
Ազատելու ճար չեղավ,
Թուրքի բաժին նա դարձավ։

Սալոնիկեն դուրս էկանք,
Երևան քաղաք ես էկա,
Աշխատեցա, ապրեցա,
Մեծացա ու պսակվա։

Վեց որդիներ ունեցա,
Բայց Իզմիրը չմոռցա,
Ա՜խ, մամա՛ ջան, խաբեցին,
Թուրքերը քեզ վառեցին։

## 104(130).
## ՍԱՊԵՍ ՑՐՎԱՆՔ ԱՄԵ՞Ն ԿՈՂՄ

Մենք ալ ունինք մանչ-աղջիկ,
Ճա՛ր ալ չունինք, որ փախչինք,
Գթացե՛ք մեր խեղճության,
Արտասվելով մենք ըսինք.
«Յաշասը՛ն Ադալէթ, Մուսաֆաթ,
Յաշասը՛ն միլլէթ[1]...»։

Էլանք Պոլիս գնացինք,
Ժամուն դուռը մնացինք,

Հաց ու զեյթուն տվեցին,
Օրեք օր մեզ պահեցին։

Անկե փախանք Հունաստան,
Շատ շատերն ալ՝ Ֆրանսա,
Մեկալները՝ Եգիպտոս.
Սապես ցրվանք ամե՛ն կողմ։

1 «Կեցցե՜ Արդարությունը, Հավասարությունը, Կեցցե՜ ժողովուրդը...»։

Թուրքական (1908 թ.) Սահմանադրության խոստացած բարեփոխումներն էին, որոնք սին դուրս եկան։

## 3. ՈՐԴԵԿՈՐՈՒՅՍ ՄԱՅՐԵՐԻ, ՈՐԲԻ ԵՎ ՈՐԲԱՆՈՑԻ ԵՐԳԵՐ

### 1(181)
ՄՈՒՍԱՆ ՓԱԽՑՐԵՑ ՇԱՀՆԻԿԻՆ

*Թեջիր գեղի[1] Քյոշեն հովը կտանի,*
*Մուսան Շահնիկը շալկած կտանի...*
*Աս օրս մի՛ խոսեք. իմ սիրտը փուխր է,*
*Վարդով թե կզարնեն, գիտեմ թե՝ փուշ է,*
*Վարդը դալեն կառնեն՝ տեր չունի դեհ,*
*Կհրեն, կմշտեն՝ ղարիբ է դեհ...*
*Վարդին հոտը անուշ է, դալիկը՝ փուշ է,*
*Ամեն մարդու յավրուն՝ իրեն անուշ է։*

### 2(182).
ՄՈՒՍԱ-ՇՈՒՆ ՏԱՐԱՎ ՀԱՅՈՑ ԳՅՈՒԼԻԶԱՐ

*Մուսա-շուն տարավ հայոց Գյուլիզար,*
*Աչքերը հանեց, պտուկը պոկեց.*
*Աս ի՛նչ անգութ ժամանակ է.*
*Մեզի օգնո՛ղ մը չեղավ,*
*Աս ի՛նչ թշվառ ժամանակ է.*
*Մեղքցող մը մեզ չեղավ։*

### 3(183).
ԱՌԵՎԱՆԳՎԱԾ ՊԱՅԾԱՌԻԿԸ

*Թութաստանեն կորսվեցա,*
*Թշնամիին ձեռքը ինկա,*
*Թող մայրիկս նստի ու լա,*
*Բոլոր ազգով նստեն ու լան։*

*Բան չզգացի, վա՜յ, իմ խելքիս,*
*Բռնվեցավ մարմինս, հոգիս,*
*Ո՛չ բարեկամ, ո՛չ ազգական,*
*Չեղան ինձի մեկ օգնական։*

*— Շո՜ւտ ոտքի ելե՛ք ու փնտրեցե՛ք,*
*Սար ու ձոր իրար անցուցեք,*
*Պայծառիկին շուտով գտեք,*
*Բերեք իր խեղճ մորը տվեք։*

*Խեղճի դիակը, երբ որ գտանք,*
*Մեծ ու պստիկ շա՜տ հուզվեցանք,*
*Ոչ թե միայն մայրը թող լա.*
*Բոլոր ազգով նստենք ու լանք։*

### 4(184).
ԹՈՒՐՔԵՐԸ ՏԱՐԵԼ ԵՆ, ՈՐԴԻ՛Ս, ՀԱՅՈՑ ԿՈՒՅՍԵՐԸ

*— Աս ի՞նչ սուգ է, մայրի՛կ, մայրի՛կ,*
*Մեր թաղին մեջը։*
*— Թուրքերը տարել են, որդի՛ս,*
*Հայոց կույսերը։*

*— Ի՞նչ ծանր է, մայրի՛կ, մայրի՛կ,*
*Հայ ազգին վերքը,*
*Ի՛նչ խորունկ է, մայրի՛կ, մայրի՛կ,*
*Հայ ազգին վիշտը։*

*Ես գնում եմ, մայրի՛կ, մայրի՛կ,*
*Կռվելու համար.*
*Կռվեմ ու մեռնեմ*
*Հայ ազգին համար։*

---
1 *Հայկական թաղամաս Ասլանբեկում (Նիկոմիդիա)։*

## 5(135).
### ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻՆ ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔԸ

*Մայրի՛կ, մարթինս վար բեր,*
*Քերեմեթ պիտի էրթամ,*
*Աս իրիկուն, թե չիգամ,*
*Վաղը՝ անպայման կուգամ...*

*Ղաբաղըրխին յափրախը,*
*Մայրի՛կ, յաթախս գիտցա,*
*Սոլեսին թուրքին փարան,*
*Մայրի՛կ, վաստակս գիտցա։*

*Ջորին վարը կապել եմ,*
*Մայրի՛կ, կեր տվող չիկա,*
*Համբարձումին զարկեր են,*
*Մայրի՛կ, դին վերցնող մը չիկա։*

*Ջարուհիին մազերը*
*Բարակ-բարակ հյուսեցեք,*
*Նշանծոն ըրած ֆիստանը*
*Բազը-բազը հագցուցեք։*

*Ջարուհին շա՛տ խաս է,*
*Պզտիկ ախպորս առեք,*
*Ղաբաղըրխին յափրախը*
*Պատանքիս տեղ ծածկեցեք...*

*— Համբարձո՛ւմ, տղա՛ս, քեզ ո՞ւր զարկին,*
*Ո՞ր քարերուն, ժայռերուն.*
*«Հայրի՛կ-մայրի՛կ» կանչեցիր,*
*Բանգը՛ր-բանգը՛ր պոռացիր։*

*Հարությունին սահաթը*
*Ժամը յոթը կզարնե,*
*Համբարձումին կոշնակը*
*Տխո՛ւր-տխո՛ւր կհնչե...*

## 6(136).
### ԵՍ ԻՄ ՅԱՎՐՈՒԻՍ ԿԱՐՈ՛Տ ԵՄ, ԿԱՐՈ՛Տ

*Էլլամ կայնիմ, մեջքիս գոտին չարձկիմ,*
*Յավրուիս խոսքերը ծոցես չթափվին,*
*Յավրուիս խոսքերը զեհիրեն աջի.*
*— Մի՛ լար, մայրի՛կ ջան, ես նորեն կուգամ,*
*Տասնհինգ օրեն երազիդ կուգամ։*

*Մերդիվենին տակի քարը ըլլայի,*
*Յավրուս գար-էրթար, ոտքը պագնեի,*
*Ա՛խ, երանի ծնված չըլլայի,*
*Ես իմ յավրուիս մարը չըլլայի։*

*Ադ դիմացի թեփեն լեռ մը կա,*
*Լեռին մեջը գեղ մը կա,*
*Գեղին մեջը դուման կա,*
*Աչաբ յավրուս անտե՞ղ կա։*

*Դեր Զորի ճամփան քարոտ է, քարոտ,*
*Ես իմ յավրուիս կարո՛տ եմ, կարո՛տ։*

## 7(137).
### ՔԱՌՍՈՒՆ ՄԱՆԿԱՆ ՔԱՐԵՐԸ[1]

*Քառսուն Մանկան քարերը,*
*Բարով չի բերեն մարերը,*
*Բերեր ի՞նչ խեր են տեսեր,*
*Դրեր են սև-սև հողերը։*

*Սա դիմացիս լեռները*
*Սև-սև ամպեր են հագեր,*
*Հայ որբուկներուն համար*
*Աղի արցունք եմ թափեր։*

## 8(188).
### ՈՒՐՖԱՆԸՆ ԷԹՐԱՖԸ ԴՈՒՄԱՆԼԸ ԴԱՂԼԱՐ

*Ուրֆանըն էթրաֆը դումանլը դաղլար,*
*Էրմէնի յանըյոր. գöզլէրի աղլար,*

## 8(188).
### ՈՒՐՖԱՅԻ ՇՈՒՐՋ ԼԵՌՆԵՐՆ ԵՆ ՄՇՈՒՇՈՏ

*Ուրֆայի շուրջ լեռներն են մշուշոտ,*
*Հայերը վառվում են. աչքերն են արցունքոտ,*

---

1 Երգասացը ոչ մի տեղեկություն չի հաղորդել։ Ըստ երևույթին այս երգը հյուսվել է Մարաշի բարձունքին որձաքարերից կառուցված Քառսուն Մանկանց եկեղեցու մասին, որը 1920 թվին քեմալականները հրկիզեցին այնտեղ եղած հազարավոր հայերի հետ միասին։

Ուրֆանըն էթրաֆընա էքին էքէնլէր,
էքինի էքէնլէր, գօւզէլի սէչէրլէր,
Ջըքմա՛, ջէյրա՛ն, շու դաղլարա, սէնի ավլարլար.
Անադան, բաբադան այրը քօյարլար։

Ուրֆանըն էթրաֆընդա գէզէր բիր ջէյրան,
Յավրուսընը ղայիբ էթմիշ, արըյօր, յամա՛ն,
Ջէյրան, սէնին գիբի յուրէիմ յարա,
Արայըբ, բուլամադըմ դէրդիմէ չարա,
Ջըքմա՛, ջէյրա՛ն, շու դաղլարա, սէնի ավլարլար.
Անադան, բաբադան այրը քօյարլար։

Ուրֆանըն էթրաֆը դումանըլը դաղլար,
Քօյ վէրին, գէչէիմ, դումա՛նըլը դաղլար,
Սիլադան յավրում վար.
Օ՛ֆ, չէքէր, աղլար։

Ուրֆայի շուրջը հունձքն են հնձում,
Հունձքը հնձում են, սիրունին ընտրում,
Մի՛ շրջիր, եղնի՛կ, այս լեռներում. քեզ կփախցնեն,
Մորից, հորից քեզ կհեռացնեն։

Մի եղնիկ է շրջում Ուրֆայի շուրջբոլոր,
Կորցրել է ձագին, փնտրում է մոլոր,
Եղնի՛կ, իմ սիրտն էլ է քո պես վիրավոր.
Փնտրեցի, չգտա նրան բուժող,
Մի՛ շրջիր, եղնի՛կ, այս լեռներում. քեզ կփախցնեն,
Մորից, հորից քեզ կհեռացնեն։

Ուրֆայի շուրջ մշուշոտ լեռներ,
Ճամփա տվեք, մշուշո՛տ լեռներ,
Ձավակ ունեմ հեռվում.
Հառաչում է ու հեկեկում։

## 9(139).

Իսթիքամը դար դըր յօլը,
Դուշման սարդը սաղը-սօլը,
Էրմէնի քըզլար աղըլար,
Քաչըրդըլար, բիլմէմ յօլը։

Ջառիվայր է դիրքի ճամփան,
Թշնամին գրավեց աջ ու ձախ,
Հայ աղջիկներին առան, տարան,
Փախցրեցին՝ չգիտեմ ճամփան։

## 10(140).

Արաբքիր յէնի յափու,
Դօգէրիմ դէմիր քափու,
Իթիրմիշըմ մայրիկըմ.
Արարըմ քափու-քափու։

Արաբկիրը նոր է ծեփված,
Երկաթե դուռը նոր է ձուլված,
Կորցրել եմ մայրիկիս,
Փնտրում եմ դռներն ընկած։

## 11(141).

Արաբլար չէքիլիր, դէնգլէր բաղլանըր,
Էրմէնի քըզլարը սէչիբ ալընըր,
Յօ՛լ վէր, Ուրանը՛ն դաղլար, բիզ գիդէջէիզ,
Անամըզ, բաբամըզ բիզ բուլաջայըզ։

Արաբները քաշում, բեռներն են բարձում,
Հայ աղջիկներին առնում, փախցնում,
Ճամփա՛ տվեք, Ուրանի՛ լեռներ, որ մենք գնանք,
Մեր հորն ու մորը մենք պիտի գտնանք։

## 12(142).

Հայաթըն չէշմէի բուզ գիբի աքար,
Թուրք բաշիլարը չաղըրդան բաքար,
Էրմէնի գէլիյօր էլլէրի բաղլա,
Անալար աղըյոր՝ չօջուխըմ դէի,
Գէլինլէր աղըյօր՝ քօջամըմ դէի,
Քըզլար աղըյօր՝ նամուսըմ դէի։

Բակի աղբյուրը սառույցի պես է հոսում,
Թուրք բաշիները վրանից են նայում.
Հայերն են գալիս ձեռնակապերով.
Մայրերն են լալիս՝ զավակս ասելով,
Հարսներն են լալիս՝ ամուսինս ասելով,
Աղջիկներն են լալիս՝ պատիվս ասելով։

**13(143).**

Ուռում Հէլէնի[1] սուլարը սօ՜ւք-սօ՜ւք աքար,
Ջավալը մուհաջիրլէր չադըրդան բաքար,
Քըզլար աղլըյօր՝ նամուսըմ դէի,
Գէլինլէր աղլըյօր՝ քօջամըմ դէի,
Անալար աղլըյօր՝ չօջուխըմ դէի,
Ջէնգինլէր աղլըյօր՝ մալըմըզ դէի,
Ֆախիրլէր աղլըյօր՝ ջանըմըզ դէի։

**13(143).**

Հույն Հելենի[1] ջրերը պաղ-պաղ են հոսում,
Խեղճ գաղթականները վրանից են նայում,
Աղջիկները լալիս են՝ պատիվներս ասելով,
Հարսները լալիս են՝ ամուսիններս ասելով,
Մայրերը լալիս են՝ զավակներս ասելով,
Հարուստները լալիս են՝ ունեցվածքս ասելով,
Խեղճերը լալիս են՝ մեր կյանքն ասելով։

**14(144).**

Յէշիլ ղուրբան օլայըմ գէչէն գիւնլէրէ, մայրի՜կ,
Քըրլդը քանադլարըմ. քալդըմ չօլլէրդե՝
Անասըզ, բաբասըզ, մայրի՜կ,
Դիւշդիմ յէր ղուրբէթդէ, մայրի՜կ,
Յա բէն աղլամայըմ,
Քիմլէ՞ր աղլասըն, մայրի՜կ։

**14(144).**

Դալար զոհ դառնամ անցյալ օրերին, մայրի՜կ,
Փշրվեցին թևերս. մնացի անապատում՝
Առանց մայր, առանց հայր, մայրի՜կ,
Ընկա օտար վայրեր, մայրի՜կ,
Եթե ես լաց չլինեմ,
Ովքե՞ր լաց լինեն, մայրի՜կ։

**15(145).**

Արայըրդըմ չէշմէի բուզ գիբի աքար,
Էրմէնի քըզլարը չադըրդան բաքար,
— Քօ՛յ վէրին, փօլի՜ս բէյլէր, բիզ դէ գիդէլիմ.
Դէր Զօր չöլլէրինդէ բիզ դէ öլէիմ։

**15(145).**

Փնտրածս աղբյուրը սառույցի պես է հոսում,
Հայ աղջիկները վրանից են նայում,
— Ճամփա՜ տվե՛ք, պա՜ բեկեր, մենք ևս գնանք
Դեր Զորի անապատում մենք ևս մեռնենք։

**16(146).**

— Շու դաղըն արդընա էրմէնի քըզը վար,
Գիդը՛ն-բաքը՛ն չանթասընդա նէսի վար,
— Գիւզէլ գöզլէրի վար,
Սըմա սաչլարը վար։

**16(146).**

— Այս լեռան թիկունքին հայ աղջիկ կա,
Գնացե՛ք, տեսե՛ք պայուսակում ի՞նչ կա,
— Գեղեցիկ աչքեր կան,
Եվ մետաքս մազեր։

**17(147).**

— Շու դաղըն արդընա էրմէնի քըզը վար,
Գիդը՛ն, բաքը՛ն, չանթասընդա նեսի՞ վար,
— Ազըջըք դուզ վար, ազըջըք դա՝ օթ։

**17(147).**

— Այս լեռան թիկունքին հայ աղջիկ կա,
Գնացե՛ք, տեսե՛ք պայուսակում ի՞նչ կա,
— Մի քիչ աղ ու մի քիչ խոտ կա։

**18(148).**

Շու դաղըն բաշընդա բիր քուզու մէլէր,
Օ քուզունը սէսի բöյրէիմ դէլէր,
Նիէ՞ մէլիյօրսըն, քուզո՜ւմ, սէն բանա սöյլէ,
Անասըզ յավրուլար բöյլէ մի՞ մէլէր։

**18(148).**

Մի գառ է մայում այս լեռան լանջին,
Սիրտս է մաշում ձայնը գառնուկի,
Ինչո՞ւ ես մայում, գառնո՜ւկ, ասա՛ ինձ.
Մայրազուրկ ձագերն այդպե՞ս են լալիս։

**19(149).**

Վարա, վարա վարդըմ շու քարա դաշա,
Հասրէթ քալդըմ բաջը-քարդաշա,

**19(149).**

Գնացի, գնացի, հասա սև քարին,
Կարոտ մնացի քույր-եղբայրներիս,

---

1 Տեղավայրի անուն է։

*Յազըլան յազը գէլիրիմիշ բաշա,*
*Նէլէ՞ր գէլդի էրմէնինին բաշընա։*

*Իմ ճակատագիրն այս էր, երևի,*
*Ինչե՞ր եկան հայերիս գլխին։*

### 20(150).

*Թէքէրդախդա Թէշիք դաշ.*
*Նէ՛ անամ վար, նէ՛ բաբամ, նէ՛ դէ քարդաշ,*
*Ղօնմա՛, բիւլբի՛ւլ մէզար դաշընա.*
*Քարա թօփրաք օլսուն բանա արխադաշ։*

### 20(150).

*Թեքերդաղում է Թեշիք դաշը.*
*Ո՛չ մայր ունեմ, ո՛չ հայր և ո՛չ եղբայր,*
*Մի՛ թառիր գերեզմանաքարիս, սոխա՛կ,*
*Սև հողը թող դառնա ինձ բարեկամ։*

### 21(151).

*Գիդէն, գիդէն, էրմէնի քըզլա՛ր,*
*Բիր գիւն օլիւմ բիզէ դիւշար,*
*Դիւշմանա ավրադ օլմայա.*
*Եփրադըն իչինդէ օլիւմ բուլայըմ։*

### 21(151).

*Գնացող-գնացող, հայ աղջիկնե՛ր,*
*Մի օր մահը դեմ կգա մեզ,*
*Թշնամուն կին չդարձած.*
*Եփրատի մեջ գտնենք մահ։*

### 22(152).
#### ԹՕՒՐՔ ՉԱՈՒԾ ԻՆԱՆ ԷՐՄԷՆԻ ՔԸԶԸ

*— Ստամբուլդա բիր յար սէվդիմ՝*
*էրմէնի, էրմենի, էրմէնի,*
*էրմէնի նա՞սըլ դա գօյնի*
*Վէրմէլի, վէրմէլի, չաու՛շ, վէրմէլի։*

*— Յանդըմ, չաու՛շ, յանդըմ սէնին էլինդէն,*
*էլինդէն, չաու՛շ, էլինդէն,*
*Ծլմէինչէ քուրթուլամամ սէնին դիլինդէն,*
*Դիլինդէն, չաու՛շ, դիլինդէն.*
*Ջօք սալլամա, չաու՛շ,*
*Ղասաթուրան ֆուլլար բէլինդէն,*
*Ֆուլլար բէլինդէն, բէլինդէն։*

### 22(152).
#### ԹՈՒՐՔ ՉԱՈՒՇՆ ՈՒ ՀԱՅՈՒՀԻՆ

*— Ստամբուլում մի յար սիրեցի,*
*Հայուհի, հայուհի, հայուհի,*
*Հայուհին ինչպե՞ս իր կյանքը*
*Կտա, կտա, կտա չաուշին։*

*— Վառվեցի, չաու՛շ, վառվեցի ես քո ձեռքից,*
*Քո ձեռքից, չաու՛շ, քո ձեռքից,*
*Մեռնելով կազատվեմ ես քո լեզվից,*
*Քո լեզվից, չաու՛շ, քո լեզվից.*
*Շատ մի՛ օրորվիր, չաու՛շ,*
*Լայն սվինդ կպոկեմ քո մեջքից,*
*Կպոկեմ քո մեջքից, քո մեջքից։*

### 23(153).
#### ՄՈՒՀԱՋԸՐ ՔԸԶԸ

*Բէն բիր մուհաջըր քըզը ըմ,*
*Ինթիքամ յըլդըզը ըմ,*
*Աջը ըմ բէնիմ հալիմէ,*
*Յուրէգլէրէ սըզը ըմ։*

*Ղըյմա՛ բէնի, էֆենդի՛մ,*
*Բէն դէ սէնին գիբի իդիմ,*
*Գիւլ բախչանըն իչինդե*
*Ղօնչագիւլ գիբի իդիմ։*

*Նառ աղաջը քուրուդըր,*
*Նէ՛ արալդը, նէ՛ սօլուրդը,*
*Անամ, բաբամ, քարդաշլար*
*Հէփ բիր գիւնդէ վուրուլդը։*

*Նէրդէ՞ էրմէնինին օջաղը,*
*Նէրդէ՞ քալդը բուջաղը,*
*Բունդան սօրա թիւթմէսի՛ն*
*Օսմանլընըն օջաղը։*

### 23(153).
#### ԳԱՂԹԱԿԱՆ ԱՂՋԻԿԸ

*Ես գաղթական մի աղջիկ եմ,*
*Թաղերի աստղիկն եմ,*
*Այս վիճակում տանջվում եմ,*
*Սրտերին ցավ տվողն եմ։*

*Խնայիր ինձ դու, իմ տե՛ր,*
*Ես էլ քեզ նման էի,*
*Արքայական այգու մեջ*
*Ալ վարդի նման էի։*

*Ջորացավ մեր նռնենին.*
*Ո՛չ հարցրեցին, ո՛չ փնտրեցին,*
*Հորս, մորս, եղբայրներիս*
*Մեկ օրվա մեջ մորթեցին։*

*Ո՞ւր մնաց հայի օջախը,*
*Ո՞ւր մնաց նրա ամբարը.*
*Այսուհետև թող չծխա՛*
*Նաև օսմանցու օջախը։*

### 24(154).

*Առավոտուն կելլամ, աչքս չի բացվիր,*
*Յարաներս շատ են, մեկն ալ չի գոցվիր,*
*Դռվները զարնեմ, մեկն ալ չի բացվիր,*
*Վախիմ այս աշխարհին մեղավորը ես եմ։*

### 25(155).

*Երկու ճյուղի արանքում եմ մնացեր,*
*Բուի նման լեռներում եմ մնացեր,*
*Ո՛չ օր տեսա, ո՛չ էլ մուրազ եմ առեր,*
*Ես էլ էսպես սև բախտով եմ մնացեր։*

### 26(156).

*Մորմեն ալ կզատեն քյորփե գառները,*
*Արընով ալ իլլիքցան սրտիս դռները,*
*Սևեր հագնիմ, ըյնիմ լեռները,*
*Ընծի կըսեն՝ մի՛ լար, ես ընդո՞ր չի լամ։*

### 27(157).

*Դալղա-դալղա կընե Պոլիսա ծովը,*
*Ի՜նչ անուշ կփչե հայրիկիս հովը,*
*Տերը նասիբ ըներ՝ երթայի քովը,*
*Առնեի մուրազս, ընկնեի ծովը։*

### 28(158).

*Դալղա-դալղա կընե Բեյրութի ծովը,*
*Ի՜նչ անուշ կփչե սևդային հովը,*
*Երկու քրոջ նման մեկ սեր ունեինք,*
*Ցալաքը բաժանեց, զատվիլ չուզեցինք։*

### 29(159).

*Ամա՜ն, քույրի՜կ, ո՞ւր էրթանք,*
*Ցենեռ չունինք ո՞ւր էրթանք,*
*Հիմա թուրքերը կուգան.*
*Մութ գիշեր է ո՞ւր էրթանք։*

### 30(160).

*Թուրքին խոսքով, անոր զոռով*
*Մեր տուներեն դուրս էկանք.*
*Մենք փչացանք, բայց՝ չմեռանք.*
*Աս չոլերը մենք ինկանք։*

### 31(161).

*Ճամփա՛ տվեք, Տավրոսի՜ լեռներ,*
*Մենք էրթանք պիտի.*
*Մեր հայրերն ու մայրերը*
*Մենք գտնանք պիտի։*

### 32(162).

*Ճամփա՛ տվեք, Գյավուրի՜ լեռներ,*
*Մենք էրթանք պիտի.*
*Դեր Զորի կես ճամփին*
*Մենք մեռնինք պիտի։*

### 33(163).

*Ա՜խ, իմ սև բախտ, ինչո՞ւ սապես*
*Քույր ու եղբայր բաժնեցիր,*
*Ինչո՞ւ, ինչո՞ւ հայ որբերը*
*Անհայր, անմայր թողուցիր։*

### 34(164).

*Որբը ուր կերթա. դուռը կգոցեն,*
*Պատառ մը հաց կուտան. սիրտը կխոցեն։*

### 35(165).

*Ես աս աշխարհ էկա. հե՜չ չխնդացի.*
*Իմ աղեկ օրերս սևով անցուցի։*

### 36(166).

*Գեր ոչիլներ, նիհար ոչիլներ՝ անթիվ,*
*անհամար,*
*Մեր մատներուն, եղունգներուն շատ են*
*անհարմար։*

### 37(167).

*Գլուխդ կոտրի՛, Քեմա՜լ փաշա, հողը մտնա՛ս*
*դուն.*
*Մեզ դարձուցիր որբ ու անտեր, թողիր առանց*
*տուն։*

### 38(168).
ԵՍ ՈՐԲ ՏՂԵԿՄ ԵՄ

*Ես որբ տղեկմ եմ՝ անհայր ու անմայր,*
*Չունիմ մի մեծ քույր, չունեմ մի եղբայր,*
*Տեսեք իմ լաթեր պատառ-պատառ են,*
*Չունեմ մի կոշիկ, որ ոտքս հագնեմ։*

*Ուրիշ տղաներ կուշտ-կուշտ հաց կուտեն,*
*Երբ որ գիշեր գա՝ մահիճ կմտնեն,*
*Ինչո՞ւ ես ծնա, եկա աս աշխարհ,*
*Մի՞թե տեսնելու միայն տառապանք։*

### 39(169).
ՈՐԲԱՆՈՑԻՆ ՃԱՄՓԱՆ ՔԱՐՈՏ Է, ՔԱՐՈՏ

*Որբանոցին ճամփան քարոտ է, քարոտ,*
*Հայ որբերը մայրերուն կարոտ են, կարոտ։*

Որբանոցին ճամփան քարոտ է, քարոտ,
Հայ որբերը հայրերուն կարոտ են, կարոտ։

Հայրիկիս բռնեցին, բանտը նետեցին,
Ծեծելեն-փեթթելեն հոգին հանեցին։

Մայրիկս հիվանդ էր, բժիշկ ալ չիկար,
Մայրի՜կ ջան, ի՞նչ ընեմ, դրամ ալ չիկար։

Մայրիկս ջուր ուզեց, ջուր տվող չիկար,
Մայրիկ ջան, ի՞նչ տայի, երբ ջուր ալ չիկար։

Իմ մատիս ոսկի մատնիք բնավ չէր վայլեր,
Իմ մեկ հատիկ մայրիկս հողին չէր վայլեր։

Իմ մատիս ոսկի մատնիք բնավ չէր վայլեր,
Իմ մեկ հատիկ հայրիկս հողին չէր վայլեր։

Տավրոս լեռներուն, ձորերուն մեջը
Լիճ է կազմել, մայրի՜կ ջան, հայոց արյունը։

Մայրիկիս գերեզմանը շիշով փորեցին,
Հայրիկիս գերեզմանը բահով փորեցին,
Հայերուն ոսկորներն ալ մեջը լեցուցին։

## 40(170).

Որբանոցին բակերը քարոտ են, քարոտ,
Հայ որբերուն սիրտերը մայրի են կարոտ։

Կամաց կտրե, հացագո՜րծ, որ բարակ ըլլա.
Հայ որբերը սեղանեն անոթի չէլլան։

Որբանոցին զանգակը ամպի պես գոռաց,
Հայ որբերուն արցունքը սելի պես գնաց։

Որբանոցին ծառերը սալլամիշ կըլլան,
Հայ որբերուն սրտիկը արյուն է կուլա։

## 41(171).

Որբանոցին վրայեն սև ղուշ մը անցավ,
Հայ որբերուն օրերը սևերով անցավ։

Որբանոցին ծառերը սալլամիշ կըլլան,
Հայ որբերը մեծերուն յալվարմիշ կըլլան։

Կամաց կտրե, հացագործ, որ բարակ ըլլա.
Հայ որբերուն փորիկը անոթի չըմնա։

Որբանոցին էշիկը տաշած է, տաշած,
Հայ որբերուն սիրտերը մաշած է, մաշած։

## 42(172).

Փաբլիկային էշիկը տաշած է, տաշած[1],
Հայ որբերուն սիրտերը մաշած են, մաշած,
— Հայ աղջիկնե՜ր, աղջիկնե՜ր,
Ինչո՞ւ եք դեղնած,
— Խորոզ խոսուն կէլլանք, մայրի՜կ,
Անկից ենք դեղնած։

## 43(173).
ՈՐԲ ՀԱՐՍԻ ՀՐԱԺԵՇՏԸ

Ձեռքս թոթվեցին, սիրտս խոցեցին,
Դառնաղետ կերպով ինձի լացուցին։
Օ՜ֆ, մնաք բարյավ։

Ահա մոտեցավ բաժանման ժամը,
Ես չեմ մոռանար իմ բոլոր ցավը։
Օ՜ֆ, մնաք բարյավ։

Առանց դհոլ զուռնի ինձ հարս հագցուցին,
Առանց հայր, առանց մայր ինձ հարս դարձուցին։
Օ՜ֆ, մնաք բարյավ։

Եկե՜ք, քույրե՜ր, եկե՜ք, քովս նստեցեք,
Թաշկինակ առեք, աչքս սրբեցեք։
Օ՜ֆ, մնաք բարյավ։

Եղբայրս անցավ, տար վեր նայեցավ,
Աչքին արցունքները պուլ-պուլ հոսեցան։
Օ՜ֆ, մնաք բարյավ։

Իմ գդալս կոտրեցեք, պարտեզը նետեցեք,
Իմ կերած պատառս որբերուն տվեք։
Օ՜ֆ, մնաք բարյավ։

Իմ պնակս ջարդեցեք, հայաթը նետեցեք,
Իմ բաժին կերակուրս աղքատաց տվեք։
Օ՜ֆ, մնաք բարյավ։

Ստիպված եմ, սիրելի՜ քույր, պիտի բաժնվինք.
Մեր որբանոցեն դուրս պիտի հանվիմ։
Օ՜ֆ, մնաք բարյավ։

## 44(174).
ԵԼԵ՛Ք, ԵԼԵ՛Ք, ՀԱ՞Յ ՈՐԲԵՐ

— Դեռ ծույլերը ելած չեն,
Երեսնին լվացած չեն,
Ելե՛ք, ելե՛ք, հա՞յ որբեր,
Երգեցեք անուշ երգեր.
— Զըմըլա՜, զըմըլա՜,

[1] Կոնիացի Գույումչյան Սաթենիկը (ծնվ. 1902 թ.) դառն արցունքներով էր երգում այս և նախորդ երգերն ու պատմում. «Հունաստանում երբ որբանոցեն ետքը մեզի փաբլիկա (իմա՝ ֆաբրիկա) տարին աշխատցնելու, որբանոցի երգերուն պես երգեր շինած էինք, աղջիկներով հե՛մ կաշխատեինք, հե՛մ կերգեինք, հե՛մ ալ կուլայինք...»։

Կերակո՜ւր, կերակո՞ւր,
Բայց ի՞նչ ապուր.
Ուսուցչապետ Հայկազուն։

**45(175).**

ՄԵՆՔ՝ ՋԻԲԵՅԼԻ[1] ԱԶՆԻՎ ՍԱՆԵՐ

*Մենք՝ Ջիբեյլի ազնիվ սաներ,*
*Կուզենք ըլլալ վառ ջահեր,*
*Ջիբեյլի չինչ երկնքի տակ,*
*Կուզենք ըլլալ գրասեր։*

**46(176)**

ԱՐՄԱՇԻ ՀԱՅ ՈՐԲԵՐԸ

*Արմաշի վանքի հայ որբերը ի՞նչ կուտեն.*
*Երկուշաբթի օրը՝ ֆասուլիա,*
*Երեքշաբթի օրը՝ մախարնա,*
*Չորեքշաբթի օրը՝ փաթաթես,*
*Հինգշաբթի օրը՝ ոսպապուր,*
*Ուրբաթ օրը՝ փախլա-սուպ,*
*Շաբաթ օրը՝ չոր-բուլղուր,*
*Կիրակի օրը՝ միս կուտեն։*

**47(177).**

ԲԵՇԻԿԹԱՇԻ ՈՐԲԱՆՈՑԸ

*Այստեղ վերևը՝ բլուրին,*
*Բեշիկթաշի բարձունքին,*
*Մեր օրրանն է հայրենի,*
*Ուր սնվում է մեր հոգին։*

---

1 *«Բեյրութում ամերիկյան բողոքականներուն որբանոցն էր, բայց հայ որբերն ավելի լուսավորչական էին» (Մ. Բ.)։*

*Հոս է մեր տուն գթության.*
*Թուշնակներուն բույնը տաք,*
*Հայ որբունյաց ապաստան.*
*Սարի մը տակ՝ լուռ, մենակ։*

**48(178).**

ԱՆԹԻԼԻԱՍԻ ՈՐԲԵՐՆ ԵՆՔ ՄԵՆՔ

*Անթիլիասի որբերն ենք մենք.*
*Դելիկո՜ ախպեր, Դելիկո՜ ջան,*
*Գիրք ու դպրոց մեզ համար է,*
*Դելիկո՜ ախպեր, Դելիկո՜ ջան։*

**49(179).**

ՄԵՐ ՇԱ՜Տ ՍԻՐԵԼԻ, ԳԵՂԵՑԻԿ ԱՆԹԻԼԻԱՍ

*Շատ վայրերեն մենք հոս բերված,*
*Մեծ ընտանիք մըն ենք կազմած,*
*Մեր տունն է Անթիլիաս,*
*Գեղեցիկ Անթիլիաս։*

*Ալ չիկա Խարբերդ կամ թե՝ Կեսարիա,*
*Մարաշ ու Ադանա, Տարսոն կամ թե՝ Թալաս,*
*Այլ՝ մեր շա՜տ սիրելի, գեղեցիկ Անթիլիաս։*

*Ըլլանք մեկ սիրտ, մեկ հոգի,*
*Թող զովվի մեր ընտանիք.*
*Միշտ խաղաղ է մեր տուն.*
*Հոն կա սեր և միություն։*

*Ալ չիկա Խարբերդ կամ թե՝ Կեսարիա,*
*Մարաշ ու Ադանա, Տարսոն կամ թե՝ Թալաս,*
*Այլ՝ մեր շա՜տ սիրելի, գեղեցիկ Անթիլիաս։*

## 4. ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՎ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ ԵՐԳԵՐ ՈՒ ՎԻՊԵՐԳԵՐ

### 1(180).
ԴՈՒՇՄԱՆ ԳՕԿՕ, ԶԷՅԹՈՒՆՑԻԴԱ՛Ք

Դöւշման գօկօ, զէյթունցի՛դաք,
Թիֆօնգ առէք, ծա տըստիցէք,
Թուրքին տէմը գադրաչ իյէք,
Սիվ ձագէյնին աբանիցէք։

Զէյթունցիդաք գադրաչ ունանք,
Թուրքին վիյա հայիֆ տանանք,
Մի մայիյուն սույփ գաթըն դէղ,
Ջանգօվ-ջանգօվ ային քամինք։

Զեյթունցի՛դաք, իդվէ իյէ՛ք,
Թուրքին տէմը վազ չձեռէ՛ք,
Սիվ դուշմօնը սբանիցէ՛ք,
Շուղրան[1] տայ վայ՝ ճօյը քայիցէ՛ք։

Պէրտիգ Ջայը մինք ձիձվիցօնք[2],
Իյօնք դշլէյն մինք գիխիցօնք,
Անգայդաքը յէսիյ առօնք,
Միյ բայօխը մինք դընգիցօնք։

Գէցցէ՛ Զէյթո՛ւն, աբյը՛ Զէյթո՛ւն,
Թըղ չդիսնօ ըսդյգութուն,
Քանի ունանք միգ բիա քաչիյ,
Գէցցէ՛ Զէյթո՛ւն, աբյը՛ Զէյթո՛ւն։

### 1(180).
ԹՇՆԱՄԻՆ ԵԿԱՎ, ԶԵՅԹՈՒՆՑԻՆԵ՛Ր

Թշնամին եկավ, զեյթունցինե՛ր,
Հրացան առեք, ձի նստեցեք,
Թուրքի դեմը հերոսացեք,
Ասկյարներին սպանեցեք։

Կտրիճ զեյթունցիներ ունենք,
Թուրքի հանդեպ վրեժ ունենք,
Մեր մայրերի սուրբ կաթի տեղ,
Բոռվ-բոռվ արյուն քամենք։

Զեյթունցինե՛ր, տուքի ելե՛ք,
Թուրքի առաջ վիզ չծռե՛ք,
Սև թշնամուն սպանեցե՛ք,
Շուղրից[1] վար՝ ջուրը գլորե՛ք։

Բերդիս Ջայում մենք կռվեցինք[2]
Եղանք, զորանոցը գրավեցինք,
Ասկյարներին գերի վերցրինք,
Մեր դրոշը մենք պարզեցինք։

Կեցցե՛ Զեյթո՛ւն, ապրի՛ Զեյթո՛ւն,
Թող չտեսնի ստրկություն,
Քանի ունենք մեզ պես քաջեր,
Կեցցե՛ Զեյթո՛ւն, ապրի՛ Զեյթո՛ւն։

### 2(181).
ԶԷՅԹՈՒՆՑԱ՛ ԻՆՔ, ԶԷՅԹՈՒՆՑԱ՛

Զէյթունցա՛ յինք, զէյթունցա՛,
Ազօդ գաբյինգ՝ վօխ չունանք,
Դուշմանեան դէմ իյինք, գայնանք,
Զէյթունցա՛ յինք, զէյթունցա՛։

Գդրաչ յինք, գդրա՛չ, այաշ իյթօնք.
Այաշ իյթօնք, սույգյուն չիյթօնք,
Դöւշմանդօցմէ հայիֆ առնօնք,
Զէյթունցա՛ յինք, զեյթունցա՛։

### 2(181).
ԶԵՅԹՈՒՆՑԻ՛ ԵՆՔ, ԶԵՅԹՈՒՆՑԻ՛

Զեյթունցի՛ ենք, զեյթունցի՛,
Ազատ կապրինք՝ վախ չունինք,
Թշնամու դեմ կռվեցինք,
Զեյթունցի՛ ենք, զեյթունցի՛։

Կտրիճ ենք, կտրի՛ճ, առաջ գնանք,
Առաջ գնանք, աքսոր չգնանք,
Թշնամուց մենք վրեժ առնենք,
Զեյթունցի՛ ենք, զեյթունցի՛։

---

1 Կամուրջ Զեյթունի մոտ, Արյան ձորի վրա։

2 Նկատի ունի զեյթունցիների՝ 1895 թվի ապստամբությունը։

Հայ անունի համօյ մինք գըմիռնանք,
Վաթանի համօյ՝ էրին գըթափանք,
Միր վաթանը, հայրթանը գազադանք,
Ջէյթունցա՛ ինք, զէյթունցա՛։

Հայ անվան համար մենք կմեռնենք,
Հայրենյաց համար արյուն կթափենք,
Հայրենիքն ու հայությունը կազատենք,
Զեյթունցի՛ ենք, զեյթունցի՛։

## 3(182).
## ՄԵՆՔ ՄՈՒՍԱԼԵՌՑԻ ՀԱՅ ԿՏՐԻՃՆԵՐ ԵՆՔ[1]

Մենք մուսալեռցի հայ կտրիճներ ենք,
Բոլորս ալ վարժ զենք կրողներ ենք.
Թուրքը մեզ կուզե տեղահան անել.
Անապատներում մեզ բնաջնջել։

Մենք չենք կամենար լինել շանսատակ,
Կուզենք մենք թողնել մի լավ հիշատակ,
Փառքով մեռնելը մեզի պատիվ է.
Նահատակվելը՝ ազգին պարծանք է։

Թե մեր զենքը մեզ բավարար չէ,
Անտառը մեզի անառիկ բերդ է,
Թե հազարներ գան խուժեն մեր վրա.
Անոնցմե շատը ողջ ետ չի դառնա։

Լեռնցի ենք մենք՝ բոլորս ալ քաջ,
Մենք չե՛նք խոնարհի թշնամու առաջ,
Առյուծի նման կկռվենք քաջ-քաջ,
Ցիր ու ցան կանենք բանակը տաճկաց։

Կվայելե՞ արդյոք մուսալեռցին
Ոչխարի նման հոշոտվի գայլից,
Քանի սուր ու զենք ունենք մեր ձեռքին.
Ջարդ ու խուրդ կանենք մուռթը գայլի։

Եկե՛ք, մուսալեռցի եղբա՛յրք,
Չխոնարհվենք թուրքերուն,
Զենքը ձեռքին պաշտպանվենք
Մենք մեր խիտ անտառներում։

Անգութ թուրքը որոշել է
Բնաջնջել հայերուն,
Հափշտակել ու անպատվել
Մեր դեռահաս կույսերուն։

Ալ չխաբվի՛նք, հա՜յ եղբայրներ,
Թուրքերու կեղծ խոսքերուն,
Պետք է կռվենք մենք քաջաբար.
Չհանձնվե՛նք թշնամուն։

Պատերազմի փողը հնչեց
Մուսա լեռան կիրճերում,
Հայ կտրիճներ զինված, պատրաստ.
Դիմադրեցին թշնամուն։

Մուսալեռցիքը անվախ կռվեցին,
Տառնութը քաջ նահատակվեցին,
Իրենց սուրբ արյամբ մեզի փրկեցին.
Հայի անունը բա՜րձր պահեցին։

## 4(188).
## ՄԵՐ ՄՈՒՍԱԼԵՌՑԻՔ ԼՐԻՎ ՀԵՐՈՍ ԵՆ[2]

Մեր մուսալեռցիք լրիվ հերոս են,
Իրար նայելով կքաջալերվեն,
Վախը ինչ բան է՝ երբեք չգիտեն.
Քանի որ ունեն քեզի, Մուսա՜ լեռ։
Հա՜յ, մուսալեռցիք, ջա՜ն մուսալեռցիք,
Հայոց պատիվը բարձր պահեցինք։

Մեր մուսալեռներ լրիվ ծառաստան,
Կոչվում էր նաև փոքրիկ Հայաստան։
Հա՜յ, մուսալեռցիք, ջա՜ն մուսալեռցիք,
Հայոց պատիվը բարձր պահեցինք։

Մենք յոթը գյուղով սարը բարձրացանք,
Թշնամու առաջ չխոնարհվեցանք,
Քառասուն օրում մենք շատ զոհ տվինք.
Հայոց պատիվը բարձր պահեցինք։
Հա՜յ, մուսալեռցիք, ջա՜ն մուսալեռցիք,
Հայոց պատիվը բարձր պահեցինք։

Ես մուսալեռցի Կարոն եմ երգիչ,
Ձեռքս առել եմ թուղթ ու գրիչ,
Երգում եմ երգս հայ ազգն իմանա,
Ինձանից իրեն հիշատակ մնա։
Հա՜յ, մուսալեռցիք, ջա՜ն մուսալեռցիք,
Հայոց պատիվը բարձր պահեցինք։

---

1 Երգը հորինվել է 1915 թ.՝ մուսալեռցիների հիսուներեք օր տևած աշխարհացունց հերոսամարտի առիթով։

2 Ժողովրդայնացած այս երգը հորինել է մուսալեռցի աշուղ Կարո Բլաղյանը։

## 5(184).
### ՈՒՐՖԱՆԸՆ ԻԳԻԹԼԱՐԸ[1]

*Ուրֆա բöյüգ՝ այրըլմազ,*
*Դիբի ղայիմ՝ դադըլմազ,*
*Ուրֆանըն իգիթլարը*
*Հէչ բիր յէրէ բուլունմազ։*

## 5(184).
### ՈՒՐՖԱՅԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ[1]

*Ուրֆան մեծ է՝ չի գրավվի,*
*Հատակը պինդ է՝ չի փլվի,*
*Ուրֆայի հերոսները*
*Ոչ մի տեղում չես գտնի։*

## 6(185).
### ՀԱՃԸՆ ԷՎԻ ԲԱՇ ՔԱԼԴԸՐՄԸՇ[2]

*Ուչէ դաղդան թüֆէնգլէր öթէր.*
*Քէհյալարը գէլսին դէյի,*
*Հաճըն էվի բաշ քալդըրմըշ.*
*Խօզան օղլի գէթսին դէյի։*

## 6(185).
### ՀԱՃԸՆԸ ԿՐԿԻՆ Է ԸՄԲՈՍՏԱՑԵԼ[2]

*Բարձր լեռներում զենքերն են շաչում.*
*Իշխաններին են կանչում,*
*Հաճընը կրկին է ըմբոստացել.*
*Խոզան օղլին վռնդել են ուզում։*

## 7(186).
### ՀԱՃԸՆԸՆ ԱՍԼԱՆԼԱՐԸ[3]

*Կաթօղիկօսդան գէլդի բիր քարա խաբէր.*
*Ջին Թօրօս[4] դէդի.— Հէ՛չ էթմէյին քէդէր.*
*Քէֆիմիզ հազըր, մէզարըմըզ աչըք,*
*Վուրալը՛մ, քարդաշլա՞ր, շանըմըզ քալսըն։*

*Թիթիրիթդի բüթüն դաղլարը դաշը,*
*Թօրօս, Բարձում[5], Հակոբ՝ բունլար յօլդաշը,*
*Հաճընըն օրթասը բիր ուզուն չարշը,*
*Տիգրանըն էվի քալայա քարշը։*
*Գէլիրդան գէլիյօր զաբիթ-բինբաշը,*
*Սէլամա դուրդուլար Տիգրանա քարշը։*

*Բօրօզան բօրուսը չալամազ օլդը,*
*Ասքյար Թայինը ալամազ օլդը,*
*Բին բաշի քօմանդան վէրէմէզ օլդը,*
*Հüջüմ բօրուսուդան Բարձում վուրուլդը.*
*— Մարթինինը ա՛լ դա, թէ՛զ ուլաշ, Տիգրա՞ն։*

*Ղարս Բազարը քուրթարան Ջին Թօրօս.*
*Ինգլթէրայա վարդը սöյլէնդի՝ հէրօս.*
*— Գյավո՛ւր խընզըր,— դէյը սüնգյü, սöխդüլար,*
*Քէսդիքլէրին ղուրբանլարը գէ՛լ, գյօ՛ր, կաթօ՞ղիկոս։*

*— Վուրուշասըլա՛ր,— դէյը յազըլդը ֆէրման,*
*Աղալար սöյլէդին.— վուրուշա՛ն բունլար.*
*Բունլար վուրուշմազ սա՝ հալըմըզ յամա՛ն։*
*Օ զալըմ խաֆիյէլէր դէ թէզ դութդու մէսքյան։*

## 7(186).
### ՀԱՃԸՆԻ ԱՌՅՈՒԾՆԵՐԸ[3]

*Կաթողիկոսից մի սև լուր եկավ,*
*Ջին Թորոսն[4] ասաց.— Ցմտածե՛ք բնավ.*
*Պատրաստ ենք կռվելու, շիրիմներն են բաց,*
*Կկռվե՛նք, ընկերնե՞ր, համբավներս թող մնա։*

*Դղրդացին բոլոր լեռների ժայռերը,*
*Թորոս, Բարձում[5], Հակոբ՝ ընկերներ էին,*
*Հաճընի մեջ, շուկայում երկար,*
*Տիգրանի տունն էր բերդի դիմաց։*
*Հեռվից գալիս է զաբիթ-հազարապետը,*
*Բարևի են կանգնում Տիգրանի դեմը։*

*Շեփորը հնչեցնել չկարողացան,*
*Ասկյարն իր կերը վերցնել չկարողացավ,*
*Հազարապետը հրաման տալ չկարողացավ,*
*Հարձակման ազդանշանին Բարձումը ընկավ,*
*— Հրացանդ ա՛ռ, շուտ հասի՛ր, Տիգրա՞ն։*

*Ջին Թորոսը Ղարս Բազարն էր ազատել,*
*Անգլիա գնալով հերոսի կոչում ստացել.*
*— Խոզ-գյավո՛ւր,— ասելով արի քաշեցին,*
*Մորթված զոհերին ե՛կ, տե՛ս, կաթողիկո՞ս.*

*— Թող կռվե՛ն,— ասելով՝ տվեցիր հրաման։*
*Երևելիները ևս ասացին.— Թող կռվե՛ն սրանք.*
*Եթե սրանք չկռվեն, մեր վիճակը կդառնա վատ։*
*Այդ նենգ լրտեսները գրավեցին հրապարակը։*

---

[1] Երգը հյուսված է 1915 թ. հոկտեմբերին, Ուրֆայի դյուցազնական հերոսամարտի առիթով։

[2] Երգը հյուսվել է 1920 թ. Հաճընի յոթամսյա հերոսամարտի առիթով։

[3] Կիլիկիո կաթողիկոս Սահակ Խաբայանն ու հարուստ երևելիները դեմ էին ինքնապաշտպանությանը և արգելել էին զենքի դիմել, սակայն մի խումբ հերոսներ, այնուամենայնիվ, փորձում են ընդդիմանալ թշնամուն և նահատակվում են։

[4] Իր խիզախության համար ժողովուրդը սիրելի հերոս Թորոսի անվանն ավելացրել է «Ջին» (սատանա) մականունը։

[5] Համբարձում անվան կրճատ ձևն է։

Չէվիրիբ քօլլարը արխյէ ալդըլար,
Մարթին-ֆիշէնգ իլէն իշլէրինէ դալդըլար.
Վուրույան՝ դօխուզ նաֆար ըդը, բիր դէ՝ բինբաշի.
Մարաշլը Ալիի դէ բուլդուլար էլի։

Ջաթ Օլըխ[1] բաշընդա յաթմըշ դöրթ ասլան՝
Վöւջöւդում Ջին Թորոս, Ղահրիման Տիգրան,
Բէգլիրգան Հակօբ, Գöւզէլէշ Բարձում,
Բունլար վէրդիլէր օրդույա մէյդան։

Ինգիլիզ բայրաղը աթէշդէ յանդը,
Ասքէր-ժանդարմալար քան իլէն ղանդը,
Շահանլար դութուլդը, դöւշդöւ ղուզաղա,
Յուրէգդէն չըքմասըն բöյլէ աջըլար։

Թէրզի օղլի ղօնաղը բöւրöւթդի դուման,
Բին բաշի սöյլէդի.— Ղաչալը՛մ, ամա՛ն։
Թէրզի օղլի ղօնա՛ղը քադիր փաջալը,
Դուրմասը՛ն, ադլասը՛ն անալար-բաջըլ։

Թէլէֆսիզ բախտըն վար, վա՜յ, ահֆի՜լ Հաճըն,
Օթուզ բէշ բին էրմէնիէ վէրդիլէր աջը,
Աթէշլէրդէ յանսըն կաթօղիկօսըն թաջը,
Դութուլմասըն սöզի, ադըրսըն սաչը.
Յըլդըզլար դութուլդը, այլար բաղլանդը,
Հաճընըն չանդըրլարը, անա՜մ, գöյդի դէ օյնադը։

## 8(187).
### ԱԴՈՒՐ ՓԱՇԱ[2]

Ադո՛ւր փաշա, քա՛լք աէնի,
Ջամ չըրայը յա՛ք սէնի,
Թöւրքլար հöւջöւմ էդիյօր,
Կամավորլար արշ էդի՛ք։

Ադո՛ւր փաշա, քա՛լք, գիդէք,
Ֆէնէրլէրի յա՛ք սէնի,
Թöւրքլար աթէշ աչըյօր,
Բօմբալարը ս՛աչ սէնի։

Քօլէջդան էնդիմ յայան,
Մէնդիլըմ դօլու փայամ,
Ադուր փաշա գէլիյօ՜ր,
Դայա՛ն, օսմա՜նլը, դայա՛ն։

Կապկպելով ձեռքերը մեջտեղնին առան,
Հրացանի գնդակով իրենց գործը տեսան,
Խփողներն ինն էին, մեկն էլ՝ հազարապետը,
Այստեղ խառն էր նաև մարաշցի Ալիի ձեռքը։

Ջաթ Օլըխի[1] գլխին պառկած են չորս առյուծ՝
Հոգյակ Ջին Թորոսը, դյուցազուն Տիգրանը,
Վաճառական Հակոբն ու փնդլիկ Բարձումը,
Որոնք հանդգնել էին բացել կովի ասպարեզը։

Անգլիական դրոշը բոցերում վառվեցավ,
Ասկյար-ոստիկաններն արյամբ կշտացան,
Բազեներին բռնեցին, գցեցին թակարդ,
Այդ ցավը մեր սրտերից դուրս չի գա բնավ։

Դերձակյանի տունը ծխով ծածկվեց.
Հազարապետն ասաց.— Շտապե՛նք, փախչե՛նք
Դերձակյանի տունը լուսավոր էր, շքեղ,
Մի՛ հապաղեք, լա՛ց եղեք, մայրեր ու քույրեր։

Ողբերգական բախտ ունեցար դու, խե՜ղճ Հաճըն
Երեսունհինգ հազար հայի տվեցիր ցավ,
Թո՛ղ վառվի բոցերում կաթողիկոսի վեղարը,
Թո՛ղ չլսեն նրա խոսքը, թո՛ղ ճերմակեն մազերը
Լուսինը խավարեց, աստղերը խամրեցին,
Հաճընի թրքուհիները, ա՜խ, խնդացին, պարեցին

## 8(187).
### ԱԴՈՒՐ ՓԱՇԱ[2]

Ադուր փաշա, ծա՛ռս եղիր,
Մարխի կրակը վառի՛ր,
Թուրքերը հարձակվում են՝
Կամավորներին առաջնորդի՛ր։

Ադո՜ւր փաշա, ծա՛ռս եղիր,
Քո ջահերը վա՛ռ պահիր,
Թուրքերը կրակ են բացել,
Քո ռումբերը շուտ գցի՛ր։

Կոլեջից իջա ոտքով,
Թաշկինակս լիքն էր նշով,
Ադուր փաշան է գալիս.
Դե՛, օսմա՜նցի, դիմացի՛ր։

---

1 Ջաթ Օլըխ (հատվող աղբյուր) էն անվանել Հաճընի այն վայրը, որտեղ երկու աղբյուրները միմյանց են միացել։

2 Երգը հորինվել է 1920 թ. ապրիլի 1-ից սկսած և ընդմիջումներով 314 օր տևած Այնթապի դյուցազնական հերոսամարտի առիթով, որի ղեկավարն էր Ադուր Լևոնյանը։

Այնթապցի երգասաց Գևորգ Հեքիմյանի վերհուշով. «1920 թվին Ալի Քըլըչըն ահռելի զորքով հարձակվեց Այնթափի վրա։ Այնթապի ինքնապաշտպանության ղեկավար Ադուր Լևոնյանը, որը կազմակերպում էր ռումբեր պատրա տելու գործը, այնթապցիներու կերակուրի պղինձներն ա գամ հալեցնել տվավ, որ բոմբաներ շինենք։ Ադուր փաշա իր կամավորներով արշավեց, դուրս եկավ պաշարումե Ալի Քըլըչի քանչորս հազարանոց զորքը մեկ գիշերվա մ սարսափահար ետ փախավ. «Գյավուրն գöզի քան դօլդ (Հայի աչքն արյուն լցվեց, այսինքն՝ հայը վրեժով լցվեց աանլով»։

## 9(188).
ՅԱԾԱ՛, ՄԱՆՈՒԿ ՉԱՈՒԾ[1]

*Բէնի թ՚ուքէթդի, արքադա՛շ,*
*Բու գ՚օքսիւմդէքի յարալար,*
*Հէյրէթ շէիդ օլաջայըմ.*
*Յա՛շա վաթան, յա՛շա միլլէթ։*

*Հ՚ուջ՚ում բօրուսը չալընըր,*
*Քիմի՝ քաչար, քիմի՝ դուրուր,*
*Հէրքէշ քադէրինի գ՚օրիր.*
*Յաշա՛ վաթան, յաշա՛ միլլէթ։*

*Նասիբ օլսուն ակլամէթէ,*
*Վարըլսանըզ մէմլէքէթէ,*
*Մանուկ չաուշ օլդ՚ու դէի.*
*Յա՛շա վաթան, յաշա՛ միլլէթ։*

## 9(188).
ԿԵՑՑԵ՛, ՄԱՆՈՒԿ ՉԱՈՒՇԸ[1]

*Ինձ մաշում են, ընկե՛ր,*
*Կրծքիս վերքերը,*
*Անշուշտ, պիտի զոհվեմ.*
*Կեցցե՛ հայրենիք, կեցցե՛ ժողովուրդ։*

*Հարձակման փողը հնչեց,*
*Ոմանք կմնան, ոմանք կփախչեն,*
*Իրենց բախտը կտնօրինեն.*
*Կեցցե՛ հայրենիք, կեցցե՛ ժողովուրդ։*

*Բախտ վիճակվի բարով գնաք,*
*Բարով հասնեք մայր-երկիր,*
*Մանուկ չաուշն ընկավ, զոհվեց.*
*Կեցցե՛ հայրենիք, կեցցե՛ ժողովուրդ։*

## 10(189).
ԹՕՓԱԼ ՀԱԳՕՓԸՆ[2] ԻԳԻԹԼԸԽԸ

*Հասան բէյինին ուսդինդէ սօուք յէլ էսէր,*
*Թօփալ Հագօփ յօլլարը քէսէր,*
*Թօփալ Հագօփ սագլարա քաշդը։*
*Ղայմաղամ գէլդի սագլըղը բասդը,*
*Թօփալ Հագօփ մխաբէթդէն աթէշ աչդը,*
*Յ՚ուզ ալթմըշ թէնէ թ՚ուրք ասքյար քէսդի։*
*Թօփալ Հագօփ բէշ թաքքէ ակսինը քէսդի,*
*Օնըն բադալը քըրք թէնէ ասքյար քէսդի,*
*Ղայմաղամըն չիգյարը քօքդան դաքդը։*
*Թօփալ Հագօփ յ՚ուզ քիշի բաղլադը,*
*Գարաբեդ աղա հէփիսի դէ բօղազլադը,*
*Թօփալ Հագօփ մարթինին յաղլյօր,*
*Ադընը դույան միւսլիւմանլար աղլյօր։*
*«Ջի յումըրթա յէդիմ դ՚ուշ՚ունդէ,*
*Ախըլ էթմիյօր բու բէնիմ իշիմէ,*
*Իքի թարըը ասքյար դ՚ուշդ՚ու փէշիմէ,*
*Թ՚ուրքլէր շաշդը բու բէնիմ իշիմէ»։*

## 10(189).
ԹՈՓԱԼ ՀԱԿՈԲԻ[2] ՍԽՐԱՆՔԸ

*Հասան բեյի վրայից զով քամի փչեց,*
*Թոփալ Հակոբը ճամփաները կտրեց,*
*Թոփալ Հակոբը եղեգնուտում դարանակալվեց։*
*Ղայմաղամն եկավ եղեգնուտը շրջապատեց,*
*Թոփալ Հակոբը նրա դեմ կրակ բացեց,*
*Հարյուր վաթսուն թուրք ասկյար ջարդեց։*
*Թոփալ Հակոբը հինգ բույն կրակը պադարեցրեց,*
*Այդ ընթացքում քառասուն ասկյար գլխատեց,*
*Ղայմաղամի թոքերն արմատից պոկեց։*
*Թոփալ Հակոբը հարյուր հոգու կապկպեց,*
*Իսկ Կարապետ աղան բոլորին խեղդամահ արեց,*
*Թոփալ Հակոբն իր հրացանը յուղոտեց,*
*Իր անունը լսող մուսուլմաններին լացացրեց։*
*«Հում հավկիթ կերա երազումն իմ,*
*Խելք չի հասնում իմ բռնած գործին,*
*Երկու գունդ ասկյար ընկավ իմ ետին*
*Թուրքերը զարմացան իմ բռնած գործին»։*

## 11(190).
ՀԱՃԸՆԸՆ ՔԱՀՐԻՄԱՆԼԱՐԸ[3]

*Նիսանըն դ՚օրդ՚ունդէ Հաճըն քարըշդը,*
*Իբր Օղլու Մուհամէդ չարշիյա դ՚ուշդի,*

## 11(190).
ՀԱՃԸՆԻ ՔԱՋԵՐԸ[3]

*Ապրիլի չորսին Հաճընը խառնվեց,*
*Իբրօղլի Մուհամեդը հայտնվեց,*

---

1 *Ինքնապաշտպանական կռիվների ընթացքում թուրքական բանակում ծառայող հայ զինվորները գաղտնի օգնել են իրենց հայրենակիցներին, ինչպես հերոսի մահով զոհված Մանուկ չաուշը (տասնապետ), որի շուրջ հյուսվել է այս երգը (Ս. Բ.)։*

2 *Թոփալ (կաղ) Հակոբը Աղանայում՝ Հասան բեյի ինքնապաշտպանական կռիվների ժամանակ հայտնի ազգային հերոս է եղել։ Պատմում են, որ նա հինգ տարեկան եղած ժամանակ թուրք զաբիթին բռնել է, իր մատներով նրա փորը պատռել, սիրտն ու թոքերը արմատից հանել ու սոսու ծառից կախ տվել։ Հետագայում, երբ օձը նրա ոտքը խայթել է, նա զգացել է, որ պիտի մեռնի, ինքն իր ոտքը կացինով կտրել է և այդ օրվանից «Թոփալ Հակոբ» մականունն է վաստակել։ Նրա խումբը քառասուն հերոսներից է բաղկացած եղել։ Երբ Թոփալ Հակոբն իր զինակիցներով սպանվել է, խումբը, Հասանբեյցի Ավետիսի գլխավորությամբ, մնացել է երեսուներեք հոգի։ Այդ խմբում է կռվել նաև երբեմնի լեգեոնական, այս երգը կատարող, այժմ 103 տարեկան հասանբեյցի Թայմազյան Հովհաննես (Վարդեվառ մականունով)։*

3 *Ըստ հաճընցի երգասաց Նաղենի Սաթամյանի (ծնվ. 1926 թ.), այս երգը հորինվել է Հաճընի 1920 թվի ինքնապաշտպանության առիթով։*

Ջանգըլար չալընդը Թէփդիլէր չաշդը,
Ադամլար ֆէրղանիլէ էվլէրէ դուշդի։

Բըլըքյան Հրանտ գէնչին բիրի դիր,
Իլք փօսթադա վուրդու ֆրասանդ Թէբէրի,
Ցրասանդ ըդը Հաջի Օսմանըն յուրէյի.
Գօզինդէն վուրուլդը՝ քաչդը գէրիյէ։

Յաղլօղլու դամընդա վարդը քըրք քիշի,
Բուլունմազ բու յիգիթլէրի էշի,
Արաբ սաչլը Արշակ քօմանդան բաշը
Աթար մարթինինը աէղմանա քարշը։

Գուրնէզ դաղընդան ռէդիֆ յօրուԹդը,
Հաճըն քահրիմանլարը օնէ արշ էթդի,
Հաճըն քահրիմանլարը արշ էթդի յօրուԹդը,
— Ալամա՞մ Հաճընը,— դէդի դէյուս բինբաշի։

Դէր Համփարձում բարա խաչընը ալդը,
Ջէնգին այլէլէրդէն էրզէգ բիթիրդի,
Ջէնգին այլէլէրդէն էրզէգ բիթիրդի
Հաճըն քահրիմանլարը քէֆինի յէթիրդի։

Զանգերը զանգեցին, մարդիկ զարմացան.
Լացով-ողբով իրենց տունն ընկան։

Բըլըկյան Հրանտը մի երիտասարդ էր,
Առաջին առիթով միանգամից խփեց.
Նշանակետը՝ Հաջի Օսմանի սիրտն էր.
Նա աչքից խփվելով՝ արագ փախավ ետ։

Յաղչյանների տանիքում կային հիսուն քաջեր
Նրանց նման դյուցազուններ չի գտնվի երբեք
Արաբի նման խիտ մազերով ղեկավար Արշակը
Կրակում էր երկինքն ի վեր իր հրացանը։

Գյուրնեզ լեռներից խումբն առաջացավ,
Հաճընի քաջերն արշավեցին առաջ.
Հաճընի քաջերը գրոհեցին առաջ.
— Ձե՞մ կարող գրավել Հաճընը,—
Ասաց նենգ հազարապետը։

Տեր Համբարձումը խաչը վերցրեց,
Հարուստ ընտանիքներից մթերք հավաքեց.
Հարուստ ընտանիքներից մթերք հայթայթեց՝
Հաճընի քաջերին ուտեստ հասցրեց։

## 12(191).
### ԴՕՂԱՆ ԲԷՅ[1] ԻԼԱՆ ԱՐԱՄ ՉԱՈՒՇ[2]

Դօղան բէյ դէ գէլդի գիրդի Հաճընա,
Արամ չաուշ ղաշմըշ գէթդի ուչընա.
— Արա՛մ չաուշ, դէրլէր բէնիմ ադըմա,
Ղօփուշ ախըրընդա քօմդում ղադընը,
Հաճընդա քալմադըմ չանդըր[3] ադընը,
Շուքուր մուրազըմա էրմէդի՞մ մի բէն,
Ուրումլըյը բաադըմ չէրքէզ բէյլէրէ,
Յէրէ յաթդըլար ուգուն-ուգուն բօյլարը,
Արամ չաուշ սէչթի ղաթըր սօյլարը,
Շուքուր մուրազըմա էրմէդի՞մ մի բէն։

## 12(191).
### ԴՈՂԱՆ ԲԵՅՆ[1] ՈՒ ԱՐԱՄ ՉԱՈՒՇԸ[2]

Դողան բեյը եկավ, մտավ Հաճընը,
Նրա ետևից գնաց Արամ չաուշը,
— Արա՛մ չաուշ են անվանում ինձ,
Ղոփուշենց ախոռում թաղեցի դատավորին,
Ջանդըր[3] անունը Հաճընում չթողեցի,
Հասա՞ արդյոք վերջնական նպատակիս։
Հույնի գյուղում չերքեզ բեկերին շրջապատեցի,
Հասակով մեկ գետնին փռեցի,
Ես՝ Արա՛մ չաուշս, ջորիների ընտիրը ընտրեցի,
Հասա՞ արդյոք վերջնական նպատակիս։

## 13(192).
### ՀԱՃԸՆՑԻ ՄՈՒՐԱԴԸ[4]

Արագի ափին ծնված ընկեր,
Քո ըրածին մենք մատաղ
Մութ պատերում խաչված ընկեր,
Սուրբ տանջանքիդ մենք մատաղ։

Հո՛ւրա, հո՛ւրա, հո՛ւրա,
Քաջ անունդ անմահանա,
Հո՛ւրա, հո՛ւրա, հո՛ւրա,
Քաջ անունդ միշտ շողշողա։

---

1 Կոզան օղլի Դողան բեյը թուրքական կանոնավոր բանակի հրամանատար էր, որ 1920 թ. իր զորքով պաշարեց Հաճընը։

2 Թուրքական բանակի սպա Արամ Կայծակը (Թերզյան) Հաճընի 1920 թ. ութամսյա հերոսական ինքնապաշտպանության «Վրեժ» խմբի փոխհրամանատարն էր, որն սպանեց Դողան բեյին (Ծ. Թ.)։

3 Հայերեն խոսող թուրք կանայք։

4 Այս երգը նվիրվել է ազգային հերոս Մեծն Մուրադի (Համբարձում Պոյաճյանի)՝ Սասնո (1894 թ.) և հետագա այլ հերոսամարտերի ղեկավարին։

Քաջ հաճընցի ընկեր Մուրադ,
Դու կռվեցար քաջաբար,
Պատվի շարքով հեռացել ես
Դուն էլ ինկար քաջաբար։

Հո՜ւրա, հո՜ւրա, հո՜ւրա,
Քաջ անունդ անմահանա,
Հո՜ւրա, հո՜ւրա, հո՜ւրա,
Քաջ անունդ միշտ շողշողա։

Սուրը պատյանին հանեցիր,
Հուրա՜, ասիր՝ վազեցին,
Առավոտյան ժամը չորսին
Բիթլիս քաղաք գրավեցին։

Հո՜ւրա, հո՜ւրա, հո՜ւրա,
Քաջ անունդ անմահանա,
Հո՜ւրա, հո՜ւրա, հո՜ւրա,
Քաջ անունդ միշտ շողշողա։

## 14(193).
## ՔԱՋԵՐՆ ԱՀԱ ՇԱՐԱՆ-ՇԱՐԱՆ[1]

Քաջերն ահա շարան-շարան,
Սրտերը վրեժի մեյ-մեկ խորան,
Վրե՜ժ, կռի՜վ, մա՜հ կպոռան.
Մահ իմացյալ անմահության։

Առած ի սուր, մարշ ի բերան,
Արևմտի գագաթի վրան,
Կգոռգոռան Սեգան վրան.
Հաճընցիներ ծարավ արյան։

Հառա՜ջ, հառա՜ջ, հաճընցինե՜ր,
Մեր ոխերիմ թուրքն է եկել,
Հառա՜ջ կռվենք, ի զե՜ն, ի զե՜ն.
Տեսեք թշնամիներն ի՞նչ կուզեն։

Ազատության դրոշակին պլլված,
Կռվի՜նք վատին առաջ կանգնած,
Կռվի՜նք անվախ, կռվի՜նք քաջ-քաջ.
Ետ չի՜ դառնանք՝ սուրանք առաջ։

Ո՜ն, համազոր կրա՜կ, կրա՜կ.
Գրավե՜նք թուրքին դիրքն անառիկ,
Կռվի՜նք անդուլ քաջերու պես.
Շուտ կհասնին օգնության մեզ։

## 15(194).
## ՕԴԱՆԱՎՆ ԷԿԱՎ ՄԵԾ ՀԱՎԵՏԻՍՈՎ

Օդանավն էկավ մեծ հավետիսով,
Մեր սրտերն լցան ուրախ հույսերով,
Թափառին բոլոր մարտիկներին անգեն
Անոնք հոգիով թուրք ջարդել կուզեն։

Եղբայրներ արդեն նամակ գրեցին.
«Կռվեցե՜ք, եղբա՜յրք, կհասնի՞նքն»,— ըսին,
Սակայն ի՞նչ խաբար, օրերնիս անցան,
Հազար հոգիեն երկուք չերևցան։

Ապրիլ կամ մեռնիլ, կորիճ հաճընցի։
Գրավենք ըսին, թե ոչ՝ կմեռնինք,
Կրավենք զմեզ թնդանոթն ահեղ[2],
Թող հաղթանակը տանինք փառահեղ։

Այսպես ըսելով մի քանի քաջեր,
Ջուրը լողալով ճամփա բռնեցին,
Գիշեր ու ցերեկ լեռներ մնացին,
Թշնամյաց դիակք գետին փռեցին։

## 16(195).
## Ո՞Վ, ՀԱՃԸՆՑԻ ՔԱՋ ՊԱՏԱՆԻ

Ո՞վ, հաճընցի քաջ պատանի,
Մահվան լուրդ ո՞վ թող տանի,
Քեզպեսներում միշտ երա՜նի,
Դուք եք հույսը Հայաստանի։

Խունկով, մոմով գամ ես քեզ մոտ,
Արցունք թափեմ ես սգավոր,
Քեզ տեսնելով լացին բոլոր,
Նստած կուլամ ես ամեն օր։

---

1 1920 թ. Հաճընի ութամսյա հերոսական դյուցազնամարտին նվիրված Արամ-Ասպետի այս և այլ բանաստեղծությունները հաճընցիները ժողովրդականացրել ու իրենցն են համարում։

2 Ինքնապաշտպանության անցած հաճընցիները թշնամու թնդանոթը գրավում են, բայց մեջն արկ չի լինում, որ կրակեն և չեն կարողանում իրենք իրենց պաշտպանել։

Դուն ո՞վ ունիս, որ քեզի լա,
Գերեզմանիդ վրա ողբա,
Թշնամիեն վրեժ առնե,
Հաճրնո համար օգնող չկա։

Արտասուքս հեղեղ դարձավ,
Պայծառ օրս խավարեցավ,
Հաճրնո ձորեր արյուն լցվան,
Քանի կտրիճներ զոհվեցան։

Երեք հարյուր հայ քաջերով,
Բոլոր զինված մուխիններով,
Դողան բեյին մենք ջարդ տալով՝
Հաճրն ինկավ՝ վրե՛ժ գոռալով։

Առնեմ սուրս, ելնեմ առաջ,
Թուրքեր ջարդեմ ես աջ ու ձախ,
Ուրախ գերեզման իջնայի,
Հաճրնը ազատված տեսնայի։

## 17(196).
### Ա՜Խ, ՀԱՅՐԵՆԻՔ

Ա՜խ, հայրենիք, ե՞րբ պիտ տեսնեմ քեզ ազատ,
Ուրախ, զվարթ, ապահովված, առանց ցավ,
Տիգրանակերտ, Մուշ, Բայազետ, դեպի Վան,
Հայ զորքերով ըլլան մեզի պահապան։

Ա՜խ, հայրենիք, ե՞րբ պիտ տեսնեմ քեզ պայծառ,
Լուսավորված, ուսում առած ու կրթված,
Գահին նստած արժանավոր հայ իշխան,
Հայ տառերով գրե հայոց հրաման։

Չըլլանք մենք ստրուկ օտարի համար,
Հայկազյանց սիրուն ընկնենք քաջաբար։

Թուրքը հարձակվավ բազում զորքերով,
Կիլիկիան լցվավ լաց ու կոծերով։

Մատաղ մանկտիք զոհ եղան, գացին,
Անմեղ արյունով նահատակվեցին,
Ոմանք կիսամեռ, դեռ բաց աչքերով
Օգնության համար երկինք կնային։

Ի՞նչ անեմ այսպես դառնացած կյանքը,
Ե՞րբ պիտի տեսնեմ Հայկազյանց գահը.
Ծագե՛, արշալույս, ծագե՛ մեր վրա,
Ծագե՛ հայության, հայ ազգին վրա։

## 18(197).
### ՄԻԱՑԵ՛Ք, ՀԱՅԵ՛Ր, ՄԻԱՑԵ՛Ք

Մշո դաշտեն ելեր, կուգանք,
Խամշին փաթթեց Լևոն արքան[1],
Օտարական ենք մնացել.
Միացե՛ք, հայե՛ր, միացե՛ք։

Կար ժամանակ Արարայում[2],
Երբ կռվում էինք բանակում,
Միությունը շատ լավ բան է.
Միացե՛ք, հայե՛ր, միացե՛ք։

Յոթը թիթեղ կարմիր ոսկին
Տվին ֆրանսըզ ժեներալին,
Չհավատաք օտարի խոսքին.
Միացե՛ք, հայե՛ր, միացե՛ք։

Չունինք իշխան մեզի համար,
Կամ թե՝ արքա տիրակալ,
Որ դառնա մեր ազգին պաշտպան.
Միացե՛ք, հայե՛ր, միացե՛ք։

Հայրենիքմ ունինք՝ Հայաստան,
Այդ է հույսը մեր հայության,
Էլ չենք ապրի արտասահման.
Միացե՛ք, հայե՛ր, միացե՛ք։

Հայ խնդիրը լուծվի շուտով,
Հոն հավաքվինք ամբողջ ազգով,
Ծաղկացնենք մեր ճիգ ու ջանքով.
Միացե՛ք, հայե՛ր, միացե՛ք։

---

1 Նկատի ունի Հայկական Կիլիկիայի Լևոն Բ Մեծագործ արքային (1198—1219 թթ.)։

2 1918 թ. ֆրանսիական բանակում, հայ կամավոր լեգեոնականները Պաղեստինում, Արարայի մոտ պարտության են մատնում գերմանա-թուրքական զորքերին և նվաճում հաղթանակը։

## 5. ՀԱՅՐԵՆԱԲԱՂՁ ԵՐԳԵՐ

### 1(198).
ՑԱՆԿԱՄ ՏԵՍՆԵԼ ԻՄ ԿԻԼԻԿԻԱՆ

*Երբ որ բացվին դռներն հույսի*
*Եվ մենք Երկիր դառնանք կրկին,*
*Ձքնաղ երկիր մեր Ռուբինյանց,*
*Որ բռնությամբ առին մեզնից։*

*Ցանկամ տեսնել իմ Կիլիկիան.*
*Օդը՝ մաքուր, ջուրը՝ զուլալ,*
*Ցանկամ տեսնել իմ Կիլիկիան.*
*Վանքեր, բերդեր հոնտեղ շա՜տ կան։*

*Երբ որ լուծվի հայոց հարցը*
*Եվ մեզ տրվի նախնյաց հողը,*
*Մենք կվարենք մեր արտերը,*
*Կշենացնենք մեր գյուղերը։*

*Ցանկամ տեսնել իմ Կիլիկիան՝*
*Ձեյթուն, Հաճըն և Մուսա դաղ,*
*Տարսոն, Մարաշ, Սիս ու Այնթապ,*
*Կծաղկացնենք մենք անպայման։*

### 2(199).
ՄԵՐ ՔԵՍԱԲԸ

*Բարձր է Կասիոսի գագաթը,*
*Գերի մնաց ինչպես Արարատը,*
*Թուրքին մնաց ցանքն ու արտը,*
*Ավելացավ քեսաբցու դարդը։*

*Ոչ մի այլ ազգ չկար մեզդ,*
*Այժմ դռանդ է կայնած մեչիտը,*
*Աղոթք արեք հայոց ժամին,*
*Թող խորտակվի թուրքի ջամին։*

*Կիլիկիայի մնացորդ ես, Քեսա՜բ,*
*Երազներից մեզ հուսախաբ,*
*Գործերդ մնացին կիսատ,*
*Ով պանծալի դու մեր, Քեսա՜բ։*

*Ունիս գյուղեր բազմազան,*
*Անուններով զանազան,*
*Ուր կար ժամեր այլազան,*
*Տերտեր, պատվելի, սրբազան։*

*Ո՜վ, դու չարքաշ, քեսաբցի՜,*
*Տերն էիր դու քո հացի,*
*Արի և քաջ գյուղացի,*
*Մնացորդնե՜ր կիլիկիացի։*

*Հայոց գյուղերի բեկոր,*
*Մնացել ես դու կամակոր,*
*Արդյոք կգա՞ սիրուն մի օր,*
*Հավաքվենք շուրջդ բոլոր։*

*Փանոսն եմ ես քեսաբցի,*
*Շատ երկրներ պտտեցի,*
*Քո նմանը չհանդիպեցի,*
*Ո՜վ, պանծալի դու մեր, Քեսա՜բ։*

### 3(200).
ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ

*Գյուղին ծայրը՝ վտակին քովիկ,*
*Ծառերուն մոտ կանաչ զովիկ,*
*Խրճիթ մը կար համեստ սիրուն,*
*Իմ աննման, Հայրենի՜ տուն։*

*Կբաբախեն հոն անդադար,*
*Զույգ մը սրտեր լոկ ինձ համար,*
*Հորս, մորս անուշ սրտեր*
*Գոհարներու հետ չեմ փոխեր։*

*Օրորոցս հին ու ցածրիկ,*
*Հոն անկյուն մը կգտնեք ինձ,*
*Հոն բացվեցան լեզվիս կապեր,*
*Նախկին քայլերս հոն եմ արել։*

*Ուրախություն, հաճույք ու սեր*
*Հայրենի տունս եմ լեցուցեր,*
*Արևուն տակ չկա՜ մեկ բան՝*
*Իմ հայրենի՜ տանս նման։*

## 4(201).
### ՆԵՐԳԱՂԹԻ ԼՈՒՐԸ

Օտարության ժամանակ է.
Արդյոք սա ի՞նչ խղճմտանք է,
Համբերություն շատ լավ կյանք է.
Համբերե՛, հոգի՛ս, համբերե՛։

Հեռացել եմ տունես-տեղես,
Կորուցել եմ հարազատներս,
Կարոտ մնացել հայրենիքես.
Համբերե՛, հոգի՛ս, համբերե՛։

Օտարության մեջ ինկել ենք,
Կուլամ կարոտո՜վ-կարոտո՜վ.
Հայ խնդիրը լուծվեր շուտով.
Համբերե՛, հոգի՛ս, համբերե՛։

Ուրախացիր, մի՛ լար տխուր,
Ոտքիդ վրա կայնի՛ր ամուր.
Շուտով կլսես ներգաղթի լուր.
Համբերե՛, հոգի՛ս, համբերե՛։

## 5(202).

Երևան երթալ կուզեմ,
Քերական կարդալ կուզեմ,
Ես ի՞նչ ընեմ քերական,
Երբ բոլորն են ուսումնական։

## 6(203).

Հայաստան երթալու եմ,
Մշտական մնալու եմ,
Ես ի՞նչ ընեմ օտար աշխարհ.
Ահա կերթամ Հայաստան։

## 9(206).
### ՀԱՅԱՍՏԱՆԸՆ ԴԷՍԹԱՆԸ

Քիմ դիր յազան դէսթանը,
Օ սէվէր Հայաստանը,
Ա՛լ սազընը էլինէ,
Ջա՛լ Հայաստան դէսթանը։

Յաշասը՛ն էրմէնիլէր,
Դայանդըլար բու գյունէ,
Յախընլարդա յօլլը ըզ՝
Դիւշմանա գիւլէ-գիւլէ։

Օյնարըմ հէմ դէ չալարըմ,
Չալարըմ հէմ դէ օյնարըմ,
Հայաստանը գէօրդիքջէ
Ցըւդըզլարա հօփլարըմ։

## 7(204).

Հայաստան երթալ կուզեմ,
Երևան տեսնալ կուզեմ,
Մասիս սարի կատարին
Դրոշակ պարզել կուզեմ։

## 8(205).
### ՀԵ՛Յ ՋԱՆ, ԵՐԵՎԱՆ

Կարոտցել եմ քեզի, շեքեղ Երևան,
Շատ ծովերեն բարձր ուսկե լիճ Սևան,
Ջկներ ունիս խորքումդ՝ կողակ ու իշխան,
Հոգիս վկա լինի, կյանքս քեզ կուտամ։

Հե՛յ ջան, Երևա՜ն, դու իմ Հայաստան,
Հե՛յ ջան, հե՛յ ջան, սիրուն Երևան։

Երևա՜ն, սիրելիս, դու միշտ անսասան,
Շրջապատված ունիս այգի, բուրաստան,
Օդդ, ջուրդ՝ անուշ, տեսքդ՝ աննման,
Ով չի սիրում քեզի՝ հայ չէ իսկական։

Հե՛յ ջան, Երևա՜ն, դու իմ Հայաստան,
Հե՛յ ջան, հե՛յ ջան, սիրուն Երևան։

Երբ որ ես կմեռնեմ, Հայաստան տարեք,
Արարատյան դաշտում դիակս թաղեք,
Արարատյան գինով բաժակներ լցրեք,
Շշով խորոված լավաշով կերեք։

Հե՛յ ջան, Երևա՜ն, դու իմ Հայաստան,
Հե՛յ ջան, հե՛յ ջան, սիրուն Երևան։

## 9(206).
### ՁՈՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Ով գրել է այս վիպերգը,
Նա սիրում է Հայաստանը,
Ձեռդ վերցրու քո հին սազը,
Երգիր Հայաստանի երգը։

Հայերը թող միշտ ապրեն,
Տոկացին, հասան այս օրին,
Շուտով մենք ճամփա կելնենք՝
Թշնամու վրա խնդալով։

Պարում եմ և նվագում,
Նվագում եմ և պարում,
Հայաստանը տեսնելու՝
Աստղերին եմ ես թռչում։

Արարատըն գագաթը՝
Ասլանլարը յուվասը,
Օրալար Թիւրքին դէյի՛լ.
Էրմէնինին յուվասը։

Ստալին դըր բաբամըզ,
Միկոյան՝ Հայաթըմըզ,
Բակրամյան՝ Քարդաշըմըզ,
Մացակ Պապյան՝ ռէիզիմըզ։

Արարատի գագաթը
Առյուծների բույնն է,
Այդ վայրերը Թուրքինը չե՛ն.
Հայերի բնօրրանն է։

Ստալինը մեր հայրն է,
Միկոյանը մեր կյանքն է,
Բաղրամյանը մեր ընկերն է,
Մացակ Պապյանը՝ ղեկավարն է։

## 10(207).
### ՀԱՅԻ ԵՐԿԻՐ, ՀԱՅԻ ՀՈՂ

Հայեր ունինք խելացի,
Քաջեր ունինք սիրելի,
Ողջ աշխարհով հռչակված
Բաղրամյանը պանծալի։

Հայի երկիրը, հայի հողը
Մինչև ե՞րբ Թուրքը տիրի,
Բա՛վ է մեզի սպասելիք.
Զենքի դիմե՛ք, հա՜յ որդիք։

Զոհվածների սուրբ արյունը
Վրեժ առնել կկանչե,
Բաղրամյանի հրամանով՝
Կատուշայով պիտ բուժենք։

## 11(208).
### Ա՜Յ, ՔԱՐԱՎԱՆ, ՋԱ՜Ն ՔԱՐԱՎԱՆ

Ա՜յ քարավան, ջա՜ն քարավան, քշի՛ր քո ճամփան,
Կարոտցեր եմ հայրենիքիս. քունս չի տանիր։

Լուսնակ գիշեր քեզ կկանչեմ ու դուն չես լսեր,
Կարոտցեր եմ ազիզ եղբորս. քունս չի տանիր։

Անապատի փշերից գեն քշի՛ր քո ճամփան,
Կարոտցեր եմ Մասիս լեռան. քունս չի տանիր։

Դարդանելի նեղությունեն ազատի՜ր մեզի,
Կարոտցեր եմ իմ սուրբ հողին. քունս չի տանիր։

Հայաստանեն նավը եկավ դեպի Լիբանան,
Լիբանանեն հայեր տարավ դեպի Հայաստան։

Ա՜յ, քարավան, ջա՜ն քարավան, քշի՛ր Հայաստան,
Կարոտցեր եմ Հայրենիքիս. քունս չի տանիր։

## 12(209).
### ՄԵՐՆ Է ԿԱՐՍՆ ՈՒ ՂԱՐԱԲԱՂ

Քշի՛ր, հե՜յ ջան քարավան,
Մեզ կսպասե Հայաստան.
Թող ողջ աշխարհն իմանա՝
Մերն է Կարսն ու Արդահան։

Կեցցե՛ս, դու Հայր Ստալին.
Սրբի պես մեզ փրկեցիր,
Մեզ չսիրող Թուրքերի
Սրտիցը վերք բացեցիր։

Կուզե՛նք զայն, կուզե՛նք զայն.
Մերն է Կարսն ու Արդահան,
Թե չտան զեն-զորքով,
Պիտի առնե Բաղրամյան։

Ամբողջ վեց դար ազգովին
Եղանք գերի օտարին,
Բայց աչքերնիս կնային
Արդահանին ու Կարսին։

Կարս, Արդահանը մեզի
Պիտի շուտով դարձվի,
Որ այդ հողերն ամայի
Փոխակերպենք դրախտի։

Ղարաբաղը մեր փոքրիկ[1]
Մասն է Հայոց աշխարհի.
Ինչո՞ւ թողնենք օտարին,
Երբ հայերն են հոն բնիկ։

Մեր հայ եղբայրներ, մենք շա՜տ լռեցինք,
Բավական է մեզ այսչափ համբերենք,
Մեր Ղարաբաղը մեզնից խլեցին,
Հիմա ուժ ունենք՝ ետ առնենք նորից։

---

1 Այնթապցի բանասաց Գևորգ Հեքիմյանի հաղորդած այս երգի մեջ Հայության հետպատերազմյան (1945 թ.) ապասելիքները նոր բովանդակություն են ստացել՝ կապված մերօրյա Ղարաբաղյան շարժման հետ։

# II

# ՊԱՏՄԱԿԱՆ ՋՐՈՒՑՑՆԵՐ

## 1(210).
## ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅԵՐԸ ԵՎ ԳԱԶԱԶ ԱՐԹԻՆ ԱՄԻՐԱՆ

### 1

*Պոլսում մեր հայազգի ամիրաներից Գազազ Հարություն (Արթին) ամիրան, շատ խելացի, ուշիմ և համարձակ մարդ է եղել և անվանի արհեստավոր-հալաչ, այսինքն՝ բամբակ գզող՝ գազազ։*

*Մի անգամ նրան պալատ են հրավիրում, որպես արհեստավոր, կարծեմ սուլթան Մուրադի օրոք էր, և այն ժամանակ հայերը լավ էին թուրքերի հետ. հայերից մեծ պաշտոնյաներ կային նրա օրոք։ Գազազ Արթինը պալատում սկսում է բամբակ գզել՝ փափուկ, բարձ, անկողին պատրաստելու համար։ Թագավորը երևի լսել էր նրա իմաստության մասին և մեկ-մեկ գալիս, խոսքի է բռնում նրան, հարցեր է տալիս։ Խելացի պատասխաններ ստանալով՝ թագավորն ավելի շատ է սկսում հետաքրքրվել նրանով։*

*Քանի օր որ նա մնացել է պալատում, թագավորն այցելել է նրան աշխատանքի ժամանակ։ Թագավորը տեսնում է, որ հազվագյուտ խելացի մարդ է Հարությունը, իր պալատում նրան պաշտոն է տալիս, իսկ հետո՝ ամիրայության տիտղոս։ Գազազ Արթինն իսկապես գործունյա մարդ է դուրս գալիս, թե՛ պետական գործերում և թե՛ սուլթանի ամենասիրելի մարդն է դառնում։ Մըշտական կռիվների բերումով, թագավորի գանձարանը բավականին դատարկվում է, և թագավորը մտատանջության մեջ է ընկնում։ Գազազ Արթին ամիրան խորհուրդ է տալիս թագավորին, որ պղնձե դրամներ տպի ու, պաշտոնյաներին նրանից ռոճիկ տալով, հանրության հետ շրջանառության մեջ մտնի։*

*Եվ, այդպես են անում, թագավորն այս հրաշալի մտքի համար շատ է ուրախանում ու նրան պարգևատրում է շքանշանով։*

*Հայրս պատմում էր, երևի կատակի համար, որ հին, մեծ պղինձներն ու կաթսաները տներից հավաքել էին, որպեսզի պղնձե դրամներ ձուլեին։ Ես հիշում եմ այդ դրամները, մինչև Առաջին համաշխարհային պատերազմի տարիները գործածության մեջ էին, և կամաց-կամաց, քանի թուրքական դրամն արժեքը կորցրեց, դրանք բոլորովին մեջտեղից դուրս եկան։*

*Մի պատմական դեպքի մասին ևս ուզում եմ պատմել, որ դարձյալ կապված է Գազազ Հարություն ամիրայի հետ։*

*Գազազ Արթին ամիրային թագավորը միշտ գնահատել ու միշտ գովաբանել է իր լավ գործերի համար, բայց, անշուշտ, նախանձողներ էլ շատ են եղել։ Պալատի մեջ թուրք աստիճանավոր պաշտոնյաները և պալատից դուրս սադրազամփաշաները, բոլորն էլ երեսից հարգանք էին տածում, անշուշտ, քանի որ թագավորն ամենապատվավոր տեղն էր հատկացրել նրան, բայց սրտանց բոլորն էլ սաստիկ նախանձում էին, թե ինչպե՞ս մի հասարակ հայ այդ աստիճանի է հասել։ Եվ բոլորն էլ մտածում էին Գազազ Արթինին մեջտեղից վերացնելու մասին։ Ու մի օր էլ բոլոր այդպես մտածողներն ի մի գալով, որոշում են Գազազ Արթինի պատվին հատուկ ճաշկերույթ տալ ու, նրա ճաշի մեջ թույն լցնելով, թունավորել, մեջտեղից վերացնել, առանց հայտնի ընելու։*

*Բայց նա, ինչքան էլ թշնամիներ է ունեցել, ունեցել է նաև իրեն սիրողներ ու բարի կամեցողներ։*

*Որոշված օրը Գազազ Արթին ամիրան պատրաստում է իր պաշտոնական հագնելիքը. նշանները, բոլորը պատրաստ փինակում էին։ Այդ միջոցին նրան հավատարիմ մարդկանցից մեկն իր մոտ գալով հայտնում է Գազազ Արթինին, որ չգնա այդ ճաշկերույթին, որովհետև իրեն մահ է սպասում. որոշված է, որ նրան պետք է թունավորեն։ Ամիրան այդ մարդուն շատ մեծ շնորհակալություն է հայտնում այդ գաղտնիքն իրեն հայտնելու և իրեն լուր բերելու համար։ Այդ մարդու գնալուց հետո Գազազ Արթինը, ոտքից գլուխ հագնված, նշանները հագուստի վրա շարած, մոտենում է թագավորին, ողջունում և ասում.— Գնում եմ ճաշկերույթի, բայց եկել եմ քեզ մոտ վերջին անգամ բարովի։*

*Թագավորը զարմանքով հարցնում է.— Ի՞նչ վերջին անգամ բարովի մասին է խոսքը։*

*Եվ Արթին ամիրան թագավորին հայտնում է, թե ինչպես իր հավատարիմներից մեկը հայտնել է, որ իրեն թունավորելու պատրաստություն են տեսել ճաշկերույթի ժամանակ։*

Թագավորը մտածում է իր անելիքը և իսկույն իր վզից հանում է թագավորական նշանը իր շղթայով ու ամիրայի վիզն է գցում, համբուրում ու պատվիրում, որ նախօրոք ցույց չտա նշանը, այլ երբ որ ճաշի նստեն, այն ժամանակ հագուստը բաց անի, որ բոլորը տեսնեն նշանը։ Ամիրան դուրս է գալիս թագավորի մոտից ու, իր համար պատրաստված կառքը նստելով, գնում ճաշկերույթի վայրը։

Սրահից ներս մտնելուն պես բոլոր փաշաները շողոքորթությամբ բարևում են, բարի մաղթանք են հայտնում։ Վերջապես գալիս է ճաշկերույթի ժամը, բոլորը նստում են իրենց տեղերը, նույնպես և Գազազ Արթին ամիրան, ու երբ որ արդեն ճաշը բերում են, ամիրան բաց է անում կուրծքը, և բոլորը գլուխները խոնարհում են նրա առաջ։ Արդեն ամեն ինչ հասկանալի է դառնում, ու հետո թագավորն ամեն մեկին իրեն դասը տալիս է։

## 2.

Պոլիսեն մինչև Էսքիշեհիր, Ադաբազար, Իզմիր հայերեն էին խոսում, որովհետև ժամանակին Պոլսում սուլթանի առաջին խորհրդատուն հայ մըն էր՝ Գազազ Արթին անունով։

Երբ Նիկոլայ ցարը դեսպան է ղրկել Պոլիս, նավերը Պոլիս են եկել, լցվել, Սուլթանը տեսել է էլ հնար չկա Արթինին է կանչել։

Արթինը ըսեր է.— Քանչորս ժամով քու թագավորությունդ ինծի տուր։

Սուլթանը կուտա։

Աս Արթինը հրաման կուտա՝ թուրքական բոլոր ոսկեդրամները հավաքել։ Ադոնց տեղը պղինձ դրամ տպել կուտա։ Ոսկիները կտա նավապետներուն ետ ղրկել կուտա։ Նավերը ետ կերթան Պետրոգրադ։ Ռուսական ցարը կտեսնա, կշղայնանա, կըսե.— Ես ձեզի ըսի Պոլիսը առեք, ոչ թե՝ ոսկին բերեք։

Բայց արդեն պայմանագիրը գրել էին,ստորագրել էին։

Սուլթանը կկանչե Արթինին կըսե.— Դուն ռուսներուն ճամփու դրիր, Պոլիսը ազատեցիր՝ ոսկիները ռուսերին տալով, ի՞նչ կուզես քո լավության դիմացը։

Արթինը կպատասխանե.— Մենք հայերս հպարտ ժողովուրդ ենք։ Բոլորս կուզենք հրամանատար դառնալ, պետություն ունենալ, բայց՝ չենք կրնար, քանի որ ղորք չունինք. դպրոցը, եկեղեցին հայերեն չեն. ավետարանը անգամ թուրքերենով է կարդացվում՝ հայկական տառերով։ Քեզմե կխընդրեմ, Սուլթա՛նս, որ թողնես հայերեն խոսին։ Հայերուն ազատությո՛ւն տաս։

Արթինի նպատակն էր հայերուն մի պետություն ստեղծել։ Գիտեր որ ո՛չ Սուլթան Համիդն է երկար մնալու իր գահին և ո՛չ ալ ինքը՝ իր պաշտոնին։ Ուրիշները պիտի գան տիրապետեն ու հայերը պիտի կորչեն։ Անոր համար Արթինը հայերուն ազատություն ուզեց Սուլթան Համիդեն։

Արթինը մեկ ուրիշ բան ալ ըրավ Պոլիսի մեջ։ Հայերուն համար ս. Փրկիչ հիվանդանոցը շինեց և հայ հիվանդներուն մեջը լեցուց։

Ամմա Սուլթան Համիդը Արթինեն զատ ուրիշ խորհրդականներ ալ ուներ, որոնք նախանձեցան անոր խելքին, շնորհքին ու պատիվին, ուզեցին անոր ոտքին տակը սաբոն դնել, Սուլթանին ըսին.— Արթինը ոչ թե հիվանդանոց շինեց հայերուն համար, այլ՝ հայկական զորանո՞ց է շինել, զո՞րք է հավաքում քո դեմ կռվելու։

Սուլթանը չի հավատում, բայց կասկածում է։ Օր մըն ալ Արթինին ասում է.— Արթի՛ն, արի՛ երթանք քո հոգեկան հիվանդանոցը պտտինք,— է՛, Արթինը՝ չէ չի կրնար ըսել։ Երկուսով կերթան։

Սուլթանը կկանչե մեկ հիվանդի մը, կըսե.— Դուն ի՞նչ գործ կընես։

— Կոշկակար եմ,— կըսե։

— Կոշիկը ի՞նչպես կկարես,— կհարցնե սուլթանը։

— Է՛, իշդե քյոսելեն կառնեմ, դանակով կկըտրեմ...

Սուլթանին քեֆին չի գար։

Սուլթանը ուրիշ հիվանդ մը կկանչե, քսան տարեկան մանչու մը, կըսե.

— Դուն ի՞նչ գործ կընես։

— Բերբեր եմ։

— Ինչոր բերբերություն կընես։

Տղան կպատմե.— կսաբոնեմ երեսները, կսաբոնե՛մ, կսաբոնե՛մ, մորդ բա՞նը կսաբոնեմ...

Այդ ժամանակ Սուլթանը կըսե.— Տո՛, աս խե՞նթ է, ի՞նչ կըսե։

— Է՛, Սուլթանս, որ կըսեմ հոգեկան հիվանդներու հիվանդանոց է, դուն կկասկածիս։

***

Վերջը-վերջը թուրքերը կատղեցան, սկսան հայերուն գինվոր տանիլ, զենքերը հավաքել, ժողովրդին սրբսոր տանել։ Մեկ-երկու տարեկան էրեխեքին հավաքեցին, ինչպես ցորենը կփռեն կալի մեջ, երեխեքին ալ փռեցին գետինը ձիերով վրանին զամ արեցին, որ մեռնին...

Երբ որ թուրքերը իմացան, որ հայերը ոսկիները պահելու տեղ չունենալով կլլում էին, որ վաղվա նեղ օրվա համար պահեն, ադոր համար փորերը ճղում էին։ Որ մեկի փորից երեխա էր դուրս գալիս, որ մեկից՝ ոչ մի բան չէր դուրս գալիս։ Բայց բոլորի գլուխները այդպիսով կերան...

Ասում էին հայերը հանցագործ են։ Անոր համար օսմանյան բանակի գացողներուն ջարդում էին, սպանում։ 1890-ական թվականներին 4—5 անգամ ջարդած են հայ զինվորներուն, իսկ 1900-

ական թվականներուն 24 ժամ տևող ջարդ մը եղավ. օսմանյան բանակին մեջ գտնվող բոլոր հայ զինվորներուն սպանեցին։

Ամբողջ երկիրը մառն էին գալիս, որտեղ սիրուն աղջիկ կա՝ առնում, տանում էին սուլթանի համար։ Օր մը շատ սիրուն հայ աղջիկ մը կըլլա, անոր ալ կբռնեն կտանին սուլթանին հարեմը։ Սուլթանը շատ կսիրե այդ հայ կնիկին։ Ան ալ լսած էր, որ մեջլիսում կառավարության գլուխները որոշած էին հայերուն քանի չորս ժամվա մեջ ջարդել։

Երբ սուլթանը կուգա այդ հայ կնկա մոտ, ան կըսե.— Քսանչորս ժամվա մեջ հայերը պիտի վերջանա՞ն եղեր, ավելի լավ է ե՛ս ալ չըլլամ,— ու կուզե դանակով մը ինքզինքը սպանել։

Սուլթանը կմտածե՝ ի՞նչ ընե։ Հոն տեղը լամպա մը կա եղեր կախված, սուլթանը կզարնե, կնետե լամպան, կփշրե, կկանչե իր ծառաներուն, խորհրդականներուն.— Եկե՛ք, տեսե՛ք, իմ պապիցս-պապս աս լամպան կախված էր, աս ինկավ կոտրվեց, աս վա՞տ նշան է երևի, երեկ մեջլիսում որոշված քսանչորս ժամվա Ակ դաղի հայկական ջարդը. թող երկու ժամվա իջեցվի։

Իհարկե այդ տեսակ ջարդերով սուլթանը կուզեր, որ հայերը գլուխ չբարձրացնեն։

Այդ նույն ձևով հետո հույներուն հետ ալ վարվեցան։ Ես հիշում եմ. Այդնի զեյբեկները, մինչև ծունկը փոթուր հագած, եկան սկսան հայերուն և հույներուն ջարդել։ Այդ Քեմալի հրամանն էր։ Այդ Իզմիրի աղետն էր...

## 2(211).
## 1909 ԹՎԻ ԿԻԼԻԿԻԱՅԻ ԿՈՏՈՐԱԾԸ

Սուլթան Համիդը 33 տարի նստավ։ 1908 թ. «Հուրյէտ, ադէլէթ, օքուվէթ, Մուսաֆաթ, միլլէթ»[1] ըսավ, այսինքն՝ իրար հետ բոլորը եղբոր պես պիտի ապրինք, ըսավ։ Բայց երեք ամիս չանցած՝ ջարդի հրաման տվավ։ Կիլիկիայում՝ Հաճընի, Դյորտյոլի, Ադանայի, Սիսի և այլ տեղերի հայերին սկսեցին ջարդել։ Երեք օրվա մեջ երեսուն հազար հայ կոտորեցին։

Էդ ջարդը մոտեցավ Մարաշին։

Մեր զեյթունցիները լսեցին, որ Կիլիկիո հայերին ջարդում են, իշխանները լուր ղրկեցին Մարաշ՝ Թուրք կառավարությանը ըսին.— Զըլլա՛, որ Մարաշի մեջ մի հայու դպնաք, կգանք Մարաշ քաղաքը բոլոր կվառենք։

Թուրք կառավարողները վախցան զեյթունցիներեն, ջարդը դադրեցուցին։ Այդ ժամանակ է, որ աս երգը էլավ.

Կոտորածն անգութ, հայերը թող լան,
Անապատ դարձավ շքեղ Ադանան...[2]

## 3 (212).
## 1915 ԹՎԻ ՋԱՐԴԻ ՄԱՀԱՆԱՆ

1915 թվի ջարդից առաջ թուրքերն ու հայերը իրար հետ հաշտ ու խաղաղ կապրեին, ետքըետքը գերմանացին եկավ Բեռլին—Բաղդադ պոեզի գիծ ուզեց գցել։

Սուլթանին առաջին խորհրդատուն Արթին ամիրան էր, ան ըսել է.

— Փադիշահը՞մ, ապրա՞ծ կենաս, սխալ բան ես անում։ Մի՛ շինել տուր։

Ասում են գերմանացիները նեղացել են, անոր համար սկսվել է հայերուն ջարդը։ Այդ եղած է ջարդին մահանան։

Մարաշում հավաքում էին հայ էրիկմարդոց, իբր տանում էին թուրքական բանակ, ամմա՝ ճանապարհին մորթում էին։ Ետքն ալ կնիկներուն պատիվին հետ կխաղային, կսպանեին, կնետեին չոլերը։ Կնիկները խնդրում էին, որ չսպանեն իրենց։ Ես կհիշեմ զաբիթները կըսեին.— Քօրքըմա՛, ղուզուլա՞րըմ, փշագլարըմըզ դոկտորլարդան մուայենելի դիր, հե՞չ դույմասընըզ (մի՛ վախենաք, գառնուկնե՛րս, մեր դանակները բժիշկներից ստուգված են, բնա՛վ չպիտի զգաք)։

Իմ աչքերն ալ ջարդի ժամանակ փորեցին, դահա չուջուխ էի...

## 4(213).
## ՔՂԵՑԻ ՏԻՐՈՒՀԻՆ

Ես կհիշեմ՝ 1914 թ. հայ տղամարդկանց կհավաքեին, բանակ կտանեին և ճանապարհին կսպանեին։ Իմ հայրս Ամերիկայեն էկավ՝ յա՞ դեկտեմբեր էր, յա՞ հունվար։ Մեր գյուղի բեկը՝ Քյամիլ բեկը, էկավ ղայմաղամի հետ՝ հորեղբորս և հորս ուզում էին տանել։ Հայրս ըսավ.— Մեզի մի քա-

---

[1] 1908 թ. հռչակվեց Օսմանյան Թուրքիայի «Սահմանադրությունը», որի կարգախոսն էր՝ «Ազատություն, արդարություն, եղբայրություն, հավասարություն, մեկ ժողովուրդ»։

[2] Այս երգն ամբողջությամբ տե՛ս սույն ժողովածուի «Տեղահանության ու կոտորածի երգեր» բաժնում, վազ 447։

նի օր ժամանակ տվեք, մենք նոր ենք եկած, հանգըստանանք, լողանանք։

Սրանք գնացին, հայրս և հորեղբայրս փախան Ֆրանսա։

Հայ տղամարդկանց Տիգրանակերտեն, Քղիեն, Մուշեն, Խնուսեն կհավքեին Էրզրումի սարերը, Ղարախայի սարերը կտանեին, որ Թուրքիայի ամենաբարձր սարերն են, Էրզրումեն մոտ հիսուն կմ է։ Բոլորին պարտադիր նամակ գրել էին տալիս։ Նամակները ղրկում էին հարազատներին, հետո խշտիկներով սպանում էին։ Աղ սպանված հայերի դիակների տակից տասներկու հոգի սաղ մնացել էին, էկան Քղիի Դարման գյուղը՝ մեր տունը։ Հայրս ու հորեղբայրս փախել էին, մայրս էր տունին մեծը։ Ես ու մայրս մենակ էինք ապրում։ Մեր տունը գյուղին քենարն էր։ Բայց մայրս գիտեր, որ փախստական-դասալիք զինվոր պահողը կպատժվի կառավարության կողմեն։ Բայց ի՞նչ ընե, օգնել է պետք։ Ըսավ.— Դուռը կբացեմ՝ առանց ձայնի ներս մտեք։

Մայրս փոքր դուռը բացեց, տասներկու հոգին ներս առավ։ Այն ատեն լուսավորություն չկար, լամպա կվառեինք։ Մեկին ոտքը ցուրտը տարել էր։ Մայրս խոշոր ամանով յուղ բերավ, ոտքը մեջը դրեց, փուլպան կտրեց հանեց, մարդուն ոտքին մաշկն ալ հետը դուրս եկավ։ Մարդուն ուշքը գնաց։ Մենք մեր տներում յուկլիկներ ունեինք, որոնց մեջ գաղտնի ճամփա կար դեպի հարևանի տունը։ Մայրս սորվեցուց փախուստի ճամփան։ Կհիշեմ մայրս փալասները կդներ, դասալիքները ոտքերը կտաքացնեին։

Քամիլ բեկի տունը մեր տան դիմացն էր։ Իմ մոր անունը Տիրուհի էր։ Գիտեր, որ Տիրուհու մարդը փախած է, ուրիշ մարդ չկա տանը։ Օր մը լուսամուտից տեսնում է տղամարդ, լուր է տալիս ղայմաղամին, թե՝ եկե՛ք. Տիրուհու տանը փախստական կա։ Ղայմաղամը տասը յուզբաշիով գալիս են Քամիլ բեկի տունը, կանչում են գյուղի հայ մխտարին։

Մայրս դիմացնին էլավ ըսավ.— Էֆենդի՛մ, իմ տանը փախստական չկա՛, կառավարության ձեռքը երկար է, կարող եք նայել։

Բայց մայրս փախստականներին արդեն սովորեցրել էր, ո՛ր կողմից պիտի փախնին կա՛մ մարագ, կա՛մ ախոռ և կա՛մ հակառակ դեպքում՝ հարևանի տունը։

Պաշարեցին մեր տունը։ Երկու հոգի դուռը պահակ կանգնավ, յուզբաշին և ղայմաղամը իրենց ջանդըրմաներով մտան տուն, փնտրեցին։ Սեղանի վրա մոխրամանը գտան՝ ծխախոտի մնացուկներով։ Ղայմաղամը մորս ասեց.— Հալա՛լ ըլնի քեզ, այս տանը մարդ կա, մենք փնտրեցինք՝ չգտանք, բայց այս գործը հալա՛լ ըլի քեզ։

Այսպես մինչև մարտ ամիս մամաս դրանց պահեց։ 1936 թ., երբ ես Հալեպ գնացի, շինարարության վրա կաշխատեի, ամեն մարդ իր գլխեն եկածը կպատմեր, ես էլ սկսա պատմել իմ գլխու եկածը, թե մայրս տասներկու հոգի պահեց փախստական։ Մի մարդ դեղին բըլըղներով, 40—50 տարեկանի մոտ, չուտեր ու խիստ մտիկ կընեի ինձի, մինչեն թռավ, երեսս պագեց.

— Տղե՛րք,— ըսավ,— ես մտիկ էի տալիս, թե ինչքա՜ն ճիշտ կհիշե իր կյանքը, իսկապես ասոր մայրը՝ Տիրուհին, մինչև գարուն տասներկու հոգի պահեց, մեկի ոտքը ցուրտը տարել էր, ես ալ անոնց մեջն էի, իմ անունս ալ Փիլիպոս է, չարսանջաքցի։

## 5(214).
## ՓԱՌԱՆՁԵՄԻՆ ՎՐԵԺԸ

Օր մը աքսորի ճամփաներին Փառանձեմ անունով անուշիկ աղջիկ մը կփախցնեն, կտանին։ Ան ալ նշանված կըլլա։ Թուրքը կտանի իր տունը։ Ինքը՝ կնիկ ունի, աղջիկն ալ՝ երկրորդը պիտի ըլլա։ Ահագին ժամանակ կանցնի, Թուրքին առաջվա կնիկը իր տեքորը կըսե.— Մինչև երբ ասա գյավուր աղջի հետ պիտի ապրի։

— Ի՞նչ կրնանք ընել։

— Գիշերը գյավուր աղջըն շորբեթ կխմե, էկո՛ւր, Թույն գնենք մեջը։ Գյավուր աղջը օլդուրէլիմ (գյավուրի աղջկան մեռցնենք)։

Դու մի ըսե սա Փառանձեմն ալ բոնալիին ծակեն մտիկ կընե, քի իր մասին ասանկ բաներ կխոսեին։

Իրիկուն կըլլա, սպասուհին կուգա Թուղթին մեջեն բան մը կհանե պիտի խառնե շերբեթին մեջը, աղջիկը արթուն կըլլա կըսե.— Ի՞նչ կընես։

— Ինձի Թուրք խանումը հրամայեց քեզ մեռցընել։

Աղջիկը կուլա՛, կուլա՛։ Կմտածե՝ էրթա իրեն հարազատներուն գտնա...

Հին չարշաֆի մը մեջ կփաթթվի, կերթա գետինները պառկած գաղթականներուն մեջը մորը կփնտրե։ Կտեսնա, որ չուլ-փալասի վրա մայրը մենակը պառկած է... կհարցնե.— Մայրի՛կ, հեչ մեկը գոռ չը՞նիս, քի մինա՛կդ պառկած ես...

— Չէ՛, չունիմ, ես մենակ եմ, այսօր-վաղը կմեռնիմ։

— Աղեկ մտածե, աղջիկ մը չունե՞իր...

Մայրը կճանչնա աղջկան, կփաթաթվին կու-

լան... Մայրը արդեն հիվանդ էր, ուրախութենեն սիրտը կպայթի կմեռնի։

Աս Փառանձեմին հին նշանածը կփնտրե կգըտնա, կտեսնա, որ Փառանձեմը եկած է, մայրը մեռած է, ինքն ալ մենակ է մնացած, կըսե,— Ինչ եղած է՝ եղած է. գիտեմ քու կամքովդ չէ՛ եղած. եկո՛ւր քեզ տանիմ, ամուսնանանք։

Աղջիկը կըսե.— Ես ալ չե՛մ էրթար ո՛չ Թուրքին, ո՛չ ալ քեզի. փորիս մեջ օ՞ձ մը կա...

Կէրթա, առանձին, չորս պատին մեջը, մենակը կուզե Թուրքին լամուկեն ազատվիլ։ Հենց որ չոջուխը կծնվի, կխեղդե ձեռքովը, ինքն ալ թույն կխմե՝ կմեռնի։

## 6(215).
## ՔԵՍԱԲՑԻ ՎԻԿՏՈՐԸ

1915 թվին թուրքերը հայերից մի աղջիկ էին փախցրել, այդ աղջիկը չկար ու չկար։ Դու մի սաս անոր առեր տարեր տվեր էին Դամասկոսի արաբ մոլլային։ Մոլլան կըսե.— Եթե օրերեն մեկ օր բերանեդ հանես, որ հայու աղջիկ ես, ես քեզ ոչխարի պես կմորթեմ։

Էս աղջիկը կվախնա, ձայնը կտրած տարիներով կապրի հոն։ Կունենա հինգ տղա, երկու աղջիկ, մոլլան կսատկի։

Աս երեխեքին մայրը կկանչե իր զավակներին կըսե.— Բերե՛ք դանակը՝ ինձ մորթեցեք։

Զավակները կըսեն.— Խելագարվե՞լ ես, ի՞նչ է։

Մայրը կսկսի պատմել։— Ես քարից, թփից չեմ, ես հայու զավակ եմ, հիմա որ ձեր մոլլա հայրը մեռավ, ես ձեզ կրնամ ճիշտը ըսել, որ ես հայ եմ, Քեսաբ գյուղից եմ, Մուսա լեռան կողմի Քեսաբից։ Ծովի կողմը փլված վանքին քովը մեր երկու հարկանի տունն էր, հորս, մորս անունները ա՛ս, ա՛ս էր։ Գացե՛ք, զավակնե՛րս, փընտրե՛ք, գտե՛ք։

Հինգ տղաները նստում են մեքենա, գնում են Քեսաբ ստուգելու։ Մարդու բան չեն ըսեր։ Ինչ որ մայրը ըսել էր, փնտրում են. ծովի կողմը տեսնում են մի վանք կա, քովը երկու հարկանի տուն կա, մի կին է իջնում սանդուղից։ Բարձրանում են վերև.

— Վալա էլ ազիմ (աստված վկա) սա մեր մոր ասածն է, մեր փնտրածնիս է։ Կհարցնեն,— Կարելի՞ է։

— Ցաատա՛լ (հրամե՛)։

— Չվախենա՛ս, մայրի՛կ, մի բան պիտի հարցնենք, դուք ի՞նչյան եք։

— Ամուսինս տունը չէ, գյուղ գնաց,— կըսե կինը վախենալով։

Աս կինը երկու եղբայր է ունենում, անոնք ալ ներսը նստած կըլլան։ Կինը գնում է ներս, քեռիներին ասում. —Հինգ արաբ են եկել։

— Թութուն ունե՞ս պահած։

— Չէ՛։

— Զենք ունե՞ս պահած։

— Չէ՛։

— Ինչո՞ւ կվախենաս. քալե էրթանք, տեսնանք՝ էդ մահմեդականները ի՞նչ են ուզում։

Գալիս են ներս, հինգ տղաներին բարևում են, նստում։

Տղաներն սկսում են հարցնել.— Տանտերը, Աբրահամը ո՞վ է։

— Ե՛ս եմ։

— Մենք եկել ենք հարցնելու, դու պիտի ասես հորդ անունը, մորդ ո՛վ ըլլալը, ով ունես-չունես պիտի ասես։

Մարդը բոլորի անունները մեկ-մեկ կըսե, վերջն ալ կըսե.— Մեկ հատ ալ կա կորած է։

Տղաները կըսեն.— Վալլա՛ էլ ազիմ, սա՛ է. ոչ մի կասկած չկա այլևս։ Բա կորած քրոջդ անունը ի՞նչ էր։

— Վիկտոր էր։

— Գիտես ի՞նչ կա, դու մեր քեռին ես։

— Ի՞նչ քեռի, ես՝ հայ, դուք՝ արաբ։

-- Ձեր քույրը Վիկտորը. մեր մայրն է, տեսե՛ք մայրերնիս ի՞նչ անուններ որ տված է, ճիշտ ձեր ըսած անուններն են։

Մարդը ապշած կմնա։

Տղաները կըսեն.— Հիմա մենք պիտի գնանք, քեզ ալ պիտի տանենք հետերնիս քո քրոջ՝ Վիկտորի մոտ։

Տղաները ելնում են, էս մարդուն առնում, գնում, հասնում են Դամասկոս.— Հե՞ն ա մեր մայրը, տեսնանք քեզի պիտի ճա՞նչնա։

Մայրը գալիս է.— Էհլե՛ն, սեհլե՛ն, չիմացա ո՞վ եք,— կըսե։

Տղաներից մեկը կմոտենա քեռիներին կըսե,— Գացե՛ք, ձեր բարբառով սկսեք խոսել, իր անունը ըսեք։

— Լալո՛, ես՝ Աբրահամն եմ, աս՝ Օհաննեսն է, տոն՝ չի՞ս Վիկտորը։

Կինը լսելուն պես կփաթաթվի, կուշաթափվի։

Մեծ տղան կըսե,— Մա՛յր, ահա քու երազը կատարեցինք, մեր հայրը չկատարեց, մե՛նք կատարեցինք։ Վաղը գնալու ենք Քեսաբ։

Բոլորով նստում են ավտո, Վիկտորին ալ հետերնին են տանում։ Հասնում են Քեսաբ։

*Տղան կըսե.— Մա՜յր, դու առեցիր ձեր տունը կարող ես գտնել։*

*Էս մայրը, յալլա՜, գլուխը առնում, գնում է իր գիտցած ճամփայով, վանքի քովը երկու հարկանի տունը կերթա, կսկսի տունին պատե՜րը համբուրել, քարե՜րը համբուրել...*

*Աբրահամն ու Օհաննեսը կերթան ոչխար կմորթեն, կուտեն-կխմեն, քեֆ կանեն։*

*Անոնք կհասնին իրենց մուրազին, դուք ալ հասնիք ձեր մուրազին, ամբողջ աշխարհն ալ թող հասնի իր մուրազին։*

**7(216).**

## ՀԱՅՈՒՆ ԺԱԿԱՏԱԳԻՐԸ

*Աս պատմությունը իրականություն եղած բան է։ Մի բիձա ինձ պատմած է, որը իր աչքովը տեսած է։*

*1915 թ., երբ հայերուն սկսել են կոտորել, մի մարդ ու կնիկ կըլլան, կունենան երկու տղա, մեկը յոթ տարեկան, մեկը՝ ինը տարեկան։ Մարդուն թուրքերը կմորթեն, կնիկը կլացի մարդուն դիակին վրա։ Ադտեղը թուրքին հետը գերմանացի սպա մըն ալ կըլլա։ Գերմանացիին սիրտը կփլվի, կմտածե՝ աս գեղեցիկ կնիկին մարդուն սպանեցին, տղաներն ալ աղվորիկ բաներ են, մե՜ղք են... Գերմանացին նշմարով կհասկցնե հայ կնիկին, որ աս տղաներեն մեկը տուր ինձի, քեզի և մյուս տղայիդ ղրկեմ ուրիշ երկիր՝ ազատվիք։*

*Կնիկը մեծ տղային կուտա ադ գերմանացիին։ Ան ալ վագոնը կդնե, կղրկե Գերմանիա։ Կնիկին ալ նամակ կգրե, որ մենք տղա չունեինք էս տղին հարազատիդ պես կնայիս, կուտեցնես, կխմեցնես, դպրոց կդնես, աղջիկին հետ թող սորվի։*

*Գերմանացին մյուս տղային ու նրա մորը կուղարկե Ֆրանսա, որ ազատվին ջարդեն։*

*Ադ գերմանացին ծոցատետրի մեջ կգրե՝ ես տղան ղրկեցի Գերմանիա՝ իմ տունս։*

*Կանցնի երեսուն տարի։ Էս տղան կսորվի։ Մարդը իր աղջկան կամուսնացնի ադ տղուն հետ, կունենան մի հատ տղա։*

*Գերմանացի մարդը կմեռնի։ Տղան հոր դարակները կքըքրե, կկարդա հոր ծոցատետրին մեջ, որ «Ես էդ տղային մոր հետ ղրկեցի Ֆրանսա, մյուս տղային ալ ղրկել եմ Գերմանիա՝ իմ տունը»։*

*Տղան տետրակը կդնե գրպանը.— Հը՜,— կըսե,— կնի՜կ, պիտի էրթանք Ֆրանսա։*

*Կառնե իր կնիկն ու երեխեն, կերթան Ֆրանսա՝ հյուրանոց մը։ Կնիկին կըսե.— Ես մի քիչ գնամ ման գամ։*

*Աս տղան կառնե մեքենա մը, կըսե գերմաներենով.— Ինձի տարեք հայկական եկեղեցի։*

*Կերթա հայկական եկեղեցի, կըսե.— Ես հայ որբ եմ եղել, ինձ Գերմանիա են տարել, հոն սորվել եմ, ո՛վ կգտնե աս կնիկին՝ շատ դրամ կտամ։*

*Հայերը կփնտրեն եկեղեցիին ցուցակներուն մեջ, կըսեն.— Ադ տեսակ կնիկ մը ու տղա մը Լիոն կապրին։*

*Տղան շատ դրամ կուտա կելլա, կերթա։*

*Կնիկին կըսե.— Կնի՜կ, Լիոն պիտի էրթանք։— Կերթան Լիոն, կիջնան հյուրանոց մը։*

*Կնիկին կըսե.— Կնի՜կ, ես քիչ մը երթամ ման գամ։*

*Կերթա մեքենա մը կբռնե, կերթա ուղիղ հայկական եկեղեցի, կըսե.— Ես հայ որբ մըն եմ եղել, Գերմանիա եմ մեծացել, էս կնիկը ո՛վ գտնի, էսքան դրամ կտամ։*

*Ո՞վ դրամ չուզեր։*

*Հայերը կսկսին փնտրել։ Մի հայ մարդ կգտնա։ Ան ալ ադ բիձան կըլլա, որ ինձի պատմեց աս պատմությունը։ Կուգա կըսե տղային.— Գտա՛, ուզածդ մայրդ ու տղան, ամմա այնքան քեսիբ են, ուտելի՞ք անգամ չունին, քանի որ տղան գործազուրկ է։*

*Տղան կըսե.— Տղային բե՛ր քովս։ Ըսե՝ աշխատանք կա քեզ համար։— Կհանե ահագին դրամ կուտա աս հայ բիձային, բիձան կուրախանա։*

*Տղան կուգա, կներկայանա աս Գերմանիայեն եկողին։ Աս կնայի, քի իրեն շատ կնմանի. ախպեր են, չէ՞։ Արցունքները կթափվին։ Կնա՜յի, կնա՜յի, խելքը կերթա, բայց ձայն չի հաներ, կըսե.— Անունդ ի՞նչ է։*

*— Գաբրիել։*

*— Ո՞վ ունիս։*

*— Մայր մը։*

*— Անունը ի՞նչ է։*

*— Վարդուհի։*

*— Ես Գերմանիայեն եմ եկել, դուն ամեն օր պիտի մեր միսը, հացը բերես, ամեն օր մեզի հետ պիտի ըլլաս, միասին պիտի ուտենք, գիշերը քու տունդ պիտի երթաս։*

*Էս տղան կերթա կբերե ամեն ինչը։ Աս կհանե հազար ֆրանկ մը կկոխե անոր գրպանը, կըսե.— Ձեր տունը պակաս-մակաս թե ունիք՝ գնա առ։ Տղան զարմացած կերթա տուն, մորը կըսե.— Մա՜յր, էս Գերմանիայեն եկած մարդը կա՛մ գիժ է, կա՛մ մեր բախտն է. ինձի կուտեցնե, կխմցընե, դրամն ալ գրպանս կկոխե, ինձի համփու կընե։*

*Մյուս օրը նորեն նույն բանը կընե։ Ասանկ քանի մը օր։ Օր մըն ալ կըսե.— Ես կուզեմ ձեր տունը գալ, կնիկիս, երեխիս հետը։ Աս դրամն ալ առ տունիդ կարևոր բաները կառնես։*

*Տղան կերթա, կպատրաստե ամեն ինչը, կուգա կըսե.— Կրնաք հրամել, բայց քո անունը ի՞նչ է։— Իմ անունը չեմ ըսեր հիմա,— կդառնա կնիկին,— կնի՛կ, ելի՛ր պատրաստվիր, տղանուս հետ պիտի երթանք ման գալու։*

*Գնում են, մի մեքենա են վերցնում, գնում են տղի տունը։ Կըտեսնան խեղճ ու կրակ ծերացած կնիկ մը աչքերեն արցունք կվազե՝ թաշկինակը կապած գլուխը։*

*Աս կհարցնե.— Մայրի՛կ, քո անունը ի՞նչ է։*

*— Իմ անունը Վարդուհի է։*

*— Պատմի՛ր քո կյանքը։*

*Կնիկը կսկսի պատմել.— Մի հատ մեծ, մի հատ պզտիկ տղա ունեի, երբ Թուրքերը ամուսինիս մորթեցին, հոն գերմանացի սպա մը կար, իմ մեկ տղային առավ տարավ. չեմ գիտեր ի՞նչ եղավ, աս մեկն ալ՝ քովս է, միասին կապրինք։*

*Տղան գրպանեն կհանե հոր գրած տետրակը կկարդա, կպարզվի իրականությունը։*

*Կսկսին իրար համբուրվիլ։ Օտար կնիկը կզարմանա տեսնելով այս բոլորը։ Տղան կըսե մորն ու եղբորը.— Էլե՛ք, հավաքվեցե՛ք, աս ձեր ունեցած-չունեցածը հայ աղքատներուն բաժնեցե՛ք, պիտի երթանք Գերմանիա, միասին պիտի ապրինք, ես հոն ամեն ինչ ունիմ։*

*Տղան մորն ու եղբորը, կնիկին ու երեխին կառնե կերթա Գերմանիա։ Ասոնք կհասնին իրենց մուրազին, դուք ալ հասնիք ձեր մուրազին։*

# III

# ՄԵԾ ԵՂԵՌՆԻՑ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐԻ ՀՈՒՇԵՐ

## 1(217).
## ԶԵՅԹՈՒՆՑԻ ԲԸՏԻԿՅԱՆ ՀՈՎՍԵՓԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1903 Թ.)

**Մարդու ճակատին եթե գրված է**
**ողջ պիտի մնա՝ կմնա...**

*Մինչև 1915 թիվը Զեյթունում երեսուն հազար հայ կար։ Ամբողջ Թուրքիայի մեջ միայն Զեյթունն էր, ուր միայն հայեր էին ապրում։*

*Զեյթունը բաժանված էր չորս թաղերի՝ Յաղուբյան, Սուրենյան, Նորաշխարհյան, Շովրոյան իշխանական տոհմերի անուններով։*

*Զեյթունի մեջ հայրս և հորեղբայրս պատշար էին, միասին կաշխատեին, միասին կապրեին՝ իրենց ընտանիքներով։ Մենք երեք եղբայր, երկու քույր էինք գաղթականության ժամանակ։ Մենք մեծ գերդաստան էինք։ Մեր տոհմի բոլոր էմիօղլուների այգիները իրար մոտ էին։ 1915 թ. առաջին անգամ զեյթունցիներին աքսորեցին։ Ես տասնմեկ-տասներկու տարեկան էի։ Մերոնք կռվեցին Նորաշխարհյանի ղեկավարությամբ։ Չորս-հինգ օր մեր Ս. Աստվածածին վանքում ֆեդայիները կռվում էին։ Ամեն տարի, Աստվածածնի տոնի օրը, հոն կերթայինք ուխտի։ Կուտեինք, կխմեինք, կպարեինք, կերգեինք, խաղեր կընեինք, լարախաղացներ ալ կուգային. դա մեր ավանդությունն էր։ Հենց էդտեղ ալ մերոնք կռվեցան, շատ թուրքերի կոտորեցին, բայց տեսան, որ չպիտի գլուխ հանեն։ Արդեն Զեյթունի մեծամեծներուն, մոտ երեք հարյուր հոգի, թուրքերը մաս-մաս տարել էին զորանոց, էնտեղից էլ՝ Մարաշ. բանտարկեցին, կախաղան հանեցին, անոնց ընտանիքներուն ալ աքսոր տարին։ Բայց ջահելները, մոտ հարյուր հոգի, բարձրացել էին լեռը՝ կռվելու։ Այդ ժամանակ Կիլիկիո կաթողիկոսը՝ Սահակ Խաբայանը, կոնդակ ուղարկեց, որ. «Ամա՜ն. զենք չվերցնե՛ք. կհանձնվե՛ք»։ Ան նույնիսկ եկավ Զեյթուն. մենք դպրոցական էինք, մեզ տարին դիմավորելու։ Ան քարոզ տվավ, հանգստացուց ժողովրդին, համոզեց, որ լավ կլինի և պատճառ դարձավ, որ չկռվին զեյթունցիները։ Արդեն զեյթունցիները առաջ-առաջ մոտ վաթսուն անգամ կռված էին ու միշտ դիմադրած էին թուրք կառավարության բռնակալությանը և միշտ ալ հաղթած էին։ Թուրքերը անոր համար կվախնային զեյթունցիներեն և տուրք-մուրք չէին կրնար առնել մեզմե։ Այս անգամ ալ պատրաստ էին դիմադրելու և մեռնելու քանի որ գիտեին՝ մեկ է պիտի մեռնին աքսորում՝ Դեր Զորի չոլերում։ Ես երրորդ դասարան էի. մարտ ամսին դպրոցները գոցեցին։ Մեզ գաղթական հանեցին։ Թուրքերը եկան մեզ էշեր տվին, բարձեցինք, գնացինք Մարաշ։ Էնտեղեն ալ ժողովրդի մի մասը աքսորեցին Կոնիայի կողմը, մյուս մասն ալ՝ Դեր Զորի կողմը։ Մեզի տարին Կոնիայի կողմը։*

*Ես փոքր էի, չէի կարող քայլել, ճանապարհին մայրս խնդրեց թուրքերին.— Աս չոջուխին դևեի մը վրա նստեցուցեք։ Արդեն մի քանի երեխաներ կային նստած ուղտերու վրա։ Ինձ էլ բարձրացրին մի ուղտի վրա։ Ուղտերը կամացկամաց կքալեին։ Մերոնք առաջ անցան, մենք ետ մնացինք. ուղտի վրա քնել, մնացել եմ։ Մութը ինկավ, մինակնիս կուլանք, ծնողքնիրնիս կուզենք։ Ճանապարհին մեզի մի գյուղ տարին՝ Ուլղուշլա, իջեցուցին, հոն երեք-չորս օր մնացինք։ Ադ տեղը թուրքերը մեզ ծեծում էին, հալածում էին, թալանում էին վրանիս ինչ կար, ինչ չիկար։ Ես հիվանդացա, դիզենտերի եղա, որը մինչև 1946 թ. Հայաստան գալս վրաս մնաց։ Միայն Հայաստանի ջուրը բուժեց ինձի։ Հետո մեզի տարին Սուլեյմանիե։ Հոն տեսանք մեր Պոլսո մտավորականներուն՝ Զոհրապին, Վարուժանին և ուրիշներուն։ Անոնք դեռ յախա-քրավատով, բաստոն-շաբխայով էին հագած-կապած քայլում, խոսում էին իրար հետ։ Հետո անոնց տարին ուրիշ տեղ, չգիտեմ ինչ եղան...*

Հետո մեզի ետ բերին Բոզանթի՝ Ադանայի մոտ։ Այտեղից մեզ էշի՝ բեգիրների վրա բարձած էին։ Թուրք զինվորները մեր քովեն կերթային։ Մեկ էլ թուրք լակոտ մը տեսավ մեր էշի վրա երկու կողմը հեյբայի մեջ դրված երեք-չորս տարեկան քույրս ու եղբայրս՝ ամեն մեկը մի կողմ։ էդ լակոտը մի ափ հող գետնից վերցրեց ու շպրտեց եղբորս երեսին, եղբորս աչքերը տեղն ու տեղը կուրացան, ինքն ալ վախեն մեռավ։ Ճամփին թաղեցինք եղբորս, անցանք առաջ...

Անտեղեն եկանք Ղաթմա։ Տեսանք, որ բոլոր կողմերեն սկսել են տեղահանությունը. Ադանա՛, Մերսի՛ն։ Թուրքիայի ամե՛ն կողմերեն հայերին բերում էին արաբաներով, ոտքով, տանում էին աքսոր մինչև Ղաթմա, Հալեպ...

Ղաթմայում մենք երեք ամիս մնացինք։ Հիվանդություն, կեղտոտություն, չուլ-չափուտներ վրանխս, չադըրներուն տակը։ Ժողովուրդը սոված, ծարավ, անտեր, անտիրական, տիֆ, կոլերա... Ժողովուրդին կեսեն ավելին հիվանդություններից մեռավ, մնացածին ալ՝ կոտորեցին, ջարդեցին...

Մինչև հոն հասանք անձրևներն սկսան։ Աշնան վերջին ամիսներն էին արդեն։ Ժողովրդի մի մասին, մեզ ալ հետը, լցրին գնացքները, տարին Ռաս էլ Այն, իսկ մնացածին՝ Դեր Զոր...

Ռաս էլ Այնում քուրջ ու փալասից, ծառի ճյուղերից չադըրներ խփեցինք, մտանք տակը։ Անտեղեն Խաբուր գետը կանցներ։ Բլուր մը կար, գաղթականներուն բլուրի վրա տեղավորել էին. չորս կողմը զաբիթները շրջապատել էին։ Հսկիչները չեչեններ* էին, անոնք ըմբոստ ժողովուրդ էին, կողոպտել կսիրեին։ Թուրք կառավարությունը բանտերեն ազատել էր էդ ավազակներին, որ մեզ կողոպտեն ու կոտորեն...

Մինչև աքսորը հորեղբայրս, որ պատշար էր, ադ չեչեններուն համար տուներ կշիներ։ Ամեն տարի հոն կերթար, կաշխատեր, անոնք ալ կուգային մեր տունը կիջնեին, կուտեին, կխմեին, կքնեին...։ Բլուրին վրա եղած ժամանակնիս, հորեղբայրս կտեսնա, որ հսկիչներեն մեկն իր ծանոթ չեչեն Հասան Իբրահիմն է Զարդախ գյուղեն։ Հորեղբայրս կսկսի խոսել իրեն ծանոթ չեչենի հետ։

Անտեղ՝ Ռաս էլ Այնում, ուտելիք չկար, բան չկար, միայն սուս անունով խոտ մը կար. կուտեինք, արմատները կվառեինք։

Օր մը երեք հոգով գնացինք փայտ կտրելու։ Փայտերը շալկած գալիս էինք, երկու արաբ դեմներս էլան, թոփուզները ձեռքերնին՝ ծայրը երկաթ։ Ըսին.— Հայդե՛, ըշլա՛ (դե՛, հանվե՛ք)։

Մենք վախից հանվեցինք, վարտիքով մնացինք։ Մեր մեջից մեկը՝ փեսանիս, ընդդիմացավ։ Խփեցին, թևը կոտրեցին։ Եկանք մերոնց մոտ տկլոր, փայտերը շալկած, վախցած...

Խաբուր գետի եզերքը օրական փոս մը կլըցվեր, հիվանդները, մեռելները, ամենքին իրար վրա կլցնեին, գիշերները շախկալները կուգային, կհոշոտեին, կուտեին...

Չադըրներուն մեջ էինք։ Մեկ էլ եկան ըսին.— Ասքա՛ նը (ձեռքով ցույց տվին մոտ 300—400 չադըր) պիտի տանինք,— արդեն մենք բոլորս 25 000 չադըր էինք՝ Պոլսեն, Թուրքիայի, բոլո՛ր կողմերեն բերել են Ռաս էլ Այն...

Մեր ծանոթ Հասան Իբրահիմ դենգեն եկավ, թե՝ պիտի մի մասին տանին։ Գետինը գիծ քաշեցին. թե՝ այդքանին պիտի տանինք Մուսուլ։

Առաջին օրը տարին անոնց։

Երկրորդ օրը նորեն եկան։ Նորեն գիծ քաշեցին՝ մյուս մասը տարին։

Առտուն կնիկները գնացել էին խոտ հավաքելու, տեսել են ձորի մեջը հայերուն սպանում են։ Վախեցած, սարսափած ետ եկան ու պատմեցին տեսածնին, որ հերթով՝ մե՛կ-մե՛կ սպանում էին, դիակները իրար վրա խաչի ձևով շարում էին։ Նոր իմացանք, որ մաս-մաս տանում են ո՛չ թե Մուսուլ, այլ՝ ձորին մեջը ջարդելու... Էդպես մաս-մաս տանում էին։ Հենց որ հերթը մեզ հասավ, մեր ծանոթ Հասան Իբրահիմը ըսավ.— Ասոնց երեք օր հետո կտանինք, հիմա թող մնան։

Գիշերը Հասան Իբրահիմը գաղտնի եկավ մեր մոտը, ըսավ.— Պատրաստ եղեք, արաբան պիտի բերեմ։ Դուք Խաբուրի մոտ կուգաք, ձեզի իմ տունս պիտի տանիմ։

Դու մի ըսեր, իր կնիկն ալ Էրզրումից փախցրված հայ աղջիկ մըն է։

Գիշերը բերեց արաբան, մեզ իր տունը տարավ։ Կինը, ինչպես ըսի, Էրզրումի ջարդի ժամանակ փախցուցեր էր. հազիվ տասնվեց տարեկան էր Տիգրանուհին, ինքը՝ հիսուն տարեկան մարդ մըն էր։ Տիգրանուհին պատմում էր, թե ինչպես իրենց բերեցին՝ Էրզրումից, Մուշից, Դիարբեքիրից անցան, ինչե՛ր տեսան։ Կպատմեր աղջիկը, սիրտդ կտոր-կտոր կըլլար։ Կուլա՛ր, կուլա՛ր...

Հասան Իբրահիմը մեզ ըսավ.— Տուն մը շինել սկսեք ինձի համար։ Մենք չորս տղամարդ, մի քանի կին։ Մայրս հոն մեռավ։ Մենք մնացինք։ Կտոր մը հաց կուտար, կաշխատացներ մեզի։ Սկսանք տունը շինել։ Հասան Իբրահիմը երկու եղբայր ուներ։ Ղայմաղամի տունն ալ քովն

* Նկատի ունի չերքեզներին։

էր։ Ղայմաղամը ըսավ.— Գյուղին մեջ ինչքան հայ կա պիտի տանինք։

Հասան Իբրահիմը ըսավ.— Տունս պիտի շինեն, թող շինեն վերջացնեն, հետո կտանինք, մենք չե՞նք սպանողը։

Աղոնց համար մեծ տուն մը շինեցինք բակին մեջը։ Կողքը մերդինցի արաբ մը կար, ան ալ ուզեց, որ տուն շինենք։ Գնացինք, անոր տունն ալ շինեցինք։ Մի կտոր հաց էլ ան կուտար...։ Անտեղ մոտերը բեդվիններ կապրեին։ Ինձի կղըրկեին բեդվիններուն քովը կաթ կբերեի գյուղյումով։ էշին երկու կողմերը հեյբեյի մեջ գյուգյումները դնում էի, բերում էի...

Օր մըն ալ գնացի, հաճընցի մարդ ու կնիկ մը կային, էդ բեդվինի տանը կաշխատեին, բերին կաթը տվին։ Մինչև տուն հասա, մութը ընկել էր։ Տեսա, որ մերիններուն տարել են։ Ի՞նչ ընեմ։ Բարձս առի ետ գնացի, աղ հաճընցի մարդ ու կնկա մոտ, որոնք արաբ պաշտոնյայի տանն էին ապրում։ Անոնք ինձ պահեցին, չնայած, որ իրենք ալ պահպտած էին ապրում։ Քանի որ Թալիաթեն հրաման էր եկել. «Մեկ մետր բոյ ունեցող հային՝ սպանեցե՛ք»։ Աղ հաճընցիները ինձի ալ առին, պահեցին։ Իրիկունը պառկում էինք գետինը։ Հորեղբորս կնիկը իմ լավ շորերս՝ զեյթունի ղուբլու, զուբուն, աբա թավիշից, մետաքսից, թանկանոց հագուստներս բարձիս մեջն էր լցրել, որ չգտնեն, բայց էդ տան արաբ պաշտոնյան ձեռքես առավ, ինձ ալ վռնդեց իր տունեն, ըսավ.— Գործ չկա, գնա՛։

Ես տխուր-տրտում, գլուխս կախ, մեն մենակ դուրս էկա, գնացի։ Մի օր մենակս, հոգնած, խաբուրի եզերքը կովի աղբ եմ հավաքում, որ տանեմ, վառեմ։ Մեն-մենակ նստած եմ՝ ոտքս ջուրին մեջ կախած։ Մեկ էլ տեսա հեռուեն ձիու վրա նստած մի չեչեն է գալիս։ Ուզեցի փախչել, մտածեցի՝ ի՞նչ փախչեմ, ի՞նչ կուզե ըլլա։ Մոտեցավ։ Մեկ էլ տեսնամ հորս ծանոթ Հասան Իբրահիմն է։ էկավ ճանչցավ ինձի. — Օղլա՞ն, ի՞նչ կընես հոս։

— Ի՞նչ պիտի ընեմ։ Մերինները տարին։ Ես մենակ եմ։

— Կո՞ւզաս մոտս։

— Կուզա՛մ։

— Վաղը առտու կանուխեն եկուր հոս՝ քեզ տանիմ։— Հասան Իբրահիմը ձիով եկավ, ինձի տարավ իր յայլան։ Իր հայ կնիկը ինձի հաց տվավ, ըսավ.— Գնա՛ ջուր բեր։

Գնացի ջրի։ Եկա տուն, տեսա երկու-երեք ժանդարմա եկան։ Ես վախեցա, թաքնվեցի։ Լսում եմ «Յուսո՛ւֆ, Յուսո՛ւֆ» կըսեն, կպոռան ես մեջտեղ չեմ ելնում։

Երբ ժանդարմները գնացին, ես մեջտեղ ելա։ Տերս ըսավ,— ինչո՞ւ չեկար։

— Վախեցա՛։

— Հե՛չ չվախնաս։

Ինձի չեչենի հագուստ հագցուց, քովես ղամա մը կապեց, իսկական չեչեն դարձա։

Ըսավ.— Ով որ հարցնէ, ըսե՝ Հասանին տղան եմ. ես աս գյուղին մխդարն եմ, չվախնա՛ս։

Մնացի էդ գյուղը։ Ջին ջրի էի տանում, կովերը պահում, ծառայություն անում...։ Բոլոր հայերին տարին, ես մնացի։ Հարյուր ընտանիքի չափ հայեր տուն շինեցին, բայց անոնց ալ տարին։ Տուները մնացին թուրքերուն։ Հայ չմնաց գյուղում։ Մի քանի հայ տղա էին մնացել չեչեններուն մոտը, անոնք ալ ծպտված, թուրքի անունի տակ՝ ինձի պես...

Մի օր գարնան չեչենները մեր տունը հավաքվեցին։ Ռաս էլ Այնից այն կողմ Սաֆա անունով գյուղ մը կար, էնտեղի չեչեններն ալ եկել էին, մեր տանը նստած իրենց զենքերն էին սրում ու իրար ասում.— Պիտի էրթանք Դեր Զոր՝ հայերուն ջարդելո՛ւ։

էդ գարնանն էր։ Մնացի՝ մինչև աշուն։

էդ նույն չեչենները աշնանը եկան բեռնված ապրանքներով. է՛լ Պոլսի կողմեն, է՛լ Կոնիայի կողմեն, երկրի ամե՛ն կողմերեն բերված հայերուն հարստությո՛ւնը, հագուստնե՛րը, զարդե՛րը, ոսկինե՛րը, փողե՛րը՝ լիքը, ի՛նչ ուզես, ի՛նչ միտքդ կանցնի։ Ի՛նչ ապրանք էր։ Ես տեսնում էի աչքիս պոչով, որ ամա՛նով էին չափում ոսկի դրամը, բաժանում էին, այնքան որ շա՛տ էր։ Չէ՞ որ իմ աղան չեչեններուն պետն էր, իրարու մեջ բաժանեցին, գնացին...

Մի օր չեչեն տերս Սաֆա գյուղը գնաց, եկավ ըսավ.— Գիտե՞ս, Յո՛ւսուֆ, հորդ, մորդ տեսա։ Ա՛ռ, քեզ նամակ են գրել։

Նամակը ցույց տվավ, եղբորս գիրն էր։ Գրած էր, որ Սաֆա գյուղում են։ Իրենց տեղն իմացա։

Չեչենները հայ աղջիկներին Ռաս էլ Այնից փախցրել, տարել էին Սաֆա, հարսանիք պիտի անեին։ Մի արաբա թալանված ապրանք կար, պետք էր տանել Սաֆա։

Տերս ըսավ.— Յուսո՛ւֆ, դու իմ տեղս Սաֆա հարսանիքի կերթա՞ս։

Արաբան առի, գնացի։ Քիչ մը մնացի հարսանիքի տունը, փախա գնացի ծնողքիս քովը։ Գյուղեն դուրս տուն շինել էին։ Գնացի, գտա։ Տերս ինձ մանրամասն բացատրել էր։ Գնացի, դռան առաջ շուն կար կապած, ուզում եմ մըտնել, չեմ կարողանում։ Սպասեցի, որ մեկը գա, անցնի, ինձ ներս տանի։ Ով որ գալիս էր, ինձ չեչենի շորերով տեսնում էր, կարծում էր չեչեն եմ։ Մեկ էլ մարդ մը եկավ, մոտեցավ, տես-

նամ հայրս է, դեմքը հիշեցի։ Պոռացի։ Մոտս եկավ, փաթաթվեց, համբուրվեց, տարավ տուն...

Մերոնք պատմեցին, որ իրենց Ռաս էլ Այնից բերել են Սաֆա գյուղը։ Ճանապարհին գիշերով կողոպտել են ամեն ունեցածներին՝ մորս զարդերը, ոսկեղենները, գլխի արծաթ գլխանոցը, քեմերը...։ Բայց թալանողները երեք հոգի են եղել, չեն կարողացել թալանը կիսել, կռվել են իրար հետ։ Մերոնք առիթից օգուտ են քաղել, փախել են, մի տուն են տեսել, մտել են մեջը՝ տկլո՛ր, թրջվա՛ծ, կողոպտվա՛ծ։ Կմտնան բակը, կմտնան հարդանոցը, կկծկվին իրարու։ Տանը շուն կար, բայց չի հաչել։ Աղ տունը մուդիրինն է լինում։ Մուդիրի կնիկը կուգա կտեսնա հարդանոցի բերանը մարդիկ կան նստած։ Կերթա ամուսնուն կըսե։ Մուդիրը կուգա, կտեսնա մերոնց։ Հորեղբայրս կպատմե մուդիրին իրենց գլուխին եկածը, որ մարդ չտեսավ իրենց, իրենք փախան, շունը չհաչեց։ Չեչեն մուդիրը կըսե.— Ուրեմն, սա ալլահի հրաշքն է, որ շունը չի հաչել, այքան մարդիկ ներս են մտել բակը։

Էդենցով մերոնք հոն կմնան։ Արդեն արհեստավոր էին, կսկսին գործ ընել։— Ուստա՛,— կըսե մուդիրը,— ինձի տուն մը շինե։ Հոն ալ տուն կշինեն։ Օր մըն ալ իմ տերը կերթա, մերոնց կհանդիպի հոն և կուգա ինձ կըսե։ Բայց ես ապերախտ չգտնվեցի. իմ տիրոջ մոտ վերադարձա։ Երբ նրա հայ կինը երեխա ունեցավ, ես արդեն գնացի իմ ծնողքիս մոտը...

Հետո, երբ 1918 թ. զինադադար եղավ, պատերազմը վերջացավ, հայերը արդեն ետ էին գնում իրենց տեղերը։ Մենք ալ Սաֆայեն եկանք կայարան։ Հոն մնացինք երկու-երեք օր, հետո Մուսուլի կողմեն շոգեկառքն էկավ։ Թուրք զինվորները լցված էին գնացքի մեջն ու վրան։ Արդեն նրանք փախչում էին։ Գնացքի մեջ տե՛ղ չկար, մենք ալ նստանք ու եկանք։

Ծարաբլուսում կամուրջ մը կար, վառելիք չկար, որ գնացքը գնա։ Իջանք խոտ-մոտ, ճյուղեր հավաքեցինք, որ վառելիք ըլլա՝ գնացքը շարժվի։ Գնացինք, Ծարաբլուս իջանք։ Անգլիացիները արդեն Սուրիան գրավել էին։ Թուրք զինվորները փախչում էին։ Մենք էկանք Հալեպ։ Թուրքական զորանոց մը կար Հալեպի մեջ, հոն լըցրել էին հայերին։ Մնացինք հոն։ Այնտեղեն ալ իբր Զեյթուն պիտի երթանք։ Արաբա վարձեցինք։ Ճանապարհին, Այնթապի մոտ, թուրք ղաչաղները կողոպտեցին մեզի, մեր արաբայի ձին ալ տարին։ Հետո ուրիշ ձի մը առինք։ Գնացինք Մարաշ։ Մարաշում մնացինք Քառասուն Մանկանց եկեղեցում և դպրոցում, որտեղ լցված էին ամենտեղացի հայեր՝ ֆրնուզցի, ֆրնդըջագցի, զեյթունցի, մարաշցի...։ (Հետո աղ եկեղեցին, ուր լիքը հայ կար, կրակի տվին)[1]։ Փախանք։ Մենք ողջ մնացինք, բայց հայրս մեռավ։ Արդեն մայրս ալ Ռաս էլ Այնում էր մեռել...

Անտեղեն էլանք Զեյթունի ճամփան բռնեցինք։ Բոլորս հիվա՜նդ, վրանիս հա՛լ չիկա։ Եղբայրս ճանապարհին՝ Ղաթմայում մեռավ։ Հորեղբորս կինը ծանր հիվանդ հետերնիս տանում էինք։ Գնացինք Զեյթուն։

Հաջորդ օրը Զեյթուն հասանք, ի՞նչ տեսնանք։ Զեյթունը այրել, մոխիր են դարձուցեր, որ զեյթունցիները այլևս չգան, չմտնեն։ Լավ է, մեր տունը քաղաքի եզրին էր, կրակը այնքան չէր հասել։ Բայց մեջը թուրք մարդ էր նստել։ Աղ մարդն էլ կապի պաշտոնյան էր։ Սպասեցինք. Մարդը եկավ, տեսավ մեր վիճակը։ Լավ է մարդը մեր տունը թողեց մեզի։ Հայերի մեծ մասը, որ առանց տունի մնացին, մտան զորանոցում ապրեցին։ Էդ զորանոցը հին ժամանակ թուրքերից էինք գրավել։

Մնացինք բավական ժամանակ. 1918—1920 թիվը հոն մնացինք։ Հետո թուրքերը սկսան նորեն նեղել մեզի։ Մենք մեր տունը թողինք, գնացինք զորանոցը մնացինք, որ բոլորս իրար հետ ըլլանք, եթե թուրքը հարձակվի մեր վրա։ Հայերու վիճակը գնալով վատացավ։ Շատ նեղություն քաշեցինք։ Երբ մենակ մարդ կտեսնեին՝ կսպաննեին։ Մենք ալ երեք-չորս հոգիով զինված կերթայինք՝ մի բան, օրինակ՝ աղ բերելու։ Մենք միշտ իմանում էինք, որ թուրքը օր մը չէ օր մը պիտի մեր վրա գա նորեն։ Անոր համար մենք գլուխ քորելու ժամանակ չունեինք, բարութ, ղուրշուն կշինեինք, պաշար կհավաքեինք։ 1921 թ. Քեմալ Աթաթուրքը հրաման տվավ. «Հայերը թող հանձնվե՛ն»։ Մտածում ենք՝ ի՞նչ ընենք. շատ հայերու սպանել են արդեն։ Ոմանք ըսին.— Ո՞նց հանձնվենք։ Մենք նոր ենք ազատվել թուրքի ձեռքեն, հիմա թո՞ւրքին հանձնվինք։

Ես եղբորս ըսի.— Դու ամուսնացած ես, քո կնկանն ա՛ռ, գնա՛, հանձնվի՛ր, ես՝ պիտի կռվիմ։ Բոլոր զեյթունցիներս 1200 հոգի էինք։ 600—700-ը՝ ծեր, կնիկ, աղջիկ, երեխա, հանձնըվեցին, գերի ընկան։ Մարաշցի մի հայ և մի անգլիացի միսիոներ, որբանոցի տնօրեն միստր Լայմենը եկավ, ըսավ.— Ով հանձնվի՝ ապահովություն պիտի ունենա ողջ մնալու։

Հանձնվողներուն տարին։ Բայց անոնց, որոնց տղամարդիկը դիմադրող, ղաչաղ էին դարձել, տարին որ ջարդեն, իսկ մնացածին քշեցին դեպի հեռուները։

---

1 Այդ մասին տե՛ս մարաշցի Եվգինե Մայիկյանի (ծնվ. 1898 թ.) պատմած հուշ. III. 23(239)։

*Զեյթունի ս. Աստվածածնի վանքում մարզանք էին անում 80-ի չափ երիտասարդներ։ Արամ բեկ Չոլակյանն ալ անոնց մեջն էր, երբ թուրքերը էկան շրջապատեցին վանքը։ Մեր տղաները, Արամ բեկի ղեկավարությամբ, պաշտպանվելու ելան։ Թուրքերը սկսան կրակել։ Հետո թնդանոթով սկսան կրակել։ Մեր վանքի տղաներն ալ կրակով պատասխանեցին։ Անոնք հույս ունեին, որ Զեյթունում եղած ջահելները դուրսեն կօգնեն իրենց, և Արամ բեկը պատրաստվում էր իր քաջերով հարձակվել թշնամու վրա։ Բայց գիշերը մունետիկները լամպերով էլան Զեյթունի թաղերը, լուր տվին բոլորին, որ Սահակ Խաբայան կաթողիկոսեն լուր էկած է. «Չըլլի՛, որ զեյթունցիները կռվին թուրքերու դեմ, չըլլա՛ որ բնակիչները օգնության էրթան վանքի ջահելներուն, թե չէ՝ մե՜ծ կռիվ կըլլա»։ Այնպես, որ վանքի տղաները օգնություն չստացան, չնայած Զեյթունի ժողովուրդը պատրաստ էր գնալ վանքի տղաներուն օգնելու։ Ամմա գիշերով, որ լամպերով պտտեցան, ըսին կաթողիկոսին հրամանն է՝ չկռվի՛լ, ժողովուրդն ալ անոնց լսեց. տուներնին քաշվեց...*

*Թուրքերը սկսան կրակել։ Մենք 450—500 հոգի դարձանք։ Սկսանք դիմադրել թուրք կառավարության կանոնավոր զորքին։ Երեք-չորս օր կռվեցինք։ Թուրքերը մեր կորանոցը պաշարեցին, սկսան վանքը գերմանական թնդանոթներով ռմբակոծել։ Վանքը կրակի տվին։ Ջուրը, որ վանքի մոտեն կուգար՝ կտրեցին։ Ես տասնյոթ տարեկան էի։ Մեր զենքը պակասում էր։ Զորանոցի ետևի կողմի լուսամուտներեն դուրս թռանք գիշերով։ Առավոտյան դեմ տեսանք, որ ամբողջ տարածքով մեզի պաշարած են։ Ճամփա չկա։ Մի կերպ կռվելով մեզ ճամփա բացինք, դուրս էլանք պաշարումեն։ Ամեն մեկս իրար կորցրեցինք։ Ճամփին, Զեյթունի դեմին մոտ երկու-երեք թուրքեր դեմս ելան։ Բաշիբոզուկներ էին. ասեցին.— Թո՛ւթ գյավուրը (Բռնի՛ր գյավուրին)։ Զեյթունցի մի քանի տղաներ ետևեն էին գալիս. խփեցի նրանց...*

*Զեյթունից բավական հեռու Աբակոլ գյուղը կար։ Անտեղ մեզանից ոմանք՝ բռնվեցին, ոմանք՝ սպանվեցին։ Մնացածներս գյուղի լեռներում կըմնայինք...*

*Հանձնվողներուն Զեյթունի զորանոցը լցրել էին։ Ով որ մնացել էր՝ ծեր, կին, աղջիկ, թուրքերը բոլորին սպա՜նել էին, երեխաներին ողջ-ողջ վա՜ռել էին...։ Զորանոցը կրա՜կի էին տվել։ Մենք լեռներից անոնց ձայնը կլսեինք, կփշաքաղվեինք։*

*Մեր պահակները թուրք փախստական զինվորներ էին բռնել՝ պիտի սպանեին, տվին մեր Նազարեթին, որ ինքը սպանի, քանի որ նրա բոլոր հարազատներին թուրքերը սպանել էին։*

*— Ըսինք.— Նազարե՜թ, ա՛ռ, սպանի՛ր, որ վրեժդ լուծես։*

*Գնացինք Ջահան գետի մոտ։ Դա սահմանն էր, եթե անցեինք՝ Ադանայի կողմը արդեն ֆրանսիացիներն էին, բայց թուրք զինվորները եկան, հասան մեզի, հետապնդեցին մեզ՝ Ֆռնուզից մինչև Անդըրըն։ Անդըրընում գետը պիտի անցնեինք, տեսանք թուրքերը նորեն պաշարել են մեզ.— Ո՞վ եք դուք,— հարցրինք։*

*Ըսին.— Մենք հետապնդում ենք զեյթունցիներին։ Մերոնցից ոմանք գետը նետվեցան. մոտ հիսուն հոգի գետի մեջ սպանեցին։ Կնոջս հորեղբոր տղոցը հոն սպանեցին...*

*Լուսացավ։ Իրար կորցրեցինք։ Ես ընկա անտառներուն մեջը, փուշերուն մեջը։ Հազիվ մի կերպ դուրս եկա, գնացի մեր զեյթունցիների խմբին միացա։ Արդեն Արամ Չոլակյանի խումբը երեսուն հոգի էր մնացել։ Թուրքերը պաշարել էին մեզ։ Հույս չկա գետը անցնելու։ Ճամփա չկա առաջ գնալու՝ լեռնե՜ր են։ Անդըրընում կռվելուց հետո, իրիկունը որոշեցինք ետ դառնալ։ Ուզում ենք լեռը անցնիլ։ Մեկ էլ դիմից թուրքերը կրակ բացեցին։ Մինչև լույս կռվեցինք։ Անտեղ ալ երեք-չորս հոգի ընկավ։*

*Մենք էլի գնում ենք ետ՝ դեպի Զեյթունի կողմը։ Մեզ շրջապատել են։ Եթե Ադանայի կողմը անցնինք, հոն ֆրանսիացին է՝ կփրկվինք, բայց չե՜նք կարողանում...*

*Մեկ էլ մեր պահակը էկավ, ըսավ, որ հեռվում նախիր մը կա։ Թուրքերը եկան, մոտեցան։ Մենք նորեն փախանք։ Քսան-քսանհինգ հոգի ենք, հետերնիս կի՜ն կա, երեխա՜ կա։ Մնացած ենք Տավրոսի, Ամանոսի անանցանելի լեռներուն մեջը։ Թուրքերը շուներով հետևում են մեզի։ Քարայրներու մեջ, ձյուներու մեջ օրերը կանցնենք՝ անո՜թի, ծարա՜վ։ Մութը ընկել է։ Տեսանք ոսպի պես բան մը բուսել է, չիմացանք ինչ է՝ կերանք. անո՜թի ենք...*

*Լուսացավ։ Իբր թե Զեյթուն՝ Ֆռնուզ, պիտի էրթանք։ Տեսանք թուրքերը մեզ շարունակում են հետևել։ Հասան, եկան ետևնես։ Մեզ լեռի վրա ենք՝ Ֆռնուզի կողմերը։ Բարձր ժայռերը բարձրացանք։ Երկու-երեք կին ինքզինքնին լեռնեն վար նետեցին, որ թուրքերուն ձեռքը չընկնին։ Թուրքերը եկան ետևնես։ Դիրք բռնեցինք։ Բաշիբոզուկ թուրքերը սկսան կրակել։*

*Արամ բեկը հրամայեց.— Ցրվեցե՛ք, գոնե առանձի՜ն տեղերեն կրակեք, որ թշնամին կարծե թե շատվո՞ր ենք։ Ան փամփուշտը, տասնոց հրացանը և սուրը ձեռքը վերցուց, առաջ ընկավ։ Մի հատ ալ փամփուշտ բերանը դրավ, որ*

պատրաստ ըլլա։ Ինքը փորձառու մարդ էր. Գյավուր դաղում երեք-չորս տարի կռվել էր թուրքերու դեմ։ Իր եղբայրը սպանվել էր, ինքը կենդանի էր մնացել, շա՜տ հերոս էր։ Անոր քաջությունները շա՜տ են...

Կռվեցինք մինչև գիշեր։ Նորաշխարհյանը ըսավ.— գնացե՛ք Արամ բեկի մոտ,— մենք երկու տղա գնացինք։ Թուրքերը սեղմում են։ Գնդակները վզզա՜լեն ժայռերուն են կպնում։ Ճակատագիրը ինձ փրկեց. ճիշտ գլխուս վրայեն անցավ։ Ընկերս խփվեց։ Անոր արյունները իմ վրաս վազեցին։ Արդեն անոր հայրն ալ մեռած էր։ Ես գնացի, հասա Արամ բեկի մոտ։ Կուզենք փախչիլ։ Բոլոր կողմերից պաշարել են։ Միայն տեղ մը կա, որ բաց է, ան ալ ժայռ է, կա՛մ պիտի վար նետվինք, կա՛մ պիտի մեռնինք։ Գիշեր է։ Բա՞ն չի՛ երևում։ Մեզմե մեկը ըսավ.— Ես նետվիմ, եթե չմեռնիմ, ձայն կուտամ. դուք ալ կնետվիք։

Նետվեցավ։ Բայց ո՞ւր, չե՛նք տեսնում։ Մո՛ւթ է։

Ձայն տվավ.— Եկե՛ք, ո՛ղջ եմ։

Մենք ալ հետևեն նետվեցանք, բայց մոտիկում թուրքերու ձայներ են լսվում։ Դու մի ասա՝ մոտ են։ Ներքևը՝ թուրք, վերևը՝ թուրք։ Մենք չոքեչոք գնացինք, զինվորներու պաշարումեն անցանք Ֆրռնուզ, որը Զեյթունի մոտ գյուղաքաղաք է։ Մարդ չկա հոն, ամայացել է։ Մեկ-երկու օր մնացինք։ Լեռներեն պտուղ, խոտ կերանք, կազդուրվեցինք։ Ուզում ենք գնալ գոնե մեր Զեյթունը։ Հոնտեղի լեռների ճամփաները գիտենք, ջուրը-մուրը։ Եկանք՝ ոտքի հետքեր տեսանք։ Դու մի ըսեր մեզմե առաջ 100—150 զեյթունցիներ անցեր են, ուզում են գնալ Զեյթուն։ Մենք ալ գնացինք հետքերով։ Գտանք էդ խմբին։ Միացանք դարձանք 300-ի չափ մարդ։ Հետո ես վիրավորվեցի աչքիցս, ու ոտքս ալ ղուրշունի կտոր մտավ։ Ինձի պես երեք-չորս տղա կար՝ տասնհինգ-տասնվեց տարեկան, կիներ ալ կային հետերնիս։ Արամ բեկը ըսավ.— Ֆրռնուզի կողմը դնանք։ Մի թուրքի գյուղ մտնենք, ուտելիք-բան ճարենք։

Մի քանի հոգի մեզ թողին, իրենք գնացին դեպի Անդըրընի կողմերը։ Եզներ են գտել, քշել են գյուղից դուրս, ղավուրմա են ըրել. մեզ բերեցին, որ ուտենք։

Օր մըն ալ թուրքի քարավան մըն էր անցնում, մեր երիտասարդները կտրեցին առաջը, տեսնանք ի՞նչ. արկղով փամփուշտ։ Ուրախացանք։ Մեր փամփուշտը վերջանալու վրա էր։ Բայց ի՞նչ փամփուշտ. ռուսական փամփուշտ։ Ուրեմն արդեն խորհրդային դարձած ռուսական կառավարությունը տվել է թուրքին, որ մեզ՝ հայերուս սպանեն։ Մենք լցրինք մեր գրպանները, հեյբեներուն մեջ, շալակեցինք, տարինք, որ կռվելու ժամանակ պետք պիտի գա, բայց, ափսո՜ս, մեր մոսինները ռուսական չէին։ Մերը կա՛մ գերմանական էր, կա՛մ հունական։ Այնպես որ ռուսական փամփուշտները ծանր-ծանր կռնակնիս շալակած ամիսներով քարշ եկանք, որ եթե ռուսական մոսին հանդիպի, գրավենք և ունեցած փամփուշտով կռվենք։ Էդ՝ քարավանի մեջ մի տոպրակ աղ կար։ Աղ մեզի փրկեց։ Առանց աղ մարդը կմեռնի։ Խոտը աղով կուտեինք, ուժ առինք։ Ապրեցինք մի կերպ։

Մի օր խումբը կորսնցուցինք. ցերեկով՝ թաքնըվում էինք, գիշերով՝ արածում։ Մի ընկեր ունեինք չենգեն վիրավորված էր։ Գնդակը մտել էր դուրս էր եկել, միսը կախվել էր, վերքը թարախակալվել։ Ես լվանում էի, վրան խոտ դնում, թաշկինակով կապում։ Հետո երբ Հալեպ եկանք դոկտոր Ալթունյանի հիվանդանոցը տարինք, դոկտորը զարմացած հարցուց.— ինչո՞վ բուժեցիք։

— Խոտո՛վ,— ըսի։

Հետո ադ մարդը ամուսնացավ, Ամերիկա գնաց։

Մեր խումբը ցրվել էր։ Էդ չենգեն վիրավոր տղայի հետ թուխ կհավաքեի, որ փափուկ-փափուկ կերցնեմ իրեն։ Արդեն իմ մեկ աչքս ալ վիրավոր էր՝ կապված։ Մեր խումբին կորցրինք։ Մաղարա մը տեսանք։ Մտանք, որ հանգստանանք, տեսանք մերոնք հոն են, գտանք իրար, ուրախացանք...

Մի օր հավաքվել էինք աղբյուրի գլուխը և կսպասեինք, որ մեր տասը հոգիի չափ տղաները գան, մեզի հասնին։ Արամ բեկը տեսավ, որ ուշացան, հեռադիտակը վերցուց, ոտքի ելավ, որ հեռուն նայի, տեսնի՝ ո՞ւր մնացին։ Մեկ էլ թուրքերու ձայներ լսեցինք.— Հե՜յ, Արամ բեյ, թեսլի՛մ օլ (հանձնվի՛ր)։ Ո՞ւր է Արամ բեկը։ Երեկ անոր մայրը, քույրը և կինը սպանեցինք, հիմա ալ իր գլուխը կփնտրենք,— ու սկսան հեռուեն կրակ բացել մեր վրա։

Արամ բեկ Չոլակյանը Անդրանիկի պես քաջ ու խելացի մարդ մըն էր։ Ան և՛ բարի էր, և՛ ազնիվ։ Երբ Արամ բեկը տեսավ, որ թուրքերը մեր դեմը կտրեր են, ըսավ.— Ամեն մարդ իրարմե հեռու-հեռու դիրք բռնեք, թող կարծեն, որ մենք շատվո՜ր ենք,— ինքը վերցրեց իր տասնոց հրացանը, որի մեջ տասը գնդակ կառներ, սկսավ կրակել։ Անո՛նք կկրակեն, մե՛նք կկրակենք։ Ու Արամ բեկը մեզ սիրտ էր տալիս.— Ղաչաղը չպե՛տք է հուսահատվի. նա պետք է մինչև վերջի՛ն շունչը կռվի...,— ան հեռադիտակով նայած ատենը, գլուխը դիրքեն դուրս հանած կըլլա, մեկ ալ ետևեն թաքուն կխփեն...։ Սկզբում մեզ չհայտնեցին, անոր մարմինը խոտերուն մեջը պահել էին, որ թուրքերուն ձեռքը չանցնի, հետո անոր

*փեսան եկավ մեզի լուր տվավ, ըսավ, որ ոչ ոք իր դիրքեն չշարժվի, իրիկունը կհավաքվինք...։ Ես մեջերնին ամենեն փոքրն էի։ Ես տեսա Արամ բեկը զենքը ձեռքին էր մեռել...։ Արամ բեկին հողին հանձնեցինք։ Բոլորս լուռ ենք, որբացած, այլևս չկա նա, մեր առաջնորդը...։ Անոր հորեղբոր տղան ըսավ.— Տղանե՛ր, մենք մեզի պիտի հավաքենք...*

*Զգացինք, որ ալ չիկա մեր քաջ ղեկավարը։ Հուսահատված, հուզված, ժայռերուն մեջը մնացել էի, մեկ էլ տեսնեմ մերոնք գնացել են, ես մընացել եմ, ո՛չ տեղ գիտեմ, ո՛չ մարդ։ Ո՞ւր գնամ, մտածեցի, ի՞նչ ընեմ։ Տեսա հեռվում կանաչ գիծ մը կերթա. ջուր էր։ «Էրթամ ջուր խմեմ»,— ըսի։ Զորեքթալ սողալով մոտեցա ջրին, տեսա, որ հեռվում մեկը մոտեցավ. Ալա Մանուկենց Մանուկն էր։ Գնացի հասա մերոնց...*

*Հիմա արդեն Արամ բեկը չկա. Սիմոնյան Հովհաննեսն է անոր տեղը։ Նա էլ Գյավուր դաղում կռվել էր ժամանակին, ըսավ.— Տղանե՛ր, Գյավուր դաղում ես քուրդ ծանոթ ունեմ, գնա՛նք։*

*Ձմե՛ռ է։ Ցո՛ւրտ։ Ուզում ենք սահմանն անցնել։ Ուր գնում ենք, թուրքերը մեզ շրջապատած, հետապնդում են։ Էդպես կռվելով-կռվելով Գյավուր դաղի մոտերքը հասանք։ Ուզում ենք ետ դառնալ՝ ճար չկա։ Մեզնից մի քանի հոգի խըփվեցին՝ մեռան։ Մենք հուսահատվեցինք։ Առաջ գնացինք, մտանք մի եղեգնուտ։ Երևանի չափ տեղ մը ամբո՞ղջ եղեգնուտ էր։ Անտեղ կորեկ, գիլգիլ կար բուսած. մի քիչ քաղեցինք, չանթանիս լեցուցինք։ Նազարեթ Զեյթունցյանը ըսավ՝ հոգնեցա։ Իսկապես բոլորս շա՛տ հոգնած էինք։ Մտանք եղեգնուտը՝ գոնե մի քիչ հանգչելու։ Հոն մնացինք երկու օր։ Հետո թուրքերը եկան մեզ պաշարեցին, տեսան, որ դուրս չենք գալիս, կրակի տվին։ Աստված յա՛րդըմ ընե (Աստված օգնական լինի), ոնց ատոմային ռումբ աշխարհը գիտես վառվում է՝ շա՛թըր-շա՛թըր։ Ջախկալ, աղվես, ինչ կա՝ ելան վազում են։ Մեր մեծը՝ Սիմոնյան Հովհաննեսը, ըսավ.— Փորեցե՛ք հողը, մեջը գերեզմանի պես մտե՛ք, հողը վրանիդ ծածկեցե՛ք, կրակը կուգա վրանեդ կանցնի, կերթա։*

*Մենք էդպես ալ ըրինք։ Հողը փորեցինք, կրակը եկավ մեր վրայեն անցավ, մարեցավ։ Մենք ելանք ոտքի, գլուխնիս ազատեցինք, սաղ-սալամաթ հավաքվեցինք մի տեղ։ Սիմոնյանն ըսավ.— Էստեղ մի գյուղ կա։ Էնտեղ մի քյուրդ մարդ կա Հասան բեկ անունով ան Արամ բեկին կճանչնար, գնանք ադ մարդը մեզ կօգնի երևի։*

*Գնացինք, քյուրդերը մեզի տեսան վախցան, փախան։ Մենք ամեն մեկս 4—5 ամիս ո՛չ տուն, ո՛չ անկողին, ո՛չ լվացվիլ։ Մորուքնիս եկել է, մազերս երկարել, ոջլոտվել ենք։ Վայրենիի կերպարանք առած ենք, ոտքերնիս բոբիկ, վերքերու մեջ։ Ամեն օր զուբունես կպատռեի ոտքերուս վերքերուն կփաթաթեի։ Աչքս վիրավոր, թաշկինակով կապված, թարախը կվազե՜ր։ Մինչև հիմա ալ աս աչքով չեմ տեսնար։ Մենք անոնց ըսինք.— Մենք ձեզի բան չենք ըներ, մենք Հասան բեկին ենք ուզում։ Մենք Արամ բեկի խումբն ենք, միայն մեզի ճանապարհ ցույց տվեք, մեզ առաջնորդեցեք, մենք ձեզի կվճարենք։*

*Հասանը ըսավ.— Մենք ո՞նց ճանապարհ ցույց տանք, մեր պետությունը եթե լսե, մեր արմատը կքանդե։*

*Վերջը Հասան բեյը Սիմոնյանին տեսավ, հիշեց իրենց ծանոթությունը և երկու քուրդ դրեց մեզ հետ, որպես վստահելի մարդիկ։ Տասներկու ժամ ճամփա ենք գնացել։ Էլ ո՛չ շարոխ է մնացել վրանիս, ո՛չ՝ շալվար։ Շալվարիս փեշը տակից պատռում էի, ոտքերիս կապում, կոշիկներս արդեն ծակվել էին, ոտքերս արյունոտվել, շալվարս կարճացել էր՝ ծունկես վեր։ Լեռներուն, ժայռերուն մեջեն ենք անցնում։ Մեզ գաղտնի ճամփայով են տանում, որ թուրք զինվորները չիմանան։*

*Լուսացավ։ Քյուրդերը ըսին.— Ալ մենք չենք կրնար ձեզ հետ գալ։ Մեզի տեսնան, մեզի ալ կսպաննեն։ Դուք մարդու հետ մի՛ խոսեք, գնացե՛ք...։*

*Հինգ ոսկի տվինք, երկու հատ էլ մավզեր տվինք, անոնք գնացին։ Մենք շարունակեցինք մեր ճամփան. մինչև Քիլիս պիտի երթանք։*

*Հոգնած ենք, սոված ենք, մարդու կերպարանք չունինք, մորուքնիս եկած, հագուստ չիկա վրանիս։ Քիլիսը մոտ է արդեն։ Հեռուն գյուղ մը կերևար, ջաղաց մը տեսանք, մեջեն մարդիկ դուրս եկան։ Մեկ էլ լսեցինք հայերեն կխոսին.— Ո՞վ եք։*

*Մեր խմբի մեջ մարդ ու կնիկ մը կային, առաջ անոնք գնացին։*

*— Ձեր ղեկավարը թող գա,— ըսել են։ Էդ մարդ ու կնիկը եկան ըսին.— Թող մեր ղեկավար գնա. հայեր են։*

*Սիմոնյանը տասնոցը հանեց վար դրեց, առաջ գնաց։ Դու մի ըսեր անոնք Ուրֆայի թուրքեր են, և Ուրֆայի թուրքերը հայերեն գիտեն։ Ասոնք ամենն ալ սուրերը հանեցին, Սիմոնյանին վրա հարձակվեցին, տեղն ու տեղը սպանեցին։ Մենք ետ սկսանք փախչել, մեր առջևը կտրեցին, մեզմե տասնմեկ հոգի սպանեցին։ Մի հատ ալ կնիկ կար, իրեն ժայռեն վար նետեց, որ թուրքի ձեռք չանցնի։ Ուրիշ կին մըն ալ կար, ամուսնուն խնդրեց, որ իրեն սպանի։ Ամուսինը ՝կնոջը*

խփեց, վերջն ալ ինքզինքը սպանեց։ Մի ուրիշ կին մըն ալ կար մեր մեջը, անոր ալ գերի տարին...

Ով որ ողջ մնացած էր մի կերպ բլուրի մոտ հասանք, մարդ ուղարկեցինք Քիլիս։ Քիլիսի հայերուն լուր ուղարկեցինք, որ մեզի օգնության հասնին։ Մեկ ալ հարյուր հոգու չափ զինվորներ ելան մեր դեմը։ Մենք նորեն դիրք բռնեցինք։ Անոնք մեզ պաշարեցին, մեզի մզկիթ մը լեցուցին, մեր զենքերը հավաքել ուզեցին։ Դու մի ըսեր Ֆրանսան, որ Ալժիրիան գրավել էր, ալժիրական զինվորներ էր բերել ադ տեղը, անոնք ալ մեզի բռնել էին։

Քիչ հետո ֆրանսիական ժանդարմները եկան։ Մեզի տարին ժեներալին քովը։ Ժեներալը մեզ տեսավ։ Հետո մեզի տարին Հայ Ազգային միության եկեղեցին. դպրոցը։ Անտեղ եղող հայերն ալ բոլորը աքսոր գնացել էին, ետ էին եկել։ Մեզ տեղավորեցին, հանվեցրին, լոգցրին, մազերնիս, մորուքնիս կտրեցին։ Քանի որ մարդու նման չէինք՝ վիրավո՞ր, հիվա՞նդ։ Մեր շորերը վառեցին, նոր շորեր հագցուցին։ Լուր տվին Հալեպ, բոլոր աշխարհին, որ 130 զեյթունցի եկան, հ... սան։ Քիլիսի հնչակյան կազմակերպության ղ... կավարն էր Կարանֆիլյան Վարդմեխակը։ Ե... եկավ, ամերիկացիները եկան, բաթանիե, բ... բերին, տասնհինգ օր մնացինք, մեզի ուտել... բերին։ Բայց չկրցանք ուտել, քանի որ մեջներն... չորցած էր անոթի մնալեն...։ Հիվանդներին հ... վանդանոց տարին։ Հետո ֆրանսիացիները մե... Քիլիսից Հալեպ բերին, մեզ նկարեցին, հե... մեր զենքերը առին ավանդատունը պահեցի... Արդեն 1921 թիվն էր, սեպտեմբերի 1-ը։

Հայերը ամեն տեղեն գաղթել, եկել էին Հա... լեպ, որբանոցները հազարավոր որբեր կայի... Հալեպում մերիններին գտա։ Քեռիս տուն վա... ձեց։ Մի քիչ իրենց մոտ մնացի։ Աչքս օպերացի... ըրին, ուքս ալ։ Հետո որբանոց մտա։ Երկու տա... րի որբանոցում արհեստ սորվեցա։ Հոն եղբոր... գտա։ Նայեցա, որ այդպես չըլլար, Բեյրութ գնա... ցի, ամուսնացա։ 1933 թվից Բեյրութի կոմո... նիստական կուսակցության անդամ դարձա։ Գա... ղափարի համար բանտ նետվեցա։ 1946-ին ա... ընտանիքով Հայաստան եկանք, Նոր Զեյթուն... հիմնադրեցինք...

## 2(218).
## ԶԵՅԹՈՒՆՑԻ ԹՈԶԼՅԱՆ ԿԱՐԱՊԵՏԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1903 Թ.)

Մեր գյուղը Քյուչյուկ Զեյթուն կըսեին, այսինքն՝ Փոքր Զեյթուն։ Օդը, ջուրը չտեսնվա՜ծ էր, մարդիկ՝ քաջ ու աշխատասեր։

Մենք Թոզլյան ընտանիքեն ենք։ Մեր գերդաստանը երկու հորեղբայր ունեինք, հայրս և հորեղբայրս զենք սարքող էին, որ թշնամին գա պատրաստ ըլլանք, որ թուրքի դեմ վիզ չծռենք։ Մեր տանտիկինները դիշեր ու ցերեկ ուտելիքպաշար կհավաքեին։ Քանի որ ամեն անգամ թուրքերը կուգային, մեր վրա կհարձակվեին, բայց մենք միշտ հաղթական կելլայինք։ Զեյթունը ունեցել է երկաթի հանք։ Ես հիշում եմ քարերը կհալեցնեինք հորս արհեստանոցում, կտանեինք Զեյթուն քաղաքը, երկաթագործները հրացանի լյուլե, գնդակ կպատրաստեին։

Երբ ֆեդայիները կռվում էին Ս. Աստվածածնի վանքում, հայրս գնաց օգնության։ Էնտեղ էլ խփվեց. էն ժամանակից ես որբ եմ մնացել։ Ունեցել եմ մայր, երեք քույր և եղբայր։

1915 թվին աքսոր հանեցին մեզի։ Տարին Դամասկոսի անապատները։ Ոտքով կքալե՜ինք, կքալե՜ինք, վե՜րջ չուներ։ Տիֆով հիվանդացանք։ Անոթի՜, ծարա՜վ, թանկո՜ւթյուն, ուտելիք չկա՜...

Մենք՝ մոտ տասնհինգ զեյթունցոց ընտանի... ներ, փախանք Դամասկոսի մոտերքից։ Գնացին... գնացինք չերքեզի գյուղ մը հասանք։ Գյուղու... մեզ չընդունեցին, մեզ «մուհաջիր» (գաղթական... էին ասում, այսինքն՝ թափառական։ Մենք մնա... ցինք գյուղեն դուրս,՝ բաց երկնքի տակ։ Լավ ... ժամանակը ամառ էր։ Էդ գյուղի չերքեզ բեկի գ... մը, գիշերով կաղված գել էր եկել, ուզեցել է... եզներին ուտել, եզը կոտոշով խփել էր, գայլ... կծել էր եզի պոչը, եզը կաղել էր ու ընկ... դաշտերը, գիշերը տուն չէր եկել։ Չերքեզ բեկ... մեր զեյթունցոց խնդրեց օգնել, որ եզը բռնեն բե... րեն։ Մերոնք գնացին օգնեցին, եզը տարին բե... կի տունը։

Չերքեզ բեկը ըսեր է.— Ըզս կծախեմ. առե՛ք տարե՛ք։

Մերոնք ըսերն են.— Մենք փող չունինք, ո... եզ առնենք, մենք անոթի ենք։

Բեկը ըսեր է.— Տարե՛ք, ես փող չեմ ուզու... Տարե՛ք էն ձորը մորթեք, կերեք։

Մենք բոլորս մեծ ու պզտիկ անոթի էին... օրերով խոտ կուտեինք միայն (քեմեչ կըսեին... կխաշեինք, քիչ մը աղով կուտեինք։ Աս աքսոր... մեջ միսը ո՞ւր էինք տեսել։ Գացինք եզը ձոր...

մեջ մորթեցինք, եփեցինք, կաշին ալ չարուխ ըրինք, որ հագնենք։ Միսը եփելու համար փայտ ալ չիկար, թրիքով-մրիքով հազիվ եփեցինք։ Մտածում էինք, որ կկատղինք, բայց սոված էինք. խաշեցինք ու կերանք, որ եփեցինք թույնը դուրս էր եկել և մենք չկատղեցինք։

Երկու-երեք օր հետո էդ մարդը նորեն եկավ. իր երկու եզն ու երկու կովն ալ կատղել էին։ Էդ անասուններն ալ մեզ տվավ, եփեցինք, կերանք։ Ետքը գյուղի մեջի արաբների կովերն ալ կատղան, մեզ ըսին.— Հայե՜ր, եկե՛ք մեր կատղած անասունները ձորը տարեք, մորթեք, կերեք։

Էդ կատղած կովերը ականջները, պոչերը տնկում էին ու մարդու վրա հարձակվում. ո՛ր մեկ կենդանին, որ այդ կատղածի արյունի հոտը կառներ, ինքն ալ կկատղեր և այսպես գյուղի շատ անասունները կատղան։ Արաբները տալիս էին մեզ, մենք ալ տանում էինք ձորը՝ մորթում, ուտում։ Արաբները մեզ ալյուր, բլղուր էլ էին տալիս։ Բայց մեր մեջ ալ տիֆոյի հիվանդություն ընկավ, շատերը հիվանդացան, մեռան, ինչպես մեր փեսա Նազարեթը, նրա աղջիկը՝ Նուրիցան և ուրիշներ։ Մեր աքսորությունը տևեց չորս տարի 1915-ից մինչև 1918 թիվը։ Էդ չերքեզ բեկի գյուղից մենք գիշերով փախանք, ավելի դեպի Երուսաղեմի կողմի անապատները, գնում ենք խմբով։ Ո՞ւր գնում ենք մեզ «մուհաջիր» են ասում։ Սովա՜ծ ենք, տկլո՜ր ենք, հոգնա՜ծ ենք, հիվա՜նդ ենք. մեծ, պզտիկ, ծեր, ջահել, ի՜նչ ուզես...

Ինչն էր պատճառը, որ մեզ աքսոր հանեցին ու կոտորեցին։ Պատճառը էն էր, որ Գերմանիան ու Թուրքիան 1914 թվին ախպերացել էին, դաշինք ունեին իրար հետ ու պատերազմի մեջ էին Անգլիայի ու Ֆրանսիայի դեմ։ Արդեն մեր աքսորի պատճառը իսկականին մեջ, եղավ գերմանացին։ Ան թուրք փաշաներուն ըսավ, որ մենք Նաբուլուսի դիրքում* կռվում ենք անգլիացոց ու ֆրանսիացոց դեմ։ Ես չեմ գիտեր քանի ամիս կռվան, ո՛չ մեկը չհաղթեց։ Էն ժամանակ ֆրանսական բանակին մեջ կային հազար հինգհարյուր հայ կամավորներ՝ Հայկական լեգեոն կըսեին, եկել էին ամեն կողմեն, մուսալեռցի, քեսաբցի, հուսենիկցի, ադանացի, ամեն տեղերեն ֆեդայիները գնացել էին Ֆրանսային օգնելու, քանի որ ան հայերուն խոստացել էր Կիլիկիան հայերուն տալ։ Մեր հայ ֆեդայիները ասել էին ֆրանսացի ժեներալին.— Մենք էդ Նաբլուսի դիրքը կառնենք։

Ժեներալը ըսել էր.— Դուք ո՞նց կառնեք։

Հայերը ըսել էին.— Քո գործը չէ, մենք վրեժ ունենք թուրքին դեմը, մենք կհաղթենք։

Ժեներալն ալ ըսել էր.— Եթե հաղթենք նե, ձեզի անկախություն կուտանք, ձեզի Կիլիկիան կուտանք։

Հայ կամավորներն ալ աչքերնին արյուն լըցված «Հո՜ւրա, հո՜ւրա» ըսելով կհարձակվին, կգրավեն դիրքը, կհաղթեն...

Գերմանացին ու թուրքը պոեզ կնստին, կփախին Եգիպտոսի կողմը։ Արաբներն ալ վրեժ ունեին թուրքեն, անոնք ալ ան կողմեն սկսան ջարդել թուրքին ու գերմանացիին։ Թուրք ու գերմանացին փախչելու ժամանակը արաբները անա՜նկ ջարդ մը տված են, պոեզները շուռ տված են, քանի որ անոնք ալ վրեժ ունեին, քանի որ թուրքըն ու գերմանացին գրաված էին արաբներուն երկիրը։ Թուրքը և գերմանացին Կիլիկիայեն քաշվեցան։ Կիլիկիան մնաց Ֆրանսիային ու Անգլիային։ Էղավ ազատություն։ Էն ժամանակ Արամ բեկը դեռ լեռներումն էր։ 1918 թվին էր, որ ազատություն եղավ։ Մեր լեռներում կռվող Արամ բեկի ֆեդայիները լսեցին, որ Գերմանիան ու Թուրքիան պարտվել են, ու Կիլիկիան ազատվել է։ Եկան, անցան Ջահան գետը, էկան Սուրիա, մնացել էին 28 հայ ֆեդայիներ։

Երբ ֆրանսացին ազատություն տվավ, ֆրանսացիներուն միջոցով ամերիկացի միսիոներներ էին եկել Սուրիա։ Անոնք գացին Դեր-Զորի անապատները, ինչքան որ արաբներուն քովը հայ կնիկ, հայ աղջիկ կար փախցված, որոնց տարել էին իրենց տուները, ինչքան հայ տղա կար, արաբները իրար մատնեցին, միսիոներները հավաքեցին բոլորին, ով որ չտվավ՝ տանտիրոջը բանտարկեցին։ Հավաքեցին լեցուցին Հալեպ քաղաքի որբանոցները. Որուն որ հարազատները՝ հայրը-մայրը կամ ազգականը ողջ էր մնացել, եկան գտան իրար...

Հելա աքսորի ժամանակ մեր բոլորին երկու մասի էին բաժանած, մեզի պտտցուցին Կոնիայի կողմը։ Հետո բերին Հալեպ քաղաքը։ Շատերուն Դեր Զոր, Ռաս էլ Այն տարան, շատերուն ալ Դամասկոսի, Երուսաղեմի կողմը, Հավրանի անապատները։ Մենք Դամասկոսի կողմը ինկանք։ Մեզի չջարդեցին, էդոր համար բավական հայեր ողջ մնացին, իսկ Դեր Զորի կողմը՝ բոլորին ջարդեցին։

Հելա աքսորի մեջ ենք։ Հելա Երկիր չենք գնացել... Մի բան պիտի պատմեմ, տեսած բանս պիտի պատմեմ։ Էն ժամանակ, երբ մենք Դամասկոսի կողմը աքսոր էինք, իմ մայրս, քույրերս միասին ու շատ ուրիշ հայեր դեռ աքսորն էինք։ Դահա Թալեաթ, Էնվեր, Ջեմալ փաշաները կային։ Մեծ Ջեմալ փաշային հրաման եկավ, որ գնա Դամասկոսի կողմի հայերուն ջարդի, էդ

* Նկատի ունի 1918 թ. Պաղեստինի մոտ գերմանա-թուրքական զորքերի դեմ Արարայի ճակատամարտում հայ կամավորների հաղթանակը։

իրավունքը անոր տվել էին։ Գրություն էին տվել պեշատով-մեշատով, որ գնա ջարդի հայերուն…

Էդ նամակը Մեծ Ջեմալ փաշան առել, եկել էր Դամասկոս։

Էն ժամանակ Դամասկոսի մեջ հայոց մայր եկեղեցի մը ունեինք, էնտեղ առաջնորդ ունեինք։ Ջեմալ փաշան էկել է առաջնորդարան, մեր հայոց առաջնորդին ըսել է.— Ահավասիկ նամակ ունեմ, որ հայերուն ջարդեմ պիտի…

Աքսորի ժամանակ ալ Արաբկիրի կողմերեն շատ մը հայերու կտանին Դեր Զորի կողմը՝ ջարդելու։ Ադ գաղթի ժամանակ արաբկիրցի հայ ընտանիք մը մեկ սիրուն, դունյա-գյուզելի աղջիկ մը կունենա, երկնքի վրայի արևին կըսե՝ դու մի՛ ծագիր, ես պիտի ծագիմ։ Էս Ջեմալ փաշան կտեսնա էդ դունյա-գյուզելի հայ աղջիկը, կառնե, կտանի իր հարեմը։ Անոր շատ կսիրե Ջեմալ փաշան։ Էդ հայ աղջիկը օր մը Ջեմալ փաշային կըսե.— Փաշա՛, խնդրում եմ, որ էդ հայերը անմեղ ժողովուրդ են, մի բան մտածե ջարդել մի՛ տուր անոնց. էդ ալ քու բարիքը ըլլա հայերուն…

Էն ժամանակ ես ալ Արարատանի Դամասկոսի գյուղերն էի, երբ Ջեմալ փաշան հրամանը ձեռքին եկավ, որ ջարդի հայերուն։ Էս Ջեմալ փաշան կմտածե, որ էս հայերուն անունները փոխենք, որ ես ալ հեռագիր տամ, որ էստեղ հայ չի մնացել, բոլորը կրոնափոխ են եղել, էլ հայ չի մնացել, որ ջարդեմ։

Ես էն ժամանակ տասնվեց տարեկան էի։ Ջեմալ փաշան ըսավ հայերուն.— Դուք նորեն հայ մնացեք, միայն ձեր անուններնիդ փոխեցեք, սուտ-սուտ անուններ ունեցեք, ես ալ հեռագիր պիտի տամ, որ էստեղ հայ չի մնացել. բոլորը հավատափոխ են եղել արդեն…

Կհիշեմ իմ անունս դրել էին Հուսեին, բոլոր հայերուն ալ անունները փոխել էին։ Ամեն մեկին մի սուտ-անուն դրել էին, որ փրկեն հայերուն։ Ջեմալ փաշան ըսել էր.— Ես կմեռնեմ, բայց հայերը իմ անունս ոսկե տառերով պիտի գրեն։

Այնպես, որ շատ հայեր ադ ձևով ազատվեցան ջարդեն։ Շատ հայեր ալ տիֆ ընկան մեռան՝ անոթի, ծարավ, հիվանդություններին չդիմացան, մեռան…

Էդ գաղթից հետո, երբ մեր կամավորները 1918 թվին Նաբլուսի մոտ հաղթանակեցին, ինչպես որ արդեն, երբ ազատություն եղավ, մենք ալ բոլոր ողջ մնացած գաղթականներուն հետ եկանք Հալեպ քաղաքը լցվանք։ Էկանք Հալեպ, տեղ չկա նստելու, արաբներուն քովեն հայ երեխեքին բերին որբանոց դրեցին։ Երեխեքը արաբերեն կխոսեին։ Հայ աղջիկներուն ու կնիկներուն երեսները արաբները կապույտ մելանով նախշել էին, բայց մեր հայ երիտասարդները ըսին.— Ոչի՛նչ, մենք մեր դժբախտացած հայ աղջիկներուն հետ կամուսնանանք, ի՞նչ ընենք, որ արաբները տարել, բանացրել են…

Հետո հրաման եկավ, որ ամեն մարդ կարող է իր տեղը երթալ ազատ կերպով։ Բայց մենք զեյթունցիներս հավաքվեցինք, հաշիվ ըրինք, որ 45000-ից մնացել ենք միայն 1058 ջան։ Շատ զեյթունցիներ Արարատանի Դեր Զորի կողմերը կոտորվել էին. էնոնց ջարդողներն ալ Կովկասի չերքեզներն էին։ Խաբուր գետի եզերքը երեք հատ չեչենի գյուղ կար։ Ժամանակին Նիկոլայ թագավորը աքսորել էր էդ չեչեններին։ Անոնք էին հայերին ջարդել և ոչ թե՝ արաբները։

Այնպես որ 1918 թվին մենք՝ զեյթունցիներս, ամեն գյուղեն մնացել էինք 2—3 հոգի։ Բոլորը 1058 ջան։ Հավաքվանք, ճամփա էլանք. Սուրիայեն մինչև Կիլիկիա երթալու համար պիտի անցնեինք Քիլիս քաղաքը, Այնթապ, Մարաշ. ֆրանսացիները լցվել էին ադ տեղերը մինչև Մարաշ…

Արամ բեկն արդեն լեռից իջել էր, եկել էր Հալեպ, մեր զեյթունցոցը գտել էր, մեր Հայրենակցական միության նախագահն էր։ Մեզ առաջնորդեց դեպի Զեյթուն։ Գնացինք, հասանք Զեյթուն, տեսանք մեր տները ամբո՛ղջ վառված։ Երբ մեզի աքսոր էին հանել, Սելանիկի կողմից լազեր էին բերել մեր տներում բնակեցրել, անոնք ալ մուսուլման էին, «ալլահ ու ակբա՛ր» կըսեին, կերգեին, կաղոթեին…

Արամ բեկը, որ Զեյթունի լեռներն էր փախած, կտեսնա, որ մեր տները լազերն են նստել, կմըտածե. «Էրթամ վառեմ մեր տները, անոնք ալ հետը թող վառվին»։ Մեր Զեյթունի տներն ալ լավ փայտերով էր շինված. բոլոր տները վառվել, մոխիր էին դարձել։ Միայն գյուղի եզերքը 10—15 տուն լավ էին մնացել, չէին վառված։ Առաջին օրերը ադ տուներուն մեջ մտանք, հետո կամաց-կամաց սկսանք շինել, վերանորոգել մեր ավերակ տները։ Բոստաններ ունեինք, նորեն սկսանք աշխատիլ, հողը վարել, ցանել, ո՞րը ըսեմ, ո՞րը պատմեմ, ո՞րը խոստովանիմ…

Էդ երկու տարին հանգիստ ապրեցանք, առուտուր սկսանք ընել, խաղողի ժամանակն եկավ, լավ բերք ստացանք, շամիչ ըրինք, ծախեցինք, ապրեցանք…

Ադ ժամանակ դահա Մարաշի պատերազմը չէր սկսած, Մարաշի ամենէն մեծ թուրքը՝ Հասան ղադին հայերու մեծին՝ Խրլախյան Հակոբ աղային կկանչե կըսե.— Հակո՛բ աղա, մենք պիտի ֆրանսացոց հետ կռվինք, անոնց պիտի քշենք մեր երկիրեն, դուք մի՛ խառնվիք, մենք ձեր ուտելիքը կուտանք ձեզի, դուք մի՛ խառնվիք, մենք վաթան-յոլդաշ ենք (հայրենակից ենք)։

Հակոբ աղան կըսե.— Դուք՝ թուրքերդ, հայերուն ինչե՞ր ըսես, որ չըրիք, աքսո՞ր հանեցիք, ջարդեցի՞ք, մենք չե՞նք մոռցած, մենք Ֆրանսա-



Մեծ եղեռնի նահատակների հիշատակին նվիրված հուշարձանը Երևանում (1965 թ., ճարտարապետներ՝ Ա. ԹԱՐԽԱՆՅԱՆ, Ս. ՔԱԼԱՇՅԱՆ)

ԱՐԵՒՄՏԱՀԱՅՈՑ ՏԵՂԱՀԱՆՈՒԹԵԱՆ
ՈՒՂՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ





Մարաշ տարված շղթայակապ զեյթունցի երևելիները թուրքերի հսկողության ներքո



Թուրք ոստիկանների կողմից կախաղան հանված հայեր



Գանգե՛ր, գանգե՛ր...



Հոշոտված հայերի անթաղ դիակներ



Անապաստան հայ որբեր



Տարագրության ողջ ընթացքում թուրքական բռնակալության դեմ պայքարած Ամանոսի հերոսախումբը


ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆԻ
ՔԱՐՏԷՍ
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Տարագրութեան կարաւաններու գլխաւոր ուղիներ
Կարաւաններու կայան։
Տարագրութեան և կոտորածներու կեդրոնատեղի։
Կեդրոնացման ճամբարներ կամ... տարագրեալներու գերեզմանը։
Կոտորածներու և տարագրեալներու թիւը՝ տրամագծի իւրաքանչիւր մ.մ.ը կը ներկայացնէ 5000 հոգի։
Կովկասեան Հայաստան։
Ջարդերէն փրկուած շրջան։
Թուրքիոյ սահմաններ։
ՀԱՄԱՉԱՓՈՒԹԻՒՆ 1/ 800000
ՔՄ. 0 20 40 60 80 100
ՍԵՒ ԾՈՎ
ՎՐԱՍՏԱՆ
ԱԶՐՊԷՅՃԱՆ
ԿԱՍՊԻՑ
ԾՈՎ
ՂԱՐԱԲԱՂ
ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎ
ԿԻՊՐՈՍ
Թիֆլիս
Գանձակ
Պաքու
Կարս
Երեւան
Էջմիածին
Վան
Դիլման
Թաւրիզ
Ուրմիա
Խոյ
Մուսուլ
Տիգրիս գետ
Եփրատ գետ
Տէր-էզ-Զօր
Ռագգա
Հալէպ
Անտիոք
Ատանա
Սամսոն
Տրապիզոն
Էրզրում
Սղերթ
Պիթլիս
Տիարպէքիր
Խարբերդ
Մալաթիա
Սեբաստիա
Կեսարիա
Մարզուան
Ամասիա
Եոզղատ
Էնկիւրի
Գոնիա
Ուրֆա
Մարաշ
Այնթապ
Քիլիս
Մերտին
Ռաս-ուլ-Այն
Շէտատիէ
Լաթաքիա
Համա
Սերուճ
Այն-էլ-Քօմ
Խոյ
Նախիջեւան
Ախալքալաք
Ալեքսանդրապոլ
Արտահան
Պաթում



Աբեղյան Հովհաննես, Քեսաբ



Աբիկյան Օվսաննա, Իզմիթ



Աբլաբուտյան Խորեն, Եդեսիա



Աբլաբուտյան Նվարդ, Եդեսիա



Ազարյան Հայկուհի, Ադաբազար



Ալաճաճյան Ադրինե, Կ. Պոլիս



Ալբոյաջյան Հարություն, Ֆնդըջագ



Աղաչրաքյան Սիրարփի, Կ. Պոլիս



Ատուրյան Գայանե, Զեյթուն



Բալաբանյան Մովսես, Մուսա լեռ



Բաղդիշյան Մարիամ, Մուսա լեռ



Բարթիկյան Արփինե, Ա. Գարահիսար



Բշտիկյան Հովսեփ, Զեյթուն



Գայրակյան Սեդրակ, Զեյթուն



Գյոզալյան Գրիգոր, Մուսա լեռ



Դանիելյան Կիրակոս, Բալու



Երկաթ Պայծառ, Կեսարիա



Ջուլալյան Ծաքե, Կ. Պոլիս



Զուլալյան Գեորգ, Չանաքկալե



. Էքիզյան Գրիգոր, Մալաթիա



. Թոզլյան Կարապետ, Զեյթուն



. Իփրեջյան Հովհաննես, Մուսա լեռ



. Խաչատրյան Մկրտիչ, Շ. Գարահիսար



. Կիկիշյան Պետրոս, Արաբկիր



. Կիկիշյան Սրբուհի, Արաբկիր



. Հալապյան Թագուհի, Մարաշ



. Հեքիմյան Գեորգ, Հալեպ



Մայիկյան Վերգինե, Մարաշ



Մարտիկյան Հարություն, Խարբերդ



Մկրտչյան Կարապետ, Տիգրանակերտ



Մոմջյան Արամ, Մարաշ



Չափարյան Երանուհի, Ադանա



Չիֆթչյան Գևորգ, Մուսա լեռ



Պարոնյան Հովհաննես, Էսքիշեհիր



Պետրոսյան Արշակուհի, Յոզղատ



Սաքամյան Նազենի, Հալեպ



Սարգսյան Սուրեն, Սեբաստիա



Սիլյան Բարունի, Նիկոմիդիա



Վարդյան Զաբել, Մարաշ



Տաղավարյան Վերժին, Սեբաստիա



Տեր-Եղիշյան Թագուհի, Բեյրութ



Տեր-Մկրտչյան Մարիամ, Էրզրում



Փանոսյան Մովսես, Մուսա լեռ



Քեշիշյան Միքայել, Ադանա



Քյուրքչյան Նուրիցա, Այնթապ

## ԵՐԳԵՐԻ ՆՈՏԱԳՐՎԱԾ ՆՄՈՒՇՆԵՐ

I. 2. 9 (35).

### ԴԵՐ ԶՈՐ ԿԵՐԹԱՆՔ ԼԱԼԱԳԻՆ



I. 2. 11 (37).

### ԴԵՐ ԶՈՐ ԶՕԼԸՆԴԱ



Մեր կատարած ձայնագրությունները նոտագրել է երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու՝ Մանուկ Մանուկյանը:

I. Յ. 41 (171).

ՈՐԲԱՆՈՑԻՆ ՎՐԱՅԷՆ ՍԵՎ ԴՈՒՇ ՄԸ ԱՆՑԱՎ



I. Յ. 49 (179).

ՄԵՐ ՇԱՏ ՍԻՐԵԼԻ, ԳԵՂԵՑԻԿ ԱՆԹԻԼԻԱՍ



### I. 4. 4 (183).

### ՄԵՐ ՄՈՒՍԱԼԵՌՑԻՔ ԼՐԻՎ ՀԵՐՈՍ ԵՆ



### I. 4. 8 (187).

### ԱԴՈՒՐ ՓԱՇԱ



### I. 4. 9 (188).

### ՅԱՇԱ՛, ՄԱՆՈՒԿ ՉԱՈՒՇ



I. 4. 15 (194).

## ՕՂԱՆԱՎՆ ԷԿԱՎ



I. 5. 11 (208).

## ԿԱՐՈՏՑԵՐ ԵՄ ՀԱՅՐԵՆԻՔԻՍ



յին հետ ենք, ձեռքես գա նե քեզի կոշիկս ներկել պիտի տամ...

Սապես մեծ կխոսի Հակոբ աղան, կվիրավորե Հասան ղադիին։

Թուրք Հասան ղադին ալ կըսե.— Հակո՛բ աղա, ես էս իմ բեղերս ածիլել կուտամ, եթե քեզի արաբայի հետևը կապել չտամ, քո գլուխդ ալ կտրել չտամ...

Հասան ղադին բոլոր թուրքերուն կհավաքե, ժողով կընե, կըսե.— Փարա՞ն թանկ է, թե՞ պատիվը,— ժողովին հավաքված թուրքերը կըսեն,— Իհարկե՛ պատիվը...

— Եթե ձեզ համար պատիվը թանկ է նե, ինչքան ոսկի ունիք բերեք, ես պիտի էրթամ Տաճկաստանի խորքերը, զորք պիտի հավաքեմ ֆրանսացիներուն դեմ կռվելու համար...

Հասան ղադին գնացել է, թուրքերուն հավաքել է գյավուրներուն՝ ֆրանսացիներուն քշելու համար։

Ասի արդեն 1920 թիվն էր։ Դեռ մենք էդ ժամանակ Զեյթուն քաղաքն ենք։ Թուրքերը սկսան Մարաշ քաղաքում հայերուն ջարդել, որովհետև Հակոբ աղան էդպես բաներ ըսած էր Հասան ղադիին։

Ցուրտ ձմեռ էր։ Շատ ցուրտ ձմեռ էր։ Հակոբ աղան կզգա, որ իրեն վտանգ կա, հեյբե մը ոսկի կլցնե, ձիուն վրա կկապե, կնստի, կփախի։ Փախչելու ժամանակ թուրքերը կբռնեն, անոր գլուխը կկտրեն, արաբայի հետևը կկապեն, կտանին Անկարա։ Հասան ղադին կըսե.— Աս գյավուր Հակոբ աղային գլուխն է, որը ինձի ըսավ՝ ես քեզի կոշիկս ներկել պիտի տամ...։

1921 թիվն էր արդեն։ Թուրքերը 30 հազար զորքով եկել էին Մարաշ՝ կռվելու ֆրանսացիին դեմը։ Երեք օր մենք Զեյթունում լսում էինք էդ թնդանոթներուն ձայները... մեկ էլ թնդանոթի ձայնը լռեց։ Մարաշից Զեյթուն տասներկու ժամ է ոտքով, բայց լսում ենք. ձայն չկա։ Մեր Հայրենակցական միության նախագահը՝ Արամ բեկ Չոլակյանը, ուզում էր իմանալ, լուր առնել, թե ի՞նչ եղավ հայ կամավորներուն վիճակը. ուզում է մարդ ղրկել, բայց ձյուն է, ճամփա չկա, ֆրանսացիները գիշերով փախել են. ով որ հայ կամավորներից ֆրանսացիներուն հետ գնացել էին, սառել էին ցրտից։ Մի մարաշցի Միհրան ունեինք, ցրտից մատները սառել էին։ Մնացած հայերուն ալ...

Մենք Զեյթուն մնացինք 1918—1921 թիվը։ Արդեն 1921 թվի գարունն էր։ Մենք Զեյթունումն ենք դեռ։ Ֆրանսացիները փախան ձիերուն ոտքերուն տակը քեչե փաթաթած, որ սմբակներով ձայն չհանեն։ Մարաշը պարտվեց։ Ֆրանսացիները փախան։ Հերթը եկավ մեզի։ Մենք բոլորս էդ ժամանակ, այսինքն Ֆրանսիայի ու թուրքի կռվի ժամանակ, զորանոցի մեջն էինք մտել, հավաքվել։ Էդ զորանոցը մերոնք 1895 թվին գրավել էին թուրքերից, էդտեղ էին ապրել հինգ հարյուր թուրք զինվորները։ Երկուշաբթի օր մըն էր, երբ 1921 թվին Քեմալ Աթաթուրքի զորքերը եկան զորանոցը պաշարեցին։ Ես ալ զորանոցին մեջն էի. հազիվ տասնյոթ տարեկան էի։ Հայրս արդեն վաղուց մեռած էր, մայրս, երեք քույրերս, ախպորս կինը միասին էինք, մինչև էն ժամանակ։

Քեմալի զորքերը եկան դեմի լեռան գագաթը, գերմանական թնդանոթները լարեցին մեր կողմը։ Ձի նստած մի զինվոր, ճերմակ դրոշակը ձեռքին եկավ մեզի մի նամակ բերավ, ուր գրված էր. «Զեյթունցինե՛ր, կա՛մ հանձնվեք, կա՛մ ռմբակոծելու ենք. ձեզի երեք ժամ ժամանակ»։ Աս Քեմալի հրամանն էր։

Արդեն մենք՝ զեյթունցիներս, հազար հիսուն ջան ենք։ Հայրենակցական միությունը ժողով ըրեց, որոշեց՝ հայ երիտասարդները չեն կարող հանձնվել, պիտի կռվին մինչև արյան վերջին կաթիլը։ Մարաշեն անգլիացի միսիոներներ եկան մեզի ըսին.— Եթե դուք հանձնվիք, ձեզի չպիտի ջարդեն։

Մեր զեյթունցոց երիտասարդները ըսին.— Մենք չե՛նք հանձնվի, մենք պիտի կռվինք մինչև մեր արյան վերջին կաթիլը։

Արամ բեկը ըսավ.— Ո՛վ կհանձնվի, թող՝ հանձնվի։

Ոնց որ մի նավ ընկղմվի. զորանոցի մեջի զեյթունցի ժողովուրդը իրար անցավ... իրար գրկել, համբուրել, լաց ըլալ, ալ ամենքը իրար խառնըվան...։ Մենք երկու եղբայր էինք։ Մեծ եղբայրս՝ Նշանը, որ Արամ բեկի զինանոցը կաշխատեր, նոր էր ամուսնացած, ան ալ մնաց կռվողներուն հետ։ Ան ինձի ըսավ.— Կարապե՛տ, մենք երկու եղբայր ենք, արի դու հանձնվիր. մամայիդ, քույրերուդ և իմ կնկանը տերություն արա, գուցե դու ողջ մնաս, մեր տոհմի արյունը շարունակես։ Ես Արամ բեկի հետ կռվողներուն մեջ պիտի ըլլամ։

Ես, որ հազիվ տասնյոթ տարեկան էի, հրացան մը առած էի ուսս, որ ես ալ կռվելու երթամ։ Մեծ եղբորս խոսքը լսեցի, հրացանն ուսես վար առի, մորս, քույրերուս ու հարսիս տեր կանգնեցի։ Ես, մորս, քույրերուս և հարսիս հետը գնացի սարի գագաթը, գնացինք՝ հանձնվանք։ Մի կնիկ կար, հղի էր, ըսավ ամուսնուն. «Օհաննե՛ս, մեղքս քո վիզը, ինձի մի հատ գյուլլա խփե», ամուսինը մեր աչքի առաջ, գլուխը սանկ դարձուց, նանկ դարձուց՝ թվանգով խփեց, որ կնիկը թուրքին ձեռքը չանցնի իր չծնված զավակին հետը։ Վերջն ալ ամուսինը գնաց մտավ Արամ բեկի խմբին մեջ։ Երեք օր անոնք կռվան հերոսներու պես։ Զտեսնվա՛ծ կռիվ էր։ Գնդակները օդին մեջ կերթային-կուգային։ Երեք օր գերմանական թընդանոթները մեր զորանոցին պատերը քանդեցին։ Հայերը տեսան, որ իրենց փամփուշտները վերջանում են, արդեն զորանոցն ալ պաշարված է

գիշեր-ցերեկ, Արամ բեկը հրամայեց.— Խշտիկները անցուցե՛ք հրացաններուն վրա, պիտի՛ հարձակվինք թշնամու վրա։

Կես գիշերին հարձակվեցան թշնամու վրա, թուրք զորքի վրա, քանի՜ հոգիներ հոն զոհվեցան, 150—200 հոգիի չափ լեռը բարձրացան, սկսան կռվիլ։

Հիմա գանք մեզի։ Մեզի տարին թուրքերուն կենտրոնը, զաբիթներուն քովը։ Երեք զեյթունցի հայ ծերուկներու պարտականություն տվին, որ պիտի մատնիչություն ընեն, թե ո՞ւմ ամուսինը, ո՞ւմ ախպերը ֆեդայի է, դիրքերում կռվում է, անունները պիտի ըսեն, եթե չըսեն՝ իրենց գլուխները կթռցնեն։ Ծերուկները ստիպված մեկիկ-մեկիկ բոլորին անունները ըսին։ Թուրքերը բավական կնիկ-աղջիկ ջոկեցին, որոնց հարազատները Արամ բեկի հետ կռվում էին։

Էն ժամանակ մենք՝ ես, մայրս, քույրերս ու հարսս, իրար վրա կծկված, ոզնիի պես կուչ եկած թաքնվել էինք ծառերուն, թփերուն տակը, որ մեզ չտեսնեն։ Էկան երեք քույրերես մեկուն տարին, ամուսինը կռվողներուն մեջն էր։ Մյուս երկու քույրերս, հարսս և մայրս մնացինք. մեր բախտը բերեց, իրար հետ էինք։ Անոնք, որոնց ամուսինները, ախպերները կռվում էին, առանձին տարին մորթելու, մի 2—3 կնիկ ոնց էղեր է էդոնց մեջից փախել են մաղարան են մտել, ետքն ալ գացել միացել են կռվողներուն, իրենք ալ կռվել են հետերնին։ Էդ կնիկներեն մեկը հետո, շատ տարի հետո, ինձի պատմեց էդ մասին։ Էդտեղից մեզի քշեցին, տարին Վարդապետի կամուրջը։ Էդ մեր հողային սահմանն էր թուրքի հետ, տակեն մեծ գետ մը կանցներ։ Մեզի լեցուցին կամուրջի վըրան, երկու կողմեն պահակ դրին։ Մենք մտածեցինք, որ երևի մեզի ջուրը պիտի թափեն։ Մեզ ալ հրամայեցին՝ ով փախի՝ կկրակենք։

Ես տասնյոթ տարեկան էի։ Ինձ չափ տղաներ շատ կային։ Էդ կամուրջից հանեցին մեզի քշեցին առաջ։ Քայլում ենք ոտքով, հոգնած ենք, շատերը, գետնին պառկած, չեն կրնար քայլել. հիվանդ են, ծեր են... Գիշերը մնացինք դաշտը՝ լեռը, բաց երկնքի տակ։ Էդպես օրերով քայլեցինք, վերջապես մեզի քշեցին դեպի Մարաշ։ Երեք օր ու գիշեր քայլեցինք։ Անոթի, ծարավ, հոգնած, դադրած։ Հասանք Մարաշ, տեսանք, որ մեր մեջեն շատերը չկան, ճամփին կոտորվել, մեռել էին։ Մեզ անտեղը քանի օր պահեցին։ Հայկական եկեղեցիին մեջը լեցուցին։ Ամերիկացիք եկան շատ ուտելիք տվին մեզի։ Թուրք զինվորները շտիկներով կանգնած էին դռանը։ Մեր մեջը մի վարդապետ կար ու մի տերտեր։ Էդոնք էդ եկեղեցիին մեջ պատարագ ընել սկսան։ Ժողովուրդը լի՜քը, բոլորը կուլան հոնգո՜ւր-հոնգո՜ւր, արցունքներով գետինը թրջվեցավ։ Աղտեղ, աղ եկեղեցիին մեջ քանի օր մնացինք. ո՛չ դուրս ելնել կթողնեն, ո՛չ ներս մտնել, ո՛չ դուրս, ո՛չ ներս, ամեն ինչ ներսը՝ իրարանցո՜ւմ. չտեսնվա՜ծ վիճակ էր։ Մայրս ըսավ ինձի.— Կարապե՛տ, տղա՜ս, արդեն ախպորդ լեռի վրա խփեցին, եթե կրնաս նէ՝ փախի, կարող է մեզի ալ կոտորեն, գոնե դո՛ւն հոգիդ ազատի։

Եկեղեցու դռան առջևը պահակ թուրք զինվորը խոսքի բռնված էր կնիկի մը հետ։ Ես տեսա աղ ասկարի թիկունքին բաց տեղ կա, հեռուեն վազելով եկա, թռա ցանկապատը անցա, փախա։ Գնացի Քուբեթլի թաղը, որը Մարաշի հայկական թաղերից մեկն է, այնտեղ թաքնվա մի տունի մեջ։ Ինձի ըսին.— Քեզ պես տղաներ կան փախած։

Տնեցիներեն մարդ ղրկեցի եկեղեցի, ըսի.— Գացե՛ք, տեսե՛ք անոնք ի՞նչ եղան, ո՞վ կա, ո՞վ չկա։

Գնացին, եկան, ըսին, որ ոչ ոք չիկա եկեղեցում, բոլորին քշել, տարել էին Թուրքիայի խորքերը՝ աքսոր։ Ես լաց եղա, մտածեցի, որ այլևս երևի չեմ տեսնի իմ հարազատներուն, մանավանդ խելացի, հեռատես մորս, որ ուզեց ինձ փախցնել, ազատել...

Դու մի ըսեր, մերոնց որ տարել են, աղջիկկնիկ, շատ դժվար են ապրել, անոթի, ծարավ, թուրքերուն, արաբներուն ծառայություն ընելով են ապրել կամ՝ մեռել։ Իսկ ես մերոնցմե խաբար չունեցա։

Չորս ամիս մնացի Մարաշում, ինձի պես տասներկու տղաների հետ մի կերպ յոլա էինք գնում։ Մեկ էլ թուրքական կառավարությունեն հրաման եկավ, որ «Մարաշի հայերը, ով որ իր տուն-տեղը, մալը-մյուլքը թողնի, կարող է պաշտպորտ հանի, Սուրիա գնա։ Ճամփաներին ձեզ չեն ջարդի, կարող եք Արաբստան գնալ»։ Հայերը բոլորն ալ, տուն-տեղ թողած, բոլորն ալ ամեն ինչ թողած, գիշերով, ֆուրգոններով ճամփա ելան դեպի Սուրիա՝ Հալեպ։ Ես ալ էն ժամանակ էդ տասներկու հայ տղաների հետ էի։ Մի հայ ինժեներ կար, պետական պալատը կշիներ Մարաշում, անունը Տաճատ էր։ Գնացինք անոր ըսինք.— Տաճա՛տ էֆենդի, մենք ալ կուզենք էրթալ Սուրիա՝ Հալեպ, բայց որբ ենք, ո՛չ ոք չունինք։

Տաճատ էֆենդին ըսավ.— Գնացե՛ք, մի-մի հատ նկար քաշվեցե՛ք, բերե՛ք, ձեզ ալ պաշտպորտ հանեմ, գնացե՛ք Հալեպ։

Տղերքով գնացինք, նկարվեցինք, տարինք, Տաճատ էֆենդին պաշտպորտ հանեց, տվեց մեզ։

Ինկանք ճամփա։ Յոթ օր, յոթ գիշեր ճամփա քալեցինք, քալելեն ոտքերնիս ուռել էին, բոլորս ալ անոթի՜, ծարա՜վ, հոգնա՜ծ։ Վերջապես հասանք Հալեպ քաղաքը։ Իսկ Մարաշի եկեղեցիին մեջ մնացած հայերուն՝ մայրս-քույրերս, հարսս վերջը տարել էին Թուրքիայի խորքերը, շատերուն կոտորել էին...

Հալեպ հայ բարեգործական ընկերությունը սպիտակ վրաններ էր լարել, որ ղարիբ հայերը գան, տեղավորվեին։ Գնացինք, մտանք վրանի մը մեջ։ Բոլոր տղերքը փախան, գնացին քաղաք, միայն ես մնացի էդ վրանի մեջ։

Չորս ամիս էր անցել արդեն, մերոնցից լուր չկար։ Լեռը կռվող ֆեդայիններեն շատերը մեռել էին։ Արամ բեկին թուրքերը սպանել էին։ Անոնց հետն է եղել մեր զեյթունցի Հովսեփ Բշտիկյանը[1]—ան լա՛վ գիտե ադոնց կռիվները։ Կռվողներեն մի քանիսը եկան Հալեպ։ Գնացի, տեսա, որ փեսաս կա, ախպերս՝ չկա։ Գնացի, տաս օր առանց հաց, առանց ջուր մնացի, խսիր մը փռված էր վրանին մեջը, լաց լինելով եմ անցուցեր էդ օրերը։ Մեկ ալ էլա, որ անոթի մեռնում եմ, ուժ չկա մեջս։ Ի՞նչ ընեմ, ի՞նչ չընեմ, գնացի ամերիկյան օֆիսը, ըսի.— Ես Զեյթունի որբ եմ։

Ինձի ղրկեցին Լիբանանի ամերիկյան որբանոցը։ Հոն նոր շենք էին սարքում, ես ալ սկսա շինել։ Երեք ամիս հոն մնացի, հետո ջոկեցին չափահաս տղաներուս՝ երեսուն հոգու, մեր ուտելիքով-պառկելիքով ղրկեցին արաբական գյուղերը, որ ամերիկացին պահե մեզի։ Հոն Համանայում վեց ամիս մնացի։ Մի օր եկեղեցի գացինք, աղոթք ըրինք։ Տեսանք, որ անոնք ալ մեզի պես քրիստոնյա են։ Ինձի սիրեցին, իրենց հետ աշխատանքի մտա, բանվորություն ըրի մետաքսի գործարանում։ Աշխատեցա, օրական կես սուրիական կուտային։ Աշխատեցա, բավական փող շահեցա, երեք փեշով թուրքական զուբունս հանեցի, դերձակի մոտ գնացի, կոստյում կարվեցա, հագա, գնացի աշխատելու։

Հետո նամակ մը եկավ Հալեպեն. «Կարապե՛տ, տղա՛ս, մենք եկել ենք աքսորեն, եկուր Հալեպ, Զեյթուն խանե»։ Մայրս էր գրել տվել։ Ուրեմն՝ ո՛ղջ են։ Մուհաջիրները եկել էին։ Գնացի, գտա։ Ես արդեն չափահաս երիտասարդ էի, երբ գտա մորս ու քույրերուս։ Տուն մը բռնեցինք, սկսա աշխատիլ, որ անոնց պահեմ։ Իտալացոց օթոներուն գարաժը մեխանիկ կաշխատեի, վարորդ էի իտալական մեքենաներուն վրա։ Մայրս իր տեսած տառապանքին չդիմացավ, շուտ մեռավ։ Քըրոջս ամուսնացուցի։ 1930 թվին ես ալ ամուսնացա, ունեցանք զավակներ՝ Օվսաննա, Աղավնի, Մինաս, Նշան։

1946-ին Հալեպեն եկանք Հայաստան։ Երևանում Նոր Զեյթուն թաղամասի հիմնադիրներեն դարձա, տուն շինեցինք, աշխատեցանք, ապրեցանք։

## 8(219). ԶԵՅԹՈՒՆՑԻ ԶՈՒԼՅԱՆ ԵՎԱՅԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1903 Թ.)

1915 թվականի ջարդի ու տեղահանության ժամանակ ես պզտիկ չոջուխ էի, կհիշեմ, Զեյթունեն դուրս եկանք, մեր գյուղը Զեյթունի Այկըցա գյուղն էր։ Մայրս շատ սիրուն կնիկ էր։ Հինգ զավակի տեր էր, ամա բոլորին կորցրեց, վերջն ալ ինքը մեռավ...։ Մեր գյուղեն միայն ես եմ մնացել ողջ։ Թուրքերը էկան բոլորին գյուղեն հանեցին։ Խամշիով կմխթեին, որ քայլենք։ Բոլորին ձեռքերը ետևները կապած տարին լեցուցին ղշլաղի պես բարձր տեղ մը։ Մեջը ղամայով ու բալթայով մեկի ձեռքը, մյուսի՝ ոտքը, մյուսի՝ թևը ջարդեցին։ Մեզի մերկացուցին, մորե մե՛րկ... շը՛ս-շըլբախ էինք, ո՛չ վարտիք, ո՛չ շապիկ։ Ետևնիս մի պըզտիկ տղա թևը կտրված մորն էր կանչում, ամմա մայրը մեռած էր արդեն բալթայով։ Էդ տեղը Դեր Զորն էր։ Ցո՛ւրտ էր սաստիկ, իրար վրա էինք պառկում, որ տաքանանք։ Առավոտյան եկան, նորեն թոփեցին մեզի, նորեն սկսան ջարդել և ջուրը լցնել. մաղարային տակեն խաբուր գետն էր գնում։ Մեկին՝ գլուխը, մյուսին՝ ոտքը, մեկալին՝ ձեռքը կտրեցին, փրթեցին, ամենքին ալ գետին իրար վրա լեցուցին։ Մարդ կա՝ չէ՛ մեռած, ամմա՝ ջնջխված է, մեկը՝ կուլա՛, մյուսը՝ կծվա՛, արյունին հո՛տը՝ մեկ կողմեն, անոթությո՛ւնը՝ մյուս կողմեն։ Ալ ողջերը սկսան մեռածներուն միսը ուտել...։ Ովքեր հրաշքով ողջ էին մնացած լեշերու տակեն դուրս էին էլեր. փրթված մարդոց տակերեն, արյուններուն մեջեն դուրս էլեր էին, էդ հորին մեջ կանալիզացիայի ճամփան գտել էին, սկսել էին քալել։ Ով էդ փիս-փիս ջուրերը խմել էր, փորերը ուռան՝ մեռան։ Ետքը ես լույս աշխարհ էլա, սկսա քալել։ Մարդ-մարդազանք չիկա, մեյ մըն ալ արաբ հովիվ մը տեսա, մոտեցա։ Ան ինձի մեղքցավ, կաթ տվեց՝ խմեցի, վերջն ալ իր շադըրը տարավ, ուտելիք տըվավ՝ կերա։ Անտեղ քիչ մը դինջացա, ինքզինքս գտա։ Վերջը ան ինձի Մարաշ տարավ։ Ինձի ալ Մարաշի գերմանական որբանոցը տվավ։ Ես հոն սովորեցա։ 1921-ի իրարանցումի ժամանակ Հալեպ եկանք։ 1946-ին ալ Հայաստան եկանք, ինչե՛ր են տեսել աս աչքերս, ո՞նց չեն քոռացել աս աչքերս։

---

1 Զեյթունցի Հովսեփ Բշտիկյանի (ծնվ. 1903 թ.) պատմած հուշը տե՛ս III. 1(217)։

## 4(220).
## ԶԵՅԹՈՒՆՑԻ ԳԱՅԲԱԿՅԱՆ ՍԵԴՐԱԿԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1903 Թ.)

*Երբ մեզի աքսոր հանեցին, ես 12 տարեկան էի, այնպես որ բավական լավ կհիշեմ։ Մեզի Զեյթունեն դուրս քշեցին, մեր տուն-տեղը, լիքը մառանները, այգիները՝ ծառերով ու պտուղներով, ամբողջը ձգեցինք և լաց ու կոծով ճամփա ինկանք։ Մեզի Կոնիայի կողմը քշեցին, անտեղեն ալ Դեր Զորի անապատը դուրս էկանք։ Հոն, ըսես նե, անա-բաբա գյունի էր, շունը տիրոջը չէր ճանչնար, մեռնող-մեռնողի, հիվանդություն, անոթություն, խեղճություն, ո՞ր մեկը ըսեմ…*

*Օրին մեկը արաբ մը ինձի տեսավ, երևի մեղքցավ, տարավ իր հետ, իրեն զավակ ըրավ։ Ես դարձա ուղտապան։ Ոտքս՝ բոբիկ, մազերս՝ երկարած, ջուր չկա, որ լվացվիս, ուղտը որ միզում էր, գլուխս տակը կբռնեի, կլվանայի…*

*Երբ որ մարմնիս մի տեղը կցավեր, աս իմ արաբ հայրս կըսեր՝ չեյթանը հոն է մտած, ու վառվող ածուխը միսիս վրա կդներ, որ սատանան դուրս գա, ես ցավեն կմեռնեի, իմ մսի հոտը կըզգայի, բայց ձեռքս, ոտքս բռնած կըլլային… Մարմնիս վրա 20—25 տեղ կա ադ տեսակ այրվածքի հետքերը։*

*Հարևան արաբ ցեղերը հարձակվեցին մեր վրաններուն վրա, թալանեցին, կնիկներուն փախցուցին, տղամարդկանց սպանեցին։ Ադ նոր տերերը ուղտերուն ու կնիկներուն հետ միասին ինձի ալ քշեցին, տարին։ Հասանք մինչև Իրաքի հյուսիսը՝ Մուսուլ, պատմական Նինվեի մոտ, ուրտեղով Բաղդադ-Բեռլին երկաթուղին կանցներ։ Ես ադ արաբներուն քովեն կամացուկ մը փախա, գնացի շուկա, հայերու գտա։ Բարի մարդ մը ինձի տարավ իր խանութը, անոր հետ միասին կաշխատեի։*

*Վերջը ամուսնացա, ընտանիք կազմեցի, եկանք Հայաստան։*

## 5(221).
## ԶԵՅԹՈՒՆՑԻ ԱՏՈՒՐՅԱՆ ԳԱՅԱՆԵԻ* ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1909 Թ.)

*Զեյթունում ջաղացքարերի վարպետներով էր հայտնի մեր Ատուրենց տոհմը։ 1915 թ., երբ զեյթունցիներուն աքսոր հանեցին, ես ընդամենը հինգ տարեկան էի։ Ունեի չորս քույրիկներ։ Բայց թուրքին յաթաղանը ոչ միայն մեզ զրկեց մեր հայրական տունեն, այլև հազարավոր զեյթունցիներուն քշեց արաբական անապատները։ Աքսորի անտանելի դժվար ճանապարհին չորս քույրիկներս ալ մեկ շաբաթվա մեջ իրարու ետևե մեռան, ալ չգիտեմ անոթությունեն, չէ նե՝ հիվանդութենեն։ Միայն ան գիտեմ, որ ես հրաշքով ազատված եմ և ողջ մնացած։ Մեր ընտանիքի հայրն ալ մեռավ։ Ադ մարդը, որ ջաղացքար սարքող էր և լեռան պես հսկա մարդ մըն էր։ Տատս կըսեր. «Աս տանջանքներուն չդիմացավ՝ լեղին ճաքեցավ մեռավ»։ Ես մնացի նիհար, փոքրիկ կազմվածքով Զարուհի մորս և իր տղային կորսնցուցած Զարմանուհի մեծ մայրիկիս հետ։ Կհիշեմ՝ անոթի, ծարավ քալելեն բերանս փրփրել էր արդեն։ Տեղ մը հասանք, որ մեծ մայրիկս ըսավ.— Ա՛լ չե՛մ կրնար քալել,— խեղճ կնոջ ոտքերը ուռել էին, այլևս չէր կարողանում քայլել,— ինձի ձգեցե՛ք, դուք գացե՛ք, խումբին ետևեն հասե՛ք։*

*Ես սկսա լալ, քանի որ մեծ մայրիկիս շատ կսիրեի։ Ան տեսնելով իմ արցունքները, փորձեց վեր կենալ, հազիվ մեկ-երկու քայլ ըրավ, նորեն ինկավ, նստավ գետինը։ Մամաս խեղճացել էր, չգիտեր ինչ ընելը։ Զգեց անոր և իմ ձեռքես բռնեց, քալեց առաջ։ Ես նորեն սկսա լալ, պոռալ կանչել. «Դուն փի՛ս մամա ես, ինչո՞ւ մեծ մայրիկին ձգեցիր հոն»,— կըսէի, բայց ես ան ժամանակ չէի կրնար հասկնալ, թե ինչ էր կատարվում իմ խեղճ մամայիս հոգիին մեջը։ Մենք հասանք մեր խումբին։ Երկու օր ետքը հաջորդ կարավանի մարդիկ եկան պատմեցին, որ իրենք տեսել էին մի ծեր կնոջ մարմին, որը գիշերը շնագայլերը բզկտել էին։*

*Բավական քայլելեն վերջ, գիշերվա մութը արդեն իջնալու մոտ էր։ Հրաման եկավ, որ Եփրատի եզերքը մի բաց տեղ նստինք, բայց ո՛չ հաց կա, ո՛չ ուտելիք։ Անոթի ենք։ Հոն տեղը քանի մը մարդիկներ եկան մամայիս հետ սկսան խոսիլ, համկըցնել, որ քու ամուսինդ և մյուս երեխաներդ արդեն մեռել են, աս երեխային չես կարող պահել, անոթի աս ալ կմեռնի, տուր տանինք որբանոց, հոն կուտացնեն։ Մամաս ալ երևի մտածեց, որ իր չորս աղջիկները անոթութենեն մեռան, գոնե աս պզտիկը ողջ մնա, հանեց ինձի տվավ ադ մարդոցը, իմին ձեռքս ալ մի բուռ չամիչ լեցուց, ըսավ՝ ա՛ռ, ճամփան կուտես…*

*Ադ մարդիկը ինձի առին, ուրիշ քանի մը ե-*

---

* Բարեկիրթ, գեղեցիկ դիմագծերով այս կնոջը երբ ես հանդիպեցի, նրա այտերը, ճակատն ու կզակն ազավաղված էին կապույտ դաջվածքի հետքերով։

րեխաներու հետ տարին, հանձնեցին քյուրդ մարդոց։ Ես տեսա, որ այդ մի մեծ ախոռի պես սենյակ էր, մեջը բլուրի պես դարման էր լցված։ Այդ դարմանի վրա երկու-երեք հարյուր երեխա կար՝ երեքեն մինչև յոթ տարեկան։ Անոնք քնացած էին. մեկին կոնքը մյուսին գլխուն համար բարձ էր դարձած։ Ինձի տարին այդ քյուրդ մարդոցը տվին։ Անոնք մեր վերակացուներն էին։ Ես ալ անոթի փորով քունս տարավ, դեզի վրա քնեցի։ Առտուն աչքս բացի աղմուկով մը։ Այդ քյուրդ վերակացուներեն մեկը մի հատ հաց էր ձեռքը բռնած, կտոր-կտոր անում էր ու շպրտում, ոնց որ շուներուն առջևը լափ կնետեն։ Երեխեքը ով ճարպիկ էր, հարձակվեց, խլեց, կերավ, ով չէ՝ անոթի մնաց։ Ետքը եկան երեսուն-քառասուն երեխայի առանձնացրին, ֆուրգոնի մը մեջ լեցուցին, քշեցին տարին, ո՞ւր, ի՞նչ գիտնանք։ Հոնտեղը ինձմե քիչ մը մեծ տղա մը կար, եկավ ականջիս փսփսաց.— գիտես՝ ասոնց կտանին մեռցնելու։ Եփրատին քենարը ղազան մը ջուր է դրված, կրակի վրա կեռա։ Աս չոջուխներուն կտանին ոտքերեն բռնելով խաշած ջուրին մեջ կմտցնեն, կհանեն, որ մեռնին։ Հետո ալ Եփրատը կնետեն։ Ես ալ անոնց մեջն էի, տեսա, փախա, եկա։ Եթե կըրնաս դուն ալ փախի...

Ես չնայած շատ փոքր էի, բայց՝ խե՛լքս նայե։ Երբ մթնելու վրա եղավ, գնացի դռան մոտը, մամայիս տված չամիչները ափիս մեջ լցրի, գացի, դուռին քովը կանգնած պահակ քյուրդ կնոջը ցուցուցի, ըսի.— Ա՛ռ, դուռը բաց, դուրս գամ։

Սա վերցրեց չամիչները, դուռը բացեց, իմ գլխուս ալ մեկ հատ չափալաղ տվեց, ըսավ.— Գնա՛, կորի՛ր։

Ես այդ տունեն դուրս եկա։ Ո՛չ ճամփա գիտեմ, ո՛չ տեղ։ Մութը իյնալու վրա էր արդեն։ Քալել սկսա։ Գացի-գացի, կամուրջ մը տեսա։ Հիշեցի, որ այդ մարդիկը ինձի կամուրջի վրայով բերել էին, մտածեցի, որ պետք է կամուրջը անցնեմ, բայց տեսա, որ կամուրջին մուտքը գոց է՝ վանդակապատ փայտերով։ Քովն ալ պահակ-ասկյար մը կա նստած՝ հրացանին կռթնած, քնացած։ Կամացուկ մը մոտեցա, գլուխս մտցուցի վանդակապատին մեջը։ Լսել էի, որ եթե գլուխը անցնի՝ մարմինն ալ կանցնի։ Տեսա, գլուխս անցավ, մարմինս ալ անցուցի, կամաց-կամաց անցա կամուրջը։ Տեսա կնիկ մը, ան ինձի հիշեց երևի, քանի որ մեր կարավանից էր։ Ձեռքես բռնեց, տարավ մամայիս քովը։ Աստուծմե էր, որ մերինները դեռ տեղերնեն չէին շարժած։ Մամաս ինձի տեսնալուն պես ուրախացավ և սկսավ լալ, ըսելով. «Ասիկա Աստծո հրա՜շքն էր, որ կատարվեցավ, քանի որ ես քեզի տվի այդ գերմանացիներուն որբանոց կոչված տեղը, բայց հետո զղջացի։ Աստված հրա՜շք կատարեց, որ դուն քո ոտքովդ ետ եկար, և ես քեզի երկրորդ անգամ գտա»։

Հաջորդ առտու մեր կարավանը նորեն ոտքի հանեցին, աղմուկ աղաղակով.— Քալքը՛ն, յորը՛ն (վե՛ր կացեք, քայլե՛ք)։

Խամչիներով սկսան խփել, մեկուն՝ գլխուն, մյուսին՝ կռնակին, ուր որ հասներ։ Մեզ ոչխարներու պես քշում էին։ Անապատի տաք ավազներուն վրա քայլում էինք՝ անոթի, ծարավ։ Մարդիկ մարմրում էին, գետնին ընկնում, ալ չէին կարող քայլել։ Ես մորս ձեռքեն բռնած հազիվ գնում էի խմբի վերջեն։ Դու մի ըսեր խումբին վերջեն քայլողներուն ավելի փորձանք կպատահի էղեր. չեչենները կուգան կթալանեն, աղջիկ, երեխա կփախցնեն։ Անոր համար վերջը չպետք է մնայինք։ Ամմա ո՞վ գիտեր այդանկ բաներ։ Մեյ մըն ալ տեսանք, որ ձիու վրա նստած վայրենի չեչեն մը ձեռքը նիզակով հարձակվեց մեր վրա։ Ձիու վրայեն թեքվեց, ինձի քաշում է, մորս ձեռքեն կուզե փախցնել։ Ես ըսես նե հազիվ հինգ տարեկան եմ, սկսա պոռալ, կանչել, մեկ ձեռքես չեչենը կքաշե, մյուս ձեռքերս մամաս կքաշե, որ չեչենը չտանի ինձի։ Վերջապես չեչենը ուժով էր, հաղթեց, ինձի պոկեց մամայես, խլեց, առավ ձիուն վրա և որպես հատուցում հինգ կտոր չոր հաց շպրտեց ձիուն սմբակներուն տակ. ա՛յդ էր իմ գինը։ Չեչենը ինձի տարավ իր վրանը, ես ըսենե՝ կուլա՜մ, կուլա՜մ։ Արաբ կնիկ մը էկավ ըսավ՝ ինչո՞ւ կուլաս, ուրախ եղիր, որ ողջ ես, քանի որ չեչենը կրնար քեզի սպանել, ուրիշ շատերու պես նիզակը կխրեր կուրծքդ՝ կմեռցներ...

Այդ չեչենը ինձի տարավ Իրաքի Թելաֆար կոչված քաղաքի շուկան և ինձի վաճառեց Թուրքմեն նոր «հորս»։ Անոր քովը հինգ տարի մնացի։ Մի փոր հացով կաշխատեի ամբողջ օրը, տունը, բակը կավլեի, ջուր կբերեի, անասուններին կկերակրեի, այդանկ բաներ կընեի։ Իմ երեսներս կապույտ մելանով դաջեցին, որ արաբի կերպարանք առնեմ, իմ անունն ալ դրին Նուրիյա։ Աս ձևի տակ հինգ տարի ապրեցի։ Օր մըն ալ էկան, ըսկըսան հայ երեխաներին փնտրել, հավաքել, որ տանին որբանոց կամ՝ վերադարձնեն իրենց ծնողներուն։ Էկան ինձի ալ տարին տեղ մը։ Անգլիացի՞ էր, ի՞նչ էր, չգիտեմ, բարի մարդ մըն էր, հարցուց.— Հա՞յ ես։

Ըսի.— Չէ՛,— քանի որ հինգ տարի այնքան էին վարժեցրել, որ արդեն մենք ալ հավատացել էինք, որ հայ չենք։

Ըսավ.— Ի՞նչ ունիս։

Ըսի.— Ոչ մեկը չունիմ, միայն պզտիկ, նիհար մայր մը ունեի, ան ալ մեռած է երևի։

Ան ատենը ինձի տարին ուրիշ սենյակ մը, ուր պզտիկ, նիհար կնիկ մը նստած էր, հարցուցին այդ կնոջը՝ ա՞ս է քո աղջիկը։ Անոր արդեն երեք հատ աղջիկ ցուցուցեր էին։ Ան ասել էր՝ ո՛չ մեկը չէ իմ աղջիկը։ Բայց ինձի որ տեսավ, շրթունք-

ները դողալով սկսավ լալ, չկրցավ խոսիլ, միայն ըսավ.— Գայանե՜։

Ես հիշեցի իմ մորս ձայնը.— Մամա՜,— ըսի ու իրար փաթթվանք, սկսանք երկուսով լալ։ Բայց ես մոռցեր էի հայերեն խոսիլս։

Ադ արդեն 1920—21 թվականն էր։ Արդեն անգլիացին էր էկած։ Արաբներու վրաններու տակ ողջ մնացած զեյթունցիներուն և ուրիշ տեղերեն հայերուն հավաքեցին Իրաքի Բասրա քաղաքի մոտ՝ Նահր Օմարի անգլիական քեմփերուն մեջ ռեշին* ամեն մեկուն չափով ուտելիք կուտային, մենք ալ կուտեինք։ Քիչ մը վրա էկանք։ Բայց իմ վրա ծիծաղում էին. հայերեն չգիտեի, երեսներիս կապույտ դաջվածքներ կային։ Խեղճ մայրս քեզաբով փորձեց հանել, բայց ան ալ մաշկս այրեց, կծկեց և այրվածքի հետքեր ձգեց երեսիս վրա մինչև հիմա։ Ինչ որ է, հազիվ քիչ մը վրա էկանք, ինքզինքնիս գտանք։ Ես ալ բոյով-բուսով, փարթամ աղջիկ էի դարձել արդեն։ Մեյ մըն ալ լսեցինք, որ ասորիներու ջելո ցեղախմբին վայրենիները, որոնք Պարսկաստանի Ուրմիա գավառեն գաղթած էին, գալիս են, աղջիկ են փախցնում։ Մամաս վախցավ, որ ինձ նորեն կփախցնեն, հազիվ տասներկու տարեկան էի, ամուսնացուց զեյթունցի Ղայփախենց սատվածավախ Սեդրակին հետ, որն արդեն քսանհինգ տարեկան էր։

Անգլիացիները մեզի ըսին.— Ո՛վ կուզե՝ տանինք Լոնդոն, ո՛վ կուզե՝ դրամ տանք, իր գլխուն ճարը տեսնա։

Մենք արդեն քանի մը հատ զավակի տեր էինք։ Գնացինք Բաղդադի Գելանի քեմփը, որը հայկական թաղամաս էր։ Ամուսինս օրս մը առավ, ըսկըսավ կոշիկ նորոգել։ Ունեցա չորս զավակ, անոնց բոլորին անունները դրի Դեր Զորում նահատակված մեր հարազատներուն անունները՝ Մանվել, Դանիել, Փեփրոն և Զվարթ։ Ես սկսա լվացք ընել աւոր-անոր տուներուն մեջը։ Ետքը մեզ համար տուն շինեցինք Սըլեխ թաղամասում։ 1947 թվին եկանք Հայաստան, Ալավերդու Մաղարդ գյուղը մեզ իջեցուցին։ Քանդված եկեղեցիի մը քովի գոմը տվին՝ հատակը՝ հող, ցուրտ՝ ձմեռին։ Հազիվ մեծ դժվարությամբ փոխադրվեցինք Երևան, Նոր Զեյթունում սկսանք մեր տունը շինել։ Երեխեքս ոչ մի բառ հայերեն չգիտեին, բայց ընդունակ էին։ Մի քանի տարվա մեջ ոչ միայն հայերեն սորվեցան, այլև չորսն ալ դարձան քիմիագետներ, իսկ Դանիելս թեկնածուական դիսերտացիան պաշտպանեց և համալսարանում դասախոսում է արդեն, հիմա ալ պատրաստում է իր դոկտորականը...

## 6(222).
## ՄՈՒՍԱԼԵՌՑԻ ՓԱՆՈՍՅԱՆ ՄՈՎՍԵՍԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1885 Թ.)

Մուսա լեռան կռվի ամենեն վերջի պաշտպանը ես եմ մնացած՝ ահա ողջ...

1915 թ. հուլիսի 13-ին թուրք հոքումաթը՝ կառավարությունը, հրաման հանեց, որ յոթ օրվա մեջ ամբողջ հայերը պետք է գաղթեն։ Մեր յոթ գյուղերուն մեծերը Յողու-օլուկի մեջ ժողով ըրին, ըսին. «Մինք հուս ձնուձ ինք, հուս ալե բըր միռնինք, մինք չընք ուրթօ յասսեր քիմը միռնիլ, թըվունգը ծառին գըմիռնինք յաս դիղը, թաքե մուհաջըր չընք ըննօ»։ (Մենք այստեղ ենք ծնվել, այստեղ էլ կմեռնենք, մենք չենք գնա սորուկի պես մեռնելու, հրացանը ձեռքներիս կմեռնենք այս տեղը, բայց գաղթական չենք դառնա)։ Ադպես ալ որոշեցինք՝ լեռը ելլալ։ Ով ինչ ուներ՝ յաթախ, յորղան, թենջիրե, թավա, անասուն, հավ, ամեն ինչ լեռը հանեցինք։ Թուրքի զինվորները մեզի կըսեին. «էշի պես կբարձրանաք, վաղը էշի պես ալ լեռեն կիջնաք, կէրթաք մուհաջիր»։

Հիմա աշխարհը չո՞ւց խառնվուձ ի, ադ վախտըն ալ ադպես էր։ Մինչև Մուսա լեռան կռիվը մեր Խըդըր-բեկի հնչակյանները պարոն Աղասիի հետ գնացել էին Զեյթուն՝ կռվելու թուրքերուն դեմը։ Անոր համար, երբ մեր Մուսա լեռան կռիվը սկսանք, պարոն Աղասին ըսավ. «Ասոնք իմ ցանած սերմերն են»։ Արդեն մինչև լեռան կռիվը իմ հերս գիշերները կէրթար մարզանքի, մերս պապիս կըսեր.— Ձեր տղան գիշերով կէրթա մարզանքի, առտուն կուգա, չութ-արորը կառնե, կէրթա դաշտ, տանը հեչ չի մնար։

Պապս կըսեր հարսին.— Ադա՛նկ պետք է պատրա՜ստ ըլլանք միշտ։

էնպես որ, կազմակերպված իլունք լիռը։ Միզ ըրգը օնբաշիները՝ տասնապետները, բաժանեցին, մեյը՝ Սաբինցյանն էր, միգալը՝ Մինասինց* բաբոյը՝ մեծ հայրն էր, ան շերամի վարպետ էր։ Յադöւր սոնրա միր Թաթարալանգը դուզ, բաց դաշտ տեղ էր։ Ժամանակին թաթարները ղալիշով՝ մանգաղով, ուզեցել են հայերին հնձել, ամմա մերոնք անոնց հախեն էկել էին, անոր համար ալ ադ տեղը Թաթարալանգ կըսեին, յանի՝ թաթարներուն ջարդելու տեղը։ Թաթարալանգին էրկան բողազը՝ վիզը, մենք դիրք բռնեցինք։ Հոն էր Բշենց Պողոսը, ան թուրքական բանակի զինվոր էր եղել, անգլիացիները խփել, վիրավորել էին։ Ան աղեկ բոլորզան՝ շեփոր, գիտեր փչել, աղեկ լուր կուտար, համ էլ կհասկնար թուրքի բորոզանի ձայներուն

* Գաղթականների համար նախատեսված օգնություն։

* Մականուն է։

միտքը. լավ բան կըսեն, չէ նե՝ գեշ։ Ադ բորոզանցի Պողոսը ըսավ մեզի.— Առաջ գացեք, ամմա թուրքական խուրշունը՝ գնդակը, եթե ձեզ խփե՝ կմեռնեք, ան պզտիկ կմտնա, ամմա մե՜ծ կվիրավորե, զգո՜ւյշ էղեք։

Իմ ունեցածը մեկ հատ որսորդական հրացան էր, կապսուլը՝ պատրոնը, պիտի բերնից լցնեի, պիտի շշով ծեծեի, որ կրակեր, ձեռքիս շնորհքով զենք չկար, որ անոնց հերն անիծեի։ Հոն Մարջիմագը վիրավորվեց։ Ես դիսա, վախցա, տեղս փոխեցի։ Բլաղենց Ագուբի փեսան մնաց էնտեղ, խուրշուն մը էկավ, խփեց, աչքիս առջևը մեռավ։ Դավիթ ախպարս ալ երեսուն տարեկան էր, հոն մեռավ։ Թաղեցինք զինվորական դրոշակին տակը։ Մեր Հաջի-Հաբաբլիի տղերքը հեսաբսըզ՝ անհաշիվ էին՝ մեկ ալ օլըղցաքը՝ յողունօլակցինները, շատ էին։ Մերոնք խփեցին թուրքի կումանդորին, մեկ ալ անոնց բորոզան չալողին։ Թուրքի ասկյարները ադ տեսնելով՝ փախան։ Կռիվեն վերջը մենք իջանք լեռեն, գացինք, տեսանք անոնց լեշերը փռված։ Թուրքի ասկյարները իրենց անասունները, ուտելիքը թողել, փախել էին։ Ես տեսա թուրքի ոչխարները հավաքվել, թափված կորկոտն են ուտում։ Շալակս վերցրի մնացած տոպրակով կորկոտը, որ տանեմ լեռ, հասցնեմ մերոնց։ Ամմա մենք Ղըզըլչըխ էինք ընկել, իմ ընտանիքը՝ Սավալոխ էր։ Քալեցի, քալեցի, հասա մերոնց։ Մայրս, քույրս ինձ տեսան, ուրախացան։ Արդեն Հակոբ ախպարս թուրքի բանակ էին տարել, ճանապարհին հայերին շարքեն դուրս էին հանել, տարել էին ձորին մեջը ամենքին սպանել։ Անանկ քի Հակոբ ախպարս մեր լեռան կռիվի ժամանակ արդեն չիկար...։

Թուրքերը չորս անգամ հարձակվան մեր վրա, ամմա ամեն անգամ աղվոր պատասխան տվինք անոնց։ Մեր Մուսա լեռան տղաները լավ կկռվեին, կնիկ, աղջիկ կօգնեին, կուժերով ջուր կբերեին խմելու։ Քանի կնիկ պատրոնդաշը կապած մեզ հետ միասին կկռվեին, մեկին ազգանունը Նաշալյան* էր, ան շատ քաջ էր...։ Պզտիկ չոջուխները ալ կապավոր էին դարձած, խաբար կտանեին աս ճակատեն՝ ան ճակատը...։ Ամենքն ալ գործի վրա էին։ Օր մըն ալ մեկ հատ թուրք մը էկել էր լեռին վրա, որ մեզի թալանի, մեր կնիկները բռնել, քարերով սպանել էին դրան, աֆերի՛մ կնիկներ։ Մեր լեռին վրա միշտ ճերմակ մշուշի պես ամպ մը կըլլար, գիտես քի աստված հատուկ ղրկած է, որ դուշմանը մեզի չէր տեսնար, ամմա մենք իրեն վերեն կտեսնայինք։ Թուրքերը կուգային՝ էկողը կսատկեր, էկողը կսատկեր.— Յալլա՛, յա Մուհամեդ, յալլա՛, յա Մուհամեդ,— կըսեինք ու էկողին կսատկացնեինք։ Թուրքերը երկու ժամ չկրցան դիմանալ, փախան...

Լեռին վրա անձրև կուգար, անձրևի կաթիլները կծակեին մարդու ջանը։ Մենք մտանք ժայռի մը տակ, թաքնվանք։ Մեզի հետ էր Շեյխ-Փանոսի տղան։ Ան գիրք մը ուներ, միշտ իր հետ ման կածեր, ըսինք.— Բաց գիրքդ, տեսնանք ի՞նչ կըսե, մեր վերջը ի՞նչ պիտի ըլլա։

Շեյխ-Փանոսի տղան գիրքը բացավ, սկսավ գուշակել, ըսավ.— Երկինքեն մերդիվեն՝ աստիճան մը պիտի իջնա, պիտի փրկվինք։

Ան ըսավ, ամմա մենք չհավատացինք, քանի որ քառասուն օրեն ավելի կռվում էինք՝ օր ու գիշեր, ալ ուժ չէր մնացել, ուտելիքն ու վառոդն ալ պակսած էր...։ Մեր թիկունքի կողմը Միջերկրական ծովն էր, հոն գիշերները խարույկ կվառեինք, որ դեմեն անցնող նավ ըլլա նե, տեսնա մեզի՝ մոտենա։ Օրվա մեջ ալ արդեն պատվելի Անդրեասյանը մեծ չարշաֆի՝ սավանի մը վրա կարմիր խաչը նկարած, կախել տված էր լեռին դոշը...։ Օրեր ետքը, վերջապես ծովին խորքը նավ մը երևաց։ Կըըկյաններուն տղան աղվոր կլողար, նետվեց ծովը, սկսավ լողալ։ Անոր վիզեն երկաթ տուփ մը կար կախված, մեջը ֆրանսերեն գրված նամակ մը կար։ Նավուն մեջեն դյուրբիններով՝ հեռադիտակներով կնային, կտեսնան, որ մեկը կլողա դեպի նավը, կօգնեն, նավ կբարձրացնեն։ Կըըքենց Մովսեսը հեմեն ծունկի կուգա, խաչ կհանե, ըսելու համար, քի քրիստոնյա ենք, քանի որ ինքը ֆրանսերեն չէր գիտեր, որ խոսա։ Գրված նամակը կհանե կուտա կապիտանին, անոնք կկարդան, կհասկնան, քի մոտ հինգ հազար հայ քրիստոնյա մուսալեռցիներ լեռին վրա աստծո փրկությանը կսպասեն։ Կապիտանը կհարցնե՝ դուք ո՞ւր եք, թշնամին ո՞ւր է, ինչքա՞ն ուժ ունիք։ Ութ օր դիմացեք, էրթամ իմ կառավարությանը հարցնեմ, իրավունք առնեմ, կամ՝ ձեզի զենք կբերենք, կամ՝ կուգանք ձեզ կազատենք։ Զենք չբերեցին, բայց զրահանավերով եկան մեզի ազատելու։ Փանոսի տղային ըսածին պես նավուն մեջեն մերդիվեն իջեցուցին, մենք վեր բարձրացանք։ Արդեն ամեն ժամանակ իմ մտքիս մեջն էր անոր ըսած խոսքերը, ես հույսս չէի կտրում, և ազատվանք...

Ֆրանսացիները մեզ արդեն գտել էին, երբ վերջին անգամ թուրքերը նորեն հարձակվեցին։ Այս անգամ Ֆախրի փաշան տասնհինգ հազար թուրք զորքով եկել էր մեր վրա, բայց մենք արդեն ծովեզերք իջել էինք. իր գալը ոչ մի օգուտ չտվավ թուրքերուն։ Ֆրանսիական նավերը եկան։ Կեշիե քաղաքի մոտ անգլիացիները դպրոց ունեին, մեր վիրավորներուն հոն էինք տեղափոխած։ Ֆրանսիական նավերը եկան մեզ առնելու։ Պետրոս Դմյակյանն ու Խաչեր Դումանյանը գնացին, խոսեցին ֆրանսիացիներուն հետը։ Մերոնք ուզեցել էին, որ ֆրանսական նավերը Անտիոք քաղա-

* Մուսա լեռան հերոսամարտում իրենց քաջագործությամբ աչքի ընկած կանանցից։

*քը ռմբակոծեն, բայց նավապետը չէր համաձայնել, ըսել էր. «Մեկ զինվորի մը համար հազար գնդակ կծախսեմ, բայց քաղաքի մը վրա մեկ գնդակ չեմ նետեր»։*

*Այդ ժամանակ հրաման եկավ մեր ղեկավարեն՝ Եսայի Յաղուբյանեն, քի արագացնենք, քանի որ թուրքերը երեք կողմեն շրջապատում էին մեզի։ Դամլաջըկեն դուրս գալու ժամանակ ամեն ինչ՝ յաթաղ, յորղան, թենջիրե, թավա, ամեն ինչ թողինք լեռը։ Ամեն մարդ ինչ խորոզ, կով, ուլ ուներ, խփեց, սպանեց որ դուշմանի ձեռքը չընկնի։ Ես այծերի սյուրի ունեի, չըյմշեցի սպանել, թողեցի ազատ, բայց նավուն մեջեն թնդանոթով խփեցին, որ դուշմանին չմնա...*

*Մենք արդեն նավի մեջն էինք։ Նավի ծխնելույզեն ծուխ էր ելնում։ Դըմլաղենց* Պետրոսը սինյալ՝ նշան կուտար, քի ինչ պիտի ըլլա, ինչպես պիտի ըլլա...։ Թուրքերուն գնդակներն արդեն շոգենավին սյուներուն էին խփում...։ Տոպրակների մեջ ավազ էր լցված ու պարիսպի պես իրար վրա շարված, որ գնդակները մեզ չդիպչեն...։ Թուրքերուն գնդակները կուգային, կմտնային ավազի տոպրակներուն մեջ. մեզ չէին հասնում...։ Շոգենավը հեռացավ ծովափեն, որ թուրքի գընդակներեն պաշտպանվի, գնաց ծովի խորքը, խարիսխ գցեց։ Ֆրանսացի հրամանատարը մեզ հարցրեց՝ այդ գնդակները ո՞ր տեղեն են գալիս։ Մենք ցույց տվինք դուշմանի կրակի տեղերը։ Նավի վրա թնդանոթ կար, թնդանոթը ըսկսավ խփել Կաշիեի ղշլաղը՝ զորանոցը, բոմբան գնաց հոն պայթեցավ... Ալ ձայն չելավ թուրքի կողմեն։ Այդ ժամանակ, եթե ֆրանսացին մեզ հրաման տար ու զենք, մենք կհարձակվեինք, անոնց հունդը կջընջեինք...*

*Կնիկ, չոջուխ՝ բոլորը մտած են նավը։ Նավը շարժվեցավ։ Ահագին ժամ էրթալեն ետքը ֆրանսացիները գերմանական նավ մը գերի առին։ Մենք փոխվանք այդ գերմանական նավը։ Ան մեզ տարավ Պըրտը-Սաիդ՝ Պորտ-Սայիդ...*

*Իջանք Եգիպտոսի հողին վրա։ Անապատի դեղին ավազը ոտքերնիս կրակի պես կվառեր։ Տեսանք շարքերով բրեզենտե չադըրներ՝ վրաններ, լարել են մեզի համար, մեջը պառկելու անկողին, ամեն ինչ...։ Ան ժամանակ Նուբար փաշան Եգիպտոսի մեծերեն էր, ողորմի իրա հոգուն, ան շատ օգնեց մեզ ալ, Դեր Զորի հայ որբերուն ալ։ Հոն մեր երեխեքը անապատի ավազի վրա հայերեն տառերը կգրեին, կսորվեին, մինչև բացվավ, վրանի մը տակ, Սիսվան վարժարանը, քովն ալ՝ հիվանդանոց մը... Հոն անգլիացի կապտններ եկան, մեզի մարզանք ընել կուտային՝ ուան, թու, ռայթ, թու (մեկ, երկու, աջ, երկու կըսեին...)։ Մենք ալ կքայլեինք։ Այդ հրաման տվողը, որ անգլիացի էր, մեզի ըսավ.— Դուք ֆրանսացիի կողմեն եկեք, անցեք մեր կողմը։*

*Մենք ըսինք.— Ֆրանսացին մեզի ազատեց, մենք ֆրանսացիին կողմը պիտի ըլլանք։ Հոն Մըլեհը եկավ, մեզի զտավ։ Ետքը մենք կամավոր գրվեցանք ֆրանսական բանակին մեջը, Հայկական լեգեոնի հիմքը դրինք։ Ամեն կողմեն՝ Խարբերդեն, Սեբաստիայեն, Արաբկիրեն, Հուսենիկեն, Կիլիկիայի ամեն կողմերեն հայ քաջերը եկան, միացան մեզի, գացինք Նաբլուսի ջեփեն՝ ճակատը, կռվեցինք, շահեցինք...։ Անգլիացին մեր հայ մեծերուն ըսավ.— Դուք մեր թագավորեն ալ հարուստ եք, որ աս տեսակ քաջ կտրիճներ ունիք...*

*Ամեն մեկիս դրամ տվին, որ հաղթել էինք Արարայի ճակատամարտին**...*

*1919 թվին բոլորին իրավունք տվին ետ երթալ իրենց տեղերը. մենք ալ գացինք Մուսա լեռ։ Տեսանք մեր տուները այրված, փլցուցած, քանդված...։ Սկսանք շինել, շտկել, այգի տնկել, ծառ, ծառաստան աճեցնել։ Վերջն ալ Մուսա լեռան վրա հուշարձան շինեցինք՝ մեզ ազատող նավին ձևով՝ խաչն ալ վրան... Հանգիստ ապրեցանք մինչև 1939 թիվը, երբ ֆրանսացին ու անգլիացին մոռցան հայերուն տված մեծ-մեծ խոստումները, թուրքին նվեր տվին Ալեքսանդրեթի սանջակը՝ Մուսալեռն ալ հետը։ Է՜, մենք ի՞նչ պիտի ընեինք, թուրքին հետ ապրի՞լ կրնայի՞նք։ Ամեն ինչ հավաքեցինք, ճամփա ելանք դեպի Սուրիայի ծովեզերքը՝ Պասիտի դաշտը։ Այդ գիշերը մեկ անձրև մը սկսավ տեղալ մեր վրա, մեկ անձրև մը, աստված հեռու տանի, ամեն ինչ թափ-թաց եղավ...։ Մեր ժողովուրդը ուր փախչելը չգիտեր, ծառ ալ չիկար, որ տակը մտնայինք։ Ամբողջ գիշերը անձրևի տակ սկսանք պարել, որ տաքնանք։ Առավոտուն շատերը արդեն հիվանդ էին, հիվանդներն ալ՝ մեռած։ Ետքը մեզի տարին Այնճար, հոն ալ բաց դաշտ էր, սկսանք նոր տուներ շինել, նոր այգիներ ցանել, ջուր բերինք, քանի մը տարիեն դրախտ դարձուցինք Այնճարը։ Ալ նարինջ, լիմոն, ինչ միտքդ կանցնի՝ կբուսներ..*

*1946 թվին մեր Հայաստանեն լուր եկավ, թե ով կուզի՝ թող գա Հայաստան, շատնանք, միանանք, որ թուրքի ձեռքեն մեր հողերը ետ առնենք։ Տուն, տեղ, այգի, ամեն ինչ եղածին պես ձգեցինք, ելանք, եկանք Հայաստան։ Երևանի Մալաթիա թաղամասը այն ժամանակ շատ տուն չիկար։ Ես, կինս՝ Իսկուհին, հինգ տղաներս ու երկու աղջիկներս սկսանք նոր, երկու հարկանի քարաշեն մեծ տուն մը շինել։ Ես աշխատում էի Մոտիկի կոլխոզը, տղաներս շինարար էին։ Երևանի մեջ ինչքան մեծ շենք կա՝ վրան աշխատած են՝*

---

* *Դըմլաքյան ազգանվան բարբառային ձևն է։*

** *Նկատի ունի հայ կամավորների նվաճած փայլուն հաղթանակը Արարայի մոտ, Պաղեստինում։*

Մատենադարանը, ՑեԿան*, Հրապարակի շենքերը, սպորտային համալիրը, ուրիշ շատ մը շենքեր շինած են։ Երբ համալիրը վառվում էր, մենք մեր տունեն տեսնում էինք, Սմբատ տղաս երեխի պես լաց էր լինում, չէ՞ որ ինքն ալ շատ ամագ ուներ վրան...։ Հիմա բոլորս ալ մեկ բակի մեջ կապրինք։ Տղաներուս ամեն մեկը իր տուն, տեղը ունի։ Ես ալ թոռներով, ծոռներով կուրախանամ. փառք աստծո։ Տե՛ս, պարտեզ ալ ունինք, պառավս կցանե, կջրե, կզբաղվի։ Ես ալ փողոցի կողմը խարաբա հողը կամաց-կամաց քարերեն մաքրեցի։ Տե՛ս, հիմա կանաչի, բան-ման ցանած եմ. ափսոս է հողը պարապ մնա... Արդեն հարյուր հինգ տարեկան եմ, ոտքս, ձեռքս դահա կբռնե, ամեն տարի սեպտեմբերին մեր հարիսայի օրվան անհամբեր կսպասեմ, որ մեր ամեն կողմի մուսալեռցիներու հետ երթանք մեր Նոր հուշարձանին քովը, գիշերով հարիսան եփենք ու մատաղի պես բոլորին բաժնենք, որ ուտողը իմանա, որ մուսալեռցիները, հարիսայի հատիկներու պես իրար միացած, կռվեցան իրենց ազատըլխի՝ ազատության համար**...

## 7(228).
## ՄՈՒՍԱԼԵՌՑԻ ԲԱԼԱԲԱՆՅԱՆ ՄՈՎՍԵՍԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1891 Թ.)

Ես հողագործ էի։ Ցորեն, խաղող, թուզ ունեի։ Շերամ ալ կպահեի։ Չորս տղա ունեի, կնկաս հետ խաղաղ կապրեինք, երբ 1915 հուլիսի 13-ին թուրք պետությունից հրաման էկավ, որ յոթը օրվա մեջ պիտի գաղթենք։ Թուրքը արդեն 1914 թիվեն պատերազմի մեջ էր մտել։ Հայաստանի ժողովրդին սկսել էր նեղել, գաղթեցնել։ Մեր Խըդըր-Բեկի հնչակյանները պարոն Աղասիի հետ գնացել էին Զեյթուն՝ կռվելու թուրքին ղարշա (դեմ)։ Անոր համար, երբ մեր Մուսա լեռան կռիվը սկսանք, պարոն Աղասին ըսավ. «Ասոնք իմ ցանած սերմերն են...»։ Վերջը՝ հերթը հասավ մեզ։ Ով որ թուրքական բանակում զինվոր ուներ՝ չպիտի գաղթեր։ Բայց անոնց ալ հետո աքսորեցին...

Մեր Մուսա լեռան յոթ գյուղերը ժողով ըրին, որոշեցին դիմադրել։ Երդում արեցին. «Ես հոս ծնունծ իմ, հո՛ւս ալե բըր միռնիմ, իս չըմուրթո յասսեր քիմը, դուշմանեն յամրեն վըրքը չարչարանքում միռնել, թվունգը ծառից գը միռնեմ, յաս դիղը թաքե մուհաջըր (գաղթական) չը՛մ ուրթո» (Ես այստեղ եմ ծնվել, այստեղ էլ պիտի մեռնեմ, ես չեմ գնա ստրուկի պես թշնամու հրամանի տակ չարչարանքով մեռնելու, հրացանը ձեռքից կմեռնեմ, միայն թե գաղթական չե՛մ գնա)։

Յողուն Օլուկ գյուղում տեր-Աբրահամ Գալըստյան երեցը կըլլա առաջնորդ։ Ժողովուրդը սկսավ լեռը բարձրանալ։ Որոշել էին հավի ճուտ չթողնել գյուղում։ Հազիվ լեռան կեսն էինք բարձրացել, մոտ երկու հազար թուրք ասկյար եկավ։ Մենք ունեինք միայն լցնովի որսորդական 300 հրացան, իսկ թուրքերը շա՜տ ու շա՜տ էին։ Սկսեցինք կռիվը։ Թուրքերը կկարծեին, քի լեռին տակը ֆրանսական զինվոր կա պահպըտած ու մեզի կօգնի, այնքան որ մերոնք կտրիճ էին ու ամեն կողմեն վրա կուտային։ Ադ երկու հազար ասկյարի մի մասը փչացավ, մի մասն ալ փախավ։ Չորս-հինգ օր անցավ, եկավ տասը հազար զորք։ Նրանք ալ մի գիշեր մնացին Թաթարալանգի տայրը (հարթավայրը)։ Ադ տեղը Սելևկիան նավահանգիստ էր եղել։ Սելևկիա իսկալեն (նավահանգիստ) շեն վախըտը թաթարնեն իգիր ին, զան դեղեն ժողովուրդը ջարթիլին, անուր համուր ադ դեղեն անունը գուասվա Թաթարալանգ։ Ադ խոսքը թուրքերեն է, յանի՝ թաթար ալան-թաթարնեն իգուծ ին, առուծին զադ դիղը։

Միգալ ուրը, սկսան կռվիլ։ Մթնելու վախըտը ադ դուսը հազար ասկարնեն փախուն։ Ան իրիգուն սաբախդան մաշունցը (մացառների) մեջը զասկարը գուղաթուխերիք (կհետապնդեինք)։ Ասկարը փախավ կնուց, շուդը՝ սադգիցուվ։ Քանի ուր մը սունրա Լավշուց (Լավշիայի — թրքական գյուղաքաղաք) մակդուբ (նամակ) մը իգիք, քի. «Դըսնհենգ հազար թուրք ասկար Դուրգը դաղին (լեռան անունն է) հուչում գուկուն ծիր յըրինեն». Զադ մակդուբը կրուծ է Լավշուց մուդիրը (քաղաքապետ) մակդըբեն միջը կրվուծ է. «Միր գդըրաչնիրը թըղ ուկուն սիլահում թասլիմ ըննուն, սունրա չուլոխ-չոջուխեն վիրընեն սաբաբ թըղ չընուն։ Աս ուկուղ ասկարը, նա՛ իման կիդե, նա՛ Աստուծ կիդե, նա՛ Քրիսդուս, նա՛ հավուդ գունա (Ձեր կտրիճները թող զենքերով գան ու հանձնվեն, հետո ժողովրդի արյան պատճառ չդառնան։ Արա եկող զորքը ո՛չ խիղճ գիտի, ո՛չ Աստված, ո՛չ Քրիստոս և ո՛չ էլ հավատ ունի)։

Մեզք առունք.— Մինք ադ մակդըբեն ջուղաբ չդունք (մենք այդ նամակին պատասխան չտանք). յիփըր գուկուն, զիրինց խասաբը (հաշիվը) գուղուրթինք (կճշտենք)։

* Նկատի ունի Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտկոմի շենքը, որը հիմա դարձել է ՀՀ Գերագույն խորհուրդի շենքը։

** 1990 թ. գարնանը վախճանվեց Մուսա լեռան հերոսամարտի վերջին մասնակից Մովսես Փանոսյանը՝ առանց տեսնելու Հայաստանի Անկախության գործընթացի սկիզբը։

*Համու իգեն դաչգընեն (տաճիկներ, թուրքեր), ուկուղը սադգիցուվ, ուղուղը սադգիցուվ, յալլա, յա Մուհամեդ, յալլա, յա Մուհամեդ... Ադ սակարնեն ըրգը սըհաթ չըգարցին տիմանիլ, փախուն...*

*Մի օր, ինչպես ամեն օր, կրակ էինք վառել, որ հեռուեն անցնող նավերը մեզ նկատեն։ Տիգրան Անդրեասյանն ալ գրել էր մեծ գիրերով. «Սովե՛ նու», ֆրանսերեն կնշանակեր՝ «փրկեցե՛ք մեզ»։ Ճերմակ չարշաֆի (սավան) վրա ալ կարմիր խաչի նշան էինք կարել։ Հեռուեն մի նավ երևաց, նավուն մեջեն զինվոր մը տեսեր է մեր գրած դրոշակը։ Կապտանին (նավապետ) ըսեր է, կապտանը չի հավատացեր, եդքը կապտանը դուլբինը (հեռադիտակը) կդնե, կկարդա գրվածը. կըսե.— Ասոնք հայ են։*

*Ադ ժամանակ մեր Հաջի Հաբիբլի գյուղացի Մովսես Կըրկյանը մերկացավ, իրեն ջուրը նետեց։ Ան աղեկ կլողար։ Վիզեն ալ թենեքե՝ տուփ մը կար կախված. մեջը ֆրանսերեն նամակ կար գրված։ Լողալով կհասնի նավի մոտերը։ Նավին անունը «Կիշեն» էր։ Նավին մեջեն կտեսնան, պըզտիկ նավակ մը վար կիջեցնեն, մի տաս զինվոր մեջը, կուգան Կըրկյանին ալ կհանեն նավակին մեջը։ Կըրկյանը ասոնց տեսածին պես խաչ կհանե, այսինքն՝ քրիստոնյա եմ։ Ասոր կտանին նավապետին քովը։ Թենեքեի մեջի ֆրանսերեն նամակը նավապետը կկարդա։ Նավին մեջը հարյուրապետ կապիտան մը կըլլա հայ՝ Տիրան Թեքեյան անունով։ Ան ալ հայերենով հարց կուտա.— Դուք որտե՞ղ եք... Թշնամին ինչքա՞ն է...։ Ինչքան ուժ ունիք՝ դիմացեք։*

*Նավապետը ասում է. «Ոչ մի բան չեմ կարող անել, ավելի զենք չունեմ, որ ձեզ տամ։ Նավեն դուրս զինվոր չեմ կրնար հանել, տալ ձեզ։ Բայց ադմիրալս Պորտ Սաիդ է, անոր հեռագիր կտամ, ան ինչ պատասխանե, անանկ ալ կընեմ»։*

*Վերջը հեռագիր կուտա։ Ադմիրալեն պատասխան կուգա. «Մենք անտեղը ճակատ բացելու իրավունք չունինք, մեր զորքը քիչ է, միայն ութ օրեն անոնց կրնանք փոխադրել Պորտ Սաիդ»։*

*Ութ օրեն հետո եկան մեզ տանելու։ Սեպտեմբերի 14-ին ազատվեցանք լեռեն։ Ամեն ինչ ձգեցինք լեռը, միայն հոգինիս ազատեցինք։*

*Պորտ Սաիդում, ավազներուն վրա, վրաններու տակ կապրեինք։ Ամեն մի 25 վրանը մի թաղ էր, մի վերակացու-չաուշ ուներ։ Անտեղ որ գացինք, ոչ մի բան չկար, հացը անգամ դուրսեն կուգար։ Ամեն ինչ շինեցինք, արհեստավորները սկսան աշխատիլ։*

*Պորտ Սաիդը մնացինք չորս տարի։ Մինչև 1919 թ., եդքը նորեն վերադարձանք Մուսադաղ։ Արդեն ֆրանսացին մտած էր։ Ֆրանսացին ադ թուրք վայրենի ժողովրդին անանկ ըրավ որ... վերջը անա՜նկ եղավ, որ ոչխարն ու գայլը մեկ տեղ կարծեիր։ Մի աղջիկ, մի կնիկ կես գիշերը գնար, մազի թելին չէին դիպնար։ Ֆըրանսըզը հոքումաթը (կառավարությունը) դուզան (կարգուկանոն) մը դրուձ իր սանջակին, քի կալը իլան մակեն միգ դիղը կարձեիր (գայլն ու գառը միասին էին արածում)։ Միր ժողովուրդը հիչ միգ հոքումատը վըխտը զադ հանգստութինը դիսուձ չիր։ Այդ հուլը (վիճակը) քսուն դարա դուվից։ 1919 թ. Ֆրանսացին մտավ սանջակ*։ 1939 թվին դուրս էլավ, քաշվեցավ սանջակեն։ Ամմա մեզի չմոռցավ։ Ֆրանսացին 21 միլիոնանյան ոսկիի հողամաս գնեց, մեզի տարավ Այնճար. Այնջուռ-սափորի աչք կնշանակե արաբերեն։*

*Այնճարն ալ ամայի՜, անջո՜ւր, բա՜ց դաշտ էր։ Աճեցուցինք, բուսցուցինք, շինեցինք, սարքեցինք։ 1946 թվին ալ թողեցինք ամեն ինչը՝ եկանք Հայաստան, ըմը դահա Ջեբել մուսացիք** մնուց Այնճար։ Ջեբել մուսացիք սիրմըվուձին յախշուրը չուրս տենը՝ Ամերիկա, Ֆրանսիա, Մըսըր (Եգիպտոս), Բաղդուդ (Բաղդադ), Ֆալեստին (Պաղեստին), Թուրքիա, քանե մը ընդանիք ալե մնացուձին Ջեբել Մուսան...*

## 8(224).
## ՄՈՒՍԱԼԵՌՑԻ ԻՓՐԵՋՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1896 Թ.)

*Երբ Հյուրյեթ (Ազատություն) եղավ, վերջը 1911 թ. ասկյար հավաքեց թուրք կառավարությունը։ Մեր գյուղեն 7—8 հոգի գնաց, ախպերս էլ գնաց։ Դաշնակները Անդրանիկին ըսին.— Գնա՛, թուրքերուն հետ բարիշիր, հիմա էնվերն է, ուրիշ ժամանակներ են։*

*Անդրանիկը պատասխանեց.— Ես չե՛մ երթար. անոնց ձեռքերը արյունո՜տ են։*

*Հետո 1914 թ. սեֆերբելիք սկսավ, այսինքն՝ զորահավաք։ Ով անցավ ձեռքերնին, առին տարին, ով կրցավ փախիլ, փախավ։ Թուրք պաշտոնյաներ էկան ինչքան անասուն ունեինք բոլորը հաշվառեցին՝ ձի, մալ, կով, որ ուզած ժամանակը հավաքեն։*

*Հետո եկավ 1915 թ., ուրբաթ օր մըն էր։ Ե-*

---

* *Արարայի հաղթանակից հետո Կիլիկայի վերահըսկողությունը հանձնվեց նախ՝ Անգլիային, ապա՝ Ֆրանսիային։*

** *Ջեբել Մուսա— Մուսա լեռան արաբերեն անվանումն է։*

կավ մյուդիրը (գյուղապետը), նամակ մը բերավ, ըսավ.— Էս նամակը չեք բանար, մինչև ես չիգամ։ Գա՛լ ուրբաթ ես կուգամ։

Գնաց։ Ուրբաթը լրացավ, եկավ, նամակը բացավ, ըսավ.— Ձեզի 8 օր պայմանաժամ, ինչ-որ ունիք ծախեք, առեք, ձեզ պիտի աքսորենք։

Մենք ժողով ըրինք, որոշեցինք լեռը ելլալ։ Էդ ութ օրվա մեջ ամեն մարդ ինչ որ հոգի ուներ Բիթիասի, Խըդըրբեկի կողմեն անասունները տարինք՝ շուն, կով, էշ, տավար, սարը բարձրացուցինք, քանի որ ժողովուրդը գիտե, որ պետության ձեռքը երկա՜ր կըլլա։ Լեռը տարինք մեր ամեն ինչը՝ թենջիրե, թավա, ուտելիք, զենք, երկանք անգամ տարած էինք. ցորենը կաղայինք, ալյուրը հաց կշինեինք, սաջի վրա կշարեինք, կեփեինք, կուտեինք։ Աղը որ պակսեր, կերթայինք ծովի ջուր կբերեինք, կեռացնեինք, աղը կնստեր տակը, աղը մեզ պետք էր. անասուն շատ ունեինք։ Փայտերը կտրեցինք, թեք կտուրներով տունիկներ շինեցինք, մեջը մտանք։ Միայն մենք յոթը կողինք ունեինք, մեր բնակատեղերն էին Դամլաջըք[1], Սովուլըք[2], Գըզըլչըք[3], ջուրերուն քովը տեղավորվանք։ Թշնամին սկսավ մեր վրա գալ երեք կողմեն. մեկը Քաբուսիեի կողմեն՝ Շախուրդեն, մյուսը՝ մեր Խըդըրբեկի յոլատեղեն՝ ճամփի բերանեն, մեկալն ալ՝ Բիթիասցոց՝ Գյարմեր Կիդայնի[4] կողմեն։ Էդ իրեք տեղից կուգային մեր վրա։ Մենք՝ դեմերնին, մեր ետևը՝ ծովն էր, քարափը...

Առաջին կրակողը Մովսես Աբրահամյանը եղավ, «Հաթար» կըսեին անոր։ Մեր տղաները որսորդական հրացաններ ունեին, մի քանիսը բելջիկական տասնոցներ ունեին կամ՝ հունական։ Կռվանք։ Ադ թուրքի զինվորները չդիմացան փախան, գնացին։ Ահագին զինվոր մեռած թողեցին, գնացին։ Մենք իջանք անոնց զենքերը առինք, նորեն լեռը բարձրացանք։

Երկրորդ անգամ 200—300 թուրք զինվոր եկավ։ Ամեն տասնհինգ օրը մեկ նոր հարձակում կսկսեին մեր վրա։ Միշտ կիրակի առավոտ կըլլար. երբ մենք պատարագ կընեինք, անոնք՝ կհարձակվեին։

Մեր կռվողները բոլորը-բոլորը ութ հարյուր հոգի էինք, մնացածները՝ չոլուխ-չոջուխ, կնիկ, ծերուկ էին։ Մեր կենտրոնը ունեինք։ Ես ատրճանակ ունեի, իմը հին սիստեմի էր, որսորդական, երկու փողանի, իմը պատրոն չուներ, բարութ կըդնեի՝ գյուլլան մեջը, շատ հին սիստեմի էր։

Դեղձաձոր կըսեին ձոր մը ունեինք, շատ դըժվար, դիք ձոր էր էդ։ Թուրքերը փորձում էին անտեղեն վեր շուլըվիլ։ Մենք չորս հոգով՝ Կարապետը, որ թուրքի մավզեր ուներ, ես, Սեդրակ Ուրֆալյանը և մեկն ալ՝ հորեղբորս աղջկան փեսան։ էլանք, գնացինք Սինջարի դար։ Ադ զորանոցեն արևելք էր։ Ընտեղ կռվանք առավըտե մինչև երեկոյան ժամը 5—6-ը։ Հորեղբորս աղջկան ամուսինը՝ Հովհաննես Կուժանյանը, որին «ֆուադ» կըսեին, միայն ինքը տասնչորս թուրք սպանեց։ Ախպերս եկավ ըսավ.— Զըլլա՛, որ տեղերնեդ շարժվիք։

Ժամը հինգին էլա, որ գնամ զորանոց, տղաքը ըսին.— Որտեղե՞ն կուգաս։ Ըսի.— Սինջարի դարեն։

Տղաքը սկսան զոռ տալ. ամեն կողմեն գյուլլաները կուգային ծառերուն կկպնեին, մեզի՝ չէին կպնի։ Ադ ալ Աստծո կամքն էր։ Հրա՜շք էր։

Թուրքը հրաման տվեց՝ մեր լեռը կրակի տալ, ամմա լեռը չվառվեց, քիչ տեղ մը վառավ։ Հրա՜շք էր։ Հետո թուրքերը մեզ կըսեին, որ կռիվը կսկսեր՝ ճերմակ ամպ մը կուգար մեր լեռը կփակեր, անոնք մեզի չէին տեսնար, ամմա մենք իրենց կըտեսնայինք վերևեն. ծառերուն մեջեն։ Ադ ալ Աստծո հրա՜շքն էր... Գիշերով կիջնայինք լեռեն, բաղերեն պտուղ կհավաքեինք, որ տանենք ուտենք։ Մեկ օր լեռից իջանք, ես, հերս, մեր հարևան Մուսան։ Ասկյարները եկան ճիշտ գլուխնուս վրա կայնան, բայց մեզ չտեսան՝ գնացին։ Հրա՜շք է, չէ՞...

Գիշեր մըն ալ կրակ վառած ենք շուրջը նստած։ Մեկ էլ հերս էլավ կայնավ, գոտին շտկեց, մի պատրոն գոտիին մեջեն ընկավ կրակին մեջ, պայթավ, շա՜տ մարդ կար շուրջը, ո՛չ մեկին բան չէղավ։ Հրա՜շք է, չէ՞։ Աստված մեզ հետ էր...։

Արդեն մեր ուտելիքը, մեր պաշարը վերջանում էր կամաց-կամաց։ Քարափի կողմեն ճերմակ սավաններ կախեցինք վրան կարմիր խաչի նշանով, քովը կրակ վառեցինք, որ Միջերկրականի ծովեն անցնող նավերը մեզ տեսան։ Շատ օրեր ետքը մեկ հատ նավ մը եկավ ֆրանսական, մեզ ազատեց։ Ադ ալ Աստծո հրա՜շքն էր։

Երբ պարախոդը եկավ։ Լեռան երկու կողմի ճակատները մենք պահեցինք, որ ժողովուրդը մեջտեղեն իջնան, բարձրանան նավ։ Վերջին վայրկյանին Հաբեթ Վանյանը, Հովհաննես Լիջյանը վիրավորվան. նավը բարձրացրինք, բայց ծովի վրա մեռան, անոնց ջուրը գցեցին, ադ օրենք է եղեր։

Արդեն մեր նահատակներու գերեզմաններուն հողերը առանձին-առանձին սնդուկներու մեջ առած էինք, հետերնիս տարինք Պորտ Սաիդ, հետո ալ ետ բերինք Մուսա լեռ, հետո՝ Այնճար, մինչև Հայաստան բերինք հետերնիս։

Ամեն ինչ լեռը թողեցինք, մեր անասուննե՜րը, ամե՜նը մնացին թուրքին։ Իսկ կողինքները, մընացածը՝ վառեցինք, քանի որ ֆրանսացին ըսավ՝ միայն հոգինիդ կազատեմ։

Երբ որ գնացինք Պորտ Սաիդ, դիմում տվինք

---

1 Դամլաջըկ — կաթկթող ջուր։ 1921 թ. հոն շինեցինք մեր հուշարձանը հաղթանակին, ավազան սարքեցինք, ֆրանսիացի ժեներալը եկավ ծաղկեպսակ դրավ (Ս. Բ.)։

2 Պաղ աղբյուր (Ս. Բ.)։

3 Կարմիր աղբյուր (Ս. Բ.)։

4 Կարմիր գետին (Ս. Բ.)։

Ֆրանսիային, որ մենք կուզենք կռվիլ Թուրքին դեմը, միայն թե մեր Կիլիկիան մեզի տրվի։

Ֆրանսացին համաձայնվավ։

Օրին մեկն ալ ֆրանսական, անգլիական բըժիշկները եկան քննեցին մեզի։ Առողջներուն զինվոր արձանագրեցին, էնոնք որ մեծեր էին, դրեցին պահակ։

Մենք՝ ջահելներս վեց հարյուր հոգի էինք, որ Հայկական լեգեոնի հիմքը դրեցինք։ Հետո արդեն չորս կողմեն լսեցին, եկան ուրիշ տեղերի հայեր. եղանք տասներկու հազար հայ։ Մեզ տարին Կիպրոս՝ մարզվելու։

Մի օր հրաման եկավ։ Կիպրոսի Մանարկայում* ենք, ըսին.— Պատրաստվե՛ք, պատերազմ պիտի երթաք Թուրքին դեմը։ Գնացինք նավահանգիստը լցվանք։ Նավը էկավ, լցվանք մեջը։ Կիպրոսի ցամաքեն հեռացանք։ Մեր նավին ետևեն ուրիշ նավ մը կուգար, որ մեզ հսկի, որ ընդծովյա. բան չիգա մեր վրա։ Իջանք Բեյրութ։ Հանգըստացանք։ Հրաման էլավ՝ պիտի շարժինք դեպի Երուսաղեմ՝ Նաբլուս։ Ճանապարհին ութը ժամ գնում ենք ոտքով, գնում ենք, կանգնում՝ ուր որ ջուր կգտնանք։ Ամեն մեկին շալակը 35 կգ ծանրություն՝ աղիալ, պալատկա, պատրոն, ուտելիք։ Էնտեղ էլ ժամանակ մը անցավ, հրաման եկավ, որ Կիլիկիա՝ Ադանա պիտի էրթանք։ Լցրին մեզ շոգենավը։ Հասանք Իսկենդերուն։ Բաժանեցին մեզի։ Միտրալյոզ (ավտոմատ հրաձգող) կոմպանիան մնաց Դորտյոլ, մե մասը՝ Թոփրաքգալե, Ջահան։ Տարին մեզի Ադանա, հերթապահ կանգնանք. մինչև Կիլիկիա, Ադանան առած էինք։ Ուր որ հայ գտանք, հավաքեցինք. 115 հազար հայ կար հոն։ Զեյթունցիները չորս տարի լեռներում Թուրքերուն կոտորել էին, նրանց զենքն ու փողը վերցրել էին։ Դորտյոլում մի հայ սալդաթ անցել էր Ղարաքիլիսա գետը. ծեծեր էին Թուրքերը։ Հայերը վառել էին Թուրքերուն գյուղը։ Հավի ձագ չէին թողել Դորտյոլի և Իսկենդերունի արանքը...

Մեկ էլ ֆրանսացիները խաբար արեցին մեր օֆիսերին.— Հայերը իրենց պատրոնները թող տան։

Մենք ըսինք.— Չե՛նք տա։

Տասնութ մուսալեռցի էինք, մնացածները՝ դուրսեն հայեր էին։ Բոլորս ալ ըսինք.— Թուրքը եթե հարձակվի՝ մենք զենքով պիտի կռվի՛նք։

Էդտեղ մի բժիշկ կար քեսաբցի, գերի էր ընկել Թուրքերուն հետը, քանի որ Թուրքական բանակի մեջ էր։ Բայց կային նաև հայեր, որոնք Թուրքին բանակի մեջ ըլլալով հանդերձ, մեզ էին օգնում։ Օրինակ՝ Հայֆայի վրա կաթոլիկների մանաստըրում Թուրքական թնդանոթ էր դրված, որի քիթը պտտվում էր իրենց՝ Թուրքերուն կողմը. Թուրքերուն սպանում էր։ Պարզվեց, որ թնդանոթի գլուխը հայ տղա է եղողը և մեր օգտին էր կրակում. Թուրքերուն բանակին մեջ ահագին Թուրքերու կըփռե գետին։ Մեզի որ թողնեին, մենք հայերս ան ժամանակ մինչև հոս՝ Հայաստան կուգայինք։ Կազատեինք ամբողջ մեր հողերը։ 1919 ապրիլի 28-ին մեզ ազատեցին։ Մեզի Մերսին բերին, ճամփին գնացքի մեջ Թուրք որ տեսնում էինք, կըրակում էինք, մի հատ Ջակալյան մը կար, ըսավ.— Տղանե՛ր, ամո՛թ է, մե՛ղք է, աղ Թուրքը խեղճ գյուղացիները ի՞նչ մեղք ունին, որ սպանում եք. մենք էրթանք, մեզմե վերջը հոստեղի հայերուն կը ջարդեն...

Մերսին գնացինք, հանձնեցինք զենքերը, մեծ քրոջս Պորտ Սաիդը թաղեցինք, մորս ու մեծ աղջըկաս՝ Լիբանան, հերս, ախպերս, քույրս՝ Մուսալեռ...։ Երկու աղջիկներս, իրենց ընտանիքներով ու թոռներով, բոլորը քանվեց հոգի, Լենինականը՝ երկրաշարժեն մեռան 1988 թ. դեկտեմբերի 7-ին։ 40 վայրկյան առաջ ես ավտոբուս էի նստել, գալիս էի Երևան։ Ես 93 տարեկան՝ ողջ մնացի, անոնք՝ ջահե՛լ-ջիվաննե՛րը հողի տակն են...

## 9(225).
## ՄՈՒՍԱԼԵՌՑԻ ԳՅՈԶԱԼՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՊԱՏՄԱԾԸ[1] (ԾՆՎ. 1903 Թ.)

Գյուղում մեծ իրարանցում էր, բոլորը խառնըվել էին իրար։

Պատերազմի տարիներ էին։ Ես արդեն 12 տարեկան էի և շրջապատիս անցուդարձից բավական բան հասկանում էի։ Գյուղում կառավարության ներկայացուցիչները հաճախ գալիս էին զանազան հաշվառումներ կատարելու՝ զինակոչիկներին, անասունները, բերքը և այլն։ Արդեն 1914 թվականի աշնանը ընդհանուր զորակոչ հայտարարվեց և զենքի կոչեցին 18-ից մինչև 45 տարեկան բոլոր այր մարդկանց՝ բացի քահանաներից ու սարկավագներից։ Ժողովուրդը լուրջ մտահոգության մեջ էր։ Ովքեր չէին ուզում գնալ բանակ, 40—50 ոսկեդրամ փրկագին էին տալիս, բայց մի քանի ամիս անց նորից էին գալիս զորակոչի և նորից նույն փրկագինը և այլն, այնպես որ միայն մի քանի տղամարդ կարողացավ մնալ գյուղում։

Մենք ունեինք մի ուսուցիչ՝ պարոն Արոյանը, որ համարյա ամեն օր մեր տունն էր գալիս, հորս

---

* Որտեղ մարզվում էին հայ լեգեոնական կամավորները։

1 Բարձր գնահատելով մուսալեռցի մտավորական Գրիգոր Գյոզալյանի գեղարվեստական գրելաոճը, նպատակահարմար գտանք նրա ձեռագիր հուշերից մի հատված ներկայացնել։

*մոտ՝ որպես քահանայի ու քիչ թե շատ բանիմաց ու հյուրընկալ մարդու։ Պարոն Արոյանը լուրեր էր տալիս թերթերից, դեսից-դենից ու երկար զրույցի բռնվում զանազան հարցերի շուրջ։ Մեր տանը հաճախ գյուղի ավագանին էլ էր հավաքվում և մինչև ուշ գիշեր քննարկում էին տեղական ու միջազգային ամենատարբեր հարցեր։ Ես էլ մի անկյունում խցկված՝ լսում էի։*

*1915 թվականի մայիս ամիսն էր։ Պարոն Արոյանը սովորականի նման եկավ մեր տուն, բայց սովորականից շատ ավելի մտահոգ։ Հայրս այդ պահին զբաղված էր կողով հյուսելով։ Պարոն Արոյանը այդ նկատելով ասաց.— Տե՛ր հայր, երկաթե կողով հյուսիր, եղեգնյա կողովն այլևս մեզ պետք չի լինի։*

*Հայրս զգաց նրա հոգեկան խռովքը, զգաց, որ ինչ-որ լուրջ բան է տեղի ունեցել։ Հետո զրույցի ընթացքում պարոն Արոյանը մանրամասնորեն պատմեց իր հավաքած տեղեկությունների մասին։ Արդեն ասեկոսներից ժողովուրդը տեղյակ էր, թե տարբեր գյուղերում ու շրջաններում մարդիկ տեղահանվում ու քշվում էին դեպի անապատները, ենթարկվում զանազան տանջանքների, թե ինչպես աքսորականների հսկա թափորները ճանապարհին «մաշվում» էին, հաճախ բոլորովին անհետանում՝ ինչպես ամռանը սարերից եկող առվակը կիզահար անապատում։*

*Մինչ այդ մի քանիսն էլ հավաքվեցին ու երկար քննարկում էին գյուղացիների ապագան, փրկության հնարավոր ելքերը։*

*Զորակոչվածները երբեք էլ զենք չէին տեսնում, այլ գերմանական հրամանատարության ներքո աշխատում էին… երկաթուղու շինարարությունում՝ սոված-ծարավ, տանջահար լինում։ Ոմանք չէին դիմանում ու մեռնում էին։ Շատ զորակոչիկներ փախչում էին բանակից ու հասնում գյուղ, մնում էին թաքնված։ Ոստիկանները գտնում էին դասալիքներին ու նորից վերադարձնում բանակ։ Այս դասալիքները հետագայում մեկական «կայծեր» դարձան Մուսա լեռան ինքնապաշտպանության կազմակերպման գործում։ Սրանք իրենց փախուստի ճանապարհին հանդիպել են աքսորականների՝ «կարմիր կանանց» թափորներին, ականատես են եղել նրանց անպատմելի տանջանքներին։*

*Այդ դասալիքներից մեկն էլ իմ Սերոբ հորեղբայրս էր, որ արդեն երրորդ անգամ էր փախել բանակից։ Սովորականի նման մեր տանը հավաքվել էին տարեցները և ագահությամբ լսում հորեղբորս։ Վերջինս խոր հուզմունքով պատմում էր, թե ինչպես հայ երիտասարդները աշխատանքային գումարտակների դժոխային պայմաններում անշնչանում էին մեկ առ մեկ։ Պատմում էին, թե ինչպես թուրք հսկիչները բրտորեն տանջահար էին անում աքսորյալ կանանց, որոնցից շատերը շուտով մեռնում էին։ Այդ թափորները հազիվ էին հասնում անապատները և ճանապարհին խոշտանգումներից բոլորովին հալվում։*

*Հորեղբայրս, 35 տարեկան, այնպիսի կրքով ու անմիջականորեն էր պատմում իր իսկ աչքով տեսածները, որ ներկաներից շատերը խոր զայրույթով լցված հաճախ ընդհատում էին նրան՝ կյանքի գնով վրեժ լուծելու իրենց վճռականությունը, ոչ մի դեպքում գաղթի դուրս չգալու իրենց անմիջական որոշումն արտահայտելու համար։ Ոչ ոք չէր հավատում կառավարության խոստումներին, թե՝ ժողովրդի անվտանգությունն ապահովվելու է, թե՝ գաղթը ժամանակավոր է, շուտով հնարավոր պիտի լինի տուն վերադառնալ և այլն։*

*Վերջում հորեղբայրս հաստատորեն եզրակացրեց.— Այս իմ տեսածներից հետո ես վճռականորեն որոշել եմ գաղթի չգնալ, լեռ բարձրանալ ընտանիքովս՝ այնտեղ եղած մյուս գյուղացիների հետ միասին կռվելու մինչև վերջին շունչս, ընտանիքս իմ ձեռքով սպանել, բայց չհանձնել թուրք վայրագներին։ Դուք ինչպես կուզեք՝ այնպես էլ արեք, Աստված ձեզ հետ, բայց ես արդեն հաստատ որոշել եմ՝ լեռ պիտի բարձրանամ։*

*Այս ասելով հորեղբայրս կտրուկ վեր կացավ ու գնաց իրենց տուն։ Ասես բոլորը քարացել էին իրենց տարտամ մտորումների մեջ։*

*Ո՞րն էր ճիշտը՝ լեռ բարձրանալ, անհույս կռվել մինչև վերջ՝ միայն բարբարոսներին հանձնըված չլինելու համար, ամբողջությամբ ոչնչանալ թշնամու շրջափակման մե՞ջ, թե՞ ճանապարհին փախուստի ինչ-որ հնարավոր միջոցի հույսով գաղթի դուրս գալ։*

*Շրջանի գյուղերից արդեն ահագին ժողովուրդ բարձրացել էր լեռ, շատերն էլ բարձրանում էին դեռ։ Թուրք զինվորներն այդ ամբողջը տեսնում էին, բայց առանձնապես կարևորություն չէին տալիս, այն հաշվով, որ մի բուռ ժողովուրդ է, ի՞նչ պիտի կարողանա անել, ինչպես բարձրացավ, այնպես էլ պիտի իջնի։ Շրջանի պարետային կայազորը ժողովրդի լեռ բարձրանալը պարզապես ծիծաղելի էր համարում ու սառնորեն դիտում անցուդարձը։ Կառավարությունը բնականորեն մտածում էր, թե ինչ էլ լինի, միևնույնն է, միշտ էլ կարելի է ամենաշատը որսորդական հրացաններով զինված ամբոխի հախից գալ։*

*Վերջապես հայրս մեծ դժվարությամբ խզեց ճնշող լռությունը.*

*— Ոչ ոք չի կարող պատճառ ու պատասխանատու լինել ուրիշի համար։ Լեռ բարձրացողների ապագան պարզ է՝ պիտի կռվեն մինչև վերջ, հետո՝ թուրքերը մեծ ուժով պիտի պաշարեն լեռը և կամ թշնամին պիտի ջարդի բոլորին, կամ պաշտպանվողներն իրենք իրենց վերջը պիտի տան։*

Գաղթի դուրս եկածների վիճակն էլ մխիթարական չէ, բայց ճանապարհին ով ինչպես կարողացավ փրկվել՝ փրկվեց, գոնե փրկվողներ կլինեն։ Այնպես որ ամեն մարդ իր անելիքն ի՛նքը թող որոշի։

Բոլորը կամաց-կամաց ցրվեցին գլխիկոր, առանց մի խոսք անգամ ասելու՝ կարծես լեզունին կապ էր ընկել։ Ես իմ մեջ որոշել էի նույնպես լեռ բարձրանալ ու կռվել. վաղուց լցվել էի ատելությամբ ու վրեժխնդրությամբ։ Արդեն այլ առիթներով Հայրս բազմիցս ասել էր, որ ինքը նախանձում է իր եղբորը, որ նա ազատորեն կարող էր վճռել իր անելիքը, իսկ ինքը, իր քահանայական իր սև վեղարով, իրավունք չուներ հակառակ գնալ ժողովրդի մեծամասնության կամքին, և ինչու չէ, պարտավոր էր որոշ ուղղություն էլ հենց ինքը տալ, քանի որ ինքը միշտ ժողովրդի հետ էր, ժողովրդի մեջ, գյուղի ու շրջանի պատասխանատուների ու ավագանու հետ։ Խիստ մտահոգիչ էր նաև այն իրողությունը, որ Սասունից երկար ժամանակ ոչ մի լուր չկար, Զեյթունը դատարկվել էր, Քեսաբի էլ ժողովուրդը որոշել էր գաղթել։ Հայրս միշտ մտածում էր, թե ի՛նչ հրաշք կարող էր լինել, որ լեռ բարձրացածները որևէ կերպ փրկվեին։ Միևնույնն է, թուրքերը ծայրահեղ դեպքում երկար պաշարումից հետո, վաղ թե՝ ուշ սովահար կանեին ողջ մնացածներին։ Իսկ գաղթի ճանապարհին որոշ ձեռներեցներ ու ճարպիկներ գուցե մի հնարք կգտնեին գաղթականների թափորից մի կերպ ճողոպրելու։ Իհարկե հորս հետ համակարծիք էին նաև ուրիշներ և այդպիսի մտածումների հետևանքով գյուղացիներն ընկել էին մոլոր տարակուսանքի մեջ և համարյա ամեն ինչ տեղի էր ունենում տարերայնորեն։

Այնուամենայնիվ մեր ընտանիքը որոշել էր բարձրանալ լեռ։ Գիշերը, երբ հայրս ժողովի էր դեռ, մայրս մի ձեռք անկողին շալակին, քույրս՝ զանազան իրերով ծանրաբեռնված, ես էլ մի կողով ձեռքիս՝ մի խումբ կազմած ճանապարհ ընկանք դեպի Սերոբ հորեղբորենցս տուն, որպեսզի նրանց հետ միասին լեռ բարձրանանք։ Հասանք հորեղբորենցս ու սպասում էինք դարպասի մոտ՝ մինչև նրանք էլ դուրս կգային։

Այդ միջոցին՝ հայրս տուն վերադարձին մեզ հանդիպեց ու բարկացավ, թե ինչու իրեն չենք սպասել։ Խիստ ջղային վիճակում էր, կարգադրեց, որ անմիջապես տուն վերադառնանք՝ ասելով, թե վերջնականապես որոշվել է գաղթի դուրս գալ, քանի որ արդեն Քեսաբն էլ է դատարկվել։

Ես ներքուստ վառվում էի ու ափսոսում, որ դեռ շատ փոքր եմ, չեմ կարող հակառակվել. լուռ ու մունջ պետք է ենթարկվեի ծնողքիս կամքին։

Գյուղից դուրս գալով՝ առավոտյան հայրս կանչվել էր կայազորի պետի մոտ՝ դպրոց։ Կեսօրն անց վերադարձավ՝ իր հետ բերելով մի էշ։ Հայրս կարգադրեց առաջին անհրաժեշտության իրերը պատրաստել գաղթի դուրս գալու համար։ Ինքը որսորդական հրացանն ու մի քանի բան վերցրեց գնաց դպրոց։ Կարգադրվել էր ամեն տեսակի զենք, ինչպես նաև այն ամենը՝ ինչ գյուղացին հարկ կհամարեր պահել մինչև գաղթից վերադառնալը, բերել եկեղեցի։ Նույնիսկ պատվիրվել էր ամեն ինչի վրա տիրոջ անունը գրել։ Ի՜նչ վեհանձնություն, վստահություն ներշնչելու ինչպիսի՜ հնարամիտ եղանակ։ Կայազորի պետը նույնիսկ տեր Մարկոսին կարգադրել էր բոլորի պահվելիք իրերը տեղավորելուց հետո եկեղեցու դուռը կողպել ու բանալին վերցնել իր մոտ (կայազորի պետն իբր հաշվի է առել տեր Մարկոսի տան անմիջապես եկեղեցուն մոտ լինելը)։

Արևամուտին քիչ էր մնացել, երբ ոստիկաններն արդեն շտապեցնում էին պատրաստվել՝ ճանապարհ դուրս գալու։ Հայրս ինձ նստեցրեց էշին բարձած անկողինների վրա, մեր ընտանիքը, մյուսների նման, շարժվեց դեպի եկեղեցի։ Մեզ միացավ նաև Սարգիս հորեղբորս ընտանիքը, և մեր 13 հոգուց բաղկացած խումբն ուղղվեց դեպի Կալեր։

Կալերում արդեն ամբողջ գյուղն էր հավաքվել, ամենուրեք լաց ու կոծ էր լսվում, աղմուկ ու ժխոր...

— Լռությո՛ւն,— գոռաց ուղեկցողների պետը.— Առա՜ջ... առանց աղմուկի...

Եվ ամբոխի մեջ խլրտուքն ընկավ, մարդկանց քարացած կույտը գետի պես սկսեց հոսել դեպի շրջանային կենտրոն՝ Կեշիե։

Արդեն արևը մայր էր մտնում։ Հանկարծ լսվեց տեղի կայազորի՝ գյուղում ու շրջապատում ցրված զինվորների զորահավաքի փողերի ձայնը... Խուլ աղմկող թափորի մարդկանց մի սարսուռ պատեց, ու նորից տիրեց լռություն։

Հարթավայրում ճանապարհն անցնում էր Թաթերի գյուղի միջով։ Գլխաշորով փաթաթված կանայք անաղմուկ լաց էին լինում, մինչ ապշահար փոքրիկ երեխաները կախ ընկած նրանց փեշերից զարմանքով դիտում էին տխրամոլոր, տարօրինակ ու խառնիճաղանջ «շքերթը», որ գնում էր հորիզոնում լուծվելու՝ անորոշության մեջ կորչելու...

Ով էր պատկերացնում ու հասկանում, թե ի՛նչ ողբալի, ահավոր ու անիրավ սպանդ էր կատարվում պետական մասշտաբով «ժողովրդավար», «զարգացած», «առաջադեմ» երկրների աչքի առաջ, նրանց մասնակի հովանավորությամբ ու քաջալերանքով և, իհարկե, մեղսակցությամբ։

Շրջկենտրոնի փողոցներով անցնելուց հետո, կեսգիշերին մոտ հասանք զորանոց։ Բեռներն ու շալակներն իջեցրինք՝ հանգստանալու և բոլորովին հոգնած լինելով՝ հոգեպես ու ֆիզիկապես, շատ շուտով քնեցինք։

*Այսպես անցավ մեր երթի առաջին օրը։*

*Առավոտ նախաճաշեցինք բացարձակ անտրամադիր, ուղղակի սովածությունը հագեցնելու համար։ Ոմանք շտապեցին շրջկենտրոն (մոտ կես ժամվա ճանապարհ)՝ ուտելիք բերելու։*

*Հետևեցին անորոշ սպասումի տանջալից ժամեր։ Մեծահասակները համարյա անելիք չունենալով քննարկում էին օրվան վերաբերող զանազան հարցեր, փոքրերն էլ կա՛մ խաղում էին, կա՛մ մեծերի զրույցին հետևելով մե՛կ սրա բերանին էին նայում պշշահար, մե՛կ՝ մյուսի։*

*Կեսօրն անց կարգադրվեց հավաքվել ու պատրաստվել մեկնելու։ Հայտարարվեց, որ տղամարդիկ անմիջապես պետք է հանձնեն կայազորին իրենց մոտ եղած դանակները, մկրատ կամ զմելի, և իհարկե, որևէ հրազեն, որ պատահաբար մնացած կարող էր լինել։ Հայտարարվեց, որ խուզարկություն է լինելու, հրամանին չենթարկվողները խստիվ պատժվելու են տեղն ու տեղը՝ առանց դատ-դատաստանի։ Հավաքեցին ամեն կասկածելի իր այնպես, որ ժողովուրդը դարձավ բոլորովին անվտանգ մի ամբոխ՝ նույնիսկ զինված մի երեխայի քմահաճույքի առարկա։*

*Մայրամուտին մոտ հրահանգվեց պատրաստվել մեկնելու։ Ծռուղեռն սկսվեց։ Իրերը բարձեցին էշերին ու միմյանց շալակը։ Հայրս ինձ նորից դրեց իշու վրա բարձած անկողիններին, քրոջս, որ ինձնից մի երեք տարով մեծ էր, կարգադրեց իշու համետի փոկից պինդ բռնել, որ մթանը հանկարծ չլինի թե միմյանց կորցնենք։*

*Եվ այսպես, կարավանը ճամփա ընկավ դեպի Անտիոք՝ շրջանի խոշորագույն քաղաքը։*

*Այսպես էլ ավարտվեց մեր ոդիսականի երկրորդ օրը։*

*Ամբողջ գիշերը գնացինք տարտամ ու գլխիկոր։ Իշու վրայի անկողիններին նստած, համեմատաբար հանգիստ լինելով, երբեմն ես ննջում էի։ Մեծ դժվարությամբ անցանք Որոնդեսի երկու վտակները՝ մեծ ու փոքր Գարաչայները, որոնք հոսանքի մեր ճանապարհը հատող մասում 20—30 մետր լայնություն և մոտ կես մետր խորություն ունեին և կամուրջ էլ չկար։ Ցերեկով դժվար էր այդ քարքարոտ գետակներն անցնելը, ուր մընաց գիշերը, այն էլ շալակներով բեռնավորված, երեխաներով ու ծերերով։*

*Առավոտ, մոտ ժամը իննին-տասին հասանք Անտիոք։ Այն հիմնականում փռված էր Որոնդեսի ձախ ափին։ Մենք մնացինք գետի համարյա ամայի կողմում, որտեղ դպրոցն էր և գերեզմանատունը։ Ժողովուրդը տեղավորվեց դպրոցի ներսն ու դուրսը, ինչպես նաև գերեզմանատան մոտակայքում։*

*Որոշ ժամանակ անց պատանիներին ու մեծահասակ տղամարդկանց հավաքեցին ու խցկեցին դպրոցի առաջին և երկրորդ հարկի երկու սենյակները (արդեն միջին տարիքի տղամարդ չկար, բոլորին տարել էին բանակ)։ Նորից ստուգում ու խուզարկություն։ Շուտով ժողովրդի մեջ տարածվեց «կոտորելու» շշուկը։ Բոլորն իրար անցան, լաց ու կոծ, խուճապ։ Նույնիսկ մի կին ուզեց իր գրկի երեխային գետը գցել... հասան ու խանգարեցին...*

*Մի քանի ժամ հետո տղամարդկանց բաց թողեցին։ Կարծես նոր շունչ եկավ ժողովրդի վրա։ Ի՜նչ հուզիչ տեսարան... Կարծես տարիների բաժանումից հետո նոր էին միմյանց հանդիպում...*

*Շատ չանցած նորից ճանապարհ ընկանք։ Մոտ արևամուտին հասանք Անտիոքի Հարբիե կոչված ջրառատ ու հաճելի զբոսավայրը, բայց առանց կանգ առնելու շարունակեցինք մեր ճամփան մի նեղ կիրճով... Եվ ավարտեցինք մեր ուղևորության երրորդ օրը...*

*Արևը հորիզոնից մոտ երկու գրկաչափ արդեն բարձրացել էր, երբ հասանք մի հարթավայր, տիպիկ անապատային։ Կլիման էլ իրեն խիստ զգացնել էր տալիս ծովամերձ շրջանի բնակիչների համար։ Արևն ասես խանձում էր։ Բոլորս էլ շատ էինք նեղվում շոգից։ Ուղեկցող ոստիկաններն իհարկե գիտեին ուր են տանում մեզ՝ ոչ դրախտ...։ Իսկ մենք ինչ՞ւր էինք հանգիստ ու ապահովություն երազում։*

*Անմիջապես լուր տարածվեց, թե տեր Մարկոսի հայրն ու մայրը չկան։ ... Մեր առաջին զոհերը, այսինքն մեր գյուղացիներից. մյուս գյուղերի խմբերից լուր չէինք ունենում։*

*Եվ այսպես օրեր, իրար հաջորդող, անորոշ երթի մեջ, դեպի Սիրիական անապատի խորքերը...*

*Մի երեկո հասել էինք կիսավեր Մըդըկ բերդի ստորոտը, որտեղ մոտ 20 մետր տրամագծով մի լճակ կար։ Անասուններն այդ լճակում էին հագեցնում իրենց ծարավը՝ մտնելով ջուրը և ամբողջությամբ պղտորելով այն։ Ջրի ուրիշ ոչ մի աղբյուր չկար։ Մենք նույնպես խիստ ծարավել էինք և ստիպված այդ լճակից պիտի օգտվեինք։ Մարդիկ թաշկինակ կամ այլ լաթի կտորների օգնությամբ սկսեցին քիչ-քիչ իրենց ծարավը հագեցնել։ Ես էլ նույնը փորձեցի։ Ջուրը ոչ միայն պղտոր էր, այլ ամբողջությամբ լեցուն էր զանազան զեռուններով։ Հազիվ կարողացա լեզուս թրջել, խմել՝ անհնար էր։*

*...Արևը մայր էր մտնում. ժողովուրդը հանգըստանում էր։ Մի անկյունից լաց ու կոծ լսվեց... Մանկական ընկերոջս՝ Հակոբ Բալջյանի մոր մահվան լուրը տարածվեց։ Կեսօրվա տապին չդիմանալով՝ խեղճ կինն ընկել էր ճանապարհին ...ու այդպես էլ չէր կարողացել վեր կենալ...*

*Մեր երթը տևել է երկու-երեք շաբաթ։ Սեպտեմբերի սկզբներին հասանք Դամասկոսի ընթա-*

կայության Համմա քաղաքի ընդունման-առաքման ճամբար, կամ ավելի ճիշտ կլինի ասել՝ դժոխք..., որը քաղաքից մոտ կես ժամվա ճամփա էր։ Ամենուրեք վրաններ՝ ամենատարբեր գույների։ Նույն ցցից կապված մի քանի պարաններ՝ խաչաձև, անկարգ։ Կային նաև վրաններ, որոնք ընդամենը մի լաթի կտոր էին հորիզոնական փայտից կախված, մեկ-երկու հոգու համար։ Վրանների այդ կույտը մի իսկական մրջնանոց էր ներկայացնում՝ անփողոց ու ճանճերի ամպերով ծածկված։

Չկար մի վրան առանց հիվանդի։ Պառկած մարդը հիվանդ էր համարվում, որ երկար չէր մնում կենդանի, մահանում էր ու հեռացվում։

Շատերը նստած էին մահանում։ Դիահավաքները, բժշկապետի ուղեցկությամբ, մեծ դժվարությամբ էին խճճված վրանների արանքից տանում մեռածներին։

Ճամբարում հսկողությունը և՛ դժվարացել էր, և՛ թուլացել։ Հիվանդ, համաճարակով համակված ժողովուրդը ի՞նչ կարող էր անել, կամ ո՞ւր կարող էր գնալ։ Այնուամենայնիվ լինում էին մարդիկ, որոնք ինչ-որ կերպ կարողանում էին ճամբարից դուրս պրծնել ու իրենց գոյությունը քարշ տալ մոտակա գյուղերում։ Հայրս Համմա քաղաքում կարողացավ մի սենյակ վարձել, որը մեզ դրախտ էր թվում ճամբարի համեմատ։ Ոստիկանները հայրիկի տեղը շուտով գտան ու ստիպեցին թաղման կարգ կատարել մահացածների համար։ Չգիտես ի՞նչ դիվանագիտություն էր և ո՞ւմ հնարքն էր դա։

«Պարտականության» կատարման առաջին օրը հայրիկն այնպես տանջահար էր եղել, որ երբ երեկոյան տուն եկավ շղթայի նման ընկավ անկողին՝ առանց ուտելու կամ խմելու։

Գերեզման կոչվածը խորը, լայն ու երկար մի խանդակ է եղել՝ երկու-երեք հարյուր մեռելների համար, ուր մեռելակառքերով՝ մեռած կամ կիսամեռ մարդկանց մարմինները լցրել են ու կարգադրել «թաղման կարգ» կատարել։ Շրջանում հայրս միակը չի եղել։ Համաճարակը «առատ հունձ» է մատուցել։

Հայրս երկար չդիմացավ, ու մենք 4—5 օր հետո փախանք այդտեղից ու պատսպարվեցինք վրանի տակ, Որոնդես գետին մոտ, երկաթուղային կայարանի մերձակայքում։ Այստեղ էլ երկար չմնացինք՝ խուսափում էինք Հոմս քշվելուց։ Ոստիկանները քաղաքում կամ մերձակայքում հայտնաբերված գաղթականներին ետ էին բերում ճամբար, որպեսզի հետո քշեն Հոմս կամ այլուր։ Ժողովրդի մեծ մասը օգտագործում էր իր բերած պաշարը՝ երբեմն պակասածը քաղաքից բերելով։ Անապատային շոգը, անտանելի ծարավն ու սանիտարական տարրական պայմանների բացակայությունն էին տանջահար անում մարդկանց։

Մի երեկո՝ Հովհաննեսենց Անդրեասը մեզ մոտ էր եկել այցի՝ իր ու ընդհանուր հոգսերից զրուցելու։ Խոսքի արանքում նա պատմեց ինչ-որ հունադավան բնակիչներով մի գյուղի մասին։ Իբր ձմռանն այնտեղ այնքան ցուրտ է, որ տղայի մեզը մինչև գետնին հասնելը արդեն սառչում է։ Բայց՝ քանի ժողովուրդը քրիստոնյա է, գուցե այդ գյուղում ապրելն ավելի հանդուրժելի լինի։ Հորս միտքը պղտորվեց, առանց այն էլ գոհ չէր մեր տեղից, հաճախ էր խոսում այլ շրջան փոխադրվելու մասին։

Մի երեկո էլ հայրս մի արաբի հետ պայմանավորվեց մեզ օգնելու համար՝ համեմատաբար ավելի ապահով մի տեղ առաջնորդելու նպատակով։ Հաջորդ առավոտ աղամամութին արաբը ներկայացավ իր ավանդական իշուկով, ու ճանապարհ ընկանք դեպի նոր ապաստարան՝ Մուհարդի։ Ամբողջ օրը քայլեցինք մինչև տեղ հասանք։ Բավական մեծ գյուղ էր ընդարձակ ամայի անապատում։

Տեղավորվեցինք Աբու էլ Ասիի մի երկարավուն գոմում։ Մարտ ամսի սկզբից չորս հիվանդ կար մեր ընտանիքում՝ հայրս, մայրս, մորական տատս, որ ամուսնուն թողած մեզ էր միացել Համայից և ես։ Ես ջերմախտով էի վարակված, մյուսների մասին ոչինչ չեմ հիշում։ Ոտքի վրա էին միայն տասնվեց տարեկան քույրս՝ Վարդուհին և երեք տարեկան եղբայրս՝ Անդրանիկը։ Քույրս հազիվ էր հասցնում մեզ՝ հիվանդներիս ջուր մատակարարել. մոտ մեկ ժամվա ճանապարհ էր մինչև Որոնդես գետը՝ ջրի միակ աղբյուրը։

Մարտի 17-ին հայրս ուղեղի ցնցում ստացավ և մի քանի օրով կորցրեց գիտակցությունը։ Երկու օր հետո Սարգիս հորեղբայրս՝ Մարիամ քրոջ ու Մարթա քենու հետ եկավ մեզ մոտ, չիմացա՝ ինչու։ Հենց այդ օրն էլ մայրս մահացավ։ Դիակը բակում դրեցինք։ Հորեղբայրս, քրոջ ու քենու օգնությամբ, մորս թաղումը կազմակերպեց հաջորդ օրը՝ առանց քահանայի ու թաղման կարգի։ Հայրս բոլորովին չէր զգացել մորս մահը։ Օրեր անց, երբ հորս գիտակցությունը վերականգնվում է, նկատում է, որ մայրս չկա։ Խեղճ հայրս իր հիվանդ վիճակում դառնագին լաց եղավ։ Ես էլ չըգիտեմ ինչպես անցավ մորս մահվան առաջին օրը, միայն այն եմ հիշում, որ ամբողջ օրը հեկեկում էի ու լաց լինում, իսկ թաղումը բոլորովին չեմ պատկերացնում, թե ինչպես կատարվեց։

Հորս հիվանդությունն ամիսներ տևեց։ Դրա հետ էլ մորս բացակայությունը խիստ բացասաբար անդրադարձավ մեր վրա։ Մենք մեր ցավերի մեջ խճճված համարյա չէինք նկատում մեր շրջապատում տեղի ունեցող անցուդարձը։ Մեր իրարանցման մեջ, մեր անուշադրությունից օգտըվելով գողացան հորս ֆարաջան, որի քղանցքին կարված պահված էր 15 օսմանյան ոսկի։ Մնացինք առանց դրամի։ Կորցրինք տան վարձ վճարելու հնարավորությունը, որի պատճառով մեզ տը-

նից դուրս արեցին։ Ստիպված միացանք ուրիշ երեք-չորս ընտանիքների ու ապրեցինք մի այլ գոմում։ Ապրում էինք մեզ հետ բերածը ծայրահեղ խնայողությամբ օգտագործելով և ունեցած դրամը խիստ անհրաժեշտ դեպքերում ծախսելով։

Տակավին հայրս չէր ապաքինվել, երբ հավաքեցին քահանաներին ու մենք՝ ես, երեք տարեկան եղբայրս ու տասնվեց տարեկան քույրս, կրկին որբացանք... Մեջներս աշխատող ձեռք չկար, քույրս նախընտրում էր սովամահ լինել, քան թե ձեռք երկարելով մուրացկանություն անել։ Այդպիսով՝ տանը որպես «տղամարդ» ես էի մնացել, ես էլ քահանայի զավակ՝ ո՛չ գողանալ գիտեի, ո՛չ էլ հափշտակել կարող էի։ Մնում էր սպասել Աստծո ողորմածության...։ Հարկադրված դես ու դեն էի ընկնում՝ մի կտոր հաց կամ ուտելիքի այլ մնացորդ ձեռք բերելու համար. ում պատահեր երես էի պնդացնում, խնդրում էի, աղաչում, օրհնում ու Աստծո ողորմածությունը մաղթում...։ Այսպիսով օրվա ընթացքում հազիվ էի կարողանում մի կերպ մեր գոյությունը պահել ու սնունդն ապահովել։ Ընդհանրապես կյանքը խիստ էր դժվարացել նրանով, որ կառավարությունն արդեն հավաքել էր ամբողջ հացահատիկը բանակի համար, և գյուղացին ինքն էլ ապրում էր իր ունեցած-չունեցածով, էլ ո՞ւր մնաց, որ մեզ նման անտունանտերներին կարողանար պահեր-կերակրեր։ Մեղադրել չի լինի. ժողովուրդն ինքն ընդհանրապես բոլորովին էլ չար չէր և ոչ էլ լցված էր ատելությամբ՝ մեր նկատմամբ։ Մարդիկ շատ անգամ խղճահարվում էին, բայց ինչ կարող էին անել, երբ իրենք էին կիսաքաղց։ Հաճախ անիծում էին կառավարությանը, պատերազմին պատճառ եղածներին, մեզ տնից-տեղից հանողներին, բայց ի՞նչ օգուտ, մեզնից շատերը սովամահ էին լինում։ Քահանայահավաքից մի քանի շաբաթ անց մեզ մոտ մի թուրք մոլլա հայտնվեց՝ իր օգնական գրագրով։ Մոլլան կարգադրեց հավաքել շրջանում եղած բոլոր գաղթականներին։ Մի տասնըհինգ րոպե անց 20—25 հոգի ժողովվեց։ Մոլլան բավական երկար քարոզ կարդաց մեզ, պարզեց մահմեդականության առավելությունները՝ քրիստոնեության նկատմամբ.

— Զավակնե՛րս,— ասաց հռետորը,— այսօր դուք մոլորված եք ձեր քրիստոնեական հավատքով։ Քրիստոնեությունը ժամանակին ճիշտ կրոն է եղել։ Դրա համար էլ մենք պաշտոնապես ընդունում ու հարգում ենք ձեր Հազիրեթի Իսային (Քրիստոսին) որպես մեծ մարգարե։ Բայց նրանից հետո եկավ Հազիրեթի Մուհամմեդը և ոչ թե նոր կրոն ստեղծեց, այլ ձեր իսկ աստվածությունն ընդունեց, շատ բաներ ավելացրեց, սրբագրեց ու կատարելագործեց։ Մեկ խոսքով ուղղակի քրիստոնեական հնացած կրոնը բարեփոխեց։ Դրանով մահմեդական կրոնը մեծ առավելություն ստացավ քրիստոնեության նկատմամբ։ Ձեր ամենամեծ սխալն այն է, որ դուք Քրիստոսին ընդունում եք որպես Աստծո որդի... մեղա՜, մեղա՜, մեղա՜... Աստված կին ունի՞, որ որդի էլ ունենա... Դրա համար եմ ասում, որ դուք ուղղակի մոլորվա՜ծ եք։ Արդ մեր կառավարությունը ողորմած է, բարեգութ ու ներողամիտ, և ինձ այժմ քաղցր պարտականություն է տրված ձեզ դարձի՝ իսկական հավատի բերել։ Այժմ,— խոսքն ուղղեց գրագրին,— բա՛ց արա սուրբ մատյանը և արձանագրի՛ նոր մահմեդականների անունները։

Ապա՝ առանց մտածելու ժամանակ տալու մոլլան նորից դիմեց մեզ.— Ո՞վ է առաջին պատվավոր նոր մահմեդականը։

— Ե՛ս,— գոռաց Պարպուրյան Հակոբը։— Անունս դրեք Մուհամմեդ...

— Աֆերի՛մ, օղլո՛ւմ, աֆերի՛մ։ Իսկ կնոջդ անո՞ւնը։

— Աիշա,— կրկին բղավեց Պարպուր Հակոբը։

Եվ այսպես, մեկ ժամվա մեջ և մեկ ժամվա համար 20—25 քրիստոնյա հայեր դարձան մահմեդականներ...

Իհարկե մեր շրջանի դավանափոխությունը միակը չէր և այլ շրջաններում նույնպես տեղի են ունեցել նման արարողություններ։

Նշենք, որ սա Ջեմալ փաշայի դիվանագիտական հնարավոր խաղերից մեկն էր։ Նա անուղղակի տեղյակ է եղել Հալեպի նահանգապետ փաշայի թաքուն հայասիրությանը։ Ջեմալ փաշան գիտեր նաև, որ Հաճընցի Կարապետ աղա Կեովտերելյանի գլխավորությամբ ու Հալեպի «Հոթել Պարոնի»* տիրոջ ու մի քանի այլ նվիրյալների աջակցությամբ Հալեպի շրջանում բոլոր գաղթականները ցրվել են, կրոնափոխվել և այդպիսով տասնյակ ու տասնյակ հայեր փրկվել։ Ջեմալ փաշան այս բոլորը գիտեր, բայց ի հեճուկս կենտրոնական կառավարության, որևէ խանգարիչ միջոց չէր ձեռնարկում։ Հայասեր նահանգապետը կենտրոն զեկուցում է, թե շրջանում գաղթական չի մնացել։ Սակայն հետագայում նահանգապետի գործունեությունը կասկածի տակ է առնվում, և հայասերը փոխարինվում է մի ճիվաղով։

Ինչպես վերևում նշեցինք, Մուհարդի և Սկելբի գյուղերի բնակիչները հունադավան էին։ Մուհարդիում կային երեք արաբ մեծահարուստ ընտանիքներ։ Հավանաբար ներքին համաձայնությամբ յուրաքանչյուր տան մեծ մայրը ամեն երեկո կամ մի պղինձ (մեծ բազմականթ կաթսա) ճաշ կամ փլավ, կամ մի թոնիր հաց էր բաժանում մեզ գաղթականներիս։ Այդ մայրիկներին մենք նույնպես «մայրիկ» էինք կոչում։ Հատկապես նրանցից մեկը՝ Ապպութ Բայթարենց մայրիկը, տար-

* Հայկական հյուրանոց Հալեպում։

բեր «մայրիկ» էր։ Նա միշտ հացն ու ճաշը կամ կորկոտե փլավը միասին էր բաժանում։ Բացի դրանից, այդ մեր «մե՜ծ» մայրիկը հացի կտորներ էր պահում իր լայն գոտու ծալքերի արանքում, որպեսզի ցերեկը բաժանի սովալլուկ մարդկանց ու կատարի իր խղճի պարտքը, հոգեպես հանգստանա։

Իսկ ինչպե՞ս պատասխանեցին մեր գաղթականներն այդ գթասիրտ ընտանիքի բարեգործությանը։ Մի գիշեր 8—10 հոգի բացում են Ապրուշ Բայթարենց հորը ու ցորենը գողանում։ Առավոտյան «մեծ» մայրիկը նկատում է դա ու անմիջապես հայտնում իր տղաներին։ Սրանք երկաթե շշերով ու տոպրակներով գնում են հայերի մոտ։ Խորամանկ հայերն իրենց կրակարանը փորել են, ցորենը լցրել փոսը ու հետո ծածկել մոխրով։ Փորձառու տղաները հեշտությամբ գտնում են գողացված ապրանքը։ Եվ երբ նրանք վերցնում են ցորենը, «մեծ» մայրիկը խնդրում է տղաներին, որ յուրաքանչյուրին գոնե 1—2 կգ թողնեն.— Մե՜ղք են, սովա՜ծ են... չարչարվե՜լ են...։

Լսել էի, իբր Սկելբի հունադավան գյուղում կյանքն ավելի տանելի է... Ձմեռ էր։ Մի օր էլ 4—5 ժամ ճանապարհ կտրելով հասա Սկելբի։ Դեռ շուտ էր ողորմածների դուռը թակել։ Թափառում էի փողոցներով, հանկարծ հանդիպեցի Եվա սանամորս մի բակում, ուր շատ գաղթականներ կային։ Սանամայրս ինձ տեսնելով հուզվեց.— Այս ի՞նչ օրն ես ընկել, կնքահա՜յրս... հյուրասիրելու բան էլ չկա։ Արի՛ գլուխդ ծնկներիս դիր, գոնե ոջիլներդ մաքրեմ, վաղը-մյուս օր մեռնելու եմ... Ինձ կհիշես... (Իսկապես էլ խեղճ կինը մի քանի ամիս անց սովամահ եղավ։)

...Երեկո եղավ։ Սովորականի պես որսի ելա։ Ժամերով ապարդյուն թափառելուց հետո գտա գյուղի համբավավոր բարեգութ «մայրիկի» տունը՝ բակը, որ պղնձի գլուխն անցած մեկ-մեկ շերեփով ճաշ էր բաժանում... Սրան էլ փա՜ռք, ի՞նչ կարող ես անել...

Գիշերելու տեղ էր պետք ճարել։ Մի բակ մատնացույց արեցին, ուր ապրում էր մի աղքատ ընտանիք։

— Տղա՜ս, ոչինչ չունենք, որ կարողանանք քեզ տալ՝ ո՛չ ուտելիք, ո՛չ քնելիք։ Ինչպե՞ս մեզ մոտ կմնաս,— խղճահարված ասաց տան մայրիկը, որի արտաքինից արդեն հայտնի էր ընտանիքի ողբալի վիճակը։

— Ոչի՜նչ, մայրի՜կ, հենց այնպես գետնին էլ կպառկեմ,— պնդեցի ես։

— Դու գիտես, որդի՜, հետո ինձ չմեղադրես...

Ցերեկը խեղճերը մի քիչ ցախ ու փուշ էին հավաքել, մայրամուտից քիչ անց վառեցին, որ սենյակ կոչեցյալը գոնե կարճ ժամանակով մի քիչ լուսավորվի ու ջերմանա։ Ցախը վերջանալուց հետո, սենյակն ընկավ կատարյալ մթության մեջ։ Բոլորը քնեցին, ես էլ դրսից մի քար ճարեցի գլխատակիս համար ու մեջքիս փաթթոցը գետին փռելով՝ մի կերպ կուչ եկա սյան տակ։

Սկելբիի ցուրտը համբավավոր էր։ Գյուղը մի բլրի գագաթին էր փռված, բոլոր կողմերից բաց, եղանակը՝ խիստ ցամաքային։

Գիշերը մի ամբողջ հավիտենականություն դարձավ։ Ցուրտը մինչև ոսկորներս էր թափանցել, մանավանդ՝ սոված էլ էի։ Արևի հրագունդն էլ, ասես խռովել էր. չէր ուզում ծագել ու մի քիչ ջերմացնել։ Քունս բոլորովին կորել էր։ Աչքերս հառած դռան ճեղքերին՝ ամբողջ գիշերն սպասում էի երջանկաբեր գալիք օրվան։ Այսպես՝ դե արի ու դիմացի մինչև լուսաբաց... Հաստատապես որոշեցի՝ ինչ էլ լինի պիտի վերադառնամ Մուհաջդի, ա՜խ, թե միայն լուսանար...

Վերջապես դռան ճեղքերից զգացվեց այգաբացը։ Հանդարտորեն, զգույշ ու անաղմուկ քարս վերցրի ու դուրս եկա բակ։ Քարը դրեցի իր տեղը, սփռոցս փաթաթեցի մեջքիս ու ճամփա ընկա։ Արյունս կարծես սառել էր։ Ազատ շնչել չէի կարողանում։ Գետինը ծածկվել էր եղյամով ու բարակ սառույցով։ Բոբիկ էի, ոտքերս արյունոտվում էին ու խիստ ցավում։ Իբր քայլում էի, բայց հազիվ տեղումս ոստոստում էի միայն... Թվում էր, թե արցունքիս կաթիլները սառչում էին այտերիս։ Հասա գյուղի աղբանոց։ Արեգակի սկավառակը նոր սկսեց երևալ։ Մի քիչ տաքանալու հույսով կանգնեցի պատի տակ, բայց՝ ավելի վատ։ Աղբանոցի չորս կողմն աչք ածեցի ինչ-որ կանաչեղեն գտնելու հույսով, բայց՝ իզուր...։ Ամեն ինչից հիասթափված փորձեցի վազել բլուրն ի վար։ Հազիվ մի քիչ տաքացա։ Շունչս բացվեց, երբ արդեն ստորոտումն էի։ Արևը մի երկու գրկաչափ բարձրացել էր հորիզոնից։ Հեռվում նկատեցի մի հովիվ, որ ոչխարներն էր արածեցնում։ Ուղղվեցի դեպի խաշնարածն ու երբ բավական մոտեցա, սկսեցի կանչել, ձայն տալ։ Կանչիս վրա հսկա գամփռը հաչելով վազեց իմ կողմը։ Ես իսկույն պպզեցի։ Շունը հասավ ինձ, շուրջս մի քանի անգամ պտտվեց կատաղած աչքերը վրաս սևեռած՝ նստեց ու սկսեց հատ-հատ հաչել։ Երբ հովիվը, տարիքն առած մի մարդ, մոտենալով ինձ՝ սաստեց շանը, խելոք կենդանին ձայնը կտրեց ու հեռացավ։ Շունչ քաշեցի, վեր կացա։ Հովիվը չոր հարցրեց.— Ինչ է եղել, ինչ ես ուզում։

— Խնդրում եմ մի կտոր հաց...

Ասես հենց ինձ էր սպասում, որ կուտակված մաղձը դուրս տար։ Մի թունդ հայհոյեց մեզ բերողի՛ն էլ, տանողի՛ն էլ, այդ օրը հասցնողի՛ն էլ, պատերազմն ստեղծողի՛ն էլ, պատերազմողի՛ն էլ...։ Մի խոսքով էլ տեղ ու մարդ չմնաց, բաժին չունենար... Ես արդեն հույսս կտրել էի և ապշահար լսում՝ առավոտյան «ավետարանը»։ Բայց

ի զարմանս ինձ, մարդը գլուխը տարուբերեց, ձեռքը կոխեց ուսից գցած մախաղը, մի կտոր հաց հանեց ու ինձ մեկնելով թնդաց.— Դե՛, կորի՛,— Ու, չսպասելով իմ հերթական շնորհակալություններին, բարեմաղթություններին ու հերթական օրհնություններին, շուռ եկավ ու հեռացավ դեպի իր ոչխարները։ Ես էլ շարունակեցի իմ ճանապարհը դեպի Մուհարդի։

Անցան ամիսներ...։ Մի օր էլ գյուղում հայտնըվեց տեր Մարկոսը։ Գնացի այցելության և հետաքրքրվելու հորս մասին։ Բոլորովին հյուծված, տանջահար եղած հազիվ մեզ մոտ էր հասել-վերադարձել։ Այնքան էր չարչարված ու հոգնած, որ պատմելու տրամադրություն բացարձակ չուներ։ Միայն այն ասաց, որ հայրս ողջ է, առողջ, դես ու դեն կողով է հյուսում ու վաճառում, իր գոյությունը մի կերպ քարշ է տալիս։ Վերջում էլ երկու մեճիտիե տվեց՝ ասելով, թե դա իր հնարավոր խնայողությունն է, որ մեզ ուղարկում է՝ ծայրահեղ նեղ օրվա համար։ Մեծ գանձ էր դա մեզ համար, բայց ոչ մի կերպ չէինք ուզում ծախսել, քանի դեռ կարողանում էինք չմեռնելու չափ մի բան ճարել։

Հարստանալուց մի քանի շաբաթ անց հայրըս ինքն էլ եկավ։ Մեր ուրախությանը չափ չըկար։ Խեղճը շատ էր տանջվել ու տառապել։ Քասներեք քահանա են հավաքել ու տարել կոտորելու։ Հետո հրաշքով ինչ-որ կերպ շատերը փրկվել են։ Այժմ հսկողությունը բոլորովին վերացել էր, ժողովուրդն էլ՝ ցրվել՝ ամենուր։ Ստեղծված հնարավորությունից օգտվելով մարդիկ ձգտում էին դեպի իրենց ծննդավայրը։ Մի խումբ համագյուղացիներ, այդ թվում նաև Մարիամ հորաքույրս իր ամուսնու հետ, նույնպես ցանկացել են վերադառնալ իրենց կողմերը։ Որոշել են գնալ Գուսեյը կոչված վայրը, որը համեմատաբար մոտ էր Անտիոքի շրջանին։

Հայրս նստեցրեց կողքին ու որոշակիորեն բացատրեց իր մտքերը։

— Տղա՛ս,— սկսեց նա,— տեսնում ես և զգում, որ ես մեկ փորձությունից մյուսին եմ գնում։ Աշխատանք չկա։ Մարդիկ ձգտում են դեպի ծննդավայր։ Ամեն ինչ մութ է ու անհայտ։ Ի վիճակի չեմ ընտանիքին բավարարելու այստեղ նստած։ Մեր գյուղացիներից մի խումբ գնում է Գուսեյր։ Երբ կհասնեն՝ հայտնի չէ։ Մի բան պարզ է, որ այդ գյուղը մեր ծննդավայրին ավելի մոտ է։ Ո՞վ գիտի, մի օր էլ մարդիկ տուն հասնեն։ Ուզում եմ, որ դու միանաս այդ խմբին, գուցե հասնեք հաջողության, թեև հավանականությունը շատ չէ։ Սա նման է Իսրայելի մարդոց երթին՝ Եգիպտոսից դեպի Կարմիր ծով և այնտեղից, Մովսես մարգարեի առաջնորդությամբ, Քանանու երկիր՝ Ավետյաց երկիր։ Դուք պիտի ուղղվեք դեպի մեր նախնիների երկիրը՝ Մուսա լեռ, բայց առանց որևէ առաջնորդի։ Ես էլ տարբեր ճանապարհով եմ ուզում բախտ փորձել։ Ով առաջ տեղ հասնի, մի քիչ ամրանա, թող հետաքրքրվի ընտանիքի մյուս անդամների բախտով։ Արդեն քրոջդ պատվիրել եմ, որ ֆարաջայիդ քղանցքին երկու բարդութ (2,5 ղուրուշնոց) կարի՝ սև օրվա համար։ Ուրիշ բան չունեմ քեզ տալու, բացի... օրհնությունիցս...։

Երկու օր անց մեր խումբը, որի մեջ էինք՝ ես, Մարիամ հորաքույրս, իր ամուսինը և մեր հարևան Նաթանը, ուղևորվեց դեպի հայրենի կողմեր։ Մեզ ընկերակցում-ճանապարհ էին ցույց տալիս երկու արաբ։ Մի տասն օր անց հասանք Ծըսըր էլ Շուղուրի մերձակայքը։ Մի առավոտ, աղոթքի ժամին մեր առաջնորդները փռեցին իրենց փոքրիկ գորգիկները, ծունկի եկան ու սկսեցին ամենօրյա ուղերձն ու փառաբանությունն Աստծուն։ Մինչ այդ, մեր խումբը քիչ այն կողմ հանգստանում էր։ Մեկ էլ տեսանք հեռվից երեք տղամարդիկ՝ մեկը հրացանով, մյուսները՝ ավանդական դմբուզներով դեպի մեզ են գալիս։ Երբ մեզ հասան, հարձակվեցին մեր վրա ու սկսեցին մեզ խուզարկել ամեն տեսակ սպառնալիքներով։ Մինչդեռ մեր առաջնորդները դեռ աղոթում էին անխռով, ասես ոչինչ էլ չի կատարվում իրենց շուրջը։ Ավազակներից մեկն աչքը տնկել էր Նաթանի ֆարաջային։ Սկսեց քաշկռտել խեղճին, որպեսզի վրայից հանի ֆարաջան։ Նաթանը խիստ ջղայնացած «դին» (դավանանքին, կրոնին) հայհոյեց։ Ավազակը «դին» լսելով հասկացավ, որ Նաթանը իրենց հավատը հայհոյեց, ավելի գազազեց ու դմբուզը գործի դրեց։ Խեղճը չդիմանալով ցավին ակամա գոռում էր, ասես եզ էին մորթում։ Լավ էր, վերջապես, մեր աղոթող ուղեկիցները երևի խղճահարվեցին, միջամտեցին ու մի կերպ ազատվեցինք ավազակների ձեռքից։ Շատ չանցած դիմացից հայտնվեց Սարգիս հորեղբայրս իր որդու հետ։ Հայրենակիցների հետ զրուցելիս ինձ էլ նըկատելով խմբի մեջ հարցրեց, թե՝ ես ո՞ւր եմ գընում։ Ասեցի, թե՝ ես էլ խմբի հետ ուզում եմ մեր շրջանին ավելի մոտ վայրեր՝ մասնավորապես Գուսեյր գնալ, և դա հորս ցանկությունն է միաժամանակ։

— Այնտեղ էլ գործ չկա, մարդիկ սոված են, գործ չկա։

— Հայրիկը ինձ ուղարկեց խմբի հետ, էլ հետ չեմ դառնա,— ընդդիմացա ես։

Բայց հորեղբայրս մեծի իրավունքով այնքան պնդեց, որ այլևս չկարողացա հակառակվել ու ստիպված վերադարձա իր հետ։ Ոչ մի կերպ չէի հասկանում տրամաբանությունը, մարդիկ ձգտում ու գնում են իրենց ծննդավայրը, իսկ մենք, ընդհակառակը՝ հեռանում ենք...

Վերադարձանք Կասսոն կոչված բնակավայրը, որը XI—XIV դարերին եղել է Հայկական Կի-

լիկիայի արևելյան սահմանամերձ բերդաքաղաքներից մեկը։ Բնակավայրի բարձրադիր մասում՝ հավանաբար բերդի ավերակների վրա, տարածվել էր շուրջ հիսուն հայ ընտանիքներից բաղկացած գյուղը, որոնք գաղթել էին վերջին երկու տարիների ընթացքում։ Գյուղն ուներ մի փողոց, որի երկու կողմում էլ շարված էին տները։ Արևելյան ծայրին կար մի փուռ՝ հաճախորդների համար նախատեսված առանձին մասով, որը միայն ծածկ ուներ։ Փռի սրահը միաժամանակ ծառայում էր անգործների ու թափառաշրջիկների հանդիպման յուրահատուկ վայր։ Փուռը հաճախ ունենում էր նաև արաբ հաճախորդներ՝ շրջակա գյուղերից։ Մենք՝ ես, հորեղբայրս ու նրա որդին, մեծ մասամբ գիշերում էինք հիշյալ ծածկի տակ։ Հաճախ էլ գիշերն անցկացնում էինք գյուղի հարդանոցում՝ գյուղից մոտ 200 մ հեռու, կալերին մոտ։

Այստեղ մնացինք մոտավորապես մի ամիս։ Հորեղբայրս ու իր որդին չգիտեմ ինչպես, ես ապրում էի ջրով, խոտով ու սրա-նրա ողորմությամբ։ Երբեմն էլ պատահում էր մանր-մունր աշխատանք կամ որևէ ծառայություն՝ մի կտոր հացի դիմաց։

Ես ունեի բրդյա մի փոքրիկ ծածկոց, որը ցերեկը որպես գոտի, գիշերը՝ որպես անկողին էի օգտագործում։ Մի օր փռի սրահում երկու արաբ եկան։ Նրանցից մեկը առաջարկեց ծածկոցս վաճառել հացով։ Ես մերժեցի.— Չե՛մ ծախի...։ Սա իմ ամե՜ն ինչն է։ Փող առաջարկեց, դարձյալ չըհամաձայնեցի։ Արաբը ջղայնացավ։ Ընկերը թե.— Ինչո՞ւ ես ջղայնանում, գիշերը կգաս կհամաձայնի...։

Երեկոյան հորեղբայրս պնդեց, որ այդ գիշեր հարդանոց գնանք քնելու։ Ես առարկեցի, բայց նա մնաց իր որոշման վրա։

— Հորեղբա՛յր, չգնանք՝ ծածկոցս կգողանան։

— Մի՛ վախեցիր, ես նրանց...,— ու մի շարան թունդ հայհոյանք։

— Խնդրո՛ւմ եմ, հորեղբա՛յր, չգնանք կամ դուք՝ գնացեք, ես՝ կմնամ։

— Ո՛չ, քեզ չեմ թողնի, միասին պիտի գընանք։

Չկարողացա հորեղբորս կամակորությունը կոտրել, գնացինք կալեր գիշերելու։ Ճանապարհին հեռվում նկատեցի մարդկանց ծխելը։ Անմիջապես զգուշացրի հորեղբորս ու նորից խնդրեցի վերադառնալ փուռ։ Մնաց աներեր։ Գնացինք կալեր։ Մինչև առավոտ կես քուն, կես արթուն՝ ահ ու դողի մեջ, ինչպես լուսացավ՝ միայն ես գիտեմ։ Բարեբախտաբար այդ գիշեր ոչինչ չպատահեց։ Հաջորդ գիշեր հորեղբայրս նորից որոշեց կալերում քնել, քանի որ հարդի մեջ ավելի հանգիստ էր ու տաք։ Բայց ես բոլորովին էլ հանգիստ չէի զգում, ահն ու սարսափը սրտիցս չէր դուրս գալիս։ Այնուհանդերձ գնացինք կալեր գիշերելու։ Հորեղբայրս իր տղայի հետ թաղվեց մի մեծ հարդակույտի մեջ, ինձ էլ մի 15—20 մ հեռու մի հարդակույտ ցույց տվեց, որ պատսպարվեմ.

— Լա՜վ թաղվի՛ր հարդի մեջ, պի՜նդ փաթաթվիր ծածկոցով... ու քնի՛ր։

Հոգնել էի, քնել եմ։ Մեկ էլ այն զգացի, որ ծածկոցս սահում է վրայիցս։ Կիսաբաց աչքերիս առաջ պարզվեց սարսափազդու մի կերպարանք։ Մինչև կիսախեղդ ձայնով օգնություն գոռամ, ծածկոցս արդեն թռա՜վ... Տեղումս նստած՝ սկսեցի լաց լինել կիսաձայն...

— Ի՞նչ է, ի՞նչ է,— այն կողմից գոռաց հորեղբայրս։

— Չասեցի՞, հորեղբա՛յր, որ ծածկոցս պիտի տանեն, չհավատացի՛ր։

— Տարա՞ն։

— Այն էլ ինչպե՞ս։

— Ես նրանց հերն ու մերը... դինն ու յոթը պորտը...

Օրերից մի օր էլ մի արաբ եկավ, աշխատող մարդ ուզեց։ Հորեղբայրս ինձ ցույց տվեց։ Գնացի՝ մի փոր հացի հույսով։ Խոստումները մեծ էին։ Տեղ հասանք արևամուտին։ Մեկ դեցիմետրի չափ արաբական մի փոքրիկ բաղարջ տվեց ու գիշերելու համար վրանից դուրս մի տեղ առաջարկեց։ Շան պես կուչ եկա դրսում մինչև առավոտ՝ հաջորդ օրվա ավելի լավ պայմանների հույսով։ Պարտականությունս՝ լոլիկի դաշտի պահակությունն էր, վարձս՝ մի հաց ու տհաս լոլիկ։ Առաջին օրն անցավ, երեկոյան լոլիկի դաշտի տերը եկավ, ինձ տուն տարավ, մի հացիկ տվեց ու մի լոլիկ։ Իսկ երբ գիշերելու տեղ խնդրեցի վրանում, նորից թույլ չտվեցին, ասեցին, որ իմ տեղը դրսում է, երեկվա տեղը։ Այլընտրանք չունեի։ Հաստատապես որոշեցի փախչել այստեղից։ Հաջորդ օրը նորից մի հացիկ ստացա։ Դաշտը ճանապարհի եզրին էր։ Շուրջը բոլորովին անծանոթ։ Արևը բավական բարձրացել էր, համարյա անցորդ չկար այլևս։ Ամենուրեք՝ ամայի։ Պատեհ առիթին դուրս եկա ճանապարհ ու սկսեցի վազել, որքան կարող էի արագ՝ ասես կախաղանից էի փախչում։

Կեսօրն անց էր արդեն, երբ մեր փուռը հասա։ Հորեղբայրս իր տղայի հետ նստած... ճանճ էր քշում։ Պատմեցի գլխիս եկածը և ասեցի, որ այլևս այն կողմերը չեմ գնա։ Հաջորդ օրը նույն արաբը նորից եկավ ինձ տանելու, բայց ես համառեցի չգնացի՝ չնայած բոլորի հորդորներին։

Մոտ մի ամիս անց, մի առավոտ՝ աղամամութին, հորեղբայրս մեզ արթնացրեց, որ ճամփա ընկնենք։

— Ո՞ւր ենք գնալու, հորեղբա՛յր։

— Ես էլ չգիտեմ, դեպի Մուհարդի...

Սարգիս հորեղբայրս կնոջն ու աղջկան Հոմսի գյուղերից մեկում թողնելուց և մորը՝ տատիս

թաղելուց հետո իր որդու ու հորս և ուրիշ մի քանի հոգու հետ վերադառնում է դեպի Համա։ Միմյանց կորցնում են, ինքը որդու հետ առանձին է թափառում։ Հասնում է Անտիոք։ Պահակների քնած պահին Որոնդես գետի կամուրջից աննկատելիորեն անցնում և ուղղվում է դեպի գյուղ։ Ընդհանրապես, կասկածի տակ չընկնելու մտոք ճամփորդում է գիշերով։ Հասնում է գյուղ։ Մեր տնամերձի նռնենիների տակ իր ձեռքով հորած մեր մի կուժ պանիրը գտնում է, կուժը առած գիշերով գնում է մինչև թթաստան-շերամատներ։ Այդտեղ էլ ապահով չի զգում, բարձրանում է սարալանջ։ Հռոմեացիների կողմից փորված վիմափոր ջրատարի մի խոռոչից ներս է մըտնում, իր և տղու համար ծվարելու տեղ է պատրաստում։ Ցերեկը թփերի արանքից դիտում-հետազոտում է թթաստանները։ Հարևան թաթերը, օգտվելով այն բանից, որ տերը աքսոր է քշված, շերամատների ծածկերը և պատերը քանդել, գերաններն ու քարերը որպես շինանյութ թալանել, տարել էին։ Մնում էր գիշերով իջնել պարտեզները՝ օգոստոսյան թուզ կամ այլ մրգեր ուտել ու մի քիչ էլ գիշերվա համար տանել, պանիր-մրգերով օրը անցկացնել։ Ամբողջ մի ամիս։ Պանիրը հատնում է, թուզն ու մրգերը քշանում, գիշերով գտնելը դժվարանում է։ Վայրի անասունի պես ապրելը վերջ չունի, գյուղերը՝ դատարկ, տները՝ կիսաքանդ, ամայություն։ Վախն ու թուրքի սարսափը նրան ստիպում են նորից դիմել դեպի Համայի քիչ տանելի շրջանը։ Ահա այն ետդարձի ժամանակ ինձ հանդիպեց, և մենք վերադարձանք։ Այս վերադարձի շնորհիվ կարողացա քրոջս՝ Վարդուհուն գտնել ու հայրիկի մոտ վերադառնալ։ Մի պահ ուրախացա. գնալու եմ մերոնց՝ հայրիկի, քույրիկի և Անդրանիկի մոտ... Ո՞վ գիտի, գուցե հանդիպենք։ Մենք՝ երկու հասակակիցներս առաջ ընկանք, մինչև ինքը, փռի հետևում ինչ-որ բան էր փնտրում, եկավ մեզ միացավ ու դեմ առինք ձախ կողմի բարձրադիր հարթավայրի լանջին, որը բավական բարձր էր։ Հարթալանջը փշոտ թփերով էր ծածկված, արահետ, կածան էլ չկար։ Բոկոտն, թփերը ճանկռտելով, դժվարությամբ էինք բարձրանում։ Մոտ երեք ժամ տևեց մեր տանջալի և արյունլվա վերելքը։ Եվ վերջապես հաղթահարեցինք ու հասանք մի բավականին լայն ճանապարհ, որը հավանաբար միջգյուղական ճանապարհ էր։

Հազիվ կես ժամ գնացինք։ Դիմացից մի խումբ արաբներ եկան։ Պատերազմի տարի է, աղքատությունը ընդհանուր է։ Մեզ կանգնեցրին։ Հորեղբայրս շալակին ուներ մի կեղտոտ վերմակ, որովհետև միշտ գետիններին ենք պառկել-քնել և ծրարած ինչ-որ իրեր։ Քրքրեցին, հետաքրքրական բան չկար, թեև ինչ-որ բան վերցրին ու ազատ թողեցին, փա՜ռք Աստծո։ Թեքվեցինք դեպի ձախ՝ արևելք, արևը արդեն սկսեց նեղել, ճանապարհի ձախից երկու զինված երիտասարդներ գոռացին.— Կանգնե՛լ,— Պարտավոր ենք կանգնել՝ վատը շրջանցելու մտոք։ Հորեղբորս կապոցը նայեցին, տնտղեցին.— Հավաքե՛ք ու կորե՛ք անմիջապես,— ասելով հեռացան։ Հավաքվեցինք ու շարունակեցինք մեր ճամփան։

Մի ձորակի կեսին հասանք, մի ձայն կարգադրեց.— Կանգնե՛լ,— Մի ժամ առաջվա ավազակներն էին։ Մեկը հրացանն ուղղեց հորեղբորս կրծքին, մյուսը՝ մահակի մի քանի հարվածներով մեզ դաս տվեց ու կարգադրեց կապոցը իջեցնել։ Վերմակը բացեց, տնտղեց, մի կողմ դըրեց, ուրիշ բան չկար, որ վերցնեին, հորեղբորս որդուն նայում, երեսին էին թքում։ Ինձ խուզարկեցին. բան չգտան։ Իմ տախտակ-այբբենարանի մախաղը վզիցս կախ էր. վերցրին, տնտղեցին.— Վերմակին կարկատան կլինի,— ասելով, վերմակի վրա դրին։ Գործը ավարտեցին, հրացանի սպառնալիքով ու մահակի հարվածով մեզ ճամփու դրին։

Մոտիկացանք մի գյուղի։ Արևը զենիթին էր հասել, կրակ էր թափվում։ Գյուղ չմտած՝ երկու երիտասարդներ մոտեցան մահակներով։ Անհետաքրքիր էինք, բայց նորից խուզարկեցին։ Վերջապես գյուղ մտանք։ Թնդանոթը որոտաց։ Կեսօրվա ճաշի ժամն էր։ Հորեղբայրս ինձ ասաց.— Մի քանի դուռ թակիր,— (միջանկյալ պետք է ասել, որ գյուղերում ցերեկով դուռ ծածկել՝ սովորություն չէ)։ մի կոճոն ձեռք բերելու միտումով։ Ինքն իր տղու հետ ուրիշ կողմ ուղղվեց, ասելով՝ Քիչ հետո այստեղ կգաս, կսպասես։ Այդպես էլ արեցի, առանց որևէ կոճոն ձեռք բերելու։ Պատերազմն ու կառավարական թալանը մարդկանց սիրտը քարացրել էին...։ Չգիտեմ, ինչքան սպասեցի։ Գրիգորը՝ հորեղբորս տղան, երևաց։

— Ո՞ւր է հայրիկը։

— Չգիտեմ, երկու մարդ հետն էին խոսում։ Հայրիկն ասաց՝ գնա, ճանապարհ ընկեք, ես կըգամ...

Սա հաճելի պատասխան չէր. նա հանգիստ էր, բայց ես մտահոգվում էի։ Երկու մարդիկ ի՞նչ գործ ունեն նրա հետ, լավ բան չէի մտածում։ Մենք ճամփա ընկանք։ Ոտքերս ինձ չէին հնազանդվում, աչքս՝ միշտ ետ էր։ Շուրջ 10 րոպե անց նա երևաց երկու երիտասարդների հետ, որոնք քըմծիծաղում էին։ Հանգստացա։ Հորեղբայրս ողջ է... Հորեղբայրս խիստ էր ջղայնացել։ Նա ասել է, թե՝ Անտիոքից ենք։ Ուզեցել են հավաստիանալ, թըլպատված է, թե՝ ոչ...

Արևը թեքվել էր դեպի մայրամուտ։ Գյուղերին մեզ ուղեկից դարձավ մի արաբ պառավ։ Հույսի մի նշույլ թափանցեց մեր էության մեջ։ Վերջապես մի ուղեկից ունենք...։ Հորեղբայրս սկսեց

քչիկ-քչիկ զրուցել պառավի հետ։ Պառավը սկսեց կարեկցել մեզ։ Ճանապարհն անցնում էր ցամաքած, արևի տապից գորշացած մի ձորով։ Ձորի համարյա կեսին, ձախ բարձունքներից մի ահարկու ձայն եկավ.— Կանգնե՛լ։— Երկու ելուզակ լանջն ի վեր գլորվում էին դեպի մեզ։ Մեկը՝ հրացանով, մեկը՝ մահակով.— Հանվե՛լ,— կարգադրեցին՝ չշարժվեցինք։ Փոքրերս մեկ-մեկ մահակ բաժին ստացանք։ Հորեղբորս կրծքին ուղղված հրացանը և մահակի հարվածները նրան սթափեցրին։ Հանեց ֆարաջան ու վարտիքը, ներքնաշապիկը, ետևից՝ վերից վար ճղված, կեղտոտ։ Գողացված խմորի բութ խենչալը աչքի խփեց. մահակավոր ավազակը այդ խենչալը վերցրեց, «լավ փոր կճղի» ասելով բռնեց կիսամերկ հորեղբորս օձիքից, խենչալը բարձրացրեց ու իջեցրեց. ներքնաշապիկը առջևից ամբողջությամբ ճղվեց։ Սկսեցին քա՜հ-քա՜հ խնդալ։ Խեղճ հորեղբայրս էլ ակամա խնդաց։ Մեր շորերը հավաքեցին մի ծրարի մեջ։ Հորեղբայրս խնդրեց խուզարկել ու շորերը ետ տալ՝ մեր մերկությունը ծածկելու համար։ Ինձ վրա մնացել էր մի ներքնաշապիկ՝ մինչև պորտս։ Մահակը, զենքի օգնությամբ հորեղբորս խելքի բերեց ու մենք հեռացանք։

Շուրջ երկու կմ հեռու պառավը նստել ճամփեզրին մեզ էր սպասում։ Երբ մոտը հասանք ու նա մեզ այս մերկ վիճակում տեսավ, սկսեց հոնգուր-հոնգուր լաց լինել ու անիծել այդ դժբախտ իրավիճակի պատճառները ու մարդկային գազանությունները, անխղճություններն ու սադիզմը։

Շարունակեցինք մեր ճամփան։ Արևը մայր մտնելուն հազիվ մեկ-երկու գրկաչափ բան էր մնացել, երբ մի այլ, բոլորովին անծանոթ գյուղ մտանք։ Մեր ուղեկցուհին բաժանվեց մեզանից՝ մեզ հաջողություն մաղթելով։

Մենք նստեցինք մի տան պատի հովանու տակ, քանի որ դժվար էր կիսամերկ վիճակում մարդկանց երևալ։ Դիմացից՝ քառասունի մոտ մի կին, մանիշը ձեռքում ինչ-որ թել մանելով, մեզ մոտեցավ, բարևեց ու սկսեց հարցուփորձը։ Հորեղբայրս կծկվել էր. ճղված շապիկով առաջն էր ծածկում՝ քամակն էր բացվում, քամակն էր ծածկում՝ առաջն էր բացվում... Անկախ իրենից կծկվելով՝ մի բուռ դարձավ։ Երբ իմացավ, որ մենք... Անտիոքի մոտերքից ենք ու Աստծու ողորմածությանն ենք մնացել ու թափառելով մեր բախտն ենք որոնում, մանիշը մի կողմ դրեց, թևերը բացած գոհություն հայտնեց Աստծուն.

— Փա՜ռք Աստուծո, փա՜ռք Աստուծո... Փա՜ռք Աստուծո, որ հայ չեք...

— Ինչո՞ւ, քույրիկ, միթե հայերը այնքան փիսըն են, վատը,— ասաց հորեղբայրս, աղճատված արաբերենով։

— Ո՛չ, եղբա՜յր,— ասաց կինը,— հայերը գուցե վատ չեն, բայց անցյալ տարի մեզ մոտ ժանդարմները հիսունի չափ հայ ընտանիքներ բերեցին՝ երեխաներից, կանանցից ու ծերերից բաղկացած։ Հաջորդ օրը պատանիներին ու ծերերին հավաքեցին ու իբր աշխատանքի տարան ու չվերադարձրին։ Ջահել կանանց ու աղջիկներին ջոկեցին՝ մեջ ընդ մեջ բաժանեցին, մնացածներին էլ տարան անհայտ ուղղությամբ ու կորցրին... Փա՜ռք Աստծո, որ հայ չեք...

Կինը մանիշը վերցրեց ու շարունակեց իր ճամփան. մեզ մատնելով ահ ու սարսափի...։ Եվ այսպիսի գյուղում մենք պիտի գիշերեինք...

Արևմուտքից աղջամուղջը փռեց իր թևերը։ Դժվար էր հայը թուրքից ջոկելը, վեր կացանք ու, ըստ սովորության բաժանվեցինք, ընթրիքի նըստած մարդկանց դուռը բախեցինք, աստծո ողորմությունը և մարդկանց գութը խնդրելու ու ողոքելու, նախօրոք՝ մարդկանց գլխին աստվածային օրհնությունը թափելով։ Չեմ կարող ասել՝ մարդկանց սրտերը քարացե՞լ էր, թե մարդիկ չար էին դարձել...։ Մի քանի դուռ ապարդյուն բախելուց հետո վերադարձա պայմանավորված կետը, ուր քիչ անց հորեղբայրս եկավ իր որդու հետ։ Միմյանց օգնելու, միմյանցով հետաքրքրվելու զգացումը վերացել էր, էլ ինչու հորեղբայրս ինձ իմ ճանապարհից ետ դարձրեց՝ մինչև այսօր էլ ես չհասկացա...

Մոլլեն գիշերային աղոթքը առ աստված հղեց մինարեի գագաթից ու լռեց։ Մենք երեքով անծանոթ փողոցներով դեգերում էինք, երբ դիմացից մի կին երևաց, մի ծրար ձեռքում, հորեղբայրըս հարցրեց.— Քույրի՜կ, մզկիթը որտե՞ղ է...

— Գիշերվա այս ժամին մզկիթը ձեր ինչի՞ն է պետք։

— Գնանք, մեր գիշերվա աղոթքն անենք ու քնելու տեղ փնտրենք։

— Է՜ն է, այնտեղ, այն փոքրիկ դուռը...

Կնոջից բաժանվեցինք ու գնացինք դեպի մատնացույց արված դուռը։ Բոթեցինք, դուռը բացվեց, կամացուկ, վախվորելով ներս մտանք, կիսածածկ մի ընդարձակ սենյակ, պատերի տակին հին ու մին փիսիաթներ՝ անխնամ դես ու դեն նետված։

— Այստեղ ո՞ւր կքնենք, հորեղբա՜յր։

— Սո՜ւս, ձայն մի՛ հանեք։

— Նա մի փիսիաթ փռեց.— Դե՜, պառկե՛ք,— մեկ ուրիշ փիսիաթ էլ վրանիս քաշեց,— դե՜, քընե՛ք... ...

— Հորեղբա՜յր, արաբները կգան, մեզ կմորթեն։

— Ձե՛ն գար, ես նրանց...։ Շուտ վեր կկենանք։

Իրոք, ադամամութը չփարատված նա մեզ՝ երեխաներիս արթնացրեց ու անմիջապես մզկիթից դուրս եկանք։ Դիմացնիս մոլլեն տնկվեց.— Ո՞վ եք, դուք, գիշերով ի՞նչ գործ ունեք մզկիթում։

— Անտիոքի թուրքերից ենք,— արդարացավ հորեղբայրս,— լույսը չբացված եկանք մեր աղոթքը աստծոն առաքեցինք ու մեկնում ենք դեպի աստծո ողորմության, ցերեկը, արևին, քայլել չի լինում։

— Ապրե՛ք, զավակնե՛րս, ապրե՛ք, ձեզ հաջողություն, բարին ընդ ձեզ։

Քիչ անց արևը իր պայծառ դեմքը ցույց տըվեց։ Դանդաղ քայլերով գյուղեզր հասանք. մի բաց աղբանոցի պատի տակ, առավոտյան կենսաբաշխ արևից պատսպարված, մի խումբ մարդիկ նստոտած, կանգնած զրուցում էին, երևի երեկվա տարված ու այսօրվա տանելի աշխատանքի կամ էլ պատերազմի մասին, ինչպես և համատարած աղքատության մասին։ Հորեղբայրս ինքն իրեն, թե մեզ, ասաց.— Երթանք մի ճղարա (սիկարեթ) ուզենք։

— Պետք չէ, հորեղբա՛յր, մեզ կմորթեն...

— Մի՛ վախեք, ես նրանց...։

Հորեղբայրս իր մերկության հետ հաշտվել էր ու ամոթը կորցրել, անասնացել էր։ Գնացինք, նա բարևեց։ Մենք՝ երեխաներս, իրավունք չունեինք խոսելու, որ չմատնվենք։ Եվ նա ծխախոտ խնդրեց մեկից։ Այդ մեկը, որ սիկարեթի ծխախոտ տվեց, թուղթ չուներ, մի ուրիշից էլ թուղթ վերցրեց ու փաթաթեց։ Է՜, կրակ էլ չկա, մեկ այլ ուրիշից կրակ խնդրեց։ Մի երիտասարդ ասաց.— Սրանք հայեր կլինեն, եկեք, սրանց մորթենք...։ Ահն ու սարսափը պատեց մեզ, հորեղբայրս այս անգամ էլ դիմեց իր ճարտասանության՝ թե Անտիոքից ենք և այլն, և այլն։

Մի ծերունի էլ թե՝ ինչ գործ ունեք խեղճերի հետ, ա՛յ մարդ, թողե՛ք կորչեն...։ Դառնալով մեզ՝ գնացե՛ք, գնացե՛ք ձեր ճամփով, աստված ձեզ հետ...

Հորեղբայրս իր ճղարան քաշեց, մենք՝ երեխաներս՝ մեր շունչը...

Ավելի քան մի շաբաթ թափառելուց հետո, վերջապես, նախքան արևնամուտ, հասանք Մուհարդի՝ մեր ծանոթ գյուղը։ Հորեղբայրս, իր որդու հետ, իր պարտքը պատվով ու խղճով կատարողի հավատքով, հեռացավ գյուղի մեջ։ Ես ամաչում էի այդպես՝ համարյա մերկ, մարդու հանդիպել։ Արևը կորավ հորիզոնի հետևը։ Մարդկանց ոտքը փողոցից քաշվեց։ Հեռվում նկատեցինք մի կին, թոնիրից հաց էր հանում, հացի բուրմունքը քիթս խտղտացրեց, ինչքա՜ն ժամանակ տաք հացի բուրմունք չէի առել... Չորս կողմս նայեցի, մարդ չկար, երկչոտ ամաչկոտությամբ մոտիկացա ու բարևեցի, կինը ետ դարձավ, ինձ տեսավ.— Ուելի՜... (Աստվա՜ծ իմ...),— գոչեց,— Այս ի՜նչ վիճակ է...

— Մի կտոր հա՜ց,— աղերսեցի,— Կինը մի ափաչափ հաց կտրեց, տվեց։

— Տե՜ր աստված ողորմությունդ շա՜տ...։

Այդ գիշեր քրոջս ու հիվանդ եղբորս գտա ինձ ծանոթ գոմում, ուր մորական տատս ու Սարգիս քեռիս և Մարիամ հորաքույրս ևս էին խցկվել։ Այդ գիշեր... անմոռանալի՜ մի գիշեր, չորս տարեկան հիվանդ եղբայրս՝ Հա՜ց... Հա՜ց... հացի՜կ... շըշընջալով հոգին ավանդեց...։ Խիղճս ինձ տանջեց, որ հացի կտորը եղբորս չբերեցի։ Ի՜նչ իմանայի... Դառնագին լացեցի...

Հայրիկը ինձ մի խմբի հետ ճամբելուց հետո, քույրիկիս ու Անդրանիկին թողնում է տեղում, Սառա հորաքրոջս հետ դիմում է դեպի արևմուտք, մի նավատիրոջ մոտ ծառայող Բայրամյան Սամսոնի գյուղը։ Ութը-տասը օր անց հասնում է Սամսոնի մոտ։ Ցանկություն է հայտնում աշխատանքի ընդունվելու։ Սամսոնը միջնորդում է։ Անհետևանք։ Նավատերը ոչ ոքի չի ընդունում։ Հայրիկը շրջվում է դեպի հյուսիս, կետ նպատակ ունենալով հասնել մինչև Ծիսր Շուղուրի շրջան՝ Գուսեյր։ Շաբաթներ թափառելով հասնում է շրջանի Յագուբիե գյուղը՝ զուտ հայկական, բայց՝ արաբացած։

Յագուբիեն հիմնադրվել է այդ շրջանում շատ վաղուց, որի մասին համարյա տեղեկություն չունենք։ Գյուղը հաստատվել է մի բլրի վրա, 150—200 ընտանիքով, նույն այդ բլրի ստորոտին մի այլ նմանատիպ գյուղ՝ Ղնեյե, որը նույնպես զուտ հայկական, բայց՝ կաթոլիկ դավանանքով։ Լուսավորչական Յագուբիեյում միայն մեծահարուստ աղան է կաթոլիկ, երբ հարևան գյուղում, ընդամենը 15—20 րոպեի տարածությամբ, ո՛չ մի լուսավորչական, նույնպես արաբացած։ Այս երկու քույր գյուղերում՝ ո՛չ մեկ հայերեն իմացող մարդ։

Յագուբիեյում գոյություն ուներ թաղական խորհուրդ։ Նախագահ Աբու Ֆարահը կարգադրել էր եկեղեցին բացել, ամեն կիրակի առավոտ կոչնահարել ու պատարագ մատուցել մեն-մենակը, մասնշխար պատրաստել ու ժողովրդին բաժանել։ Ժողովուրդը՝ հավատացյալ, բայց ընդամենը 2—3 պառավ ու ծեր հազիվ պատարագին ներկա գըտնըվեցին։ Աբու Ֆարահը մի տղա, մի աղջիկ է ունեցել, ինքը ծերացած՝ ժամանակից շատ շուտ, միակ որդու պատերազմում զոհվելուց հետո։ Նա լռակյաց էր, ոչ ոքի հետ չէր հարաբերվում, տան սյունն ու ղեկավարը մնացել էր հաղթանդամ աղջիկը, 25-ը անց, և, պիտի ասել՝ տան տղամարդը, որովհետև նա էր մշակում հողերը անձամբ, վարում, ցանում, հնձում ու կալսում, հայրը՝ քայլող մի դիակ։ Պատահում էր, որ մասնշխարի համար մի բաժակ ցորենի ալյուր չունենային տանը, քույրիկիս տալիս էին մի բաժակ գարու կամ կորեկի ալյուր, և քույրիկս գնում էր մեծահարուստի տիկնոջ մոտ այն փոխելու ցորենի ալյուրով...։

*Հայրիկս գյուղի քահանայի հողերն էր մշակում, ու վարում, օրեկան երեք ափաչափ հացիկով։ Ավելին նրանք էլ չունեին, խեղճության մեջ էին, հազվադեպորեն այս երիտասարդը ներկայանում է եկեղեցի ու հայրիկին օգնում է պատարագի ընթացքում։*

*...Հետադարձ մի ակնարկ՝ մեր հայրիկին միանալու մասին։*

*Հայրիկը, իր թափառումների ընթացքում ծանոթություն է հաստատում Սկեյբիում՝ մի քեսաբցի ընտանիքի հետ։ Նույնպես ծանոթանում է Գաստոնի մի երևելի մարդու հետ, որը շրջանում հեղինակություն էր դարձել։ Յագուբիեյում հաստատվելուց հետո մի բանբերի հետ ինձ մի երկտող էր հասցրել՝ մինչև Մուհարդի, որով բացատրում էր ում մոտ իջնել Սկելբիում և Գաստոնում։ Պայմանավորվել էր այդ երկու ծանոթների հետ՝ Սկելբիից Գաստոն և Գաստոնից Ճիսր էլ Շուղուր, իմ, քույրիկի ու Անդրանիկի (նրա մահը հայրիկը չէր իմացել) ճանապարհորդությունը կազմակերպել ու ապահովել։*

*Մեր ուրախությանը չափ չկար։ Մենք երկուսով մի բարձ ու մի փոքրիկ վերմակ ունեինք, իսկ քույրիկը՝ շորերի մի փոքրիկ ծրար։ Ես՝ բացի իմ վրայի շորերի ծվեններից ոչինչ չունեի։ Ուստի մեր պատրաստությունն էլ րոպեներ էր տևելու։ Հաջորդ օրը, առավոտյան, մեր ունեցած իրերը երկու մասի բաժանեցինք, շալակնիս վերցրինք ու՝ դեպի Սկելբի։ Ուշ ժամանակ տեղ հասանք։ Հայրիկի քեսաբցի ծանոթները համեստ մարդիկ էին, իրենց ընթրիքից մեզ էլ բաժին հանեցին։ Երրորդ, թե չորրորդ օրը մի արաբ էին ճարել. իշուկով առավոտյան ներկայացավ։ Փոքրիկ նախաճաշը ինչ որ կար, արդեն վերջացրել էինք։ Մեր ունեցած-չունեցածը արաբը էշի վրա բարձեց։ Կենդանին չզգաց նույնիսկ, որ իրեն բարձեցին։ Ճանապարհ ընկանք։ Ես՝ կիսաարաբական գզգզված շորերով մի պատանի։ Քույրիկը՝ համարյա գնչուական շորերով։*

*Կեսօրին հասանք* Մըտըգի *բերդի (անունը կա, ինքը չկա) ավերակների ստորոտը։ Նույն կեղտաջուրը, ինչ երկու տարի առաջ։ Չկարողացանք ջուր խմել։ Շարունակեցինք մեր ճամփան։ Շուրջ չորս ժամ անց եղանակը ամպոտեց, հեռավոր հորիզոնները սևացան։ Աշունն իր վերջին խոսքն էր ուզում ասել։ Արևը մայր մտավ, թե՝ թանձր ամպերը օրը մթնեցրին, համենայն դեպս քամի բարձրացավ, հետո էլ կաթիլ-կաթիլ անձրև։ Արևագուրկ երեկոն ցրտեց։ Ցրտի հետ քամին ուժեղացավ։ Քամու բերած կաթիլները մեր դեմքին ավազանման գնդիկներ էին դառնում։ Սովածությունը և ցուրտը դաշնակցեցին՝ սպառվելու հասած ֆիզիկական ուժի դեմ։ Մեր ծնկները թուլացան։ Մեր արար առաջնորդը ինձ խղճաց ու էշի վրա դրեց։ Մի քիչ առաջացանք, քույրիկի ոտքերը հոգնեցին։ Ոտքերը նրան չէին ենթարկվում։ Արաբը ինձ իջեցրեց, քույրիկին հեծցրեց էշին։ Այս անգամ էլ քույրիկը ինքն իրեն չէր կարողանում պահել, սկսել էր սառչել գըշի (քամոտ անձրև) դեմ։ Ստիպված քույրիկին հրեց, անձրևից պաշտպանվելու համար քիչ առաջ ինձ տված մեշլեհ-վերարկուն ինձնից վերցրեց ու հագավ, մի բուռ քույրիկին թևատակին առավ, ձեռքի գավազանը ինձ տալով խորհուրդ տվեց էշին ծեծելով, վազելով Գաստոն գյուղ հասնել ու օգնություն խնդրել.—Շուտո՜վ, վազի՛ր. քույրիկդ սառչում է...*

*Մեկ ժամվա ճանապարհը երևի կես ժամում կտրեցի, արդեն լրիվ մութ էր, հանձնարարված մարդուն գտա, որը իր զույգ տղաներին օգնության շտապեցրեց։ Համարյա կես ժամ անց քույրիկին բերեցին կես մեռած, հազիվ էր շնչում ընդհատ-ընդհատ։ Տանտիրուհին իր զույգ աղջիկներով քույրիկի ոտքերը-ձեռքերը, քունքերը շըփելով-շփելով կենդանացրին նրան։ Քույրիկի շունչը բացվեց ու սկսեց կանոնավոր շնչել։*

*Հյուրընկալները՝ ընթրիքին, չգիտեմ ինչ կերան, բայց մեզ տվեցին մեկ-մեկ պնակ ջրիկ ճաշ ու կես հաց, երեք տարվա մեջ առաջին անգամ մեր տեսածը...։ Սկզբից քույրիկի կոկորդով ճաշը չէր իջնում. ազնվասիրտ տանտիրուհին գդալը, հացը ձեռքից վերցրեց, կուրծքն ու թիկունքը շփելով, թփթփացնելով, ապուրին առաջին գդալը օգնեց կուլ տալ ու իջեցնել։ Քույրիկի ճաշը գթալով, քչիկ-քչիկ կերցնելով կարողացավ կոկորդը բացել ու ճաշը ուտեցնել։ Տանտիրուհին մեզնից չզզվեց ու մեզ նոր ներքնակ ու ծածկոց տվեց, հանգիստ քնեցինք։*

*Հաջորդ առավոտյան մեր հյուրընկալները մեզ նախաճաշ տալուց հետո, մի ջորեպանի հետ Ճիսր Շուղուր ուղարկեցին։ Ճանապարհին քույրիկը չըհոգնեց, ջորու վրա հեծավ, իսկ ես՝ ես ինձ տղամարդ էի համարում։*

*Ես ու քույրիկը սկսեցինք թափառել Ճիսր էլ Շուղուրի փողոցները՝ փնտրելով գիշերելու տեղ։ Ում տեսնում էի, ապաստանի մասին էի հարցնում (արաբերենով)։ Մի մարդ ինձ մի բակ մատնանշեց, որը բացի դարպասից ուներ և երկու պատուհան՝ դռան երկու կողմերին։ Ներս մտա, ոնց որ անիծյալ, լքված բնակարան։ Պատերին կըռթնած չորս սենյակներից մեկի դուռը բաց էր։ Բակի վրա երկու լուսամուտ էին բացվում՝ առանց փեղկերի։ Կարելի էր գիշերել։ Երբ մթնեց, մեր ներքնակը փռեցինք գետնին. քար էլ չգտնվեց բարձի տեղ. վերմակը քաշեցինք վրանիս։ Երկու րոպե չքաշեց, ոջիլի բազմությունը խուժեց մեր վրա։ Մեր հանգիստը կորավ։ Գիշեր է, անծանոթ քաղաք, բնակիչները թուրք են, թե՝ արաբ։ Արաբներից վախ չունենք՝ թուրքերը մեզ սարսափի տակ էին պահել։ Ո՞ւր գնալ, ո՞ւմ դիմել, ի՞նչ անել, բացի համբերելուց այլ ելք չունեինք։ Ձեռք-*

ներս մեր մարմնի ո՛ր մասին որ քսեինք՝ ոտքերին, երեսներին, փորին կամ թիկունքին, մաշկի փոխարեն ոջիլի զզվելի զանգված էինք շոշափում։ Մինչև առավոտ աչք չփակեցինք։ Լույսի հետ, լույսի բացվելուն, ոջիլները աստիճանաբար նվազեցին։ Բայց դա չէր խանգարում մեզ փողոցները թափառել՝ ծանոթ մեկին հանդիպելու հույսով։ Կեսօրվա մոտ, հայրիկի հորեղբոր թոռ Արմենը... երկնքից իջավ մեզ համար...։ Այստեղ էլ հայրիկի իմաստնությունն ու հաշվարկները ճիշտ դուրս եկան։ Նա Արմենին նախորդ օրվանից հանձնարարել է իջնել Ծիսր քաղաք, երեք-չորս ժամ թափառել՝ մեզ հանդիպելու հույսով։ Եվ չէր սխալվել։ Նա մի խանութից երեք հաց վերցրեց և մի կտոր պանիր՝ կերանք։ Դա և՛ նախաճաշ էր, և՛ ճաշ։ Մենք գիշերով հասանք։ Անմիջապես մեր շորերը հանեցինք, որ Սառա հորաքույրս սկսեց եռացնել և ծածկվեցինք ինչ-որ միջոցներով։

...Մենք այն ձմեռ էլ, 1917 թ. խոտով էինք ապրում։ Հայրիկը իր քրոջ՝ Գոհարի լուրը Խեյտըրմից առավ։ Մի օր էլ, որոշեց՝ մենք խոտ ենք ուտում, թող նա էլ մեզ հետ խոտ ուտի...։ Մի օր առավոտ շուտ ճամփու ընկավ, մյուս օրը երեկոյան Գոհար հորաքրոջ հետ տուն մտավ։

Աշուն է։ Ձիթապտղի հավաք է։ Քույրիկն ու հորաքույրներս ինչո՞վ էին զբաղվում՝ չգիտեմ, բայց ես՝ հայրիկի ծանոթության շնորհիվ ձիթահանք մտա աշխատելու։ Պտղաղացի ուլունքանըման լողքարը պտտեցնող բազուկին լծած էշին էի քշում, ձիթապտուղ էի աղում։ Օրական մի հաց և շաբաթը մի թաս ձեթ էին տալիս։ Հորաքույրներիս հավաքած խոտը խաշում էինք, վրան աղ ու ձեթ էինք անում և ուտում։ Չգիտեմ որտեղից հորեղբայրս լույս աշխարհ ընկավ հիվանդ որդու հետ։ Երեք օր անց տղան մահացավ, ինքն էլ հիվանդ պառկած, ես մենակս՝ անզոր։ Հարևան գյուղացի երկու-երեք մարդ մոտակա մի լքված վայրում թաղեցին։ Մի շաբաթ անց հորեղբայրս էլ մահացավ։ Մի կերպ նրան էլ թաղեցինք... Մի կիրակի օր հայրիկը գնաց թաղման կարգը կատարեց...

Հայրիկը մի օր մի ծեր մարդու մոտ ինձ ուղարկեց մի ինչ-որ հանձնարարությամբ։ Գնացի, տեսա, որ ծերունին բամբակ է զտում մի հարմարանքի միջոցով, որը մի քիչ ճարպկություն ու աշխուժություն կպահանջի։ Ձիթհանքի աշխատանքը դեմքս փոխել էր, կարծես մի քիչ ուժ էի հավաքել.

— Էմմի՛,— ասացի,— թո՛ւյլ տուր մի քիչ ես աշխատեմ։

— Ռո՛ւհ, ուղե՛դ (գնա՛, տղա՛), դու՝ ո՞վ, բամբակ զտողն՝ ո՞վ։

— Փորձե՛մ։

— Ո՛չ։

Ծերուկը մի դույլ բամբակը զտել-ավարտելուց հետո հարմարանքից իջավ, մոտս եկավ իմ խնդրանքի վրա։ Ես անմիջապես տեղիցս ցատկեցի, դույլը լցրեցի չզտված բամբակով, դրի հարմարանքին մոտիկ։ Հեծա հարմարանքի վրա, աջ ոտքս դրեցի, հակառակ ուղղությամբ պտտվող զույգ գլանակների ներքևինին, որը թափանիվի առանցքն էր կազմում, և այդ թափանիվը պտտեցնող ոտնյակի վրա, աջ ձեռքով վերևի գլանակի բռնակը բռնեցի, ձեռք ու ոտքի սինխրոն շարժումով գլանակները շարժման մեջ դրեցի ու ձախ ձեռքով չզտված բամբակը բուռ-բուռ մատուցեցի։ Արդյունքը քաջալերող էր։

Ոգևորվեցի։ Մի դույլ բամբակը տասը րոպե էլ չտևեց։ Հանկարծ ծերուկը՝ սարսափահար ներս ընկավ, կանգնեց շփոթահար, ուրախության մի ժպիտ գծագրվեց դեմքին։

— Ուղե՛դ (տղա՛),— գոչեց ինքն իրենից դուրս եկած,— այդ որտե՞ղ ես այս աշխատանքը սովորել։ Արի՛ ինձ մոտ, ես քեզ փող կտամ, ինչքա՛ն կուզես։

— Չէ՛, էմմի՛, ես արդեն ձիթահանքում աշխատում եմ, ամո՛թ է այնտեղից դուրս գալ։

1918 թվականի դեկտեմբեր ամիսն ենք։ Մենք չէինք իմանում ռազմաճակատներում ինչ կար։ Մեզ համար մի բան էր շիշտված. ամենուրեք կատարյալ անիշխանություն էր։ Ծննդավայրի կարոտը, տարիների տանջանքներն ու ավայտանքները հայ գաղթական-աքսորական խլյակների սրտերն ու քայլերը դեպի տո՛ւն էին ուղղել։ Սամսոն աղան, իր ընտանիքով ու նույն կրակով վառվող համախմբված յուրայիններով ու հետևորդներով, Յագուբիեի ստորոտի Ղնեյի գյուղի եզրին կանգ էր առել ու հարցրեց իր մանկական ընկերոջ ու հետագայի թաղական-հոգաբարձու-քահանա գործակցի մասին։ Նրան ասել են, թե վերևում՝ Յագուբիեում մի քահանա կա, բայց անունը չգիտեն։ Սա անմիջապես մարդ է ուղարկել հայրիկին, որ նա էլ միանա հայրենադարձ թափորին։

Պատրաստվելու բան չունեինք և ոչ էլ՝ որևէ մեկից թույլտվություն խնդրելու։ Անմիջապես իջանք ու թափորին միացանք, ժամ առաջ Անտիոք հասնելու միտքը խթան էր հանդիսացել, ու մարդիկ շտապում էին անտրտունջ՝ հայրենի տան պատկերը աչքների առաջ։ Անտիոք հասանք կես գիշերն անց և, ըստ պայմանավորվածության, լցվեցինք հայոց եկեղեցի։

Հայրիկը դարձել էր խմբի հետապահը և 20—30 րոպե ուշացումով տեղ հասավ, հիվանդ, ուժից ընկած, իր քրոջ ամուսնու՝ Հովհաննես Նազարյանի հետ։

Շուտով լուսացավ։ Ժողովուրդը ուրախությունից համարյա չէր քնել։ Թուրք ազգաբնակչության կողմից ո՛չ մեկ ռեակցիա՝ հակազդեցություն։ Մերոնք սով չէին զգում... Արևածա՞գ...։ Դեպի գյո՛ւղ...

*Իրիկնամուտին Կալեր հասանք, ճիշտ այն ժամին, որ ժամին որ գյուղից դուրս էինք ելել 1915 թ. օգոստոսի 15-ին։ Ուղիղ 3 տարի 4 ամիս և 15 օր, կամ 1233՝ տանջանքներով ու տվայտանքներով, տառապանքներով ու արցունքներով, սարսափներով ու մահվան մտապատկերներով, սով ու համաճարակներով, մի խոսքով՝ սպիտակ ջարդով հյուսված օրեր...*

*Արևի վերջին ճառագայթների շողերը կիսաքանդ տներին ու խոպանացած տնամերձերին, շրջապատող սարագագաթներին գորշագույն ու ոսկեգույն շղարշ էին հագցրել։ Որբացած գյուղը սսկվել էր, դարձել՝ մի բուռ։*

*Ինչ հակադրություն։ Անծայրածիր, այրվող անապատներ ու սարալանջին ծվարած, որբացած, բայց՝ երազվա՜ծ գյուղ...*

*Ջովաշունչ ու քաղցրիկ գյուղ, որի դաշտերի ու պարտեզների վրա 5—6 տարի գյուղատնտեսական ամեն աշխատանք պիտի տանենք, որն ինձ խթան պիտի հանդիսանա, ավելի քան կես դար անց շրջանի ազգագրությունը կազմելու՝ հենվելով ինքնակենսագործունեության վրա։*

*1919 թվից սկսած որբացած գյուղն սկսեց շենանալ, շնորհիվ անձնուրաց աշխատասիրությամբ օժտված նոր սերունդների, մինչև 1939 թ., երկրորդ բռնագաղթը...*

## 10(226). ՄՈՒՍԱԼԵՌՑԻ ԱԴԱՄՅԱՆ ՍԱՐԳԻՍԻ[1] ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1906 Թ.)

*Դեռ 1914 թ. պատերազմը չէր սկսած, անթիվ անհամար մորեխ եկավ, երկինք-գետին չէր երեվար։ Ամբողջ բերքը փչացավ։ Աղ Աստծո կամքն էր, որ թշնամու ձեռքը չընկնի բերքը։ Մեկ ամիս ետքը Թուրք կառավարութենեն եկան, հայ տղաներուն բանակ կանչեցին։ Բոլոր տղաները գաղտնի Մուսա լեռը բարձրացան։ Թուրք պաշտոնյաները ծնողներեն պահանջեցին, որ տան իրենց զավակներուն, անոնք ալ ըսին.— Մենք չգիտենք ո՞ւր են։*

*Սկսան ծեր մայրերուն, հայրերուն ծեծել։*

*Ադոր վրա կառավարությունը հասկցավ, որ անոնք իրենց դեմ են։*

*Քանի մը օր ետքը երեք պատգամավոր եկան, ձեռքերնին թուղթ մը, ըսին.— Թող ձեր տղաները հանձնվին, թե չէ այդքան ժողովուրդը մեղք է։*

*Մենք լուր ղրկեցինք, որ չենք հանձնվում, ինչքան ուժ ունենք կկռվենք։*

*Աղ պատգամավորները գնացին, երկու շաբաթ ետքը ուրիշ երեք հոգի եկան՝ նույն գրությունը ձեռքերնին։ Մեր տղերքը նորեն մերժեցին։ Անոնք ալ գնացին։ Ետքը ուրիշ երեք հոգի մը էկավ, ձեռքին խիստ նկատողություն գրված էր։ Մեր տղաները անոնցմե մեկուն ականջը կտրեցին, աղ թուղթին մեջը փաթթեցին, ետ ղրկեցին, ըսելու համար, որ մենք հանձնվող չենք. մենք կռվող ենք։*

*Այդ որ տեսավ Թուրք կառավարությունը, մեծ ուժով՝ 200 հազար զինվոր, մեր վրա հանեց։ Ըսկըսանք կռվիլ իրար դեմ։ Թշնամին չկրցավ դիմանալ, քանի որ մեր կողմը մշուշ էր։ Աստված մեր պաշտպանն էր։ Երբ Թուրքերը մեզ վրա էին գալիս, մշուշն ալ էր գալիս, որ մեզի չտեսնան, իսկ մենք իրենց տեսնում էինք ու կռվում։ Ամեն կիրակի առավոտ մեծ զորքով հարձակվում էին։ Ոնց գալիս էին, էնենց էլ փախչում, գնում էին։ Ամենեն վերջին պատերազմին Մուսա լեռան բարձունքին վրա բարձրացած էինք, ալ տե՞ղ չկար. մեկ կողմը ծովն էր, մյուս կողմը՝ անդունդ։ Իրիկվա դեմ մեծ կռիվ եղավ, մշուշը նորեն մեզի օգնեց։ Ադոր վրա թշնամին փախավ, բայց սարից չիջավ, ապահով տեղ մը գտավ սարի վրա, որ առավոտը շուտ հարձակվի մեր վրա։ Մեր ժողովուրդը ժողով ըրեց, ինչ ընել մտածեց։ Երեսուն հոգի հրացաններով, գիշերը ժամը մեկին, գաղտնի գնացին անտառի միջով, որ նրանց հանկարծակիի բերեն, փախցնեն։ Ջեռքի ռռնակները նետեցին, հրացանները աշխատցուցին, Թուրքերը վախերնեն իրենց ունեցած-չունեցած զենքերը թողեցին, փախան։*

*Առավոտ ժամը 12-ին ծովին վրա Կիպրոսին կողմեն նավ մը երևաց։ Լողալով գացին, նամակ տարին, մեր դրությունը պատմեցին։ Նավապետը ըսավ.— Ութ օր ալ դիմացեք։ Նավը գնաց, ութ օրեն եկավ. 6 նավ էին։ Լեռան վրա մեր ունեցած ամեն ինչը այրեցինք, միայն շունչ-հոգի ազատեցինք։ 18 զոհ նահատակ տվինք, իսկ Թուրքերը՝ հազարներով կոտորվան։*

*Նավերը մեզի Պորտ Սաիդ տեղափոխեցին։ Մեր տղաները ուրիշ տեղերու տղաներուն հետ հայ լեգեոնական խումբ կազմակերպեցին։ Ֆրանսական բանակում՝ թշնամի Թուրքերուն և գերմանացիներուն հաղթեցին։ Նավերը ոնց մեզի տարեր էին, անանկ ալ ետ բերին Մուսա լեռ, աղի 1919-ին էր։ Քսան տարի խաղաղ ապրեցանք Մուսա լեռում Ֆրանսացիին տիրապետության տակ, ամեն ինչ նորեն սկսանք դասավորել, ցանել, հընձել...*

1 *Այս հուշապատումը գրի է առնվել 1973 թ. Էջմիածնի ճամփին, Մուսա լեռ ավանի բարձունքին, որտեղ սկսված էին Մուսա լեռան հերոսամարտին նվիրված հուշարձան-կոթողի շինարարական աշխատանքները, իսկ մուսալեռցի Սարգիս Ադամյանն այնտեղի պահակն էր։*

1939 թվին, երբ սանջակը տվին Թուրքին, հայերը ցիրուցան եղան։ Հայերը տուժեցին։ Թուրքերը իրենց դրոշակը Մուսա լեռան վրա բարձրացուցին։ Ֆրանսացիները մեզի Այնճար բերին, հող տվին, տուն շինեցինք, ցանեցինք, քաղեցինք։ Իննը տարի ետքը Հայաստանեն պատգամավորներ եկան, որ եթե հայրենական պատերազմը մեր օգտին վերջանա, պիտի մեր պատմական հողերը ետ վերցնենք...

Մենք ալ այդ հույսով 1946 թվին, 750 ընտանիքով, «Պոբեդա» նավով եկանք Հայաստան։

Սկսա կոլխոզում աշխատել։ Հիմա երկու տարի է Մուսա լեռան հուշարձանի պահակն եմ։ Հայրենիքի մուսալեռցիները դրամ հավաքեցին, որ իրենց ուժերովը շինեն. դեռ միայն կեսն է շինված, բայց մյուս տարի հուշարձանը պատրաստ պիտի լինի*...

## 11(227).
## ՄՈՒՍԱԼԵՌՑԻ ԲԱՂԴԻՇՅԱՆ ՄԱՐԻԱՄԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1909 Թ.)

1914 թ. Մուսա լեռան Հաջի-Հաբիբլի գյուղեն պապայիս տարին օսմանյան բանակ։ Ջահել մերս երեք փոքր երեխայով չհասցրեց լեռ բարձրանալ, և մենք ընկանք աքսորականների թափորի մեջ՝ Արաբստանի չոլերը։ Կհիշեմ, Թուրքի ժանդարմեքը էկան խրբաշը՝ մտրակը ձեռքներին, սկսան մեզ մխտելով, ծեծելով տանիլ Դեր Զոր։ Էնպե՜ս կծեծեին, որ մի ծերուկ ճամփին ընկավ գետին, հոգին փչեց։ Ջտեսնված շատ ժողովուրդ կար։ Ամեն կողմեն հայեր կային, Դյորտյոլեն, Հաճընեն, Զեյթունեն, ուրիշ շատ տեղերեն հայերին բերել, լցրել էին։ Էնտեղ մնացինք արևի տակ։ Բոլորին տարան Դեր Զոր։ Պապս, որ մեզ հետ էր՝ չգնաց, քանի որ իր տղեն, այսինքն իմ հերը, Թուրքի բանակի զինվոր էր։ Էդպես մենք ազատվանք Դեր Զորեն։ Անկե ետքը մեզի տարան Հոմս։ Կառավարութենեն ամր՝ հրաման էկավ. «Շներին Թույնե՜ք»։ Ան կուզեր հասկցնել, որ հայերուն գլուխը ուտեն, ամմա Ջեմալ փաշան մեզի տեր կանգնավ։ Ան իսկական շներին Թույնել տվեց, հայերին ազատեց մահեն, ամմա ըսավ՝ ձեր անունները պիտի փոխեք, Թուրքի անուններ պիտի դընեք, որ ձեզ չսպանեն...։ Կըսեին քի Ջեմալ փաշան փոքր ժամանակ հայ կնկա կաթ ծծած է, անոր համար հայերուն աղեկ աչքով կնայեր։ Ան վերջը հրաման տվավ, որ մեր անունները փոխենք. մեկը՝ Շուքրի, մեկը՝ Ահմեդ, մեկը՝ Հյուսեին դարձավ, կնիկներուն, աղջիկներուն անուններն ալ փոխեցին, որ գլուխնին փորձանք չգա։

Էսպեսով հայ մնացինք։ Մեզի ըսին՝ ձեզի Հալեպ կտանինք, ամմա Հալեպ չտարին, Թողին Հոմսում։ Հոն ամեն տեղից շատ մարդ կար, արևը շատ տաք կայրեր, մարդիկ յորղանների էրեսները հանել, չադրր էին սարքել, տակը մտել, որ արևը չխանձի։ Շոգ էր։ Ջուր չկար։ Թքնեիր, Թուքդ գետնին չէր հասներ։ Պուճուր քույրիկ մը ունեի, անունը Վարդուհի էր, ան ալ մորս գիրկն էր, լաց էր լինում, խաղող էր ուզում։ Մայրս, որ շատ գեղեցիկ կին էր, ձեռքը դոշին խփելով ըսկըսավ լալ.— Մեր բաղի Թարմեքի ճյուղերը կոտրվում էին հասած խաղողի ծանրութենեն, իմ բալան խաղող կուզե, ես չեմ կրնա տալ...։

Հետո էդ պուճուր քույրիկս ջուր ուզեց, ամմա ջուր ալ չիկար։ Խեղճը՝ ջո՜ւր, ջո՜ւր ըսելով, մորս գիրկին վրա մեռավ... Պապիս հետ հողը մի կողմ քաշեցինք, մեջը երեխուն դրինք, անցանք, գացինք։ Հասանք մի տեղ, էդ գիշերը մնացինք քարերուն, ժայռերուն մեջը։ Մեր մեջ մի քանի հիվանդ, ծեր, քոռ, Թոփալ տղամարդիկ կային, մընացածը՝ կնիկ էին ու էրեխա։ Մեկ էլ տեսանք, Թուրքերը էկան մեզ Թալանելու։ Պապս էնտեղ մեռավ...

Կհիշեմ, գիշերը պառկելու տեղ չիկար, մամաս պառկած էր գետնին, մենք ալ՝ ես ու Խաթուն քույրս, մայրիկիս մազերը կհյուսեինք, անոր մազերուն հետ կխաղայինք, մեկ ալ կնիկ մը էկավ, անցավ, նայեց մեզ, ըսավ. «Ամա՜ն խեղճ մախսըմ յավրուները խաբար ալ չեն, քի մայրերնին մեռած է...»։ Մենք չոջուղ էինք, ի՞նչ գիտնանք, որ մեր մեկ հատիկ մաման՝ ալ չիկա։

Մեր ծանոթ Մարգարին կնիկը օյա՝ ասեղնագործություն կըներ, արաբներուն կծախեր։ Արաբի կնիկ մը անոր կըսե՝ պզտիկ աղջիկ մը չիկա՞, ինձի օգնական ըլլա։ Աս հայ կնիկը ինձի ըսավ՝ քալե քեզի տանիմ արաբի մը տուն։ Ես էլա, հետը գացի։ Հարուստ, շատ բարի կնիկ մըն էր այդ արաբը, եթե արդեն մեռեր է, ողորմի իրան։ Ան մոդիստրա էր, տանը դերձակություն կըներ։ Հարուստ խանումները կուգային, կէրթային, խահվե կխմեին, ջղարա կծխեին, ես ալ հեռու ջրհորեն լուսվիկով՝ փարչով, ջուր կբերեի, բուրդ կըմանեի...։ Տարիքս ի՞նչ էր. հինգ-վեց տարեկան։ Ես անտեղ մնացի չորս տարի։ Վերջեն, երբ գերմանացին Հոմսեն դուրս եկավ, Թուրքն ալ ինկավ, անգլիացին ու ֆրանսացին էկան, մտան։ Օր մը նորեն լուսվիկս ձեռքիս ջրհորին գլուխն եմ, մեյմն

* Մուսա լեռան Հերոսամարտի հուշարձան-կոթողի բացումը կատարվել է 1976 թվին էջմիածնին հարակից Մուսա լեռ ավանի բարձունքին։

ալ հույն տերտեր մը էկավ, արաբերենով ինձի հարցուց.— Յա՛ բենթի, էնթա արմա՞ն (Ա՛յ, աղջիկ, դուն հա՞յ ես)։

Ես ըսի.— Բիթըմ՝ իսլամ, բըլ ալիմ՝ արման, այսինքն՝ լեզվով իսլամ եմ, սրտով՝ հայ։

Ըսավ.— Շո՛ւտ արի տանեմ քեզ ձերոնց քովը։

Ես տուն տարի լուսվիկով ջուրը, ոտնամաններս հանեցի, որ ձայն չելլե, կամաց-կամաց տունեն դուրս էլա, գացի տերտերի ետևեն։ Ղուրբան էղնեմ Աստծոն։ Տերտերը ինձի տարավ Հոռոմի թաղի որբանոցը, հոն շատ որբեր կային, անոնց մեջեն գտա խաթուն քույրիկիս։ Գտա, ուրախացանք, բայց ես հայերեն խոսելս մոռացել էի, արաբերեն էի խոսում։ Մեր լեզուն մոռացել էի...

Ժամանակ մը ետքը որբանոց էկավ հորաքույրս, մեզ գտավ, արաբայով տարավ Անթաքիա՝ Անտիոք, քեռուս տունը։ Քեռիս ալ նոր էր ամուսնացել։ Իր կնիկին ըսավ.— Էս էրեխեքի խաթրին չե՛ս կպնի, մայր ու աղջկա պես կապրիք...

1919 թվի աշնանը նստած էինք քեռուս տանը, մեկ էլ լսում եմ. «Խարիկենց Սարգիսն էկա՛վ թուրքական բանակեն»։ Մեկ էլ տեսնամ, երկու հոգի ներս մտան, սկսան կարոտով ինձ ու քրոջս պաչել։ Չգիտեմ ո՞ր մեկն էր իմ հերը։ Բանակում թուրքերը կիմանան, որ սպապաս հայ է, կխփեն։ Խեղճ հերս թուրք ասկյարի շորերով վիրավոր ընկած կըլլա գետնին։ Անգլիացիները կուգան, կըկարծեն թուրք զինվոր է, չեն ուզեր մոտենալ։ Հերս խաչ կհանե, որ ցույց տա, որ քրիստոնյա է։ Անգլիացիները կտեսնան, որ քրիստոնյա է, կտանեն, վերքերը կկապեն, ուտելիք կուտան, կաթ կխմեցնեն, երբ կլավանա, կէլլա, կէրթա Հոմս՝ մեզ փնտրելու։ Միլլեթ ֆեքիլը այսինքն՝ անտեղի մեծավորը, տետրակը կբանա, կըսե՝ քու հարազատներդ հոս չեն։ Հերս հարցնելով, հարցնելով կուգա մեզ կգտնա...։ Արդեն հրաման էլած էր, որ ով ուզե՝ կրնա իր տեղը ետ երթալ։ Հերս վերցրեց մեզ, տարավ Մուսա լեռ։ Հոն ո՛չ տուն կա, ո՛չ մեր կա, ո՛չ վրանիս հագուստ կա, ո՛չ մի բան։ Քեռուս կինը մի բարակ վերմակ էր տվել. երեք հոգով տակը կպառկեինք...։ Հերս գնաց ածուխ բերեց, հողից աման-չաման բերեց։ Նոր՝ տուն, տեղ էղանք։ Նոր մորս հետ ալ ամուսնացավ, երկու եղբայր էլ ունեցա...

Տարիներ անցան, ես ալ մեծցա, ամուսնացա Արարայի ճակատամարտեն նոր վերադարձած կամավոր Կարապետին հետ։ Տուն-տեղ էղանք։ 1939-ին, երբ ֆրանսացին անգլիացիին հետ Ալեքսանդրետի սանջակը, Մուսա լեռն ալ հետը տվին թուրքին, մենք չուզեցինք թուրքին հետ ապրիլ, մեղի տարին Այնճար։ Հոն սկսանք ծայրեն՝ նոր տուն շինել, ջուր բերել, այգի, ծառ, ծառաստան տնկել... վերջն ալ ամեն ինչը թողինք, 1946 թվին եկանք Հայաստան...

Շատ դարդ եմ տեսել, շատ կորուստ եմ տեսել, շատ աշխատել, շատ չարչարվել, հիվանդացել եմ։ Առաջ Լենինականը մնացինք։ Երկար տարիներ աշխատեցի Լենինականի տեքստիլ-տրիկոտաժի ֆաբրիկայում։ Հետո փոխադրվանք Երևանի Մալաթիա թաղը։ Հոս ալ նոր տուն շինեցինք, այգի տնկեցինք... Երեք տղաներս՝ Առաքելը, Գևորգը, Սարգիսը և աղջիկս՝ Ազատուհին, ամուսնացած են, տուն-տեղ, երեխաների տեր են։ Գևորգս բանասիրական գիտությունների թեկնածու է, Ակադեմիան կաշխատի, հիմա Կիպրոս ղրկած են, Մելքոնյան վարժարանը հայոց լեզու կուտա։ Ես ալ կաղոթեմ, որ խերով, բարով ետ վերադառնա։

## 12(228).
## ՄՈՒՍԱԼԵՌՑԻ ԲԱԼԱԲԱՆՅԱՆ ԱՐՏԱՇԵՍԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1926 Թ.)

Հայրս՝ Մովսես Բալաբանյանն ինձ պատմել է, երբ Ֆրանկի (ֆրանսիական) զորքը հարձակվել էր թուրքերի վրա, մեր Առաքելը մեկ-մեկ անհետանում էր, երբեմն՝ կարճ, երբեմն՝ երկար ժամանակով։ Իրեն միշտ զգուշացնում էի, որ երբ տեղ գնա՝ իմաց տա կամ առանձին չգնա։ Մի երեկո տեսնեմ Առաքելը չկա։ Տղաներից ոչ ոք չգիտեր, թե նա ուր է գնացել։ Գիշերը մոտենում էր կեսին։ Արդեն որոշել էի գնալ փնտրելու, երբ հեռվից լսեցի նրա կոշիկների ձայնը։ Նա հագնում էր ֆրանսական զինվորի կոշիկ՝ տակը մեծ-մեծ մեխերով և դրանք ձիու պայտի պես կլոր շարքով մեխված էին կոշիկի կրունկին։ Երբ Առաքելը քայլում էր, մեր Գևորգն ասում էր.— Կույր ձին եկավ, կույր ձին գնաց...

Առաքելը գնում է գյուղ՝ Բիթիաս, տեսնի ինչ կա, չկա։ Օրը մթնում է, և նա միամիտ սկսում է լեռ բարձրանալ գյուղի ճամփով։ Երբ մոտենում է գյուղի ծայրին, հանկարծ թուրքի ասկյարների պահակը ձայն է տալիս.— Հե՛յ, ո՞վ ես, կանգնի։ Իսկ մեր Առաքելը ձայնի ուղղությամբ կրակում է մթության մեջ։

— Ամմա՛ն, մեռա,— լսվում է մեռնող ասկյարի ձայնը։

Առաքելն սկսում է վազել ճամփով։ Քիչ անց, մի ուրիշ տեղ, էլի թշնամին ձայն է տալիս, որ

*կանգնի, ո՞վ է եկողը։ Առաքելն այդ ուղղությամբ էլ է կրակում և այստեղ էլ է սպանում մեկին։ Սկսում է ավելի արագ վազել։ Նույն պատմությունը կրկնվում է երրորդ անգամ. Առաքելս երեք ասկյարի սպանում է։ Այս անգամ արդեն նրա ուղեղն սկսում է աշխատել, թե՝ ուղիղ ճամփով պետք չէ գնալ։ Վերջապես նա շեղվում է ճամփից և մեծ դժվարություններ հաղթահարելուց հետո և երկար ժամանակ տառապելուց հետո, մի կերպ գալիս ու հասնում է մեր մոտ և այդ դեպքից հետո, նա այլևս մենակ չի գնում ոչ մի տեղ։*

*Այդ գիշեր այդ հատվածի թուրքական զորքերի մեջ խուճապ է առաջանում։ Նրանք լուր են տարածում, թե ֆրանսիական զորքը հարձակվել է թուրքական պահակակետի վրա և բոլորը խուճապահար թողնում են իրենց դիրքերն ու փախչում։*

*Հետագայում մի թուրք սպա պատմեց հետևյալը. «Ես այդ ժամանակ կապավորի սպա էի և իմ տրամադրության տակ եղած ասկյարներով հսկում էի Բիթիաս-Սանդրանկ ճամփաների անցուդարձը։ Այդ գիշեր ես գնացել էի կենտրոն Բիթիաս, մեր բինբաշու (հազարապետ) մոտ։ Ժամը 11-ը կլիներ։ Հանկարծ երկու զինվոր շնչակտուր ներս ընկան սենյակս ու ասացին, որ ֆրանսական զինվորները հարձակվել են մեր թուրք զինվորների վրա, երեքին սպանել են և իրենք անցել են առաջ գնալու։ Մենք՝ թուրքերս, դրանից առաջ արդեն լուր ունեինք, թե Մուսա լեռան վրա էժնէբի (օտարերկրյա, իմա՝ ֆրանսիական) զորք կա...»։*

*Պատմում էր հայրս ու քա՜հ-քա՜հ ծիծաղելով ավելացնում.— Խեղճ թուրքերը ուրտեղե՞ն գիտնային, որ դա մեր Առաքելն էր՝ իր ֆրանսական կոշիկներով ու դիպուկ կրակելու վարպետությամբ։ Մենք՝ մուսալեռցիներս, համեմատած թուրքերի զորքերուն շա՜տ քիչ էինք, քիչ էինք, բայց՝ քա՜ջ էինք...*

*Ուրիշ անգամ մըն ալ նորեն դեռ Մուսա լեռան վրա կռվում ենք, մեկ էլ անձրևը ուժեղացավ։ Թշնամին սկսեց քայլ առ քայլ բարձրանալ դեպի վեր։ Մենք զենքերի ձայներից զգում և հասկանում էինք, որ թշնամին բարձրանում է, բայց հրաման կար՝ ոչ ոք իր տեղեն չշարժվի։*

*Ես մի տասնյակ մարտիկներով հսկում էի Բիթիասի մի ելքը դեպի լեռ, դեպի Գյարմեր շեր (Կարմիր ժայռ)։ Մյուս կողմից ոչ մի շարժում չկար։ Մենք արդեն գիտեինք, որ թշնամին գտել էր բարձրանալու թույլ տեղը՝ Քեբուսիայի կողմից։*

*Այդ գիշեր, մեծ ճակատամարտի գիշերը, հրաման եկավ սուրհանդակի միջոցով. «Խիստ գաղտնի պահել հսկելու տեղերը, չծխել, բարձրաձայն չխոսել, կրակ չվառել։ Կարգը խախտողները տեղում կգնդակահարվեն»։ Մենք իրար հետ պիտի խոսեինք ձեռքի հպումով, իսկ դրսից եկողը պիտի հայտներ մեզ ծանոթ նշանաբան՝ թռչունի ձայնը։*

*Կես գիշերն անց, հանկարծ հեռվում խառնաշփոթ աղմուկ բարձրացավ, ես հասկացա, որ ամեն տեսակ զենքերի կրակոցներ էին լսվում։ Գեվորգը փսփսաց.— Հե՜յ վախ, թշնամին բարձրացավ Դամլաջըք։*

*Ես ականջ դրի և ուշի ուշով սկսեցի լսել։ Կրակոցների ձայները կամաց-կամաց սկսեցին ցածիջնել։ Ես մոտեցա և ամեն մեկի ականջին փըսփըսացի.— Տղա՜ք, թշնամին փախչում է. ա՜յ լսեցեք։*

*Շուտով բոլորն համոզվեցին, որ այդպես էր։*

*Առավոտյան սուրհանդակը եկավ և պաշար բերեց մեզ ասելով.— Այս գիշեր դուշմանը փախավ։ Մենք զոհեր չունենք, գրավել ենք մեծ թըվով փամփուշտներ, զենքեր, մի ձի, մի ջորի և մի քիչ էլ ալյուր։*

*Այդ դեպքից հետո թշնամին էլ չէր համարձակվում գրոհել մեր վրա...։*

*Մեր երկրացի Գապագյան Եսային ժամանակին ինձ պատմել է. «Մեծ ճակատամարտի օրը, երեկոյան դեմ թշնամին բավականին առաջացավ, բայց մեր քաջերի զենքի ճնշման տակ, թշնամին հարկադրված եղավ նահանջել։ Թշնամին այդ գիշեր ճամբար դրեց մեր՝ Սընջառեն տայրը կոչված հարթավայրում։ Պետրոս Տմլաքյանը մեզ՝ երեսուն հոգուս կանչեց ու ասաց.— Իմ առյո՜ւծ եղբայրներ, եթե թշնամին մնաց մեր լեռան վրա այս գիշեր, վաղը՝ մեր վերջն է։ Մեր ուժերով այս գիշեր նրանց այնպես հարվածենք, որ հավիտյան չմոռանան։ Գնացե՛ք, բոլորդ էլ ճարեցե՛ք փամփուշտով հրացան, ատրճանակ, բոմբաներ (ձեռնաշեն ռումբեր)— երկու ժամից հետո այստեղ լինեք։*

*Մենք՝ երեսուն տղաներով գնացինք, մի ժամ հետո վերադարձանք նույն տեղը։*

*Պետրոսը կանչեց տեր Աբրահամին և ասաց նրան.— Տե՛ր հայր, պահպանիչ կարդա մեր գըլխին. վաղը մեր դիակները չես կարող գտնել, որ արարողություն կատարես։*

*Տեր հայրը պահպանիչն ասաց և գնաց։ Մնացինք մենք։ Նա կրկին դարձավ դեպի մեզ և հրամայեց.— Հիմա, հենց այստեղ քնենք։*

*Մենք իրար գրկած, բաց երկնքի տակ քնեցինք։ Ինչքան էինք քնել, չեմ հիշում, երբ մեկն ինձ բզեց.— Վե՛ր կաց, վե՛ր կաց։*

*Արթնացանք բոլորս։ Պետրոսը ձայն տվեց և ասաց.— Եղբայրնե՛ր, հիմա մենք պիտի գնանք թուրքերի վրա։ Նրանց օղակենք. մի ելք թողնենք, այն էլ ճամփա՝ դեպի ցած։ Հինգ-հինգ մենք պիտի մոտենանք նրանց ճամբարին։ Բոլորդ պիտի գտնեք հարմար դիրքեր, փոսեր, ժայռեր կամ խրամատներ։ Ես հրաման կտամ բարձրաձայն, ֆրանսերենով, դուք՝ կկրակեք ճամբարի վրա և*

կթաքնվեք։ Նրանք մահախուճապ պիտի փախչին։

Մենք մոտեցանք ճամբարին, երբ գրեթե բոլորը քնած էին։ Հատուկենտ ասկյարներ կրակ վառած, չորս կողմը նստած զրուցում էին։ Մենք լրիվ տեղավորված էինք, երբ ազդանշանը լսվեց։ Մենք պատրաստվեցինք։ Խորհրդավոր ու լուռ մթության մեջ լսվեց Պետրոսի ֆրանսերեն հրամանը՝ ուշադրությո՛ւն, կրա՛կ։

Վեց տեղերից կրակ բացեցինք թշնամու վրա և մեր ռումբերն էլ նետեցինք։ Նրանց վրաններից 20—30 մետր հեռավորության վրա էինք։ Այդ պահին նրանց բաշ կոմանդորը (գլխավոր հրամանատար) ամբողջ ձայնով բռռաց թուրքերեն.— Տղանե՛ր, ձեր գլուխներն ազատեցեք։

Թշնամին յուրայինների վրա կրակելով սկսեց փախչել։ Կոմանդորի բղավոցները, ասկյարների կրակոցները, ռումբերի պայթյուններն այնպիսի աղմուկ բարձրացրին, կարծես երկինքը փուլ եկավ։ Մենք, ըստ նախնական հրամանի պառկեցինք մեր տեղերում։ Մինչև տասը րոպե ամեն ինչ վերջացավ։ Իսկ մենք, ինչպես եկել էինք գաղտագողի, այնպես էլ վերադարձանք ճամբար՝ ողջ, առողջ և շատ բարձր տրամադրությամբ։

Երբ տեղ հասանք, Պետրոսն ասաց.— Հիմա գընացեք, հանգիստ քնեցեք։

Մենք գնացինք «տուն» և քնեցինք։

Այս էջը բացակայում է Տիգրան Անդրեասյանի գրքի մեջ, սակայն այնտեղ կա մի նախադասություն. «Հաջորդ առտու իմացանք, թե՝ ատըրվան դեմ թշնամին քաշված, հեռացած է, անձրևին տակը անոթի գիշեր մը անցնելե հետո...» (էջ 66)։ Ես հարց տվի, թե ինչո՞ւ ինքը (Տիգրան Անդրեասյանը) իր գրքի մեջ չի գրել այդ մասին։ Եսայի ամմին (հորեղբայր) պատասխանեց.— Ես քանի մը անգամ պատմեցի իրեն այս բանը և խնդրեցի, որ գրի իր մոտ։ Նա ասաց՝ կգրեմ, բայց հետո չիմացա՝ գրե՞ց, թե՝ ոչ։

Իսկ մեր մուսալեռցի Տոնիկյան Հակոբը ինձ պատմել է հետևյալը. «Ես թուրքի ասկյար էի։ Գիշերով փախա։ Քանի օր ու գիշեր քայլում էի, լավ չեմ հիշում։ Գնում էի միայն գիշերները։ Երբեմն կույրի նման, երբեմն՝ կատվի նման, գողի պես։ Քաղցած, ծարավ, ոտաբոբիկ, կիսամերկ։ Հագինս ո՛չ զինվորի, ո՛չ էլ գեղջուկի կերպարանք էր տալիս ինձ, քանի որ սկզբից հին հագուստ էին տվել ինձ և այն էլ զուգե զոհված զինվորի հագուստ էր։ Մաքուր չէր և շան հոտ էր գալիս վրայից։ Ես լվացի։ Այն չորս տեղից ծակված էր։ Ասացին, որ դրանք գնդակների տեղեր են։ Մի օր երեկոյան դեմ, իմ թաքնված տեղից նկատեցի Մուսա լեռը և որոշեցի ինչ գնով էլ լինի մեկ-երկու օրից հասնեմ։ Առաջին իսկ գիշերը այդ տեղից նկատեցի, որ թուրքական զորքը շարժվում է դեպի Մուսա լեռ։ Մեծ զգուշությամբ հետևում էի թուրքական զորքին և միշտ ճարպկորեն թաքնըվում, որ ինձ չնկատեն։ Ամբողջ մի գիշեր գնալով՝ լուսադեմին հասա Բիթիասի մոտերքը, ինձ ծանոթ տեղերը։ Այդ օրը քնեցի խիտ թփերի մեջ, երբ զարթնեցի, արևը մայր էր մտնում, իսկ ես լսում էի զինվորների ձայներ ու թնդանոթների կրակոցներ։ Երբ մութն ընկավ, զենքերի ձայները մարեցին։ Բիթիասի ներքևի պարտեզների միջով սկսեցի կամաց-կամաց բարձրանալ դեպի վեր։ Ինչպես բարձրացա, հիմա չեմ կարող հիշել։ Բարեբախտաբար ես առանց իմանալու շրջանցել էի թշնամու առաջավոր գիծը և մոտեցել մերոնց դիրքերին։ Հանկարծ ես մի ձայն լսեցի, որը խոսում էր մեր բարբառով։ Կրկին ու կրկին ականջ դրի և համոզվեցի, որ մերոնք են, սկսեցի վազել դեպի ձայնը։ Այդ պահին մեկը ձայն տվեց.— Դուղա՛, տոն ո՞ւվն իս (Տղա՛, դու ո՞վ ես)։

Ես հազիվ կարողացա մի բառ ասել.— Իս իմ, դուղա՛, իս իմ (Ես եմ, տղա՛, ես եմ)։

Ես նստա ու չկարողացա վեր կենալ։ Նրանք իրենց դիրքերից կանչում էին, բղավում.— Արի՛, շո՛ւտ արի՛...

Իսկ ես այլևս չէի կարողանում խոսել ու վեր կենալ։ Այդ պահին ես նկատեցի, որ ոտքերս ահավոր ձևով ուռել էին։ Ինձ թվում էր, թե կապված էի գետնին։ Մոտեցան ինձ երկու կտրիճներ։ Հազիվ կարողացա ասել.— Ջո՛ւր տվեք...

Էլ բան չեմ հիշում։ Աչքերս բացի, տեսա, որ անկողնում եմ և մի տարեց կին ոտքերիս վերքերն է լվանում։ Նա ինձ բերեց մի թաս տաք ճաշ-ապուր։ Ես խմեցի, քիչ անց նորից քնեցի։ Ութը օր անց ես արդեն լավ էի զգում և խնդրեցի, որ ինձ ուղարկեն ճակատ։ Մի քանի օր անց ինձ զենք տվին և նշանակեցին իմ զորախումբը։ Գնացի կռվեցի մինչև մեր հերոսամարտի վերջը»։

## 18(229).
## ՔԵՍԱԲՑԻ ԱԲԵԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1903 Թ.)

1909 թ. Ադանայի ջարդը որ եղավ, Շաղրան աղան քառասուն հազար բաշըբոզուկ հավաքել, եկել էր Քեսաբը թալանելու։ Եկել հասել էր Օրդու։ Մենք սկսանք դիմադրել։ Էսգյուրան Ներքին գեղում կռիվ եղավ, չորս-հինգ ժամ տևեց, մենք դիմադրեցինք։ Վերջիվերջո ըսին մերոնք.— Այլևս անհնար է. զենք չկա, հայդե՛ փախի՛նք։

Մենք գնացինք ծովեզերքը Քեսաբի։ Ես վեց

տարեկան էի.— Յաղա՛, զընողներն իգուն (Հա՛յր, սպանողներն եկան),— ասեցի։

Իսկապես եկան, ծառի թփերի միջից հորս բըռնեցին, քաշեցին, գետնին պառկեցրին։

— Ամա՞ն, յաղա՛,— ասեցի, հորս վրա ընկա, սկսա լալ։

Մարդիկը կանգնեցին ըսին.— Մենք ալ երեխայի տեր ենք, պիտի մորթեինք, գազանները պիտի ուտեին։ Մենք էս երեխային բաշխեցինք քո կյանքը, ումից ուզում ես գտիր քո մահը։ Գնա՛, հալա՛լ ըլլա քեզ։

Էդ մարդիկը գնացին։ Ես ըսի.— Յաղա՛, քաղցուձ իմ (հա՛յր, քաղցած եմ)։

Գետինները չոր հացի կտորներ գտանք, կերանք։ Հեռուեն ֆրանսական նավը էկավ Լաթաքիա։ Համիդը ինկավ։ Անոր ամօղլի Ռաշիդը էկավ։

Թալեաթը, Էնվերը, Ջեմալը Համիդի փաշաներն էին, ութ օրից հետո հյուրիեթ եղավ, եկանք տուն։

Դրացի թուրքերը ինչ որ տարել էին, ետ բերին՝ յորղան, դոշակ, քիլիմ, կով, այծ, ոչխար...

Եթե երկու վկա բերեիր, որ քո ունեցվածքդ է «ա՛ռ» ասում էին՝ կուտային տիրոջը։ Տուները այրված էին։ Քանի կարմիր ոսկի տվին, շինեցինք։ Բայց հետո, երբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, մեզ ասին.— Հայ եք, ուրեմն՝ Անգլիո, Ֆրանսիո լրտեսն եք,— մեզ տարին աքսոր։

1915-ին ամառը գաղթեցրին Օրդու։ Տասնհինգ օր հոն մնացինք, հետո՝ Ջըսըր-շըղըր։ Քսանհինգ օր հոն մնացինք, մինչև աշուն հասանք Եբրուտ-Նեբըկ՝ Դամասկոսից հեռու։ Իրիկուն էր հասանք։ Հոն չորս տուն բողոքական կար։ Պատվելիի կինը հաց դրեց կերանք։ Առավոտը էլի հաց տվեց։ Մի շաբաթ մեզ պահեց։

Մենք բոլորս երկու հարյուր հոգի կանք։ Ո՛չ տուն, ո՛չ տեղ, ո՛չ հաց, ո՛չ ջուր։ Արաբ քրիստոնյա բժիշկ մը կար, ամեն առավոտ հաց, դեղ կբաժներ։ Ամեն օր հինգ-վեց հոգի կմեռներ, կընիկները խոտ կհավաքեին, որ տղոցը կերցնեն։ Տղամարդիկ դգալ կշինեին, որ ծախեն, փարա ըլլա։ Ասպես ձմեռն անցավ։

Գարնանը թուրք կառավարությունը էլի մեզմե զորք հավաքեց, աշխատող ձեռք էր պետք իրեն։ Հորս տարին։

Եբրուտ-Նեբըկ մնացինք երկու տարի։ Եկանք Հոմս, մեկուկես տարի ալ հոն մնացինք։ Առաջ Ղալադուրանի ծովեզերքի մարդկանց տարին Պորտ Սաիդ՝ ոտքով, Երուսաղեմի ճամփով։ Հոմսից գացինք մուրալով-զուրալով։ Ճանապարհին մերս մեռավ, մնացի մեն-մենակ։

Էկա հասա Քյուրդ դաղի, ընկա արաբների մոտ Ղընեմիեի մոտերքը։ Պատահում էր սարը մնում էի, անասունները կարծեի։ Հոն մնացի ինը ամիս, աղաս երկու ախոռ անասուն ուներ, անոնք կարծեի։

Հետո լսեցի, որ քեսաբցիները ետ են եկել։ Միտքս դրի, ըսի. «Մինչև գարուն ես ալ կփախնեմ»։ Դիմացը՝ ձորեն ան կողմը, Քեսաբն էր արդեն։

Գարունը եկավ։ Օր մը աղան էկավ իրիկունը, ըսի.— Աղա՛, պիտի գնամ։

Ըսավ.— Ինչո՞ւ կէրթաս, քեսաբցիները գաղթած են։

Ըսի.— Չէ՛, լսել եմ, որ ետ են եկել։

Աղաս ինձի երկու չափալախ խփեց, ըսավ.— Հանի՛ր շորերդ։

Հանեցի, տվի իրեն, վարտիքով մնացի։

Հիմա Լաթաքիա պիտի էրթամ։ Ճամփա էլա, մուրալով, մարդկանց բեռներին օգնելով, երկու կտոր հաց վաստակելով, ճամփա գնացի։

Մարդիկ տեսան ծոցս երկու կտոր հաց կա։ Ես ալ երեխա եմ, ինձ ծեծեցին, հացերը գողցան, առին տարին։

Անոթի, լալով կերթամ, մեկ էլ կեցուցին ինձի հարցուցին.— ո՞ւր ես գնում։

— Դար բըլ Լաթկի (դեպի Լաթաքիա)։

— Ո՞ւմ տղան ես։

— Ահմադի։

— Արի՛ ընկերանանք։

— Ընկերանա՛նք։

Պատմեցի գուլխես անցածը, լավ մարդ էր։ Ես ալ սոված, հոգնած, ծեծված։ Տասնչորս ժամ քալեր եմ. առավոտը ելեր եմ, արդեն գիշեր էր հասանք խան մը։ Քնեցինք։ Առավոտը օգնեցի մարդուն բեռները բարձեցի, ես կամացուկ փախա։ Երեք օր սոված մնացի, հարցրեցի մեկուց.— Ո՞ւր է Քեսաբը։

— Էդ կողմն է։

Էլա մինչև Քարսանա մի օրվա ճամփան երեք օրեն հասա, անոթի, ծարավ, հոգնած, դադրած։ Տուն մը տեսա, գացի դուռը զարկի։ Թաթեր էին։ Ինձի տեսան, մեղքցան, հաց տվին կերա։ Եկան տունին տղաները, նստեցրին, կերցրին, լավ յաթախ տվին, քնեցի։ Առավոտը ըսին.— Մենք թութուն պիտի ցանենք, դու մեզ օգնիր։ Արի՛, մնա մեր մոտ։

Մնացի երեք օր իրենց մոտ, օգնեցի։

Ըսին.— Մնա՛։

— Չէ՛, չե՛մ մնա։

Ճամփա ընկա։ Հասա Ջեբել Աքրա, բայց հակառակ կողմում եմ, լեռան մյուս փեշը, դիմացս եկողին հարցրի.— Դոր բըլ Քեսա՞բ (դեպի Քեսա՞բ)։ Մարդը ճանչցավ ինձի.— Դուն Օհաննեսն ես,— ըսավ,— մորդ ես թաղեցի, կհիշե՞ս։

— Հասե՞լ եմ Քեսաբ։

— Հա՛, միասին կէրթանք։

Հեռվից մեր գյուղի ծառերը արդեն երևում էին։ Գերեզմանոցի ծայրը եկանք, մեր պարտեզները

տեսա, հորեղբայրս փորում էր հողը։ Տեսա շերամ են պահում, թթի տերև են հավաքում։ Ապրիլ ամիսն է արդեն։ Բարևեցի, լացեցի, մտա տուն, տեսա պատուհանները հանված, տանիքը խոտ էր բուսած, ոչ ոք չկար մերոնցից։ Յոթ հոգուց միայն ես էի մնացել։

Ինձ տարին որբանոց։ Մնացի մեկ-երկու տարի Հալեպի որբանոցը։ Տասներկու հազար որբ կար, Ահարոնյան պատվելին էր էֆենդին։ Հե՛մ դպրոց էր, հե՛մ արհեստանոց։ Մնացի երկու տարի։ Վերջը հարցրին.— Ուզո՞ւմ ես ամուսնանալ, քեզ ամուսնացնում ենք, վեց ամսվա տունի քիրան տալիս ենք։ Աշխատողին փող էին տալիս. արդեն քառասուն մեջիդիե ունեի խնայած, գնացի Քեսաբ։ Մեր տունը նորոգեցի։ Հետո գնացի Իսկենդերուն։ Ամուսնացա Բերսիբի հետ (Բեաթրիսի հետ), նրանք ևս վեց հոգով աքսոր էին գնացել և միայնակ էր վերադարձել։ Մեր տունը միհարկանի էր, երկհարկանի դարձրի։ Չորս անգամ տուն եմ շինել։ Հետո Բեյրութ գնացի։ Պատշար եղա։ 1947 թվին եկանք Հայաստան, էջմիածնի շրջանում հաստատվեցինք։

## 14(230).
## ՔԵՍԱԲՑԻ ԲՈՅՆՄՇԱԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1904 Թ.)

*Քեսաբում վեց հազար հայություն կար։*

*Ամենեն վերջը մեր Քեսաբը գաղթական տարին։ Արդեն 1913 թ. թուրքական կառավարությունը զորք հավաքեց։ Ձենքն ալ եկան հավաքելու, բայց մենք դագաղի մեջ լցրինք, հողին տակը թաղեցինք։ Մենք էլ ուզում էինք կռվել, մուսալեռցիներուն պես լեռը ելլալ, ամմա գետը չկրցանք անցնիլ։ Օգոստոս 15-ին մեզ աքսորեցին։ Գնացինք, հասանք Թադմոր անապատը Պաղեստինի մոտը։*

*Իմ պապը սերթ մարդ էր, ըսավ.— Ես սատեղը չեմ կարող ապրիլ։*

*Մեր տղերքը գնացին, մեզ համար տեղ ճարեցին Սաղատում։ Էնտեղ մի տարի մնացինք, անոթութունեն, հիվանդութունեն մենք կոտորվեցանք։*

*Ես ու իմ ամմին առինք մերոնց՝ պապիս, տատիս, մորս ու երկու ախպորս, էկանք Ջըսըր էլ Ջուղուր։*

*Պապս ըսավ.— Էրթանք մեր ծանոթ թուրքերի տունը։*

*Գնացինք։ Բայց մեր ծանոթ թուրքերը մեզ ծեծել սկսան, ըսին.— Դուք մուհաջիր եք, դուք աքսո՛ր պետք է գնաք։*

*Հետո մեզ տարին Ուրդի։ Էնտեղ օրական հրաման էինք առնում, գնում էինք հույնի տունը գործ էինք անում, դրամ շահում, հաց առնում...*

*Օր մը պապս ըսավ.— Տղա՛ս, արի փախնենք։*

*Պապիս հետ փախանք։ Երկու օր բաղերի մեջ մնացինք, թութ էինք հավաքում, ուտում։*

*Պապս ըսավ.— Տղա՛ս, գնա՛ էն երևացող տունեն մի կտոր հաց ուզե։ Գնացի, ի՞նչ տեսնամ, մայրս էնտեղ է ծառա, վիզս փաթաթվեց, ըսավ.— Ամա՞ն, օղլո՜ւմ, ո՞ւր եք։*

*— Հեն ա պապին, անտառի մեջն է։*

*— Տղա՛ս,— ըսավ մայրս,— պապիդ ա՛ռ, արի՛։*

*Մինչև գնացի պապիս անտառի մեջ գտնեմ, ահագին տեղ գնացի, տեսա մի մարդ ոչխար է խուզում, ասեց.— Նե՞ իսդիյորսըն (ի՞նչ ես ուզում)։*

*— Անամ բուրդա՞դըր (մայրս այստե՞ղ է)։*

*— Ժանդարմալար գելդիլեր (ոստիկաններն եկան), տարան ուրիշ տեղ։*

*Ես ետ դարձա, տեսա պապս ծառի տակ չըկա.— Դեդե՛, դեդե՛,— գոռացի։ Տեսա առուի ափին անոթութենեն ուշքը գնացել, ընկել է։ Հանեցի ոտի, եկանք ծառի տակը։*

*Պապս ասաց.— Ինչո՞ւ եկար, տղա՛ս։*

*— Մամային տարել են ժանդարմաները։*

*— Գնա՛, էն հասած ցորենները քաղի՛ր, կրակ անենք, խորովենք, ուտենք։*

*Գնացի, ցորեն հավաքեցի, բայց պապս կրակ չկրցավ վառել. էլ ուժ չուներ երեսի վրա ընկավ՝ մեռավ։*

*— Դեդե՛, դեդե՛,— ալ դեդե չկար։*

*Դեդեիս ղաման վերցրի, քյուլախը դրի գլուխըս, գնացի։ Գնացի մի մարդ ինձ բռնեց, տարավ ժանդարմին հանձնեց։*

*Չորս օր մնացի բանտի պես տեղ մը։ Հետո ժանդարմը իր առաջը գցեց ինձ ու մի ուրիշ քեսաբցի կնոջ, տարավ Ջըսըր էլ Ջուղուր, ուր հայեր շատ կային։ Մեկ էլ տեսնամ մի տղա կանչեց.— Ախպըրկի՛ն, Վանիկն էկավ։*

*Մամաս գտավ ինձի, սկսավ լալ.— Ո՞ւր է պապդ։*

*— Ան մեռավ։ Ես ձեր մոտը կմնամ։*

*— Աման, բալա՛մ, ժանդարմը քեզ կսպանե, ե՛տ գնա ժանդարմին քովը։ Ես քեզ իրիկունը կըգամ բանտեն կհանեմ։*

*Իրիկունը մամաս էկավ։ Մի քիչ բակլա խանձել էր, թաշկինակի մեջ լցրել, բերել էր։ Ես ու էդ քեսաբցի պառավը կերանք։*

*Մամաս գնաց քեսաբցի Հակոբ աղային բերեց, որ խնդրի ինձ ազատեն բանտից։ Ազատեցին։*

*Ես մամայիս հետ գնացի։*

1916 թիվն է, օգոստոս ամիսը։ Եփրատ գետի ափին ենք։ Հայ գաղթականները չադըրներու տակ են։ Ամեն գիշեր Թուրքերը գալիս թալանում են։ Զենք չկա, որ պաշտպանվինք։

Շահպազյանները երկու մավզեր ունեին, գաղթելու ժամանակ պահել էին իրենց բաղում։

Մի ծանոթ Թուրք կար, անոր ասեցին.— Գնա՛, ջորու վրա, Թել-աեղ ծախելու պես ըրե, մեր զենքերը փորե, բեր։

էդ Թուրքը կգնա, տանձի ծառի տակեն Թենեքեն կհանե, մեջի հրացանները կառնե, կուգա մեզ մոտ։ Զենքը որ բերեց, էդ նույն գիշերը էդ գողերեն մեկին սպանեցին մերոնք։ Տեսանք, որ էդ քաղաքի մեծի եղբայրն է մեռնողը։

— Վա՜յ, հայերը Թուրք են սպանել։— Աղ մեծ հանցանք էր մեզ համար։ Էկան սպանողներուն բռնեցին, երկուսին ալ տարան։ Մի հայ բժիշկ կար՝ Չյուրիքչյան անունով, անոր երկու տղաներն էին, երկուսին ալ Թուրք գեներալը տարավ, տիֆ եղան մեռան։ Մեզ ալ քշեցին Եփրատ գետի ափը։ Օրը 70—80 հոգի կմեռներ, Թաղում էին ավազի մեջ։ Մամաս ծառայություն էր անում. մեզ՝ որբերիս պահում։ Մենք էլ մի չադըրի տակ էինք։

Օր մը երկու գերմանական նավակներ եկան գետի վրա, քառակուսի պեչենիներ շպրտեցին գետի ափը, որ մենք առնենք ուտենք։ Անոթի էինք։ Հայ մարդ մը մոտեցավ, Թքեց պեչենիների վրա, ըսա։վ.— Մի՛ վերցնեք, մեզ էս օրին գցեցին սրբա՜նք, հիմա ուրախանում են մեր վրա։

Որոշեցինք Եփրատի էս կողմից փախչել Հալեպ։ Ճամփին երկու ժանդարմա մեզ բռնեցին, տարին բանտ։ Ծեծեցին։ Պահեցին մի քանի օր։ Նորեն փախանք։ Առաջին օրը մեզի երկու հոգի կանգնեցրեցին, մեզ լրիվ սոթղեցին, ձեռքերնիս հացի կտորներ կային, ա՛ն ալ առին, լմնցա՜վ։ Ես հիվանդ եմ, փորս ուռած է, բերանս խաշած է տաքությունեն, մամայիս ըսի.— Մա՜մ, ինձ հոս թողեք, դուք գնացեք։ Կտրիճ մարե էր. մի երեխին ուսին առավ, ինձ ալ՝ մեջքին, գնացինք...

Եկանք հասանք Յահուդի գեղը։ Տեսան, անոթի ենք։ Արաբները սխտոր ու հաց բերին, կերան մերոնք։ Ես չկրցա ուտել։ Բերանս ցավում էր ամբողջ...

Եկավ մի արաբ, մորս ըսավ.— Մի տղա տըվեք ինձ, ես վաղուց պսակված եմ, տղա չունեմ։ Տվեք վայելեմ։

Մայրս ըսավ,— էս ա տղա, ա՛ռ։

— էս մեռա՞ծ է։

— Չէ՛, հիվանդ է։

Արաբը ինձի վերցուց, տարավ իր հայաթը։ Իրա արաբ մայրը մի հատ թթու դրած խյար տըվեց ինձ, ըսավ՝ կեր, կերա։ Աղ մեհլեմի պես եղավ։ Քունս տարել է, քնել եմ, մնացել եմ։ Ինձի ծածկել են, քնել եմ մինչև առավոտ։ Առավոտյան արևը կպել է գլխիս, քրտնած արթնացա, տեսնամ ուրիշ տեղ եմ։ Գոռացի.— մամա՜...

Արաբ մարդը մատը շրթունքներուն տարավ, կամաց ըսավ.— Սո՜ւս... Մի թաս ջուր բերեց, ըսավ.— Լվացվի՜, տղա՛ս։

Արդեն գիշերով գնացել էր, խաղող էր հավաքել ինձ համար, որ ուտեմ։ Կերա։ Կեսօրին մի քիչ ղավուրմա էին եփել, կերցրին, խմցրին։

Արաբը ըսավ.— Ես քեզի պիտի բուժեմ։ Մենք բժիշկ չունենք։ Ես իմ սիրո՜վը քեզ պիտի բուժեմ։

Եվ իսկապես ալ լա՜վ նայեց, աչքերս բացվեցին, ելա ոտքի։ Մնացի էդտեղ։ Զորանություն էի անում, մի կերպ յոլլա էի գնում...

Մի օր էլ տեսա ահագին ժողովուրդի ժանդարմները գցել են առաջները, տանում են։ Մեկին հարցրի.— Ո՞ւր են տանում...

— Մենք ջհուդ ենք, մեզի տանում են Երուսաղեմ։

Ես աղոնց հետ խառնվա, փախա արաբի մոտեն։ Որ փախա, տեսա մի տեղ հերկ են անում։ Ես էլ անոթի եմ, ոչինչ չկա մոտս, ո՛չ հաց, ո՛չ փող։ Մոտեցա հերկ անողներին, բայց վախցա, չխոսեցի։ Մենակ եմ։ Սկսա լալ։ Հեռվում քարին դրի գլուխս քնեցի, մնացի։ Արթնացա, տեսա հերկ անողները չկան արդեն։ Անցա Հալեպի գետը, ուզեցի ծռվեմ գետեն ջուր խմեմ, մեկ էլ մի ձայն լսեցի.— Տղա՛ս, գետը կընկնես, արի քեզ ջուր տամ։

Շուռ եկա, տեսնեմ մի կնիկ, ինձ մի թաս ջուր տվեց։ Տարավ իր հայաթը։ Էնտեղ մի աղջիկ հաց էր թխում, ըսի.— Մի հատ կտա՞ք ուտեմ։ Տվեցին մի հաց, կերա։ Աբաս վրես գցեցի, գետնին քնա։ Արթնացա։

Մի աղջկա ձեն էր լսվում.— էս ղարիբ մարդ է։

Տեսնեմ աղջիկը գնաց, երկու հաց ու մի թաս ջուր բերեց։ Ես կերա, էդ գիշեր մնացի էդտեղ։

Աղջիկը ասեց.— Ես երկու ախպեր ունեմ ու մի քույր, եթե կուզես՝ մնա։

Ասի.— Չէ՛, երկու հաց էլ տուր ճամփի համար, ես գնամ։

Հացերը առի, ընկա ճամփա։ Գնացի Հալեպի ճամփան։ Տեսա Իբլեդ գյուղի մոտեն մի քարավան է գնում։ էդ քարավանը բաժանվեց երկու մասի, մեկը գնաց Լաթաքիայի կողմը՝ դեպի Արաբստան, ես գնացի հասա դրանց։ Ոտնամանս հանել եմ, աբես էլ գցել եմ ուսս, գնում եմ Ջըսըր էլ Շուղուր։ Ճամփին մի մոլլա ելավ մինարեի գլուխը «Ալլահո՜ւակբար» կանչեց։ Ես գնում եմ, հա գնում։ Ուզում եմ Ջըսըր էլ Շուղուրի կամուրջը գտնեմ։ Ճամփաս կորցրի։ Վերջապես գնացի հասա Ջըսըր էլ Շուղուր՝ օրը կեսօրավ։

Գնացի տեսա էն խանը, ուր մեզ աքսորելու ժամանակ տարել էին։ Գնացի էդ խանի հավուզի կողքը նստա։ Հիշեցի, երբ մեզ աքսորել էին, մա-

մաս ու եղբայրս էնտեղ էին պառկել։ Հիշեցի, սիրտըս փլավ, արցունքներ լցվան կոկորդս։ Ինձ զսպեցի, ցույց չտվի, որ շրռնեն ինձ։ Առաջին հերթին սաեղ-թել գնեցի, որ կարեմ վրաս-գլուխըս։ Աբաս ծախեցի, գնացի դեպի Ուրդեն։

Ուրդի ճամփով գնում եմ։ Հարցրի մի մարդու.— Ո՞ւր է ճամփեն Քեսաբի։

— Դու հենց ճամփի վրան ես։

Ես արաբի պես ճերմակ գլխաշոր ունեմ գըլխիս գցած, վրաս ալ կլոր սև քենդիր խալխա[1]։

Տեսա մի մարդ՝ ֆեսը գլխին, գնում է էշի վրա։ Ասի՝ երևի սա հայ կլինի։ Գնացի, թեթև խփեցի ուսին, ասի.— Բարև՛։

էդ մարդը զարմացած ինձ նայեց, ասեց.— Ո՞ւր կերթաս, տղա՛ս,— ըսավ արաբերենով։

— Ուրդի կերթամ, պապի՛,— ասեցի արաբերենով։

— Ուրդի՞ կերթաս, տղա՛ս.— ըսավ,— սկսանք քայլել։

Գնացինք միասին։ Ես նորեն հարցրի.— Պապի՛, Քեսաբ գյուղը որտե՞ղ է։

— Մոտ է,— ասեց ու սկսեց բացատրել, որ Քեսաբում չորս եկեղեցի կա՝ կաթոլիկ, պրոտեստան, լատին, օրթոդոքս՝ այսինքն մերը։

Ես նորեն հարցրի.— Պապի՛, Թեկնելու աղբյուրը ո՞ւր է։— Հիշեցի, որ փոքր էի, շատ փոքր, էնտեղ ուխտի էինք գնում՝ Բալուի կողմը։

Մարդը ինձ նայեց, ասեց.— Ա՛յ, տղա՛, հա՞յ ես։ Ո՞վ ես...

— Բոյնմշակյանի տղան եմ։

— Ա՛յ, տղա՛, քո մերը սաղ է, գիտե՞ս։

Ես ուրախացա, իսկ ինքը ձեռքը գրպանը մըտցըրեց, մի բուռ չոր թուզ հանեց տվեց ինձ։

Հասանք մեր գյուղը։ Ճամփի վրա մեկը տեսավ, որ պապի հետ մեկը գալիս է, սպասեց, որ մոտենանք, հարցրեց.— Պապի՛, ո՞ւմ ես բերել։

— Բոյնմշակի տղեն...

— էդ իմ ամմիօղլին է,— ասեց մարդը։

Ուզեցի մենակս գտնեմ մեր տունը, բայց շատ բան փոխվել էր։ Մեր տունը Սև ջրի մոտն էր։ Մեր ջրի պես ջուր՝ չկար։ Բայց ո՞նց գտնեմ...

Մի կին տեսա քթոցը ձեռքին։ Հարցրի.— Քույրի՛կ, Շահենի տունը ո՞րն է։

Կանչեց.— Արի տեսնեմ, դու ո՞վ ես։

1918-ին քեսաբցիները արդեն վերադարձել էին աքսորից։ Մեր տները թուրքերը մտել, ապրել էին, չէին թողել քանդել։ Մտա հայաթը, տեսնեմ միջնեկ հորեղբայրս ողջ է մնացել, ասի.— Ամմի՛, Վանե՛սն եմ։

Նստեցի։ Հորեղբայրս ինձ նայեց ու հայհոյեց։ Դու մի ասա նա իմ մամայիս էլ տերություն չի արել։ Փող չի տվել, որ նա գա ինձ ազատի արաբի մոտից։

Ելա, գնացի մորեղբորս տունը։ Շաբաթ օր էր։ Մերս էնտեղ էր ապրում։ Ես էլ էնտեղ մնացի։ Մեր հողերը տվեցին ցանելու։ Հետո մերս ինձ ամուսնացրեց Ծաղիկի հետ։ Արդեն վաթսունհինգ տարի միասին ապրում ենք։ Մեզ մի աղջիկ ծնվավ հոն՝ Քեսաբը։

1915 թ. քեսաբցիներն ալ պիտի լեռը բարձրանային, բայց ստիպված աքսոր ելան։ Հետո կամավորական շարժման ժամանակ քեսաբցիները երկու հազար կամավոր տվեցին հայկական լեգեոնին։ Բայց էդտեղ ալճիրցիներ ալ կային, ասում են, փոխանակ թուրքին կրակեն՝ մեզ էին կրակում։ Էդ ժամանակ հեռախոս, հեռագիր չկար, աղավնիի վրա նամակ էին կապում, որ թռնի իր բույնը, խաբար տանի, թե զորքը ո՞ւր է։

Մեր Տիգրանն ալ հայելիով գնդացրի վրա էր կրակում. շուռ է տվել հրետանին՝ գերմանացու ու թուրքի վրա է սկսել կրակել, էդենցով թուրքը պարտվեց։

Ես ճարպիկ էի, մեր քաջերի հետ ծանոթացա։ Մեր ֆրանսիական սահմանապահները, երբ բըռնեցին իմ հորեղբոր տղին, ես գնացի, խոսեցի, ազատել տվի։ Ես առրճանակ անգամ ունեի արդեն։

Մինչև 1939 թիվը ֆրանսիացին, անգլիացին, Սաուտ արաբիան զորքով շրջապատել էին մեզ։ Օր մը էդ անգլիացի զինվորներից մեկը ինձ բըռնեց, հարցրեց.— Ո՞վ ես։

Ըսի.— Ես մարդ եմ։

Անգլիացին ըսավ.— Մենք քեզ բռնելու ենք։

Ըսի.— Եթե ինձ ձեռք տաս, ձեռքս կմտցնեմ ջիգյարդ դուրս կհանեմ։

Ըսավ.— Լա՛վ, հիմա գնա կապիտանի մոտ։

Ըսի.— Չե՛մ էրթա գիշերով։ Թուղթ մը գրիր, տուր ինձի, կէրթամ։

Երկու սալդատ տվեց, թուղթ մըն ալ գրեց տըվեց ինձի։ Գնացինք ֆրանսիացի կապիտանի մոտ.— Հովհաննեսը դո՞ւ ես։

— Այո՛,— ըսի։

— Էս մարդուն ո՞ւր եք բերել,— ըսավ կապիտանը։ Ինձի ազատ թողուց։ Արդեն լավ էր վիճակս։ Էրթող, գացող կուգար, կուտեր-կխմեր, կերթար։ Բայց հայրենիքը քաղցր էր, 1946-ին եկանք Հայաստան։ Բայց 1949-ին մեզ աքսորեցին... Վերադարձանք հաստատվեցանք էջմիածնի երրորդ սովխոզում.կաշխատինք, կապրինք...

[1] Արաբ բերդվիները սպիտակ գլխաշորի վրա սև պարանից հյուսված օղակ են կրում։

## 15(231).
## ԲԵՅԼԱՆՑԻ ԳՅՈԶԱԼՅԱՆ ՍԻՐՎԱՐԴԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1906 Թ.)

*Երբ Դեր-Զորեն վերադարձել էինք ու ապրում էինք մեր տանը, մեր Բեյլանի Աթըխ գյուղի վրա հարձակվան Ջեյթունի թուրքերը։ Մեր հայերն ալ հավաքվեցան, որոշեցին դիմադրել։ Ֆրանսան ալ ում տվավ։ Ես իննը-տասը տարեկան էի։ Երկու վեդրո փիլավը կեփեին, ձեռքս կուտային, բողչամըն ալ հացը կոնակս կուտային, վախն ի՞նչ բան է՝ չգիտեի, ֆեդայիներուն ճաշ կտանեի։*

*— Աղջի՜կս, որտեղ թաշկինակը կապած ըլլա սըրըխի վրա, անտե՛ղ կդնես կուգաս։*

*Առտուն՝ մի տեղ, ցերեկը՝ ուրիշ տեղ, գիշերը մի ուրիշ տեղ կտանեի։ Անոնց ուտելիքը իմ վիզս էր։*

*Ժողովուրդը եկեղեցին հավաքվավ։ Զոլուխչոջուխ բոլո՜րը։ Մի հատ դորտյոլցի կնիկ կար, անունը Տիգրանուհի, զենքը ձեռքին երեք օր կըռվում էր եկեղեցու մեջեն, հրացանով խփում էր թուրքերուն, կհիշե՜մ...*

## 16(232).
## ԲԵՅԼԱՆՑԻ ԳՅՈԶԱԼՅԱՆ ԳԵՎՈՐԳԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1925 Թ.)

*Ողորմածիկ մայրս ու հայրս պատմում էին, որ 1915 թվին իրենց քշեցին Սիրիայի անապատները։ Մեծ հորեղբորս թուրքերը սպանել են, մյուս երկու հորեղբայրներս փոքր են եղել, Սիրիայի անապատներում թափառելուց հետո որբանոց են ընկել։ 1919 թ. ով դիմացել էր ու ողջ էր մնացել, վերադարձել էր իր պապենական կալվածքները։*

*1925 թ., իմ ծնված օրը, հայրս խաղողի այգի է տնկել իմ անունով։ Ես հիշում եմ այդ այգին՝ առատ բերք էր տալիս, չնայած այգիները ջրովի չէին, և պարարտանյութ չկար, միայն տարվա մեջ մեկ անգամ ծծումբ էին ցանում, որպեսզի ծովից եկած խոնավությունը չփչացնի որթը։*

*1939 թ., երբ ժեներալ դը Գոլի ժամանակ Ալեքսանդրետի սանջակը տրվեց թուրքերուն, ֆրանսացիները ետ քաշվեցին, դուրս եկան Կիլիկիայից։ Հայերը չցանկացան մնալ թուրքերի հետ։ Եգիպտոսից «Խդևի» նավը եկավ, մեր ունեցածը Բեյլանի Սոուկ-օլուկ գյուղից իջեցրին նավահանգիստ։ Մեծ քրոջս ձեռքը բռնած՝ իջա նավի մոտ։ Երբ նավի մեքենաները տեսա, շատ վախեցա, ընկրսեցի դողալ, այդ ժամանակ ժեներալ դը Գոլն էր անցնում, ժպտալով իմ գլուխը շոյեց, որ չհուզվեմ...։ Նավը մեզ տարավ Թարթուս քաղաքը՝ Միջերկրականի ափին. ասում էին, որ Թադևոս առաքյալն է հիմնել այդ քաղաքը։ Տաս-տասնհինգ օր վրանների տակ մնացինք այնտեղ, որից հետո մեքենաներով մեզ տեղափոխեցին Բեյրութ, հետո՝ Սուր քաղաքը՝ Բեյրութի մոտ, որտեղ մեզ տեղավորեցին արաբների հարևանությամբ։ Ըսկըզբում շատ դժվար էր, քանի որ արաբները մեզ համարում էին պիղծ ժողովուրդ. հայ կինը, եթե մոտենար մսավաճառի սեղանի վրա դրված մսին՝ և մատը դներ մսի վրա, մսավաճառը զայրացած միսը կշպրտեր։ Բայց հետզհետե ընտելացան մեզ, և արդեն միասին սեղան էինք նստում։ Ֆրանսիական կառավարությունը բավական ջրովի հողեր մեզ հատկացրեց, քանի որ ծովից կես կիլոմետր հեռու գետնից ջուր էր բխում, և հողերը ոռոգվում էին։ Իսկական դրա՜խտ էր՝ նարինջը, լիմոնը, մանդարինը, բանանը, շաքարեղեգը փարթամորեն աճում էին։ Այնքան ճոխ էր բուսականությունը Սուրում, որ եթե ձիավորը մտներ արտի մեջ, չէր երևա։*

*Ֆրանսիական կառավարությունը մեզ ձրի շինանյութ տրամադրեց, տներ կառուցեցինք, սկսեցինք աշխատել, ապրել։ Վարձատրվում էինք, ըստ ընտանիքի անդամների թվի, թեկուզ մեկ հոգի աշխատեր։ Վատն այն էր միայն, որ շատ ճահիճներ կային, և շատերը մալարիայով հիվանդացան։ Ժեներալ դը Գոլը բժիշկների և բուժքույրերի հետ միասին եկավ, դեղին խինինի հատիկներ բաժանեց բոլորին։*

*Յոթ տարի մնացինք այնտեղ, մեր ապրուստը շատ լավ էր։ Մեր մայրերի ու քույրերի թևերը լիքն էին ոսկե ապարանջաններով։ Ամեն մի ընտանիք աշխատում էր իրեն հատկացված հողամասի վրա, իրեն հատկացված դրամական վարկը ստանում էր, լծկան անասուններն ու գյուղատնտեսական գործիքները ստանում էր ձրի, աշխատում ու ապրում էինք։ Ամեն մի գյուղ իր տաճարն ուներ, իր դպրոցը, նաև՝ եկեղեցին։ Իսկ մեզանից դեպի Սուր Սիդոն ու Դիրոս քաղաքներն էին, որոնք Աստվածաշնչում հիշատակվում են, բայց արդեն ծովի հատակն էին անցել՝ իրենց հընամյա ամրոցների փլատակներով... Անգործ արաբները ծովի ավազաջուրը մաղելով, ոսկիի փոշի էին հանում։*

*Հետագայում, երբ Ներգաղթ կոմիտեի ներկայացուցիչներն եկան, հորս հետ ընկերություն անող արաբները մեզ զգուշացրին, որ չգնանք Հայաստան, եթե գնաք, ասում էին, սև հաց անգամ*

չպիտի գտնաք։ Յոթը տարվա ընթացքում հարյուր քսանհինգ հեկտար պտղատու այգիներ ունեցանք, ցորենի դաշտեր, որոնք մի տարի ցորեն էին տալիս, երկու տարի՝ ուրիշ բերք։ Ձմռանը ամեն ինչի պաշար էինք անում, որսորդները գընում էին վարազ էին որսում, որոնք բաժանում էին իրար մեջ։ Եվ սկսվում էր խնջույքների շրջանը…

1946 թ. տուն, տեղ, այգի, ամե՛ն ինչ թողեցինք, եկանք Հայաստան։ Սկզբում մեզ Նոյեմբերյանի խուլ գյուղերը գցեցին, հետո մեծ դժվարությամբ կարողացանք տեղափոխվել Երևանի Ախպարաշեն ու Մեռելաշեն թաղամասերը*, կառուցեցինք մեր տունը, ամուսնացա և իմ հինգ զավակների հետ միասին այժմ ապրում եմ այստեղ։

## 17(283).
## ԱԴԱՆԱՑԻ ՄԱԿԱՐՅԱՆ ՍՐԲՈՒՀՈՒ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1903 Թ.)

Ես հազիվ տասներկու տարեկան էի, երբ թուրք կառավարությունը մոտ երեք հազար զինվոր բերեց, մտցրեց Ադանա, որ կազմակերպեն Ադանայի հայերի աքսորը։ Թուրք զինվորները սկզբում վախով մտան Ադանա, որովհետև կվախնային, որ անոնք կապստամբեն։

Մեզ քշեցին ոտքով, քալե՛, հա՛ քալե՛։ Անոթի, ծարավ, հիվանդ, ուժասպառ։ Դեր Զորի մոտ Մեսկենե ըսված տեղ մը կար, հայերը վրաններ զարկին, տակը մտան քիչ մը հանգչելու։ Օրական առնըվազն երկու հարյուր կիսամեռ, դեռ ողջ մարդկանց կտանեին թաղելու։ Տիֆը հնձում էր ժողովրդին։ Օր մը էկան իմ հորաքույրիս ու մեծ հորս ալ ուզեցին տանել, որոնք բռնված էին տիֆով։ Հայրս աղաչեց, պաղատեց, ունեցած վերջին դեղին ոսկիները տվեց, որ իր քրոջը չտանին…

Աղ հորաքույրս տասներեք տարեկան աղվորիկ աղջիկ մը ուներ, անունը՝ Արուսյակ։ Օր մը էլանք, որ գիշերը քնացած տեղերնիս աղ աղջիկին փախցուցեր են։ Փնտրեցինք, բայց ո՞ւր կգտնաս…

Վերջապես, ինչ երկարացնեմ, տարիներ անցան, գաղթականութենեն պիտի ետ գանք Ադանա։ Հորս ձեռքը բռնած կքալեինք, լսեցինք, որ փախցված հայ աղջիկներուն հայերը ազատել, բերել են, հավաքել են տունի մը մեջ։ Մենք ալ գացինք տեսնելու։ Տեսանք, որ մեջերնին խոշոր կնիկ մը՝ քեռի ըսելով մեզ մոտեցավ։ Հայրս կընայի, չի ճանչնար։ Հայ պաշտոնյան, որ կհսկեր, արգելեց մեզ մոտենալ։ Մեկ էլ աղ կնիկը գետինը ինկավ, սկսավ լալ, ըսելով.— Քեռի՛, քեռի՛, ես Արուսյակն եմ, չճանչցա՞ր ինձի։

Հայրս լսեց, վազեց մոտը, նորեն չթողեցին։

— Քեռի՛, օգնի՛ր ինձի…

Հոն քահանա մը կար։ Հայրս մոտեցավ աղ քահանային, ըսավ.— Հոս բաղնիք չիկա՞։

— Ո՛չ, բայց ես մաքրել կուտամ անոր…

Հայրս դրամ տվավ, որ լվան, մաքրեն Արուսյակին։ Լվացին, մաքրեցին, բերեցին մեր քովը։ Խոսեցինք մինչև իրիկուն։ Իրիկուն եղավ պիտի բաժնվինք, որ հետևյալ օրը պիտի գանք պաշտոնապես կարգադրենք։ Արուսյակը ըսավ.— Քեռի՛, ըսե անկողինս թող փոխեն։

Հայրս աղ ալ կարգադրեց։

Դու մի ըսեր, աս մեր աղվորիկ Արուսյակի թուրք ամուսինը կհետևի, կուգա մինչև Ադանա, կգտնա ասոնց տեղը, կըսե.— Ես ձեզի խոշոր գումար կուտամ, միայն իմ կինս ինձի տվեք։

Հորս հետ էկան բանակցելու։ Հայրս ժամանակ ուզեց մտածելու։ Մյուս քրոջ աղջկան բերել տըվավ, որ խորհրդակցի։ Անոր միջոցով Արուսյակին հարցուցին, ան ըսավ.— Ո՛չ, ան շատ լավ մարդ էր, ինձի շատ լավ նայեցավ, բայց ես թուրքի կնիկ չե՛մ ըլլար։ Ես հղի եմ, բայց ծնած զավակս պիտի խեղդեմ։

Եվ իրավեն աղանկ ալ ըրավ։ Ծննդաբերության ժամանակ ինքն իր ձեռքով իր և իր զավակի հարցերը լուծեց ու մեռավ։

## 18(284).
## ԱԴԱՆԱՑԻ ՔԵՇԻՇՅԱՆ ՄԻՔԱՅԵԼԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1904 Թ.)

1909 թվի Ադանայի կոտորածի ժամանակ ես հինգ տարեկան էի։ Այդ սարսափելի գիշերը թուրքերեն կոչվեց «Ջամուզ դելլիդի» այսինքն՝ «գոմեշը գժվեց»։ Քանի որ, իրոք, սուլթանը գժվել էր։ Նրա հրամանով մարդկանց մորթեցին, մոտ 30000 հայ սպանեցին, տները քանդեցին, վառեցին, մոխիր դարձուցին։ «Ավերակ դարձավ շքեղ Ադանան», որը նաև թուրքերեն «ղըյմա Ադանա» կկոչվի, այսինքն՝ «մսաղաց Ադանա»։

---

* Երբ 1946—47 թվերին հայրենադարձները բնակություն հաստատեցին և շենացրին այդ ամայի տարածքը. այն կոչվեց Ախպարաշեն (Ախպար-եղբայր բառից։ Ինչպես հեգնանքով նրանց անվանում էին տեղացիները), սակայն քանի որ նրանցից շատ-շատերը չդիմանալով ցրտին և կյանքի այլ դժվարություններին մեռնում էին, կից թաղամասը կոչվեց Մեռելաշեն (այժմ՝ Արարատյան զանգված)։

Կոտորածից հետո ով ողջ էր մնացել, բոլորին հավաքեցին տարին Ադանա ըրմաղը (գետը), սուլթան Համիդին լուր ղրկեցին, որ հայերին բոլոր հավաքել ենք, բերել գետին եզերքը, իրմե հրաման կսպասենք։ Մեկ կողմը ջուր, մեկ կողմը՝ կըրակ։

Պապաս ինձի գրկած էր։ Ես կհիշեմ, շալակեն կտեսնայի։ Մամաս ալ մեզի հետ էր, գետին եզերքը լեցուցեր էին։ Սուլթանեն հրաման եկավ՝ ներումի հրաման։ Մեզ ալ.— Փադիշահըմ չո՞ք յաշա (թագավորը շա՜տ ապրի) ըսել տվին։ Տուն եկանք, բայց սպանվողները՝ սպանվեցան։ Գացինք տուներնիս և շարունակեցինք ապրել։

Այդ ներումեն հետո դպրոց մը բացվավ՝ Աբգարյան վարժարանը։ Հայրս ըսավ.— Տղա՜ս, առաջ դպրոց չկար, հիմա հայերեն դպրոց բացին։ Հայերեն սորվիր։ Առաջ դպրոց չկար, վարժապետները 5—10 աշկերտ կհավաքեին տուներուն մեջ, հայերեն կսորվեցնեին,— ըսավ հայրս։ Ես ուրախացա։

Դպրոց կերթայինք, ո՛չ տառ գիտենք, ո՛չ բան. արդեն արգելված էր հայերեն խոսիլը և սորվիլը. ոչ միայն լեզուն կկտրեին, նաև թևերուն տակ խաշված տաք հավկիթ կդնեին, որ խոստովանվի, որ հայերեն կսորվեցնեն, եթե կխոստովանվեր՝ կտանեին կկախեին, կամ՝ սպանեին։

Մեզ գիրքեր բերին Պոլիսեն։ Տառերը դահա չսորված գիրքին թուղթերը կպատռվեին։ Մենք վայրենի ժողովուրդ էինք, ո՛չ գիրք էինք տեսած, ո՛չ թուղթ։ Հետո վարժապետը տեսավ, որ գիրքին թուղթերը կպատռվին, տախտակի մը վրա, պատըրմա կտրելիք փայտի պես բռնելիքով, անոր վրա փակցուցին տառերը, Այբ, բեն, գիմ, մինչև և, օ, ֆ սորվանք։ Այդ տարին դպրոց գնացինք, քանի թիվին չգիտեմ։ 1915 թվին հասանք մինչև գումարում հանում։

1915 թ. որոշում եկավ, որ հայերուն աքսորեն և այդ որոշումը կատարելու սկսան. մնացողը՝ մընաց, անոնք, որոնց հարազատներեն զինվոր գընացած էին, անոնց ընտանիքներեն աքսոր չըտարին։

— Թյուրք դինի ղաբըլ էդեր սեն՝ քալըն (եթե թուրքի հավատքը կընդունիք՝ մնացեք), թե չէ՝ գնացեք։ Ժողովուրդը գոմեշի արաբաներով, էշերով, ոմանք ոտքով քալելով քշեցին մինչև Ղաթմա։ Մեկ գացած տեղերնիս նորեն կտանեին, որ հոգնենք ու ճամփին մեռնինք։ Մեզի մաս-մաս աքսորեցին Դեր Զորի կողմը և մեր բաժինը՝ ահագին հայեր, աքսորեցին Ռաս էլ Այն, որը կընշանակե գետնին տակեն բխող առաքյալի ջուր։ Ռասուլ (առաքյալ) այն (ակ-ջուր) առաքյալի-սուրբ ջուր։ Այնտեղեն ալ տարան անապատները, մաս-մաս սպանեցին, ինչ ըրին, ալ չգիտեմ։ Մեր ընտանիքը մնաց Ռաս էլ Այն։ Պապաս նաջար էր (ատաղձագործ), զորանոցներ կշիներ, անոր շընորհիվ մնացինք հոն։ Ժողովուրդը հոն շատ էր։ Տիֆ հիվանդություն մը եկավ։ Ժողովուրդը սկսավ հիվանդանալ։ Անապատում հայերը ոչխարների պես փռված, պառկած էին գետինը։ Մամաս ալ հոն տիֆեն մեռավ։ Առավոտը կելլեին, չէ որ տիֆը մահացուցիչ հիվանդություն է, այդ պառկած ժողովուրդին մեջեն մեռածներուն կտանեին, փոս մը կփորեին, մեջը կլեցնեին, կփակեին։ Եվ ասանկով ժողովուրդը էրթալով քիչացավ։ Տանում, մորթում էին կամ մարդիկը իրենց-իրենց մեռնում էին։ Մենք մի տեղ էինք, ուր արհեստով աշխատողներուն կապրեցնեին։ Այնտեղ թուրք չերքեզներ կային, կուգային հայ աղջիկներուն կտանեին, կբռնաբարեին, ետքը նորեն ետ կբերեին։ Հետո թյուրքն ու գերմանացին պարտվեցան, ըսկըսան փախչել։ Գերմանացիները երկաթգիծ կըսարքեին։ Մենք Բեռլին-Բաղդադ երկաթգծի վրա կաշխատեինք։ Ես 14 տարեկան էի։ Վելհասըլ անգլիացիները ավելի ուժեղ դուրս եկան, գերմանացիներն ու թուրքերը փախչել սկսան։ Ես ալ իմ ընկերներով փախա, եկանք Մուսուլ քաղաքը։ Այդտեղ սկսանք ապրիլ՝ խեղճ ու կրակ։ Կուժով ջուր կծախեի։ Մեկը կտոր մը հաց կուտար, կտոր մը պանիր կամ քանի մը հատ զեյթին, չանթայիս մեջ կլեցնեի։ Անգլիացիներուն հնդկական զորքերը ձիավոր էին, երեսնին փոշիեն չէր երևար, քաղաք չմտան, քաղաքեն դուրս եկան, նստան։ Երբ օդանավը եկավ, թուրքերը կըսեին.— Ի՞նչ կվախնաք, ասիկա թուրքական օդանավ է։ Ամմա երկար չտևեց այդ սուտը։ Ռումբաները մեր վրա թափեցին, այն ատենը ժողովուրդը՝ փախող փախողի։ Քաղաքին մեջ եղած թուրքերը հեռացան։ Անգլիացիները գրավեցին այդ տեղերը։ Թուրքերը անգարիա (անվճար) կբռնեին մեզի, ձրի կաշխըտցնեին, պաքսիմատ կշինեինք, որ զինվորները հետերնին տանին։ Թուրքերը այնտեղ մնացին։ Քանի մը ժամանակ հետո գնացին, մնացին անգլիացիները։ Այդտեղ անգլիացիները որբ հայերուն հավաքեցին, կերակրեցին և ղրկեցին Բաղդադի կողմը՝ Բախուվա։ Այդտեղ ասորիներ ալ կապրեին։ Այդտեղ, վրաններուն տակ մեզի կկերակրեին, ուտելիք կուտային, մենք կապրեինք։ Մենք չորս ընկերներով իրար համոզեցինք ու փախանք, գացինք Բաղդադ։ Այնտեղ երկու եկեղեցի կար հայկական, մեկը հին էր, չէին օգտագործեր, հոն պառկանք։ Սկսանք գործ փնտրել։ Ես պաղպաղակ ծախողի մոտ ծառա եղա, այնտեղ սրճարանի պես մարդիկ կնստեին ալա-թուրքա դոնդուրմա (պաղպաղակ) կուտեին։ Ես ալ կտանեի-կբերեի, դրամը կտայի տիրոջ։ Այդտեղ շատ հարուստ հրեա մը կտեսնա ինձի։ Ես ալ 14—15 տարեկան եղա արդեն։ Աս հրեան աս դոնդուրմաջիեն ինձի ուզեր է, ո՞վ գիտե, ծախու առեր է, ի՞նչ ըրեր է, չգիտեմ, շատ հարուստ հրեա մըն էր։ Ան

ըսավ.— Քեզ պիտի տանիմ մեր տունը, հոն հանգիստ պիտի ապրիս։ Աս մարդուն հետ գացի իրեն տունը, պալատի պես տուն, կին մըն ալ ուներ և տունին մեջը ծառա եղա։ Ադտեղ նկուղ կար, վերևը էլփազեի (հովահար) պես բան մը կար, որ երբ հանըմը քնանար, ես պիտի քաշեի, հով ընեի, քանի որ ան ժամանակ էլեկտրականություն չըկար։ Հետո ամառը իրենց հետ ամառնոց տարին, 4 հատ ծառա ունեին, ես ալ՝ հինգ, մեկը՝ ճաշ եփող, մեկը՝ լվացք ընող, մեկը՝ երեխան կընայի, մյուսը՝ մաքրություն կընե, ես ալ՝ սեղանը կդնեի, կհավաքեի։ Բավական ժամանակ անցավ այսպես։ Բախուվայի հայերը ցրվեցան։ Մեկ ընտանիք մը եկավ, որը իմ բարեկամս էր, որը Ադանա պիտի գնար, ըսավ.— Պապադ ողջ է, Ադանա է, մենք պիտի երթանք, կուզե՞ս դուն ալ եկուր։

Գնացի հրեա տիրոջս ըսի.— Հայրս ողջ է եղեր, ես Ադանա պիտի երթամ, գտնամ անոր։

Հրեան փարա տվավ ինձի, որ գոմեշի արաբա նստիմ։ Բաղդադեն մինչև Հալեպ 15 օրեն հասանք։ Հալեպ հասանք, այնտեղ Ադանա գնացող պոեզ կար, գացի հորս գտա այնտեղ։ Սկսանք ապրիլ։ Ես արդեն 16 տարեկան եմ։ Ուզեցի դպրոց երթալ, բայց չկրցա սորվիլ։ Խելքս միտքս թյուրք կոտորելն էր, չէ՞ որ այդքան տեսարաններ տեսած էի։ Էլոյան ազգանունով մարդ մը կար, ըսի.— Ինձի հայկական բանակի մեջ կամավոր գրեցեք. ոչ միայն ես, այլև հայ որբ աղջիկներ ալ կամավոր կըգրվեին։ Բավական զորք հավքեցին. ճակատին եռագույն դրված գլխարկ կդնեինք։ Այսպես բավական կռվելեն հետո չեղյալ համարեցին Ադանայի հայկական կառավարությունը։ Ֆրանսացիք հայերուն լքեցին, չուզեցին հայերուն պաշտպանել։ Մեզի, 70 հոգու չափ, ղրկեցին Բեյրութ։ Մենք ուզեցինք Հայաստան երթալ։ Դու մի ըսեր Հայաստանը բոլշևիկ եղեր է։ Մեզի ղրկեցին Պոլիս. ձըմեռը եկավ, ցո՜ւրտ, մրսում ենք. ազգային խնամատարությունեն ուզեցինք բաթանիա, որ չմըրսինք։ Անոնք մեզի պահեցին։

Պոլիս որ եկանք, հույները իրենց բանակին համար զինվոր կտանեին։ Այնտեղ Թորգոմ փաշա մը կար։ Հայերն ալ հույներու հետ կկռվեին, որ վերջն ալ Հայաստանի համար կռվինք։ Գացինք, մոտ 300-ի չափ հայ կար, սկսանք ծառայել։ Հետո մի քանի ընկերներով դուրս եկանք բանակեն, գացինք ծառայելու պարտիզանական ջոկատի մեջ։ Մեր կապիտանը՝ Անաստասը, հույն էր։ Գացինք պարտիզան եղանք Անաստասս կապիտանի մոտ։ Աս մեզ տարավ, դեռ զենք չունինք։ Հրաման եկավ, որ հույները պիտի քաշվին։ Մեր Անաստաս կապիտանը թողեց մեզի։ Մինչև այն ատեն մենք զինված էինք։ Այնտեղ մենք ըսպասում էինք թուրքերուն։ Ջամիչ կգտնեինք, կուտեինք։ Հետո սկսեցին կրակել, մարդուն գնդակ մը կդիպնա՝ կմեռնի։ Գնդակները վերջանան նե, գնդակ մեզի ո՞վ պիտի տա, ավելի լավ է, որ երթանք Իզմիր, դանակ շինել տանք, որ թուրք սպանենք, արյունը խմենք, միսը ուտենք, թուրքին անունը ջնջենք։ Այդպես Մանասաեն Իզմիրի ճամփին վագոնները լիքն են, ժողովուրդը մեղուի փեթակի պես լցված է, կախված են։ Վագոնը շարժվելուն պես կթափվեին, կմեռնեին։ Իզմիր գացինք, գըտանք հորեղբորս տղային՝ Միսաք չաուշ Քեչիշյանին, որը Անդրանիկի զինվորն էր եղել և առաջնորդին ղավազը (օգնականը) եղած էր։ Ըսին, որ Մուստաֆա Քեմալը բոլոր Թուրքիան գրավում է, աս երկիրեն պետք է փախչիլ։ Ինչպե՞ս փախչինք, նավ չիկա, լողացողներուն վրա տաք ջուր կթափեն, որ խեղդվին։ Թուրքերը եկան, սկսան կրակել, բոլորին սպանել։ Ադ Միսաք չաուշը եկավ, ըսավ.— Մեր տունը պաշտպանելու համար, աս շենքին մեջ կմնանք, մինչև մեռնինք,— երկու արկղ ձեռքի ռումբ-նռնակ բերավ, երկու արկղ ալ գնդակ բերավ.— մինչև մեռնիլնիս կկռվինք,— ըսավ։ Հետո ան գնաց առաջնորդարան, եկավ մեզի ըսավ.— Թուրքական դրոշակը բարձրացուցին. թուրք զինվորները սկսան քալել փողոցներով, ալ հոս մնալու տեղ չէ։

Այս լուրը ստանալնուս պես ծովափ գացինք։ Խըրվին նավը կար՝ Եգիպտոսի նավ մը։ Ես ալ նավակին մեջ ինքզինքս նետեցի Արամ Կայծակը (հաճընցի չախըջի, չեթեբաշի) օր մը առաջ գացեր էր, ես ալ ճամփա էլա. 2 դեղին ոսկի պիտի տայինք, որ նավակը մեզի նավ հասցնի։ Նավը մեզ չառավ՝ կապիտանը կընդունի, չընդունիր։ Երկու դեղին ոսկի տվինք, մերդիվեններուն (աստիճան) վրա մեզի կեցուցին, կապիտանը էրթալուն պես երկու դեղին ոսկի ալ տվինք, էլանք նավ։ Հոն էր նաև հորեղբորս տղան՝ Միսաք չաուշը։ Միսաք չաուշը գնաց Պոլիս, անկե Բուլգարիա անցավ, գնաց Անդրանիկի թիկնապահը դարձավ։ Այդտեղեն գացինք Սախըզ ադանը (կղզի), Հունաստան։ Այդտեղ ես մնացի։ Թուրքին դեմ կռվող 500 հոգի էինք։ Հետո ինձի բռնեցին, ազատ աքսոր պիտի ղրկեին Կրեթե կղզին։ Մեր նավը եկավ Աթենք, ադ նավուն մեջեն մի կերպ փախա Աթենք։ Բարեկամներ ունեի, Վահան Դագեսյանի տունը գնացի։ Ես 18 տարեկան էի, ավազակի պես հագած էի։ Երկու ամիս մնալեն վերջը գացի Մակեդոնիայի կողմը։

Հետո Բուլգարիա գացի, հոն ալ չկրցա ապրիլ, եկա Բեյրութ։ Հոն ո՛չ արհեստ ունիմ, ո՛չ ալ հարուստ հայր ունիմ։ Գտա պապայիս։ Եվ այնտեղ ինձի փոքր եղած ժամանակվա ընկերներս տարին կոշկակարություն սորվեցուցին։ 24 թվին Հարություն Մադոյանի հետ կուսակցական դարձա։ Շատ հայտնի, պայքարող կոմունիստ մը եղա։ Մադոյանի գիրքին մեջը անունս կա։ Արհմիություն ենք ստեղծած, բանտարկված ենք։ Հայտ-

նի կոմունիստ եմ եղել, խմորատիպ թերթեր եմ տարածել։ Ամիսը մեկ անգամ կուգային մեր տունը կխուզարկեին, օրական երեք անգամ ստորագրություն կառնեին, որ քաղաքեն դուրս չգամ, որպես վտանգավոր մարդ։ Ես ալ մերժեցի, ըսի՝ ալ չպիտի գամ։ Այնտեղ սյուրիթեի պետը (անվտանգության պետը, անունը՝ Բուշեթ) ինձի առաջարկեց գնալ Ֆրանսա. Հոն կոմունիստները շատ են։ Չգացի։ Ադ Բուշեթը ըսավ.— Քեզի կչարդենք, կծեծենք, դուն ո՞վ ես։

Ադ տեսակ պետին ըսի.— Դուն ֆրանսացի ես, ես արաբական երկիր կապրիմ և գոհ եմ, դո՛ւն ֆրանսացի ես, դո՛ւն գնա քո երկիրը։

Եվ այստեղ 12 ոստիկանով հարձակվեցին վրաս, աղվոր մը ծեծեցին։ Կուսակցական եղած ժամանակ Դամասկոս, Հալեպ, ուրիշ տեղեր թռուցիկներ կտանեի, առանց վախի։ Մինչև 1946 թիվը ծառայել եմ կուսակցությանը և հետո եկանք Հայաստան։ Այստեղ ալ աշխատեցա։ Լենինական պրեսին տակ կաշի կտրող կաշխատեի։ Լենինականում ապրած ժամանակ, երբ Երևան եկած էի, վերադարձա, տեսա ընտանիքս աքսորել են, ըսել են՝ ձեր կուսակցությունը բուրժուական կուսակցություն է, կինս կըսե՝ գոնե ամուսինս գա, նոր տարեք։ Չեն լսեր. կհավաքեն ամեն ինչ, կըթալանեն, կթափեն, կտանեն, 5 երեխայով կաքսորեն, շատ կտանջվին։ Հետո մեզ արդարացրին։ Վերադարձանք։ Լենինականում, Երևանում գովասանագրեր ունիմ ստացած լավ աշխատանքիս համար։ Հիմա անհատական թոշակառու եմ։

## 19(285).
## ՖԸՆԴԸՋԱԳՑԻ ԱԼԲՈՅԱՋՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1904 Թ.)

Ֆընդըջաղը Զեյթունին շատ մոտ է։ 1915 թվին Ֆընդըջագից մեզ աքսոր հանեցին։ Քարավանի ծայրը Երևանեն մինչև էջմիածին կհասներ։ Հորս արդեն չեմ հիշում, տարել էին թուրքական բանակ, ետ չէր եկել։ Կհիշեմ, մայրս շա՜տ հոգնած էր երկար քայլելուց, գրկին փոքր եղբայրս կար, մի արաբ եկավ ձեռքեն երեխային վերցրեց, անհետացավ։ Հետո եկավ մի բժիշկ, ինձ ուզում էր տանել։ Հիշում եմ, որ մեր մի մասին քշեցին դեպի Հավրանի անապատը, մյուս մասին՝ Դեր Զոր։ Մեզ քշեցին Հավրանի անապատը։ Բոլորին մեր աչքի առաջ սպանում էին։ Կորսնցուցի մերոնց։ Մնացինք ես ու Օվսաննա քույրս և հարսնուկս։ Մեզ տարին Հոմս, անտեղեն՝ Միսմիա։ Գնացք մը եկավ, ըսին օգնություն պիտի տան. քանի որ սարսափելի սոված էինք։ Ձիու կեղտի միջից չըմարսված ցորենի հատիկներն էինք լվանում ուտում, ուրիշ բան չկար։ Մեզ մի բուռ ալյուր տըվին։ Դա տոպրակ մը ոսկիի չափ էր։ Ստացողներին անցկացնում էին գնացքի մյուս կողմը։ Ես ստացա։ Գնացքի տակից կանչեցի քրոջս՝ Օվսաննա՜, Օվսաննա՜։ Կարծեցի, որ պիտի անոր ալ ալյուր տան, գնացքի տակից անցկացա, բայց այդ գնացքը շարժվեց, մի ուրիշ գնացք եկավ կանգնեց, ես թռա այն կողմ։ Փնտրեցի քրոջս՝ Օվսաննան չկար։ Հարցրի հարսնուկիս.— Ո՞ւր է Օվսաննան։

Ըսավ.— Մեկը գնացքի միջից երեխա էր ուզում, տվի գնաց։

Ես շա՜տ լաց եղա, շա՜տ։ Քանի որ էսթեր փոքր քույրս մորս գիրկեն տարել էին, հիմա ալ Օվսաննան ձեռքեն գնաց։ Հետո ինձ ու ինձ նման անչափահաս երեխաներին հավաքեցին տարին Ջեմալ փաշայի թուրքական որբանոցը՝ Թուրքացրին։ 535 էր ազգանունս, իսկ անունս Շյուքրի էր։ Հայ ընկերս ալ էնվեր դարձավ։ Մեզ սյունեթ ըրին*։ Կային շատեր, որոնք թուրքերեն չէին գիտեր, շաբաթներով չէին խոսեր, որ չիմանան, որ հայ են։ Չաուշները եթե իմանային, ֆալախա կըքաշեին, 20—30—50 գավազան ոտքերուն տակը կզարնեին կամ ժամերով արևին նայել կուտային։ Միտքս չանցած պատիժներ կուտային։ Մեզ աղոթել կուտային, երեք անգամ պիտի կրկնեինք «փադիշահը չո՜ք յաշա» (կեցցե՛ թագավորը)։ Մեզի կհագցնեին թուրքական հագուստ՝ սպիտակ անթարի, վրան սև չլուբբե։ Ունեինք մյուդիր, մի քանի խոջախանումներ։ Ջեմալ փաշան հրամայած էր մեզի լավ նայել։ Քանի որ ան շատ կգնահատեր հայերու խելքը և շնորհքը ու հույս ուներ, որ եթե հաղթեր, հազարներով թուրքացած հայ երեխաները պիտի ապագային ազնվացնեն իր ժողովուրդը, մենք պիտի իր ապագա հենարանը դառնայինք։ Այդ նպատակով Ջեմալ փաշան Պոլսից ուսուցիչներ, բժիշկներ բերել տվեց, քանի որ մեր որբերի մեծ մասը ցինկայով հիվանդացան ու մեռան։ Ես շատ նվազ, փոքր երեխա էի։

Մեր որբանոցը Բեյրութեն մոտ յոթ մղոն դեպի Կիլիկիա էր։ Ձյունի հսկա լեռան ստորոտին էր տեղադրված և կտարածվեր մինչև Անթուրայի շենքը, որը ֆրանսական կիսանկախ վիճակ ուներ, անոր համար ֆրանսացիները, անգլիացիներն ու գերմանացիները իրենց կոլեջներն ունեին առանձին-առանձին, բայց արդեն ամեն մեկը քաշված էր։

Մեր թուրքական որբանոցին մեջ քիչ ուտելիք կուտային։ Մեր մեծ տղաները՝ ղարավանաջիները, կբաժնեին ճաշը։ Օր մը ադ ղարավանաջինե-

* Իմա՝ Թլփատել։

րից մեկը՝ կյուրինցի հայ տղա մը, ճաշարան մտնելու ժամանակս ինձ տեսավ, բռնեց թևս ու թուրքերենով ըսավ.— Շյուքրի՛, ինձի մի հատ գոտի կշինե՞ս։

Մտածեցի, որ ղարավանաչի է, ինքն ալ ինձի կօգնե, մի քիչ ճաշ ավելի կտա։

Մեր որբանոցի շենքը ֆրանսական կոլեջ էր առաջ, ֆրանսացիները քաշվել էին պատերազմը սկսելեն վերջ։ Կողքը վանքեր կային, մեջը արձաններ, մոմիաներ, թավիշի կտորներ և այլն։ Աղ կյուրինցի տղան այդ կտորներից բերեց, որ գոտի շինել տա ինձի՝ մեջը գրպաններով, որ փող պահի, քանի որ փոքրիկ հացիկները նա ծախում էր արաբներին և փող ուներ։ Մի օր գիշերը մտածեցի բարձրանամ շենքի կտուրը, ֆրանսացիներից մնացած բաներ մը կըլլա, չէ՞ որ հայրս դարբին էր եղել, ես էլ շնորհքով իրեն էի քաշել երևի։ Գնացի տանիք, հոն գտա պողպատյա թել։ Գործիքներ չունեի, գործիքներս քարեր էին, ո՛չ ասեղ կար, ո՛չ մի բան, մի կտոր թել կտրեցի, քսեցի քարին, ծայրը սրվեց։ Մտածեցի՝ ծայրը քարերով տափակացնեմ, ծեծեմ, հետո ծակեմ, որ ապակիի կտորով ծալածի վրա քսեմ։ Տեսա՝ ծակը գոյացավ, փոս եղավ։ Փնտրեցի, գտա կտրված գըրչածայր մը. պինդ էր ու սուր ծայրով. դրանով ծակ բացեցի։ Ասեղս եղավ։ Արդեն կարելի էր կարել։ Բայց թել չկար։ Մտածեցի կտորները քանդել, թելը ոլորել։ Աղբանոցը քրքրեցի, կաշիի պես մուշամբա մը գտա։ Աղ կյուրինցի տղային գոտին շինեցի՝ մեջը գրպաններով։ Շատ հավնեցավ։ Արդեն ուրիշ տղաներ ալ ուզեցին իրենց համար ալ գոտի շինեմ։ Քիչ-քիչ փող կշահեի աղ ձևով։

Օր մը Ջեմալ փաշան եկավ որբանոցը, տեսնելու, թե իր թրքացած հայ որբերը ի՞նչ վիճակի մեջ են։ Ղուրբան բայրամի՞ օրն էր, թե՞ ռամազանն էր, չեմ հիշում։ Այդ օրերուն մեզի լավ ճաշ կուտային, մեջը միսով։ Մի անգամ, երբ Ջեմալ փաշան եկավ, կանչեցին ինձ.— Բեշ յուզ օթուզ բեշ, 535-Շյուքրին դո՞ւն ես։

Ըսի.— Ես եմ։

Ընկերներս բռնեցին ինձի տարին շքախմբին մոտ։ Ջեմալ փաշան ինձ հարցրեց.— Օղլո՛ւմ, Շյուքրի, ի՞նչ ունիս շինած։

Ես մի գզրոց ունեի ձեռքով շինված և գոտի մը ցույց տվեցի։

— Ասեց.— Ի՞նչ գործիքներով ես շինել։

Ըսի.— Գործիք չկա, չունեմ։

Ջեմալ փաշան զարմացավ։ Ափսոսանքով ըսավ.— Գյունա՞հ դըր դիկատ էդեն, բու հյուներլի չոջուկ դըր (Ափսո՛ս է, ուշադիր եղեք, սա շնորհքով երեխա է)։

Երևի ուզում էր մի տեղ տեղավորել, բայց արդեն արաբ Շերիֆը եկավ։

Մի օր առավոտ արթնացանք առանց զանգը հնչելու, դռները չբացվեցին։ Հետո մենք բացինք, իջանք ցած, տեսանք, որ ոչ մի թուրքական պահակ ու զինվոր չկա, ոչ ալ մեր պաշտոնյաներեն, մյուդիրներեն, ուսուցիչներեն ո՛չ ոք չկա։ Զանգը հնչեցնող չկա, որ ճաշարան գնանք։ Մեր մեծ թուրքացած հայ որբերը՝ չաուշները, հարձակվել են քուրդ Սիլոյի վրա ու ծեծում են։ Սիլոն ալ գոմեշի պես բղավում է. հազիվ մի կերպ ազատվելով, իրեն գցեց մոտի անտառը։ Սա այն Սիլոն էր, որ միշտ խորենին ասել էր. «Իննսունինը հայ եմ սպանել, հիմա քեզ ալ որ սպանեմ, կըլլա՝ հարյուր»։ Ահա աս աղ քուրդ սրիկա Սիլոն էր, որին հայ մեծ որբերը աղվոր դաս մը տվեցին՝ իրենց ազատ զգալով, քանի որ թուրք պաշտոնյաներից ոչ ոք չկար, քանի որ լսել էին, որ Բեյրութը պիտի հանձնվի։

Քանի որ մեր որբանոցը զինվորական որբանոց էր, հատուկ օրենքներ ունեինք։ Ամեն դասարան պիտի իր սեղանի շուրջ կանգներ, բայց ո՛չ չաուշ կար, ո՛չ օնբաշի, ո՛չ բաշչաուշ։ Բոլորս կանգնած սպասում ենք, սեղանի վրա էլ հաց չկա։ Եկավ մեր Ըրզա բեյը՝ դեղագործը։ Ան աստիճանավոր հազարապետ բժիշկ էր, որին երեք հայ որբեր օգնում էին (Արիֆը և ուրիշները)։ Ահա մեր այդ բժիշկը եկավ, սեղանների արանքով գընո՛ւմ, գալի՛ս է։ Հրաման տվավ՝ նստեցե՛ք։ Բոլորս նստանք։ Նա շարունակում էր մտածկոտ գնալ-գալ։ Եկավ, մոտեցավ մեր սեղանի չաուշ էնվերին, որը հայ էր, բայց՝ թլփատված, ըսավ.— Օղլո՛ւմ էնվեր, սենին էրմենի իսմին նե՞ իդի (Էնվե՛ր, տղաս, քո հայկական անունդ ի՞նչ էր)։

— Թորո՛ս իդը, էֆենդիմ,— ըսավ տղան բարևի կանգնելով (Թորո՛ս էր, պարո՛ն)։

Հետո գնաց մյուս դասարանի չաուշին.— Օղլում Ջեմալ, սենին էրմենի իսմին նե՞ իդի (Ջեմա՛լ, տղաս, քո հայկական անունն ի՞նչ էր)։

— Վարդա՛ն իդը, էֆենդիմ (Վարդա՛ն էր, պարոն)։

Մյուսին եկավ հարցուց։ Բոլոր բաշչաուշները ոտքի վրա են և իրենց հայկական անունները ըսին։ Մեկ րոպե լռություն տիրեց։ Բոլորս սպասում ենք...

Ասաց.— Բու գյունդեն սորա հեփինիզ դե գենե էրմենի սինիզ (Այս օրվանից հետո բոլորդ նորից հայ եք),— ու ծանր տրամադրությամբ շարունակեց,— ինչպես տեսնում եք, այսօր մերոնցից ոչ ոք չկա. կազմը բացակա է։ Եթե ուզենայի, ես ալ ներկա չէի ըլլա, կերթայի անոնց հետ, բայց ես որոշեցի՝ չգնալ, ձեզ չթողնել։ Կարող է պատահի, մի քիչ հետո գան, իմ ձեռքին քելեփչե դրած տանին ինձի և գերի վերցնեն։ Բայց ես մնացի՝ ձեզ չթողեցի։ Խնդրում եմ ձեր մոտ եղած քուրդերուն չնեղեք, մինչև հիմա ինչպես որ հաշտ ու խաղաղ ապրել եք իրար հետ, այդպես ալ եղեք միշտ։ Ես կարող էի հոս չըլլալ։ Դուք ալ կրնայիք չըլլալ...։

Ինքը չշարունակեց, բայց հետո մենք իմացանք, որ իրեն առաջարկել են որպես դեղագործ-բժիշկ, վերջին ընթրիքին բոլորիս ճաշի մեջ թույն լցնել, բայց ինքը չի կատարել այդ հանձնարարությունը։

Եվ իսկապես արաբ Շերիֆի կողմեն եկան, ձեռնակապեցին ու տարին։ Մենք բոլորս տխուր էինք ու լուռ։ Երբ դուրս էին տանում, միայն ասաց.

— Ափսո՛ս, որ իմ ըրած լավություններն Աստված դեմս չհանեց, իմ մի հատիկ տղային՝ Նեջատլիին կուրացրեց, իսկ ձեզ ես իմ զավակներին տեղը դրած էի։

Արարայի ճակատամարտի փայլուն հաղթանակից հետո, երբ Թուրքիան ու Գերմանիան պարտվեցին, հայ կամավորները Բեյրութ էին մըտել. Ֆրանսացիներու և անգլիացիներու հետ արդեն «վի՜վ լա Ֆրանս» (կեցցե՛ Ֆրանսիան) կըսեինք։ Հետո ամերիկյան կարմիր խաչը վերցրեց մեր որբանոցը։ 1919-ից հետո Մերձավոր արևելքի որբերին Ամերիկյան Նպաստամատույց ընկերությունը կմատակարարեր։ Միայն երեսուն հազար հայ որբ կար Ալեքսանդրապոլում, ինչքա՜ն կար Հունաստանում, Բեյրութում...։ Բոլորին դյուկերով սննդամթերք կուղարկեին...

Երբ թուրքացումեն դուրս եկանք՝ հայացանք, մեր ուսուցչուհին արաբ էր, բայց տնօրինուհին միս Մորնին էր։ Նրա օրոք հայ ուսուցիչներ ալ եկան, ինչպես օրինակ՝ Վահան Քեհյայանը, Ալյանակյանը, որոնք փող անգամ չէին առնում։ Եկան հայ օրիորդներ Զըմարայից և այլ վայրերից։

Միս Մորնիի ժամանակ մենք շատ լավ կյանք ունեցանք։ Նա շատ համակրելի, շատ հմայիչ ամերիկուհի մըն էր, որ իր երիտասարդ կյանքը նվիրել էր հայ որբերի խնամքին։ Նա աղջիկներին առանձնացրեց տղաներից։ Նա մեր բոլորին մայր դարձավ, և մեզանից ամեն մեկը մինչև մեր կյանքի վերջը երախտապարտ ենք նրան...

Միս Մորնին այնքա՜ն հետաքրքիր և գեղեցիկ դարձրեց մեր որբերի տխուր կյանքը, որ էլ ասելու չէ։ Նա ասեց.— Ո՞ւմ ձեռքից ի՞նչ շնորհք կուգա, թող ցույց տա, որ Ամերիկա ուղարկենք՝ ցուցադրելու։

Ես արդեն գոտի կշինեի։ Ինձ գործիքներ տրամադրեցին, և ես սկսա տարբեր տեսակի խաղալիքներ շինել, մեղրամոմով փոքր քանդակներ քանդակել, որոնք ղրկվեցին Ամերիկա՝ ցուցադրության։

Հետո միս Մորնիին տարին Հալեպ։

Մի օր ինձ կանչեցին գրասենյակ, ըսին.— Միս Մորնին լուր է ղրկել չորս տղաներիդ ղրկել Հալեպ. միս Մորնին կանչում է ձեզ, որ ղրկի Մարզվան սովորելու։ Ես զարմացա։ Ուրեմն իմ շնորհքիս համար միս Մորնին ինձ հիշել է և կանչել է տալիս։

Չորս տղայով ճամփա ինկանք։ Հասանք Հալեպ։ Եկեղեցի գնացինք։ Հետո գնացինք միս Մորնիին գտանք։ Նա մեզ պիտի ուղարկեր Մարզվան, բայց քեմալական շարժումն սկսվեց։ Ճամփաները փակվեցին։ Գաղթականներու հետ Բեյրութ եկանք։ Հետո գնացինք Ադանա, Սամսոն։ Հետո անցա Հունաստան։ Այնտեղ ավարտեցի գյուղատնտեսական և տեխնոլոգիական ինստիտուտը Սալոնիկում և 1925 թ., որպես մասնագետ, Հունաստանից Հայաստան եկա, ինձ հետ բերելով ցեղական կովեր, եզներ, ոչխարներ, խոզեր, հավեր, որ Հայաստանում զարգացնենք գյուղատնտեսությունը։ Բայց մեր խորհրդային կառավարությունը ոչ միայն չգնահատեց իմ նվիրվածությունը այլև թալանվեցին բերածներս, և ինձ աքսորեցին Սիբիր։ Այնտեղ հինգ տարի տանջվելուց հետո, վերադարձա, բայց մասնակցեցի Հայրենական մեծ պատերազմին, գերի ընկա Ֆրանսիա։ Այնտեղ գտա իմ եղբորը։ Նա ասաց՝ ետ մի՛ գնա, մնա՛։ Բայց ես չմնացի և վերադարձա հայրենիքս։ Աշխատեցի որպես էլեկտրիկ, ընտանիք կազմեցի։ Երեք աղջիկ ունեմ՝ մեծը ժամացույցի գործարանումն է աշխատում, միջնեկը՝ պոլիտեխնիկ ինստիտուտում դասախոսում է, փոքրն էլ երաժշտության՝ ջութակի դասատու է։ Հիմա ես թոշակառու եմ։

## 20(236).
## ԴՅՈՐՏՅՈԼՑԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1887 Թ.)

Ես ավարտել էի Դյորտյոլի Կենտրոնական վարժարանը։ 1915-ին, որպես զինվոր, բոլորին հավաքեցին տարան։ Մենք՝ քսանյոթ ուսուցիչներս, գնացինք Ավնի բեյի մոտ, բայց՝ անօգուտ. 750 հոգի բոլորին հավաքեցին, ես ալ, պապաս ալ մեջը, միայն տղամարդկանց հավաքեցին՝ 15-ից մինչև 50 տարեկան։ Մեր թաղի մեջ, կառավարական տան առջև՝ լա՜ց, կո՜ծ. բոլորը կուլային։

Դյորտյոլը պիտի դիմադրեր, բայց մարդիկ հետո հրաժարվեցին և հնազանդվեցին։ Սահակ կաթողիկոսը չէր ուզում կռվենք։ Ջեմալ փաշան Ադանայի վալին էր։

Առավոտյան դեմ պաշարեցին, խուժեցին ներս, տուն-տուն հավաքեցին բոլոր տղամարդկանց՝ 750 հոգի։ Էրզին ըսված գյուղ մը կար, պիտի հոն գիշերեինք։ Մեկ կիլոմետր մնացած դեպի

արևմուտք մեզ դարձուցին, ձորի մեջ տարին. ամեն կողմը 250 թուրք զինվոր պատրաստ են, զինված, մեզ պիտի ջարդեն։ Արևը մայր մտավ։ Մեր քարավանը մտավ այդ ձորը։ Լրիվ մթնելեն վերջը հրաման եկավ՝ ծունկի եկե՛ք։ Մերոնց շատերուն մոտ տասնոց հրացաններ կային։ Այդ միջոցին հրաման եկավ զինվորներին՝ սվինները բացե՛լ։ Մեր՝ 750 հոգու ոտքերի ձայնը չի լըսվում, քարացել ենք վախից...

Հանկարծ ձորի երկու կողմի բլուրներից մեկի վրա ավստրիացի մեծ գեներալ մը տնկվեցավ՝ սպիտակ հագած, սպիտակ ձիու վրա նստած։ Ադ տեսնելով, կոմանդորը հրամայեց՝ անմիջապե՛ս սվինները վար իջեցնել։ Գեներալին տեսնելով իրենց ընելիքը չկրցան ընել։ Հրաման տվին մեզ՝ քայլեցե՛ք դեպի ծով...

Հետո մեզ մտցուցին եղեգնուտ-ճահիճի մեջ։ Ջուրը՝ մինչև ծունկը, քայլել սկսանք, բոլորը՝ մտավորականներ, դոկտորներ (բժիշկներ), ուսուցիչներ։ Վերջին անգամ մենք նորեն Ավնի Բեյին դիմեցինք։ Մենք՝ 27 ուսուցիչներս, խնդրեցինք, որ մենք չերթանք, այլ՝ էրթանք՝ մեր պաշտոնը շարունակենք։ Ավնի բեյը կատղեց, ըսավ.— Առաջին անգամ ուսուցիչները պիտի կախենք. անոնք էին երեխաներին հեղափոխություն սովորեցնողը։ Քանի որ Վահան Կարապետյանը հանդըգներ էր կռվել, սպանեցին նրան, ոտքերը կապած, շունի պես քարշ տվին ձիու ետևից։

Վերջապես գիշերը հասանք գյուղը՝ Էրզին, որը մի ավերակ էր դարձել։ Մինչև մեր այնտեղ հասնելը, մեր պառկելիք տեղը ջուր էին բաց թողել, որ թրջվենք։ Չորս կողմը պաշարեցին։ Սավանմավան գետինը փռեցինք, ջուրին մեջ նստանք։ Էրզինի հայ տղաները բողոք գրեցին, թե՝ որքա՞ն շատ մոռացած եք մեր աղ ու հացը, թուրքե՛ր...

Օրը փետրվար 14 էր, ցո՜ւրտ։

Չոր փայտ ուզեցինք, տղաները բերին։ Օջախները վառեցինք, մեկ կողմեն՝ մեր թրջված հագուստները չորցնելու, մյուս կողմեն՝ ճաշ եփելու։

Թուրք զաբիթները սկսան մեզ խուզարկել, ամենափոքր դանակն անգամ հավաքեցին։ Անոնք որ տասնոց ունեին, թաղեցին հողին մեջ։ Ով ոտքի ճամփա պիտի գնար՝ ոստիկան մը դրին գըլխին։

Ինժեներ Մարկո Պոլոն՝ իտալացի, ինձ վերցրեց թարգմանիչ, որ ճանապարհաշինությանը օգնեմ։ Ինձ դարձրին պահեստապետ։ Տասնյոթ հազար բանվորություն կար։

Գրող Զոհրապի համար Մանուկ չաուշը 150 ոսկի հավաքեց, որ ոստիկաններին տա, Զոհրապին ազատեն։ Բայց Զոհրապը չհամաձայնեց, ըսավ. «Ես ժողովուրդին ո՞ւր ձգեմ»։

Ջեմալ փաշան Զոհրապի հետ դասընկեր էր, վեց սինի տեսակ-տեսակ ուտելիքներ ղրկեց, Զոհրապը մերժեց, ըսավ. «Եթե ուզում է ինձ լավություն ընել, թող Թալեաթին ըսե, թող ազատեն բոլորի՜ն»։

Չորս-հինգ օր Օթել Բարոնում պահելեն վերջը, Խարանի դաշտում սպանեցին Զոհրապին։

Ադ 750 հոգիս փոխ առ փոխ կրակի շուրջ կտաքանայինք։ Առավոտյան հրաման եկավ՝ ոտքի՛ ելեք։ Շարժվեցանք դեպի Օսմանյա։ Այնտեղ ևս մեզ ըսին՝ հինգ րոպե հանգստացեք։ Հետո քշեցին մեզ Քանլը գեչիդ (արյունոտ անցք)։ Այդտեղը մացառուտ տեղ մըն էր։ Ադ 750 հոգիս անտառի մեջ ենք։ Մեզ շրջապատեցին։ Աստծոն ախոշին գնացել էր. անձրև՛ մը սկսավ։ Ժանդարմները կգոռան՝ օլա՛ն, գյավուրլա՛ր, քաշմայը՛ն (ծո՛, գյավուրնե՛ր, մի՛ փախչեք)։

Մենք՝ ջահելներս, բղավում ենք՝ ույույըն, քորքմասը՛ն (լսում ենք, մի՛ վախենաք)։ Սիրտ պետք էր՝ ծերունիներուն տրտունջները լսելու. Աստծո հետ կռվո՞ւմ էին՝ դեմ դիմաց...

Առավոտ եղավ։ Անձրևը շարունակվում է։ Ճանապարհը վերելք է։ Ինչքան գնում ես, այնքան ետ ես գնում։ Այդտեղ զինվորական կառքերը չեն կարող ցեխի մեջ գնալ։ 200—300 հոգու աշխատացնում են։ Մեզ որ տեսան՝ լացուկոծը սկսան։ Անձրևը հեղեղ դարձավ։

Հասանք մինչև Հասան բեյլի, մութը կոխեց։ Ո՛չ Աստված է խղճում, ո՛չ թուրքը։ Դուն մի ըսեր, հին ժամանակվանից անտեղերը հայեր կապրին եղեր, մեզի մտցուցին ադ տների ախոռները։ Այդտեղ կար Լյութֆի բեյ անունով աղա մը։ Ան տանուտեր-քեհյաներուն կըսե՝ ամեն մեկդ ձեր տունը տարեք աս հայերուն։

Քեհյաները կըսեն՝ մենք երաշխավոր ենք, թող մեր տուները տանինք հայերը։ Լյութֆի բեյը թողեց, որ մեզ բաժանեն տները։ Անմիջապես տաքացանք, հյուրասիրվեցինք։

Առավոտյան ես դուրս եկա։ Ճանապարհը շինելու համար քար կար։ Քյոթահիայեն հայերը բեռցած էին, 100 մետր խորություն ունեցող ձորից քարերը պիտի կռնակով բարձրացնեին վեր, ով չէր կրնար տանիլ՝ ղրբաջով կխփեին։

Հաջորդ օրը ես գնացինք աշխատելու, տարին 250—250 հոգի։ Այսպիսով, էնթիլիի մեջ աշխատցուցին 3 ամիս։ Կռնակով քար կկրեինք։

Պոլսո մեջ հայերու հետ ապրած մի թուրք կար՝ Իզմայիլ Հակկը բեյ. ան շատ լավ մարդ էր, եկավ ինձ կանչեց, ըսավ.— Դուն իմ մոտ պիտի մնաս։ Ինձի տուր քու ժողովուրդին անունները ով 60 տարեկան է, գրի՛ր անունները, բե՛ր։

Գնացի գրեցի. 100 հոգի եղավ։ Եվ այդ մարդը ցուցակը առավ, Հալեպ մենդիլ մըֆետիշին (խուզարկության պետին) գրեց, որ սրանք պիտի ղրկվին ետ։ Պապայիս ալ մի վեցիկա (թույլտվության կտրոն) տվեց, որ ոչ ոք բան չկրնա ընել...

## 21(287). ԴՅՈՐՏՅՈԼՑԻ ԽԱԼԲՈՒՐՋՅԱՆ ՄԱՐԻԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1909 Թ.)

Վեց տարեկան էի, որ աքսոր հանեցին։ Պապաս տեր հայր էր Դյորտյոլում։ Կանչեցին, ըսին՝ վաղը պիտի դուրս էլլաք ատտեղեն։ Աղ գիշերը մենք դուրս էկանք գյուղեն։ Ջորիի մը վրա մեզ նստեցուցին՝ ինձ ու մեծ քույրս, պզտիկ քույրերուս խուրջիններու մեջ դրին, ջորիին քովերը կախեցին, դուրս ելանք գյուղեն։ Բոլոր մերիններուն հետ էինք՝ հորեղբայրս, մորեղբայրս, անոնց հետ մայրս, հայրս, մորաքույրներս՝ բոլորը ընտանիքներով։ Տանում էին մեզ Հալեպ։ Թրենով Թոփրաքգալեից բերին Հալեպ։

Տղամարդկանց հավաքեցին։ Հորս բռնեցին, ձեռքերը կապած տարին. ալ չտեսա անոր։ Կըսեն քի թրնախները քաշեցին։ Հորեղբորս մեռցուցին, անոր, տղային հետ, Մուրադ գետը նետեցին։ Ես տեսա ջուրին վրա անոնց լեշերը կուգային։ Հետո մեզ քալելով տարին դեպի Դեր Զոր։ Հոն չոլը մընացինք, սոված մնացինք, սովածութենեն շատերը մեռան, ձմերուկին կեղևը կփնտրեինք, չէինք գտնար։ Հետո այնտեղեն մի արաբ եկավ մորս ըսավ.— Աս աղջիկը տուր ինձի, ինձի աղջիկ ընեմ,— ըսավ,— ետ դառնաս նե կուտամ քեզի, չէ նե՝ ինձի աղջիկ կըլլա։— Մամաս չտվավ։

— Մեռնիմ ալ նե, թող քովս ըլլա,— ըսավ։

Արաբը շատ համոզեց մորս։ Մայրս մտածեց՝ կրնա ըլլալ, որ աղջիկս ողջ մնա։

Ես ոտքերս գետնին զարկի.— Չե՛մ ուզեր,— ըսի, բայց լսող չկար։ Սոված էինք։ Երեխաները առանց ջուրի ուռան, մեռան։ Արաբը ինձի տարավ իր տունը։ Անոր նպատակը ան էր, որ ինձի մեծցընե, իր տղաներուն մեկին հետ ամուսնացնե։

Ինձի ըսավ.— Քու անունը Արուս է։

Վերջը աղ մարդուն զինվոր տարին։ Ամենեն առաջ քշեր են աղ մարդը, մեռեր է։

Արաբին կնիկը ըսավ ինձի.— Քու ոտքդ ուղուրսուզ էր, գնա՛ աս տունեն։

Ես դուրս եկա, անտեր-անտիրական փողոց էլա։ Լալով կերթամ։ Մեկ ալ տեսա մոլլա մը ըսավ.— Ո՞ւր կերթաս կոր, աղջի՛կ։

Ըսի.— Տեր-տիրական չունիմ, կերթամ կոր։

— Եկո՛ւր քովս,— ձեռքես բռնեց, տարավ իր տունը։ Կնիկին ըսավ.— Ասոր պիտի նայիս։

Կնիկը ըսավ.— Ես իմ ունեցած չոջուխներեն օսանմիշ եղած եմ, չե՛մ նայիր։— Ամմա հետո կնիկը փափկեցավ, ես մնացի հոն։ Աղ կինը աղջիկ մը ուներ, Բաղդադ հարս էր գնացած։ Եկավ, հաց, խուրմա, ամեն ինչ բերավ, վերջը էդ աղջիկը մնաց մեզ մոտ մեկ ամիս և ինձ շատ սիրեց, մարը ըսավ.— Տո՛ւր ինձ աս աղջիկը, ես իմ չոջուխին պես կնայիմ։

— Ա՛ռ, տա՛ր,— ըսավ մայրը։

Ինձի առավ աղջիկը, Մուրադ գետի վրա ղայըղով տարավ։

Աղ աղջիկը մի չոջուխ ուներ և մի մարդ։ Հացի խըտըրխ էր հոն։ Ցորենը բերում էին, քաշում էին քարով, ալյուր էին անում, հետո հաց էին շինում, ուտում։

Մեկ ալ ըսին, քի անգլիացին, ֆրանսացին կուգան կոր։ Արաբները փախան Դեր Զորեն։ Տեսա, որ ինձի հոն պիտի ձգեն։ Աղանկ ալ եղավ։ Ինձի իրենց հետ չտարին, փողոցը ձգեցին։ Անձրևը կուգա՛, սովա՛ծ, ծարա՛վ, անտեղը պատի կողքը պառկա, քունս տարել է։

Մեկ ալ տեսա մեկը ոտքով կզարնե կոր ինձի։ Մարդ մըն էր, մուշամբա հագած էր։ Ըսավ.— Էլի՛ր, դուն ո՞վ ես։

Ըսի.— Ես ո՛չ մեկը չունիմ։

Աղ մարդը մեղքցավ ինձի, տարավ իր տունը, հարուստ մարդ էր։ Կնիկին հագուստները տվին, ինձի հագցուցին։ Ռամազան էր, կերակուր էին եփում։ Ինձ ալ տվին, կերա։ Ես հոն մնացի։ Մարդը շուկան մեծ խանութ ուներ։ Օր մը կնիկը ըսավ.— Հաց տամ, հորդ (այսինքն՝ իրենց տան հորը) տար։

Ես ալ առի ուտելիքները, տարի շուկա։ Դու մի ըսեր, իմ քաղաքացի մարդիկները՝ Դեր Զորը մընացածները, բերեր են, խանը լեցուցեր են։

Մեր դրացիին տղան ինձի տեսավ, ճանչցավ, մեկ ալ ս:եսնամ փաթըր-փաթըր վար իջավ խանեն.— Դուն հա՞յ ես,— ըսավ։

— Ո՛չ,— ըսի։

— Դուն տեր Գրիգորին աղջիկը չե՞ս։

— Այո՛,— ըսի։

— Դուն իմ քո՛ւյրն ես,— ըսավ։

Ես ըսի.— Հիմա հաց կտանիմ հորս, իրիկունը եկեք մեր տունը։

Մեր ծանոթ հայերը եկան հորս խանութը, հարցուցին.— Քու քովդ հայ աղջիկ կա՞։

— Չէ՛,— ըսավ,— չիկա։

— Ունե՛ս։

— Չունե՛մ։

— Ինչ որ ալ ըսես, մենք օրենքով կուգանք կառնենք, կտանենք,— ըսին։

Իրիկվան դեմը եկան ըսին հորս.— Հանե՛ աղջիկը։

— Մենք հայ աղջիկ չունի՛նք,— ըսավ։

Մարդը ինձի տարավ պահեց փայտանոցը, որ ինձի չգտնան։ Անկե վերջը տունը-տեղը իրար անցուցին հայերը, ինձի գտան, սկսան ինձի համոզել։ Մեկը ըսավ.— Թող աղջիկը համոզվի, զոռով չտանենք։

*Ամենեն վերջը ես ըսի.— Ես պիտի երթամ։*

*Առավոտ եղավ էդ արաբ մարդը չէր կրցեր քնանալ, կըսե.— Տվե՛ք իմ աղջիկը, ան ի՛մս է։*

*Հայերը կըսեն.— Կտանինք ֆրանսացի կոմանդորին քովը, ան ի՞նչ ըսե՝ թող անանկ ըլլա,— մեկը՝ բիլեզիկ կուտա, մյուսը՝ գերդանլըխ կուտա։*

*Ֆրանսացի կոմանդորը ըսավ.— Մենք զոռով չենք կրնար առնել,— հարցուց ինձի.— Աղջի՛կս, դուն ընտրե, ո՞ր մեկը կուզես, եղբո՞րդ կուզես, թե՞ պապայիդ (արաբ) կուզես։*

*Ես ըսի.— Եղբա՜յրս կուզեմ։ Բոլորը՝ ուռա՛ ըսին, ուրախացան։ Հետո հայերը ինձ առին իրենց հետ, տարին Հալեպ։ Ուրիշ որբացած երեխաներ ալ կային ինձի պես։ Ամեն մեկին իրեն բարեկամին քովը տարին։ Ինձ ալ տվին Արիս քեռիիս։ Վերադարձին Իսկենդերուն գացինք, այլևս Դյորտյոլ չգացինք։ Անտեղեն Անդրանիկ եղբորս հետ գնացինք Շամ, Դամասկոս՝ հորեղբորս տղային քովը։ Դամասկոսում հորեղբորս տղային գործը լավ չէր։ Գնացինք Ջեբել Դրուզ մնացինք։ Հոն ամուսնացա ուրֆացի Աբրահամին հետ։ Հետո ալ 1946-ին հինգ երեխայով եկանք Հայաստան։*

## 22(288).
## ԴՅՈՐՏՅՈԼՑԻ ՏԵՐ-ՍԱՀԱԿՅԱՆ ԳԵՎՈՐԳԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1909 Թ.)

*1915 թ. ապրիլի 14-ին Գրիգոր Ջոհրապը Թալեաթ փաշայի տանը նարդի էր խաղում։ Մի քանի օրեն հայ մտավորականներուն բռնում են, Ջոհրապը չի հավատում, գնում է Թալեաթի մոտ՝ բողոքի։ Թալեաթը պաղարյունությամբ կպատասխանե.— Ձեր բողոքը իզուր է...*

*Հայրս Գրիգոր Ջոհրապին Օթել Բարոնում կըհանդիպի, կըսե.— Ես ղասաբխանեեն կուգամ կոր։ Հոն մի հատ հայ չձգեցին ողջ։ Էկո՜ւր քեզի ազատեմ...*

*Բայց Ջոհրապը կպատասխանե.— Եթե ես էրթամ, բոլո՛ր հայերուն կմորթեն...*

## 23(289).
## ՄԱՐԱՇՑԻ ՄԱՅԻԿՅԱՆ ՎԵՐԳԻՆԵԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1898 Թ.)

*Մարաշը իմ և իմ ամբողջ գերդաստանի ծննդավայրն է։ Հայրս՝ Թորոս էֆենդին, որը զբաղված էր ուսուցչությամբ, նաև իրավաբանական գործերով, ազգային-քաղաքական կյանքի երևելիներու շարքին կպատկաներ։ Շատ ժամանակ հայերի և թուրքերի մեջ ծագած վիճաբանություններին ժամանակ հորս կդիմեին։*

*Մենք հպարտ էինք մեր փոքր քաղաքով, ուր հարազատ էր ամեն մի քարը։ Մարաշն ուներ մոտ յոթանասուն հազար բնակիչ, որի քառասուն հազարը հայեր էին, իսկ մնացածը՝ թուրք, պարսիկ, արաբ, հույն և ասորի։ Հայ լուսավորչականներն ունեին մի քանի եկեղեցի՝ Ս. Սարգիս Ս. Գևորգ, Ս. Աստվածածին և ամենամեծը Քառասուն Մանկանցն էր, կային նաև կաթոլիկներ ու բողոքականներ։ Մեր խաղաղ կյանքը տևեց 1918—1920 թիվը, քանի դեռ ֆրանսիական իշխանությունը Կիլիկիայումն էր։ Ֆրանսիական ու հայկական թերթերը միշտ գրում էին, որ Ֆրանսիան հավիտյան Կիլիկիայում կմնա, որովհետև Ֆրանսիայի հեղինակությունն Առաջին համաշխարհային պատերազմեն վերջը բարձրացել էր, իսկ Թուրքիայինը՝ ընդհակառակը։ Բայց այդ խաղաղությունը, ափսո՜ս, երկար չտևեց։*

*Կամաց-կամաց զգացինք, որ թուրքերը կսկըսին ատել մեզի։ Օր մըն ալ եկանք, որ ֆրանսիացիները իրենց ձիերուն սմբակներուն տակը քեչե կապեր են և սուս ու փուս հեռացեր են Մարաշեն։ Առտուն էլանք, զարմացանք, քանի որ ոչ ոք լուր չուներ այդ մասին։ Նույնիսկ հայտնի Հակոբ աղա Խրլախյանին անգամ, որ ամբողջ ֆրանսիական բանակին պարենը ձրի ինքն էր մատակարարում, ժեներալ Դյումոնը ոչինչ չէր հայտնել իրենց հեռանալու մասին։ Այնպես որ 1920-ի սեպտեմբերին ֆրանսիական զորքն այլևս Մարաշում չէր։ Թուրքերը երևի առաջվնե լուր ունեին, քանի որ գիշերները հրացաններ կպայթեին այս ու այն կողմը, կվախեցնեին մեզի։*

*Ամուսինս տեսավ, որ օրեօր վիճակը ծանրանում է, աղամանդե մատանին փոխեց, դեմը երկու հատ հրացան առավ, մեկը՝ իր համար, մեկն ալ իր եղբոր՝ Գևորգին համար։ Բայց երբ որ մեր դրացի Կարապետ աղայենց դեպքը պատահեցավ, բոլորն ալ ինքզինքնուն եկան։ Կարապետ աղան շատ հարուստ, շատ վարպետ կոշկակար էր։ Մարաշի երիտթուրքերուն առաջնորդ Ջութքի էֆենդիի կոշիկները ինքը կկարեր և միշտ իրեն ապահով կզգար։ Բայց քանի որ ինքը զենք չուներ, չըկրցավ պաշտպանվիլ։ Գիշեր մը պարտեզին դար-*

բասը կոտրելով Թուրք խուժանը ներս կխուժե, տուն կմտնա, մեծեն մինչև պզտիկը կմորթե ու պարտեզի մեջի ջրհորը կլեցնե, ունեցվածքն ալ իրար մեջ կբաժնեն։ Աս դեպքերեն վերջը հայերը սկսան ինքնապաշտպանության մասին մտածել։ Կիներուն և երեխաներուն, ապահովության համար, փոխադրեցին Քառասուն Մանկանց եկեղեցին, որը եկեղեցիներեն ամենամեծն էր և ամենաապահովը, քանի որ պարիսպով շրջափակված էր։ Հոն փոխադրեցին մեր շրջանի բոլոր կիները, հարսնացու աղջիկները և երեխաները, ամբողջը՝ երևի երկու հազար հոգիեն ավելի մարդ։ Ասեղ նետելու տեղ չիկար։ Խորանը, գավիթը, վերնատունը, ամբողջ լեփ-լեցուն էր։ Մեր ֆեդայիները ամեն կողմեն կհսկեին։ Բայց Թուրք խուժանը կատաղած էր և հայու արյունի ծարավ էր. ամեն կողմե կլսվեին Թուրքերուն ձայները.— Հանո՜ւն Մուհամեդի սրբազան ուխտի, պիտի ջարդենք բոլոր հայերուն։

Օրին մեկը Քառասուն Մանկանց եկեղեցիին շուրջը Թուրք զինված խուժանը շղթայի պես շրջապատեց և օղակի մեջ առավ. դռները բացել անգամ չթողեցին, ասում էին՝ իբր գիշերը պիտի դուռը բացեն, հրամանն այդպես է։

Քառասուն Մանկանց եկեղեցին շինված էր բարձունքի վրա։ Մի քանի հարյուր մետր ճամփան որձաքարերով սալահատակված էր, որի լայնքը ձախեն աջ հազիվ չորս մետր կըլլար, երկու կողմը ծառերով։

Եկեղեցիին մեջը լցված հայերը կսպասեին, որ գիշերը պիտի դուռը բանան, բայց գիշերվա ժամը տասը, տասնմեկ, տասներկու եղավ, դուռը բացող չկա։ Հայ ժողովուրդը մեջը լիքը. ո՛չ ջուր կա, ո՛չ լույս, ամեն ինչը մեջը՝ ալ կեղտոտություն. մեկը՝ կուլա, մյուսը՝ կողբա, մեկալը՝ կաղոթե։ Մեկ խոսքով, չտեսնված իրարանցում։ Անոնց ձայները մենք լսում էինք մեր տունին նկուղեն, ուր մենք ալ պահմտած էինք։ Մեյ մըն ալ պզտիկ լուսանցքեն տեսանք, որ գիշերվա ժամը մեկ անց կեսին քանի մը Թուրք եկեղեցիին կամարաձև կտուրին վրա են բարձրացած, նավթոտած վառվող շորի կտորները նետում են եկեղեցիին գմբեթեն ներս...

Խանձահոտը աշխարհը բռնեց։ Եկեղեցիեն եկող ձայները մարդու սիրտն էին փլում։ Հազարավոր ձայներ պոռում, գոչում, աղերսում էին՝ դուռը բացել, անոնց ձայները կարծես գետնի տակեն կուգար, երկրաշարժի՝ տնքոցի պես հառաչում էին, այնքան բարձր, որ մինչև մեզի էր հասնում արձագանքը, որը ժամ առ ժամ գնալով ավելի էր նվաղում...։ Բայց մարդկանց ոսկորների այդ խանձահոտը ամեն տեղ էր...

Հրեշներն իրենց ընելիքը ըրեր էին։ Ալ ոչ ոք ողջ կար եկեղեցու և մեր տուներուն շրջակայքում։ Եկեղեցիին մեծ քարերով սալահատակված տարածությունը, որը քանի մը հարյուր մետր էր, կարծես օճառի հաստ շերտով էր ծածկված. մոտ երկու մատ հաստությամբ մարդկանց ճարպը հալեր, հոսեր էր ու թանձրացեր...

Առաջին գացողներուն ոտքերուն հետքերը ծեփվում էին այդ ճարպի շերտի վրա, ինչպես ձյունի վրա... Մեյ մըն ալ տեսնանք, որ Թուրքի կնիկները ձեռքերնին մեկ-մեկ մաղ առած դեպի եկեղեցին վազում։ Մենք հեռվից դիտում էինք, բայց ես չդիմացա, ուզեցի երթալ, տեսնալ հոն կատարվածը։ Հագա ֆարաջայի պես բան մը, գլխուս ալ շարշաֆ մը անցուցի, քիթս-բերանս փակեցի, արդեն Թուրքերեն շատ աղեկ կխոսեի և վստահ էի, որ ինքզինքս չեմ մատներ։ Ես ալ էլա ճամփա ընկա դեպի մեր Քառասուն Մանկանց եկեղեցին, որի մրոտված պատերն էին մնացել կիսավեր վիճակում, իսկ դրան տակից մարդկանց հալած յուղը հոսել էր բարձունքե՛ն վար... ոտքս կոխում եմ՝ կպնում է, մյուս ոտքս կոխում եմ՝ կպնում է...։ Վերջապես տեսա քովես Թուրք կին մը գնում է՝ մաղը ձեռքին, ինձ տեսնալով, ըսավ.— Բաջի՛, ինչո՞ւ հետդ մաղ չես վերցուցած։

Ես առանց շփոթվելու ըսի.— Կվերադառնամ, կվերցնեմ։

Նա էլ ծիծաղելով ըսավ.— Վերադարձեդ վերջ ալ ի՞նչ կմնա...

Արդեն երրորդ օրն էր, բլուտի փուռի պես կարմրած պատերը դեռ տաք էին։ Ներս մտա եկեղեցի, ի՞նչ տեսնամ։ Թուրք կնիկները ամեն մեկը մի տեղամաս էին զավթել ու իրար չէին թողնում միմյանց սահմանը մտնել ու իրար վրա բղավում էին.— Ով իմ սահմանը մտնա, կսպանե՜մ...

Ինձի հետ եկող Թուրք կինը ինձ դառնալով ըսավ.— Եթե գյավուրը պիղծ է, անոր ոսկին մաքուր է...։

Տեսնալը արժեր, թե այդ հրեշի կերպարանքով կնիկները ինչպե՜ս էին ուրախանում, երբ մաղված մոխիրի մեջեն հալած ոսկիի կտոր մը կըգտնային...

## 24(240).
## ՄԱՐԱՇՑԻ ՀԱԼԱՋՅԱՆ ՄԱՔՐՈՒՀՈՒ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1900 Թ.)

Թուրք ժանդարմները իրենց գործը տեսնելեն վերջ՝ աղջիկներուն պտուկները թեզբեղ կշինեին, հարսներուն գլուխները ցիցի վրա կհանեին։ Ողջ մնացած հարսները իրենց թազա օժիտները գցում էին հորը, որ Թուրքի ձեռքը չանցնի, հարսերը իրենց երեխեքին ջուրի հորն էին գցում, որ ցիցի վրա չհանեն։

— Մամա՛,— կըսե պզտիկ ախպարս,— դո՞ւն ալ ինձի պիտի հորը գցես։

— Չէ՛, տղա՛ս, պիտի հետս տանիմ։

Հետո կտանի մեզի ֆրանսացիներուն քովը կհասցնի։ Հազիվ գետնին վրա նստած էինք, Թուրքերը զուգարանի կեղտաջուրը բացին մեր վրա, որ հոսի գա մեր վրա...

## 25(241).
## ՄԱՐԱՇՑԻ ՄՈՄՋՅԱՆ ԱՐԱՄԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1909 Թ.)

1915 թվին վեց տարեկան էի, երբ եկան մեզ աքսոր հանեցին։ Շատ քիչ կհիշեմ հորս, որը Մարաշի երկաթգծի վրա կաշխատեր։ Իրիկունը տուն կուգար թևի տակ հացի սոմոն մը դրած։ Մորս ևս աղոտ կհիշեմ. միայն ականջիս մեջն է իր խոսքերը.— Մեզի Դեր Զոր կտանին մեռցնելո՛ւ, գոնե մեր զավակները ազատվին։

Խեղճ ծնողքիս դիակները Դեր Զորի անապատներուն մեջը թռչուններուն կեր դարձավ։ Մենք ալ երեք եղբայր էինք՝ ես, Տիգրանը և Վահանը։ Վահանը կրծքի երեխա էր։ Մորս կաթը հուզումեն չորցավ։ Այդ երեխան սովեն մեռավ։ Մնացինք ես ու Տիգրանը։ Մեզ ալ հրաշքով ազատեց Թուրք տղա մը Դուրդու անունով, որը Թուրքական բանակում ծառայող քեռուս տղայի՝ Մարաշի գերմանական հիվանդանոցի գլխավոր բժշկի, դոկտ. Հարություն Տեր-Ղազարյանի սպասավորն էր։ Այդ Թուրք Դուրդունը, իբր իր էշն է քշում, էշի վրայի խուրջինի երկու աչքերուն մեջ դրեց ինձ ու Տիգրանին՝ ամեն մեկս մի կողմում, որ ետ տանի Մարաշ՝ քեռուս տղային՝ բժշկին հանձնի մեզ։ Ճամփին Տիգրան եղբայրս, որ ինձմե փոքր էր, սկսեց լաց լինել։ Թուրք ժանդարմը լսեց երեխայի լացը, եկավ մեր էշի մոտ, խուրջինի միջին տեսավ սիրուն երեխա է լաց լինողը, վերցրեց եղբորս ու տարավ։ Ես մնացի խուրջինի մյուս աչքին մեջ։ Թուրք Դուրդուն ինձ տարավ ետ՝ Մարաշ, հանձնեց մեր ազգական բժշկի քրոջը՝ Հայկուհուն։ Հիվանդանոցի մեջ մեզ նախաճաշ տվին։ Հոն ինձի պես ուրիշ երեխաներ ալ կային։ Մեր մազերը կտրեցին։

1920 թվի հունվարի 21-ին, երբ սկսավ Թուրքի և ֆրանսացիին կռիվը, հայ կամավորներն ալ կմասնակցեին, նա, ով որսորդական հրացան ուներ, Թուրքի դեմը կկռվեր։ Մեր Մարաշի Գյումբեթ և Ղույճախ թաղամասերին մեջտեղը Ս. Սարգիս եկեղեցին կար, մեր թաղի ժողովուրդը հոն հավաքվեցավ։ Բայց, մտածելով, որ հին եկեղեցին կարող է անապահով ըլլալ, գիշերվա ժամը մեկին որոշեցին տեղափոխվել ավելի ապահով տեղ մը, ամենամոտիկը Բեյլչալըմ որբանոցն էր։ Եկեղեցիին մեջ մեռածները շուտ մը թաղեցին՝ եկեղեցիին գետինը փորելով, որ Թուրքին ձեռքը չանցնին։ Տուներուն պատերը ծակելով, պատեպատ մտնելով, շատ ապահով հասանք Բեյլչալըմը։ Թուրքերը մտածեցին Բեյլչալըմի ջուրը դուրսեն կտրել, որ ծարավ մեռնինք, կամ, երբ կրակի տան, ջուրով չկրնանք մարել։ Բայց մենք ներսում առանց ջրի չմնացինք։ Մեր մեջ մարդիկ կային, գիտեին, որ Բեյլչալըմ որբանոցին մեջեն մզկիթին ջուրը կանցներ։ Բակին մեջտեղեն փորեցին, ջուրին խողովակը գտան, կտրեցին խողովակը և փոս մըն ալ փորեցին, կաթսա մը դրին, ջուրին կեսը թողեցին, որ դեպի մզկիթ էրթա, կեսը քաթանե խողովակով պոմպով տարին մինչև որբանոցին մեծ ավազանը, որը, պետք եղած ժամանակը, հրդեհ ալ կրնար մարել։ Բեյլչալըմի փուռին փեղկը ճամփուն կողմեն էր։ Թուրքերը ճամփու կողմեն քարյուղ լցրին և վառեցին փեղկը, իրենք վստահ էին, որ մենք ջուր չունենք, և հրդեհը կտարածվի, բայց մենք, փուռին փեղկը վառվելու ժամանակ, անմիջապես բակի քարերը մեծով-պզտիկով տարինք փուռ, և վարպետները փեղկի ներսեն պատ մը բարձրացուցին և բացությունը գոցեցին։ Թուրքերը չհասան իրենց նպատակին։ Փեղկին ետևեն տեսան բարձրացած պատը, զարմացան այդ հրաշքին...

Մենք մնացինք Մարաշի Բեյլչալըմ որբանոցը՝ միստըր Լայմընի գլխավորությամբ։ Բեյլչալըմ որբանոցում եղած ժամանակս՝ պզտիկները կխաղային, բայց մեծերը արհեստ կսորվեին՝ դերձակություն, վարտիք, շապիկ, զպուն կարել կսորվեինք, կկարեինք ձեռքով, նաև բուրդը կմանեինք, թելով գուլպա կհյուսեինք հինգ ճաղերով։

Օրին մեկը երկու Թուրք ժանդարմա էկավ մեր որբանոցը։ Մենք որբանոցի վերի հարկը հայե-

րեն դաս կառնեինք։ Լուրը հասավ մեզի։ Մեր վարժապետը՝ պր. Երջանիկը, մեզի ըսավ՝ շուտ հայերեն գրքերը պահեցեք։ Մենք անմիջապես պահեցինք։ Պր. Երջանիկը սկսավ թուրքերեն խոսիլ մեզի հետ և ձեռքին գավազանը շարժելով մեզի դիտողություն սկսավ ընել.— Նե՞ իչին յոխարդա օյնույօրսընըզ, էնի՛ն հավլըյա օյնայընըզ (Ինչո՞ւ վերևում եք խաղում, իջե՛ք բակում խաղացեք),— այնպես որ թուրքերը մտան ներս, տեսան, թուրքերեն ենք խոսում։

Բեյլշալըմ որբանոցը թուրքերը հետո զորանոց դարձրին։ 1922 թ. մեզ տեղափոխեցին Էրկորն որբանոցը։ Հետո անգլիացիները եկան, հայ որբերուն հավաքեցին։ Մեզ դուրս բերեցին, հավաքվեցինք գերմանական հիվանդանոցի առաջ։ Մեզ նստեցրին ձիու կառքի մեջ։ Կհիշեմ՝ մեկը մեկուն հարցրեց՝ այսօր ի՞նչ օր է։ Մյուսը պատասխանեց՝ Մայիսի 12-ն է։ Հետո մեզի տարին Քիլիս։ Հետո՝ Հալեպ, հետո՝ Հոմս։ Հոն վեց ամիս վրաններու տակ մնալե ետք մեզ՝ որբերիս տարին Բեյրութ՝ Ջեբել Անթիլիաս։ Հոն 1550 որբ ասկից-անկից հավաքված էինք։ Իմ թիվս 1387-ն էր։ Այնպես որ 1924 թիվին ես Անթիլիասի որբանոցն էի։ Հոն արհեստ՝ դերձակություն սորվեցա։ Վերջն ալ ինձի պես հայ՝ որբուհի Թագուհիին հետ ամուսնացա։ Տուն-տեղ եղանք, զավակներ ունեցանք։ 1946-ին Հայաստան եկանք։ 1949-ին մեզ անմեղ տեղը աքսորեցին։ Հետո արդարացրին, ետ եկանք։ Հիմա ալ տղաներս մեծացել են։ Մեկը սովետական բանակեն եկավ լուրջ հիվանդ։ Մտածում ենք Ամերիկա տանել, նրան բուժել և քիչ մը հանգիստ կյանք տեսնել...

## 26(242).
## ՀԱՃԸՆՑԻ ՄԱՆԿՐՅԱՆ ԱՀԱՐՈՆԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1903 Թ.)

Երբ մեզի աքսոր հանեցին, ճամփին շատ նեղություն քաշեցինք. օրերով, շաբաթներով անոթի, ծարավ, արևներուն տակը կքալեցնեին։ Օր մը Եփրատի ափին գերմանացիներ եկան, հաց կերան։ Արդեն Ռակկա հասած էինք։ Մենք ալ բոբիկ, անոթի կնայինք անոնց, խաչ կհանենք, որ մեզի մեղքնան։ Մեյ մըն ալ տեսանք քի ղութիի մեջի ուտելիքը նետեցին ջուրը։ Քանի մը տղաներով նետվեցանք ջուրը, մեզմե երկուքը խեղդվեցան...

Եփրատի ջուրն ալ արյունոտ էր, խմել անգամ չէիր կրնար, դիակները վրայեն կէրթային, մենք ալ կմտնայինք գետի թա՛ տակը, որ մաքուր ջուր խմենք...

Ով չէր կրնար քալել, գետնին նստած կամ՝ պառկած.— Ջո՛ւր-ջո՛ւր,— ըսելով կմեռնեին։ Ամեն կողմ չորացած լեշեր էին փռված...

Մենք տեսել էինք Դեր Զորի զուլումը։ Երբ մենք Հաճընում կդիմադրեինք, կկռվեինք, աղի Դեր Զորի վրեժը կուզեինք առնել։

80 տարեկան մի թուրք փաշա կար, ծնողներին կորցրած մի բերդնցի հայ պզտիկ աղջիկ մը առեր էր իրեն կնիկ, գնացինք աղ աղջկան ազատեցինք...

Քեմալը Հաճընի անունը ուզեց ջնջել, Հաճընը այրեց, հաճընցիներուն մեծ մասը այրեցան, բայց մենք՝ չմեռանք...։ Անկե վերջ Հունաստան անցա, հետո՝ Հայաստան եկանք։ Հիմա Նոր Հաճըն ավանի մեջը մեր հուշարձանը կա, թանգարանն ալ հետը...

## 27(248).
## ՀԱՃԸՆՑԻ ՍԱԹԱՄՅԱՆ ՆԱԶԵՆԻԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1926 Թ.)

Մեր Հաճընը յայլա տեղ էր, բոլորը գալիս էին օդափոխության։

Ջարդի ժամանակ իմ մոր կողմից Ջերեջյան գերդաստանի ամենամեծը Նազարեթն էր։ Նրանք յոթը եղբայր էին՝ Հովհաննես, Կարապետ, Մինաս, Մանուկ, Սարգիս, Գևորգ։ Նազարեթը ուներ յոթ տղա զավակ։ Ամենամեծը՝ Հովսեփը, հետո Զաքարիան, Թորոսը, Վարդեվառը, Հակոբոսը, Արսենը և Հարությունը։

Հաճընո ջարդին Թորոս Ջերջերյանը, իր տասնըչորս տարեկան Մաթևոս տղայի ձեռքեն բռնած, երկու փոքր երեխաներն ալ գիրկը, գալիս է մինչև Հաճընի կամուրջը, որ այդ երեխաները էնտեղ թողնի ու վերադառնա, մյուս երեխաներին ու կնոջն ալ բերի, բայց կտեսնա, որ օդանավը կրակ է թափում։ Ներքևից էլ թուրքերը տուներն են վառում։ Վերը՝ կրակ, վարը՝ կրակ։

— Հայրի՛կ, փախի՛նք,— կըսե տասնչորս տարեկան երեխան։ Կփախին դեպի Ադանա և Սիս։ Այնպես, որ մյուս երեխաները և կինը կմնան տանը։ Իսկ կամուրջի վրա թողած փոքր գրկի երեխաներին ալ կկորցնե։ Միայն մի երեխայով կըփախչի։ Ճանապարհին մի թուրք դեմը կելնե։ Մարթինով կխփե, գլուխը կճեղքե, Թորոսը կընկ-

նի գետնին։ Թուրքը կկարծի, որ նա մեռավ, կըթողնի կհեռանա։ Ջրի ափին մի քանի ժամանակ կմնա ընկած։ Ջրի ձայնից կամաց-կամաց կզարթնի, բայց ուղեղը տեղը չի՝ խելքը կփախչի, չի հիշի, որ տղան իր հետը չէ։ Կշարունակե իր ճամփան։ Մոտ երկու-երեք ժամվա ճամփա երթալեն վերջը, նոր կհիշե, որ Մաթևոսը ո՞ւր է, կպոռա՝ Մաթևո՜ս, Մաթևո՜ս։ Մինչև էսօր չի գտնում դրան էլ։ Կգա կհասնի ֆրանսական փոստ։ Կպատմե, որ Հաճընը պատերազմի մեջ է։ Ֆրանսացի զինվորները չեն հավատար, կըսեն.— Հինգ րոպե ժամանակ ենք տալիս, եթե ուրիշ փախչողներ ալ գան, ուրեմն դուն ճիշտ ես, քեզ ազատ կթողնենք, թե չէ՝ քեզ կձերբակալենք։

Հինգ րոպե չանցած իրար ետևից կուգան փախչողները, կանցնին Սիս։ Սիսում իրեն կբուժեն։ Իրեն բուժող քույրը Շահսենեն կըլլա, որի հետ ալ կամուսնանա և կանցնի Բեյրութ, կունենա երկու զավակ՝ Մաթևոս և Ազնիվ։

Իսկ Նազարեթի տղա Վարդեվառ Ջերեջյանը շա՜տ սիրուն տղամարդ է եղել։ Հայդուկ է եղել, գերի են բռնել և 101 տարվա բանտարկություն են տվել։ Վարդեվառը փախչում է թուրքական բանտից։ Նորից բանտարկում են ու հրաման է գալիս՝ Հաճընի կամուրջից անցկացնել ու սպանել։ Երեք ժանդարմաները կտանին Վարդեվառին սպանելու, ան կըսե ժանդարմաներուն.— Խնդրո՜ւմ եմ, մի րոպե թողեք էրթամ կնոջս հալալլըխը առնեմ։

Ժանդարմները կթողնեն։ Վարդեվառը կըբարձրանա տուն՝ կնոջ մոտ, կինն ալ պզտիկ Արմենին օրորոցում կաթ կուտար, կըսե.— Օսանո՛, ջենդերմեները վայը ընձի բեքլեմիշ գիգեննեն, ես ալ էգո հալալլըխ առնիլու։ Ես գաշթոմ, վեյը կոն քե հայցընեն նե, սաս՝ ես խաբոյ չեմ, Վայդեվային չեմ դիսե (Օվսաննա՛, ոստիկանները ներքևում ինձ են սպասում, ես եկա հրաժեշտ տալու։ Ես գնում եմ, եթե գան, քեզ հարցնեն, ասա՝ ես լուր չունեմ, Վարդեվառին չեմ տեսել)։

Եվ Վարդեվառը բակի կողմի պատուհանից կըցատկե, կփախչի, կփրկվի։ Հետո ալ կանցնի Լիբանան։ Վարդեվառի տղան է Արմեն Ջերեջյանը, որ պրոֆեսոր է, նաև Արսեն ու Արամայիսը անոր տղաներն են։

Իսկ Նազարեթի երկրորդ զավակը՝ Զաքարիա Ջերեջյանը, եղած է կառավարական մարդ։ Ադանայի մեջ շատ հայերու փրկած է Իսպիր Աղաջըրյանի հետ։ Զաքարիան ունեցել է հինգ տղա։ Մեծը՝ Նազարեթ Ջերեջյանը (Կուժունի), «Նոր Հաճընի» խմբագիրն է։ Սարգիսը երկրորդ տղան է, Բեյրութում ունի «Սալոն Սարգիս»։ Երրորդը՝ Հարություն Կուժունին։ Ան բոլոր կուսակցությունները միացրեց «Հայ» անունին շուրջը։ Վահրիճն ալ՝ չորրորդ եղբայրն է։ Հինգերորդը՝ Հայաստանում դասախոս է, իսկ Զաքարիայի եղբոր տղան՝ (Էդվարդ Ջերեջյանը, Վաշինգտոնում բարձր պաշտոն է զբաղեցնում. նա Ամերիկայի պրեզիդենտի օգնականն է արտաքին քաղաքականության գծով...

## 28(244).
## ԱՅՆԹԱՊՑԻ ՋՐՋՅԱՆ ՀԱԿՈԲԻ ՊԱՏՄԱԾԸ
## (ԾՆՎ. 1900 Թ.)

Մեր գերդաստանը Կիլիկիո Հռոմկլա, այսինքն՝ հույնի բերդ, կոչված տեղեն է։ Հոն Ներսես Շնորհալին է ապաշխարած։

15 տարեկան էի, երբ տարագրության մեջ ընկա։ Աս աչքերը ավելի լավ է կուրանային, որ ադ սոսկալի տեսարանները չտեսնային։ Ոտքով մինչև Հոմս-Համմա ենք հասած։ Ճամփին թուրքերը հայ տղամարդկանց հավաքեցին իբր թուրքական բանակ պիտի տանեն, այնինչ անոնց տարին Բեռլին—Բաղդադ երկաթգծին ճանապարհը շինելու, անոնց աշխատանքով շինվեցավ այդ երկաթգիծը։ Անասունի պես աշխատցնում էին, խամչիներու տակ, սոված, ծարավ... Իսկ երեխաներուն և կանանց, ձեռքերն ու ոտքերը կապկպած, Եփրատի եզերքը շարքով կանգնեցրել էին, որ մորթեն։ Ադ աքսորականներեն մեկը՝ Դեմիր (Երկաթ) Արթինը, ձեռքերի շղթաները կոտրտեց, ինքն իրեն ջուրը նետեց, ջուրին տակեն լողաց, մինչև Բերեջիկ հասավ, լուր ուղարկեց, որ իր կինն ու երեխան գան ջրի մոտ, որ անոնց ալ ազատի, բայց թուրքերը յոթ գնդակով սպանեցին Արթինին...

Կըսեին որ Օթել Բարոն հյուրանոցի հայ տիրուհին հատուկ նպատակով Ջեմալ փաշայի հետ խոսած է, որ հայերու ճամփան դեպի Դեր Զոր չտանի, այլ՝ Հոմս-Համմա, որ գոնե ողջ մնան։

Ջեմալ փաշան ըսեր է.— Հայերը իմ անունը ոսկի՜ տառերով պիտի գրեն։ Եվ իսկապես Ջեմալ փաշան շատ հայերու խորհուրդ տված է անուննին փոխել, իբր թուրք են արդեն, որպեսզի ողջ մընան...

Ադ ջարդին ամենամեծ դահիճը Թալեաթն էր։ Սողոմոն Թեհլիրյանը և Լևոն Շանթը եկել, փնտրել են Թալեաթին։ Ան ալ փախավ Բեռլին։ Անոնք հետապնդեցին, հետևեցան Թալեաթին... Ամեն օր Թալեաթը իր հագուստը կփոխեր, որ չճանչնային իրեն, բայց ճամփաբաժանի մը վրա Թեհլիրյանը պոռաց՝ Թալեա՜թ։ Ան շուռ եկավ, Սողոմոնը ատրճանակին կոճակը կոխեց...

## 29(245).
## ԱՅՆԹԱՊՑԻ ՔՅՈՒՐՔՉՅԱՆ ՆՈՒՐԻՑԱՅԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1903 Թ.)

*Մի օր տեսանք, որ փողոցը ձիու սմբակների փաթըր-փութըր ձայները կան։ Դելալ Մուկուչը ըսկըսավ պոռալ.— Իշիդը՛ն, էհրի ջումահա՛տ (լսեցե՛ք, հե՛յ, ժողովո՛ւրդ)։ Քանչորս ժամվա մեջ կա՛մ տեղերնիդ պիտի փոխեք, կա՛մ՝ կրոնքնիդ։*

*Այնթապի ժողովուրդը շշմեցավ։ Շատերը ելան, հավաքեցին ունեցած-չունեցածը, գացին։ Քանչորս ժամ հետո ամեն դուռին առաջը մի էշ բերին. կա՛մ տունին պառավը պիտի նստեր, կա՛մ երեխեքը և կա՛մ ուտելիքը կամ ուրիշ բաներ։ Էշը շալակով, մենք՝ ոտքով։ Երկու հոգիին տեղը 10 հոգի նստեցին էշին ետևը։ Գնացինք դեպի Մուրադ գետի, այսինքն՝ Եփրատի քենարը։ Հոն չադըրներ դրինք, բայց մեկ ալ տեսանք սկսավ ջարդն ու կոտորածը։ Հորը կամ մորը կկայնեցնեին, կըսեին՝ դուք կայնե՛ք, տեսե՛ք ձեր երեխաների արյունը ինչպե՛ս է ֆշշում. դիմացնին ո՛վ էլլար՝ մորթում էին։ Երբ որ հայ կհանդիպեին, կըսեին.— Օլան գյավո՛ւր, սե՞ն դե մի սաղ (Անհավա՛տ, դո՞ւ էլ ողջ ես)։*

*Էկան մամայիս ալ տարին։ Ես ալ երեխա եմ, մորս ետևից եմ գնում։ Լուր չունեմ, որ պիտի տանեն մորթելու։*

*Հետո մնացածներուն տարին Ուրֆա, հոն ալ տեղ մը լեցուցին մեզի։ Տանիքը ծակեցին, նավթ լեցուցին, տունը վառվել սկսավ գիշերով, տունը փլվեց, մենք անտեղեն դուրս փախանք։ Մեզ նորեն հավաքեցին անտեղեն Հոմս-Համմա տարին։ Հոն հորեղբորս ընտանիքն ալ տարին։ Արդեն հորեղբորս մի կողմը անդամալույծ էր, ուղտի վրա են նստեցրել ու տարել։ Նա ուղտի վրայից ընկել է, ողջ է մնացել, բայց հետո Թուրքերը բռնել են նրան, ղազըխի վրա են նստեցրել, ադ ձևով էլ սպանել են։*

*Պապաս ազատվել էր, քանի որ պայտար էր։ Բոլոր արհեստավորները հայ էին, Թուրքերը արհեստավոր չէին։ Պապայիս ասել են.— Դու մեզ պետք ես. դու անասնաբույժ-պայտար ես։*

*Հայրս էլ ասել է.— Իմ ուզածը իմ ընտանիքս Դեր Զորեն ազատել, ետ բերելն է։*

*Մեր բոլոր հարազատները՝ մորաքույրներս, քեռիենքս, հարսիս ընտանիքը, Ավոյենք, բոլորը գնացին Դեր Զոր։ Ո՛չ մեկը ետ չեկավ։*

*Այդպիսով հայրս մեզի ազատեց. Դեր Զորի ճամփայեն ետ բերել տվավ։*

*Հետո անգլիացի բաղոքականները որբանոց բացեցին։ Հայ աղջիկներին, որոնց փախցրել, Թուրքացրել էին, նաև երեխաներին, ետ բերին, դպրոց մտցուցին։ Հասած աղջիկներին հայ տղաներու հետ ամուսնացուցին՝ չնայած շատերուն երեսները դաջված էին կապույտ մելանով...*

*Հետո վրա հասավ 1920 թիվը. ես այն ժամանակ տասնյոթ տարեկան էի, նոր էի ամուսնացած։ Թաղային մուխդարը կանչեց պապայիս, ըսավ.— Օվաննե՛ս, այսօր աղջիկներդ, հարսներդ առ ու փախիր, Թուրքի և Ֆրանսացիի կռիվը պիտի ըլլա։ Ֆրանսացին պիտի գնա։*

*Մենք Թուրքին հետ ո՞նց կմնանք։*

*Պապաս էկավ ծունկերը ծեծելով։ Շուտ մը հավքվեցանք բոլորս ալ։ Քառասուն օրվա երեխա ալ ունեինք, բոլորս քսանհինգ հոգի կըլլայինք, նստանք արաբա մը, Ֆրանսացի զինվորները մեզի Հալեպ տարին։ Երկու ընտանիք մնացել էին, լսեցինք, որ Թուրքերը եկել, կտոր-կտոր էին արել, միայն մի ջահել տղա էր փախել։*

*Մեր ուտելիքը, ամեն ինչը հետերնիս վերցրել էինք։ Տասնութը ամիս հոն մնացինք, Թութի տերևով սարմա կփաթթեինք, կուտեինք։*

*Վերջապես ադ օրերն ալ անցան։ 1946 թվին եկանք Հայաստան։ Հիմա աղջիկս՝ Անժելը, Երևանի հայկական մանկավարժական ինստիտուտում հայոց լեզվի դասախոս է։*

## 30(246).
## ԱՅՆԹԱՊՑԻ ՀԵՔԻՄՅԱՆ ԳԵՎՈՐԳԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1937 Թ.)

*Մեր ցեղին մեջ չորս Հեքիմյան Գևորգ կա։ Ըսե՝ ինչո՞ւ։ Անոր պատմությունը շատ տխուր է։*

*Ես ունեցել եմ յոթը մեծ հորեղբայր. անոնցմե մեկին անունը եղել է Գևորգ։ Ան իր բարությամբ ու հանդարտ բնավորությամբ բոլոր բարեկամների, հարևանների և ընկերների կողմից սիրվել է և հարգվել։ Գևորգին, ինչպես մյուս բոլորին, աքսոր կքշեն դեպի Դեր Զոր։ Դեր Զորում, ինչպես բոլորը, նույնպես և Գևորգ մեծ հորեղբորս ընտանիքը անապատի մեջ անոթի ու անօգնական իրենց օրերը կհաշվեին։ Օր մըն ալ արաբ մարդ ու կին մը կուգան, Գևորգ հորեղբորս հետ կսկսին ձեռքով-ոտքով խոսիլ, հասկցնել, թե՝ շուտով Թուրքերը բոլորիդ պիտի սպանեն, գոնե ձեր այս մի տղուն տվեք մեզի, մենք կպահենք, գոնե ան փըրկվի։ Եվ ցույց են տալիս Գևորգի երեխաներից մեկին՝ Սեդրակին։*

Գևորգ հորեղբայրս և կինը չեն համաձայնում։ Բայց այդ արաբն ու իր կինը այնքան են գալիս-գնում, որ վերջիվերջո Գևորգ հորեղբայրս և իր կինը կմտածեն, որ, իրապես, թող իրենց մեկ զավակը գոնե ազատվի։ Կհամաձայնվին։ Արաբները Սեդրակի ձեռքեն կբռնեն, կտանին...

Սեդրակը ամբողջ ճանապարհին կուլա, արաբի վրանը կհասնին՝ կուլա, գիշերը պիտի քնանան՝ կուլա, առավոտը կելլան՝ կուլա, ոչ մի բան չի ուտեր, չի խմեր։ Արաբները կմտածեն, որ այդ երեխան դարդից պիտի մեռնի, կվերցնեն Սեդրակին, ետ կբերեն Դեր Զորի անապատը։ Բայց ի՞նչ կտեսնան, որ թուրքերը բոլորին այրել են...

Սեդրակը, երբ կտեսնա իր ծնողների, քույրերի, եղբայրների և մյուս հարազատների կիսայրված դիակները, սարսափահար՝ արդեն ինքը կմոտենա արաբներին և կպլլվի անոնց փեշերեն...։ Արաբ կինը ևս տեսնալով այդ սրտաճմլիկ տեսարանը, ինքը ևս կհուզվի, կսկսի Սեդրակի հետ լալ և անոր նորեն իրենց վրանը կտանին...

Կանցնին տարիներ, Սեդրակը կմեծանա անապատում և լսելով, որ Հալեպում շատ հայեր կան, կգնա Հալեպ, ավտոմեքենա վարել կսորվի և իր մտքին մեջ միշտ կպահե իր ծնողների և հորեղբայրների անունները...

Օրին մեկը, երբ իմ պապս՝ Սիմոնը, որը Հալեպում հայտնի օղի թորող էր, կտեսնա, որ երիտասարդ տղա մը կանգնած է իր խանութին առջևը և իրեն կնայի։ Քանի մը օր իրար վրա այդ երիտասարդը կուգա, կնայի՜, կնայի՜ պապիս։ Վերջապես Սիմոն պապս զարմացած իր տղային՝ Ռուբենին կկանչե, կըսե.— Տե՛ս, աս տղան ամեն օր կուգա, ինծի բի՜շ-բի՜շ կնայի, չգիտեմ ուզածը ի՞նչ է։

Ռուբենը ևս ուշադիր կսկսի զննել երիտասարդին և մեկեն ի մեկ կպոռա.— Պապա՛, սա մեր Սեդրակն է։

Սիմոն պապս և Ռուբենը կվազեն խանութեն դուրս, կփաթթվին տղային ու կգրկախառնվին։ Այդ ժամանակ Սեդրակը մեկ-մեկ բոլորի անունները կուտա՝ դուն Սիմոն հորեղբայրս ես, դուն Ռուբենն ես, ան՝ Հովհաննեսն է, ես ալ Գևորգի տղա Սեդրակն եմ։ Եվ Սեդրակը կսկսի արցունքով պատմել, թե ինչպես բոլորին այրել են Դեր Զորում...

Եվ անկե վերջը կորոշեն, որ մեր տոհմին մեջը ով տղա զավակ ունենա, անունը Գևորգ պիտի դնեն։ Ահա թե ինչու, մեր ընտանիքին մեջ չորս հատ Գևորգ Հեքիմյան կա։

Հիմա Սեդրակը ողջ-առողջ ապրում է Ամերիկայում, մոտ 90 տարեկան է և խոր ծերության մեջ անգամ հիշում է իր տխուր մանկությունը։

...Մեր անմեղ զոհերի հիշատակը ինձ հանգիստ ու դադար չի տվել երբեք, և 60-ական թվականներից նվիրվել եմ Ազգային շարժման պայքարին։ 1968 թվին մեր խմբի ընկերների հետ բանտարկվել ու աքսորվել եմ Մորդովիայի անմարդաբնակ տափաստանները, քանի որ մենք համարձակվել էինք գաղտնի տպել «Հանուն հայրենիքի» ամսագիրը...

Հետագայում, երբ ազատ արձակվեցինք ու վերադարձանք Երևան, մեր խումբը՝ «Հայ դատը», ետ չկանգնեց իր գաղափարներից և շարունակեց իր գործունեությունը։ «Հայ դատի» կամավորները, մեր մյուս ազատամարտիկների հետ միասին, մինչև հիմա կռվում են Արցախում և Հայաստանի սահմանամերձ շրջաններում...

## 31(247).
## ԵԴԵՍԻԱՑԻ ԱԲԼԱԲՈՒՏՅԱՆ ԽՈՐԵՆԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1893 Թ.)

Ես տասնվեց տարեկան էի, երբ Դեր Զոր էլանք։ Մեզ բերեցին Պըսերու։ Այդ Դեր Զորեն ութ ժամ հեռու էր։ Անտեղ տախտակից քյոփրի կար, տակեն Խաբուր գետը կանցներ։ Մենք երկու ջարդ տեսանք, մեկը 1915-ին էր, մեկն ալ 1921-ին։ 1915-ին նորեն գերմանացին էր մեղավորը, ան էր կազմակերպողը։ Աքսորի ժամանակ գերմանացիները ճերմակ հացը կուտեին, հացին փորը կնետեին։ Տեսան, որ մենք սոված ենք, էդ հացին փորերը սկսան ոռերնուն քսել, հետո նետել, որ մենք չուտենք։ Կհիշեմ Խաբուր գետի վրա երկու կիլոմետրի չափ տեղ հայ ջահելներուն տկլոր դիակները լողում էին Պըսերուից մինչև Շըդադի։ Շըդադի ըսված տեղը հավաքված էին մոտ յոթանասունհինգ հազար հայ՝ մանր, մեծ, աղջիկ, կնիկ։ Վայրի թուրք ժանդարմները շրջապատած էին մեզ։ Մեր ընտանիքեն տասներկու հոգու խփեցին, մեռցուցին։ Անա-բաբա գյունի էր։ Դեր Զորը հայերու ղասաբխանեն էր։ Որ հայը որ Դեր Զորին կողմը ընկավ՝ կորավ գնաց, որը ընկավ Դամասկոսի կողմը՝ ազատվավ։ Չեչենները մեր հայ ժողովրդին տանում էին, ջարդում, փչրում, ոսկիները առնում...

Օր մը ժանդարմները էկան հորս տարին արաբ Մըսլըմ փաշային մոտը։ Փաշան տեսավ, որ հայրս լավ արաբերեն է խոսում, հարցրեց.— Դու հա՞յ ես։

— Բնիկ Ուրֆայի Կամուրջ գյուղեն եմ։

— Արի՛ դու մի՛ երթա, քու տղերքով մնացեք հոս, ես հող կուտամ կցանեք։

Հայրս ըսավ.— Չէ՛, ես իմ ազգի հետ պիտի էրթամ։

Մինչև Մուսուլ մեզ կպնող չեղավ, բայց սովից կոտորվեցինք։ Մեզ բոլորիս տանում պտըտեցնում էին։ Հետո նորեն բերում էին նույն տեղը, որ ժողովուրդը հոգնի։

Մուսուլի շրջապատում ասորիների գյուղեր կային, մենք՝ ուրֆացիներս, չորս տարի հոն մնացինք։ Հետո եկան ֆրանսիացին, անգլիացին մըտան, 1918 թվին գերմանն ու թուրքը պարտվեցին։ Մեզ լցրին տավարնի վագոնը, ասին՝ ամեն մարդ թող էրթա իր երկիրը։ Գացինք, որ նույն թուրքերն են հոն։ Մայրս չուզեց ներս մտնալ, հետո չեչեններին հանեցինք, մտանք մեր տուներեն ներս։ Տեսանք, որ չեչենները զեյթունի ծառերը կտրատում էին, որ հայերուն վնաս ըլլա։ Պապաս գընաց քաղաքի մեծի մոտ։ Ան հարցրեց հորս.— Հա՛, Հակոբ աղա, ի՞նչ կա գյուղեն։

— Ի՞նչ կա, չեչենները կտրատում են զեյթունի ծառերը։

Մարդը նստավ նամակ մը գրեց. տվավ ինձ։ Տարի տվի չեչեններուն։ Նամակին մեջը գրված էր. «Հայերուն ձեռք չտալ»։

Մի օր մի թուրք էկավ հորս ըսավ.— Քո զեյթունի բաղերը ինձ պիտի տաս, թե չէ՝ գլուխդ կուտեմ։

Մեկ էլ էկան, թե Աթաթուրքի հրամանն է, հորս պիտի տանին, որ կախեն։

Ես արդեն մեծացել էի, մեր այգին ծախեցի, որ պապայիս ազատեմ։

Դատախազի մոտ գնացի։ Դու մի ասա նա էլ հորս ծանոթն էր։ Հայու լաթերը հանեցի, արաբի լաթեր հագա, գնացի, բանտը տեսա։ Առավոտ թեզեն քուրդերուն մեջեն հայու տղա մը տեսա, որը ինձմե 2—3 տարով մեծ էր.

— Դու հա՞յ ես,— հարցուցի։

— Չէ՛,— ըսավ։

— Մի՛ վախնար,— ըսի,— ես հայ եմ, անունըս Խորեն է։

Առի դրան բերի հետս, մեզ հետ ապրեց։ Ասի,— Արի՛, գնանք. դատախազին տանում եմ մի տոպրակ ոսկի, մի քյուփ էլ կարագ։

Գնացինք, դատախազը էլավ դուռը բացեց, հարցուց.— Դուն ո՞վ ես։

— Ես Աբուլբուտի տղան եմ,— ըսի։

— Չըլի՞ Հակոբի տղան ես։

— Հա՛։

Սկսա պատմել, որ հայրս Դիարբեքիրի բանտըն է։

Մարդը հանեց, ոսկիներ տվեց, ըսավ.— Գնա՜, աս դրամով ինչ ծախել ես, ետ վերցրու։ Պապադ ժամանակին մեզի շա՜տ լավություններ ըրած է։ Ես քու բերնեդ նամակ մը կգրեմ Մուստաֆա Քեմալ փաշային։ Նամակը ինձ կարդաց։ Հետո ըշտապ ղրկեց։

Աթաթուրքը Անկարայեն հեռախոս կբանա Տիգրանակերտ, կըսե.

— Աբուլբուտ Աբոջին ազատեք տուն ուղարկեք։

Բանտապահները կըսեն.— Աբուլբո՛ւտ Աբոչ, գնա՜, Աթաթուրքին աղոթե, որ քեզ ազատեց։

Հորս կազատեն։

Հետո 1921 թ. Աջեմի փաշան եկավ Սռուտի Արաբստանեն։ Աթաթուրքը ասեց.— Թուրքին գըտնըված տեղը, ուրիշ ազգ գտնվելու իրավունք չըկա։ Հետո եկան մեզ Սուրիա աքսորեցին, քանի որ Բեյրութն ու Սուրիան ֆրանսիացոց ձեռքին էր, իսկ Եգիպտոսը՝ անգլիացու։

## 32(248).
## ԵԴԵՍԻԱՑԻ ԱԲԼԱԲՈՒՏՅԱՆ ՆՎԱՐԴԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1903 Թ.)

Երբ Աբգար թագավորը իշխեց, մեծ նախարարներին առավ տարավ Եդեսիա։ Եդեսիան, երբ մայրաքաղաք դարձավ, Սասունից բերեցին հայեր։ Տուները շատ գեղեցիկ էին, ծառերը շատ բերքատու էին։ Տարին յոթ անգամ բերք կքաղեինք։ Հիանալի շենքեր ունեինք։ Հին քաղաք էր Ուրֆան։ Հինգ դարբաս ուներ։

1909 թ. թուրքը հարձակվեց մեր վրա.

«Կոտորածն անգութ, հայերը թող լան,
Անապատ դարձավ շքեղ Եդեսիան...»։

Մենք թուրքերու հետ լավ շփում ունեինք։ 1915 թ., երբ անոնք եկան մեր վրա, առաջ դիմադրեցինք, բայց հետո, ստիպված, հանձնվեցինք։ Մեզ՝ տասնհինգ աղջիկներիս, մեր մայրերը նկուղը մտցրին, պահեցին։ Վրաներս ծեփեցին, որ բնական մահով մեռնինք։ Ես իննը տարեկան էի։ Թուրքերը պիտի կրակը նետեին ինձի. որպեսզի թուրքի ձեռքը չանցնիմ, մամաս մազիս ժապավենը հանեց, վզիս սեղմեց, ինձ խեղդեց։ Հետքը դեռ կա վզիս վրա, նայե՛։ Մամայիս տարին աքսոր, մինչև տեղ էին հասել, հագուստ չէր մնացել վրան, անոնց ազատելու համար չէին տանում. տանջամահ անելու էին տանում։ Տասներկու տարեկան եղբայրս ճամփին մեռել էր, յոթ տարեկան քույրս կորսվել էր։ Հայրս արդեն թուրք զինվոր էր գնացած, մամաս ու մորաքույրս ալ ստիպված ինձ գետնին թողեցին, գնացին աքսոր։ Ես գետինը ընկած մնացել էի, մեկ էլ տեսա մի քուրդ մարդ եկավ, տեսավ ես տապլտկում եմ

գետնին, վզիս խեղդող ժապավենը քանդեց, տարավ հիվանդանոց, ըսավ.— Ես տանը չէի, կնիկս ուզում էր աղջկաս խեղդել։

Բժիշկը և նըրսը բուժեցին ինձ, երբ լավացա, ինձ տվին քուրդին։ Քուրդը ինձ ուղտի վրա դրավ, տարավ Սուրուչ, իր տունը։ Ես անոր տունը մնացի մինչև որ քուրդը գնաց բանակ։ Անգլիացին եկավ։ Հարևանին կինը հաց կուտար ինձի, կլողցըներ ինձի։ Աստծո խերին մնացած էի։ Մի օր քուրդ հայրս բանակից փախել, եկել էր, թե աղջըկաս տեսնեմ։ Էկավ ըսավ.— Ես մարդ չեմ կըրնար սպանել։

Եկավ ինձի ըսավ.— Արի՛ մի քիչ կորեկ քաղենք, խորովենք, ուտենք։

Մեկ էլ Թուրք զինվորները էկան հարցրին, ըսին.— Ո՞ւր է հայրդ։ Ես ալ ըսի.— Ներսն է,— գնացին, բռնեցին տարին բանակ նորից։

Աքսորի ճամփաներին մորաքույրս, որ միս Էփփեի դպրոցն էր ավարտած, հիվանդանոցի մը մեջ աշխատանք կգտնա, մամայիս հետ ողջ կմնան։

Մեր քրդի տունը մի հայ աղջիկ սպասուհի կաշխատեր։ Օր մը ան գնաց հիվանդանոց՝ վիժեցնելու իր փորի պտուղը, քանի որ ան Թուրքեն էր։ Հոն կհանդիպի մորաքույրիս և կըսե.— Գիտե՞ս ձեր Նվարդը ո՞ղջ է։ Անոր մայրը ուզեց ժապավենով խեղդե, բայց Նվարդը չմեռավ։

Մայրս և մորաքույրս էկան, ինձ գտան, փախցուցին քուրդի տունեն։ Մայրս սկսեց լալ.— Ես քեզ խեղդել ուզեցի, որ Թուրքերուն ձեռքը չընկնես, եղունգներդ չքաշեն, պտուկներդ չկտրեն, Թուրքի կին չդարձնեն...

1931 թ. Դեր Զորի սուրբ Աստվածածնի եկեղեցում Դեր Զորի նահատակներու ոսկորները հավաքեցին, բերին օծեցին։ Թաղեցին եկեղեցիին խորանին տակը։

## 83(249).
## ԵԴԵՍԻԱՑԻ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱՅԿԱՆՈՒՇԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1910 Թ.)

Մեզ սեֆերբելիք՝ գաղթական հանեցին։ Մենք երեք քույր, երեք եղբայր էինք։ Պապաս երկաթագործ Ներսես Դեմիրճյանն էր, արհեստավոր է ըսելով՝ պահեցին։ Մեկ հատ ալ նալբանդ՝ պայտար, մեկ հատ ալ ղալայիջի՝ կլայակագործ, տարին սարայ մը, դատարանի պես տեղ մը, մեր անունները փոխեցին, մեզի այլազգ՝ Թուրք դարձուցին, պապայիս՝ Ահմեդ, ախպարներուս՝ Խալիլ, Իբրահիմ, Մահմեդ, մամայիս՝ Ֆաթմա, մեծ քրոջս՝ Զաքիա, մյուսին՝ Էմինե, ինձ՝ Բահիյա անուններ դրին։ Էկանք Թուրքերու Թաղը նստանք։

Թուրքերը եկան մեծ քրոջս ուզեցին, բայց չըտվեցինք. Նալբանդի տղային տված ենք՝ ըսավ պապաս, որ Թուրքի բաժին չըլլա։

Թուրքերը Ռամազան կրոնեին՝ ամբողջ օրը ծոմ պիտի պահեինք։ Կուգային լեզունիս հանել կուտային, որ ստուգեն՝ ճերմակ է, թե՝ ոչ, մեզ կպատժեին։ Երբ որ ինգլիզը եկավ, նորեն հայ եղանք, պապաս գնաց հայ աղջիկ, տղա որբերուն հավաքեց, բերեց մեզ հետ պահեց...

## 84(250).
## ՄԵՐՍԻՆՑԻ ԵԹԵՆԵԿՅԱՆ ՍՈՂՈՄՈՆԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1900 Թ.)

Թշնամիս թող չտեսնա ան, ինչ որ մեր աչքերը տեսան Դեր Զորի ճամփին... Սիրտս կանգ կառնե, որ կհիշեմ ադ բոլորը...

Աղջիկ-կնիկ, երեք-չորս հարյուր հոգի գոտիներնին հանած, իրար կապված, իրար հետևից Եփրատ գետը կնետվեին, որ Թուրքի բաժին չըդառնան...

Ջուրին երթալը չէիր տեսնար, լեշերը դուրս ելած էին, բերդի պես իրար վրա դիզված էին..., շուները կատղած էին մարդու միս ուտելեն...

## 85(251).
## ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՑԻ ՔՅՈՌՕՂԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1904 Թ.)

Երբ ես ծնվել եմ, ծնողքս շատ է ուրախացել, քանի որ երկար ժամանակ զավակի տեր չէին դարձել։ Դռնե դուռ ինկած մայրս արծաթ կհավաքե, եկեղեցիին մեջ օրհնել կուտա, խաչ շինել կուտա, վրան անունս, ծննդյան թիվս փորագրել կուտա, վիզս կկախե, հետո ինձի կուտան ճամբազի

մը կռնակը, Եփրատի վրա ալ Թել մը կքաշեն, մարդը ինձի շալկած կանցնի այդ Թելին վրայեն։ Հայրս, որ գյուղի դատախազն է եղել, ըսել է.

— Աստված իր հրաշքը, եԹե պիտի ցուցնե, հիմա՛ պիտի ցուցնե, եԹե զավակս պիտի մեռնի, Թող՝ հիմա մեռնի։ Բայց ես հրաշքով ողջ կըմնամ, քանի որ Աստծո պահածն եմ եղել։ Ինձմե վերջ հինգ եղբայր ալ կծնվի...

Երբ ջարդը սկսավ, Թուրքերը Տիգրանակերտ մտան և հորս որպես գյուղի աչքի ընկնող մարդու տարան գիշերով։ Մայրս կպատմե, որ Թուրքերը անխղճորեն հորս սկսել են չարչարել, եղունգները քաշել, ըսելով.— Պիտի Թուրքանաս։

Հայրս ալ կըսե.— Ես իմ հայուԹյունս, իմ կըրոնքս չեմ ուրանար։ Ես հայ ծնած եմ, հա՛յ ալ պիտի մեռնեմ։

Թուրքերը ավելի կկատղին, կսկսին ավելի տանջել, չըրածնին չի մնար, խազըխի՝ ցցի վրա կնըստեցնեն, հետո ալ մաշկը կքերԹեն, մեջը խոտ կլցնեն, կբերեն իր տունին առջևը կդնեն, իբր օրինակ, որ եԹե գյուղին մեջ մնացած հայերը չըԹուրքանան, իրենց ալ իրենց դատախազին պես կընենք...

Ամբողջ գյուղը չի Թուրքանար։ Շատերուն տանջեցին, չարչարեցին...

Հետո Թուրքերը եկան պապայիս քոքը կուզեին կտրել. եղբայրներուն կտանեն, կչարչարեն, քույրերուն կփախցնեն։ Մայրս կերԹար Թուրքերուն տունը լվացք կըներ, որ ազատեր անոնց...

Ես հետո Ֆիդայի դարձա։ 40 օր սառած լեռներուն մեջ մնացինք անոԹի, ծարավ, ձյունը կհալեցնեինք կխմեինք։ Մեր ունեցածով մի կերպ ապրեցինք, բայց չհանձնվեցինք։ Մեկնումեկին կուղարկեինք գյուղ, ուտելիք կժողվեր, մեզ կբերեր։

Հետո խմբով եկանք իջանք Տիգրանակերտ։ Թուրքերուն վրա հարձակվեցանք։ Ես գացի մամայիս ազատեցի Թուրքերու տունեն։ Ան իր հետ մի պզտիկ աղջիկ ուներ։ Անոր մեռածներուն մեջեն գտել էր, մաքրել, հագցրել ու պահել։ Հետո եկանք Հալեպ, բայց հոն չկրցա մնալ, Ֆրանսա անցա, որ հետո ալ՝ մորս տանիմ։ Անտեղը հարուստ կին մը կար, իր աղջիկին ուզեց ինձ տալ, բայց ըսավ.— Հովհաննես ինչո՞ւ ըլլաս, ասկե վերջը քեզի Ժան պիտի ըսենք, Քյորօղլյանն ալ՝ Քյորօղլը կըսենք։

Բայց ես չդիմացա, ըսի.— Իմ հայրս մեռավ, անոր կաշին քերԹեցին, մեջը խոտ լեցուցին, բայց Թուրք չդարձավ։ Մայրս փչացավ, Թուրք չեղավ։ Ես Ֆրանսացի՞ պիտի ըլլամ, նալե՛Թ ըլլա ձեր դրա՛մն ալ, ձեր աղջի՛կն ալ։

Տունեն դուրս ելա, ելլելու ատենս մեծ քամիոն մը եկավ, վրայես անցավ։ Ես ջարդ ու խուրդ դարձա, ինձի հիվանդանոց տարին։ Մորս լուր է հասել Հալեպ, որ Հովհաննեսը քամիոնի տակ ընկավ, մեռավ։ Մամաս սուգերը կմտնա, առանց հանգուցյալի հոգեհանգիստ կընե եկեղեցիին մեջը։

Վեց ամսի չափ մնացի հիվանդանոցը։ Օր մը աչքերս բացի, տեսա քովս բժիշկներ, բուժակներ, ինձ հարցուցին.— Ո՞վ ունիս այս քաղաքում։

Ըսի.— Սիմոն և Տիրան Քյորօղլյանները քաղընկերս են, հոս կապրին։

Բժիշկները լուր կուտան անոնց, որ ձեր քաղընը ողջ է, եկեք տեսեք։

Անոնք կըսեն, մեր քաղընը մեռած է։ Բայց օր մըն ալ կուգան, կտեսնան, որ իրական իրենց Հովհաննեսն եմ ես։

Վեց ամսի չափ ալ Ֆրանսական հիվանդանոցի մեջ աշխատեցի։ ԲժշկուԹյան շատ գաղտնիքները սորվեցա, 1931-ին եկա Հալեպ։ Հալեպում իմ պզտիկ օֆիսը բացի, 1933-ին ամուսնացա։ Հայ, քուրդ, բոլորը կսիրեին ինձի, «դոկտոր Հովհաննես» կըսեին։ Կիներու հիվանդուԹյուններու գծով մասնագիտացա, շատերուն բուժեցի և ձրի՜ բուժեցի։ Կինս կըսեր հաճախ.

— Հովհաննե՛ս, նորեն դրամ չառի՞ր։

Ինչպես դրամ կրնայի առնել, խեղճ մարդիկ էին, կմեղքնայի...

1952-ին ՍուրիայիԿառավարուԹյունը որոշեց ինձի օրինավոր բժիշկի դիպլոմ՝ վկայական տալ։ Մեծ մարդոց զավակները կբուժեի, բույսերով կըբուժեի, ոչ Թե դեղերով։

1966-ին եկանք Ամերիկա։ Փառք Աստծո, հանգիստ կապրինք...

Այնպես որ իմ գլուխես շա՜տ բան անցած է, բայց, ինչպես ըսի, Աստված ինձի պահած է...

## 86(252).
## ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՑԻ ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՐԱՊԵՏԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1910 Թ.)

Իսկական Տիգրանակերտը Ֆարխինն է, որը քսանհինգ կմ դեպի Արարատյան դաշտի կողմն է։ Մեծն Տիգրան Թագավորի պալատը էնտեղ է եղել, բայց երկրաշարժի պատճառով խորտակվել է։

Տիգրանակերտեն կերևար Արարատ լեռը։ Հոնտեղեն կանցներ Տիգրիս գետը։ Մենք բնիկ տիգրանակերտցի ենք։ Ես ամեն ինչ լավ կհիշեմ, մանրամասնուԹյամբ։ 1915 Թ. հանկարծակի մեզ աքսորեցին։ Ես շատ փոքր էի, բայց կհիշեմ՝ որքան

ժողովուրդ կար Տիգրանակերտի մեջ, հանեցին դուրս։ Քեռիս, որ տասնհինգ տարեկան հազիվ կար, ինձ վերցրեց ուսերին։ Մայրս ալ պուճուր եղբորս գիրկը առած քայլում էր։ Սրանք հիշում եմ լավ։ Մեծ եղբայրս՝ Նշանը, որ ինձմե վեց տարով մեծ էր, ան ալ քայլում էր մեծ մորս ձեռքը բռնած։ Քայլելու ժամանակ մեզի խփում էին գավազանով, մտրակով և սուրերով։ Վերջապես էկանք, հասանք Դեր Զորի անապատի վերևի մասը՝ Մերդին քաղաքը, որտեղ գնացքը կուգար, Հալեպ կերթար։ Անտեղ մեզ իջեցուցին, կանաչ դաշտ էր։ Ներքևը ձոր կար։ Մեզ՝ փոքրերիս ջոկեցին, իսկ մեծերին՝ տարին ձորի կողմը հերթ կայնեցրին. երեք-չորս հարյուր հոգիի չափ մեծեր էին, այդքան ալ երեխաներ էինք։ Ուրեմն մեզ՝ երեխեքիս կանաչ դաշտի վրա նստեցրին. մենք չգիտենք՝ ինչ պիտի ըլլա...

Մայրս իր հերթը խախտելով գալիս էր մեզի համբուրո՛ւմ, համբուրո՛ւմ, գնում էր։ Մենք՝ ես, մեծ եղբայրս և փոքր եղբայրս, որը մեկ տարեկան էր, հեռվից տեսնում էինք մի շարան կանայք հերթի մեջ շարժվում են. մեր մայրը անոնց մեջն էր։ Տունեն երբ էլանք, մեր մայրը ազգային տարազներով էր՝ թավիշ, ոսկեկար հագուստներով, գլուխը զարդարված էր ոսկեդրամներով, վիզը ոսկե շղթա կար, հագուստներուն մեջը երկու կողմը քսանհինգ-քսանհինգ ոսկի էր կարած՝ գաղտնի...

Վերջին անգամ, երբ մեր մայրը էկավ մեզի խենթի պես համբուրեց, կհիշեմ, արդեն միայն տակի ճերմակ ներքնազգեստով էր, ո՛չ զարդ կար, ո՛չ ոսկի կար, ոչ ալ թավիշե հագուստները...

Մենք՝ էրեխեքս, բանից անտեղյակ ենք։ Էնտեղ բաներ մը կատարվում են, բայց չգիտենք ի՞նչ է կատարվում։ Դու մի ըսեր բոլորին հերթով հագուստները հանում էին, մի կողմի վրա շարում, բոլորին մերկացնում էին, կացինով գլուխը կտրում էին, նետում էին ձորը։

Մայրս վերջին անգամ էկավ մեզի նորեն համբուրեց, գնաց։ Ամեն անգամ գալուն պահակին մի դեղին ոսկի կուտա եղեր, որ մեր մոտ գա, իր երեք փոքր երեխեքին տեսնելու, մեզի համբուրելու։ Էդ միջոցին, որ մայրս մեր մոտ էկավ վերջին անգամ մեզ համբուրելու, մեկ փաթըրթը մը էլավ, Աստված մի արասցե. դու մի ըսեր, զինված պարսիկները էկան էդ թուրք ժանդարմաներին ըսկըսան կոտորել։ Եվ մեզի բոլորիս ազատեցին։ Մեզ՝ էրեխեքիս հետ նաև մայրս և մի քանի մեծեր, որոնց հերթը դեռ չէր հասած։

Էդ ժամանակ պարսից շահը հրաման է արձակել, որ ով որ մի հատ հայ բերի՝ ըլլա երեխա, ըլլա մեծ, թե՝ փոքր, մեկ կարմիր ոսկի կստանա իրմէ՝ մարդ գլուխ։ Էս պարսիկ զինվորները մեզի հավաքեցին, որ տանեն Պարսկաստան. շահին հրամանը պիտի կատարեն։ Էկան որ պիտի տանեն մեզ, շարքով շարեցին։ Էդ միջոցին մի փառավոր ծերուկ, մորուքը ծունկերին հասնող մարդ մը էկավ. անոր անունը Շեյխ Աբդըլ Խազըր Գեյլանի էր։ Էկավ պարսիկներուն ըսավ.— Էս կանանց մեջ դերձակ չի՞կա։

Մայրս, որ հմուտ դերձակ էր, ըսավ.— Ես դերձա՛կ եմ։

Փառավոր շեյխը ըսավ.— Աղջի՛կս, աս երեխաներուն ո՞ւր կտանիս, արի վրաններու մեջ ման արի, Դեր Զորի շրջակայքում բնակվող արաբ կանանց հագուստ կկարես, անոնք քեզ ցորեն, ուտելիք կուտան,— հետո շուռ էկավ դեպի պարսիկ զինվորների մեծավորի կողմը, ըսավ.— Սրանց ամեն մեկի համար մեյ-մեկ ոսկի պիտի առնեիր չէ՞ շահից, ա՛ռ,— ըսավ, հանեց չորս ոսկի տվավ, մեզի ազատեց։

Էդ փառավոր շեյխը մեզի տարավ վրանների մեջ և ըսավ իր մարդոցը.— Եթե սրանց մազից մեկ թել պակսի, ձեր գլուխը կկտրեմ։

Մամաս կէրթար վրանների տակը արաբ կանանց կար կկարեր, ուտելիք կբերեր։ Մի կերպ կապրեինք։ Գիշերները մեզ հետ կպառկեր կըռնակի վրա. փոքր եղբորս կուրծքին վրա կդներ, որ կաթ ուտի, արդեն կուրծք ալ չէր մնացած, որ ուտի, խեղճ մայրս թևերը բացած խաչվածի պես կպառկեր՝ մեկ թևին՝ իմ գլուխը, մյուս թևին՝ մեծ եղբորս գլուխը, պզտիկն ալ՝ կուրծքին վրա, որ մի բան չպատահի։ Քանի որ չէր վստահում ոչ մեկին, աչքը վախեցած էր արդեն։ Մայրս շա՛տ գեղեցիկ կին էր, օր մը էս շեյխի եղբայրը կսիրահարվի մորս։ Մայրս՝ կհրաժարվի։ Նա կասի.— Եթե չհամաձայնես, քո երեխաներին պիտի սպանեմ։

Մայրս ըսավ.— Սպանե՛, միևնույն է քեզ չե՛մ ուզի։

Այդ միջոցին մի մարդ գնաց լուր տվավ շեյխին։ Շեյխը էկավ, ըսավ.— Սրիկա՛, ի՞նչ ես ուզում, ես սրանց բարիք արեցի մեղքացա, չորս ոսկի տվի ազատեցի, որ դուն սպանե՞ս։ Ուրիշ աղջիկ չի՞կա, որ ամուսնանաս։

Հանեց ատրճանակը՝ թա՛խ-թա՛խ-թա՛խ, մեր աչքին առջևը սպանեց իր եղբորը։ Արդեն մայրս շատ նիհարցել էր, կուրծքը ցամքել էր, պզտիկ եղբայրս չդիմացավ՝ մեռավ։ Լաթ մը չիկար, որ փաթաթեինք մեջը, թաղեինք։ Մայրս իր ներքնաշորը պատռեց, մեջը ոլորեց, հողի մեջ թաղեցինք։

Հոն բավականին մնացինք, մինչև 1918 թիվը. մինչ այդ ներում էկավ, որ ամեն մարդ, ով կուզե, թող վերադառնա իր երկիրը։ Մայրս մեկ հատ ուղտ մը առած էր, ադ ուղտը ծախեցինք, մի հատ էշ առինք, մեր ունեցած-չունեցածը վրան դրինք, մայրս ալ վրան նստավ, ելանք ճամփա դեպի Մերդին։ Մերդինի ճանապարհին մամաս մեզի քովը կանչեց, ծնկի եկավ փոսի մը վրա,

իրուն մէջը շատ մը մարդկային ոսկորներ կային, հանեց, համբուրեց, մենք բան չհասկացանք, ըսինք.— Դայե՜, ավչի՞ յա (մա՜յր, այս ի՞նչ է),— հարցրինք քրդերեն, քանի որ մենք հայերեն խոսիլը մոռցեր էինք։

Մամաս ըսավ.— Ասոնք մեր քույրերուն և եղբայրներուն նշխարներն են։

Վերջապես ադ էշով բարձրացանք Մերդին, որտեղեն գնացքը գնում էր Հալեպ։ Էդ միջոցին մեզ հայտնեցին, որ ամերիկացիները էկած են Հայերուն կօգնեն։ Մենք արդեն մարդկութենեն դուրս էլած էինք, մազերնիս երկարած, վրանիս կարգին հագուստ չիկա։ Մեզի ըսին՝ տանե՞նք ձեզի Ամերիկա։

Մայրս խելացի կին էր, բայց այդտեղը սխալվեց, հրաժարվեց։ Էրթայինք նե, գոնե մարդ կըդառնայինք։ Բայց մայրս պատճառ ուներ հրաժարվելու։ Քանի որ չարչիների միջոցով իր եղբորը գտել էր, որը Տիգրանակերտում մեր տունը կարգի էր բերել ու ան ալ գալու էր Մերդին՝ մեզ դիմավորելու։

Մեկ ալ տեսանք մայրս համբուրվում է մեկու մը հետ։ Գացինք տեսանք հորեղբորս տղան էր, Տիգրանակերտեն էկել էր, պիտի գնար Հալեպ, պատահաբար մեզ էր հանդիպել։ Նա գնաց իր տոմսը փոխեց, մեզ ալ էշով տարավ, Տիգրանակերտի խանը իջանք։ Մամաս տվավ երկու ղուրուշ, ըսավ.— Գնա՛, Մարտիրո՛ս, (որի անունը Մուհամեդ էին դարձրել արաբները), գնա ըսե եղբորս՝ քույրդ եկել է, թող գա։

Տղան գնում տեսնում է քեռիս մանգաղն է տաշում։ Մենք նստած հաց, խաղող էինք ուտում Տիգրանակերտի խանին մեջը։ Ողորմած քեռիս էկավ, մեզ գտավ։ Քեռիս գլխաբաց, ոտքերը բոբիկ վազել, էկել էր մեզ գտնելու։ Եղբայրս ճանաչեց քեռուս։ Ալ նկարագրելո՜ւ բան չէ։ Առավ մեզի, մորս հետ, տարավ իր տունը։

Մայրս շատ ջահել մեռավ։ Ես քնած էի. առել, տարել, թաղել են, հե՜չ չեմ էլ իմացել։

Մինչև 1923 թիվը Տիգրանակերտ մնացինք։ Մայրս արդեն չիկար։ Քեռիս երեք երեխայով մընաց շվարած։ Արդեն կնոջը թուրքերը աքսորում սպանել էին։ Քեռիս ստիպված նորեն ամուսնացավ։ Շատ լավ հարս մը բերավ։ Ան մեզի հարազատ զավակներուն պես նայեցավ...

Արդեն քեմալականները էկան, մենք ստիպված էինք դուրս գալ Թուրքիայեն։ Քեռիս գաղտնի գընաց, որ Հալեպ էրթալու ճար գտնա։ Բայց ճանապարհին տեսնում են նրան, քանի որ աչքը շաշ էր, ճանաչում են։ Քանի որ ինքը լավ երկաթագործ վարպետ էր և երկրին պետք էր, կոմանդորը ըսեր է.— Դու մեզի պետք ես, ո՞ւր ես գնում,— բռնում են, շղթաներով ետ բերում։ Բայց քեռիս չհանգստացավ, պասպորտ հանեց, մենք ալ քեռուս հետ գնացինք Հալեպ։

Հալեպում մեկը էկավ քեռուս ըսավ՝ էս տղային տուր տանեմ խոզերս արածացնի։ Հոն քիչ մը մնացի։ Վերջը լսեցի, որ հորեղբայրս դեմիրյոլը (երկաթուղի) տարել էին*, աշխատացրել էին ու վերջն ալ սպանել։ Հոն սպանվել էին նաև հայրս ու մեծ քեռիս։

Գացի հորեղբորս այրի կնոջը գտա, բայց նա էլ երեխաներով ծանրաբեռնված էր, ինձ տարավ որբանոց։ Որբանոցին մեջը ութսուն հոգի էին՝ քառասուն տղա, քառասուն աղջիկ։ Ես որբանոցին գետինը կլվայի։ Օր մը եկավ հորեղբորս կինը, ըսավ՝ ախպարդ Ֆրանսա կերթա։ Ես զարմացա, ջրի դույլը ձեռքես ինկավ։ Ախպերս էլավ, Ֆրանսա գնաց։ Հոն ալ շա՜տ առաջ գնաց, քանի որ մենք ընտանիքով լավ երկաթագործ վարպետներ էինք, ան ալ Ֆրանսայի մեջ շեֆ կոմպանիոն եղավ։

Վերջը որբանոցին խողապահը դարձա։ Խոզերը կտանեի արածելու։ Երբ պետք ըլլար, կհավաքեի ախոռ կտանեի։ Իսկ օրվա մեջ կելլայի ծառի մը վրա, կերգեի։ Ներքևից գլուխնին թանով կճուճ դրած սևազգեստ կիներ էին գալիս։ Օր մը ասոնցմե մեկը իմ երգած երգիս պատասխանեց։ Ես իջա ծառեն, ըսի.— Ո՞վ ես դուն։

— Ըսավ.— Ես Գևորգ Ջաուշի քույրն եմ։

Ես վազեցի, Գևորգ Ջաուշին լուր տվի.— Գևո՛րգ Ջաուշ, քույրդ հոս է։

Ան վազեց էկավ, արդեն սև հագած արաբ կինիկները գնացել էին։ Փնտրեցինք, չուկան, խաները՝ չիկա։ Ես նորեն շարունակեցի խոզերը արածացնել, ծառի վրա ելլել, երգել։ Քանի որ գիտեմ, ան սևեր հագած աղջիկը գա նե, պիտի ինձի պատասխանե իմ երգովս։ Օր մըն ալ եկավ բարձըր պոռացի.— Գևո՛րգ Ջաուշ, ա՛ս է քույրդ։ Գևորգ Ջաուշը վազեց, էկավ։ Ան կքաշե աղջկան ձեռքը, քովի կնիկը կքաշե աղջկա մյուս ձեռքը։ Մի կողմեն՝ արաբ կնիկը կքաշե, մյուս կողմեն՝ եղբայրը։ Գևորգ Ջաուշը առավ քրոջը, տարավ։ Մի հատ խփեց արաբ կնոջը, որը ուզում էր ադ հայ աղջկան իր եղբորը հետ ամուսնացնել։

Հաջորդ օրը արաբները հավաքվեցան, բայց Գևորգ Ջաուշը զինվորական էր, արաբ զինվորների Քըռք խանի (Քառասուն խանի) մեջ կծառայեր, էկավ ըսավ արաբներին.— Հիմա գնդացիրը կբերեմ, բոլորիդ կջնջեմ։

Ասոնք վախցան, փախան։ Աղջիկը մնաց եղբոր մոտ։ Ես վերադարձա Հալեպ։ Լսեցի, որ ախպերս կուզե ինձի տանել Ֆրանսա։ Օր մը հանդիպեցի իմ որբանոցի ընկերներուս, որոնք ուսանելու պիտի երթային Ֆրանսա։ Սպասեցի, որ եղբայրս պասպորտ ղրկե՝ չղրկեց։ Ադ ընկերներս գնացին Ֆրանսա, ետ եկան։ Քանի որ փախստական էին գնացած։ Ես չուզեցի փախստական էր-

* Ըստ երևույթին Բաղդադ—Բեռլին երկաթուղու կառույցը։

թալ, մնացի, հետո անցա Բեյրութ։ Բեյրութ ամուսնացա՝ 1947 թվին ընտանիքով եկա Հայաստան։ Երևանում տուն շինեցի Կիլիկիայում։ Լավ, փորձված վարպետ էի, Մատենադարանի, գինու գործարանի մառանի, Հանրապետության հրապարակի և այլ մեծ շենքերի պատուհանների մետաղյա գեղեցիկ վանդակապատումները իմ ձեռքի գործերն են։ Ես շատ հարգված ու փորձված երկաթագործ վարպետ էի։

Օր մը սև «Վոլգա» մը եկավ կանգնեց մեր աշխատանքին տեղը։ Մարդ մը եկավ դիրեկտորի կաբինետում նստեց, ինձ կանչեցին։ Այդ մարդը ինձ ըսավ.— Դուք Ֆրանսա եղբա՞յր ունիք։

Ըսի.— Այո՛։

— Պետք է հրաժարվիք, թե չէ՝ վատ կլինի։ Ձեր անկետայի մեջ պետք է գրեք՝ արտասահմանում հարազատ չունեմ։

Ես սկսա մտածել՝ հապա եղբայրս որ լսի, ի՞նչ կմտածե։

— Դուք գիտեք. կա՛մ կհրաժարվեք, կա՛մ սև «Վոլգան» կնստեք։— Ես նայեցի իմ դիրեկտորիս երեսը, ան աչքով ըրավ, որ հրաժարվիմ։

— Լավ,— ըսի,— չունեմ եղբայր,— մարդը անկետային մեջ գրեց, որ հարազատ չունեմ արտասահմանում։ Իբր թե երկինքեն եմ իջած։ Քանի որ ես մինիստրների սովետին կից արհեստանոցը կաշխատեի, ադ տեսակ պետք է գրվի եղեր։ 1949 թ. մեկ գիշերվա մեջ երկու հարյուր հազար հայ աքսորեցին։ Իմ դիրեկտորիս մեկ աչքի թարթումի շնորհիվ մեր ընտանիքը ազատվեց աքսորեն։ Ողորմած քեռիիս եմ պարտական իմ նուրբ արհեստը։ Ան ինձի տվել էր ոսկերիչի մոտ աշխատելու։ Արդեն մեր գերդաստանն ալ երկաթագործ էր։ Լավ մասնագետ վարպետ էի, մինչև վերջերս կաշխատեի։ Աղջիկս՝ Տիգրանուհին, հաշվապահ դարձավ, իսկ թոռներես մեկը պոլիտեխնիկում դասախոս է, մյուսն ալ ասպիրանտ է կոմպյուտերի գծով, շատ ընդունակ երեխաներ են, ես ալ իրենց հետ կապրիմ, ողորմած կնոջս մահից հետո իրենցմով կմխիթարվիմ...

## 87(253).
## ԲԻԹԼԻՍՑԻ ԱՆՏՈՆՅԱՆ ԹԱԳՈՒՀՈՒ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1900 Թ.)

Երբ տեղահանությունն սկսավ, ես 15 տարեկան էի։ Թուրքական կառավարութենեն հրաման եկա՛ծ էր, որ այր մարդկանց հավաքեն զինվորության, իսկ մնացածին աքսորեն, հետո՝ ջարդեն։

Մեծ հայրիկիս ու մեծ մորեղբայրիս տարին թուրքի բանակ, որովհետև իրենց մեկ ազգականը կառավարական պաշտոնյա էր։ Ադոր համար չձըգեցին, որ մեզի հետ աքսորվին։ Ես տունին միակ աղջիկն էի։ Եղբայրներս՝ Հարությունը, Սիրեկանը, Գրիգորը, մեր տունին թանկարժեք առարկաները տունին տակը տարին, պահեցին։ Ինչ որ պետք էր, առինք հետերնիս։ Ջաբիթները ասում էին.— Հայդե՛, էրմենիլեր, արաբալարընա բինդիրդիլեր (Դե՛, հայե՛ր, շտապե՛ք, սայլերի մեջ լցվեցե՛ք)։

Գառնիկ էֆենդիին ձեռքերը քելեփչե դրին, տարին։

Մեզի Կոնիա տարին։ Հոն թուրք մը եկավ, պապայիս ըսավ.— Քըզընը բանա վերիր սեն, սիզի քաչըրըրըմ» (աղջկադ եթե ինձ տաս, ձեզ կփախցընեմ)։ Նե՛ պապաս, նե՛ մամաս՝ չտվին։ Պապաս ճամփին մեռավ, չորս կնիկ եկան, ձեռք ու ոտքեն բռնեցին, տարին փոս մը փորված էր, նետեցին մեջը, ես ադ տեսա։ Ադ փոսը ուրիշ շատ հիվանդներ ողջ-ողջ նետեցին, կամ սուրերը կըտնկեին, հայերուն, լո՛փ, վրան կնետեին, որ մեռնին։ Արյունները ամե՜ն կողմեն կվազեին... մոռցըվելիք բա՞ն է։ Կհիշեմ, երկինքեն ալ չեքիրգե կտեղար։ Մեկը՝ անութենեն չեքիրգե կուտեր, մյուսը՝ կովին արյունը կուտեր։ Հորաքույրս սատկած կովին արյունը թենեքեի մը մեջ եփեց, մենք կերանք։ Յա՝ պիտի մեռնինք, յա՝ պիտի ապրինք։ Ձիերուն քալած տեղը չիշ, անձրև լցված էր, ադ ալ ջուրի պես խմեցինք, ի՞նչ ընենք՝ ծարավ ենք։ Ջուր կփնտրենք, ջուր՝ չկա։ Ես եմ, իմ եռևես հորաքույրիս չոջուխները, բոլորս ալ ծարավ ենք։ Մամաս ու եղբայրս շատ ծանր հիվանդ էին, անոնց ճամփին ծառի մը տակ թողեցինք, քանի որ այսօր-վաղը մեռնելիք էին։ Իմ քովս անթիկա վազո մը կար բախըր, ան ալ թուրքերը գողցան, վըրայիս ոսկիներուն հետ։ Ետքը իրարանցումը ըսկըսավ. աղջիկ կփախցնեին, շատերը կփախչեին, որ չբռնեն։ Ես մենակս մնացի մի տեղ ինկած, իբր մեռած եմ, բայց կտեսնայի շատերը Եփրատ գետը նետվեցան ողջ-ողջ, ես՝ չնետվեցա։ Հոն ինկած էի. արևը մայր մտնելու վրա էր, սկսա մտածել՝ գիշերը վրա կուգա, կվախնամ գայլերը ինձի պիտի ուտեն։ Մեկեն ուժ մը եկավ վրաս։ Ելա, սկսա քալել։ Հեռուեն ուղտ մը տեսա, խորհեցա, թե անպայման մարդ կա այդ կողմերը։ Նորեն քալեցի, մինչև մոտեցա, մութը ինկավ։ Փոթորիկ մը ելավ, փոշին պատեց ամեն տեղ։

Հազիվ տեսա քով-քովի վրաններ, մեծ շունչ մը առի։ Առաջին վրանին հասա, շունչս կտրվում էր։ Արաբ կնիկ մը տեսա։ Ան ինձ օգնեց, կերակուր տվավ, ներս տարավ, ոտքերս մաքրեց, ինձ

լվաց։ Այդ բեդվինները անապատը կայրեին, ուղխար, ուղտ կպահեին։ Այդ կնիկը շոջուխներ ալ ուներ։ Հոն ուրիշ հայ աղջիկներ ալ կային, կհիշեմ Ազնիվ Կրբաշյանին։ Անոր անունը Մարիամ դրած էին, Մարիամ Թաուլ կըսեին, Թաուլ արաբերեն մեծ կնշանակե, իմ անունն ալ Մարիամ զուղայար, այսինքն՝ փոքր Մարիամ դրած էին։ Հոն մենք իրար հետ հայերեն կխոսեինք։ Թուրքերուն ձեռքը չիյնալու համար բեդվինները մեր երեսները կանաչ մելանով դաջել էին։ Բոլորս տասներկու հայ աղջիկ էինք։ Հոն բացօթյա տեղ մը փաշա մը կար։ Ամեն օր մեկ հատ հայ աղջիկ կտաներ իր քովը։ Այդ փաշան հարեմի պես բան մըն էր շինած։

Օր մը դուռին առջևը նստած էի, մեկը ինծի ըսավ. «Յա՛, բենթի՜, բենթի՜, (Ա՛յ, աղջի՜կ) քեզի ուղտի վրա պիտի նստեցնեմ, չիյնաս»։ Ես ելա, ուղտի վզին փաթթվեցա։

Այդ արաբ մարդը ուզեց ինձ հետ ամուսնանալ։ Ես ըսի.— Կամուսնանամ քեզի հետ, պայմանով, որ եղբորս գտնաս։

— Կգտնա՛մ,— ըսավ արաբը։

Այդ բեդվիններու քովը հաց եփել սորվեցա, ծառի չորցած փայտերեն կրակ կվառեի և կրակին մոտ երկա՜ր ժամեր կմնայի, բոլորին համար հաց կեփեի։ Ադկե է, որ աչքիս բիբը վնասված է, մինչև հիմա մեկ աչքով կտեսնամ միայն։

Օր մըն ալ բեդվիններուն մոտ վաճառական մը եկավ՝ այծեր, ոչխարներ առնելու, որ տանի Սուրիա, Մուսուլ…

Ես արդեն բեդվին ամուսինես երկու տղա ունեցած էի։ Այդ բեդվին ամուսինս ինծի շատ կսիրեր, կմեղքնար ալ։ Օր մը ըսավ.— Եկուր էրթանք Մուսուլ, հոն շատ հայեր կան։ Մեր ծանոթ վաճառականն ալ հոն է, կարող է քո եղբորը գտնենք։

Մենք պատրաստվեցանք, երկու զավակով գացինք Մուսուլ։ Տուն վարձեցինք։ Այդ բեդվին ամուսինս ինծի շատ կսիրեր։ Սուտ չեմ կրնար խոսիլ, հոգի ունիմ տալու։ Ինչ որ պետք էր, ամուսինս կբերեր շուկայեն, բայց հոն երկու զավակներս ալ հիվանդացան, մեռան։ Բեդվին ամուսինս իրեն ծանոթ այդ վաճառականին միջոցով դիմեց հայկական եկեղեցիին, թերթերու միջոցով իմացանք, որ եղբայրս Եգիպտոսումն է։ Սկսվեց դըժվար վիճակ մը։ Բեդվին ամուսի՞նս, թե՞ հայ, հարազատ եղբայրս։ Կույսի՜, կողբայի՜։ Ամուսինս տեսավ վիճակս, մեղքցավ, ինծի ազատ թողեց։ Մինակս ճամփա ելա դեպի Սուրիա, հետո Լիբանան, անտեղեն ալ՝ Եգիպտոս, գտա եղբորս։ Ժամանակ մը հետո ամուսնացա հայ Աղունիկ Արզերունյանի հետ, ունեցա երկու զավակ՝ Աբրահամին և Զարուհուն։

Եգիպտոսեն ալ եկանք հոս՝ Լոս Անջելես, աղջիկս՝ Զարուհին, նկարչուհի դարձավ, տղաս՝ Աբրահամը, ոսկերչական ֆաբրիկա ունի։ Ես ալ հանգիստ կվայլեմ իմ ծերության օրերը…

## 88(254).
## ԱԴԻՅԱՄԱՆՑԻ ՔԱՐԱՋՅԱՆ ՄԱՐԻԱՄԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1903 Թ.)

Ես պզտիկ էի, երբ ջարդը սկսավ։ Ամենեն առաջ հայերուն զենքերը հավաքեցին, ջահելներուն թուրքական բանակ ղրկեցին, հոն ալ սպանեցին։ Քեռիս Թալեաթի քեթիբը՝ գրագիրն էր, իրենց մարդն էր, բայց քանի որ իրենց գաղտնիքները գիտեր, իրեն ալ չխնայեցին, տարին սպանեցին։ Մամաս պապիս հետ գնացին, որ քեռուս դիակը գոնե բերեն թաղեն, բայց երբ պապս կտեսնա իր զավակը սպանված, տեղն ու տեղը կաթված կըխփե, կմեռնի։ Թուրք զինվորները կտեսնան, կըսկըսին խնդալ.— Էս ի՜նչ լավ բան եղավ, մի գընդակ խնայեցինք,— կըսեն։

Մամաս եղբոր ու հոր դիակները հոն փռված կձգե, հազիվ կփախի։ Մամաս տուն էկավ լացով, ողբով։ Այդ նույն օրը մեր քարաշեն տունին քովը գնդակ մը պայթեցավ. հայրս մեռավ։ Տասը տարեկան եղբայրս քովը կըլլա, այդ տեսնելուն պես ամբողջ մարմինը վերքեր կթափե և մեկ օրվա մեջ ան ալ կմեռնի։

Մնացինք մամաս, երկու տարեկան պզտիկ եղբայրս և ես։ Մեզի քշեցին, տարին Սթուրիչ։ Ո՛չ տուն կա, ո՛չ հաց, ո՛չ ջուր։ Մենք ծարավ ենք, անոթի։ Մարդիկ այնքան սոված էին, որ կըսպասեին ձին կեղտոտի, որ կեղտի միջի գարիները ջոկեն, ուտեն։ Շունն ու կատուն անգամ կուտեին։ Կհիշեմ էշ մը տեսան, խփեցին, էշը սատկեցավ, վրա հասան, կտոր-կտոր ըրին հում-հում սկսան ուտել։

Մամաս ստիպված մեզի ձգեց ծառի մը տակ, ինքը գնաց հաց մուրալու, որ մեզ բերի։ Այդ ժամանակ թուրք ժանդարմա մը եկավ, եղբորս երեսի վրա պառկեցուց, վրան մեծ քար մը դրավ, ինքն ալ վրան էլավ, այնքա՜ն տրորեց, այնքա՜ն տրորեց, որ խեղճ չոջուխին փորը, աղիքները դուրս թափվեցան, մեռավ…

Այդ տեղեն քուրդ կնիկ մը կանցներ, տեսավ, մեզքցավ, երևի, ըսավ.— Աս աղջիկին ալ էդպես պիտի սպանի,— գրկեց ինձ, տարավ։

Մեկ էլ աչքս բացի, որ սև չադըրի՝ վրանի մը

մեջն եմ։ Հոն ինձ պահեցին։ Քանի որ շատ մը երեխեքի հետ ինձ ալ կրակի մեջ էին նետած, ոտքըս այրված էր ու թարախ կուգար։ Դեղ դրին։ Աղեկցուցին։ Ինձի աղեկ պահեցին։ Հետո երբ ամերիկացիները եկան հայ որբերը հավաքեցին, ինձ ալ տարին Հալեպի որբանոցը...

## 39(255).
## ԷՐԶՐՈՒՄՑԻ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ ՄԱՐԻԱՄԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1908 Թ.)

*Ես շատ փոքր էի, երևի յոթը տարեկան էի, բայց լա՛վ կհիշեմ։ Թուրքերը եկել էին, սկսել էին թալանել, կրակի էին տվել մեր տուները և կրակի մեջ էին գցում երեխեքին ու մեծերին։ Ինձամե մեծ քույրս կրակի մեջ այրվեց, ես ադ տեսա իմ աչքերով։ Մորս ալ կրակի մեջ նետեցին, ա՛դ ալ ես կհիշեմ, քանի որ երբ ինձ նետեցին, ես չորեքթաթ դուրս պրծա կրակի միջից, բայց ծունկերս աղվո՞ր մը վառվել էին, մինչև հիմա տեղերը կան, տե՛ս (ու նա ծնկները բացեց, որ ցույց տա այրվածքի հետքերը)։*

*Ալ չգիտեմ ում հետ էի, բայց թափորի հետ ես ալ աքսոր գնացի. ո՛չ տեր ունեմ, ո՛չ տիրական։ Էրզրումից Դիարբեքիր ոտքով տարին։ Անտեղեն ալ՝ Հալեպ, հետո ալ՝ Պոլիս...*

*Կհիշեմ, որ թուրք բեյ մը ինձի վերցրեց տարավ իրեն տունը, ծնկերիս դեղ քսեցին, իմ անունը Ֆերիդա դրին։ Այդտեղ կար ինձմե մեծ մի ուրիշ հայ աղջիկ մըն ալ, որին արդեն թուրքացրել էին, և մնացել էր հոն։ Ես նրանից փոքր էի։ Մարդիկ եկան ինձ հարցրին.— Աղջի՛կս, դու որտեղի՞ց ես։*

*Ես ալ ըսի.— Հայ եմ։*

*Դու մի ըսեր այդ մարդիկ հայ գաղթականներ են և լուրը գնացել հասել էր Անդրանիկ փաշային, որ բեյին տունը երկու հայ աղջիկ կա՝ մեկը թուրքացած է, մյուսին՝ ալ պիտի թուրքացնեն։*

*Անդրանիկը երկու անգլիացի զինվորով եկավ, դուռը խփեց։ Իմ խանումս ու բեյս գնացել էին սինեմա։ Այդ թուրքացած հայ աղջիկը իջավ դուռը բացեց. Անդրանիկը հարցրեց.— Էստեղ հայ աղջիկ կա՞։*

*Թուրքացած աղջիկը ըսավ.— Չէ՛, չիկա՛,— խաբեց։*

*Հետո Անդրանիկ փաշան ըսավ.— Եթե բեյդ գա, վաղը այդ նոր աղջկան թող բերե քաղաքամաս։ Երբ ան գնաց, աս աղջիկը ինձի չարսաֆի մեջ փաթթեց, ծեծեց։ Ան վաղուց թուրքացել, ավելի վատ էր դարձել։ Ես լացի։ Իրիկունը բեյս, որը իմ անունը Ֆերիդա էր դրել, տեսավ լաց եմ լինում, ըսավ աղջկան։— Դուն ինչ իրավունքով ծեծում էիր սրան։ Թող սպասեիր, մենք կգայինք, կխոսեինք։*

*Բեյս հետո ինձ կանչեց.— Արի՛, աղջի՛կս, դու ի՞նչ ըսիր։*

*— Ո՛չ մի բան չըսի։*

*— Ո՞վ էր այդ մարդը։*

*— Չգիտեմ, ես վախցա, չխոսեցի։*

*Հետո բեյս հարցրեց այդ աղջկան։*

*Ան ալ ըսավ.— Առավոտյան Ֆերիդային քաղաքամաս պիտի տանես։*

*Առավոտյան բեյս տարավ ինձի քաղաքամաս։ Քննեցին, մեծ-մեծ գիրքեր հանեցին իբր փընտրում են, Ֆերիդա են փնտրում, չեն գտնում, վերջապես ըսին.— Չէ՛, աս հա՛յ աղջիկ է։*

*Անդրանիկ փաշան ինձի աթոռի վրա կանգնեցուց, իր հետ միասին ինձի նկարեց։ Վրաս գլուխըս փոխեց, անձամբ տարավ Բեշիկթաշի որբանոցը. մինչև վեցերորդ դասարան հունարեն և հայերեն սովորեցի։ Հետո կամաց-կամաց մեծացա, տասնվեց տարեկան եղա։ Մի հայ կաթոլիկ մարդ ու կին եկան որբանոցը։ Եկան մի աղջիկ առնել, տանելու։ Ինձ հավնեցին, իրենց տունը տարին, պահեցին։ Ադ մարդու տունն ալ ամուսնացա մշեցի Ոսկանի հետ։ Ան ալ գաղթած էր։ Մորաքույր ուներ Հունաստանում։ Մենք ալ անցանք Հունաստան։ Տուն-տեղ դրինք։ Մի տղա, երկու աղջիկ ունեցա։ 1947 թ. եկանք Հայաստան։ Տղաս մեռավ, մեկ աղջիկս ընտանիքով գնաց ԱՄՆ։ Մնացի աս մեկ՝ Վարդուհի աղջկաս հետ։ Շուտով մենք ալ պիտի էրթանք Լոս Անջելես ըսված տեղը։*

## 40(256).
## ՄԱԼԱԹԻԱՑԻ ԹԱՇՃՅԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1908 Թ.)

*Մալաթիայեն երբ մեզ աքսոր հանեցին, ես դեռ երեխա էի։ Թուրքերը եկան մտան մեր տունը։ Մենք ալ հաց պիտի եփեինք, թոնդիրը վառել էինք, եկան մեզի ստիպեցին տունեն դուրս գալ, սկսան տունը-տեղը իրար անցունել, թալանել։ Թալնելու ժամանակ տեսան տանը կաշի կա, կոշիկ կարող էր հայրս։ Իրար մեջ ըսին.— Աս մարդուն չմորթենք. մեզի օգուտ կուտա։*

էկան մոտեցան ինձի։ Մեկը ըսավ պապայիս։ Ես ալ պապային ձեռքը բռնած էի, ըսավ.— Աս երեխան տո՛ւր, տանիմ։

Ես սկսա լալ ու պոռալ.— Հայրի՛կ, ես չե՛մ գնար։

Պապաս չտվավ։

Մեզի քշեցին, տարին Ալմա օղլու բախչա ըսված տեղ մը, ամմա աղ բախչա չէր, ամայի բաց դաշտ մըն էր, մենք գիշերը հոն գետինները պառկեցանք, բաց երկնքի տակ։

Առավոտուն լուսը բացվավ, էկան մեզի չոկեցին, հայ քրիստոնյաները մեկ կողմ, բողոքականները՝ մեկ կողմ, կաթոլիկները՝ մեկ կողմ։ Բողոքականներուն և կաթոլիկներուն չտարին աքսոր։ Միայն մեզի՝ հայ քրիստոնյաներիս, որոշեցին ոչխարի պես աքսոր քշել։ Բայց քանի որ մեր տունը թալանելու ժամանակ զաբիթները տեսել էին, որ հայրս կոշկակար է, ըսին.— Աս մարդը մեզի օգուտ կուտա։

Մեհյուր ըրին մեր թուղթը, մեզի ետ ղրկեցին մեր գյուղը։ Էկանք, մտանք մեր տունը, ապրեցանք։

## 41(257).
## ՄԱԼԱԹԻԱՑԻ ԷՔԻՋՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1921 Թ.)

Մինչև 1915 թիվը պապաս երկաթագործ էր՝ չուլթ, արորի խոփ, զենք-մենք կշինեի։ Օր մը թուրքերը էկան մեր տունը խուզարկեցին։ Քանի որ մալաթիացի հայերը շատ կազմակերպված էին, անոնք միշտ պատրաստ էին։ Ամեն ընտանիքում մեկ-երկու հրացան կգտնվեր։

Ուրեմն օր մը երկու թուրք զաբիթներ եկան, հորս ըսին.— Հրացաններդ տուր։

Քանի որ որուն որ հայրս հրացան էր վաճառել, անկե իմացել էին ումե՞ն է առած։

Պապաս ըսավ.— Ես հրացան չունեմ։

— Ո՞նց չունես, մենք գիտենք, որ դուն ունես։ Ունենալդ ալ գիտենք, քանի հատ ըլլալն ալ գիտենք։

Պապաս հրացանը պարտեզին մեջը, ծառի տակ թաղած է լինում. կէրթա տեղը ցույց տալու, էստեղ կփորեն՝ չկա, էնտեղ կփորեն՝ չկա։

— Մեկ է, հրացանդ պիտի տաս տանենք,— կըսեն թուրքերը։

Վերջապես կփորեն, հողի մեջեն կհանեն, իրեն ալ հրացանին հետ կառնեն կտանին։ Տունեն դուրս գալու ժամանակ, մութին մեջը, թուրքերեն մեկը կճանչնա իրեն, կըսե ընկերոջը,— հրացանը տանում ենք, բոլ է, իրեն ի՞նչ պիտի ընենք տանինք, բա՛ց թողնենք՝ թող էրթա։

Այսպիսով պապայիս կազատեն, պապաս կուգա տուն։

Քանի մը օր ետքը ուրիշ թուրք զաբիթներ կուգան, կտանին հորս, էն տանելն է, որ տանում են։ Քելեփչեներով ձեռքերը կկապեն, երկու հոգու ալ իրար կկապեն քելեփչեներով, որ չփախին։ Թուրքը գործը պինդ կբռնի։ Ո՞ւր կտանին, Աստված գիտե։

Քանի մը օր կտանին։ Պապաս, որ արհեստավոր մարդ է լինում, գրպանը խարտոց կունենա, կամաց-կամաց կխարտե, քելեփչեն կկտրե, մեկը մյուսեն կպոկվի, փախչելու մասին կմտածե։ Ցերեկով անհնար էր, կորոշեն գիշերով փախչել։ Երբ աքսորականներին կտանին ինչ-որ բաց տեղում գիշերելու, էդ գիշեր կորոշեն փախչել։ Գալիս են պահակին խնդրում են, թե՝ պետք ունինք։ Պահակը կթողնե, բայց՝ չեն փախչի. օձի ձեռքեն մա՞րդ կփախչի։ Երկրորդ անգամ նորեն կխնդրեն՝ պետք ունինք, թուրք պահակը նորեն կձգե, բայց անոնք չեն համարձակվիր փախչիլ։ Երրորդ անգամ նորեն կերթան պահակին կըսեն՝ պետք ունինք։ Պահակը, որ հրացանով զինվոր մըն էր, կըսե.— Նե բոք եեջեքսին՝ եի՛ն (ինչ ք... պիտի ուտեք՝ կերե՛ք)։ Ասոնք ուժ կառնեն, կծիկնին կըդնեն, կփախին։ Քանի մը մետրո հեռանալեն վերջը ետևնեն կպոռան.— Քաչդըլա՞ր, վուրը՛ն (փախա՞ն, կրակե՛ք)։

Այսպիսով հայրս կազատվի կուգա նորեն Մալաթիա։ Կերթա բարեկամներուն քովը, անոնք չեն ընդունիր. կվախնան, որ իրենց ալ վնաս կուգա։ Կերթա Եփրատի ափին Կորուչուխ գյուղը, անտեղ մի թուրք ծանոթ ունի էղեր՝ Հուսեին անունով։ Աղ թուրք Հուսեինն ալ ղզլբաշ կըլլա (կարմրագըլուխ)։ Կառնե հորս կպահե, չնայած որ հրաման կար. «Որուն տունը, որ հայ գտնանք՝ կպատժվի»։

Աս թուրքերը պապայիս կպահեն՝ գետնի տակը թաքստոցի մեջ։ Գիշերները դուրս կհանեն, որ օդ առնե, հետո՝ լուսադեմին, նորեն գետնի տակ կըմտցնեն։

Երբ հայերուն կոտորածը կվերջանա, պապաս կուզե գալ Մալաթիա՝ իր տունը։ Աս թուրք Հուսեինի վեց եղբայրները կխնդրեն հորս, որ մնա, որ իրեն ամուսնացնեն, քանի որ ան իրենց համար արոր, չուլթ և այլն կշիներ։ Բայց հայրս չի համաձայնիր։

Թուրքերը կըսեն.— Է՛, եթե չես համաձայնվում, ուրեմն՝ գնա քո տունը։

Հայրս կուգա Մալաթիա, կլսե, որ կնոջը և երեխային սպանել են աքսորի ճամփաներին...

Ստիպված նորեն կամուսնանա հայու հետ,

ծայրեն տուն տեղ կդնե։ Ես պապայիս անդրանիկ զավակն եմ՝ Գրիգորը, ծնված եմ 1921 թվին։ Հետո՝ 1925-ին կծնվի մյուս եղբայրս, մինչև 1929 թիվը պապայիս ընտանիքը այդ թուրք Հուսեինի վեց եղբայրներուն հետ շատ սերտ կապեր ուներ, քանի որ անոնք հորս կյանքը փրկած էին։ Ամեն տարի կով, յուղ, պանիր, ձմերուկ և ուրիշ շատ բաներ կբերեին մեզի նվեր։ Աս թուրքերը մեզի շատ լավություններ ըրին։ Այնքան կսիրեին պապայիս, որ իրենց քսակով ոսկին կբերեին պապայիս մոտը կպահեին։ Կամ երբ շուկա կուգային, պապայիս ալ հետերնին կառնեին, որ գնումների հաշիվները ինքը ընե, այնքան որ վստահում էին պապայիս։

1929 թվին, երբ մենք որոշել էինք Մալաթիայեն Հայաստան գալ, Հուսեինը իր վեց եղբայրներով եկան ավտոյին առաջ, գետինը պառկեցան, խնդրեցին, որ չերթանք։ Բայց պապաս ըսավ.— Չէ՛, իմ հայրենիքս է, պիտի՛ երթամ։

Թուրք եղբայրները ըսին.— Գնա՜, Հովհաննես, բայց չփոշմանես, իսկ եթե լավ ըլլա, գրե՝ մենք ալ կուգանք։

Աս տեսակ թուրքեր ալ կան։

Մենք ընտանիքով 1929 դեկտեմբերին թրեն նստանք Սամսոն գացինք, Սամսոնեն նավ նըստանք, էկանք Տրապիզոն։ Այդ ժամանակ ես ինը տարեկան էի։ Տասնհինգ օր մնացինք, էդտեղից թույլտվություն առինք, էկանք Բաթում։ Բաթումեն ալ տավարնի վագոնով էկանք Հայաստան՝ տուրիստ, ու մնացինք։ Մեզի Երևանի Մալաթիա թաղամասը բերին. ան ժամանակ ալ աս կողմերը տուն-մուն չիկար։ Միայն տասնհինգ կիսատ-պռատ տուներ էր կառուցել Դպրոցասիրաց ընկերությունը։ Մեզի այդ տուներուն մեջը տեղավորեցին։ Ոչինչ չունեինք։ Ամեն ինչ ծայրեն սկսանք։ Կամաց-կամաց տուն-տեղ էղանք։ Պապաս առաջին կոլխոզի հիմքը դրեց։ Ո՛չ տրամվայ կար, ո՛չ ավտոբուս, ո՛չ աղբյուր կար, ո՛չ լույս, ո՛չ ալ ուտելիք։ Բոչկայով ջուրը կբերեին՝ կբաժնեին։ Օր կըլլար արաբային թեքերը կփչանար, ջուր չէին բերեր... Անձրևին, ձյունին ջուրերը կհավաքեինք, որ օգտագործենք... մեր տունն ալ հիմիկվա Մալաթիայի շուկային դիմացն էր...

Աս ձևով ապրեցանք, կոլխոզը աշխատեցանք։

1941 թվականին պատերազմը որ սկսվավ, ես կամավոր գնացի ճակատ։ Բայց մերոնց, որպես կոլխոզնիկի, հացի գրքույկ անգամ չէին տալիս։ Անոնք ալ ստիպված մեր պարտեզում աճեցրած խաղողը, խնձորը, տանձը, ճակնդեղը կծախեն էղեր՝ կիլոն հարյուր մանեթով, հաց կառնեն, կուտեն էղեր։

Այդ 30, 40-ական թվերուն ալ ձմեռները շա՜տ սոսկալի էին, ոչ մի համեմատություն հիմիկվա հետ...։

Մեր կողմերն ալ մարդ-մարդազանք քիչ կար. օձ, կարիճ, մուկ, ի՜նչ ըսես՝ կար...

Ինչ երկարացնեմ, գացի ճակատ, ողջ, առողջ ետ էկա...

1960-ական թիվերուն մարդ մը էկավ Մալաթիայեն և ըսավ որ հոն հարյուր հիսուն հայ ընտանիք կա, կուզեն փոխադրվիլ Հայաստան։ Հայաստանը թույլ չտվեց, ըսավ՝ թուրքը չի թույլատրում։ Եթե նրանք փոխադրվեն մի ուրիշ երկիր, օրինակ՝ Ֆրանսիա կամ Գերմանիա, հետո՝ անտեղեն կրնանք բերել տալ։ Բայց այդ ալ դյուրին բան չէր, այնպես որ Մալաթիայի հարյուր հիսուն հայ ընտանիքն ալ ցիր ու ցան էղան, մեկը՝ Ամերիկա, մեկը՝ Անգլիա, մեկը՝ Ֆրանսա ցրվեցան։ Հիմա Մալաթիայում քիչ՝ հատ ու կենտ են մնացել հայերը։

Ասկե քսան տարի առաջ, 1970-ական թվերուն էր նամակ մը էկավ, գրված էր. «Ես Ռիզան եմ. Կորուջուխցի Հուսեինի տղան եմ, կարո՞ղ է դուք Գրիգորն եք, Հովհաննեսի տղան։ Կուզեմ գտնել Ձեզ։ Հայրս՝ Հուսեինը, մեռնելեն առաջ խնդրեց, որ Ձեզ գտնամ»։ Մարդու միջոցով մեր հասցեն դժվարությամբ գտել էր ու այդ նամակը ուղարկել։

Այնպես որ թուրքերուն մեջն ալ լա՜վ մարդիկ կան։ Պապայիս վեց-յոթը տարի անոնք պահել էին, ետքն ալ կապը չէին կտրած...

Հիմա ադրբեջանցիներուն մեջը լավ մարդիկ չկա՞ն, կամ Սումգայիթում չկա՞ն, կա՜ն, լավ մարդիկ ալ կա՜ն...

## 42(258).
## ԽԱՐԲԵՐԴՑԻ ԱԺԵՄՅԱՆ ՀԱՅԿԱԶԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1892 Թ.)

1915 թվականի կոտորածի ժամանակ թուրք կառավարությունը մեր գյուղի բոլոր տղամարդկանց հավաքեց, բոլորին կոտորեց, հարյուր քսանհինգ հոգի տարան կապեցին, Եփրատ գետը նետեցին, սպանեցին։ Երկու օր հետո մեզ աքսորեցին։ Քշեցին Հալեպ, էնտեղից Դեր Զոր։ Սպանեցին բոլորի՜ն՝ հորաքույրներիս, քեռիներիս, բոլորի՜ն (մեր գյուղը Աշվանը (Արշամավան) Եփրատի ափին էր։ Ես լողացի, անցա գետի մյուս ափը, փախա Դերսիմ, ուր զուտ քուրդեր էին։ Մընացի նրանց մոտ։ Դերսիմ մնացի մեկ տարի։

Դերսիմը ապստամբ էր։ Թուրքերը չէին կա-

րող Դերսիմ մտնել։ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ դերսիմցիներին զորակոչեցին, բայց նրանք չկռվեցին. զենքերն ստացան, գնացին իրենց տները։ Այնպես որ նրանք միշտ զինված էին։

Դերսիմ անունը հայ քահանայի՝ Տեր Սիմոնի անունից էր եղել։ Նա գաղտնի քրիստոնեություն էր քարոզում բոնի հավատափոխ դարձածների մեջ։ Նրանք հացի վրա խաչ էին անում. իսկ Սուրբ Սարգիսին Օրհան էին ասում՝ խըդըր Սուրբ Սարգիս։ Ջեյվա գյուղում քրդերը շատ լավ պահում էին հայկական եկեղեցին, քանի որ գիտեին, որ դա իրենց նախնիներն են կառուցել։ Նրանք խոստովանում էին, որ իրենց պապերը հայ են եղել, բայց ստիպողաբար հավատափոխ են արվել՝ մահմեդականություն ընդունել։ Այդ Սուրբ Սարգիս եկեղեցիի կառավարիչը կին էր։ Մի օր եկել էր ժամի հախը հավաքելու, ինձ ասաց.— Արի՛, ես քեզ պահեմ վարդի պես։

Ես գնացի մի քանի օր մնացի, բայց հետո փախա, քանի որ ամեն օր ոստիկան էր գալիս հարցնում.— Քո մոտ փախստական հայ կա՞։

Կինը ըսավ.— Անտառներում լիքը փախստական հայ կա, գնացե՛ք բռնեցեք։

Այդ կինը օգնեց, որ ես անտառներով փախա, քուրդ առաջնորդների հետ անցա սահմանը՝ Երզընկա, որն արդեն ցարական զորքերը գրավել էին, այդպես ազատվեցի։ Հետո անցա Էրզրում, որտեղ Անդրանիկի զինվորը դարձա։ Ես Անդրանիկ փաշայի հետ 1917 թվից կռվել եմ։ Անդրանիկը էկավ Էրզրում, մենք իրեն դիմավորեցինք։ Մինչև 1920 թ. օգոստոսի վերջը եղել եմ նրա հետ։ 1917 թ., երբ Էրզրում եկավ, կռվեց Թուրքին դեմ, գրավեց Էրզրումը, առաջացավ, եկավ գրավեց Սարիղամիշը, մի տարի մնաց հոն, եկավ Ալեքսանդրապոլն ալ գրավեց։

Անդրանիկի բանակը զուտ հայերից էր կազմըված՝ թվով չորս հազար հինգ հարյուր հոգի, ուներ թնդանոթ և թե հրացան։ Անդրանիկը, ձին նստած, մեզ ասում էր.— Մի՛ լռեք, երգեցե՛ք։ Մենք ալ երգում էինք.

Հերոս մռնչաց, սուլթան դողդըղաց,
Վիլհելմի աչքից արտասուք ցողաց,
Սուրդ Թշնամու կրծքին շողշողաց՝
Կռվի սիրահար, հերոս Անդրանի՛կ։

Էդ ժամանակ դաշնակցական կառավարությունն էր իշխում։

Անդրանիկն ասաց.— Թուրքական կառավարությունը մեռած կառավարություն է։ Նրա զորքը քիչ է ու հոգնած, ընդամենը երկու հազար զինվոր հազիվ կունենա։ Ես չորս հազար ունեմ, երկու հազար ալ դուք կուտաք, միասին կկռվենք, Թուրքերուն կվռնդենք մեր երկրից։

Դաշնակցականները չլսեցին Անդրանիկին։ Անդրանիկը անոնց «խարդա՛խ» ըսավ և հեռացավ։ Արդեն Անդրանիկին չէին սիրում։ Անդրանիկը պատրոն էր ուզում, դաշնակցականները հաց էին ղրկում, հաց էր ուզում՝ պատրոն էին ղրկում։ Նրանք ուզում էին Անդրանիկին մեջտեղից հանել։

Թուրքերն առաջացան, մենք տեղափոխվեցինք Ղուկասյանի շրջան, Ղարաղաչով իջանք Ջալալօղլի (հիմա՝ Ստեփանավան)։ Այնտեղ Մոսկովսկի որբանոց կար՝ մոտ երեք հազար որբով։ Անդրանիկ փաշան հրամայեց որբերին փոխադրել Թիֆլիզ։ Մենք էլանք գացինք Տեղ գյուղը, հետո՝ Դիլիջան։

Անդրանիկ փաշան ըսավ.— Մենք դաշնակների հետ յոլա չե՛նք կարող գնալ, հարկավոր է հեռանալ։

Որոշեցինք հեռանալ Պարսկաստան, Ջուլֆայի կամուրջով անցանք մինչև Խոյ։ Արդեն գաղթականություն կար մեզի հետ, մեր բանակի հետևվից մոտ երեսուն հազար հայ էր գալիս։ Թուրքերը թնդանոթ կապեցին գաղթական ժողովրդի վըրա, ժողովուրդը նահանջեց։ Եկանք Ջուլֆա, իջանք Ղափան, Գորիս։ Մի տարի էնտեղ մնացինք։ Էնտեղ եղած ժամանակներս օսմանյան Թուրքերը Ալեքսանդրապոլը գրավել էին, Դիլիջանով գնացել էին Բաքու։ Թուրքերը Գորիս՝ Անդրանիկի մոտ ղրկեցին մի հայ վարդապետ և երկու Թուրք, որից հետո Թուրքերը տվեցին հրամանի թուղթ. «Գորիսի շուրը՝ խճուղին, մերն է, դու Գորիսով, Լեռնային Ղարաբաղից գնացել ես Ջուլֆա, դու մեր ճանապարհի վրա նստել ես ու խանգարում ես մեզ, անձնատո՛ւր եղիր. մենք քեզ չենք սպանի և կամ՝ հեռացի՛ր»։

Անդրանիկ փաշան պատասխանեց. «Վաղը առավոտ ես հարձակվում եմ ձեզ վրա։ Ես ո՛չ մի շող չեմ տա ձեզ։ Դուք էս կողմերը գո՞րծ չունեք»։

Ութ-տասը օր հետո անգլիացին եկավ։ Մի անգլիացի կապիտան Անդրանիկ փաշայի բանակին միացավ։ Մեր բանակը Գորիսից եկավ Էջմիածին։ Երևանի վերևեն փայտե կամուրջով առանց Երևան մտնելու Էջմիածին գնացինք, զենքերը կաթողիկոսին հանձնեցինք։ Անդրանիկը Էջմիածնում մեզ «Ազատական» տվեց, այնտեղ գրված էր՝ էսքան ժամանակ կռվել է մոտս։

Հետո Անդրանիկը գնաց։ Երևան գալու ժամանակ, դաշնակ կառավարությունը հավաքեց Անդրանիկի զորքը, սպանեց երկու հոգու և վիրավորեց շատերին։

Անգլիական զորքը գրավել էր Երևանը։ Անդրանիկը ըսավ.— Էդ շան Թուլա Դրոյին տվեք ինձ, ես ականջները կտրեմ։

Պրոֆեսոր Թենեքեչյան մը կար, հարցուց ինձի.— Ի՞նչ եղավ։

— Անդրանիկին ուզում էին սպանե՞լ։

— Վա՜յ, շա՜ն որդիներ, հազար տարին մեկ էդպես մարդ կծնվի…

Անդրանիկից հետո, դաշնակցականները մեզ աշխատանք չէին տալիս։ Մեզ փողոց մաքրել տըվին, մեզանից մեկին սպանեցին։ Մեզ չէին սի րում, որովհետև Անդրանիկի զինվոր էինք եղե Նորից փախանք Ապարան, քարշ եկանք, մինչ բոլշևիկյան բանակը եկավ Ալեքսանդրապոլը գրա վեց։

## 48(259).
## ԽԱՐԲԵՐԴՑԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ ԹՐՎԱՆԴԱՅԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1905 Թ.)

Հիսուն գյուղ՝ Մուշը, Վանը, Սամսոնը, Ղարսը, Արդահանը, Էրզրումը, Քղին, Բալուն Ջարսանջակը Էրզնկան, Սվազը, Յոզղատը, Արաբկիրը, Մալաթիան, Խարբերդը, Տիգրանակերտը և ուրիշները, սս բոլորը մեր հին Հայաստանն էր։ Մեր հին Հայաստանի հողերուն վրա Պարսկաստանի քյուրդերուն աքսորել էին…

Ես 1905 թվի ծնունդ եմ, կհիշեմ դեռ մեզի աքսոր չհանած, Թուրքերը էկան, ջահելներուն հավաքեցին, զինվոր տարին։ Իմ հորեղբոր աղջկան ամուսինին ալ ուզեցին տանել, ան չհանձնվավ՝ սպանեցին։ Անոր կնկան ուզեցին տանել, որ իրենց կին դառնա, խեղճ հորեղբորս աղջիկն սկսավ բոռալ.— Ինձի չմոտենա՜ք. ես թշնամու ծոցը չե՛մ պառկի…

Ան ժամանակ խեղճը ճարահատ մոտեցավ ծխնելույզին, հոն թուղթի մեջ փաթթված ճերմակ թույն մը կպահեր։ Գառնուկի դմակի վրա, որ վերք կըլլար, ադ կքսեին՝ կանցներ։ Առավ ադ թույնը ափով իր բերանը լեցուց։ Վայրկյանին արյունը ֆշշաց անոր բերանեն՝ մեռավ։ Անոր դիակը դուրս քաշեցին, երևի գազանները կերան…

Ետքը Թուրքերը ընկան մեր մեջը. սկսան մեզ կոտորելը։ Մամաս մեզի փախցրեց Թուրքի մը օբայի մեջ, ուրտեղ հորեղբայրս էր թաքնված։ Մամաս անոր ըսավ.— Փախի՛ր, Պետրո՛ս, սաղ գյուղը կոտորեցին…

Ետքը եկան հորեղբորս կնկան սպանեցին, գըրկի երեխան գլորվավ բայիրեն, մեռավ… Մամաս փախավ, որ իրեն ալ չսպանեն։

Մեզ երեխեքիս բերին հավաքեցին մի տեղ, չորս հոգի էինք՝ մի տղա, երեք աղջիկ։ Կացինը բերին, որ մեզ կոտորեն։ Հորեղբորս տղային ականջը կտրեցին։ Ադ ժամանակ Թուրքի կնիկը մեղքցավ, ականջը առավ տվորոգով կպցուց, պինդ կապեց։

Գիշերը մնացինք Թուրքի օբային մեջը, կուլա՜նք։ Նե՛ մայր, նե՛ հայր։ Գլուխնիս քարերուն կզարնենք, որ մեռնինք, չմեռանք։

Թուրք կնիկը մեր չորսիս, ականջը կապած վիրավոր հորեղբորս տղային ալ հետերնիս, տարավ մեր գյուղը, պզտիկ քույրիկիս ալ ինքը գըրկել էր։ Մենք ուրախացանք, որ մեր գյուղն ենք գնում, բայց երբ գյուղ մտանք, տեսանք, որ Պետրոս հորեղբորս սպանել են ջաղացքի քովը։ Ա Թուրք կնիկը մեզ թողեց էդտեղ, գնաց։ Մենք մնա ցինք մենակ, չենք գիտեր ո՞ւր էրթանք, պզտի ենք։ Տեսանք հեռուեն արորով հողագործ մը։ Մեն վախերնես իրարու կպանք, վախցանք, որ մե պիտի մորթե։ Տեսանք, որ մեր մյուս հորեղբայր է, ըսավ.— Գացե՛ք Թուրքի գյուղը, պապանի գյուղապետին քովը կաշխատի։

Մենք էլանք գացինք։ Շուները հարձակվա մեր վրա։ Մեկ էլ տեսանք մի ջահել աղջիկ էկա զիբիլ թափելու։ Մեզի տեսավ, շուներեն ազատեց Ադ աղջկան ալ Թուրքերը փախցրել էին, բռնի ա մուսնացրել էին իրենց տղի հետ։ Էդ աղջիկը մեզ ըսավ.— Ձեր պապան էնտեղ է, աղայի մոտը։

Գնացինք, գտանք, տեսանք՝ մեր պապան է Ուրախացանք, մեզ էնտեղ ուտացրին…։ Իրիկուն Թուրք աղան պապայիս ըսավ.— Գասպա՜ր, ա՛ էրեխեքիդ, գնա՛ էստեղից, թե չէ՝ մեզ ալ վնաս կուգա։

Ադ ժամանակ քովի գյուղեն Սայիդ աղան ա մեր Ալի աղային մոտ կուղարկե իր ծառային, ո Գասպարին բերել տա իր մոտը։ Դու մի ըսեր, մամաս ու մեծ մամաս ալ ադ Սայիդ աղային քովը կաշխատին։ Պապաս մեզի հավաքեց, էլանք գացինք Սայիդ աղային քովը։ Հոն պապայիս տարին գերանդիով խոտ կտրելու։ Երկու օր ետքը իմացանք, որ պապայիս գերանդիով մորթել էին։ Սայիդ աղան մամայիս ու մեծ մամայիս ըսավ.— Էլե՛ք էստեղից գնացե՛ք, թե չէ՝ մեզի ալ վնաս կուգա։

Մամաս ու մեծ մամաս մեզի առին ու դուրս էկանք։ Ո՛չ ճամփա գիտենք, ո՛չ ծանոթ ունինք։ Մեկ էլ ասկյար մը դեմերնիս էլավ։ Մամաս ըսավ.— Մեզի ճամփա ցույց տուր։

— Ձեր ունեցածը ինձի տվեք, ձեզի ճամփան ցույց կուտամ,— ըսավ ասկյարը։

Մամաս մեկ հատ քեհրիբարից թեզբեհ ուներ, տվեց Թուրք ասկյարին, որ մեզի մեր գյուղի ճամփան ցույց տա։

Էկանք մեր գյուղը։ Դիակներուն հոտը աշխարհքն էր բռնել։ Թուրքերը էկել էին մեր տուները մտել։ Մամաս կերթար Թուրքերու ցորենը կհավաքեր, կապրեինք…

Քեմալը, որ սկզբում հրաման էր հանել, որ հայերուն ձեռք չտան, վերջը՝ հրաման ստորագրեց, որ ադ երկիրեն էլլողը այլևս վերադառնալու իրավունք չունի։

Մեզ հանեցին մեր գյուղեն, բոլոր ջահելներին հավաքեցին, խովուշի պես տեղ մը լցրին, կտուրը բացին, մեջը նավթ լցրին, վառեցին։ Հետո հավաքեցին բոլոր կանանց, քարերով ողջ-ողջ գլուխները ճնճղեցին։ Մամայիս ու մեծ մամայիս ալ քարերով սպանեցին, էրեխեքին, ոչխարներուն քովեն գառնուկներու պես առանձնացուցին։ Ինձի երեք տարեկան պզտիկ քույր մը ունեի, երեխեքի հետ անոր ալ առին տարին Բալուի Մուրադ գետի կամուրջին քովը, վզերը կտրեցին, կոտորեցին, գետը լեցուցին...։ Երկու ժանդարմա հինգ հարյուր հոգի աքսոր հանեցին։ Սուլիշը կփչեր՝ հինգ հարյուր հոգին ոչխարի պես կնստեին գետինը։ Օր մըն ալ ժանդարմային մեկը գնաց, մյուսը ըսավ՝ ես քիչ մը պառկիմ։ Հրացանը ծառին հենեց, գետինը պառկեց, քնեց։ Մերոնք հրացանը առին, ասոր սպանեցին, պատրոնդաշն ալ առին, լեշն ալ առին քարշ տվին, տարին, գետը նետեցին։ Մենք ալ՝ ամեն մեկս մեկ կողմ փախանք, ազատվանք...։ Հետո գնացինք Ջեզիրե, անտեղ ապրեցանք, անտեղեն ալ 1947 թ. էկանք Հայաստան, բայց 1949 թ. մեզի աքսորեցին Սիբիր։ Հիմա ալ պատրաստվում ենք Ամերիկա էրթալ։

## 44(260).
## ԽԱՐԲԵՐԴՑԻ ԱՆՏՈՆՅԱՆ ԵՂՍԱՅԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1910 Թ.)

Ծնողներս հողագործ մարդիկ էին։ Կհիշեմ, ձմռան օրերին մեծ վերմակ մը կդնեին սեղանի վրա, տակը չանախով վառելիքը կդնեին, կվառեին, քուրսիին կնստեին։ Կողքի տունը թուրք մյուդիրի տունն էր։ Մեր տունը երկու հարկանի էր, կտուրից էինք ելք ու մուտք անում։ Գիշեր մը թուրք մյուդիրը եկավ մեր տունը, հորս ասաց.— Աղաբե՛կ ջան, էսքան տարի իրար հետ հաց ենք կերել, չեմ ուզում վատ բան ըլլա ձեզ, կառավարությենեն հրաման եկած է, որ հայերուն պիտի աքսորեն, պիտի կոտորեն...

Հերս լռում էր, ձեն չէր հանում։ Մերս նրան սուջուխ-բաստուրմա էր հյուրասիրում։

Մյուդիրի էրթալեն վերջը հայրս եղբորը ըսավ.— Ք...քնեմ մյուդիրի բողազը, կուզե՝ մենք երթանք, ինքը մեր տունը գրավե։

Մյուս օրը, գիշերը եկան թուրք ասկյարները։ Դուռը կոտրելու չափ ծեծում էին ու ասում.— Գյավո՛ւր, ձեզ պիտի աքսորենք։

Պապաս վախեն կոշիկները հանեց, յուքլիկը մտավ։ Զաբիթները ներս մտան, տեսան կոշիկները, ըսին.— Գյավուրը տա՛նն է...

Բացին յուքլիկը, հրացանի կոթով խփեցին պապայիս, պատի միջից քաշեցին, հանեցին դուրս ու տարին...

Է՜, անցյալս որ հիշում եմ, գիտեմ, որ վերքերս թազացան։ Է՜, մենք ի՞նչ տանջանքներ ենք քաշել, ի՞նչ բաներ ենք տեսել...

Պապայիս քաշեցին տարան, մյուս օրը լսեցինք, որ գյուղի բոլոր հայ տղամարդկանց տուներեն հավաքել, տարել էին, նավթ էին լցրել, վառել, ոչնչացրել էին...

Մյուս օրը էկան, մեզի հավաքեցին, ոչխարների պես քշեցին, ո՞ւր՝ չգիտենք։ Ճամփին հազիվ քայլում էինք, ընկնում, կանգնում էինք։ Երեխեքը մայրերի փեշերից կախվում էին, չէին կարողանում քայլել...։ Մի հավուզ կար, վրան ասլան-ղափլան կար փորագրված, հոնտեղեն ջուր խմեցինք... Զաբիթներն իրենց ձիերուն ոտքերի տակը քյոմուրհացի կտորներ էին շպրտում, իսկ մենք՝ իրար ձեռքից էինք խլում, բոլորս ալ անոթի էինք...։ Մեզ Դեր Զորի չոլերն էին տանում...

Պապս շատ հարուստ մարդ է եղել։ Մեծ մայրըս յոթը աղջիկ է ունեցել՝ մեկը մեռել է, վեցը ողջ են մնացել։ Բոլորն ալ շատ գեղեցիկ են եղել։ Ժամանակին պապս ամեն ինչը ծախել էր, իր ընտանիքը եվրոպական հպատակ դարձրել և չորս աղջիկներին տարել Ամերիկա, իսկ երկու աղջիկները, ամուսնացած ըլլալով, մնացել էին Խարբերդում։ Անոնցմե մեկը մայրս էր, մյուսն ալ՝ Աննա մորաքույրս։ Թուրք զաբիթները, երբ տեսան, որ մենք եվրոպական հպատակ ենք, մեզ ազատեցին, մյուսներին՝ իղով-թոզով տարան, կորցրեցին։ Պապս էդ մի լավությունը արել էր մեզ։ Մենք մնացինք ճամփին, մի թուրքի գյուղում։ Գիշերը գալիս էին, դանակը պահում վրաներս, ձայն հանելու իրավունք չունեինք, թալանում էին մեր ոսկեղենը, մեր խալիները, ամե՛ն ինչը...։ Մայրս ինձ ու քրոջս տարավ, տվավ թուրք որբևայրի կնոջ մը, որ մեզ պահի. գոնե մենք ողջ մնանք։ Ամեն թուրքի տունին առջևը չորս-հինգ հատ որբ երեխա կար մեռած, ընկած, տկլոր ու սոված...

— Բաջի՛, ալլահըն սևերսեն բիր փարչա էքմեգ վեր (Քույրի՛կ, Աստծո սիրուն, մի պատառ հաց տուր),— ասում էին էդ որբ երեխեքը։ Եթե թուրքերը խղճում, տալիս էին՝ լավ, թե չէ՝ սովից պատերի տակ ընկնում, մեռնում էին...

Էդ թուրք խանումի մոտ ես մնացի։ Ճաշի սեղանը դնում էին, ուտում, պրծնում էին, խանումս էդ

*փշրանքները լցնում էր մի ամանի մեջ, վրան ջուր էր լցնում, փշրանքները փափկում էին, իմ առաջ էր դնում, ասում.— Յէ՛, գյավուր ղըզը (Կե՛ր, գյավուրի աղջիկ)։*

*Տան մեջ իմ տեղը դռան առաջն էր, ոնց որ շունը կապում ես դռան առաջ, ինձ էլ դռան առաջն էր տեղ տված։ Տաք՝ կուտեի, չտար՝ չէի ուտի։ Չէր թողնում, որ տեղիցս շարժվեմ, բայց, ոտքերս բոբիկ-տկլոր ուղարկում էր ջրի. Ցրտից մեկ ոտքս վեր էի քաշում, մյուսը՝ գետնին, սառույցի վրա էի դնում, որ չմրսեմ...։ Մերս մի ուրիշ Թուրքի տանը լվացք, մաքրություն կաներ՝ մի փոր հացի համար։ Թուրք տերը չէր ուզեր, որ մերս ինձ իր մոտ տանի, մի փոր հացի համար ամբողջ օրը չարաչար կաշխատցնեին...*

*Մյուս քույրս մնաց մի ուրիշ Թուրքի տանը, խաբար չունեմ՝ ողջ է, թե՝ չէ։*

*Օր մը մերս էկավ, գաղտնի ինձի ըսավ։— Ամերիկացին որբանոց է բացել, արի՛, էրթա՛նք։*

*Ըսի.— Թուրք տանտերիս ըսեմ։*

*Ըսավ.— Չէ՜, փախի՛ ինձ հետ։*

*Տարավ ինձ գցեց ամերիկյան որբանոցի դռանը, ինքը գնաց, քանի որ եթե իմանային, որ մայր ունեմ, ինձ ներս չէին առներ։*

*Որբանոցում լավ էր։ Ճաշ էին տալիս։ Օրը երկու անգամ ափի չափ հաց էին տալիս։ Հացերուն մեկը կուտեի, մեկը կպահեի՝ մորս գաղտնի կուտայի, երբ կուգար ինձի տեսնալու։*

*Մեզի ըսին՝ ամբողջ որբանոցը Ամերիկա պիտի տանին, բայց հետո հրաժարվեցին. Ֆուրգոնով մեզի Հալեպ տարին։ Ճանապարհին Թուրքերը մեզի քարկոծում էին, մենք իրար վրա էինք պառկել, որ մեզի չմեռցնեն...։ Հետո մեզի տարին Բեյրութ՝ Լիբանան։ Հոն խալիի գործարան կար։ Ես տասը տարեկան էի, սկսա խալի գործել։ Մտքիս մեջ տեսածներս էին, գիշերները քունս կփախեր, կհիշեի...։ Մի երկու կնիկ մեծ խալի էին գործու… խնդրեցի՝ ինձ սովորեցրին։ Ես խալիի գլուխնե… կգործեի։ Գործարանի վերակացուն եկավ, ին… ըսավ.— Ինչո՞ւ դպրոց չես երթար։*

*Ըսի.— Ի՞նչ ընեմ, ես որբ եմ, մերս հեռվո… մենակ է ու սոված, գոնե մի քիչ դրամ շահե… մորս ղրկեմ։*

*Արցունքներս տեսավ՝ մեղքցավ։ Մի փոքր… դազգահ տվեց, որ գործեմ, փող շահեմ։ Ամիս… մի հատ խալի էի հանում, ահագին դրամ հավաքե… ցի։ Ուզեցի մորս ղրկեմ՝ ո՛չ հասցեն գիտեմ, ո… մի բան։ Մինչև հասցեն իմացա, լսեցի, որ մեր… սովից մահացել էր։*

*Էդ վախտը խաբար էկավ, որ Ֆրանսացի գոր… ծարանատեր մը եկած է, խալի գործող է ուզու… քանի որ զենահաթը ոսկի բիլեզուկ է։ Ան իր ծախ… սովը պիտի տաներ Ֆրանսա, հետո ծախսը պիտ… պահեր։ Ես շուտ մը գնացի ցուցակագրվեցի։ Քա… նի մը օր ետքը խաբար եկավ, որ պիտի գնան… Փողերս մնացին գրասենյակը, առանց փողի գնա… ցի, ըսի՝ ջահանն՜ մը, մերս, որ մահացել է, փո… ի՞նչ պիտի անեմ, ա՞չքս պիտի կոխեմ...*

*Ֆրանսան աղվոր երկիր էր, չիկա բառը չիկա… հեչ չէինք զգում, որ օտար ժողովուրդ ենք։ Ամբող… օրը աշխատում էի, հոգնած գալիս էի, հանրակա… ցարանի պես տեղ մը կար, աղջիկներով կապ… րեինք, կուտեինք կքնանայինք...*

*Հոն ալ ամուսնացա խարբերդցի որբ տղայ… մը հետ... Ամեն մարդ իրեն համարը կգտնայ… կարևորը՝ հա՜յ ըլլար, երկրացի՜ ըլլար... կաշխա… տեինք, կապրեինք...*

*1932 թ. հունվար ամսին էկանք Հայաստան… էկանք, տեսանք՝ խանութները միայն լուցկի կա… ո՛չ կաթ, ո՛չ հաց։ Աղջիկս մեկ ու կես տարեկա… էր, չդիմացավ շունի-չիկային, մեռավ...։ Վերջ… տղաս ծնվեցավ, մեծցավ։ Հիմա ես անոր մոտ եմ ապրում։ Վերջը բարի՜ն ըլլա.,.*

## 45(261).
## ՔՂԵՑԻ ԹՈՒՐՈՒՋԻԿՅԱՆ ԳԱՐԵԳԻՆԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1903 Թ.)

*Խարբերդ քաղաքի մոտիկ գյուղերն են Հուսենիկ, Քեսրիկ, Խըրխըրիկ, որոնք երեքն ալ հայկական գյուղեր են։*

*1915 թվին էր, էկան հայտարարեցին, որ Թուրքական կառավարությունը որոշել է բոլոր տղամարդկանց տեղահանել, պայմանով, որ ոչ մեկին ձեռք չեն տալու։ Խարբերդը խաբվեց։*

*Խարբերդի բոլոր տղամարդկանց հավաքեցին, տարին Քյուրխանե՝ Եփրատի ափին, Մալաթիա չհասած։ Բեդրի բեկը, որը Թուրք էր, սկսեց խփել, սպանել հայ տղամարդկանց։ Հիմա՝ հերթը էկավ հայ կանանց ու աղջիկներին։ Ասեցին՝ ձեզի պիտի տանենք ձեր ամուսինների, եղբայրների ու զա… վակների մոտ և սկսան ճանապարհին կողոպտե… մերկացնել, բռնաբարել։ Այնպես որ մոտ 250 հա… զար հայ, իբր պիտի Տիգրանակերտ տանեն, Տիգ… րանակերտի ճամփին Դևե Բոյնի սարի Գյոլչիկ ըս…ված լճակին քովը հերթով կոտորեցին։ Իսկ Կիլի… կիայի հայությանը քշեցին, անոնք հասան մինչ… Դեր Զոր։ Թուրք, քյուրդ, չերքեզ, որոնք ավազա… էին, մարդասպան էին և բանտարկված էին 10… տարի բանտարկությամբ, ազատեցին, բանտի… հանեցին, որ հայերին կացիններով ջարդեն, կո… տորեն։ Հայերն անզեն էին, մի դանակ անգա…*

չկար քովերնին։ Քանի որ հրաման էլած էր թուրք կառավարության կողմից. «Զենք ում քովը որ գտնանք՝ կգնդակահարենք»։

Ո՞ւր մնաց Սեբաստիան։ Ո՞ւր մնաց Տիգրանակերտը։ Ո՞ւր մնաց Սասունը։ Ո՞ւր մնաց Զաքաղջուրը...

— Ով որ յոթ գյավուր սպանի,— ասել է շեյխ Արըֆը,— ջաննաթ կէրթա։

Իրարանցում, տակնուվրայություն։ Մեյմըն ալ մեկ հատ կնիկ դենգերուն, վերմակներուն վրա կայնեց, սկսեց խոսել.— Թուրքերը մեզ խաբո՛ւմ են, մի՛ խաբվիք, մեզ տանում են կոտորեն կամ թուրքացնեն։ Դուք թուրք չդառնաք, եթե մի հայ չմնա, ես մինակ մնամ, եթե հայ տղամարդ չըկրնամ առնել, հայ շունի հետ կմնամ, հայ ազգը նորեն մեջտեղ կբերեմ։

Կնիկ, աղջիկ հաշիվ կընեին՝ սատեղը 15—20 տարվա կյանք մը ունինք, ինչո՞ւ թուրքին կնիկը պիտի ըլլանք, իրար ձեռք-ձեռքի կուտային, յալլա՛, Եփրատ գետը կնետվեին։ Հազարներով ջուրը կթափվեին։ Կհիշեմ աղջիկան մը մայրը քսան ղուրուշ տվավ թուրք զաբիթի մը, որ լողալով իր աղջիկը ջուրեն դուրս հանե. «Սեբեբե քալմասըն» (կարիքի մեջ չմնաս) ըսավ թուրքը, էլավ գնաց։

Մայրս արդեն ծանր հոգեվարք էր, կզգանք՝ պիտի մեռնի, ինձի կանչեց, ըսավ.— Ա՛չքդ քոռանա։

Ըսի.— Մամա՛, ինչո՞ւ համար այդպես կըսես։

— Այդպես կըսեմ, որ խելքի՛ գաս։ Երկու աչքդ քոռանա, փորդ չկշտանա, եթե թուրք աղջիկին հետ ամուսնանաս,— ես ալ թուրք աղջկա հետ նըշանված էի։ Ետքը շարունակեց,— Թող թուրքերը ըսեն՝ հայուն վերջը տվինք։ Ադ թուրքի աղջկան նշանը ե՛տ պիտի ընես։ Քեմալ փաշայի աղջիկն ալ, որ քեզի տան՝ չառնե՛ս. մենք կառավարություն ունինք, աշխարհքի ո՞ր կողմն է՝ չգիտե՛մ։ Դուն հայ ես, պետք է երթա՛ս քո հայրենիքդ։ Դրամ ալ չունենաս նե, տոպրակ մը նետե վիզդ, մուրացկանություն ըրե, հայ կառավարությունը գտի՛ր։ Երդվի՛ր։

Ես ծունկի եկա մորս անկողինին քովը, երդվեցի։

Մայրս շարունակեց.— Իմ կաթս հալա՛լ ըլլա, ուր որ էրթաս, Աստված քու հե՛տդ ըլլա։ Աստված քեզ օգնակա՛ն ըլլա...

Մայրս մեռավ։ Թաղեցի։ Թուրք աղջկա նշանս ետ ըրի։ Քեղիից դուրս եկա։ Քառասունհինգ օր ոտքով քալեցի, հասա Հալեպ, եկա մալի՝ ապրանքի բազարը, հայերի հանդիպեցի։ Ես թուրքի շորերով էի։ Մովսես անունով մարդ մը կար, ինձի հարցուց.— Սեն էրմա՞նի սըն (Դու հա՞յ ես)։

— Հե՛ (Այո՛)։

— Բեն դե էրմենի ըմ (ես ևս հայ եմ)։

— Բու գյուն կիրակի դըր, գեթ եկեղեցիե (Այսօր կիրակի է, գնա եկեղեցի)։

Ես ո՛չ «կիրակի», ո՛չ «եկեղեցի» բառերը հասկըցա։

— Աղնամադը՞ն,— հարցրեց մարդը (չհասկացա՞ր)։

— Յո՛ք (Ո՛չ)։

— Սեն էրմանի դեյի՞լ սըն (Դու հայ չե՞ս)։

— Էրմանի ըմ, ամմա էրմենջե բիլմեմ (Հայ եմ, բայց հայերեն չգիտեմ)։

Էս մարդը ինձ առավ, տարավ իր տունը։ Նոր իմացա հայություն կա։ Հոն ամուսնացա։ Վերջն ալ Հալեպեն եկանք Հայաստան։ Նոր Խարբերդում առաջին տունը իմ տունս կանգնեցավ։

## 46(262).
## ԲԱԼՈՒՑԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ ԿԻՐԱԿՈՍԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1923 Թ.)

Ծնվել եմ Բալույում, 1923 թվին։ Հորս, մորս թուրքերը սպանել էին։ Հորեղբայրս ինձ ու փոքր եղբորս 1929 թվին բերեց Սուրիա, մեզ դրեց Նոր Գյուղի որբանոցը, որտեղ երեք տարի մնացինք։ Հետո մեզ Ամերիկա պիտի ղրկեին, չգնացինք։ Ես ու եղբայրս եկանք մեծ եղբորս մոտ՝ Հալեպ, Ջեյթուն խան։

1933-ին գնացինք Ջզիրե Թելբրաք գյուղը, որտեղ շատ քրդահայեր կային, անոնք մաքուր հայեր էին ազգությամբ, բայց իրենց լեզուն կորցրել էին։ Մենք հոն ապրեցանք մինչև 1947 թիվը։ Եղբայրներս մնացին հոն, ես ընտանիքովս եկա Հայաստան։ Ճամփին առաջնեկ զավակս ծնվեց։ Մեզ բերին Սիսիան, Սառնակունք գյուղը։ Գալուս երրորդ օրը աշխատանքի անցա կոլխոզի մեջ։ Ինձի շատ կսիրեին բոլորը, կըսեին՝ Կիրակոսը մեկ հատ է կոլխոզում։

Բայց 1949 թ. գիշեր մը, առանց հարցաքննության, եկան, թե դուք պիտի տեղափոխվեք ուրիշ տեղ։ Մեքենան դրին մեզի, քշին տարան։ Հետո բեռնատար գնացք մեզի դրին, տարին Ալթայսկի քրայ*, ես, կինս՝ Մայրանուշը, տղաս՝ Վազգենը, չիմացանք մեր մեղքը մինչև վերջ։ Միայն ոստիկանները մեզի հանձնեցին Քագէբէ։ Մեզի կարգադրեցին՝ դուք աս Սլավգորոդսկ ռայոնի Անդրեևկա գյուղից որևէ տեղ էրթալու իրավունք չունե՛ք։ Չէ՞ որ մենք տաք երկրեն եկած ենք, ոչ մի տաք հագուստ չունեինք։ Ձմեռից մինչև փետրվար ա-

* Ալթայի երկրամաս (Սիբիր)։

*միսը 20 աստիճան ցուրտին մեջ չարուխով աշխատել եմ, անասնապահություն ըրել, ո՛չ վալինկա, ո՛չ տաք շոր. չվալները կփաթաթեի ոտքերուս, որ չսառչեն։ Մի հատ թելեյգրեյկա չունեի, կնկանս զարդերը վաճառեցի, օժիտի կտորները ծախեցինք, տաք շոր առինք։ Փետրվարն էր արդեն, այդպես ապրեցանք։ Ստալինի մահից հետո մեր վիճակը լավացավ։ Մեզի ազատեցին 1956 թվին։ Մինչև հիմա չիմացա, որն էր մեղքս։ Անմեղ մարդ էի։ Ես եղբայրներս թողի հոն, էկա հայրենիքս շենցընելու, որ թուրքական հողերը առնենք։ Չէ՞ որ պատգամավորները, որ Հայաստանեն կուգային*

*մեզի պրոպագանդա կընեին, որ եկե՛ք, հավաքվե՛*
*Հայաստանում, որ մեր հողերն ալ թուրքին ձեռ*
*քեն առնենք։ Մենք ալ անոնց խոսքերուն հավա*
*տացինք, եկանք Հայաստան։*

*Հետո ունեցա չորս զավակ։ Բայց ինձի շա*
*կմտահոգե հայկական հողերուն հարցը։ Քանի ո*
*Ղարաբաղի հարցը չի լուծվում, ա՞ն մեր հողերու*
*հարցը հե՞շ չի լուծվիր։ Ես շա՜տ հիասթափվա*
*եմ, շա՜տ։ Եթե զավակներս Ամերիկա էրթան, ե*
*ալ կէրթամ։ Առաջ ես մեղադրում էի արտագաղ*
*թողներուն, հիմա՝ բան չեմ կարող ասել։*

## 47(268).
## ԱՐԱԲԿԻՐՑԻ ԿԻԿԻՇՅԱՆ ՊԵՏՐՈՍԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1906 Թ.)

*Հորս քիչ եմ հիշում։ Երբ հինգ տարեկան էի, էրզրումի կողմից հայեր էին գալիս աքսորված։ Այն ժամանակ մենք գնում էինք նրանց տեսնելու, ո՛րը հիվանդ, ո՛րը մեռած, այդ բոլորը տեսել եմ դեռ մանկուց...*

*Երբ նրանց տարան լրիվ, մեր քաղաքում թուրքերն իրենց ոստիկաններով սկսեցին թաղե-թաղ տուները մտնել և հրացան պահանջել, եթե չտային հրացանը, այդ ժամանակ սկսում էին ծեծել։ Մեր թաղը, որ պիտի գային, մեծ հայրս գիտեր։ Այդ օրը ինձ վերցրեց և գնացինք մի ուրիշ թաղ, որը մաքրել վերջացրել էին առաջուց։ Երբ երեկոյան մենք վերադարձանք տուն, ի՞նչ տեսանք. մայրս պառկած անկողնում, ոչ մի լուր չունեինք, որ ծեծել էին. փայտով 150 անգամ խփել, ամբողջ մարմինը սևացրել էին, երկու ամիս պառկելուց հետո վեր կացավ տեղից։*

*Հետո սկսեցին խելահաս տղամարդկանց հավաքել, բանտարկել, բանտից էլ կապկպված տանո՜ւմ էին ու տանո՜ւմ և ետ չէին վերադառնում։ Մենք էլ, այդ ժամանակ շատ փոքր լինելով, գնում էինք փողոց և նստում նայում, թե ինչպես են նրանց տանջում։*

*Երբ տղամարդկանց գործը վերջացրին, հրաման արձակեցին, որ մնացած հայերին էլ պետք է աքսորել, և թուրք ոստիկանները սկսեցին թաղից թաղ ընկնելով բռնի հավաքել, տանել, ո՞ւր, մենք ալ չգիտեինք։ Ես ու ինձանից ավելի փոքր եղբայրներս նստեցինք էշերի վրա, իսկ ինձանից մեծ քույրս ոտքով էր գալիս։ Մեզ հանեցին քաղաքից դուրս, երկու օր պահեցին, հետո նորից գնացինք։ Երեք օր գնալուց հետո մեզ նստացրին Մալաթիայի եզրը, որ Ղրխգյոզ էին անվանում։ Շատ ուժեղ գետ էր։ Այդ գետի կողքը մեզ կանգնեցրին բոլորիս։ Սկսեցին ոստիկանները հավաքել խելքը հասած տղամարդկանց, որ մնացել էին։ Մեծ հորս, որ 96 տարեկան էր, նույնպես տարան*

*մեր կողքից որպես տղամարդ, իսկ մենք էշեր*
*վրայից նայում էինք։ Այդ տղամարդկանց տարա*
*և մեզանից մի հարյուր մետր հեռավորությա*
*վրա, ուղիղ մեր դիմաց, շարք կանգնեցրին և տա*
*րան-թափեցին այդ ուժեղ գետի մեջ։ Իրենք մե*
*կողքերը կանգնած նայում էին, որ ոչ մեկը դուր*
*չիգա և եթե մեկը դուրս գալու փորձ աներ՝ հրա*
*ցանով խփում էին։ Մենք այնտեղ մնացինք մո*
*3 օր։ Այդ ժամանակ շատերն իրենց կախեցին*
*խեղդամահ եղան։ Երեք օր հետո Մալաթիայե*
*սայլեր եկան և ստիպեցին փոքրիկներին տա*
*թուրքական որբանոց։ Մայրս մեզ խաբեց. «Դու*
*ալ նստեք սայլերը գնացեք, մենք ալ կուգանք*
*ասելով։ Մեծ քույրս չի համոզվեց, իսկ մենք փոք*
*էինք՝ շուտ համոզվեցանք և գնացինք։ Սայլ նըս*
*տեցինք ես, ինձանից փոքր երկու եղբայրներս*
*հորաքրոջս փոքր աղջիկը. բոլորիս 15—20 սայլ*
*մեջ տեղավորեցին։ Երբ հասանք Մալաթիա քա*
*ղաքի վերին ծայրը, մեզ իջացրին։ Մի մարդ մո*
*տեցավ ինձ։ Ես հորաքրոջս աղջկան շալակել է*
*իսկ իմ երկու եղբայրներն էլ մոտս կայնած էին*
*Ինձ ասաց՝ այդ աղջկան տո՛ւր։ Ես թուրքերեն չէ*
*գիտեր. ձեռքով հասկացրեց. ես էլ չի համաձայն*
*վեցի։ Այն ժամանակ թուրք մարդը ապտակե*
*ինձ, և քթիցս արյուն եկավ։ Թուրքը իմ շալակի*
*առավ երեխային, գնաց։ Դրանից հետո այլևս չե*
*տեսեր։ Ես այդ ժամանակ քթիս արյունը սրբեց*
*և իմ երկու եղբայրների ձեռքերը բռնելով գնաց*
*թուրքի որբանոց, որը անունով էր որբանոց։ Էն*
*տեղ քնելու տեղ չկար և ոչ մի բան չիկար։ Մեն*
*էլ, ասելով հիմի մեր մայրերը կուգան, այդ հույ*
*սով էինք ապրում։ Անցան ամիսներ, մենք այլև*
*հույսերնիս կտրեցինք։ Այդ ժամանակ Մալաթիայ*
*հայերը չէին աքսորվել։ Այդ հայերը կառավարու*
*թյունից գաղտնի գալիս էին, հայաթի պատեր*
*վրայով փախցնում տանում էին հայ երեխանե*
*րին։ Արդեն համարյա բան չէր մնացել։ Մի օր*

ես հայաթը կայնած էի, տեսա պատի վրայից մեկը ինձ ձեռքով արեց՝ թե արի, ես անմիջապես գնացի։ Ինձ ասացին՝ եթե քեզի տանինք, կուգա՞ս։ Ես ասի՝ կուգամ, բայց ունեմ ինձանից փոքր երկու եղբայր։ Նրանք ասացին, որ նրանց էլ կտանեն։ Ես եղբայրներիս կանչեցի, համոզեցի. ես օգնեցի՝ ներքևից, նրանք էլ՝ վերևից, քաշեցին մեզ ցանկապատի վրա և տարան։ Եղբայրներիս տարան ուրիշ տեղ, ես էլ գնացի ինձ վերև հանող մարդի տունը, որ հետագայում պետք է տաներ, որ եղբայրներիս տեսնեմ։ Բայց, ափսո՜ս, չի տեսա այլևս իմ եղբայրներին։ Ինձ չի կարողացան տանել նրանց մոտ, քանի որ դրանից երեք օր հետո այդտեղի հայերն էլ աքսորվել էին մեր քաղաքի հայերի նման։ Ուրեմն իմ եղբայրներին նորից տարել են որբանոց, ես չեմ իմացեր և առաջարկեցին, որ ինձ էլ տանեն որբանոց, ես չի համաձայնվեցի։ Եթե ես իմանայի, որ եղբայրներիս տարել են նորից՝ կհամաձայնվեի։ Ես նրանց հետ ճանապարհ ընկա, գնացի։ Դու մի ասի այդ որբանոցը նույն ճանապարհի վրա է եղեր. երբ հասանք որբանոցին, ասացին, որ իմ եղբայրները այդտեղ են։ Ես կարծեցի ինձ խաբում են, բայց զաբիթին ասացին՝ աս տղան որբանոցի տղա է։ Սա էլ երեսիս ապտակեց և մտցրեց որբանոցի դուռեն ներս։ Ես գընացի բացեցի այն սենյակի դուռը, որտեղ եղբայրներս էին, բայց ի՞նչ. սենյակի մեջ անկողին մը կար, երեխաները այդ անկողինի տակ մըտնում դուրս էին գալիս առանց շորի, ամբողջապես մերկ, ոնց որ մի մրջյունի բույն լիներ։ Բայց եղբայրներս այդտեղ չէին։ Հարցուցի որբանոցի մեծին, ան ալ չիմացավ ուր են եղբայրներս, ասաց՝ եղբայրներդ գնացել են ուրիշ որբանոց։ Ես նորեն ինձ հայաթ գցեցի։ Պատից թռա, գնացի այն տունը, որ առաջ ինձ տարել էին, բայց ի՜նչ տեսնամ. այդ տան ամեն ինչը թուրքերը տարել էին, ոչ մի բան չէին թողել. դռները, պատուհանները բոլորը բաց էին։ Այդ հայաթը մի փոքր պատուհան կար, ելա պատուհանը նստեցի մինչև երեկո։ Ես արդեն սոված էի. մինչև երեկո բան չէի կերեր, ո՞վ պետք է տար։ Ես սկսեցի վախենալ և լաց լինել։ Մեկ էլ տեսա, որ հեռվից երկու մարդ են գալիս, մեկը կին է՝ հայ, և մյուսը՝ թուրք մարդ։ Եկան, ինձ մոտեցան. այդ թուրքը հայ կնոջը բերեր է, որ ինձ հետ խոսա հայերեն։ Կինը ինձ ասաց.— Այս մարդը քեզ ուզում է տանի, պահի, իրեն զավակ դարձնի, կգնա՞ս։

Ես ասացի.— Ո՛չ, չե՛մ գնա թուրքի մոտ։

Կինը նորից ինձ համոզեց, որ քեզի ջուր կուտա, հաց կուտա, ամեն ինչ։ Ինձ համոզեցին, ձեռս բռնեցին կինը և մարդը, մենք գնացինք այդ թուրք մարդի տունը, որ զավակ չուներ։ Երեք տարի ես մնացի այդ թուրքի մոտ։ Արդեն մոռացել էի հայերենս և թուրքերեն էի խոսում։ Մի օր էլ դուռը թակեցին, ես գնացի բացելու և ի՞նչ տեսնեմ. մայրըս և հորաքույրս են դիմացս կանգնած։ Ես սուս ու փուս դուռը փակեցի և մյուս դռնից փախա գընացի դուրս, որ ինձ նորից թուրքը չտանի։

Հիմա գանք մորս։ Աքսորի ժամանակ, երբ մեզ ուղարկեցին որբանոց, նրանց տանում են մինչև Դեր Զորի անապատը։ Դեր Զորի անապատում թուրք ոստիկանները թողնում են հայերին և փախնում։ Հայերը մնում են անպաշտպան։ Այդ անապատում արաբները բոլորին կողոպտում են, իսկ շատերին սպանում են։ Նրանք մնում են սոված և ծարավ, անգամ գետնին խոտ չի եղել, որ ուտեն։ Նրանք մնում են առանց հացի և ջրի, մոտ քառասուն օր։ Այդտեղ քրոջս արաբները փախցընում են, և մայրս այլևս նրան չի տեսնում, իսկ հորաքրոջս էլ կորցնում է, և այդպես գնում են ամեն մեկը տարբեր կողմեր, որ հաց և ջուր ճարեն։ Վերջապես, շատ գնալուց հետո հասնում են մի գյուղ և այնտեղ ջուր են գտնում. ուզում են ջուր խմել, գլուխները մնում է ջրի մեջ, որովհետև արևից վառված են եղել։ Տեղի գյուղացի արաբները խելքի են գալիս և անմիջապես հեռացնում են ջրի մոտից, շարքի կանգնեցնում, ջուր են բերում, մի բաժակ և մի կտոր էլ խաղող։ Բաժակով տալիս են մեկ կաթիլ ջուր և մի գիլա խաղող. բոլորին այդպիսով նրանք վարժեցնում են, որ չուտին։ Հետո կըսեն՝ գնացե՛ք, խմե՛ք, ինչքա՜ն կուզեք։ Գյուղացիները այդտեղ հայերին բաժանում են տների վրա՝ ծառայելու, մայրս էլ ծառայում է։ Մի օր խազայինը ասում է մամայիս, թե այս թաղում մի հայ էլ կա, կուզե՞ս ծանոթացնեմ, արի՛, գնանք։ Գնում, տեսնում են, որ հորաքույրս է, բայց չեն ցույց տալիս, որ բարեկամ են և մի օր, գաղտնի, գիշերով փախչում են Ուրֆա։ Այնտեղ ջուլհակություն են անում, փող հավաքում և որոշում են գալ Մալաթիա՝ մեզ գտնելու։ Գալիս են որբանոցի այդ ծանոթ կնոջը հարցնում՝ ի՞նչ եղան իմ տղաքը։

Ան կըսե՝ մեկը կա, մյուսը՝ հիվանդ էր, մեռավ, տարին թաղելու, մեկալը՝ առողջ էր, բայց մեռածին քովը քնած էր, անոր ալ բռնեցին ողջ-ողջ տարին թաղեցին մեռածի հետ...

Մենք ոտքով եկանք Արաբկիր։ Ես հայերենը բոլորովին մոռացել էի։ Մեզ բռնեցին բանտ տարին, ըսելով, թե դուք աքսորից փախել եք։ Հետո ազատեցին։ Մեր տունը քանդել էին, դարձրել հողին հավասար, միայն մնում էր այգին իր ծառերով։ Մենք գնացինք իմ մեծ մոր տունը և հոն մնացինք, բայց հոն ալ թողեցինք ամեն ինչ և տեղափոխվեցինք այլ թաղամաս։ Արդեն ես դարձել էի տասներկու տարեկան։ Ես դպրոց գացի, միայն առաջին դասարան և դուրս եկա, որովհետև մայրս դպրոցի վարձը չկարողացավ տալ։ Հետո ես գնացի աշխատելու։ Ջուլհակություն սովորեցի առանց փողի. ուտելիք և հագնելիք կուտար մի-

այն։ Այսպիսով, ես վեց տարի աշխատեցի և սովորեցի, որից հետո ինձ տարին Թուրքի զինվոր. ես արդեն 18 տարեկան էի։ Արաբկիրից դուրս եկանք գնացինք Խարբերդ, վեց օր մնացինք հոն, դուրս եկանք, գնացինք Դիարբեքիր, որը Տիգրանակերտ հայկական քաղաքն է։ Այնտեղ նորից ութ օր մնացինք, հետո մեզ տարին Մերդին քաղաքը։ Այնտեղ էլ ութը օր մնացինք. բոլոր տեղերը ոտքո՛վ էինք գնում, մոտ ամիս ու կես քայլում էինք. ինձ հետ կային չորս հոգի հայ, մնացածները Թուրք էին՝ մոտ 300 հոգի։ Մենք՝ հայերս, պայմանավորվեցինք, որ հայերեն չխոսենք, որ Թուրքերը չիմանան, եթե իմանան, մեզ նեղություն կուտան։ Երբ պիտի նստեինք գնացք, նորից Թուրքերեն էինք խոսում, նրանք կարծում էին, որ մենք էլ Թուրք ենք, և մեր վրա վագոնի դուռը չփակեցին։ Մենք որոշ գաղտնիքներ սովորեցինք ճանապարհին, որ գնացքները պետք է կայնեցնեն Միսլումիյայի կայարանը, որ Հալեպի կողքն է։ Նույն գնացքը մեր վագոնը Թողեց և շարունակեց ճանապարհը դեպի Հալեպ։ Երբ վերադառնար Հալեպից, մեր վագոնները պետք է միացներ և մեզ տաներ մի ուրիշ քաղաք։ Այն ժամանակ հայ ընկերներով խորհուրդ ըրինք, որ գնանք ճաշարան-վագոնի տիրոջը խնդրենք, որ մեզ պահի։ Բայց ճաշարանի պետը մեզ համոզեց, որ եթե մեզ պահի, մեզ կբռնեն, նորեն կտանին ետ. երկու տարի պետք է ծառայենք. «Ձեր զինվորությունը ըրեք, հետո գացեք ձեր տները»։ Մեր տղաները համոզվեցին, որ ճիշտ է։ Գնացինք մեր վագոնը։ Սիրտս հանգիստ չէր նստում։ Ջրի աման մը ունեինք, ես առի, վագոնեն դուրս Թռա։ Երկաթգծի ճամփով գնացի, մի բակ տեսա, երկու երեխա խաղում էին, մի մարդ էլ նրանց հետ հայերեն էր խոսում։ Երեխաներին առավ, ներս տարավ։ Ես մտածեցի, որ այստեղ հայ է բնակվում։ Մտա ներս, տեսա այդ տունը նաև խանութ է։ Բարև տվի հայերեն, նրանք էլ բարև տվին, հարցրին.— Որտեղացի՞ ես։

Ես ասի.— Արաբկիրցի եմ։

— Մի արաբկիրցի բերենք, կճանաչե՞ս։

— Բերե՛ք, որ տեսած ըլլամ՝ կճանչնամ։

Այդ ժամանակ մի տղա բերին. ես անոր տեսել էի դպրոցում։ Ճանաչեցի։ Անմիջապես նա սկսեց հարցուփորձ անել։

Ես ասացի.— Ո՛ւշ է, մեզ տանում են Թուրքի զինվոր, միայն իմ փախնելու մասին մտածիր։

— Հապա ո՞նց անենք, եթե դուրս գաս գյուղից, հայ բանվորները Հալեպից եկեր են և ճանապարհ են սարքում, միայն եթե խառնվիս նրանց հետ, այդ ժամանակ կազատվիս։

Ես ասացի.— Ցո՛ւյց տուր ճանապարհը, որ գնամ։

Նա էլ ցույց տվեց։ Ես իմ ձեռքի եղած ջրի ամանը նետեցի մի կողմ և գնացի։ Բավական գնա-

լուց հետո լսեցի, որ ինձ կանչեցին. ետ դա
նայեցի, որ ինձ է կանչում և ասում է.— Սի
ես գնում։

Ես ասացի նրան.— Դու մի հարյուր մետր
ռավորության վրա գնա, ես քեզի նայելով
գամ, այնպես որ ո՛չ ոք չի իմանա։

Տղան համոզվեց և գնա՛ց։ Գնաց, ինքը՝
ռաջից, ես էլ՝ ետևից։ Վերջապես գյուղ մտա
ես վազեցի հասա նրան և ասացի.— Ես պրծ
մնացին մյուս ընկերներս, որ գտնվում են վա
նում։ Երբ մենք հասանք, նա ասաց բանվորներ
որ ես արաբկիրցի եմ, հայ եմ, փախել եմ Թու
զինվորությունից։ Նրանք էլ ասացին. «Թող ն
տի վրանի մեջ, մինչև սայլապանները գան»։
գնացի նստեցի, բայց մտածում էի, որ ընկեր
րիս դրությունը վատ կլինի, եթե նրանք էլ
փախնեին։ Այդ մտածմունքիս մեջ մեկ մըն ալ բա
վորները ինձ կանչեցին.— Արի՛, հեռվից մար
գալիս, այդ ո՞վ է։

Ես ասացի.— Կարող է իմ ընկերներից են։
իսկապես որ իմ ընկերներն էին։ Այդ ծանոթս
նացել կայներ էր երկաթգծի վագոնների կող
Երբ նրանք տեսնում են, որ ես ուշացա, ասում
երևի փախավ։ Իջնում են վագոնից և տեսնում
այդ մարդուն։ Նա էլ կանչում է իր մոտ և հար
նում՝ ո՞րտեղացի եք։ Նրանք ասում են, որ
րաբկիրցի են։ Շուտով նրանց էլ է բերում իմ ճա
փով։ Այդպիսով բոլորին էլ փախցրեց ու բեր
ինձ մոտ, և մենք շնորհակալություն հայտնեցի
նրան։

Մենք արդեն բոլորս էլ փախել ենք և վրա
մեջը նստած ուրախանում ենք։ Այնտեղի բանվո
ները մեզ ասացին, որ հիմի կուգան սայլապա
ները և մեզ կտանին։ Ես գիտեի, որ մի արա
կիրցի սայլապան կա։ Սայլերը եկան և,
ռաջին սայլի վրա նստած է իմ ծանոթը։ Ե
ինձ տեսավ, Թռավ սայլից ու եկավ փաթաթվ
իմ վիզը։ Նրան ասացի, որ փախել եմ։ Նա
տոպրակ տվեց, թե՝ տարեք, կերեք. ինչ ըլլա
չէինք իմանում։ Բաց արինք, տեսանք, որ մե
երեք կոպեկանոց հացերից էր և չի կերանք, քան
որ կուշտ էինք. փաթաթեցինք և դրինք մի կող
Ջանցավ հինգ րոպե, նորից կանչեցին ինձ դուրս
Տեսնեմ նույն ծանոթ սայլապանը այդ տոպրակի
մի քանի հատ էլ տվեց, ես տարա։ Հետո ինձ ա
սաց.— Վե՛ր կաց, սայլին նստիր։

Դա ուրիշ սայլ էր և սայլապանին էլ ասաց
Որ հանկարծ բռնեն, ինչ գնով լինի, կազատես
ցույց կուտաս մեր տունը, որ գնա։

Ես էլ այդ ժամանակ հարցրի.— Ինչո՞ւ ես մե
նակ գնամ, հապա ընկերնե՞րս։ Նա էլ ինձ պա
տասխանեց.— Դու գնա, որովհետև ման են գա
լիս, որ բռնեն ու տանեն, ես նրանց կբերեմ։

Ես նստեցի այդ սայլի վրա և գնացի։ Երբ հա
սանք Հալեպ, դարբասի դուռը բացվեց, ոստիկա-

նը դուրս եկավ և հարցրեց, թե որտեղի՞ց ենք գալիս։ Սայլապանները ասացին, որ մենք քար ենք տարել ճանապարհ սարքելու և ետ ենք դառնում։ Հրամայեց՝ անցե՛ք։ Մենք արդեն անցա՛նք Հալեպ քաղաքը։ Սայլապանը ցույց տվեց իմ ծանոթի տունը։։ Ինձ որ տեսան, արդեն ճանաչեցին և սկսեցին պատրաստություն տեսնել։ Մե՛կ սպասեցինք, երկո՛ւ սպասեցինք, տեսանք, մարդ չի գալիս. արդեն մութն ընկել էր։ Մտածեցի՝ իջնեմ ցած։ Այն ժամանակ ընկերներս վեր բարձրացան։ Ես մտածմունքի մեջ ընկա. գուցե՝ գնամ Ֆրանսիա, այնտեղից էլ՝ Հայաստան։

Ես մարդ գտա, որ ինձ պասպորտ հանեն, Պոլիսի վրայով գամ Հայաստան։ Թուրքը ինձ վիզա չի տվեց, քանի որ փախել էի Թուրքիայից։ Նորից մտածմունքի մեջ ընկա։ Որոշեցինք, որ Պարսկաստանի վրայով գամ Հայաստան, բայց իմ ունեցած դրամը արդեն չի բավարարեց։ Հաշվինք, տեսանք, որ իմ դրամը ինձ կհասցնի Պարսկաստանի Գերմանշահ քաղաքը, նրանից դենը այլևս չէի կարող գնալ։ Ես որոշեցի՝ կմնամ այդ քաղաքում, կաշխատեմ, դրամ կհավաքեմ և հետո կըգնամ Թավրիզ։ Իմ պասպորտս դուրս եկավ, և մենք մուծեցինք ավտոյի փողը մինչև Գերմանշահ։ Երբ հասանք Գերմանշահ քաղաքը, մենք բոլորս էլ գնացինք հյուրանոց։ Ընկերս հյուրանոցում իր իրերը դասավորում էր, իսկ ես՝ դուրսը բալկոնում կանգնած մտածում էի, թե ի՞նչ պիտի անեմ. ընկերս պիտի գնա, իսկ ես պիտի մնամ։ Այդ մտածմունքիս մեջ՝ իմ ետևից խփեցին ուսերիս։ Ես շուռ եկա, որ տեսնեմ՝ ո՞վ է։ Տեսա մի հայ մարդ։ Նա ինձ հարցրեց.— Ո՞ւր ես գնալու։

Ես ասացի.— Ո՛չ մի տեղ չեմ երթալու, ես պիտի մնամ այստեղ։

Այդ մարդը ինձ ասաց.— Դուն Հայաստան պիտի երթա՞ս։

Ես ասացի.— Հայաստան պիտի երթամ՝ ոչ հիմա. ես փող չունեմ։ Պիտի մնամ այստեղ, փող շահիմ և հետո՝ գնամ։ Այդ մարդը ինձ ասաց.— Դրա համա՞ր ես մտածում։ Ես ներքևից նկատեցի, որ շա՛տ ես մտածում, դրա համար եկա քեզ մոտ հարցնելու, ինչքա՞ն դրամ ունես։

— Ինձ մոտ վեց թուման փող կա։

Այդ մարդը ինձ ասաց.— Չե՞ս իմանում, որ այստեղ թուրքերը հայերին գործ չեն տալիս. հայերին մունդառ են համարում, ի՞նչ պիտի անես այստեղ. հայ էլ չիկա, եղած հայերն ալ մի քանի հոգի են։

Այդ ժամանակ իմ գլխին կարծես տաք ջուր լցրին։ «Ուրեմն ես կորա»,— մտածեցի. ո՛չ փող ունիմ ետ գնալու և ո՛չ էլ փող ունիմ առաջ գնալու։

Ադ մարդը ինձ ասաց.— Արի՛, քեզ մի խորհուրդ տամ, արա։ Այստեղ կա մի տաճկահայ, նա ունի իր տրամադրության տակ երեսուն ավտոմեքենա, իր սեփականն են, ամեն օր մեկը Գերմանշահից գնում է Կազմվին քաղաքը, իսկ մյուսը՝ գալիս է ետ։ Դու գնա՝ խնդրիր, որ քեզ դնի մի ավտոմեքենայի վրա և ուղարկի Կազմվին, Կազմըվինից քո ունեցած վեց թումանով կարող ես հասնել Թավրիզ։ Այնտեղ քեզ հայերը կօգնեն։

Առավոտյան վեր կացա, գնացի, այդ մարդուն խնդրեցի, որ ինձ ուղարկի։

Նա իր մեքենայով ինձ տարավ Կազմվին քաղաքը, այնտեղեն ալ՝ Թավրիզ։ Թավրիզեն ալ եկա Հայաստան։ Մերոնց գտա։ Ամուսնացա, ընտանիք կազմեցի, զավակներ ունեցա։ Հիմա աղջիկս՝ Գրետան, կենսաբանական գիտությունների թեկնածու է...

## 48(264).
## ՅՈԶՂԱՏՑԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՐՇԱԿՈՒՀՈՒ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1903 Թ.)

Ես փոքր էի։ Հիշում եմ, մի օր մի դալալ եկավ, սկսավ պոռալ.— Ով մինչև 15—16 տարեկան զավակ ունի՝ թող պատրաստվի։

Իրարանցումը սկսավ։ Լրին, դրին, հավաքվեցին։ Մորքուրս ալ մի դուռ անդին կապրեր, ան ալ իր չոչուխներով միացավ մեզի։ Լուսամուտները գոցեցինք, տունեն դուրս ելանք, հագած-կապած, գիտես քի քեբաբ ուտելու կերթանք կոր։ Արաբաները բերին, մեզի մեջը լեցուցին։

Վեց օր գացինք Յոզղատի սարերը։ Ջուր չկա, հաց չկա։ Ժողովուրդին բերանը կչորնա...։ Մեկ էլ մի ձիավոր էկավ, ըսավ.— Գյավուրլար ա՛ֆ գելդի սիզե (Գյավուրնե՛ր, ձեզ ներում շնորհվեց)։

Մեր հայ միամիտ կնիկները սկսեցին ձիուն սմբակները համբուրել, ուրախացան, որ ներել են մեզի։ Բայց ժողովրդին մեջ լուր ընկավ, որ մեզ տանելու են մորթելու. մեզմե առաջ մի խումբ տըղամարդկանց տարին։ Կսպասենք՝ ե՞րբ մեր հերթը պիտի գա։ Արդեն գիշերները մութին մեջ աղջիկներուն կփախցնեն, տղաներուն իբր բանակ կտանեն... քի՞մ, քի՞մե (ո՞վ ո՞ւմ տերն է)։

Դու մի ըսեր, ասոնք հրաման ունին, քի հեռու տեղեր մեզ տանին, աչքե հեռու՝ մորթեն։

Տանո՛ւմ են, տանո՛ւմ, ոչխարներու պես մեզ տանո՛ւմ էին։ Մեկ էլ տեսանք մեր ետևեն արյունոտ, ծեծված, խոշտանգված, կողոպտված հայեր եկան մեզ մոտեցան, ըսին.— Վա՜յ, երանի ձեզի հետ գայինք,— ու սկսան լալ...

Ժանդարմները վրա հասան, սկսան պոռալ, կանչել, մեզ իրարմե հեռացնել։— Իրար մի՛ խառնվեք,— կպոռան։ Աղ հայերն ալ մեզմե բեթեր. անոթի, սոված, վեց օր քայլել են և ալ՝ ծեծվա՞ծ, վիրավո՞ր...

Աղ իրարանցումին մեջ մեյ մըն ալ մի սև ամպ եկավ մեզի ծածկեց։ Ժանդարմները մեզ կորցրին։ Մենք աղ հայերուն սկսանք օգնել. ով ինչով կրնար՝ պատառ մը հացի փշրանք, կա՛մ խոտ կուտայինք, կա՛մ հագուստնիս կպատռեինք անոնց վերքերը կկապեինք։ Չէինք մտածում, որ վաղը մեզի ալ աղ օրին պիտի ձգեն աղ անխի՛ղճ, անաստվածնե՛րը...

Սև ամպերը մեզմե հեռացան, ժանդարմները նորեն իրենց գործին անցան. մե՛կը խրբաչով, մե՛կը շղթայով կմխթեն, որ առաջ էրթանք...։ Մեզ տարին Թուրքի տուներու մեջ մտցուցին, իբր պիտի հանգստանանք։ Գիշերը մեզ վրա հարձակվեցին։ Դուռները հանեցին, սիլահներով մեր վրա էկան։ Մամայիս շորերուն մեջը ոսկիներ կային կարված, առին տարին, ինչ որ կար մնացած՝ մեզի թալանեցին, մորե մերկ ձգեցին... Ծիածանը, Շամրիկը, Օսաննան, ես ալ պզտիկ աղջիկ՝ ամենս գացինք մուրացկանության։ Մեր ունեցածը չտանեին նե, գոնե կծախեինք, մի կերպ կապրեինք... Շամրիկը շատ անոթի էր, քանի օր բերանը բան չէր դրել. մի տուն էր գնացել, տեսել էր Թուրքի կնիկը յուխա է էփում, աղջկա սիրտը կուզե։ Շամրիկին կուտան, ան տաք-տաք կուտե, կուրծքերը կուռին, տեղն ու տեղը կմեռնի...

Մեկ ալ դալալ մը եկավ, ըսավ.— Հայդե՛, գյավուր քեսմեյե գիդեիմ, բալթա-քյուրեգ ալայըն, գյավուր քեսմեյե գիդեիմ (Շտապե՛ք, գյավուր մորթելու պիտի գնանք, կացին-բահ վերցրեք, գյավուր մորթելու գնանք)։

Միտքս կուգա նե, սիրտս կկանգնի...

Աղտեղ թուրքական գյուղ մը կար։ Թուրք կընիկները էկան, լացին մեր վրա էնենց, ոնց որ առջևնին մեռել կա դրված։

Աղ վիրավոր հայերուն մորթելե առաջ անոնց շորերը վրանեն հանեցին, որ մեջը կարված ոսկիները իրենց մնան։ Թենեքեները լցվել էին ոսկիներով...

Աղ վիրա՛վոր հայերուն տարին մորթեցին. մեզմե քիչ մը անդին՝ ձորին բերանը, հայերուն որ կմորթեին, թուրքերը գալիս ոսկի էին փնտրում մորթվածների վրա...

Մի հայու աղջիկ կար, Արշալույս էր անունը։ Ան երկար մազեր ուներ հյուսված։ Արշալույսը շատ աղվորիկ էր, անոր ալ տարին վիզը կտրեցին, մազն ալ ձեռքին փաթթած էկավ ժանդարմը, բերավ մեր առջև գցեց Արշալույսին գլուխը, ըսավ.— Յա՝ թուրք պիտի ըլլաք, յա՝ ասոր պես պիտի ըլլաք։

Մենք կուլանք, կուլա՛նք..., մեկ կողմեն ալ՝
կդողանք։ Բոլորս ալ կնիկ, աղջիկ, լոջուխ ենք, ս
ջերնիս տղամարդ չիկա. երկու տասնյոթ տարեկ
մանչեր կան անոնց ալ դենգերուն տակ պահած
որ չգտնան։

Լա՜ց, կո՜ծ... աստված յարդըմ ընե, է՜յ, Թու
ալահդան բուլսուն, ալլա՜խ թուրք (Աստված օ
նական լինի, է՛յ թո՛ւրք, աստծուց գտնես, ստ
թուրք)։

Մեյ մըն ալ նայինք, քի մենծ զաբիթներ եկա
սկսան խոսիլ մեզի հետ՝ արդեն անուշությունով
Քույրիկնե՜ր մայրիկնե՜ր, խնդրում ենք ձեզ ս
վոր մտածեցեք, քի թուրք պիտի ըլլա՞ք, թե՞
Դուք լսեցիք մորթվողների մասին։ Կուզե՞ք անո
պես ըլլալ։ Ավելի աղեկ չէ՞ դուք ալ թուրք ըլլս
թե՝ չէ ձեզի ալ պիտի մորթենք։

— Վա՜յ, իմամ էֆենդի,— ասաց մորաքո
րըս,— ինչ դժվար բան ըսիք մեզի, գիտե՞ք։

— Է՜, մայրիկ, դո՛ւք գիտեք։

Մորաքույրս մեր ձեռքերեն բռնած կտանի
ռան վրա աղոթելու. «Ամա՜ն, Աստվա՜ծս, մե
փրկե...»։

Օր մըն ալ աղ իմամը նորեն եկավ.— Նե՞ գյ
շունդունիզ մի. թուրք օլաչաքսընը՞զ սըն (Ի՞նչ
տածեցիք, թուրք պիտի դառնա՞ք)։

Մորաքույրս նորեն սկսավ խոսիլ.— Դինդ
դյոնմեսի ղոլա՞յ մը (Հավատքը փոխելը դյուր
է)։

— Ղոլայ դեյիլ, ամմա, ջանըն քուրթարմ
իուչյուն՝ ղոլայ դըր (Դյուրին չէ, բայց հոգին
զատելու համար՝ դյուրին է)։

Մորաքույրս շատ բեջերիքլի էր, չքաշվեցա
նորեն ըսավ.— Խնդրում ենք մեզի մի քանի
դահա ժամանակ տվեք։

Երևի իմամին խոշին գնաց մորքուրիս համա
ձակությունը և մաքուր թուրքերեն խոսիլը,
սավ.— Հա՛, կտամ, կերևա որ շատ հավատ
կսիրես, ես ներում եմ. դինդեն դյոնմեսի զ
դըր, հելբե՛թ, հայդե՜ (Հավատքից հրաժարվե
իհարկե, դժվար է, դե՜)։

— Զոք ղուրբան օլայըմ սիզե (Շատ շնորհ
կալ եմ ձեզ)։

Մորաքույրս հե՛մ կխոսի կոր հե՛մ կուլա կ
ուրախութենեն*։

Աղ ձևով ալ մենք երկու-երեք ամիս հոն մն
ցինք։ Հետո լսեցինք, որ ինչքան հայ աղջիկ
մնացած, պիտի տանեն։

Պապայիս ու հորեղբորս անկյար էին տար
Պապաս վիրավորվել էր, ընկել էր հիվանդան
Հետո դուրս էր եկել, հորեղբորս հետ ճամփա ը
կել՝ մեզ գտնելու։

Բայց ճանապարհին պապաս, սաստիկ հյո
ված ըլլալով, չի դիմանար, ճամփին կմեռնի.
րեղբորս ամանաթ կուտա իր պայուսակը, մեջը

---

* Պատմողը ևս սկսեց սաստիկ լալ։

ժամացույցը, կըսե.— Տա՛ր, տա՞ր մերիններուն՝ թող ծախեն, դրամ ընեն, ապրվին։

Հորեղբայրս բերեց հորս ժամացույցը, տվավ մորս։ Մենք իմացանք, որ հայրս մեռած է. սկսանք լալ, ողբալ։ Հորաքույրս ողբ հյուսեց, սկսավ երգել, լսողին սիրտը կծակծկվեր, կլսեինք, կուլայինք...

Հետո հրաման էլավ՝ ո՛ր թուրքի տանը գյավուր քըզը իլան գյավուր օղլան վար՝ վերեջեգսինիզ (թուրքի տանը գյավուրի աղջիկ կամ գյավուրի տղա կա՝ պիտի տաք)։

Իրիցկին մը կար, տասնյոթ տարեկան տղա մը ուներ. մինչև ադ ժամանակ գաղտնի պահած էր։ Թուրքերը գտան, տարին, մորթեցին։ Իրիցկինին աղջկան ալ թուրք զաբիթ մը փախցուց, տարավ իրեն կնիկ ըրավ։ Իրիցկինը կուլար, կողբար, կուզեր ադ թուրքին ձեռքեն գոնե աղջիկը ազատի...

Մի օր ալ տեսանք մեր ծանոթ աղջիկներեն մեկը՝ Ֆիլորը, վրան-գլուխը արյուններուն մեջ, հագուստները բզիկ-բզիկ էկավ մեր մոտը։ Պատմեց, որ իրենց աղջիկների խումբին բոլորին մորթել են, ինքը դիակների տակից, լերդացած արյունների միջից վիրավոր վիճակով, հազիվ դուրս է պրծել, մի կերպ եկել է մեզ գտել։ Լալով ըսավ.— Ոտքերնիդ պագնեմ, եկե՛ք ամենքս փախնենք, հիմա ձեզի ալ կմորթեն...

Եվ իսկապես հետո սկսան աղջիկներին փախցընել, կնիկներին տանել մորթել, չոջուխներին գլուխները կտրել, գնդակի պես ասդին-անդին նետել... Ֆիլորի մորն ալ տարին մորթեցին։ Մեկն ալ երեխան գիրկը, մորը վիզը կտրել էին, չոջուխը մեռած մորը կուրծքը ուտելով ապրել էր, ամմա անոր գլուխն ալ ֆուտբոլի գնդակ ըրին։ Մի չաղ Ասանեթ կար, համամին սաբաբն էր, անոր ալ ցցի վրա նստեցուցին, բանգը՛ր-բանգը՛ր կպոռար. ադանկ ալ մեռավ...

Վերջը նորեն մորաքույրս մեզի ազատեց։ Ան շատ աղվոր դերձակուհի էր։ Ժանդարմի կնիկին հագուստները ինքը կկարեր։ Մորաքույրս խնդրեց անոր, որ ըսե ամուսնուն, որի անունը Շյուքրի էֆենդի էր, որ ան մեզի խնայի... Մեկ ալ տեսանք ժանդարմ մը էկավ՝ ձիու վրա նըստած, ըսավ.— Էստեղ գյավուրներ կային, ո՞ւր են։

Մենք վախենում ենք ձայն հանել։

— Մի՛ վախեցեք,— ըսավ ան։

Մայրս և մորաքույրս հազիվ ձայն տվին։

— Բիզ իք (Մենք ենք)։

— Քո՛րքմայընըզ,— ասաց ժանդարմը,— սահաթ բիրի բեքլեինիզ բենի (Մի՛ վախեցեք, ժամը մեկին ինձ սպասեք)։ Դու մի ըսեր, ադ ան թուրք կնկա ամուսին Շյուքրի էֆենդի ժանդարմն է։

Գիշերը ժամը մեկին ամենքս՝ մորաքույրս, մայրս, մորաքրոջս տղան, ես, պզտիկ քույրս հագնվեցանք, սպասեցինք ժանդարմի գալուն։

Ան եկավ, ձին կայնեցրեց.— Հազը՞ր եք։

— Հազը՛ր ենք։

Ձիուն վրա նստած ինքը մեզ ճամփա ցուցունելով մութի մեջ կերթանք, ամա կվախնանք, որ մեզ կբռնեն։ Մեկ ալ շուն մը սկսավ հաչել։

— Ալլա՛հ, սեն պահապան օլ (Աստվա՛ծ, դու պահապան եղիր)։ Գնացինք, գնացինք։ Բոլորիս ժանդարմը տարավ մի գյուղ, տունի մը առաջ, դուռը խփեց, ներսեն կնիկ մը ելավ։

— Բունլար քի՞մ (Սրանք ովքե՞ր են)։

— Բենիմ ադամլար դըր (Իմ մարդիկն են)։

Մեզ տեղ տվեցին, իրար քով կծկվանք, իբր պիտի քնանանք, ամմա ո՞վ կքնանա։ Առտուն էլանք։ Նորեն ճամփա ելանք։ Ոտքով, քալե՛, քալե՜՝ չվերջանար...

Վերջապես ժանդարմը մորս ըսավ.— Աստեղ պիտի իջնաք։

— Շա՛տ գոհ ենք, Շյուքրի էֆենդի,— ըսավ մայրս...

Վեց ամիս էր անցել, տուներնիս ձգած էինք անտեր։ Եկանք, տեսանք դուռները, պատուհանները կոտրված, ապակիները փշրված, քյուփերը կոտրված։ Ամեն ինչ փշրված, միայն տուներնիս կա։ Ադ ալ մե՞ծ բան էր։ Մորս տասներկու երեխեքից միայն երկուքս ետ եկանք, մյուսները մեռան ճամփին՝ սովից, ծարավից։ Կհիշեմ պզտիկ քույրս, որ մեռավ. ջուր ուզեց. ջուր չկար։ Բերնեն փրփուրներ էլավ, մեռավ։ Հետո ալ տունին մեջը կհիշեինք ադ տեսածներնիս, կսոսկայինք մեր տեսածներեն...

Տարիներ անցան, մեծացանք, ամուսնացանք, տուն-տեղ եղանք։ 1921 թ. թուրք չեթեները Յոզղատ էկան։ Ամուսինիս բանակ տարին։ Պզտիկ տղայիս շորերը վրաս կապեցի, գնացինք Մյուտանիա։ Քույրս ալ մեզմե առաջ գնաց Բուրսա։ Մի նամակ առի մարդուցս, գրել էր. «Արշակուհի, հո՛ն մնա»։ Արդեն մորաքույրս, հորաքույրս հոն էին։ Մենք ալ փող ունեինք։ Աֆիոնեն, Կոնիայեն, բոլոր տեղերեն մարդիկ եկել էին Իզմիր։ Եկեղեցին բերնեբերան լիքն էր։

Առաջնորդը մորուքը ածիլել փախել էր։ Առաջնորդարանի հինգ դռներուն առջևը թուրք զաբիթներ կեցած էին, եկեղեցիներուն քամբանաները կըզարկեն կոր. օգնությո՜ւն կկանչեն ամեն կողմեն։ Հինգ աղջիկներ՝ անգլիացի, ֆրանսիացի, իտալացի, ամերիկացի, դանիացի, ճակատնին կարմիր խաչի նշան կապած, մայրերուն, չոջուխներուն վիրավորներուն կօգնեին։ Ժողովուրդը ի՞նչ ընելը չէր գիտեր։

Իզմիրը վառվո՛ւմ էր... Ծովեզերքը վառվում էր ալեֆներուն մեջը...

Մարդիկ ինչ ընելնին շվարած էին...։ Աղջիկներին տոպրակներու մեջ էին դնում, որ չփախցը-

նեն...։ Անա՜-բաբա՜ գյունի էր[1]։ Թուրքը մի բան տեսավ՝ կուզեր ձեռքեդ առնել, թալանել։ Մեկը էկավ մատնիս ուզեց խլել։ Ես հեմեն բուլղուրի տոպրակը կռնակս առի, մամաս ալ մանչուն՝ Միհրանին գրկեց, յալլա՜, գնացինք մտանք ֆրանսական դպրոցը, քիչ մը շունչ առինք...։ Ժողովրդին քշել էին նավահանգստի կողմը։ Նավահանգստի մոտ ոմանք ջուրն էին նետվում, լողալով գնում հասնում էին օտար շոգենավերուն շուլլըվում-պըլըլվում, վեր էին բարձրանում, որ հոգինին ազատեն, ուրիշ երկիր հասնեն...

Իսկ ովքեր ջուրը ինկած էին, կլողային, ցամաքեն անոնց վրա եռացա՜ծ ջուր էին բաց թողնում։ Վերջը կրակը եկավ մեր կեցած ֆրանսական դպրոցն ալ լափեց, անտեղեն դուրս վազեցինք... ո՞ւր վազենք... ամե՜ն կողմ կրակներու մեջն էր...։ Ով փող ուներ, ով կրցեր էր, մտեր էր անգլիացիներուն հյուրանոցը։ Ադ հյուրանոցն ալ այնքա՜ն լցվել էին, որ պահակը ալ ոչ մեկին ներս չէր առնում.— Նո՛,— կըսեր փեզեվենգը... Դուռը չէր բացեր։ Մենք սկսանք լեզու թափել, չգիտցած անգլերենով՝ չաթ-փաթ, պզտիկ Միհրանիկը կցուցընենք, կըսենք՝ մեղքցե՜ք մեզի, նե՜րս առեք։ Վերջը հինգ ոսկի տվինք, մեզի ներս առին հյուրանոցը, ան ալ համար-սենյակ բոլորը լիքն են, հո՛գ չէ, բաբա՜մ, սենյակ չե՛նք ուզում, միայն հոգիներնիս ազատել կուզենք... ինչ որ է. մեր կյանքը փրկեցինք։ Մեր տված ոսկինները տարել են ամերիկյան դեսպանատուն են տվել։ Հատուկ նավակ բերեցին, մեզ մեջը նստեցրին, տարին Միդիլլի։ Սպասում ենք նավին գալուն։ Մեկ ալ լսեցինք հույները կպոռան.— Էրքեթե՜ (Ծկա՜վ)։

Շոգենավը եկավ։ Մյուսները տոմս ունեն, մենք՝ չունենք...։ Հրաման ելավ.

— Ով տոմս չունի՝ մի կողմ քաշվի...։ Մենք մի կողմ քաշվեցինք։ Ամերիկյան ժանդարմները շղթա կազմած կանգնած են, ոչ մեկին չեն թողնում...։ Գնացի մեծին քովը՝ խնդրեցի։ Ես ջահել էի, չոջուխը՝ գիրկս։ Տեսավ՝ մեղքցավ։ Տասը ոսկին ձեռքես առավ, տոմս տվավ մեզի։ Բարձրացանք նավը։ Փիրեյա հասանք։

Մի բան չունենք հագնելիք... փոքր երեխան գիրկս։ Մայրս գնաց Փիրեյայի փողոցներուն գետինը կավլեր, մենք հարդի վրա կքնանայինք՝ չադըրին մեջը...

Երեք տարի մի կերպ ապրեցանք, առանց տղամարդու, վերջը թերթի միջոցով սկսանք փնտրել մեր հարազատներուն։ Եկեղեցիի պատարագի ժամանակ քահանան կհայտներ՝ ո՛վ որ երկրումն է։ Մենք ալ իմացանք, որ մեր տղամարդը Սուրիայումն է...

Ան ալ եկավ մեզի գտավ... Ինչե՜ր էր տեսել, ինչե՜ր էր անցուցեր... աքսորականներուն հետ մինչև Եփրատ էր հասել, տեսել էր շատ սրտաճըմլիկ բաներ. կպատմեր։ Մայր մը Դեր Զոր երթալու ճամփին Եփրատի ափին կթողնի իր զավակին, որ մեկը գա՝ տանի, բայց սիրտը չըլլար, ետ կուգա կտեսնա, որ երեխան սոված-ծարավ ավազի հետ կխաղա, կվերցնե կտանի իր հետ Դեր Զոր, որ իր հետ մեռնի։ Ուրիշ դեռ շա՜տ բաներ...։

Վերջը մենք անցանք Աթենք, հոն հայկական թաղամաս մը կար. ֆիքսը կապրեինք։ Տղաս մեծցավ, 1947-ին եկանք Հայաստան։ Հազիվ տղանուս ամուսնացուցինք, տուն-տեղ պիտի ըլլայինք մեր սիրելի Հայրենիքին մեջ, 1949 թվականին, գիշեր մը եկան մեզ առին տարին...։ Մենք՝ բանե բեխաբար, չենք հասկանում ո՞ւր են տանում, ինչո՞ւ են տանում, դու մի ըսեր՝ մեզի Սիբի՜ր են տանում...

Յոթը տարի ալ հոն մնացինք, թոռնիկներս հոն ծնվեցան։ Վերջը եկանք Նոր Մարաշում հողամաս տվին։ Ջունի-չիկայով տուն շինեցինք, մեջը մտանք...

Հորաքույրս տղա մը ուներ։ Ան Իզմիրի փախփախի ժամանակ Ամերիկա էր անցեր։ Հիմա լավ դիրքի է։ Տղայիս նամակ է գրել, կանչում է մեզի...

Ամեն օր տուներնուս մեջը ըսի-ըսավ կա՝ Ամերիկա պիտի երթանք ըսելով...

Ամա՜ն, յավրո՛ւմ, ո՞րը ըսեմ, ո՞րը խոստովանվիմ։ Իմ գլխուս եկածը էփած հավին գլուխուն անգամ չի գար...

## 49(265).
## ԿԵՍԱՐԱՑԻ ՊԱՅԾԱՌ ԵՐԿԱԹԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1887 Թ.)

Ծնվել եմ 1887 թ. Ջոմախլույում, որը Կեսարիայի գյուղերից էր։ Մայրս տասնչորս տարեկան ամուսնացել էր և երկու երեխա ունեցել, որոնք մահացել էին։ Ինձ վրա շատ կդողային։ Մամաս հմայիլներ անցուցեր էր վիզս, որ չմեռնիմ։ Ահա թե ինչու, երբ հայրս՝ Հակոբ Գալֆան, պանդուխտ է գնում, քսանհինգ օրվա ճամփան ոտքով, ձիով կանցնին, ինձ ալ՝ իննը ամսական, հետերնին կտանին Կ. Պոլիս։

1896-ին Կ. Պոլսի հայերի կոտորածը սարսափելի եղավ։ Վերեն վար բոլոր հայերուն մոր-

1 Թուրքերեն բառացի թարգմանվում է՝ մայրիկ-հայրիկի օր (իմա՝ թոհ ու բոհ)։

թում էին։ Ազգային գերեզմանատանը բլուր մը կար. մորթվածներուն, մեռածներուն, նետվածներուն դիակներեն կազմված բլուր մըն էր։ Մենք մի ազգական ունեինք, այդ մեռածներուն տակեն ելած էր, ողջ մնացած էր. եկավ մեզ պատմեց. ինչե՞ր տեսան այս աչքերը, ինչե՞ր լսեցին այս ականջները։

1907 թ. ամուսնացա, Ադաբազար գնացինք։ Այնտեղ ինձ մոտ մի աղջիկ եկավ, թե՝ քեզի Կըրթասիրաց միություն պիտի տանիմ։ Հագված, շըքված գնացի. անմիջապես ընտրեցին ատենապետ, իսկ տիկին Զաբել Կարազյանը արդեն ընտրված էր նախագահ։ Այնտեղ ինձ խնդրեցին պիեսներ գըրել ու բեմադրել։

Արդեն ընդհանուր պատերազմին եղբայրս Թուրքական բանակ կանչված էր, իսկ 24 տարեկան բժիշկ եղբայրս թիֆով հիվանդացավ, մեռավ։ Աշխարհը փլվեց գլխիս։ Անոր կորսնցուցի, ես ալ խելքս կորսնցուցի։

Հայրս մի Թուրք հավատարիմ բանվոր ուներ, եկավ թե.— Գիդեջեգսինի՞զ (Գնալո՞ւ եք)։

1914-ին առտու մը խոր քնից զարթնեցի եկեղեցու զույգ զանգերի ձայնից. լսելով այդ զանգերի ղողանջները, զարմացա։ Իմ սենյակի լուսամուտից երևում էր այն նրբանցքը, որով գնում էին տեղի Ս. Կարապետ եկեղեցին։ Տեսա տղամարդիկ շտապում էին ժողովի՝ լուռ ու մտահոգ. եկեղեցին լցվեց, դուռները գոցվեցան։ Դռնփակ ժողովը տևեց մինչև կեսգիշեր, ոչ ոք իրավունք չուներ դուրս գալու։ Կանայք լաց ու կոծով ուտելիք էին տանում եկեղեցիի մեջ բանտարկվածներին։ Իբր ժողովի կանչեցին, երեք օր վերջը միայն դուրս եկան։ Ջեթե Իբրահիմի հրամանն էր այդ։ Հայ տղամարդիկ դուրս էին գալիս արյունլվա, քիթ-բերաննին ծեծված, վիրավոր, ոտքերնուն եղունգները քաշված, ուրիշները կիսամեռ, պատգարակի վրա՝ անշունչ։ Ամբողջ քաղաքը ահ ու սարսափի մեջ էր։ Հրաման կար ութ օրվա ընթացքում զենքերը հանձնել կառավարությանը։ Ռումբա շինողը հայ Խորեն Երեմյանն էր։ Վա՜յ նրան, եթե որևէ մեկը զենք ունենար իր մոտը։ Կառքերը գնում էին բեռնված, լցված զենքերով, որոնք ժամանակին պահվել էին զգուշությամբ։ Շուկան փակ էր։

Ամուսինիս ալ կանչեցին եկեղեցի։ Խորանի առջև նստած այդ չեթե Իբրահիմը հարցրեց՝ զենք ունի՞ք։ Մենք ալ զենքը թաղած էինք հողին մեջը։ Հողին մեջեն կամաց մը հանեցի, դրի իրենց սունդուկին մեջը. մարդիկ տարին զենքը։ Ջեթե Իբրահիմի մոտ ես ալ գնացի մորս հետ։ Ջեթեն խամշիյով զարկավ մորս, ես ալ անոր վրա փռվեցա, որ ինձի հասնի հարվածը, եկանք տուն։ Արդեն սկսված էր աքսորը։ Անատոլիայի գյուղերեն ըսկըսել էին տեղահանել հայերին։ Մենք հույս ունեինք, որ մեզ չեն հանի։

1915 թ. օգոստոսին տուն-տեղ, այգի թողինք, ընկանք անշրդի անապատները։ Ձիավորները խարազաններով քշում էին անտեր, անտիրական, խեղճ հայերուն։

Ութը օրվա մեջ պարպվեցավ Ադաբազարը։ Գյուղերեն իջավ թուրք խուժանը, սկսավ թալանը, տարին հայերի ունեցվածքը։ Խլում էին իրար ձեռքե ամեն ինչ՝ ուտելիք, հագնելիք, զարդեղեն, ամանեղեն, նստարան, տախտակամած, առաստաղ. խլում էին իրար ձեռքե ինչ որ կար։ Մեր տան դիմացը Թուրք մը կապրեր։ Օր մը եկավ մեզ ըսավ.— Դուք կմնաք, աքսոր չեք գնա, քանի որ զինվոր ունիք Թուրքական բանակում ծառայած և մեռած։ Ես մի ընկեր ունեմ, թող գա ձեզ օգնի։

— Աղեկ,— ըսինք։

Մեկ էլ տեսանք, այդ նույն Թուրքը, մեկ ալ ուրիշ Թուրք մը, դուրսը հայ աղջիկ մը բռնաբարել են. դուրսը աղմուկ-ճվճվոց մը։ Ես որ գլուխս դուռնեն դուրս հանեցի, Թուրքը ինձ տեսավ, ամչցավ, ըսավ.— Դուն իմ տունս կուգաս, ես քեզ կփրկեմ,— բայց անոր աչքերը յըլը՜ր-յըլը՜ր կփայլեին, վախցա, չգնացի, ամուսինս ալ չիկա։

Մենք ութը օր ետքը պատրաստվեցանք, որ էրթանք։ Արաբան, որի մեջ պիտի տեղավորվեինք, թերս դարձավ, մամաս արաբայի տակը մնաց, թևը կոտրվեցավ։ Այդպես ցաված ձեռքով, անձրևի տակ հասանք Արիֆիե։ Մեզմե առաջ գացողները արդեն տեղավորվել էին, մենք դուրսը մնացինք անձրևի տակը։ Ես խնդրեցի.— Գոնե մամայիս տեղավորենք, ձեռքը կոտրված է,— բայց իզուր։

Հետո մեզ տարին Էսքիշեհիր, որտեղ հավաքված էին զանազան հագուստներ հագած, զանազան բարբառներով խոսող հայեր։ Էսքիշեհիրեն ալ Կոնիա պիտի տանեին մեզի։ Մեր գույքերը հանձնեցինք։ Այդտեղ հանդիպեցանք Սուքիասյանների տղային, որը երկաթուղու պաշտոնյա էր։ Ան Ադաբազարից ինձ կճանչնար, մեր հավաքույթներին կուգար։ Ադ տղան մեզ սաաց.— Ձեր գույքերը ե՞տ վերցրեք։

Այդտեղ մի կնիկ ալ եկավ, որը ևս ըսավ.— Զինվորի ընտանիքները պիտի մնան, աքսոր չպիտի գնան։

Ես մորս կխնդրեմ.— Մամա՜, էլի՛ր, գնա՜, խնդրի՛ր։ Մայրս երեսի վրա պառկած, թևի ցավից տառապում է։ Ըսավ.— Ջե՛մ ուզեր, ամենն ալ մի շուն են, որո՞ւն էրթամ խնդրեմ։

Ես ճարպկություն ունեցա մեր գույքերը գընացքից վար նետեցի։ Մամաս գնաց խնդրեց Ջեմել բեյին։ Ան ալ կըսե.— Ինձի համար ավելի արժե բանակում քո զոհված զավակը, քան ապրող մի զինվորը։ Գնա սենյակ մը բռնե, ժանդարմներուն գրասենյակին քովը, որ ձեզ չտանջեն, քանի որ տղադ ծառայած էր Թուրքական բանակում։

Մենք հոն սենյակ մը վարձեցինք։ Աղեկ կհիշեմ այդ տունը։ Թավանը՝ ցածր, բայց պատուհանեն հրապարակը կերևար։ Ես այդ պատուհանին առջևը նստած կտեսնայի, թե ինչպես Պոլիսեն էսքիշեհիր բերին մեր հայ մտավորականներուն՝ Զոհրապին, Վարուժանին, Սիամանթոյին և ուրիշներուն, անտեղեն ալ Դեր Զոր պիտի տանեին։

Ասոնք բոլորն ալ քոլալը յախա-քրավաթով էին, բայց արդեն վրայի հագուստները գզգզվել, պատառ-պատառ էին եղել։ Ամեն գիշեր մենք լըսում էինք նրանց աղեկտուր ձայները, քանի որ անխղճորեն ծեծում էին նրանց։ Ես Դեր Զոր չեմ գնացած, բայց ամեն ինչ տեսած եմ։ Բոլորին ալ, որ եկած, անցած են էսքիշեհիրեն, որ բերին անոնց Պոլիսեն՝ հեյլաք եղած, բոբիկ, արյունլվա ոտքերով, ծվեն-ծվեն հագուստներով։ Քանի մը օրեն ասոնց քշեցին, տարին...

Մամաս հաջորդ օրը շուկայեն խաղող առավ, տարավ անոնց, որ ուտեն։ Մեր քովը խան մը կար, եկող գաղթականները հոն կլեցնեին։ Ցածր առաստաղով, լի ճանճերով, փոքրիկ տեղ մըն էր, հոն լցրել էին երեխաներին, որոնք երկաթե վանդակին ետևեն կուլային՝ խղշտանգված, դալկահար, մերկ ու անոթի մանուկներ՝ մի պատառ հացի համար ձեռքերնին մեկնած... Մինչև այսօր չե՞մ կրնար մոռնալ այդ խանը։ Վա՜խ, յավրիկներս, մարդ արարածը ինչպես այդ օրին էր հասցրել ձեզ։ Երկու օր հետո անոնց ալ քշեցին, տարին։ Ո՞ւր։ Աստված գիտե։ Այդ խեղճ պզտիկներուն ոչխարի գառնուկներու պես քշեցի՞ն, տարի՞ն։ Ետքը ավելի մեծերը բերին. 18—20 տարեկան հայ տղաներ բերին, նոր գաղթականներու նոր քարավաններ։ Անոնց ալ չորս օր բանտարկված պահեցին՝ ո՛չ հաց, ո՛չ ջուր. իրավունք չկար դուրս գալու։ Մի տղա մի կերպ դուրս գալ ուզեց, որ ջուր խմի։ Պահակ զաբիթը բռնեց, սկսավ վրան պոռալ.— Գյավո՜ւր, ինչո՞ւ ես էստեղ,— ու սկսավ մտրակով ծեծել։ Տղան՝ անոթի, ծարավ, ցավեն կպոռար. օգնող չկար...

Օր մըն ալ խանին առջևը բերին երեսուն հոգիանոց պոլսեցիներու խումբ մը, որոնց առաջնորդում էին երկու ժանդարմներ։ Մարդիկ կերպարանափոխված էին, վայրկյան առ վայրկյան պատրաստ գլորվելու, ուզում էին մի բան ասել անցորդներին, բայց մտրակը վրա էր հասնում, անոնց մեջն էր նաև մեր հայ երգի ներդաշնակող Կոմիտասը...

Խանի առջև Անկարայից աքսորված կիներ ու երեխաներ, իսկ այնտեղ ուր ձիերն են կապում և ձիերի կեղտն է կուտակված, մարդիկ կծկվել էին. մեկը՝ հեծեծում էր, մյուսը՝ հառաչում... այս այն մարդիկն էին, որ հանդիպել էինք...։ Նրանք երեք օր ճամփա քալող, հուսահատ մարդիկ էին, որ մի պատառ հաց ու ջուր էին աղերսում հայացքով, ցավատանջ գալարումներով օրորվում էին խոջաբըլըխի խանին մեջը։ Մայրս առավոտը երկու տոպրակ ուտելիք տարավ անոնց, որպես իր տղայի հոգու հացը։ Որդեկորույս մայրերի լալահառաչ վայնասունը, ցավատանջ գալարումները աննկարագրելի էին...

Երկու օր հետո այդ անտեր կանանց ու երեխաների քարավանը ևս ճամփա հանեցին։ Անկարայում սպանել էին անոնց ամուսիններուն և որդիներուն։ Ժամանակին հայերու լեզուն կտրած էին, որ հայերեն չխոսին, անոր համար Քյոթահիայի, Բուրսայի, Ադանայի, Կեսարիայի, էսքիշեհիրի հայերը անիծյալ լեզուն էին խոսում։ Ասոնք պիտի գնային Կոնիա, Էրեյլի, Բոզանդի մինչև Դեր Զոր։

Կերթա ու կերթա ցավի քարավանը,
Թուրքը հեգնում է հայու ցավը,
Կերթա, կերթա լուիկ ողբալով,
Անանուն ցավեր լի տանջանքներով,
Արյուն ոտքերով նա կանցնի սարեր,
Նոթի ու ծարավ կիջնի մութ ձորեր,
Արձագանք կուտան լեռներ, հովիտներ,
Ընկած զոհերի տխուր հեծյուններ,
Եվ սակայն կերթա՜, կերթա՜ քարավանը...

Քանի՝ որ մեր տունը ժանդարմ կոմանդորի մոտն էր, այս բոլորը տեսնում էինք։ Դրա համար էլ տուներնիս փոխեցինք, ուրիշ տուն մը վարձեցինք՝ կամուրջին քովը։ Արդեն ամուսինս ալ հիվանդանոցը կաշխատեր և պայուսակը ուսը գցած վրաններուն տակի հիվանդներուն դեղ կբաժներ որ իրեն ալ աքսոր չտանեին։

Մի օր, երբ գնացել էի հայոց թաղը, տեսա մռայլ են բոլորը։ Այդ մարդիկ նստած էին տանը ու իրար հետ խոսում էին փսփսուքով, նկատվում էր, որ վախենում են։ Թաղեոս էֆենդին շատոնց մոռցեր էր էֆենդի ըլլալը. ան կառապան էր դարձել ու լսել էր, որ Իբրահիմ էֆենդին կառքի մեջ նստած իր բարեկամին ըսեր էր. «Վաղը պիտի հայերուն սպանեն, ջա՞րդ պիտի ըլլա»։

Կեսգիշերին մեյմըն ալ ատրճանակները ըսկըսան փա՛թ-փա՛թ կրակել։ Ես ալ, երկու չոջուխները ձեռքիս, եղբորս հիշատակ ջութակը բռնած, դուրս փախա։ Դու մի ըսեր, այդտեղ հրդեհ կա եղեր, խանութները վառվում էին. Թուրքերը մտել թալանում էին։

Մեյ մըն ալ լուր եկավ, որ ամուսինս՝ Արմենակը, բռնված է. դեղատնից կայարան են տարել տասը հոգու հետ։ Ի՞նչ պիտի անեմ՝ չգիտեմ։ Ծրար մը պատրաստեցի, չորեր-խմորեղենով, գնացի կայարան։ Տեսա փշալարերի ետևում են. ժանդարմները հսկում են ու չեն թողնում ո՛չ մեկին մոտենալ։ Փորձեցի մոտենալ, ներողամիտ ժպիտով ըսի.— Կուզեմ ամուսնուս հետ խոսիլ։

Ժանդարմը ըսավ.— Դուք իմ պոռալուս մի՛ նայիք, ես երբ ան կողմը երթամ, դուք մոտեցեք

խոսեցեք, ես ալ ընտանիքի հայր եմ, ես ալ երեխաներ ունեմ։ Արյուն է գնում սիրտես, երբ տեսնում եմ ձեր վիճակը։

Այնպես որ, թուրքերուն մեջն ալ լավ մարդիկ կային։ Մի՞թե ազգության մեջն է ճշմարիտ մարդը։

Արմենակին մոտեցանք, ան նույնիսկ ժպտում էր երեխաներին, հակառակ որ գիտեր, որ իրեն մորթելու են տանում։

Ժանդարմը եկավ մոտեցավ ինձ, ասեց.— Գընացեք, խնդրեք. կարող է ազատեն։

— Մայրի՛կ, շո՛ւտ գնա Ջեմալ բեյի մոտ, խնդրիր, գուցե փրկենք Արմենակին։

Մայրս նորեն էլավ գնաց Ջեմալ բեյի մոտ, որն արդեն թուրքական զինվոր եղբորս մահը գիտեր։

Ջեմալ բեյը կլսե մորս խնդրանքը, որ իր փեսան հիվանդանոցը կաշխատի, դեղագործ է, ժողովրդին պետք մարդ է։

Ջեմալ բեյը կըսե.— Ամենքին ղրկում ենք՝ դեղագործ մը մեզ պետք է,— թուղթ մը կուտա, որ անոր ազատեն։

Արմենակը եկավ։ Բայց տյուֆյուզ վարակված էր, ընկավ անկողին։ Սառը փաթաթում էինք գըլխին, շատ կաթ էինք խմցնում, անընդհատ լողացնում էինք՝ ազատվեց։

Անցավ երկու տարի։ Արդեն կախաղան էին բարձրացրել Խորեն Երեմյանին, որպես բոմբա պատրաստող։ Ամենքը մի կողմի վրա էին փախել. մայրը էսքիշեհիր էր մնացել, աղջիկը՝ տաճիկն էր տարել։ Մյուսները մտածում էին հարցուփորձով գտնել իրենց կորցրած սիրելիներին։ Մենք ալ ընտանիքով տեղափոխվեցինք Կ. Պոլիս, հետո ալ 1923 թ. գրահանավով՝ Եգիպտոս, ուր բավական շատ հասարակական գործունեություն եմ ծավալած, բեմադրելով մի շարք թատերգություններ, հրատարակելով իմ գրած բանաստեղծությունների ժողովածուն։ 1948 թ. Եգիպտոսից եկանք Հայաստան։ Տղաս՝ Միհրան Երկաթը, դարձավ օպերայի՝ սիրված ժողովրդական արտիստ, աղջիկս՝ Մարին, դարձավ ասեղնագործության ու կարուձևի վաստակաշատ ուսուցչուհի։ Նրա ցուցահանդեսները բազմիցս ցուցադրվել են և՛ Հայաստանում, և՛ այլ երկրներում։ Ես ալ 102 տարեկան եմ, փառք Աստծո, խելքս գլուխս է։

## 50(266).
## ԿԵՍԱՐԱՑԻ ՍՎԱՃՅԱՆ ԱՐՍԵՆԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1901 Թ.)

Պապայիս զինվոր տարին։ Մենք օլուխ-չոջուխ զինվորականի ընտանիք ենք ըսելով, մեզ գյուղեն աքսորեցին։ Ջամիի մը մեջ կոխեցին, իբր դպրոց պիտի տանեն մեզի, բայց բոլորին ալ ըսպանեցին, մեզի ալ սյունեթ ըրին՝ թուրքացուցին։ Ոնց եղավ, հայրս զինվորութենեն փախավ, եկավ մեզի գտավ, փախցուց տարավ, բայց իրեն Սվազի ճամփուն վրա սպանեցին. մեր ընտանիքեն տասներկու հոգու կախաղան հանեցին։ Եղբայրս քանի տարեկան էր, չգիտեմ, քույրս երկու տարեկան էր, ես մեծցուցի։ Հետո հայեր եկան մեզի տարին, անոնք շապինգարահիսարցի էին. ով որ մեզ կմոտենար, մենք կվախնայինք, վախերնես. «Մենք թո՛ւրք ենք» կպոռայինք։

Ադ շապինգարահիսարցի տղաները մեզ մեջտեղ հանեցին,— Հա՞յ են,— ըսին։ Մեզ Կեսարիո որբանոցը տարին, հետո ալ՝ Իզմիր. բոլորս չորս հարյուր հոգի էինք։ Չորս հայ հարուստներ մեզ կպահեին։ Օր մը Անդրանիկ զորավարը եկավ մեզի տեսնելու։ Հարց ու փորձ ըրավ, տեսավ չորս հարյուր որբի համար ճաշ կեփվի, փայտե գդալ մը առավ՝ «Կեցի՛ր, մեյ մը համը տեսնամ» ըսավ։ Տեսավ, քի տունին ճաշեն ավելի համով է, ուրախացավ։ Դարձավ մեզի ըսավ.— Տղե՛ք, լավ կերե՛ք, շիտակ կեցե՛ք, մեծցե՛ք, Հայաստանը փըրկեցե՛ք։

1922-ին, Իզմիրի աղետին, քեռիիս սպանեցին։ Ամենուն ծովը թափեցին։ Մենք ալ ամերիկյան կոլեջն էինք։ Ամենքիս ալ Կորֆու կղզին տարին։ Հոն կոշկակարություն սորվեցա։ Հետո մեր որբանոցի խոհարար «Մայրիկը» որդեգրեց ինձ, իր տունը տարավ, անոր թոռնիկին՝ Մելինեին հետ ալ ամուսնացա։ Հետո Հունաստանում տուն-տեղ եղանք, ան ալ քանդեցինք, եկանք Հայաստան։

## 51(267).
## ՇԱՊԻՆԳԱՐԱՀԻՍԱՐՑԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄԿՐՏԻՉԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1907 Թ.)

Մեր Շապին-Գարահիսարի Քեչեյուդ գյուղում մարդիկ դաշտահի վրա թաղիք էին գործում։

Օր մը էկան բոլոր աշխատող հայ տղամարդկանց ջոկեցին, տարին՝ ջամիներ սարքելու։ Հետո ալ եկան մեր մայրերին ու քույրերին տարին Ջարայի Ղավախլու գյուղը։ Ժանդարմները մորակ-

ներով անասունների պես քշում էին բոլորին. Ծերերին, ովքեր չէին կարողանում քայլել, գլուխները մտցնում էին ոտքերի արանքը, կապում էին ու գլորում Ջարայի ձորը... Պապիկիս կացնով սպանեցին։ Անտեղեն մեզ տարին Կայաբաշ ըսված բաց տեղը՝ մեծ քարի դոշին...

Հյուսեին անունով Թուրք ժանդարմ մը կար, հետը ուրիշներ ալ կային, սկսան ունեցած-չունեցածնիս մեր վրայեն թալանել, աղջիկներուն մեր աչքի առաջ բռնաբարել, հղի կիներուն փորերը ճղել, չծնված մանուկները հանել իրար նետել։ Մեկը՝ մի աղջիկ տարավ, մյուսը մի տղա տարավ. ի՞նչ գտան՝ տարան։

Ինձի տանող Թուրքը ինձ քնացրեց իր խանութին մեջը։ Հարցուցի.— Ո՞ւր են իմ մայրն ու հայրը։

Ձեռքով ցույց տվեց վիզը, թե՝ մորթել են։ Էդ մարդու տանը տեսա մեր վերմակը, ուրեմն մեր տունը թալանողը էդ մարդն էր։ Մտածեցի փախնել։ Գիշերը փախա։ Գնացի հրապարակը, ուր շատ հայեր կային հավաքված, ըսի.— Ինձի ալ հետերնիդ տարեք աքսոր։

Միտքս հորս-մորս գտնելն էր։ Մարդիկ ինձ պահեցին արաբայի մը մեջ, վրաս ղազան դրին, որ շունչ կարենամ առնել։ Անցանք Դալղոս (Տավրոս) գետը։ Դիվրիկ հասանք, շա՜տ հեռու՝ Վանի մոտ, ուր Եփրատն ու Տիգրիսը իրար էին միանում։ Հոն հայ աղջիկները պար բռնելու պես իրար ձեռք բռնեցին, Դիվրիկի ձորով Եփրատ գետը նետվեցին, որ իրենց չբռնաբարեն։

Էստեղ ոնց էղավ մի Թուրք ինձ առավ, էշու վրա նստեցուց, աչքերս կապեց, հոն յոթ ջաղացք կար, էնտեղից տարավ։ Տարավ, աչքերս բացեց։ Տարավ իր գյուղը, իր տունը։ Անոնց ծառան դարձա։ Թուրքացա։ Հոն հանդիպեցի մեր գյուղի Սիրարփիին, ըսի.— Ես քեզի կփախցնեմ։

Մենք մահից չէինք վախենում, մենք Թո՛ւրքից էինք վախենում։ Երեք օր ու գիշեր սալոմների մեջ մնացինք, դաշտերում իրար արցունքներ լիզելով, հատիկներ ուտելով, ապրեցանք։ Ջուր չիկար, դիմացանք։ Մեզ եկան բռնեցին, տարին մեր աղաների տունը։ Այծերը կարածեի։ Օր մը այծերը ցորենը կերել էին, աղաս գլուխս ծնկների արանքը խոթեց, սկսեց ծեծել, ես ակռաներով իրեն կծեցի, ինքնապաշտպանությունը՝ լա՜վ բան է։

1919 թ. մի մարդ եկավ իր եղբորը փնտրելու, ինձի տեսավ, ըսավ.— Դուն կերթա՞ս Սեբաստիա։

— Այո՛, կուզեմ երթալ։

Աղայիս խնդրեցի.— Ես չորս տարի աշխատել եմ, աղա՛, ինձի ազատիր։

— Աղաս ըսավ.— Կազատեմ. հագուստներդ պիտի հոս թողնես։

Գնացի Սիրարփիին ալ ուզեցի ինձի հետ տանել, չեկավ։

Մարդը ինձի տարավ հայկական որբանոց մտցուց, միս, այսինքն՝ օրիորդ Կուշմենի մոտը։

Հոնտեղ ինձ լողացրին, հագցրին, ոտքիս մատը ծուռ էր, ոտքիս կոշիկ չէր մտնում, ոտքս բուժեցին։ Հետո նոր միայն 1922 թ. հայերեն այբբենգիրը սորվեցա։ Ամուսնացա։ Ընտանիքի տեր դարձա։ Հայաստան եկանք։

## 52(268).
## ԾԱՊԻՆԳԱՐԱՀԻՍԱՐՑԻ ԹԵՐՋՅԱՆ ՀԱԿՈԲԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1910 Թ.)

Ես արդեն յոթանասունինը տարեկան եմ։ Շապին-Գարահիսարեն եմ ես։ Երբ կդիմադրեին Թուրքերուն, ոմանց ջարդեցին, իսկ մեզ նման երեխաներին տարին Թուրքին որբանոցը։ Մեզ մերկացրին, ծունկի բերեցին, սուրը դրեցին վիզերնուս։ Ջաբիթը սուրը քաշում էր, մոլլան՝ ասում. «Քրիստոնյայի հավատքը թողնում եմ, մահմեդականություն եմ վերցնում»։ Մեզ կրկնել կուտային ատ խոսքերը։ Բայց Թուրքական որբանոցի հայ տղաները բոլորն ալ հայերեն գիտեին։ Մեր դասատուն քսան-քսաներկու տարեկան մի սիրուն հայ աղջիկ էր։ Ատ աղջկա հետ մի Թուրք հրամանատար է ուզեցել ամուսնանալ, բայց ան երեք անգամ մերժել էր ու ըսել. «Բոք օլուր ըմ, Թյուրք՝ օլմա՛մ». այսինքն՝ կեղտ կլինեմ, Թուրք՝ չե՛մ լինի։ Հրամանատարը այդ որ լսել է, հանել է սուրը, մորթել է ատ մեր սիրուն դասատուին ու հրաման տվել.— Քանի որ բոք էր ուզում դառնալ, տարե՛ք, որբանոցի պետքարանը լցրեք անոր մարմնի կտորները։

Այդ որբանոցում մեզ դաս էին տալիս զինվորության, ասկյար ըլլալու մասին, իրենց կրոնի մասին։ Երեք տարի մնացինք Թուրքի որբանոցում։ Հետո ամերիկացին էկավ, որբանոցներուն տեր դարձավ։ Մեզ ալ բերեց Ամերիկա, լավ պահեց, մարդ դարձրեց...

## 53(269).
## ԹՈԽԱԹՑԻ ՄԱՐԻԿՅԱՆ ԱՆՆԻԿԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1892 Թ.)

*Մինչև 1915 թ. Թոխաթում էինք ապրում։ Տուն, տեղ, այգի, ծառ, ծառաստան ունեինք։ Բայց թուրքերը եկան, մեզ տեղահանեցին։ Նախ՝ բոլոր տղամարդկանց հավաքեցին, տարին սպանեցին։ Մեր ունեցած-չունեցածին եկան, տիրացան։ Ես երեք պզտիկ երեխայով մինչև Դեր Զորի անապատները քաշկռտվեցա։ Անո՛թի, ծարա՛վ, տաք արևի տակ։ Ամեն օր հիվանդությունեն հարյուրներով մարդիկ էին մեռնում։ Մեզնից խումբ-խումբ կհավաքեին, կտանեին ձորին մեջը թալթայով կմեռցնեին։ Քրոջս ալ իր երկու զավակներով տարին, սպանեցին ու փոսի մը մեջ նետեցին, բայց քույրս միայն վիրավորված է եղած. իր զավակներուն և ուրիշ դիակներուն տակեն սողալո՛վ-սողալո՛վ եկած, մեզի գտած է։ Ալ չգիտեինք՝ ուրախանա՞նք, որ քրոջս գտանք, թե՞ լանք, որ երկու զավակներուն կորցրեցինք...*

*Երեք տարի քրոջս և զավակներուս հետ Դեր Զորում քարայրի մը մեջ ապրեցանք, որ գոնե իմ երեք ձագուկներուս ձեռք չիտան։ Աստուծմե էր, որ հետս թել-ասեղ առած էի, թուրք զաբիթներուն կնիկներուն՝ հանըմներուն համար ասեղնագործություն կընեի, հագուստ կկարեի, որ ապրեինք։ Հետո, հետո արաբ մարդու մը ձեռագործ տվեցի՝ ան մեզի արաբայի մեջը դրավ, Պոլիս հասցուց, Պոլիսեն ալ անգլիական զրահանավով Եգիպտոս գացինք։*

*1947 թվին Հայաստան էկանք։ Բայց 1949-ին մեզի աքսորեցին Ալթայսքի քռայ[1]...*

## 54(270).
## ՍԵԲԱՍՏԱՑԻ ՍԱՐԳՍՅԱՆ ՍՈՒՐԵՆԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1902 Թ.)

*Մեր Խոշհիսար գյուղը գտնվում էր Սեբաստիա (Սվազ) քաղաքից 25 կիլոմետր դեպի արևելք։ Գյուղի միջով անցնում էր Սեբաստիա—Էրզրում (Կարին) գնացող ճանապարհը։ Հաճախ հյուրեր էին լինում մեր տանը՝ պապիս մոտ։ Ինչքան ես հիշում եմ, իմ պապերը բավական ազդեցիկ մարդիկ էին։ Ունեինք երկհարկանի մեծ տներ, ունեինք նաև ամառանոց, անասնապահական յայլաներ՝ Սախսար կոչված լեռան հովիտներում, մեր գյուղից մոտ 15—20 կիլոմետր վերև։ Երբ 1914 թվի օգոստոսի 1-ին սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, մեր գյուղի ժողովուրդը զբաղված էր բերքահավաքով, բայց մինչ այդ գյուղ հասնող հայերեն թերթերը վատ լուրեր էին հաղորդում։ Օգոստոսի 2-ին մունետիկները եկան մեր գյուղը, և մեր գյուղի գզիրը կտուրների վրայից սկսեց գոռալ. «էհէ՛յ, սեֆերբերլիք է (զորահավաք) .18 տարեկանից մինչև 45—50 տարեկան տղամարդիկ պետք է ներկայանան գավառական կենտրոն՝ Խոշհիսար (Հաֆըզ)՝ արձանագրվելու համար»։ Ես լավ հիշում եմ. ժողովուրդը խառնվեց, լաց, աղաղակներ՝ ամեն կողմ։ Նույն օրը արևը ուժեղ խավարեց, մոտ կես ժամ մթագնեց երկինքը։ Սա ավելի սարսափեցրեց գյուղի ժողովրդին...*

*Հոռետեսության զգացմունքը պաշարեց բոլորին։ Մեր գյուղի ճանապարհը դարձավ ավելի մարդաշատ՝ երկու կողմից էլ։ Մեկ-մեկ թուրք ոստիկաններն սկսեցին կամայականություններ անել, անցնող զինվորներն ուտելիք էին պահանջում կամ օրը ցերեկով մտնում էին գյուղ, չէին գնում գիշերելու շրջկենտրոն, այլ մեր տների վրա էին բաժանվում։ Մեր գյուղացիները դիմեցին առաջնորդարան, չորս ոստիկան նշանակեցին մեր գյուղին պահակ։*

*Երկու ամսվա վարժությունից հետո, թուրքական բանակները մեր գյուղի առաջով անցնում էին կանոնավոր, նվագախմբերով։ Թուրք հյուրերը գովեստով էին խոսում հայ զինվորների մասին, որ նրանք մարզանքը շուտ էին սովորում, զենքի տեխնիկային լավ էին տիրապետում և գովասանքի էին արժանանում հրամանատարության կողմից։ Անցան օրեր, նոյեմբեր-դեկտեմբերի ցրտերը և անձրևները զինվորների մեջ առաջացրել էին անկազմակերպվածություն, շատերը սկսել էին բանակից փախչել, դասալքվել։ Մեր գյուղից բանակ գնացողներից համարյա հիսուն տոկոսը փախել և եկել էին գյուղ, թաքնվել էին գոմերում կամ գյուղի մոտակա քարայրներում, ո՛չ հարցնող կար, ո՛չ էլ փնտրող։*

*Այսպես անցավ երեք-չորս ամիս։ 1914 թվի դեկտեմբերին հանկարծ գյուղում լուրեր տարածվեցին, որ էնվեր փաշան գալու է, և մեր գյուղացիները պետք է պատրաստեին ճանապարհը մեր գյուղի հողի սահմաններում, մոտ չորս կիլոմետր երկարությամբ։ Մի քանի օր հետո էնվերի շքախումբը եկավ և կանգնեց մեր գյուղի արևմտյան*

---

1 *Իմա՝ Ալթայի երկրամաս, որի սառցակալած տափաստաններն էին աքսորում ստալինյան կարգերի համար անբաղձալի քաղաքացիներին։*

ծայրին, երեք կառքեր՝ լծված չորսական ձիերով, երկու կողմերին՝ հետևից և առաջից, վեցական ձիավորներով շրջապատված, առաջից գալիս էր սեբաստացի Մուրադի տասներկու հոգուց կազմված հեծելախումբը։ Գյուղացիները շրջապատեցին շքախումբը։ Ես էլ գնացի մոտ՝ հատուկ Ենվեր փաշային տեսնելու։ Գյուղացիները աղ ու հաց բերին՝ Մուրադի ցուցմունքի վրա։ Էնվեր փաշան կանգնեց կառքի վրա, ընդունեց թեփսիով աղ ու հացը, գլխով շնորհակալություն հայտնեց ժողովրդին, որը շրջապատել էր իր շքախմբին։ Ես տեսա, թե ինչպես Էնվեր փաշան ափսեն վերցրեց և հյուրասիրեց իր շքախմբի անդամներին, բոլորին։ Էնվերի պատվին ձիարշավ կազմակերպվեց մեր հանդամիջյան ճանապարհով։ Ես տեսնում էի, թե ինչպես գնում էին ձիավորները դեպի Ալիս գետը։ Հանկարծ ժողովուրդը պոռթկաց. «Մուրա՞դը, Մուրադի՞ Պեգասս ձին շահեց մրցումը»։ Մրցող ձիավորները վերադարձան։ Մուրադը մոտեցավ Էնվերին, նա կանգնեց կառքի վրա, ժպտաց, բեղերը շտկեց, Մուրադի ձեռքը սեղմեց ու կոնակը շոյեց։ Ես կանգնել էի մի բարձր հողաթմբի, տասը քայլ հեռավորության վրա և նայվածքս հառել էի Էնվեր փաշային, ուշադիր նայում էի՝ հետաքրքրությունից մղված։ Ամեն ինչ լավ եմ հիշում, հէմիկվա նման։ Ծղանակը լավ էր։ Էնվեր փաշան հագել էր կիսազինվորական հագուստ, գլխին դրել էր ֆես, ոտքերին ուներ երկարաճիտ փայլուն սապոկներ, դեմքը կլոր էր, լայն, գեղեցիկ, համաչափ, միջակից բարձր հասակով, մի քիչ երկարած բեղերով, թավ հոնքերով և սև աչքերով։ Առաջին կառքի մեջ նստած էր Վեհիպ փաշան՝ իր օգնականներով։

Ջիամրցումից հետո Էնվեր փաշան կառքի վրա կանգնեց և տասը րոպե խոսեց հավաքված ժողովրդին։ Հիմիկվա նման հիշում եմ նրա խոսքերը. «Հայ զինվորները լավ կռվում են իրենց օսմանյան հայրենիքին համար՝ վաթանին համար։ Բոլոր ճակատներում, ամեն տեղ հայ բժիշկները և բուժքույրերը բուժում են մեր վիրավորներին։ Հայ զինվորներից շատերը լավ են տիրապետում ռազմական տեխնիկային, դրա համար շա՜տ շնորհակալ եմ ձեզանից։ Դուք էլ թիկունքում լավ աշխատեք, մեր բանակի սնունդը ապահովելու համար»։ Երբ նա իր խոսքը վերջացրեց, Մուրադը ձիու վրա մոտեցավ նրան և սեղմեց նրա ձեռքը։ Էնվեր փաշան Մուրադի կոնակը շոյեց և ցածր ձայնով մի բան ասաց նրան։ Սուլիչը փչեց, կառքերը շարժվեցին։ Էնվեր փաշան կառքի վրայից ձեռքը թափահարելով անհետացավ։

Այսպես անցան օրեր, ամիսներ և գյուղում բացառիկ ոչ մի բան չէր պատահել, միայն մեր գյուղացիները ոգևորվել էին, որ ռուսի զորքը շուտով կգա և կմտնի Սեբաստիա (Սվազ), բայց՝ իղ՞ւր. ռուսի զորքը չեկավ։ Միայն գերիներ եկան։ Մեր գյուղացիները հիասթափվեցին իրենց սին, անիմաստ հույսերից և հույզերից։

Մի օր երեխաներով գյուղամիջում խաղում էինք, հանկարծ, այս անգամ արևելյան կողմից՝ Կապանից, չորս կառքեր սրարշավ եկան և կանգնեցին գյուղամիջում՝ ճանապարհի վրա։ Ժողովուրդը վրա թափվեց իմանալու, թե՝ ի՞նչ է։ Ես էլ վազեցի։ Այս անգամ նույնպես երեք կառքեր՝ չորսական ձիեր լծված էին։ Մուրադի խումբը կանգնել էր կառքերից հետո՝ լուռ, տխուր։ Կառապանները ձիերի սարքերն էին կանոնավորում, ձիերին էին կերակրում։ Էնվեր փաշան էր վերադառնում Էրզրումից։ Նա շատ զայրացած տեսք ուներ. կատաղությամբ նայում էր ժողովրդի կողմը, ոչ էլ խոսում էր իր կողքինների հետ։

Ես անցա կառքերի ձախ կողմը մի հողաթմբի վրայից անվերջ նայում էի Էնվեր փաշային։ Նա ջղային շարժումներ էր կատարում նստած տեղը։ Աչքերը չռեց և նայեց ինձ ատելությամբ։ Ես սոսկացի նրա սև աչքերից։ Նա յափնջու մեջ փաթաթվեց, մի գազանային-սարսափելի նայվածք գցեց կանգնած ժողովրդի վրա։ Էնվեր փաշան առաջվա նման ո՛չ ողջունեց, ո՛չ մնաս բարով ասաց ու գնաց...։ Սեյֆեի խանում կանգնում են հանգստանալու։ Նա կանչում է Մուրադին և ասում՝ վերին աստիճանի զայրացած ու կատաղած. «Ձերոնք ա՛յ ինչեր են անում Կովկասում՝ ռուսի կողմը։ Մենք ի՞նչ ենք ստորագրել ձեզ հետ 1908 թվին և 1914 թվին՝ Էրզրումում։ Այդ բանը ձեր վրա թա՜նկ կնստի»։ Մուրադը բաժանվում է խմբից վիրավորված և շատ տխուր։ Նա ասում է, որ Էնվերը ինչ-որ կամավորների մասին էր բողոքել։ Քանի որ մեր գյուղը գտնվում էր Սեբաստիայից (Սվազ) դեպի Էրզրում գնացող ճանապարհի վրա, ինչ-որ կատարվում էր երկրում, իմացվում էր շատ շուտով։ Պոլիս գնալիս Էնվեր փաշան Սեբաստիա է հրավիրում վեց նահանգապետներին և հրահանգներ է տալիս նրանց. հայերին ինչպես կոտորել, ոչնչացնել. տղամարդկանց տեղում կոտորել, իսկ կանանց և երեխաներին՝ քշել դեպի Տավրոսյան լեռները, որից հետո՝ Արաբիայի անապատները. նրանց սովից, ծարավից, հոգնածությունից՝ բնաջնջել։ 1915 թվի մարտի վերջերին Սեբաստիայի նահանգապետը (վալին) իր մոտ է կանչում Մուրադին։ Մուրադը չի գնում, փախչում է լեռները. իմանում է նրա միտքը։

Մի առավոտ արթնացա, տեսա Մուրադը, 12 ընկերներով, մեր ամառային օդայում նստած ճաշում է. մայրս ճաշ էր հյուրասիրում նրանց։ Նրանք 10—12 օր մնացին մեր տանը ու հետո գնացին Խորոխոն գյուղի կողմը։ Ապրիլի 11-ին (24-ին) մայրս իմ առաջը խառնեց մի քանի հորթ և երկու էշի քուռակ, ես տարա գյուղից վերև՝ նախիրին խառնելու։ Հանկարծ մի ժանդարմ՝ քսան-քսանմեկ տարեկան թուրք տղա, իրանից մեծ մի հրա-

ցան ձեռքին, դեպի ինձ եկավ և հրացանը փորիս դեմ արավ։ Ես վախից շշմեցի ու լաց եղա։ Վերադարձա տուն, մորս պատմեցի եղածը։ Չգիտեմ նո՞ւյն օրը, թե՞ մյուս օրը, գյուղի մեջ գտնվող 10—12 ժանդարմներ, մեր գյուղի տերտերին (Տեր Ցուստոս կրոնական անունով)՝ Սարգիս Մազմանյանին, էշին հակառակ նստեցրած բերին մեր տունը։ Տնեցիներին կոպիտ դուրս վռնդեցին, բայց ես դուրս չգնացի, բանի տեղ չդրեցին ինձ։ Ես տեսա, թե ինչպես նալել էին տերտերի ոտքերը, գլխին տաքացրած երկաթե սաջ էին դրել, որը գլխի մազերը և մաշկը վառել էր, մորուքը փետրտված էր և ատամները քաշված էին։ Ոստիկանները գազանաբար խփում էին տերտերին։ Ծեծելով, բերին մորս, սյուների տակ փայտեր կիտեցին.— Այս տունը վառելո՞ւ ենք,— գոչում էին,— այս տան մեջ Մուրադի՞ն ես կերակրել, դու օրերո՞վ պահել ես նրա խմբին։ Այս տան տեր Արամ Սարգըսյանն իր ընկերների հետ մաուզերներով սա՞ր են բարձրացել։ Գնացե՛ք, բերե՛ք մաուզերները և նրանց տեղը հայտնե՛ք մեզ։

Մայրս երդում-պատառ էր տալիս որ ո՛չ մաուզերի մասին բան գիտի և ո՛չ էլ Մուրադի մասին. Ժանդարմներն անվերջ խփում էին մորս։ Մայրս լաց էր լինում ու նրանց ասում.— Արամ Սարգըսյանը քառասունչորս ոսկի բեդել է տվել, գնացել է սարը՝ մեր տավարը, ոչխարը պահելու։

Աբիգ Սարգսյան հորեղբայրս, որը գյուղի ռեսն էր, վազում էր այս ու այն կողմ, չէր թողնում որ ոստիկանները լուցկին վառեն ու մեր տունը կրակի տան, չէր թողնում, որ մորս խփեն։ Վերջապես փողի դիմաց մեր տունը չվառեցին, բայց խեղճ մորս տարան իրենց հետ։ Խեղճ մորս բռնաբարել էին ամբողջ գիշերը և մյուս օրը նրան մահամերձ բերին տուն։ Մենք երեխաներով լաց էինք լինում մորս շուրջը...։ Մյուս օրը Քնարիկ քրոջս տարել էին, նա շատ գեղեցիկ էր և նոր ամուսնացած, նրան էլ մորս օրն էին հասցրել..

Գյուղում ժանդարմները տաս-տասներկու երևելի մարդկանց հավաքել էին մի տեղ։ Տասը օր ծեծում, տաք երկաթներով վառում էին նրանց մարմնի մասերը, եղունգները քաշում էին, տաք ձվեր էին դնում նրանց թևերի տակ, ի՞նչ սարսափելի բաներ ասես չէին անում այդ սրիկաները։ Վերջապես նրանք այդ մարդկանց տարան իրենց հավաքած տասնյակ զենքերի հետ, ամիսներով չարչարեցին նրանց բանտում, հետո բերին մեր գյուղի առաջ գնդակահարեցին, երբ նրանք մահամերձ էին արդեն՝ ծեծից ու խոշտանգումից։ Մայիսի վերջերին ճանապարհները լրիվ փակվեցին, ինչքան անասուն կար՝ կնքեցին, տաք երկաթներով համարակալեցին, որպեսզի ճանաչվեին, որ հայերի ապրանք են։ Խիստ հրաման եղավ հայերի գույքին, ապրանքին ձեռք չտալ, միայն և միայն սպանել հայ տղամարդկանց՝ տեղն ու տեղը սպանել առանց խնայելու։

Կամաց-կամաց փոխեցին տեղական ժանդարմներին, նրանց տեղը Ալբանիայի կողմից գազանային կերպարանքով ժանդարմներ բերին։ Լուրեր տարածվեցին, որ արդեն Պոլսից լիազորված հատուկ մարդ է եկել՝ Սըտկը բեյը, որը միայն և միայն հայերին կոտորելու համար է եկել։ Մի օր ժանդարմները, Առնավուտ Հասան անունով ժանդարմի ղեկավարությամբ, հավաքեցին գյուղի 50—60 տղամարդկանց, նրանց թևերը կապեցին ու երեկոյան դեմ տարան գազանաբար սպանեցին։ Մյուս առավոտ գյուղ եկան, կերան, խմեցին ու գնացին՝ նրանց հագուստները ձիերի վրա բարձած...։ Մյուս օրը գյուղացիները գնացին, գտան նրանց դիակները՝ հոշոտված, այլանդակված, անճանաչելի դարձած։ Ոչ ոք իր մարդուն չի՛ գտնում, չի՛ ճանաչում։ Երկրորդ անգամ եկան, արդեն շատ քաղաքավարի, ըստ ցուցակի կանչում էին աչքի ընկնող մարդկանց. «Եկե՞ք, գնում ենք կամուրջներ, ճանապարհներ եք սարքելու, բա՞ն չիկա»։ Երեկոյան տարան. նրանց բոլորին սպանել էին Պուռնազի ձորում և դիակները ժայռից գցել էին ջուրը։ Մեր գյուղի տղամարդիկ վերջացան։ Այս անգամ սկսեցին բերել շրջկենտրոնի բանտի կալանավորներին։ Ոչ մեկի վրա կարգին դեմք չկար, որի՝ քիթը ջարդված էր, որի՝ աչքը հանված, ատամները թափված, ոտքը ջարդված, գլուխները ուռած, այլակերպ դարձած մարդիկ, որոնց օրերով, ամիսներով ծեծել, նալել, մսերը տաք երկաթով այրել էին, եղունգներն ու ատամները աքցանով քաշել։ Այդ կիսամեռ ուրվականներին բերին մեր գյուղի առաջով անցկացրին։ Վերջալույսի մոտ, նրանց կես ժամով նստեցրին մեր գյուղի առաջ՝ հուսալով, որ փող կշահեն...։ Մեր գյուղի ժողովուրդը վրա թափվեց. ամեն ոք իր մարդն էր փնտրում։ Ով գտնվում էր՝ փաթաթվում էր իր հարազատներին, մի չտեսնվա՞ծ վայնասուն-ողբ էր բարձրանում։ Լալիս էին կալանավորները, որոնց վրա ուժ չկար, հարազատները արցունքներն էին սրբում։ Ես նայում էի նրանց, չէի իմանում՝ նրանք մեռած էին, թե ողջ։ Նրանք գնացին հեծկլտացող կանանց ձայների և ոստիկանների հարայհրոցի, հայհոյանքների, մտրակների շաչյունների հարվածների տակ։ Գնացին՝ մութ ձորում, խարույկների լույսերի տակ որպես անասուններ մորթվելու։ Գնում էին բոլորը լուռ ու գլխահակ։ Գյուղը կարծես մթության մեջ ընդունեց մեռելային-գերեզմանային տեսք։ Լալիս ու հեկեկում էին մարդիկ, կանայք, երեխաներ։ Առավոտյան ժանդարմները եկան գյուղ՝ հավ, ոչխար մորթել տվին. մի լավ կերան, կշտացան, սպանված մարդկանց նոր, լավ հագուստները ձիերի վրա բարձած՝ գնացին։ Գյուղում հատուկենտ ծերեր մնացին միայն և 16-ից ցածր երեխաներ։ 5—10 օր հետո եկան,

մեկական սայլ ամեն մի դռան առաջ կանգնեցրին և հրամայեցին գյուղացի կանանց. «Ով ինչ ուզում է թող բարձի. գնում եք Արաբիա՝ այնտեղ ապրելու»: Ամեն ինչ երեսի վրա ձգած՝ տուն, տեղ, անասուն, գույք, ճամփա ընկանք: Ջտեսնվա՜ծ ողբերգություն. Դանթեի դժոխքը իջել էր գյուղի վրա: Երբ հասանք քաղաքի գլխավոր ճանապարհին, ծայր առավ քաղաքից եկող կառքերի, սայլերի և ձիերի եկող քարավանը, ծայրը մեզ էր հասել, մյուս ծայրը քաղաքից դուրս էր գալիս: Բարձրից երևում էր քաղաքը, Ալիս գետի վրայի Սենեքերիմ թագավորի կառուցած ամրակուռ կամուրջը: Մարդկանց, սայլերի, կառքերի խառնաշփոթ մի հեղեղ պատեց ամբողջ սարալանջը: Մարդիկ չէին իմանում, թե ինչո՞ւ է այս զուլումը, ո՞ւր էին գնում և ինչո՞ւ... Կանանց, երեխաների լացը, ողբը խառնվել էր ոստիկանների, զինվորների գոռգոռոցներին և լկիրշ հայհոյանքներին: Նրանք խփում էին կանանց, երեխեքին՝ աջ ու ձախ: Հանկարծ եկան 15—20 ձիավորներ, հրամայեցին՝ տարբեր կողմերից եկող բոլոր քարավաններին հավաքվել Ղարղաշլար սարի գագաթին՝ մի սարահարթի վրա: Նախ՝ զորքերը փռել տվին և սկսեցին փող հավաքել ժողովրդից:

— Է՜ հեյ,— գոռաց մի մարդ ձիու վրայից,— ո՞վ կալանավոր ունի քաղաքում բանտարկված, թող մեկ-երկու ոսկի բերի մարդագլուխ, վաղը ևեթ ձեր մարդիկ այստեղ կլինեն՝ ձեզ մոտ:

Կանայք սկսեցին փողեր բերել՝ տալով իրենց ամուսինների անունները: Մի ժանդարմ հսկա մի տետր ձեռքին, իբր թե գրում էր կալանավորի. անունը, թաղը, տարիքը և այլն: Մի քանի ժամում խուրջինը համարյա թե լցվեց փողերով: Երեկոյան նրանք խուրջինը բարձեցին ձիու վրա ու գնացին: Մյուս օրը, տասը ժանդարմներով շրջապատված, բերին մի խումբ մարդկանց՝ մոտ քսան-երեսուն հոգու: Բերին նաև նահանգում ճանաչված մեծահարուստ Խլխլիկին: Նա շատ գեր էր, նրան նստեցրել էին մի խոշոր սպիտակ իշու վրա: Ժողովուրդը վրա վազեց իրենց մարդկանց գտնելու հույսով: Ոստիկանները հետ քշեցին նրանց և մի շրջան կազմել տվեցին: Շրջանի մեջ ոստիկանապետը առաջինը կրակեց Խլխլիկի ականջի ետևին: Խլխլիկը փռվեց գետնին, արյան մեջ խռխռում էր և ցնցվում: Ոստիկանները քա՜հ-քա՜հ ծիծաղում էին, ժողովուրդը սարսափահար շշմել էր ու լռել: Հետո առաջ բերին մյուսներին, ամեն հինգ-վեց հոգուն իրար մեջք գրկել տվին և կրակեցին, հետո փայտերով նրանց գլուխներին խփեցին՝ մինչև որ նրանք անշնչացած պառկեցին, նրանց բոլորին շպրտեցին հեղեղատի մեջ, մի քիչ հող տվին վրաները ու գնացին:

Մյուս առավոտ, արևածագից առաջ, մեզ քշեցին դեպի հարավ, անցանք սարը: Մնա՜ս բարով հայրենիք՝ գնում ենք դեպի չարչարա՜նք, դեպի տառապա՜նք և մա՜հ՝ հետագայում ավելի հրեշային, ավելի անմարդկային դեպքեր դիմագրավելու: Մեր մահվանից առաջ գնում ենք դեպի մա՜հ, դեպի խաչելությո՜ւն: Մնա՜ս բարով իմ հայրենի գյուղ: Իմ մանկական աչքերը տեսան քո սարերը հեռվից, տեսա բարձր Սախար լեռը, որի հովիտներում ես անցկացրել եմ իմ քաղցրիկ մանկական օրերը: Էլ չե՜մ տեսնելու չքնաղ, զուլալ, երկնագույն-կապտավուն գետակները, սվսվացող մշտական կանաչ կաղնու անտառները, էլ չե՜մ լսելու մայրական սրբազան կանչը, էլ չե՜մ լսելու ինձ հասակակից ընկեր-տղաների ուրախ ճիչերն ու աղաղակները:

Մնա՜ք բարով, դուք, անթաղ, հոշոտված, կտոր-կտոր եղած մարդկային դիակներ. անթաղ մնացել եք բաց երկնքի տակ. գազանները ուտում են ձեր դիակները: Եկեղեցիների քաղցրահնչյուն զանգերը չեն ղողանջելու այլևս: Դպրոցների դռները չեն բացվելու, հարսանիքներ, քեֆեր չեն լինելու: Մա՜հ, մա՜հ է սպասում բոլորիս՝ ծերին, մանուկին, նորահարսին, նորածին երեխային՝ խանձարուրի մեջ փաթաթված: Ի՞նչ էր մեր բոլորի մեղքը, ո՞ւմ ի՞նչ էինք արել...: Անիծյա՜լ մանկություն, անիծյա՜լ աշխարհ, կործանվե՜ս դուն, փո՛ւլ գաս: Ի՞նչ է կատարվում մեզ հետ: Նորածիններին հենց առաջին օրերին շպրտեցին գետին՝ մայրերին սրտամորմոք լացացնելով: Նորածինը ի՞նչ մեղք ուներ, երբ նա դեռ չէր գիտակցում ո՛չ մարգարեի, ո՛չ Հիսուսի, ո՛չ Աստծո գոյությունը: Ի՞նչն էր նրանց մեղքը՝ չհասկացա:

Երկու օր մեզ պահեցին Ղարղաշլար սարի գագաթին, բավականին փող հավաքեցին ժողովրդից: Առավոտյան շուտ, արևածագից առաջ մեր սայլերը, կառքերը սկսեցին շարժվել հերթով դեպի հարավ՝ սարն ի վար: Սայլերը, կառքերը հեղեղի նման իջնում էին ցած, նրանց ձայները խառնվում էին մարդկանց լացի, կոծի ու հեկեկոցների ձայներին: Կանայք, ծերեր, երեխաներ մանկահասակ և ծծկերներ մորերնուն գիրկը, սայլերի, կառքերի երկու կողմերին քայլում էին՝ հետիոտն, գլուխները կախ, անձայն: Ոստիկանները գազազած ոչ ոքի չէին թողնում նստել կառքերին, սայլերին: Նրանք մի բերան գոռում էին. «Սա պետական ապրանք է, իսկ դուք ոչ-ցանկա՜լի ժողովուրդ, մարդի՜կ, գնում եք մեռնելո՜ւ, անհետանալո՜ւ»: Որոշ տարածություն գնալուց հետո, ջահել աղջիկներ և երեխաներ սկսեցին լաց լինել: տրտնջալ: Ամառային հուլիսյան արևը անգթորեն վառում էր զենիթից: Խմելու ջուր էին ուզում, հաց էին ուզում, տանջվում էին հոգնածությունից: Գնում էր ժողովուրդը՝ գլխահակ, տխուր: Չէր իմանում ինչո՞ւ է գնում, ո՞ւր է գնում, ի՞նչ էր իր մեղքը, ո՞ւմ ի՞նչ էր արել: Երկար գնալուց հետո, երեկոյան դեմ վերջապես իջևանեցինք մի անշան,

ամայի խանի առաջ, որը կոչվում էր Թեճիրի խան։ Մոտիկ ձորի մեջ ջուր կար։ Կանայք սկսեցին ճաշ եփել իրենց մոտ մնացած մթերքից։ Այդ օրը արտակարգ ոչինչ չպատահեց քարավանի հետ։ Եզները, ձիերը, մի կերպ արածեցին, կշտացան։ Այդտեղից ճանապարհվեցինք։ Արևամուտից առաջ, երեկոյան հասանք Ղանդալ շրջկենտրոնը, որտեղի հայերը դեռ չէին աքսորվել և նրանք մեզ հաց, ուտելիք բերին։ Նրանք լացով ու կոծով դիմավորեցին մեր քարավանը՝ սպասելով իրենց չար բախտին։ Մեր հաջորդ՝ երրորդ կանգառը եղավ Խըրխի խանը. մի գետի վրա, որի ձախ կողմում մի թուրքական գյուղ էր, իսկ աջ կողմում՝ բերքառատ, իր ցորենով հայտնի հայկական Ուլաշ գյուղը։

Այստեղ լավ հանգստացավ ժողովուրդը, եզները լավ արածեցին, վրաները ուժ եկավ։ Չորրորդ օրը հասանք Մանջըլըկ հայկական գյուղը. գյուղը անմարդաբնակ էր։ Լքված տների պատուհանները մեզ նայում էին դժոխքի սատանաների նման։ Մյուս օրը անցանք Քյոթու խանի առաջով և հինգերորդ օրը հասանք մարդկային սպանդանոց՝ Հասան Չելեպի կոչվող գյուղաքաղաքը։ Սա մի վայր էր, ուր ոճրագործությունն իր գագաթնակետին էր հասել։ Սեբաստիայի սահմանն անցել էինք. գտնվում էինք Խարբերդի նահանգի և քրդական սահմանում։ Խիստ հրաման կար՝ ոչ մի արու մարդ չպետք է ողջ անցներ այդտեղից։ Բոլորին հավաքել և սպանել էին անխտիր։ Դրա համար էլ այդտեղի ձորերը լիքն էին դիակներով։ Մեր սայլերը խառնիխուռն կանգնեցին գյուղի առաջ։ Չորս կողմն անտառ էր, մեջտեղով հոսում էր մի գետակ, օդը շատ զով էր և հաճելի։ Հանկարծ գետի մյուս ափին նկատեցինք դիակներ, որոնք ցաք ու ցրիվ պառկել, թե՝ փռվել էին. երիտասարդներ, ծերեր, մանուկներ, կանայք։ Հորեղբորս կինը ուզեց գնալ, տեսնել, երկու զաբիթներ չթողեցին և սկսեցին գոռալ. «Հե՜յ, քավթառ գյավո՛ւր, ի՞նչ ես նայում. շուտով դուք էլ կհասնեք այդ մարդկանց օրին»։ Երեկոյան եկան մի քանի ոստիկաններ, քրդերի հետ միասին, հավաքեցին մեր քարավանի միջի տղամարդկանց, տղաներին և ծերերին, տարան լցրին 100—200 հոգուն մի նեղ, խարխուլ շենքի մեջ. ո՛չ նստելու, ո՛չ էլ կանգնելու տեղ կար։ Կեսգիշերին նրանց շարան-շարան տարան դեպի լեռների կողմը։ Մյուս առավոտ հանկարծ մի երիտասարդ տղա, գլուխը վեր պահած, կիսամերկ, արյունլվա նստեց իր ծանոթների մոտ։ Ես մոտ գնացի, նայում էի նրան ու հիշում մեր գյուղի մարդկանց։ Գիշերը խմբով նրանց տարել էին մի սարի գագաթը, բոլորի գլուխները կացնով կտրել ու շպրտել ձորը։ Իր վիզը կացինը խորը չէր կտրել, և ինքը դիակների մեջ մնացել էր մինչև առավոտ։ Հետագայում ես չիմացա, թե ի՞նչ եղավ այդ երիտասարդը։ Հասան Չելեպիից դուրս եկանք։ Սկսեցին արդեն տղամարդկանց, կանանց, երեխաների դիակներ երևալ, մանավանդ՝ կանանց, որոնք մերկ, ուռած վիճակում էին։ Հեռվում մի կամուրջ երևաց, հանկարծ շշուկներ տարածվեցին, թե անխնա մեզ բոլորիս կոտորելու են այդ կամուրջի վրա։ Սկսեցին ի հայտ գալ քրդեր՝ ձեռքներին կացիններ, դանակներ և զենքեր։ Հորեղբորս կինը հնիհև վազեց մի ժանդարմի մոտ, երկու ոսկի դրեց նրա ձեռքը և ասաց, որ մենք թուրքանալ ենք ուզում, մեզ տանի այդ գյուղը։ Ժանդարմը հանգիստ մեզ ասաց. «Մի՛ վախեցեք, դուք պետք է թուրքացած լինեիք վեց ամիս առաջ, բայց մի՛ վախեցեք, ես ձեր քարավանը ազատ կերպով կանցկացնեմ այդ կամուրջով»։ Հասանք կամուրջին, ցածում իրար վրա կիտված դիակնե՜ր, դիակնե՜ր, կանայք՝ մերկ, տկլոր՝ փռված գետի ջրի մեջ։ Քրդերը հարձակվում էին գաղտնի մեզ վրա, սպառնում էին դանակներով և մեր վրայի հագուստը հանում ու փախչում։ Մեզ ընկերակցող ժանդարմները մե՛րթ առաջ էին գնում, մե՛րթ հետ էին գալիս, կրակում էին՝ յա բախտի։ Երեկոյան հասանք Հեքիմ խան։ Դա մի չտեսնված գեղեցիկ հովիտ էր՝ կանաչների մեջ կորած։ Հանկարծ գետի մյուս ափին նկատվեց մի կնոջ արտակարգ ուռած դիակ, մեր տեղից պարզ երևում էր նրա ամոթը՝ մազոտ ճեղքվածքի նման։ Կանայք լացակումած անիծում էին պատճառ հանդիսացողներին և նրանց, ովքեր այդ կնոջն ու նրա նմաններին այդ օրին էին հասցրել։

Առավոտյան Հեքիմ խանից դուրս եկանք և շարունակեցինք ճանապարհը, նույն ճակատագրով, ինչպես նախորդ օրերը։ Քրդե՜ր, քրդե՜ր ամեն կողմ, փորձում էին կողոպտել, թալանել, սպանել ժողովրդին։ Ժանդարմները կրակում էին, կանայք օգնություն էին կանչում, սայլերը գնում էին, մե՛րթ իջնում, մե՛րթ բարձրանում։ Ահա մի պառավ կին ընկավ սայլից, վերջից եկող սայլերը տակով տվին նրան, նրա աղջիկը լալիս, գոռում էր. «Վա՜յ, մայրիկ ջան, այսպե՞ս պիտի լիներ քո մահը», համբուրում էր հոգեվարքի մեջ գտնվող մոր երեսները ու ճանկռում էր իրեն։

Սարերը, անտառները մեր ետևում մնացին։ Երեկոյան աջ թեքվեց մեր քարավանը՝ երկու գետերի խառնված վայրում։ Խմելու մաքուր ջուր չկար, գետակները լիքն էին հոտած, լխկած դիակներով։ Մութը վրա հասավ, քնեցինք ծարավ՝ ջրի կարոտով։ Հանկարծ ժանդարմներ եկան, հավաքեցին հատուկենտ մարդկանց ու տարան, առավոտյան բերին և մեր աչքի առաջ գնդակահարեցին նրանց։ Այդ օրը ժամանեցինք Մալաթիայի անջրդի Սուսուզ օվայ լերկ, բուսականությունից զուրկ մի դաշտ։ Մյուս առավոտ ժանդարմները ավելացան, սայլերը խառնիխուռն քշել տվեցին, իրենք էլ երկու կողմից պաշտպանում էին մեզ վխտացող քրդերից։ Անտանելի շոգ էր։ Ժողովուրդը պապակում էր ծարավից։ Ճանապարհի երկու կող-

մերին, առուների, անձրևաջրերից գոյացած լճակների մեջ հոտած, լլկված դիակներ էին իրար վրա կիտված։ Վերջապես քարավանը հասավ Խըրխ գյոզ գետի կամուրջի մոտ, ուր խմբված էին թուրքերը։ Դրանցից մեկը բարձրացավ առաջին սայլին և գոռաց. «Էհե՜յ, գյավուրնե՛ր, ով փող չի բերի՝ ամեն սայլի համար մի ոսկի, նրա սայլը գցելու ենք ջուրը»։ Աղմո՜ւկ, աղաղա՜կ ամեն կողմ։ Վերջապես քարավանը անցավ և կանգնեց մի խանի առաջ, ուր իջևանել էին մեզանից առաջվա քարավանները։ Այստեղ մեզնից առաջ էրզրումի խոտըրջըրեցիներին ջարդել էին։ Մեզ նեղություն չտվեցին։ Երկու օր հետո հասանք Ֆրնջըլար գյուղը, որը մի փոքրիկ, աննշան գյուղ էր, բայց հայ ժողովրդի պատմության մեջ դարձավ նշանավոր։ Այստեղ մեր սայլերը, կառքերը վերցրին։ Ըստ պետական ծրագրի, ժողովուրդը ոտքով պիտի բարձրանար 3900 մետր բարձրությամբ Տավրոսյան սարերը։ Հարյուր հազարավոր քարավաններ գալիս էին այստեղ և գտնում էին իրենց խաչելությունը, գնում դեպի մահ։ Կանայք, մանուկներ, նորածին ծծկեր երեխաներ լքվում էին՝ անտերանտիրական։ Այստեղ մնաց Քնարիկ քույրս՝ իր ծծկեր երեխայի հետ, հիվանդ էր, չէր կարողանում քայլել։ Ֆրնջըլա՜ր, Ֆրնջըլա՜ր, լքված երեխաներ, ծեր-անտեր կանայք, հիվանդներ՝ այս ու այն կողմ պառկած, հոգեվարքի մեջ, լլկված դիակներ՝ փալասների տակ կամ առուների մեջ։ Մի առավոտ ժանդարմները քուրդ ամբոխի հետ եկան մեր քարավանը գաղթեցնելու։ Ժողովուրդը դժկամում էր. չէին ուզում գաղթել։ Ծեծ, հայհոյանքներ, լաց, աղաղակ, երեխաների ճիչեր։ Կանայք շալակել էին իրենց երեխաներին։ Հասանք լեռան ստորոտը, շոգ արևը վառում էր։ Ջուր չկար, ժողովուրդը հոգնել էր։ Մեզ մոտիկ մի կին իր փոքրիկ երեխային շպրտեց գետնին ու գնաց, երեխան օրորվում, լաց էր լինում։ Ես նայեցի նրան մի քանի րոպե ու գնացի։ Որոշ տեղ բարձրանալուց հետո, մի ձորակի մեջ հայտնվեցին երեխաների և ծեր կանանց մարմիններ՝ բոլորովին մերկ՝ ողջ և մեռած։ Ողջերը մեզ էին նայում հոգեվարքի մեջ, նվաղկոտ աչքերով. նրանց լրիվ մերկացրել էին, նրանց մարմինների բոլոր անդամները երևում էին արևի ճառագայթների տակ։ Բավական բարձրացանք։ Մի հսկա ժայռի տակ սառնորակ աղբյուր կար, ժողովուրդը խմեց ագահորեն այդ աղբրի ջրից, կազդուրվեց կարծես թե։ Մայրս չդիմացավ. ուժասպառ ինկավ, մեռավ։ Կնանիք վրա թափվեցին, նրա վրայի ոսկիները վերցրին ու հեռացան։ Մենք լալիս ու լալիս էինք անվերջ։ Երբ հասանք լեռան գագաթը, կանանց մեջ փսփսուկներ տարածվեցին՝ տղաներին հավաքում, սպանում են։ Մեր մոտից մի տասնվեց տարեկան տղա փախավ, քույրը վազեց, թե՝ եղբայր, մեզ փող տուր։ Տղան տվեց փողը ու գնաց։ Քույրը լաց լինելով գոռում էր. «Հո՜րս, մո՜րս մորթեցին մեր գյուղում, միա եղբայրս էլ գնաց, անիծվե՛ս, աշխա՜րհ, անիծվե՛ք մարդի՜կ, բոլո՜րդ»։

Մի գետի մոտ նորից քարավանը կանգ առավ հոգնած, բեզարած։ Այդ երեկո ոչ մի բան չպատահեց մեզ։ Նրանք, որոնք հարազատներին թողել էին ճանապարհին, լաց էին լինում աղիողոր ճիչերով, հեծկլտոցներով...

Գիշերը անձայն քնեցինք։ Հաջորդ օրը եկա քրդերը, հետները հայտնի Ջեյնալ բեկն ու եղբայրները՝ սրիկա դահիճները...։ Նրանք քարավանի միջից ինչքան փոքրիկ տղա գտան, հավաքեցին, թևերը կապեցին ու տարան հեռու սարի գագաթը, ուր վառվում էին թեժ խարույկները։ Այնտեղ նրանց գլուխները կացիններով կտրեցին ու շպրտեցին ձորը, այդպես էին արել նախոր քարավանների երեխաներին։ Դրա համար էլ այ ձորը կոչվեց Արյան ձոր՝ Քանլը դերե։ Մերոնք ին փալասների տակ պահել, վրաս նստել էին, շունչըս կտրվում էր, ուժասպառ էի լինում, մի կերպ դուրս պրծա, ինձ չգտան։ Լեռնային մի չտեսնված զովաշունչ գիշեր էր։ Լուսինը պարզ արևի նման փայլում էր երկնքում, աստղերը պսպղում էին պայծառ լույսով։ Այս տեսարանի հետ իմ շուրջը սկսվեց մի սարսափելի ողբերգական տեսարան. Կանայք իրենց զավակների հետևից լաց էին լինում, լացակումած աղաղակներով անիծում էին իրենց բախտը. աղմո՜ւկ, աղաղա՜կ, ճիչեր, լաց ձայներ, գոռոցներ՝ խռպոտ ձայներով. «Հե՜յ, աչքներդ քոռանա՛, ո՞ւր եք կորել, ինչո՞ւ չեք գալի մեզ օգնության։ Աստվա՜ծ, լուսի՜ն, աստղե՜ր, չե՞ տեսնում կատարվածը, ո՞ւր մնաց մեր պաշտա Աստվածը, Հիսուսը։ Ո՞ւր մնացին մեր պոռոտախոս, գարշելի մարդիկ, ո՞ւր մնացին անիմաստ մեր ֆեդայիները։ Փո՜ւլ գաս, աշխա՜րհ...»։ Ես չէի կարողանում քնել այս աղմուկի տակ. միտ էի անում ինձ ու ինձ և հիշում էի ամեն ինչ...։ Այդտեղից գնացինք, Ջեյնալ բեկի ապարանքի մոտ մի կանաչավուն գետնի վրա իջևանեցինք։ Քրդերն այլևս նեղություն չէին տալիս մեզ։ Մյուս առավոտ երբ ճանապարհվում էինք, ես նկատեցի, որ կանայք իրենց փոքրիկ երեխաների ձեռքերից բռնած քաշեքաշ տանում էին պարտպապատ շենքի կողմը, երեխաները հետ էին ընկնում, չէին ուզում գնալ, մայրը դառնագին լաց էր լինում, երեխան լեղապատառ ճիչով գետին էր տապալվում, մայրը գրկում, վերցնում ու տանում էր, երեխան գոռում էր.— Չե՛մ գնա։

Մայրը թե.— Ի՞նչ անեմ, յավրո՜ւս, փարա չունիմ, հալ չունիմ քեզ գրկելու, շալակելու։ Ամեն ինչ կորա՜վ, փո՛ւլ գաս, աշխա՜րհ,— գրկեց երեխայի մեջքից, տարավ շպրտեց պարիսպից այն կողմ՝ այգին։ Պարիսպը դրսի կողմից ցածր էր, իսկ ներսի կողմից բավականին բարձր։ Ես վազեցի, այդ պարտպից ցած նայեցի, կանաչ խոտե-

րի վրա պառկել էին հարյուր-երկու հարյուր երեխաներ՝ մեռած, կիսամեռ, ողջեր. կային կանայք իրենց երեխաների հետ, ոմանք՝ մեռած, ոմանք՝ դեռ ողջ, հոգեվարքի մեջ տառապում էին։ Նրանք իրենց ծծկեր երեխաները գրկներին ուժասպառ, գունատ սպասում էին իրենց մահվան։ Մի երեխա իր մեռած մոր ստինքն էր ծծում, դարձավ՝ ինձ նայեց, վա՜յ, այդ նայվածքը։ Նոր նետված երեխաներից մի քանիսը երբ ինձ տեսան, վազեցին դեպի պատը, երևի ազատվելու հույսով...։ Ես կիսախելագարված ցած իջա պատից ու վազեցի քարավանի ետևից։ Հիշում եմ այդ սրտաճմլիկ տեսարանը մինչև այսօր։ Ա՜յ տխմար ազգային գործիչներ, ձեր ի՞նչ գործն էր Հայկական հա՜րցը, ազատագրական շարժում կոչեցյա՜լը, Եվրոպայից հույս ակնկալե՜լը, Ռուսաստանից եկած ստահակներին հավատ ընծայե՜լը, ձեր ի՞նչ գործն էր Ռուսաստանի կողմից կամավորներով կռվե՜լը։ Ի՞նչ արիք, վեց հարյուր տարի ապրող ժողովրդին բնաջնջել տվիք ձեր ապիկար գործունեությամբ, այժմ հայի հետքն անգամ չմնաց Թուրքիայում։ Կորանք իսպառ։

Հաջորդ օրն անցանք ապառաժոտ նեղ արահետներով, որտեղից անցնելը շատ դժվար էր։ Շատերը ցած գլորվեցին, մանավանդ, հասակավոր կանայք, որոնք ուժ չունեին քայլելու։ Իջանք ձորը. մի չտեսնված արագահոս գետ էր, անցնել հնարավոր չէր։ Ժանդարմները մեզ հրամայեցին՝ անցնե՛լ գետը։ Ահավոր հոգնած, ուժասպառ էինք եղել բոլորս։ Մի քանիսը փորձեցին մտնել ջուրը, նրանք ճչալով քշվեցին ջրի հոսանքն ի վար։ Ոմանք ձի վարձեցին, ոմանց էլ քրդերն էին անցկացնում փողով։ Գետի մյուս ափին իջևանեցինք ավազոտ սարի տակին։ Մյուս օրը նորից ճանապարհ ընկանք, ժողովուրդը չէր կարողանում բարձրանալ ավազոտ սարը։ Բարձրանալիս սահում, ընկնում էինք, հետ իջնում։ Քուրդ կանայք մեզ անտառի միջով մի ճանապարհ ցույց տվին, որով գնացինք առանց վախի։ Անտառում մի քուրդ մարդ հորեղբորս տղայի մեջքի գոտին ուզում էր խլել, սուրը քաշեց նրա վրա, հորեղբորս տղան՝ Ժիրայրը, մի ցավագին ճիչ արձակեց, գոտին տվեց քրդին։ Բայց ինքը վախից մահացավ մեկ օր հետո։ Վերջապես հասանք Ադիյամանի բերդը։ Մի աղբյուրի մոտ ուզում էի ջուր խմել, մի քուրդ մարդ մոտեցավ, փայտի մի ուժեղ հարված հասցրեց գլխիս, շալակիս շորերը առավ ու գնաց։ Վերջապես գաղթականները տեղեր գրավեցին այս խոշոր բերդի մեջը, որը տեղ-տեղ երկրաշարժը ավերել էր։ Մեզ բերդը լցրին ու դռանը պահակներ դրին։ Հանկարծ կանայք նկատեցին բերդի աջ կողմում դիզված դիակները։ Դիակները լցված էին ձորում, գետակի ափին։ Երկու օր հետո մեզ բաց թողին բերդից. քրդերը բերքահավաքի էին, չէին եկել մեզ ջարդելու։ Այսպիսով ազատվեցինք ջարդից. լա բախտի։ Փայտի հարվածից բերդում աչքերս սկսեցին ցավել։ Ամբողջ գիշեր չկարողացա քնել. մի կոշտ բան խփում էր միշտ աչքիս, աչքս չէի կարողանում փակել։ Էշի կաթ կաթեցրին և ծեծած չամիչ կապեցին, լավացավ կարծես թե, բայց լավ չէի տեսնում։

Բերդից հետո անցանք մի հին կամուրջ և սկսեցինք բարձրանալ մի թեք լեռ։ Շատերը ճանապարհին մնացին, չէին կարողանում բարձրանալ թեք սարի լանջը։ Վերջապես հասանք սարի գագաթը։ Մի սիզապատ բարձունքի վրա, սեղերի վրա փափուկ քնեցինք այդ օրը։ Երեկոյան սկսեցին գոռալ. «Քաղաքացինե՜րը բաժանվե՜ն գյուղացիների՜ց»։ Քաղաքացիները իջան ցած։ Երեկոյան նրանց վրաները ստուգեցին. փող էին ման գալիս։ Հետո ինչքան հարս, աղջիկ կար՝ տարան հեռու մի շենքի կողմը։ Քարավանի մեջ սկսեցին լացուկոծը. նրանց տարել և բռնաբարել էին մինչև լույս։ Մյուս օրը բերին նրանց, հանձնեցին մայրերին։

Սա մեր վերջին սարն էր. այս բարձունքից երևում էր հեռո՜ւ-հեռո՜ւ անապատը ցածում՝ օվկիանոսի ջրերի նման կարծես թե ալեկոծվում էր։ Երևում էին քաղաքներ և հեռավոր գյուղեր, երևում էր Ադիյամանը։ Այստեղից մի օր գնալուց հետո, երևաց այգիների մեջ կորած Ադիյամանը՝ Միսաք Մանուշյանի ծննդավայրը։ Ադիյամանի կանաչ այգիների մեջ մի քիչ կարծես հանգստացանք։ Տեղի հայերը հաց բերին, մեզ բաժանեցին։ Երկու օր մնալուց հետո, մեզ նորից քշեցին, մեզ հետ՝ Ադիյամանի ողջ հայությանը։ Վերջացան Տավրոսյան գեղեցիկ ու դաժան լեռները։ Ահա զովաշունչ լեռներից իջնում ենք ցած, շոգը խեղդում է մեզ։ Մեր հետևում մնացին քսան-երեսուն տանջալի, տառապալի, մահագույժ օրերը։ Մեր քարավանը, որը կեսից էլ պակաս էր մնացել, իջևանեց Սամուսատից հարավ՝ Եփրատ գետի ափին։ Ամեն կողմ դիակնե՜ր, դիակնե՜ր, մեռած կանայք, երեխաներ ամեն կողմ՝ պառկած ցաք ու ցրիվ, արտերի մեջ, ավազների վրա, ամեն կողմ կիսամեռ հիվանդների տնքոցներ, աղերսագին օգնություն խնդրող նայվածքներ, նրանց կողքին՝ հոտած, փտած, ուռած, ճխկած գարշահոտ դիակներ, մեծ մասամբ կանանց. Դանթեի դժոխքը Եփրատի ափին էր։ Ժողովուրդը Եփրատ գետի ջրով լվացվեց։ Ինչ որ ճարել էին՝ կերան, փափուկ ավազի վրա քնեցին՝ լուռ, հանգիստ։ Վշտի խուլ հեկեկոցները կամաց-կամաց մարեցին, ամեն ինչ խաղաղվեց կարծես, լուսինը չքացավ երկնքից լեռների ետև։ Ժողովուրդը հոգնած, ուժասպառ եղած էր։ Հանկարծ մթության մեջ թուրք ժանդարմներ, բռնի բերված քրդերի հետ, վայրագորեն մտան գաղթականների շարքերը, տրորելով քնած մարդկանց, մեռածներին, հիվանդներին, աջ ու ձախ սկսեցին խուզարկել բրտորեն. հավաքում

էին փոքր երեխաներին։ Ժողովուրդը սարսափահար քնից արթնացավ։ Ահաբեկված, սկսեցին իրար խառնվել, աղմուկից մենք էլ արթնացանք ու սկսեցինք աջ ու ձախ նայել ապշահար՝ թե ի՞նչ էր կատարվում մեր շուրջը։ Հանկարծ մի հսկա քուրդ աժդահա ինձ նկատեց փալասի տակ, եկավ դեպի ինձ, քաշքշեց, աջ թևը գցեց մեջքիս, վերցրեց ինձ ու տանում էր։ Մերոնք սարսափահար սկսեցին ճչալ, լաց լինել, հորեղբորս աղջիկը փորձեց մի կերպ ինձ ազատել քրդի ճանկերից, բայց իզուր, քուրդը ինձ թողեց ու նրան հրեց, գցեց գետին, նորից ինձ վերցրեց ու տանում էր։ Տանելու ժամանակ մեջքս այնքան ուժեղ էր սեղմում, համարյա կողերիս ոսկորները ջարդվելու էին, շունչս կտրվում էր։ Մի քիչ տանելուց հետո, նա հոգնեց, ինձ վայրենաբար շպրտեց գետին և հրամայեց քայլել իր առաջից։ Ճանապարհին ուրիշ քրդեր նույնպես բերում էին երեխաներ։ Մեզ տարին վառվող խարույկների շուրջը, ուր արդեն հավաքել էին 150—200 երեխաներ և 4 ծերունիներ։ Ես չհասկացա, թե ինչպես այս ծերերը հասել էին այստեղ, հրա՞շք էր, իրոք որ։

Ժանդարմները՝ ութ-տասը հոգի, սվինավոր հրացաններով եկան, հետները տասնհինգ-քսան քրդեր, մեզ շրջապատեցին, նստեցրին մի ավազոտ թմբի վրա՝ շարք-շարք, ըստ տարիքի, հասակի։ Մի կին եկել էր իր փոքրիկ տղուն ազատելու։ Ժանդարմներից մեկը, կոպիտ հայհոյելով նրան, հրեց և գցեց փոսը։ Նա վեր կացավ աղիողորմ ճչալով՝ «Հասե՛ք, երեխաներին մորթո՞ւմ են»։ Հանկարծ, մթության մեջ, հազարավոր կանանց խուլ ձայնը բարձրացավ դեպի երկինք։ Ժանդարմների պետը հրամայեց կրակել դեպի ժողովուրդը, նրանք վերցրին հրացանները և կրակեցին դեպի ժողովուրդը, այլևս կանանց ձայներ չլսվեցին, միայն խփվող կանայք լաց էին լինում։ Խարույկների կրակները թեժացրին, կանգնեցրին չորս ծերունիներին։ Ժանդարմը հրամայեց ծերունիներին.— Թիկն տվեք. թիկն,— նրանք չորսը թիկն տվին, կանգնեցին՝ մեկ մեկու մեջքը դրկած։

Մի ժանդարմ վերցրեց հրացանը, ուզում էր կրակել, վերջի ծերուկը հրացանը մի կողմ հրեց և սկսեց աղաչել.— Մենք ծե՛ր ենք, մենք ոչի՞նչ չենք արել, ի սե՛ր Աստծո, մեզ մի՛ սպանեք։

Ժանդարմը գոռաց.— Դուք ծեր եք, ոչինչ չեք արել, բայց դուք էլ եկեղեցիներում աղոթել եք ձեր Աստծուն, որ ռուսը գա, Թուրքիան խորտակվի, Անդրանիկի սուրը կտրուկ լինի՝ Թուրքերին լավ ջարդելու համար,— ժանդարմը կրակեց, չորս ծերերը միասին տապալվեցին գետին։ Կանգնած քրդերը փայտերով սկսեցին խփել նրանց քթին, բերնին, գլխներին, մինչև որ նրանք անշնչացան։ Թոկը գցեցին վզները, քրդերը քաշ տվին դեպի մոտակա Եփրատ գետը։ Հերթը եկավ երեխաներին։ Առաջին շարքից բերում, կանգնեցնում էին երեխային, քրդերը դանակներով խփում էին նրա կռնակին, փորին, մինչև որ պառկած երեխան անշնչանում էր, նրան թոկով քաշում, տանում էին Եփրատ գետը։ Այսպես երկու-երեք, թե՝ չորս ժամ։ Հերթը հասավ մեր շարքին։ Քրդերը մեր վերևը կանգնած հսկում էին։ Արդեն սպանել էին մոտ երկու հարյուր երեխա։ Մի ժանդարմ դանդաղ եկավ մեր կողմը և գոռաց.— Ռա՞դ եղե՛ք, գնացե՛ք։ Մենք խմբով վազեցինք, խառնվեցինք ժողովրդին։ Հարսիկս արթնացավ, ինձ պառկեցրեց։ Կեսգիշերին մի տղա, հանկարծ, թաց շորերով եկավ կանգնեց յուրայինների վերև անվերջ կրկնելով՝ Փա՞ռք քեզ, Աստված, փա՞ռք քեզ, Աստված, չմեռա։ Առավոտյան ես տեսա, որ նրա մարմինը ամբողջովին ծակոտված էր, շոգին որդնոտեց և տառապելով մեռավ։

Քունս չտարած մեկ էլ լսեցի տարօրինակ մի ձայն, մի կին լաց էր լինում մեր գլխավերևում։ Բարձր մի տեղ, երկու կանայք իրար փաթաթված, դողահար, սարսափի մեջ կծկված նստել լաց էին լինում։ Հազիվհազ նկատեցի՝ մի աժդահա քուրդ, խոշոր դանակը ձեռքին՝ հսկում էր նրանց։ Հետո իմացա, որ նրանք մայր ու աղջիկ են։ Կինը մղկտում էր, անեծքներ էր թափում պատճառ եղողների գլխին։ Անեծքնե՞ր, անվերջ անեծքնե՞ր թուրքերի գլխին, վերջում իմացա, որ թուրք ոստիկանապետը առավոտյան եկել, տարել է այդ մայր ու աղջկան։

Եփրատ գետի ափին մահացան հորեղբորս զույգ ծոռները և հորեղբորս հինգ տարեկան Սմբատ տղան, որին ես շատ էի սիրում։ Հրաման եղավ շարժվել։ Գնացինք Եփրատի ափը։ Փալասներով ծածկված մի ինչ-որ նավակ կար, դժվարությամբ ժողովուրդը նավ նստեց. անունն էր նավ։ Քրդերը ոտից գլուխ ստուգում էին կանանց. փող էին փնտրում։ Նավակը գնում էր հոսանքն ի վար։ Ժամեր տևեց մինչև անցանք մյուս ափը։ Քրդերը տախտակները շուռ էին տալիս, կանայք, երեխաներ ընկնում էին ջուրը։ Մի դեպք, որը ես չեմ մոռանա մինչև իմ մահը. երկու աժդահա քրդեր հարձակվել էին մի հոլանի, գեղեցիկ, հասակով կնոջ վրա, ուզում էին նրա փողի քսակը վերցնել։ Կինը դիմադրում էր ամբողջ ուժով, նրանց գետին էր գցում, նրանք ելնում, նորից էին հարձակվում նրա վրա։ Այսպես չգիտեմ ինչքան տևեց։ Կնոջը ամբողջովին մերկացրին, հագուստները պատառոտեցին, քսակը վերցրին ու նրան թողեցին անդամամերկ։ Հանկարծ կողքին նկատեցի մի յոթ-ութ տարեկան փոքրիկ աղջնակ, որը հետևում էր մոր պայքարին՝ աչքերը լայնացրած, դողալով, լալով, ճչալով։ Ես այդ աղջկա աչքերի նման աչքեր չեմ տեսել ո՛չ նկարիչների մոտ, ո՛չ էլ՝ կյանքում։ Կինը պառկած տեղից վեր կացավ, աղջկան գրկեց ու դողդոջուն ձայնով ասաց.— Մեռա՞նք,

աղջիկս, ո՛չ փարա ունենք, ո՛չ հագուստ,— և մի ոստյունով աղջկա հետ նետվեց գետը։

Մի ամբողջ օր նորից ճանապարհ էինք ընկել, արևը վառում էր, ջուր չկար, հորեղբորս աղջկան՝ Հայկանուշին թողինք ճանապարհին մի ծառի տակ. նա ողջ էր, մեր հետևից նայում էր։ Հեռվից՝ ցածում ջուր նկատվեց։ Մարդիկ ամանները առած վազեցին։ Մի ժանդարմ ասաց.— Չի՛ կարելի, ջուրը լի՛քն է դիակներով։ Երկու-երեք օր գնալուց հետո, նորից երեխաներին հավաքեցին, մի երկու-երեք մեծահասակների խփեցին, փող պահանջեցին, հետո մեզ բաց թողին։

Վերջապես երկար, տանջալի ճանապարհ անցնելուց հետո, հասանք Սուրուչ անապատը։ Սա իսկական սպանդանոց էր. օրական հարյուրներ մահանում էին։ Մեր գյուղացիների համարյա յոթանասուն տոկոսը մահացավ այստեղ։ Ամենածանր և ահավոր վիշտը ինձ համար այն էր, որ իմ չորս-հինգ տարեկան Երամ անունով եղբորս թողեցինք ծառի տակ, նա մեր հետևից լաց էր լինում։ Վա՜յ, այն օրը մինչև հիմա չե՛մ մոռանում։ Տասնհինգ օր տառապելուց հետո նա լալով մահացել է, ըստ վերջին եկողների՝ սովից, ծարավից, գիշերային ցրտից։ Շարժվեցինք դեպի Սուրուչի երկաթուղային կայարանը։ Ճանապարհին մի քուրդ կին էլմոն քրոջս ձեռքից բռնեց ու տարավ (վեց-յոթ տարեկան էր)։ Իջևանեցինք երկաթուղային կայարանի մոտ, մի խանում, հետո դուրս արին, քշեցին դեպի Հալեպի կողմը, ապա բաժանեցին՝ ողջ մնացածների կեսը գնաց Դեր էլ Զոր, կեսը՝ ետ եկավ նորից Սուրուչ։ Մեզ լավաշ հաց բաժանեցին և հրամայեցին գոռալ.— Կեցցե՛ թագավորը (կոմեդիա էր)։ Ժողովուրդի մեջ լուրեր տարածվեցին, թե իբր էնվեր փաշան եկել, անցել և գնացել է, իր կնոջ հետ միասին, դեպի Տիգրանակերտ (Դիարբեքիր)։ Այդտեղից մեզ քշեցին երկաթգծով դեպի կայարանի կողմը՝ Ռաս-էլ-Այն, դեպի արևելք։ Հասանք Ռաս-էլ-Այնի կայարանը։ Մեզ տարին, երկու-երեք կիլոմետր սալահատակված ճանապարհի երկու կողմի վրա շարեցին։ Սկսեցին բեմահարթակներ սարքել, իրարից որոշ հեռավորության վրա, որոնց վրա նաև՝ ցցեր։ Կեսգիշերին բերին, մարդկանց շարեցին ցցերի տակ, ճամփի մեկ ծայրից մյուսը՝ ութական հոգի։ Շատերի գլուխները կտրել էին և քառակուսի կույտեր էին կազմել։ Արևելքից մեզ նման գաղթականներ բերեցին, շարեցին ճանապարհի մյուս կողմը։ Վերևից արևն էր վառում, ներքևից՝ տաք քարերը։ Համարյա թե մեռնում էինք, լացի ձայները ջուր էին աղերսում, բերող չկար, ջուր չկար։

Զինվորներ, ժանդարմներ, քրդեր գնում-գալիս էին, ինչ-որ մի բանի էին պատրաստվում։ Հանկարծ, որտեղից որտեղ երկար գնացքը եկավ և կանգնեց մեր դիմաց։ Ժողովրդին թափեցին ցած, վագոնները իրենց եկած ճանապարհով ետ գնացին. դրանք թեքերդաղցի՝ ռոդոսթոցիներ էին, ադրիանապոլցի (էդիրնե), մալկարացիներ էին՝ Թրակիայի ժողովուրդը։ Ժողովուրդը՝ կանայք, երեխաներ, ծերեր, աղջիկներ, զարմացած, շվարած կանգնել էին։ Նրանց խաբել և բերել էին, իբր՝ գնալու եք բնակության նոր վայրեր։ Նրանք մեզ նկատեցին հեռվից և սկսեցին աջ ու ձախ շարժվել, ճչալ, լաց լինել իրենց ապրանքների համար։ Ոստիկանները վրա պրծան, նրանց հանգստացրին և բռնի նստեցրին երկաթգծի երկայնքով։ Նրանք երևում էին մեր տեղից, կիրակնօրյա շորեր հագած, աղջիկները սպիտակ շորերով և այլն։ Երեկոյան մարդկանց մորթեցին, դիակները շարեցին բեմահարթակների առաջ, հետո բերին սպիտակ շորերով աղջիկներին. գիշերային խավարի մեջ նրանց բոլորին ցցերի վրա նստեցրին։ Մեր ականջները խլանում էին նրանց մայրերի, հարազատների ճիչերից, լացերից և գոռում-գոչումներից։ Իմացա, որ այդ մարդիկ Անդրանիկ փաշային ուսերի վրա են տարել, իսկ աղջիկները, «Իբրև արծիվ» երգելով, Անդրանիկին ծաղկեփնջեր են մատուցել փողոցներում՝ թուրքերի ներկայությամբ։ Ահա վրեժ էին լուծում նրանք։

Առավոտյան կարմրավուն, վառ արևը ոսկի էր մաղում չորս դին՝ կապուտակ երկնքից. իր ոսկեգույն ճառագայթները փռել էր ամեն կողմ։ Դա անապատի արևն էր, որ միակ վկան էր մեր այս անողոք տառապանքի։ Վերջապես թրակիացիներին քշեցին, բերին և շարեցին ցցերի առաջ, մեզանից ցածում նրանք շուռ էին գալիս, մեկը իր մարդուն էր փնտրում, մյուսը՝ ցցերի վրայի իր աղջկանը։ Ցցերի վրա բարձրացած սպիտակ շորերով աղջիկները արդեն մահացել էին, գլուխները կախ ընկած էր մի կողմի վրա... Իրարանցում, ողբալի ձայներ, աղմուկ, հարայհրոց գաղթականների մեջ՝ ծայրից ծայր։

Հանկարծ աղմուկ-աղաղակ, ծափահարություններ. եկան մարդկանցով լիքը չորս կառք ու կանգնեցին ճանապարհի ծայրին՝ մեզանից քսան քայլի վրա։ Երկու կառք բարձրացան և կանգնեցին բարձրում, մյուս երկուսը՝ ճանապարհի ծայրին։ Լսեցինք, որ դրանք մեր մտավորականներն էին, ամեն կառքի մեջ չորս հոգի, որոնց բերել են Հալեպից։ Հրամանի վրա երկու կառքերը շարժվեցին ճանապարհով, նախ՝ կամաց, հետո՝ արագ։ Կառքի վրայի ոստիկանները մտրակներով սկսեցին խփել մեր մտավորականներին։ Խփում էին նրանց գլխներին, մարմիններին, երեսներին, որտեղին պատահեր։ Կառքերը երկրորդ անգամ եկան, ոստիկանները մտրակների հարվածների տակ գոռում էին.— Հե՜յ, գյավուրնե՛ր, աջ նայե՛ք (մեզ, ցցերի վրայի աղջիկներին և մորթված մարդկանց էին ակնարկում), տեսե՛ք անգլիական ռազմանավերը Ստամբուլ են մտնում։— Գնում էին կառքերը, նորից էին գալիս, լսում էինք.— Գյավուրնե՛ր,

ձախ նայե՛ք, քոռ-Մոսկովի՝ ռուսի զորքը Սվազ է մտնում, Թուրքիան ոչնչանո՜ւմ է։—Այսպես անվերջ, տասից ավելի անգամ տանել-բերելուց հետո, կառքերը գնացին դեպի Ուրֆայի կողմը։ Մյուս օրը մեզ քշեցին նրանց հետևից, դեպի Տիգրանակերտի գլխավոր ճանապարհը, Թրակիացի ժողովրդին մեր հետևից բերին։ Մեզ շրջանաձև նստեցրին քարքարոտ, առանց մի բուսականության չոր ու ցամաք տեղ։ Մեզանից մի քիչ հեռու՝ կանաչ այգու մեջ, կամուրջի մոտ կար մի մեծ շենք՝ քարվանսարայի պես բան։ Այնտեղ մարդիկ մտնում-ելնում էին։ Հանկարծ մարդիկ եկան՝ տախտակներ, ցցեր շալակած. շրջանի մեջտեղում խփեցին ցցերը և տախտակները ու գնացին։ Կես ժամ հետո ծեծելով, հարայհրոցով բերին մեր ութ մտավորականներին՝ Զոհրապի գլխավորությամբ։ Նրանց նստեցրին, եկան ճառեր ասացին, մեր մտավորականների վրա թքեցին ու գնացին։ Հետո եկան ութ ոստիկաններ՝ սվիններով, հետները մի աժդահա մարդ՝ կիսազինվորական հագուստով։ Կիսավայրենու տեսք ուներ։ Հրամայեց մեր մտավորականներին մերկացնել, հետո նրանց փորի վրա պառկեցնել տվեց տախտակների վրա, գլուխները առաջ գցած, հետույքները բարձրացած։ Հրաման եղավ՝ Սյունգյու դա՜խ (սվինները խրել)։ Ոստիկանները բոլորը սվինները խրեցին մեր մտավորականների հետույքները, նրանք մահացան, արդեն ծեծի տակ կիսամահ էին եղել։ Նրանց դիակները մինչև մեջքը հողի մեջ թաղեցին՝ գլուխները դուրս։ Մեզ ասում էին.— Նայե՛ք նրանց, նրանք ձե՛ր մասին են մտածում, դուք էլ աղոթեցեք նրա՜նց հոգու համար, որ ձեզ այս օրին հասցրին։ Ժողովուրդը լալիս էր, ժողովուրդը տառապում էր. տանջվում էր, ժողովուրդը սովից, ծարավից մեռնում էր։ Ո՞վ էր մտածողը, փրկողը։ Չգիտեմ։ Ասում էին, որ Էնվեր փաշան եկել էր Պոլսից հատուկ հայ մտավորականների սպանությանը ներկա լինելու համար, ասում էին, որ Էնվեր փաշան անձամբ ինքն է կազմակերպել այս գործը։ Ես տեսա՝ մի խումբ մարդիկ նստել էին պատշգամբում, այգու մեջ։ Ջարդը վերջանալուց հետո նրանք իջան, կառքեր նստեցին ու գնացին դեպի Տիգրանակերտի կողմը։ Մի օր հետո ժանդարմները մեզ քշեցին որտեղից որ եկել էինք, իսկ Թրակիացիներին՝ դեպի Հարավ, մորթված մարդկանց և ցցերի վրա գտնվող աղջըկերանց կողմը։ Մալկարացի Գրիգոր Իշկալյան անունով մի մարդ ինձ պատմել է Թրակիայի դեպքերի մասին և ինքն էլ ականատես է եղել իմ նկարագրած դեպքերին՝ ինը-տասը տարեկան հասակում։ Այսպես, Թրակիացիներին ասում են. «Ձեր գույքով ունեցվածքով գնալու եք Ճեզայիր, պատերազմից հետո կգաք ետ»։ Բերին մեզ, այդ օրը գցեցին։ Ցցերի վրայի աղջիկները ռոդոսթոցի էին՝ Անդրանիկին ծաղկեփունջ մատուցողները, իսկ երիտասարդները՝ Անդրանիկին ուսերի վրա են տարել, սպանվածների մի մասն էլ Օսմանիեի թունելի վրա աշխատող բանվորներն էին։ Մեզ բերին Ուրֆա, այնտեղից քշեցին դեպի անապատը՝ մի անմարդաբնակ տեղ, ուր միայն մի քանի ծառեր կային։ Այդ օրը գիշերը անձրև եկավ և ցուրտ քամի։ Գիշերը հարյուրավոր մարդիկ մահացել էին։ Քրդերին բերին, մի ընդհանուր խոշոր փոս փորել տվին։ Քրդերը թոկերով ընկան ժողովրդի մեջ՝ տրորելով հիվանդներին, մեռած-ողջ, ով պառկած էր վիզը թոկ էին գցում, քաշեքաշ տանում փոսն էին ածում ու վերադառնում։ Նույնիսկ ողջերի վիզը թոկ էին գցում, տանում նետում էին փոսը. հարազատների ճիչերը, աղաղակները չէին լսում։ Այդտեղից մեզ նորից քշեցին դեպի հարավ՝ մի այլ անմարդաբնակ վայր։ Կանայք՝ տիֆով հիվանդ, ջուր էին աղերսում։ Ես մի կեղտոտ ամանով ջուր էի բերում նրանց համար, անձրևից գոյացած կեղտոտ ջրերից։ Նրանք ջուրը խմում էին ագահաբար ու մահանում էին անմիջապես։ Մի օր էլ ջրի էի գնացել, ճանապարհով անցնող երկու ծեր մարդիկ, էշերն առաջները խառնած, գնում էին։ Ինձ տեսան, ծերի մեկը հետ ընկավ, ինձ նայեց, ես վախեցա, սարսափով նայում էի նրան։ Նա ասաց.— Մի՛ վախիր, տղա՜ս, արի՛ քեզ տանեմ մեր գյուղը։ Մյուս ծերը եկավ, մեկ-մեկու հետ խոսեցին։

Այս ծերուկը նրան ասաց.— Լսի՛ր, իմ ու քո տղաները Բաղդադի ճակատում կռվում են, ես այս հայ տղային կտանեմ կազատեմ մահից, Ալլահն ալ կպահի իմ զավակներին թշնամու գնդակից,— ինձ դրեցին էշի վրա։

Երկու օր գնալուց հետո, հասանք Այնթապի մոտ մի գյուղ՝ Հյուլումեն անունով։ Գյուղ չհասած՝ գյուղացիները և ծերուկի հարազատները խմբով վազեցին։ Նրանք երբ ինձ էշի վրա տեսան, զարմացած, սարսափահար փախան ամեն մեկը մի կողմի վրա։ Գյուղացիները բաժանվեցին երկու մասի, մի մասն ասում էր՝ այս գյավուրին նետի՛ր փոսը. գյուղը կվարակի, մյուս մասն ասում էր՝ Բեսսեն ինչ ուզում է, թող այն լինի, ձեր ի՞նչ գործն է։ Աղմուկի ժամանակ մորուքով մի պատկառելի մարդ եկավ, նայեց ինձ, նայեց խուժանին, ծերուկի ձեռքից փայտը վերցրեց, տվեց ում որ պատահեց, ամեն մեկը մի կողմի վրա փախան։ Հասանք ծերուկի տունը. հարսը, թոռները փախան տնից։ Այս ծերուկի կինը առաջ եկավ, թևիցս բռնեց ու ինձ տարավ մարագը, դարմանի վրա պառկեցրեց և ասաց.— Դուրս չգա՜ս, այստեղ պառկի՛ր։ Փափուկ դարմանի վրա պառկեցի, ազատ շունչ քաշեցի։ Որոշ ժամանակ անց տանտիկինը բերեց մի քիչ ոսպով ապուր. անմիջապես խմեցի և ամեն օր այսպես։ Որոշ ժամանակ անց՝ կինը ապուրը շատացրեց, հետը փիլավ բերեց, որոշ ժամանակ անց՝ հաց և ես մի քիչ կազդուրվեցի, սկսեցի ման գալ կամաց-կամաց գոմի մեջ։ Ար-

յունս սկսեց շարժվել, վրաս ուժ եկավ, դեմքս կլորացավ։ Այս կինը աղջկա հետ ինձ լողացրեց և նոր հագուստներ հագցրեց։ Հարսը, լսելով, որ մի նոր հայ տղա է երևացել իրենց տանը, հևիհև, կատաղած եկավ խոհանոց, ուր ես ճաշում էի, գլխիս վերև կանգնեց և գոռաց.— Ա՛յ անա, հերի՛ք չէր մի հոտած գյավուրի տղա պահում ես, հիմա էլ սրա՞ն եք բերել, հա՞։

Ես դառել էի կլոր դեմքով, շեկ, գանգուր մազերով, կապույտ աչքերով տղա, այլևս այն հոտած, նիհար, փորս ուռած կաշի-ոսկոր, զզվելի տղան չէի։ Հարսը նայեց ինձ ու գոռաց ուրախության ճիչով և վազեց գոմը, որ գտնի հին, հոտած, նեխած տղուն։ Ունայն հետ եկավ և սկսեց.— Ա՛յ անա, ա՛յ այս տղան լավն է, ինչքա՞ն սիրուն է, պահե՛նք։

Ծեր կինը ասաց.— Գնա՛, ռռուբի՛, իմ տղուն ուզում էիր վռնդել, սպանել հա՞, տունը թողիր, փախար նրա պատճառով, հիմա տեր ես կանգնում իմ տղուն։

Հարսը վազեց բերեց իր երեխաներին տուն, նրանք ինձ ընտելացան և ինձ շատ էին սիրում, նույնը՝ մայրերնին։ Գարուն էր արդեն, ես սկսեցի տնային մանր-մունր գործեր կատարել, սկսեցի գառները արածացնել։ Ապրում էի որպես տան զավակ։ Նրանք գյուղի մարդկանց պատվիրել էին, որ ոչ ոք ձեռք չտա ինձ։ Մեկ-երկու տարի հետո, մի օր հանկարծ գյուղի մեջ հավար ինկավ, մարդիկ կանչում, վազում էին դեպի քաղաքի ճանապարհի կողմը, գոռալով.— Բեսսեի տղաները գալիս են, երկու եղբայրները՝ Սայաթը և Հուսեյնը։— Տնեցիները խելակորույս վազեցին, հարայհրոցով բերին երկու եղբայրներին տուն։ Նրանք նստեցին ճաշ կերան, հանկարծ ինձ նկատեցին։ Երեկոյան, երբ ես անցուդարձ էի անում տան մեջ, մեծ տղան՝ Սայաթը դառավ մորը. — Այս տղան ո՞վ է։

Մայրը ասաց.— Սա էլ մեր տղան է, հայրդ գտել է նրան գաղթականների միջից, ձեր մոտից վերադառնալիս և նպատակ է դրել՝ եթե ես այս տղային տանեմ պահեմ, մահից ազատեմ, Ալլահն էլ իմ տղաներին կպահի թշնամու գնդակից, ահա և իրականացավ հորդ երազը։

Տղաները ուրախացան և պատմեցին իրենցը.— Մենք Բաղդադի ճակատում կռվում էինք արդեն երկու ամսից ավելի. մեր հրամանատարը մեզ երկուսիս ուղարկեց, որպես լավ, պարտաճանաչ զինվորների, Օսմանիե հիվանդանոցը՝ կազդուրվելու համար։ Այնտեղ մնացինք մի ամիս։ Հանկարծ մի օր մի հայ բժիշկ եկավ և մեզ ասաց. «Ձեզ ուղարկում են Բաղդադ, նորից ճակատ. եկեք դուք ձեր զինվորական հագուստները թողեք այստեղ, քաղաքացիական շորեր հագեք, ես ձեզ կտամ մի տարվա հանգստանալու թուղթ»։ Մենք համաձայնվեցինք, թուղթը առինք ու եկանք, հայ բժշկին շնորհակալություն հայտնեցինք։ Հետո իմացանք, որ Օսմանիեի երկաթուղային թունելում աշխատող հայ բանվորներին աշխատանքը վերջացնելուց հետո սպանելու են։ Այս բժիշկը մեր զինվորական շորերը հագցրել է հայերին և ուղարկել է նրանց Բաղդադ, ուր հայերին չէին ջարդում։ Այսպես շատերին է արել։

Դրանից հետո տնեցիների ուշքը գնում էր, ինձ շատ էին սիրում, դրանից հետո գյուղացիները ինձ վրա նայում էին իբր հրաշք անձնավորություն։ Ինձ բերող Բեսսեն՝ հայրերնին, իր տղաներին ասում էր.

— Ես ջահելացել եմ, ինչ լավ արի այս հայ տղուն բերի և երջանկացա։

Դրանից հետո ինձ գործ անել չէին թողնում՝ կեր, խմիր, ման արի, ասում էին։ Դու մեր հարազատ տղան ես այլևս։

Հուլումեն գյուղում մնացի մինչև 1919 թիվը, պատերազմը վերջացել էր։ Եկա Այնթապ քաղաքը։ Ամիսներ սոված, տկլոր ման եկա։ Գաղթականությունն՝ լիքը. ո՛չ աշխատանք կար, ո՛չ փող։ Չորս-հինգ ամիս հետո ամերիկացիները եկան որբանոց բացին՝ «Հալաճյան որբանոց»։ Դիմեցի՝ ինձ ընդունեցին։ Այնտեղ մի տարի մնալուց հետո անգլիացիները գնացին, նրանց տեղը եկան ֆրանսիացիները, որից հետո սկսվեց քեմալական շարժումը։ Կյանքը դառավ անտանելի։ Ամերիկացիները որբանոցը տեղափոխեցին Բեյրութ։ Մեր որբանոցը գնաց Ջիբեյլ՝ որտեղ մնացի մինչև 1924 թիվը։ Ամերիկայից հրավերի թուղթ ստացա և գնացի Ամերիկա։ Նավը հանդիպեց Հունաստան, Իտալիա և Ֆրանսիա՝ Մարսել, այնտեղից՝ Փարիզ։

Նավ նստեցինք, գնացինք, հասանք Ազորյան կղզիների մոտով Նյու Յորք։ Ամերիկայում ապրում էի Բոստոնի մոտ Ուոթըրթաունում. մի փոքրիկ քաղաք էր։ Ես տեսա Համաստեղին, Սողոմոն Թեհլիրյանին...

Այստեղից գնացի Դետրոյտ։ Երեք-չորս տարի աշխատեցի Ֆորդի ավտոգործարանում։ Այստեղ հանդիպեցի հնչակյան կուսակցության հիմնադիր Նազարբեկին։ Ծանոթացա Զորավար Սեպուհի հետ։ Ապա անցա Չիկագո, ուր աշխատանքի անցա Գաբիկյան Կարապետ անունով սեբաստացու գորգի խանութում։

Ֆրեզնոյում էր ապրում Անդրանիկ փաշան. վերջին օրերն էին։ Ես տեսա նրան հյուծված և հուսահատ վիճակում, փայտի օգնությամբ գալիս էր կենտրոնական այգին։ Հետո նա մահացավ։

Մի օր սրճարաններից մեկում ծանոթացա այնթապցի մի հայ երիտասարդի հետ, նա ինձ տարավ մի տուրիստական ընկերության գրասենյակ և ինձ համար աշխատանք ապահովեց տուրիստական մի նավի վրա։ Ես ուրախացա անչափ, որովհետև սիրում էի թափառական կյանքը։ Վերջապես

ճոխ տուրիստական նավով ճամփա ելանք՝ Հարավային Ամերիկայի շուրջը պտտվելու։ Գնացինք Չիլի, Մագելանի նեղուցով անցանք, եղանք Բուենոս Այրեսում, Ռիո Դե Ժանեյրոյում, Բրազիլիայում, Մոնտեվիդեոյում...

Վերջապես հասանք Վենեսուելայի մայրաքաղաքը՝ Կարակաս, և Պանամայի նեղուցով ետ՝ Լոս Անժելես։ Երկու ամսից ավելի տևեց իմ ճանապարհորդությունը։ Լոս Անժելեսում հանդիպեցի Հայաստանից եկած պատգամավորների, որոնք Անդրանիկի սուրը բերին Հայաստան։ Ես անընդհատ մտածում էի գալ Հայաստան, սովորել համալսարանում, ամուսնանալ հայ աղջկա հետ։

Հետո նորեն ճամփորդեցի։ Նյու Յորքում եղա շատ վայրեր։ Ապրում էի հորեղբորս տանը, այցելեցի Բոստոն՝ Ուոթըրթաուն, քրոջս մոտ, որտեղից որ սկսել էի իմ թափառական կյանքը։

Նյու Յորքում մի հայ բժիշկ ինձ տվեց Հայաստանի Հանրապետության անձնագիր, որով եկա Ֆրանսիա, դիմեցի սովետական դեսպան Լունաչարսկուն՝ Խորհրդային Հայաստան գալու համար։ Այնտեղ հանդիպեցի Պողոս Մակինցյանին, Դրաստամատ Տեր-Սիմոնյանին, Եղիա Չուբարին, որոնք ինձ հայտնեցին, որ Կիրովի սպանության պատճառով որոշ ժամանակ չի թույլատրվում օտարներին մտնել Սովետական Միություն։ Ինձ ասացին, որ սպասեմ որոշ ժամանակ, մոտավորապես հինգ տարի։ Մնացի Ֆրանսիայում՝ Մարսեյլ քաղաքում, մեր գյուղացիների մոտ։

Մարսեյլում, որպես օտարական, ինքնաթուղթ չունեի, հետևաբար ոչ մի տեղ աշխատելու իրավունք չունեի։ Առաջնակարգ հյուրանոցներից մեկում ազատ թարգմանիչ էի աշխատում՝ անգլերենի, թուրքերենի և արաբերենի։ Ամեն օր գնում էի նավահանգիստ, ճամփորդներին բերում էի հյուրանոց. ինձ լավ էին վարձատրում անգլերենի համար։

Ազատ ամիսներին գնում էի Փարիզ։ Մի անգամ տեսել եմ Մինաս Չերազին և Պողոս Նուբար փաշային, որոնք խոր ծերության մեջ էին։ Հայաստանի Հանրապետության տարեդարձին Փարիզ էին եկել Դրոն՝ Ռումինիայից, Բուխարեստից, Նժդեհը՝ Բուլղարիայից, Լևոն Շանթը՝ Բեյրութից։

Ռամկավարներն ունեին իրենց առանձին դեսպանական գրասենյակը՝ Զատիկ Խանզադյանի գլխավորությամբ, իրենց դրոշը կախված, դաշնակցականներն իրենցը՝ Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ, իրենց եռագույն դրոշով։ Ամեն մեկը իրենց համար գոյություն չունեցող հանրապետություն էր ներկայացնում կարծես։ Այս երեք կուսակցության անդամները մեկը մյուսի երեսը տեսնել չէին ուզում, թշնամաբար էին վերաբերում մեկը մյուսին։ Ես զարմանում էի հայերի այս ընթացքից, որ գոյություն ուներ թե՛ Ամերիկայում, թե՛ Լիբանանում, թե՛ Ֆրանսիայում. ամեն տեղ, ուր հայեր կային։

Փարիզում դաշնակները, Շավարշ Միսակյանի խմբագրությամբ, հրատարակում էին «Յառաջ» թերթը, ռամկավարները, Թերզիբաշյանի խմբագրությամբ՝ «Ապագա» թերթը, հնչակյանները հրատարակում էին «Նոր երկիր» թերթը, ՀՕԿ-յանները հրատարակում էին «Երևան», «Մեր ուղին»։ Հետո Մ. Մանուշյանը սկսեց հրատարակել «Զանգու» թերթը։

Տնտեսական ճգնաժամ սկսվեց Ֆրանսիայում և ընդհանրապես ամբողջ Եվրոպայում։ Անգործության առաջին զոհերը դարձան հազարավոր հայ բանվորներ։ Հայ բանվորներին զրկեցին նույնիսկ նպաստ ստանալու իրավունքից։ Առաջ եկավ փոխադարձ վճարման սկզբունքը։ Հայերին ասին. «Դուք հայրենիք չունեք. Ֆրանսիայի հետ չեք կապված առևտրով»։ Մարսեյլում դրությունն ավելի վատ էր, քան մյուս քաղաքներում։ Կոմկուսի ցուցումով կազմվեց անգործների միության կոմիտե՝ հայերի համար, ինձ ընտրեցին նախագահ։ Միսաք Մանուշյանի հետ մի հեռագիր ուղարկեցինք Խորհրդային Հայաստանի ժողկոմխորհ՝ Սահակ Տեր-Գաբրիելյանին, մեկն էլ՝ Ա. Խանջյանին և խնդրեցինք ներգաղթ կազմակերպել։ ՀՕԿ-ի քարտուղար դոկտ. Գալճյանը հեռագրեց Սովետական Միության արտաքին գործերի նախարարին և սովետական դեսպան Լունաչարսկուն։ Որոշ ժամանակ անց ընդառաջեցին մեր հեռագրերին, և Հայաստանից եկավ Շահվերդյանը։ Հայ բարեգործական միությունը, Մալեզյանի գլխավորությամբ, հանձն առավ ներգաղթող ընտանիքների ծախսը իր վրա վերցնել մինչև Բաթում։ Այսպես, 1926 թվի մայիսի 22-ին, մոտավորապես հինգ-վեց հազար հոգի ներգաղթեցինք Ֆրանսիայից։ Վերջապես իմ նպատակին հասա, Հայաստան գալ ցանկանում էի։ Մեզ հետ բերինք Կոմիտասի և Մինաս Չերազի աճյունները։ Մեզ հետ էին Ավ. Իսահակյանը՝ ընտանիքով, Արման Կոթիկյանը, դիրիժոր Գևորգ Յաղուբյանը և շատեր։ Այս ներգաղթով մեծ զարկ ստացան Խարբերդ, Սեբաստիա, Մալաթիա, Արաբկիր և Նոր Գեղի (Քղի) երևանամերձ ավանները։

## 55(271).
## ՍԵԲԱՍՏԱՑԻ ԽԱՆԶԱԴՅԱՆ ՄԵԼԻՆԵԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1908 Թ.)

Հայտնի աշխարհագրագետ Զատիկ Խանզադյանը մեր գերդաստանին է։ Ես որբ եմ մեծացել։ Նենես է ինձ խնամել։ Մեզ աքսորել են Աֆիոն-Գարահիսար։ Նենես կոնակը առած ինձ փախցու-

ցել, հասել է Կոնիա։ Առավոտ կանուխ Նեններ կելլա, հսկողության տակ կըլլա, կըսե ժանդարմին.— Ինձ ձգեցեք եկեղեցի մը էրթամ, մոմ մը վառեմ. չե՞մ փախի։

Կձգե ժանդարմը։ Նեննես կերթա վալիի մոտ, կըսե.— Մենք չենք ուզեր Դեր Զոր էրթալ, կուզենք հոս՝ Կոնիա մնալ, որովհետև Կոնիայեն անդին Դեր Զորի ճամփան պիտի բռնես։

Վալին թույլ տվեց, երեք տարի հոն մնացինք։ Հետո անցանք Իզմիր։ Մեծ մայրիկս ամերիկյան կոլեջին մեջը չորս հարյուր հայ որբերուն ճաշ կեփեր։ Ութը հայ հարուստներ հոգաբարձության կընեին անոնց։ Նեննես ադ կոլեջին մեջը արդուկ կըներ, քոլա կըներ։ Հետո Նեննես տուն բռնեց, մի որբ տղա մը առավ պահեց, որը հիմակ իմ ամուսինս՝ Աղասին դարձավ։ Սելանիկ ալ Նեննես որբանոցին մեջ խոհարար էր։ Հոն ալ անոր «Մայրի՛կ» կըսեին։ Վերջը Հունաստանեն Հայաստան եկանք։

## 56(272).
## ՍԵԲԱՍՏԱՑԻ ՕՆԲԱՇՅԱՆ ԱՐԱՔՍԻԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1909 Թ.)

Ես ծնվել եմ Սեբաստիայում։ 1915 թվի տեղահանության ժամանակ վեց տարեկան էի։ Մեզի աքսոր հանեցին դեպի Սուրուչ անապատին կողմը։ Ինդոր էղավ չեմ հիշեր՝ ես կորսնվեցա։ Զորս կողմս նայեցի՝ ամայի. մարդ-մարդազանք չիկար։ Ես սկսա լալ...։ Մեյ մըն ալ տեսա հեռուեն ուղտին վրա նստած մարդ մը մոտեցավ ինձի։ Երևի գիտցավ իմ կորսված ըլլալըս, ինձի առավ, տարավ իր չադըրը։ Ան ինձի հաց տվավ՝ կերա, կաթ տվավ՝ խմեցի, անկյուն մըն ալ ցուցուց՝ հոն քնացա։ Ադտեղ ալ մնացի։ Օրվան մեջ չադըրը կավլեի, կմաքրեի, ջրհորեն ջուր կբերեի։ Իմ տերը աբար բեդևին էր։ Ան ինձի շատ կսիրեր, միշտ կըսեր.— Յա՛, բէնթա՛, էնթա հէլուա՛ աուիյ (Աղջի՛կ, դուն շա՛տ գեղեցիկ ես),— և կսպասեր, որ քիչ մը մեծնամ, որ իր տղային հետ ինձի ամուսնացներ, քանի որ ճերմակամորթ էի, երևի կուզեր իրենց սերունդը ճերմկցնել...

Օրին մեկը ոտքերս՝ բոբիկ, վրաս-գլուխս՝ պատըռ-պատըռ, նորեն գացեր էի ջրհորը։ Ջուրով լեցուն խովան վեր քաշելու ժամանակս, մեյ մըն ալ չիմացա՝ ինդոր, մեկը մեջքիս գոտիի պես բան մը զարկավ, ինձի քաշեց իր ձիուն վրա, խամշին զարկավ ձիուն, ձին վազել սկսավ։ Ո՞ւր կէրթանք՝ չեմ գիտեր...

Բեդևի տերս անապատին բացության մեջը կերևի տեսավ, որ ձիավոր մը ինձի փախցուց, ուրիշ քանի մը արաբներուն հետ, ուղտերուն վրա նստած սկսան մեզի հետապնդել։ Բայց մենք արդեն հեռացեր էինք...

Նայեցա, ինձի փախցնողը եվրոպացի շատ շընորհքով զինվորական մըն էր։ Ան ինձի հարազատ զավակին պես գրկած, ձիուն վրա հասցուց գյուղի պես տեղ մը։ Հոն բարի քյուրդ կնիկի մը դըրամ տվավ, ան մեզի ներս առավ՝ պահեց։ Ադ քյուրդ կինը կկարծեր, որ եվրոպացի զինվորականը իմ հայրս է. «Փափա՞, փափա՞,— կհարցներ,— հա՞յրդ է,— բայց ես ձայն չէի հաներ, քանի որ չգիտեի ի՞նչ ըսելս...

Քանի մը օր հոն մնացինք գաղտնի։ Օրին մեկն ալ տեսնամ աս քյուրդ կինը գետինը չոքեց, արդեն գետինն ալ հող էր, տեսնամ ականջը մոտեցուց գետնին, երբ համոզվեցավ, որ դուրսը ոչ ոք չկա, մեզի կամացուկ մը դուրս հանեց, ճամփու դրեց...

Եվրոպացի զինվորականին ձին մութին մեջը կէրթար. մեյ մըն ալ գայլերու ոռնոց լսեցինք։ Տեսանք արդեն անոնք շրջապատել են մեզի։ Մութին մեջը ամեն մեկ գայլին աչքերը զույգ մը ճըրագի պես կփայլեին։ Ես վախես փաթթվեր էի զինվորականին։ Անի ալ կերևի փորձառու էր, հեմեն ֆեները հանեց՝ վառեց։ Գայլերը լույսը տեսնալնուն պես փախան։ Մենք շունչ քաշեցինք, մեր ճամփան շարունակեցինք։ Արդեն լուսացեր էր, երբ հասանք Պոլիս։ Աղվոր տունի մը մոտեցանք, ու մեր ձին կանգ առավ։ Երբ տունեն ներս մտանք, իրարանցում մը կար։ Դու մի ըսեր ադ տունին տերը հույն բժիշկն մըն է։ Անոր 7—8 տարեկան աղջիկին թուրքերը փախցուցած կըլլան։ Հույն բժիշկը աս զինվորականին կուտա իր կորսնված աղջիկին պատկերը և կխնդրե անոր, քանի որ ան որպես եվրոպացի սուլա իրավունք ուներ Թուրքիո նահանգներուն մեջ ազատ պտտելու, եթե իր աղջիկին գտնա, առնե բերե և իրեն բախշիշը առնե։ Աս սպան կփնտրե հույն բժիշկին աղջիկը, բայց չի գտնար։ Երբ ինձի կտեսնա ջրհորին գլուխը՝ ոտքերս բոբիկ-մոբիկ, կմտածե՝ գոնե աս պզտիկ աղջիկը տանիմ հույն բժիշկին՝ իր աղջիկին փոխարեն... Ադ ձևի տակ ինձի կառնե, կբերե Պոլիս։ Երբ մենք տունին կմոտենանք, հույն բժիշկին կինը ձիու սմբակներուն ձայնը լսելուն պես, կնետվի պատուհանը, կտեսնա սպան աղջկան ձիեն վար կառնե, կկարծե, որ իր հարազատ աղջիկն է գտնված, ուրախութենեն սիրտը կպայթի, տեղն ու տեղը կմնա։ Անոր համար ալ, երբ այդ տունեն ներս մտանք, իրարանցում մը կար...։ Բայց հույն բժիշկը նաժիշտներուն ըսավ, որ ինձ տանին լոգցնելու, քանի որ արաբներուն քովը ըլ-

վացվիլ-մվացվիլ չիկար. կարագը, յուղը կքսվեին, արևին կնստեին, մաշկը կծծեր յուղը, վերջն ալ գետը կմտնային, կլողային, իբր թե մաքրված կըլլային։ Անոր համար ալ ես շատ աղտոտ վիճակ մը ունեի։ Ինծի բաղնիք մտցուցին, աղվոր մը լոգցուցին։ Վերջն ալ նոր հագուստներ բերին։ Հագցնելու ժամանակ նաժիշտներեն մեկը թևիս վրա տեսավ «Ա-Օ» հայերեն գիրերը, ադ մայրիկըս ծեծած էր, որ եթե կորսվիմ՝ գտնան։ Անոնք կանչեցին հույն բժիշկին, ցույց տվին թևիս վրայի գիրերը։ Ան շատ բարի մարդ մըն էր, ակնոցներուն մեջեն նայեցավ՝ արմենիքոս, այսինքն՝ հայ է, ըսավ։ Ու իր վիշտին մեջ ինծի տարավ հանձնեց հայկական որբանոց։

Քանի մը ժամանակ մնացի որբանոցը։ Օրին մեկը մարդ մը էկավ։ Ան կփնտրեր աղջիկ մը, որուն թևին վրա «Ա-Օ» գիրերը ծեծված ըլլան։ Հայ որբուհիները սկսան իրար հարցնել.— Արդյոք սա որո՞ւն բախտն է բացված։

Դուն մի ըսեր, ադ իմին մորեղբայրս է։ Թևիս վրայի գիրերը տեսավ, ուրախութենեն սկսավ ինծի համբուրել։ Ինծի առավ, որբանոցեն դուրս հանեց, տարավ տուն մը։ Դուռը բացավ ճերմակ մազերով կին մը։ Ան ինծի տեսնալուն պես.— Իմի՛նս է,— ըսավ, հուզմունքեն ակռաները բերանին մեջ թափվեցան...

Խեղճ մայրս ինծի կորսնցնելեն վերջը այնքա՜ն լացեր էր, որ մազերը ճերմկցեր էին։ Արդեն ինքն ալ բավական տանջվեր էր։ Արաբ փաշայի մը քովը ծառայություն էր ըրեր։ Արաբ փաշան կուզե էղեր իր կույր տղային հետ ամուսնացնել, հարսանիքին օրը մայրս կփախի ադ տունեն։ Ոտքով քալելով-քալելով կուգա, կհասնի Պոլիս։ Հոն կգտնա իր եղբորը։ Ան ալ որբանոցեն ինծի կգտնա, կտանի իր քրոջը՝ Փուփուլին...

Վերջը մամաս ամուսնացավ հայ բարի մարդու մը հետ։ Մենք գնացինք Ռումինիա ապրելու։ Հիտլերին պատերազմին ժամանակ խեղճ մարդը ռումբերուն տակը մնաց՝ մեռավ։ Ես արդեն ամուսնացած էի հայ երիտասարդի մը հետ։ Ան ալ շատ կուզեր Ամերիկա հաստատվիլ։ Վերջապես օրին մեկը էկանք Նյու Յորք։ Հիմա ամուսինս կաշխատի օթոններուն գերեզմանոցը, հոն լըղնված հին օթոններուն, բասերուն մասերը կհանե, կտանե, կհանձնե, որ նոր օթո շինեն...

Իշդե՛, կյա՜նք մըն է, կապրինք։ Է՜, ձա՜գս, մարդ իր տունեն ոտքը դուրս դնե նե, հազար ու մեկ փորձանքի կուգա։ Ի՞նչ ըսեմ անոնց, որ մեր գլխուն աս զուլումը բերին։ Ղուրբեթ իջադ էդեն գյորմեսին ջեննեթ (պանդխտության հնարողը թող չտեսնի դրախտ)։

## 57(278).
## ԷՍՔԻՇԵՀԻՐՑԻ ՊԱՐՈՆՑԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1890 Թ.)

1915-ին, Ջալղարանի հայերուն աքսորի հանելեն տասը օր առաջ, եկան հարյուրի չափ հայ երիտասարդներու անունները կարդացին։ Ես ալ ադոնց մեջն էի։ Բայց հայրս 40 ոսկի տվավ զաբիթներուն, ինծի ազատեցին։ «Հայդե բաքալըմ» (դե՛, առաջ) ըսին, մնացածներուն ոտքով քշեցին դեպի Բանդըրմա։ Քանի մը օր ետքը եկան, ամբողջ գյուղը պաշարեցին, աքսորի հանեցին։ Ծնողներուս տարին, կացինով գլուխները կտրեցին։ Ես մնացի մենակ՝ երկու քույրերուս և մորաքույրիս հետ։ Անոնց մեջքերուն կապեցի հորս ունեցած ոսկիները։ Ճամփա ընկանք։ Ճամփին մեծ քրոջս թուրքերը փախցուցին, պզտիկ քույրս, որ տասներեք տարեկան էր, ջահել մորաքույրիս հետ ձեռք-ձեռքի տված, իրեն գցեց Եփրատ գետը, որ իրենք ալ թուրքի ձեռքը չանցնին։ Օրվա մեջ տասը-տասնըհինգ հոգի կկախեին ծառերեն։ Մնացածներին քշեցին ոտքով դեպի Դեր Զոր։ Ճանապարհին ես փախա։ «Հայ եմ» ըսի, հույները առին ինծի, պահեցին։ Վերջը հույն տղաներու հետ մտերմացա, փախանք անտառները, պարտիզան. 400 հոգի էինք։ Կկռվեինք թուրքին դեմը։ Մեզմե ով որ գերի իյնար, կտանեին Անկարա, կախաղան կհանեին։ Մեզմե տասնչորս հոգի կախեցին։ Մեղքերնին ան էր, որ փախել էին։

Թուրքին կառավարությունը հրաման հանեց՝ մեկ տարվան մեջ հայերուն կոտորել։ Չեչենները զենքերը առած եկան մեզ կոտորելու։ Ան ժամանակ երեք միլիոն հայություն կոտորվեց, կըսեն մեկ ու կես միլիոն կոտորվեց, բայց սո՜ւտ է. երեք միլիոն կոտորվեց, միայն կես միլիոն Դեր Զորում կոտորեցին։ Երեք հարյուր հազար՝ Ռաս էլ Այնում, Արաբիայի չոլերում։ Օրական 10—15 հոգի կփորեին, հարյուրավոր մեռելներ կթաղեին, խոլերայեն կմեռնեին։ Ադոնց հաշիվը բռնո՞ղ եղավ։ Մինաս անունով տղա մը, որ յարալու է եղել, լեշերու տակեն ազատվել, փախել էր, Եփրատի ափին տեսել է պզտիկ քույրս՝ Շնորհիկը, և ջահել մորաքրոջս տկլոր՝ ափին ընկած։ Դու մի ըսեր անոնց լեշերը ջուրը ափ է դուրս հանել, արաբներն ալ անոնց շորերը վրայեն հանել են, մերկ դիակները գցել են ափին՝ գազաններուն, ագռավներուն կեր դառնալու։ Աս բոլորը հետո Մինասը ինձ պատմեց, շատ տարի հետո...

Հայերը հարուստ էին մեր կողմերը։

Ամենալավ տունը, ամենալավ խանութը հա-

յերունն էր։ Թուրքերը ուզեցին հայերուն տեղահանել, որ հայերի ունեցած-չունեցածը իրենց վերցնեն։ Աս պլանը իրականացրին։ Հայերը աքսոր ելլելու ժամանակ ամեն մարդ իր փողերը, ոսկիներն առավ հագուստներուն մեջ կարեց, քամարներուն մեջ դրավ, իր վրա վերցուց՝ նեղ օրվա համար։ Թուրքը ձիավորներ դրեց հայերուն վրա, իբր թե պիտի պահպանեն, ամմա հայերը անոթի-ծարավ չոլերը ինկան՝ ուժասպառ։ Թուրքերը հատուկ հեռացնում էին հայերուն ճամփան, որ գետի ջուրի չհանդիպին, ջուր չխմեն, չաշխուժանան, որ ուժասպառ ընկնեն մեռնեն։ Ողջ մնացածներուն երթալեն վերջը, Թուրքերու նոր խումբ մը կուգար, որ ինկածներուն տկլորցնեն, սոդթեն, թալանեն։ Իսկ ոմանք ալ, որ ընկել էին ճամփեն դուրս, սողալով մի կերպ հասել են ջրին, խմել, ուժ առել, փրկվել։ Մեր Հաջի Գաբրիելը այդպես էր ազատվել... Վերջը ան ալ Հայաստան եկավ, հոս թաղվեցավ։ Ան ալ էսքիշեհիրցի էր։

Հույնը գրավեց էսքիշեհիրը, բայց բոլշևիկ ռուսը Թուրքին զենք ու ոսկի տվավ։ Հույները ի՞նչ պիտի ընեին՝ կոտորվեցան։ Հունաստան փախողները՝ ազատվան։ Իզմիրը հույների կողմից գրավված էր, բայց Թուրքերը կրակի տվին։ Ռումանիան մեզ չընդունեց։ Ըսավ՝ բանվոր չեմ ուզեր, վաճառական ըլլա նե՝ կուզեմ։

Բուլգարիան ըսավ՝ հայերը հողեն դուրս թող էլլան։ Անտեղ մի հարուստ հայ վաճառական կար, գնաց, խնդրեց թագավորին, որ մեզի ընդունեց։ Վերջն ալ 32 թվին Հայաստան եկանք, կապրինք հիմա Նոր Բութանիա։

**58(274).**

## ԷՍՔԻՇԵՀԻՐՑԻ ԳԱՎԳԱՎՅԱՆ ԵՂԻՍԱԲԵԹԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1900 Թ.)

Ջալղարանեն մեզի աքսորեցին դեպի Ռասուլիա (Ռաս էլ Այն)։ Մամաս Թուրքերուն համար ջուր կկրեր, փոխարենը պատառ մը հաց կուտային իրեն, ինքն ալ կբերեր ինձի կկերցներ, որ անոթութենեն չմեռնիմ։ Մամաս ինձի տղայի քուրջեր հագցուցած էր, քանի որ աղջիկներուն կփախցընեին։ Ես ծածուկ կելլեի սիգարեթի պոչերը կըհավաքեի հորեղբայրիս համար։ Հայերին շատերուն մաղարայի մեջ լեցուցին, վրանին կիր լեցուցին, կրակի տվին, այրեցին։

Թուրքերը փայտե թոփուզ ունեին՝ քյո՛ւթ դեի գլուխնուն կզարնեին, կմեռցնեին։ Մեր Մարգրիտը մեռելներուն, լեշերուն մեջեն ելեր, տեսել է, որ մարդ չիկա, փախեր, էկեր էր, մեզ գտավ։

Հայ կնիկները թաքնված էին թփերուն տակը։ Մեկուն կրծքի երեխան սկսավ լաց ըլլալ, մայրը ըսավ՝ աս երեխան մեր բոլորին մահվան պատճառ պիտի ըլլա, սեղմեց կրծքին, որ չլացի, երեխային մեռցուց իր գիրկին մեջը։ Շատերը իրենց Եփրատը նետեցին։ Սուզեկի պես խորն է անոր ջուրը, կհիշեմ։ Եփրատին մեջ ալ մեռան, խեղդվան։ Մամայիս քույրը, մայրը, հարսը՝ ախպոր կնիկը, գացին իրենց ջուրը գցեցին, որ Թուրքին ձեռքը չանցնին։ Թուրքերը մեզի աղվոր մը տանջեցին։ Սաջերը կրակի վրա կդնեին, որ կարմրի, անոնց վրայեն կքալեցնեին, ոտքերնուն տակերը՝ դաքանները կայրեին և կամ կնալեին, տանջամահ կընեին։

Շատ խեղճացել էինք։ Ոտքերուս տակը յարաներ էին եղել։ Ուտելիք չիկա, մտածեցի կոշիկներս ծախեմ, հացի դրամ ըլլա։ Թուրք տղա մը կոշիկներս առավ։ Աղ նույն գիշերը երեք տարեկան քույրիկս երկար անոթի մնալեն վերջը ուտելիք կերավ՝ ուռավ, մեռավ։ Ծառին տակը թաղեցինք։ Գիշերը սոված չախկալները եկել, հողից հանել էին մեր սիրուն Հայկուշին, բզկտել, կերել էին...

Մինչև Ռաս էլ Այն գացեր ենք՝ Հալեպեն անդին։ Մեզի սևկյետ պիտի ընեին, այսինքն, պիտի ջարդեին, ամմա հրաման էկավ. «Որուն ընտանիքին մեջը Թուրքական բանակի զինվոր կա՝ անոնց ընտանիքը պիտի ազատվի կոտորածեն»։

Ասանկով ողջ մնացինք...

**59(275).**

## ԷՍՔԻՇԵՀԻՐՑԻ ՓԱԹՐՅԱՆ ՍԱՄՎԵԼԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1900 Թ.)

Ծնվել եմ Ջալղարանում։ Երբ 1915 թվին աքսոր մեզ հանեցին, ես կհիշեմ, թե ինչպես էսքիշեհիրեն մեզ ոտքով տարին Սիվրիհիսար։ Հետո՝ Հայմանա, հետո՝ Ղըրշեհիր, հետո ոտքով մեզ բերին Ղայսերի՝ Կեսարիա։ Ճանապարհին ինչե՛ր ասես չտեսանք, ինչե՛ր ասես չքաշեցինք։

Կհիշեմ, աղջիկները և կանայք խաչ կհանեին, գետին մեջ կնետվեին, աղ ժամանակ նամո՜ւս կար, բա՜ն կար...։ Խարբերդի մոտերն էինք։ Կհիշեմ, օր մը երկու զաբիթներ իրար հետ գրազի բռնվեցան մի հայ հղի կնոջ վրա։

— Շու քարընըն քարնը նե՞սի վար (Այս կընոջ փորում ի՞նչ կա)։

— Գյավուր դըր՝ քըզ օլուր (Գյավուր է՝ աղջիկ կլինի)։

— Յո՛ք, օղլան օլուր (Ո՛չ, տղա կլինի)։

Գրազ եկան, իմ աչքի առաջ դաշույնով կնոջ փորը ողջ-ողջ ճեղքեցին։ Ես ադ իմ աչքովս տեսած եմ։

Երբ Կեսարիա հասանք, մեզի բերին, լեցուցին մեծ սրահի մը մեջ։ Կեսարիայի վալին եկավ հարցուց.— Էրմենի բաջիլա՞ր (Հայ քույրե՞ր), արդյոք ճանապարհին ձեզ նեղություն տվող եղա՞վ։ Մեր հայ կանայք ալ ուժ առին, սկսան պատմել, թե ինչպես թուրք հսկիչ ժանդարմները գիշերները մեզի կծեծեին, մեր հայ աղջիկներուն ու հարսներուն կտանեին..., իսկ առավոտյան՝ հալից ընկած ետ կբերեին...

Վալին ջղայնացավ, ըսավ.— Ամո՛թ, և ասոնք մեր ազգին զավակներն են,— ու հրամայեց իր ոստիկաններուն,— տարե՛ք աս ժանդարմներուն, զնդանը նետեցե՛ք։ Դուք մոռացա՞ք, որ Անդրանիկը երբ կուգար, ծակե-ծուկ կմտնայիք։ Էրմենիլե՛ր (Հայե՛ր), հե՛չ չվախնաք, Կեսարիայի հայ հարուստները շատ են, ձեզի լավ կպահեն...

Եվ մեզ սկսան բաժանել հայերու վրա։ Իմ ջահել մայրս ու մի եղբայրս մեռել էին ճամփին՝ հոգնությունից ու անոթությունից, մյուս եղբայրս ալ մեռեր էր տիֆից։ Մեր ընտանիքեն մնացել էի միայն ես։ Ինձի պես անտեր մնացած տղոցն ալ մտցուցին սուրբ Կարապետ վանքի որբանոցը, որտեղ սովորեցի։ Հետո մեզի տարին ամերիկյան որբանոցը՝ հոն ալ սորվեցա։ Հետո յոթ տարի Անկարայում, թուրքական բանակում, որպես սպա ծառայեցի։ Անկարայից անցա Երուսաղեմ։ Մի արաբի մոտ աշխատեցա։ Ադ բարի մարդն ինձ իր հոգեզավակը դարձուց։ Արաբերեն կխոսեին անոր տունին մեջ։ Հետո 1925-ին Երուսաղեմեն Հունաստան անցա։ 1932-ին Հունաստանեն մինակս, քարավանին մաս կազմելով, եկա Հայաստան։ Գիտցած հայերենս դրեթե մոռցած էի... Հոս սկսա կամաց-կամաց վերհիշել...։ 1935-ին ամուսնացա։ 1942-ին ռազմաճակատ զորակոչվեցա։ Երեք-չորս տեղեն վիրավորվեցա, բայց շարունակեցի կռվել հայկական 89-րդ դիվիզիայի կազմում։ 1945 թ. հասանք Բեռլին։ Մայիսի 9-ն էր։ Ռայխստագի մոտ գերմանացիներ հավաքվեցին մեր շուրջը։ Մի գերմանացի ծերուկ, մոտ 80 տարեկան, հարցրեց թուրքերենով.— Իչինիզդե թյուրքչե բիլեն յո՞ք մը (Ձեր մեջ թուրքերեն գիտցող չկա՞)։

Մեր մարտիկները չհասկացան։ Ես մոտեցա, ըսի.— Բեն բիլիրիմ (Ես գիտեմ)։

— Օղլո՛ւմ, սեն նե՞ միլլեթ սին (Տղա՛ս, դու ո՞ր ազգից ես)։

— Էրմենի իմ (Հայ եմ)։

— Նե՞ դիորսըն, ջանը՛մ, բու օրդուսը էրմենի դը՞ր (Ի՞նչ ես ասում, ջա՛նս, այս հայկակա՞ն զունդ է)։

— Հե՛, էրմենի օրդուսու դըր Թամանյան 89-րդ դիվիզիա (Այո՛, հայկական զունդ է՝ Թամանյան 89-րդ դիվիզիան է)։

— Գելմենիզ ներդե՞ն (Որտեղի՞ց եք եկել)։

— Էրմենիստան (Հայաստանից)։

— Էրմենիստան վա՞ր մը (Հայաստանը կա՞ արդյոք)։ Հեփսի էրմենիլերի քեսմեդի՞լեր (Բոլոր հայերը չկոտորվեցի՞ն)։

— Էրմենիստան հելբե՛թ դե վար (Հայաստան իհարկե՛ կա)։

— Սեն թյուրքչե նա՞սըլ բիլիրսին (Դու թուրքերեն ինչպե՞ս գիտես)։

— Բեն Անկարադա եդի սենե զաբիթ օլմուշ ըմ Թուրք օրդուսը (Ես Անկարայում թուրքական բանակում յոթը տարի սպա եմ եղել)։

— Ուրեմն եկել եք ձեր վրե՞ժը լուծեք գերմանացիներից։ Զունքի բիզ սեբեբ օլդուք (քանի որ մենք պատճառ եղանք) ջարդին, արյունահեղությանը։ Ես ալ ադ ժամանակ գերմանական բանակի զինվոր էի Թուրքիայում։ Հոն ալ թուրքերեն սորվեցա...

Է՜, ո՞րը հիշեմ, ո՞րը պատմեմ, ես ալ չգիտեմ։

Բեռլինի փողոցները ման էինք գալիս՝ առք-փառք, աղջիկ մը պառավի մը հետ կխոսեր, ինձի տեսնալուն պես ժպտալով ծեր կնոջն ըսավ.— Տե՛ս, աս երիտասարդը ինձի փրկեց։

Ես հիշեցի այդ հրեշտակի պես աղջկա դեմքը։ Մի քանի օր առաջ շենք մը մտել էի՝ ավտոմատը ձեռքիս, շենքը կործանված էր և ամայի։ Տուն մը մտա, խալի մը կախված էր պատեն, մտածեցի՝ պոկեմ... Դու մի ըսեր՝ ետևը դուռ է եղեր... բացի, հրեշտակի պես աղջիկ մը (էդ աղջիկն էր) վախեն կդողար, ինձի տեսնելով՝ ավելի վախնալ-դողալ սկսավ, որ ուր որ է իրեն պիտի սպանեմ, ըսավ.— Նի՛խտ, կամարա՜տ, նի՛խտ, կամարա՜տ (Ո՛չ, ընկե՛ր, ոչ՛, ընկե՛ր, այսինքն՝ մի՛ սպանիր ինձ, ընկեր)։ Ես մեղքցա անոր, շալակս առի, սանդուխներեն վար տարի։ Ահա ադ աղջիկն էր, որ մատով ինձ ցույց կուտար պառավին՝ որպես իր փրկարարին։ Է՜, շատ ծանր օրեր, ամիսներ, տարիներ անցուցինք՝ ասդին-անդին, սոված-ծարավ, վիրավոր-հիվանդ, բայց ողջ-առողջ վերադարձանք։ Ադրբեջանցիները սաբոն կուտեին, որ հիվանդ ձեվանան և բանակեն ազատվին։

Մեր հայկական դիվիզիայեն հազիվ երկու հարյուր հոգի վերադարձանք։ Երբ հասել էինք Ֆրանկֆուրտ գետի մոտ, Ստալինը հրաման ըրավ, որ հանգստանանք։ Մեր հրամանատար Նվեր Սաֆարյանն ըսավ.— Ի՞նչ է, հասնեմ էստեղ՝ հանգստանա՞մ, չմտնա՞մ, քշե՛ք, տղե՛րք, մտե՛ք...։ Սաֆարյանը լավ մարդ էր, երբ տղաներեն մեկը կփնթփնթար, որ պատերազմը երկար տևեց, Սա-

ֆարյանը, փոխանակ կոպիտ հրաման մը արձակելու, կըսեր.— Ճի՛շտ է, տղանե՛ր ջան, հոգնել եք, բայց Հայաստանի դռան բանալին կորցրել են, դռները փակ են, մեզ չեն ընդունում...

Իսկ երբ հաղթանակը եղավ, ըսավ.— Ուրախացե՛ք տղե՛րք, Հայաստանի դռան բանալին գտնըվել է, մեզ տո՛ւն են կանչում...։

Օր մը Հակոբիկ Թոռս եկավ սենյակս, տեսավ նստած կուլամ, ըսավ.— Պապի՛կ, ինչո՞ւ կուլաս...

Ըսի.— Է՛, բալա՛ ջան, անցյալս միտս ընկավ, կուլամ...

Է՛, ինչե՛ր տեսանք, ինչե՛ր անցուցինք, սա միայն իմ կյանքս չէ, սա հայ ժողովրդի ճակատագիրն է...

## 60(276).
## ԷՍՔԻՇԵՀԻՐՑԻ ԲԵՐԲԵՐՅԱՆ ՍԱՌԱՅԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1905 Թ.)

Մենք շատ մեծ գերդաստան էինք, Էսքիշեհիր կմնայինք։ Քառասուն հոգով սեղան կնստեինք։ Հիմա մինակս մնացած եմ։ Մեր գլխին եկածանցածը հեքիաթներուն մեջը չըլլար։ Մեզի տունեն-տեղեն հանեցին։ Հայրիկներուն տարին մեզանից։ Մեզի ալ աքսորեցին։ Ճամփան սովա՜ծ, ծարա՜վ, ոտքով կքալեինք, չէր լըմըննար...։ Քիչ մը ետ մնայիր, Թուրք զաբիթները կխփեին։ Ճամփին երկու կողմը մեռելները ինկած էին, վրաներնին կոխկռտելով կանցնեինք, մե՛ղք ունի, ամմա ի՞նչ կրնայինք ընել, ոտք դնելու տեղ չիկար, ամեն տեղ մեզմե առաջ գացողներուն դիակները փռված էին։ Մեր ալ ուժերնիս չէր պատեր, որ առաջ էրթայինք կամ ետ մնայինք՝ մեզ կխփեին։ Մի քիչ կերթայինք, նորեն կխփեին... ասանկով աքսոր քշեցին, ճամփին էկան մեզ սոթդեցին, մորե մերկ մնացինք։ Մամաս լաթ մը առջևը կապեց, որ գոնե ամոթը գոցե։ Մեկ թաս ջուր ուզեինք նե, ոսկի մը տուր՝ կուտանք, կըսեին... Ճարահատ ցեխաջուր, շեռաջուր, ինչ գտած ենք՝ խըմած ենք։ Ինդո՞ր է, քի մեռած չենք։ Մայրերուն աչքին առաջը զավակներուն կսպանեին, զավակներուն աչքին առաջը, մայրերուն կսպանեին... Երազի պես կհիշեմ, բայց կհիշեմ։

Հետո մենք Իզմիր անցանք։ Մամաս շնորհքով կին էր. վերջը-վերջը բժիշկի մը քով սկսավ աշխատիլ, սենյակը կավլեր-կսրբեր, վերքերը կըկապեր, մեզ ալ կպահեր։ Մեկ ալ լուր եկավ, քի մամայիս ախպարը եկել է։ Մամաս ուրախ-ուրախ գնաց, մեկ ալ տեսեր էր, քի դիակն են բերած։ Խեղճ մայրիկս նորեն սուգը մտավ, մենք պզտիկ ենք դեռ, սովա՜ծ, ծարա՜վ, ոջլոտվա՜ծ, անոթի՜։ Մամաս շինության վրա սկսավ հող կրել, պզտիկ զամբյուղով մը կկրեր, շահած դրամովը մեզ կըպահեր։

Հետո լուր եկավ, որ հայրիկս բանտարկյալներուն հետ բերված է մեր քաղաքը։ Կերթայինք բանտի դուռը։ Պզտիկ լուսամուտ մը կար, մի կտոր հաց կերկնցնեինք, հազար ձեռք կերկարեր։ Այնքան, որ անոթի էին։ Վերջը, երբ հույնը եկավ, հայրս բանտեն դուրս եկավ, մեզի գտավ։ Հետո Հունաստանեն Հայաստան եկանք։ Հոս ալ շատ դժվարություն տեսանք՝ պատերա՜զմ, սո՜վ։ Է՛, ո՞րը ըսեմ, ո՞րը պատմեմ...

## 61(277).
## ԷՍՔԻՇԵՀԻՐՑԻ ԲՈՒՐՍԱԼՅԱՆ ՖԱՐՆԸՄԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1908 Թ.)

Երբ մեզի աքսոր հանեցին, ես երեխա էի, տիկնիկը ձեռքս էր։ Թուրքերը մեզ քշեցին, տարին մինչև Կոնիա։ Դեր Զոր գացողներին առանձնացրել էին, որ ճամփա հանեն։ Մամաս հիվանդ էր։ Հայրս ալ հաց կբաժներ գաղթականներուն։ Հայրս գնաց, խնդրեց, ըսավ.— Կինս հիվանդ է, չի կրնար քալել։

Ըսել էին.— Լա՛վ, տար ջրի այն կողմը։

Կհիշեմ, հայրս շալկեց բավական շիշկո մորս և անցուց, լողալով հասցուց գետի այն կողմը։ Աս-ան կողմեն ձայներ լսվեցին.— Ա՛յ մարդ, ամո՛թ է։

Հայրս ըսավ.— Ամոթ-մամոթ չիկա՛, հոգիններնիս պիտի ազատենք։

Ես ութը տարեկան էի։

Եղբորս զինվոր տարին, գնաց ու չեկավ։ Բոլորին քշեցին Դեր Զոր։

Մենք փրկվեցինք։ Հետո ալ հույնի զինվորը պատերազմ արեց թուրքի հետ։ Թուրքը ըսավ.— «Հույնը, հայը վտանգավոր են»,— հավաքեց, որ սպանի։ Հորս տարին։ Հարցուցեր են.— Ո՞վ փող ունի։

Հայրս մինչև գրպանեն հանել է փողը, սպանել են։

Մեկ ալ տեսանք թուրքը բոլոր հայերին Բուրսայեն քշեց Ենջա։ Վը՛զ-վը՛զ գնդակները կթռնեին, կխփեին, ժողովրդին չէին թողնում բարձրանա

նավը։ Ջենջիլը (խարիսխը) ինկած չէր, որ նավը շուտ փախչի Թուրքեն։ Ով ուզում էր նավ բարձրանալ, հո՛պ ջուրը նետվում էին՝ լողալով բարձրանում էին նավ։ Նավի սանդուղքները պարանից էին, ես վախեցա, ինձ օգնեցին՝ վեր ելա։ Ով էլավ, փրկվավ։ Թուրքը կրակեց, նավը քաշվեցավ։

Էնքա՜ն անասուն, էնքա՜ն ունեցվածք, ամե՜ն ինչ մնաց Թուրքին։ Մերկ, տկլոր հոգինիս ազատեցինք։ Բերանդ ք...քնեմ, Թո՛ւրք։

Վերջը Հայաստան եկանք, որ Թագավոր ունենանք. էստեղ խոսել կվախնայինք։ Բա՜ն չկար ուտելու։ Սովից կոտորվանք։ Երեք տարեկան աղջիկ մը ու չորս տարեկան տղա մը ունեինք՝ մեռան։ Մարդս ալ մեռավ։ Մնացի մենակ։

## 62(278).
## ԿՈՆԻԱՑԻ ԵՂՅԱՅԱՆ ԿԱՐԱՊԵՏԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1898 Թ.)

Մեր ընտանիքը Կոնիայի Նիդե Թաղը կապրեր։ Երբ հայրս իր մեռնելը զգաց, կանչեց ինձ ըսավ.— Էկո՛ւր, Կարապետ, տղաս։ Ասկե վերջը տունին մեծը դո՛ւն ես։ Աքսոր որ տանեն, քույրերուդ հյուսերուն կապած ոսկիները կհանես, կհավաքես, վրադ կպահես։

Երբ աքսորի լուրը էլավ, ես պապայիս ըսածին պես, ոսկիները մեջքս կապեցի։ Ինձի տարին Թուրքի բանակ, քույրերուս դեպի Դեր Զոր։ Բանակում կտեսնայի, որ ամեն օր մեր հայերը քիչքիչ կպակասին. գլուխնին ուտում էին։— Արմենակ,— ըսի ընկերոջս,— արի փախինք։ Գիշեր մը, մութին մեջ սողալով, փախանք, հասանք ջուրի մը մոտ։ Ըսի.— Ամա՜ն, Արմենակ, էկուր քիչ մը ջուր խմենք, լվացվինք, զովանանք։

Արմենակը էկավ, լվացվեցինք, ան քիթին տակեն երգում էր.

Վերfերով լի ջան ֆեդա եմ,
Թափառական, տուն չունիմ:

Մեկ ալ կին մը էկավ ջուր առնելու։ Լսել էր հայերեն երգը, ըսավ.

— Դուք հա՞յ եք, շո՛ւտ փախեք, հիմա ամուսինս կգա, ան ղաչաղ արաբներից է, կգա, ձեզ կխփե։ Ես այսինչ հայ հարուստի աղջիկն եմ, տունին մեկ հատիկն էի, գացեք ըսեք ծնողքիս, թող գան ազատեն ինձի։

Տեսանք, որ ադ աղջկա ամբողջ երեսները և դոշերը կապույտ մելանով ծեծված էին։ Հազիվ աղջիկը գնաց, մարդ մը եկավ թոփուզը ձեռքին։ Եկավ, մեր երկուսի գլխուն թոփուզով սկսավ խըփել, մեր հագուստները հանեց, մեջքիս ոսկիներն ալ հետը, էլավ գնաց։ Մեզի ձգեց վարտիքշապիկով։ Ես Արմենակին ըսի.— Ասոնց մեծն ալ կա երևի, էկուր էրթանք գտնանք, բողոքենք։

Գացինք, տեսանք հեռուեն չադըր մը երևաց։ Մոտեցանք։ Շուները շրջապատեցին մեզի։ Ադ արաբ շեյխի վրանը կըլլա։ Մեզի առին ներս տարին։ Մենք շեյխին պատմեցինք։ Հոն նստած մարդիկ իրար անցան։ Գացին մեզի ուտելիք՝ ապուր, հաց բերին, կերանք, հոգնած էինք, ընկանք քնացանք։ Առտուն ելանք տեսանք, քի մեր հագուստները կախված են, ոսկիներն ալ մեջը։ Դու մի ըսեր շեյխը փնտրել, գտնել է տվել, մեղքցեր է մեզ։ Ես հոն մնացի, սկսա աշխատիլ։ Չադըրը կավլեի, ուղտով ջուր կբերեի հեռուեն, ոտնաման կշինեի անոնց համար։

Օրին մեկը Թուրքի օթո մը եկավ, մեջեն Թուրք մը իջավ.— Գյավո՛ւր, դուն ի՞նչ ես անում այստեղ,— ըսավ։

Շեյխը սկսավ խնդրել, որ ինձի ձեռք չտան։ Օրին մեկն ալ ինձի արաբի հագուստ հագցուց, ղրկեց իր քրոջ քովը։ Ճամփին բռնեցին, հարցուփորձ ըրին.— Վեսիկա (բանակից ազատվելու թուղթ) ունե՞ս։

— Չէ՛։

— Անունդ։

— Կարապետ Եղյայան։

— Մուստաֆա՛ պիտի ըլլաս ասկե վերջը։

— Չե՛մ ըլլար։

— Բերե՛ք ֆալախան։

Սկսան ծեծել 66 հատ։ Հետո նորեն հարցուցին.— Անունդ ի՞նչ է։

— Կարապետ Եղյայան։

— Չէ՛, Մուստաֆա՛ պիտի ըլլաս։

— Չե՛մ ըլլար։

Նորեն 66 հատ ֆալախա զարկին։ Վերջը ջըղայնացած հրամայեց.— Աս գյավուրին զնդան նետեցեք։

Բանտում մնացի մի քանի ժամանակ։ Մի օր պահակին հետ խոսեցա, որ մեկ ոսկի տամ, աչքը գոցե, ես փախիմ։ Տվի։ Փախա։ Ետևես լսեցի դյուդիկներով սկսան ձայն տալ, որ փախող կա։ Գետինը, փոսին մեջ, խողովակ մը կար, իջա մեջը, մեջն ալ կեղտոտ ջրերը կերթային։ Մտածեցի՝ հարկավ տեղ մը կթափվի աս աղտոտությունը։ Գնացի՜, գնացի՜, վրաս-գլուխս կեղտի մեջ։ Տեսա քարեր կան։ Կպրծուն քարերը բռնելով իջա։ Քիչ հեռուն մարդ մը եզով հերկ կընեը։ Ինձի տեսավ կեղտի մեջ կորած, ջին կարծեց, վախեն արորմարորը թողեց փախավ։ Ես մոտեցա, արորեն կախված չըխընը բացի, մեջի հացը կերա, փորս կշտացուցի, ոտքս առի ու գացի։ Շատ գացի, տեսա Թուրքի գերեզման մը։ Անոնց գերեզմաններն

*ալ սենյակի պես կըլլան։ Վրաս գլուխս թա՞ց, կեղտո՜տ, մտա՝ քնացա։ Մեյ մըն ալ առտուն արթնցա չանգըլ-չանգըլ ձայնեն, մարդ մը էշին վրա նստած հեռուեն կուգա։ Ես գերեզմանեն դուրս ելա։ Աս մարդը ինձի տեսնելուն պես էշը ձգեց փախավ։ Ես անոր հացն ալ կերա։ Ետքը մտածեցի՝ մարդը կարող է ետ կգա էշը փնտրելու։*

*Ադտեղեն ալ հեռացա, գացի Եփրատի ջուրով լողացա, մաքրվեցա։ Վարտիքիս մեջ ջուր լցվեցավ, բալոնի պես ուռեցավ, ինձի մյուս ափը քըշեց, անցա։*

*Հարցնելով, հարցնելով, մերիններին գտա։ Տեսա մեկ քույրս մեռած, երկու երեխան մնացել են որբ, ամուսինը՝ սպանված։*

*Երբ հայերուն աֆըրխ՝ ներում տվին, ես ինձ ազատ զգացի, գացի Հալեպ։ Ճամփին մյուս քույրըս ալ մեռավ։ Ժամանակները գեշ էին։ Հացը վեսիկայով էր։ Օր մը հացի հերթին մեջը տեսա հայ մարդու մը ջղայնացնում են, քյուֆիր-քյաֆիր, մարդը խըրսեն, թե՝ անոթութենեն ինկավ գետին, մարեցավ։ Ես աս մարդուն մեղքցա, վերցուցի, տարի ճաշարան մը, կերցուցի վրան հալ եկավ, հարցուցի.— Դու ո՞վ ես։*

*— Ինձի կըսեն ֆարմասոն Վահան։ Իզմիրեն եմ, առաջ թուրս ա՛չ կկտրեր, ձա՛խ կկտրեր։ Հիմա ինձի մի՛ նայիր, հալս՝ հա՜լ չէ։ Նե՛ դրամ ունիմ, նե՛ հալ, ես կոշկակար եմ, աղվոր վարպետ եմ։*

*Ես ըսի.— Դրամը՝ ինձմե, վարպետությունը՝ քեզմե։ Աս խեղճ ու կրակ մարդուն առի տարի տունս, լոգցուցի, հագցուցի։ Աս մարդը յախըշըխլը մարդ մը դարձավ։ Հալեպի ամենեն աղվոր փողոցներեն մեկում խանութ բռնեցի, սկսանք աշխատցընել։ Աս Վահանը աղվոր կոշիկներ կշիներ։ Բոլոր ֆրանսացի բարձրաստիճան մարդիկ կուգային մեր խանութը՝ իրենց կնիկներուն կոշիկ առնելու։ Կշեռքի վրա դնեիր նե՝ քաշ չուներ, թեթև էին մեր կոշիկները։*

*Օր մը թուրք զաբիթ մը եկավ, մահանա բռնեց. թե խանութին թաբելան ծուռ դրված է։ Ըսավ, դրամը առավ գնաց։ Ալ սորված էր՝ ամեն օր կուգար դրամը կառներ, կէրթար։ Օր մըն ալ նորեն էկած էր, ես շատ ջղայնացած էի ադոր վրա. մեյ մըն ալ ժեներալ Գուրոյի աղջիկը խանութնիս մտավ՝ կոշիկ առնելու, ըսավ.— Ինչո՞ւ տխուր եք։— Ես պատմեցի զաբիթին ըրածը։*

*Ըսավ.— Մեյ մըն ալ գա նե, օձիքը դարձուր, նյումերոն նայե, ինձի ըսե, պապաս անոր գործեն կհանե։*

*Օր մըն ալ ես որպես աշկերտ սխալ մը ըրի, աս Վահանը ինձի ապտակեց, ես շատ նեղվեցա, ըսի.— Ամա՜ն, վարպետ, հա՛մ դրամը ես տամ, հա՛մ ապտակը ուտեմ։*

*— Կարապե՜տ, տղա՜ս,— ըսավ,— արհեստը ասոր մեջն է, օղլո՜ւմ, քեզ ծեծողին մոտ գնա։*

*Օր մըն ալ աս Վահանը ըսավ.— Ես Ամերիկա պիտի էրթամ, դուն ալ եկուր էրթանք։*

*— Ես չե՛մ գար,— ըսի։*

*Ան գնաց։ Նկար մը ղրկեց, ետևը գրված. «Կարապետ, ես հոս լավ եմ, դուն ալ եկուր»։*

*Ես նորեն չգնացի։ Էլա ամուսնացա, ընտանիքս առի, Հայաստան եկա։*

## 63(279).
## ԿՈՆԻԱՑԻ ԳՈՒՅՈՒՄՋՅԱՆ ՍԱԹԵՆԻԿԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1902 Թ.)

*Ես ծնվել եմ Կոնիայի վիլայեթի էլմալու[1] գյուղում։ 1915 թվին թուրքերը էկան, առաջ էրիկ մարդոցը զինվոր տարին, կիներուն ըսին՝ ձեզի գաղթական պիտի հանենք։ Մեկական էշ տվին՝ ամեն մեկ ընտանիքին։ Մամաս ուներ չորս հատ բելուզ՝ էրկուսս մեծ էինք, մեկը՝ գիրկը, մեկն ալ՝ ձեռքը։ Կեսուրը ծեր էր, անոր նստեցրեց էշուն վրա։ Էրկու տարեկան բելուզը տվավ կեսուրին գիրկը, մնացածնիս ալ քալելով գացինք։ Ոտքերնիս արյունոտվեցին, հագուստներնիս պատառոտվեցին, վրանիս ալ հա՜լ չմնաց։ Գացինք Հալեպի կողմը...*

*Մեր պզտիկ բելուզը չէր կրնար քալել։ Թուրք ժանդարմն ըսավ.— Աս չոջուխը քալել չի կարողանում,— առավ, նետեց քարերուն վրա։ Մուհաջիրները՝ վա՜խ կըսեն, կուլան։ Մամաս գնաց, տեսավ՝ բելուզը գետինը չաբալամիշ կըլլա, հոգին կուտա...*

*Հասանք Պապ անունով գյուղի մը։ Մեկալ բելուզը և կեսուրը անոթութենեն մեռան։*

*Մամաս սկսավ լվացք ընելով մեզ պահել։ Պապա թուրքի բանակեն փախել, եկել, փնտրել, գտել էր մեզի։ Թուրքերը իմացան քի թուրքի բանակեն փախած է՝ էկան մեր աչքին առաջ մորթեցին պապայիս...*

*Վերջը մամաս ալ մեռավ, ես լրիվ որբ մնացի...։ 1918-են մինչև 1922 թիվը Իզմիրի որբանոցն էի։ Իզմիրի հայերը շատ լավ դիրք ունեին, ճոխ կյանքով կապրեին։ Բայց թուրքերը նախանձեցին հայերուն ունեցվածքին, ուզեցին իրենք տիրանալ անոնց ամեն ինչին՝ և՛ զարդերուն, և՛ հողերուն, և՛ տուներուն, ամե՜ն ինչերուն...*

*Ես շատ քաղաքներ եղած եմ, բայց Իզմիրի*

---

1 Էլմա՝ թուրքերեն խնձոր ըսել է. հոն շատ աղվոր խնձորներ կաճեցնեին (Ս. Թ.)։

*զարդերուն պես ո՛չ մի տեղ չեմ տեսած։ Հայերը ոսկերիչներ էին մեծ մասամբ։ Գեղեցիկ զարդեր կշինեին, զարմանալի գեղեցիկ։*

*Անտեղի ճոխությունը, հարստությունը ես ո՛չ մի տեղ տեսած չեմ։*

*Մենք երբ որբանոցն էինք, մեզի պտույտի կըտանեին, սինեմա կտանեին, առաջին անգամ Չարլը Չապլինին հոն տեսա։ Մենք բոլորս սուսիկ-փուսիկ կնստեինք, վերջը մեզի շոկոլադի կտոր մը կուտային, կուտեինք, մայթերուն վրա զույգ-զույգ կքալեինք՝ ջաֆջաֆը ջամեքաններուն նայելով։*

*Բայց երբ Քեմալը եկավ, մեր որբանոցն ալ ցրվեցավ։ Մենք քանի օր անտե՛ր-անտիրական մայթերուն վրա մնացինք։ Թուլումբայով ջուր կըհանեինք, ջուրին ամանը կբերեինք, կլցնեինք, կըտանեինք, որ մեծերը խմեն։ Քեմալը եկավ նե հայերուն, հույներուն, բոլոր քրիստոնյաներուն ծովը թափեց, Իզմիրը կրակի տվին։ Կրակը կուտեր մարդկանց, չոջուխները խունդախի մեջ,*

*գետինները նետված վրանները կկոխկրտ*
*խունդախի չոջուխները ծովը կնետեին, ծովին*
*անոնք սալլամիշ կըլլային...*

*Ետքը մեզի փոխադրեցին Հունաստան։ Հոն*
*գորգի գործարանին մեջը գորգ կգործեի։ Ֆաբ*
*կային մեջը ինձի պես որբուհիներ շատ կային,*
*կաշխատեինք, գորգ կգործեինք, հե՛մ կերգեի*
*հե՛մ կհիշեինք մեր անցյալը ու կուլայինք...*

Ֆաբրիկային էշիգը քարոտ է, քարոտ,
Հայ որբերուն սիրտերը մայրի են կարոտ,
— Հայ աղջիկներ, աղջիկներ, ինչո՞ւ եք
դեղն
— Խորոզկանչին կելլանք, մայրի՛կ, անկից
ենք դեղնա

*Ետքը ամուսնացա։ Տուն-տեղ եղանք։ Աղ*
*մը, տղա մը ունեցա, եկանք Հայաստան։*
*Ես տղայիս ընտանիքին հետ հաստատված*
*Հրազդանի շրջանում։ Աղջիկս՝ Երանուհին, իր*
*տանիքով Երևան կմնա...*

**64(280).**

## ԱՖԻՈՆԳԱՐԱՀԻՍԱՐՑԻ ԲԱՐԹԻԿՅԱՆ ԱՐՓԻՆԵԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1903 Թ.)

*Մենք շատ լավ էինք Աֆիոն-Գարահիսարում։ Ապրում էինք խաղաղ։ Թուրքերուն հետ ալ շատ լավ էինք։ Անոնք ալ մեզի հետ շատ լավ կվարվեին։*

*1915 թ. գարնանն էր, օր մը եկան մեր քաղաքի բոլոր հայ տղամարդկանց հավաքեցին, հարցուցին՝ ձեզի պիտի տեղահանենք. ընտանիքո՞վ կուզեք, թե՞ միայն ձեզի։*

*Մեր տղամարդիկ ըսեր են՝ անշուշտ ընտանիքով տեղափոխվինք։*

*Սկսեցին տուներուն էղած-չեղածը ծախել։*

*Հորեղբորս կինը՝ Շեքեր հանըմը իր ընտանիքով և մորաքույրս իր ընտանիքով եկան մեզ միացան։ Ճամփա էլանք։ Ծովի պես լեփ-լեցուն ժողովուրդ էր, ոտքով սկսանք քալել։ Ոչխարի հոտի պես կքշեին մեզի. ենթակա վիճակ էր։ Որտեղ գիշեր էր լինում, հոն քնում էինք։ Շատ օրեր քալեցինք, մինչև Կոնիայի կայարանը հասանք։ Մենք ութը աղջիկ-կնիկ էինք և յոթը՝ տղամարդ։ Հորեղբորս աղջիկը ինձմե փոքր էր։ Փսփսուկ մը էլավ, որ ով որ գնա, Կոնիայեն կարող է փախիլ։ Հոն մեզի ծանոթ մը էլավ՝ Մարկոս անունով։ Ան ինձի ըսավ՝ առ աս ծրարը ձեռքդ, առանց խոսելու ետևես էկուր։ Ինձի տարավ հարուստներու թաղամասը, հոն ձգեց։ Գնաց, որ մերոնց բերե։ Մեյմըն ալ նորեն էկավ, ըսավ՝ շուտ էկուր ետևես։ Ինձի տարավ Գրիգոր Ջոպյան անունով մարդու մը տունը։ Հազիվ մի քիչ շունչ էինք քաշել, հանգիստ էինք։ Հոն երեք-չորս ամիս մնացինք։*

*Հորեղբորս չար տղա մը ուներ։ Ան օր մը Թու*
*տղային ծեծեր էր, անոր ծնողքն ալ ոստիկան*
*տուն լուր տվեր էին։ Էկան մեզի բոլորիս լեց*
*ցին թաթար-արաբան, տարին նորեն Կոնիայի կ*
*յարանը, որտեղ շատ հայեր կային ամեն կողմ*
*հավաքված՝ և՛ հայախոս, և՛ թուրքախոս...*

*Օր մըն ալ հրաման էլավ, որ պիտի շարժվի*
*ով դրամ ունի կրնա թրենով ճամփորդել, ով*
*ոտքով։ Դրամ ունեցողները լեցվեցան վագոնի*
*մեջ։ Թրենը գնաց, գնաց Բոզանթիում կեցա*
*Այս կողմը թրենին գիծն էր, այն կողմը՝ անտա*
*էր։ Մեզի վար իջեցուցին։ Բաց երկնքի տակ պի*
*գիշերեք ըսին։ Գիշերը՝ ցուրտ, մարդիկ իրար վ*
*կնստեին, որ տաքնան...*

*Հաջորդ օրը նորեն հրաման էկավ, որ պի*
*քալենք։ Ոտքով գնում ենք։ Մարդու ծո՛վ է։ Ք*
*լելեն ոտքերնիս ցավում էին։ Անոթի, ծարավ, ջ*
*չկա, ուղտերու ոտնահետքերու մեջը կուտակվ*
*անձրևաջրերը կխմեինք...*

*Մեյ մըն ալ իրարանցում մը սկսավ, մարդ*
*սկսան մի կողմի վրա վազել, տեսանք՝ ի՞նչ.*
*հոր մը կա, մեջը ջուր կա։ Գացինք, խմեցինք,*
*մը զովացանք...*

*Քիչ մը հեռուն թուրքի գյուղն էր, մեկ ալ տ*
*սանք թուրք սայլապան մը սայլը քշեց էկավ մ*
*ճամփով։ Պապաս դրամ տվավ, մեր տոպրա*
*ները վրան դրինք, քիչ մը շունչ առանք, գոնե ձ*
*քերնուս ծանրությունները թեթևցավ...*

*Աս ձևով քալելեն հասանք մինչև Մուսա դա*

Հոն արդեն ոչ մի հայ չէր մնացած, գյուղերը, տները դատարկված էին, բոլորը բարձրացել էին լեռան գագաթը, անտեղեն կռվում էին Թուրքին դեմը։ Ծառերուն տակը տեսանք շատ անուշիկ երիտասարդի մը գլուխը, քիչ մը անկողմը անոր մարմինն ալ ինկած էր, խեղճին սպանել էին Թուրքերը, հագուստներից երևում էր, որ ինքը հայ էր։ Մեր տղամարդիկ հողը փորեցին, անոր մարմինն ու գլուխը մեկտեղեցին ու թաղեցին։

Գիշեր էղավ, հորեղբորս աղջկան հետ շուլ մը փռեցինք, պառկանք։ Մեծերը կրակ վառեցին, շուրջը նստան, զրուցեցին, որ գիշերը անցնի...

Հաջորդ օրը նորեն հրաման էկավ քալելու։ Քալելո՜վ, քալելո՜վ հասանք մինչև Կատմա։ Արդեն աշուն էր, ցուրտ։ Ժողովուրդը ուզում էր շուտ տեղ հասնի, որ չադըր զարնի, տակը մտնա, քանի որ անձրևները սկսել էին արդեն։ Հոնտեղ եղբորս կանչեցի, ըսի՝ էկուր քովս, իրարանցումին մեջը ալ գալը չտեսա։ Ադ վերջին անգամն էր, որ եղբորս տեսա։ Ալ չգիտեմ՝ կորա՞վ, գողացա՞ն, թե՝ ի՞նչ եղավ...

Անոթի ենք, ոչինչ չունենք ուտելու, խոտ ենք քաղում, ուտում և կամ ձիերուն կեղտի միջի չըմարսված ցորենն ենք ուտում։ Վերջապես հիվանդացանք. փորերնիս կցավի, լուծ ընկանք։ Դու մի ըսեր ադ տիֆ էր կամ դիզանթերի. արյո՜ւն, թարա՜խ կուգար։ Մենք մեր ունեցած դեղերը բոլոր բաժանել էինք՝ ասոր-անոր։ Հիմա մեզի դեղ չէր մնացել։ Շուրջերնիս բոլորը մեռնում էին. «Ա՜խ, մեր տունը ըլլա՜ր, ա՜խ, մեր պետքարանը ըլլա՜ր» կըսեինք։ Քանի որ ամեն ինչ բացօթյա էր, սեֆիլությո՜ւն, անտանելի՜ վիճակի մեջ էինք... Ադ ժամանակ էր, որ յոթ տարեկան Իլմոնիկ քույրըս Թուրքին կնիկները ուզեցին փախցնել, մորաքույրս քշեց անոնց, բայց գիշերը եկել էին, սուս ու փուս գլխին տոպրակ անցուցեր, տարել էին՝ փախցրել...

Սոսկալի էր նաև Ագնես մորաքույրիս վիճակը։ Ան մի տեղ ընկել, մնացել էր, ծծկեր երեխան գիրկը, ինքը տիֆով հիվանդ, այդպես օրերը կանցնեին, ինքը չի զգար։ Մեյ մըն ալ աչքերը կբանա, որ գիրկի երեխան մեռել է, նույնիսկ որդնոտե՜լ է, ինքը չի զգացել։ Հետո ան ինքզինքը կհավաքե, կուգա մեզ կգտնա։

Վերջը Թուրքի կառավարութենեն հրաման եկավ, որ Թուրքի բանակին մեջ ով որ զինվոր ունի, ան ազատվում է աքսորեն։ Շատերը աս ձևով ազատվան։ Բայց տասնհինգ տարեկանեն վեր տղաներուն հավաքում, տանում էին բանակ։ Օր մըն ալ մեր ճամփին տեսանք շատ մը երիտասարդներ՝ իրար ետևից ընկած. հայտնի է, որ շարքի կեցուցած, սպանած էին բոլորին ալ...

Օրե՜ր, ամիսնե՜ր ադ ձևով անցան։ Հալեպեն մարդ մը կուգար, արաբայով հաց կբերեր, կծախեր։ Հորեղբայրս մոտեցավ անոր ըսավ.— Ի՞նչ կուզես տամ քեզի, միայն մեզի Հալեպ տար։

Մարդը սկզբում վախեցավ մեզ տանիլ, ըսավ.— Կտանիմ, բայց եթե ձեզի բռնող ըլլա, ըսեք, որ Շամ պիտի էրթաք՝ Թուրք զինվորներուն հագուստ կարելու...

Ան մեզի տարավ Հալեպ։ Հորեղբայրս կերթա Մանուկ Կարաչայ անունով մարդու մը տունը, կըսե.— Շատ կխնդրեմ, դուն մեզի օգնես, տունի մը ճարը տեսնաս։ Մերոնք հիվանդ են, գարունեն ի վեր փողոցներն ենք, ո՜չ տուն, ո՜չ անկողին, ո՜չ պետքարան, միկրոբ է ամեն տեղ, շատերը մեռան, մերոնք հիվանդ են, գոնե մեզ փրկե։

Աս Մանուկ Կարաչայն իր լվացարարուհուն կըհրամայե, որ մի տուն գտնա մեզի համար։

Ան մի տուն գտավ մեզի համար։ Գնացինք, մտանք այդ տունը։ Տանտիրոջ հետ պայմանավորվել էինք, որ մեր տունեն դուրս չպիտի ելլանք, որ մեզի չտեսնեն, չբռնեն։ Մեր տանտերը մեզ ուտելիք էր բերում։ Նա մեկ տղա, մեկ աղջիկ ուներ։ Աղջիկը ամուսնացած էր Թուրք սպայի հետ։ Ադ Թուրք սպան մտածել է, որ այսքան մարդ էկան իրենց տունը, այն էլ հիվանդ, պետքարանին փոսը կլեցվի, ո՞վ պիտի դատարկե։ Մեզի ուզեց ադտեղեն դուրս հանել։

Ան լվացարար կինը մեզի ուրիշ տուն մը գըտավ։ Մենք փոխադրվեցանք հույնի մը տուն։ Ան ավելի լավ տուն էր։ Հատակը մոզաիկա էր։ Տանտերը հույն էր, բայց արաբերեն կխոսեին, երեք տղա ուներ, երկու աղջիկ։ Մենք արդեն «դասերնիս» սորված էինք, արդեն Հաջի մայրիկն էր, հարսը, հորեղբորս աղջիկը և ես։ Ով հարցներ, պիտի ըսեինք. «Մեր ծնողքը կորած է, աս խավաջան՝ պարոնը, ինձի կպահե, մինչև ծնողքս գըտնըվի»։ Երբ գալիս էին փնտրելու, հորեղբայրս, որ զինվորական տարիք ուներ, կմտցնեինք յուքլիգին մեջը՝ պատի մեջ փորված տեղը, ուր անկողինները կդնեն։ Օր մը նորեն էկան զաբիթները՝ փախստական զինվոր փնտրելու։ Հորեղբորս կինը ամուսինին նորեն թաքցրեց յուքլիգին մեջը։ Զաբիթը ըսավ.— Հոս նայե նայինք, ինձի լոլո մի կարդար, դու մարդ ունիս պահած։

Հորեղբորս կինը գզրոց մը ուներ, մեջը արծաթ գդալներ, զարդեր, մարգարիտներ կային, հանեց, անոնց նվեր տվավ։

Զաբիթը ըսավ.— Ամեն ամիս մենք պիտի գանք ստուգելու, ներս չենք մտներ,— այսինքն, նվերնին կառնեն, կէրթան։

Ասկե վերջը մեզի տարին Մեսքենե։ Ագնես մորաքույրս, որը մեզի հետ էր արդեն, քյուրք մը կհագներ, որուն մեջը ոսկիներ էին կարված։ Քանի որ անոնք շատ հարուստ էին, Աֆիոն-Գարահիսարին մեջը անոնք ցորենի արտեր ունեին, ծախեցին, իրենց անթիվ-անհամար ոսկիները կարեցին քյուրքին մեջը։ Օր մը ադ Ագնես մորաքույրս պարտե-

զին մեջ պետքարան էրթալու ատենը, թուրքերը կբռնեն, կտանին։ Մեկ շաբաթ կորսնվեցավ, հետո ետ բերին։ Հագուստները վրայեն հանված, տկլոր, գզգզված մազերով, ո՞վ գիտե ի՜նչ էին ըրեր, որ խեղճ Ագնես մորաքույրս խենթեցած եկավ...

Քեռայրս, որ շատ զարգացած, լավ մարդ մըն էր, երբ տեսավ իր կնոջը այդ վիճակին մեջ, շատ ազդվեցավ, հիվանդացավ, անկողին ընկավ...։ Ան արդեն շատ ծեր էր, հոգեվարքի մեջ էր, երբ նորեն մեզ հավաքեցին, որ առաջ տանեն։ Ամեն կողմեն «Յալլա՛, յալլա՛» կըսեին, կմխթեին, որ շարժվինք, մենք հիվանդ քեռայրս դրինք ուղտի մը վրա, բայց ան չդիմացավ ուղտից վայր ինկավ ու մեռավ...

Հորեղբորս ու Հաչի մայրիկենց ընտանիքներն ալ ամբողջությամբ ոչնչացան, մարդ չմնաց ողջ։

Քույրիկս՝ Իլմոնիկը, որին քրդերը փախցրել, տարել էին, իրենց խուժան տղայի հետ ամուսնացրել, երկու զավակ էր ունեցել՝ մեկի անունը Հադիջե, մյուսինը՝ Ջիչեկ։ Ադ ամուսին ըլլալիքը միշտ կըսե եղեր Իլմոնիկ քրոջս. «Եթե փախչես, քեզ ալ, քո երեխաներին ալ կմորթեմ»։ Քույրիկիս ադ խուժան ամուսինը մարդ է սպանում և բանտ է ընկնում։ Այդ ժամանակ Իլմոնիկ քույրս կտեսնա, որ քանի մը հայեր իրենց օթոն են լըվանում, կմոտենա, կխոսի, հայերը կմեղքնան, գաղտնի իրեն և իր զավակներին օթոն կդնեն, կըբերեն Հալեպ։ Երբ Իլմոնիկը էկավ, բոլորս շա՜տ ուրախացանք։ Երեխաներին կնքեցինք, անունները դրինք Ալիս և Վեհանուշ։

Արդեն բավական ժամանակ էր անցած։ Պատերազմը վերջանում էր։ Գերմանացիները գնում էին։ Մեզի հրաման էկավ՝ ամեն մեկը իր տեղը վերադառնա։

Սկսանք ետ դառնալ։ Թրենով գնացինք Ադանա։ Հոն տասը օր մնացինք։ Հոն հնդիկ զինվորներ կային, մեզի փիլավ կբերեին՝ վրան կծու բիբերով ու միսով, որ ուժ առնենք, այնքան որ հյուծված էինք։ Հետո Կոնիա գնացինք։ Հոն ադ նույն Գրիգոր Զոպյանի տունը մնացինք։ Վերջն ալ Աֆիոն-Գարահիսար եկանք։ Հոն մեր ծանոթ թուրքերը մեզի շատ լավ ընդունեցին։ Արդեն լուր էին առել, որ գալիս ենք։ Մեր տուները ազատել էին, մաքրել։ Կաթի սեր և այլ ուտելիքներ էին պատրաստել, որ գալու ըլլանք նե ուտենք։ Բայց շատ չկրցանք մնալ Աֆիոն-Գարահիսարում։ Հորեղբայրս գործով գնաց Իզմիր։ Հետո ալ մեզ բոլորիս տարավ Իզմիր, մեյ մըն ալ սկսավ քեմալականների շարժումը։ Իզմիրը կրակի տվին։ Առաջին կրակը Հայնոցը տվին։ Ս. Ստեփանոս եկեղեցին այրեցին։ Քանի որ բոլոր հայերը այդ եկեղեցին մտած էին, որ պաշտպանվեն։ Վերջը հայերս փախանք, գնացինք ծովեզերք։ Ծովին վրա լի՜քը նավակներ էին, բայց թուրքերը նախօրոք բոլոր նավակները ծակել էին, որ ջուր լցվեն

ու հայերը չկրնան ազատվիլ։ Նավակ էին նստ
խեղճ հայերը, քիչ մը կլողար նավակը, վեր
լը՜կ-լը՜կ, ջուրը կլեցվեր մեջը։ Բոլորը ծովի
շուռ կուգային, ծովի վրա լի՜քը ուռած մարմ
ներ էին։ Մեզի տարան Բալչովա։ Ծովուն եզեր
փայտե բարաքներ կային, հոն լեցուցին։ Սկս
մեզի աչքե անցնել։ Սիրուն աղջիկներուն բռնո
քաշում, քաշքշում, տանում էին։ Ես մանր-մո
պզտիկ աղջիկ էի, փեշերուն տակը պահվտեց
Մեր Մարիին երեսը մուր քսած էին ու մազե
խուզել էին. այլանդակ տեսք մը առած էր, նա
ցին, չհավնեցան.— Յարամազ (անպետք),—
սին, ձգեցին, այսինքն գործի չի գար, ոչ մեկ
պետքը չէ։ Անդիեն կլսվեր թուրքերուն ձայնե
որ դանակները սրում էին, որ մեզի մորթեն։ Հ
աղջիկ մը տեսավ, որ հերթը իրեն պիտի գ
ինքզինքը պատուհանեն վար նետեց, բայց չ
ռավ. վարը ուրիշ զինվորներ կան եղեր, քանի
օրեն ետքը բերին արդեն անճանաչելի վիճա
մեջ...

Դրամ ունեցողը փախչում էր։ Հաչի մայրի
ըսի.— Սա Արամին դրամ տուր, թող հոգին
զատե։ Բայց Հաչի մայրիկը սխը ձեռք ուներ,
տվավ։ Արամը, որ այնքան իմ եղբորս կլման
լողալով-լողալով հասել էր նավը, բարձրացել
բայց գետին էր ընկել քիթուբերանեն արյուն
թափվել, ան ալ անանկ մեռավ...

Ամերիկացին շոգենավեր էր բերել, որ մ
Հունաստան փոխադրեն։ Քանի որ Քեմալը ը
էր՝ Թուրքիան թուրքինն է, ո՛չ մի քրիստոնյա
պիտի մնա։

Երկու կողմը թուրք զինվոր էր կայնած։ Ս
քաշում, քաշքշում էին։ Այդ խճողումին մեջ
րեղբորս տղան, որ մեզ հետ էր, կորսնցուցի
Մենք բարձրացանք նավ...

Նավը մեզ հասցրեց Հունաստան։ Հոն աշխ
տեցանք։ 1924-ին ամուսնացա Միքայել Բարթ
յանին հետ։ Նա Աթենքում հայտնի հասարակ
կան գործիչ էր, հայտնի լրագրող, հրատարակ
էր «Ամրոց» թերթը։ Հետո հրատարակեց «Հել
դիքը»։ Աթենքում ծնվեցին մեր երեք տղանե
Վահեն, Հրաչը և Պարթևը։ Երբ սկսվեց Երկր
համաշխարհային պատերազմը, բավական շ
դժվար օրեր ունեցանք, քանի որ Հունաստա
ֆաշիստներու տիրապետության տակ էր։ Ամու
ներս ալ համայնավոր գաղափարներու տեր
Նույնիսկ օր մը ես ոտքես վիրավորվեցա, գնդ
մտավ մեջը։ Բուժարան տարին, գնդակը հանեց
Տնեցիներս լուր չունեին։ Լավ է, որ մեր բախալ
նպարավաճառին կնոջը տեսա պատուհանեն, ը
որ մերոնց լուր տա։ Եկան, ինձի տուն տարին

Պատերազմի ժամանակ Վահեն Կիպրոսի Մ
քոնյան կրթարանում էր սովորում։ Հրաչը՝ հ
նական գիմնազիայում, իսկ Պարթևը՝ իտալակ
դպրոց կէրթար, որ ձրի ճաշ ուտեր գոնե։

1946 թվին ներգաղթեցինք, էկանք Հայաստան։ Սկզբում մեզ գցել էին շատ հեռու մի գյուղ։ Հետո Երևան փոխադրվեցինք և Նոր Կիլիկիայի առաջին շարքում հողամաս տվին, տուն շինեցինք։ Ամուսինս սկսավ աշխատել գիտությունների ակադեմիայի գրադարանում։ Տղաներս սկսան սովորել։ Վահեն ու Հրաչը՝ պատմաբան դարձան, Պարթևը՝ երկրաբան։ Վահեն Մատենադարանի գրադարանում բաժնի վարիչ է, Հրաչը՝ պատմական գիտությունների դոկտոր, աշխատում է գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում։ Ան հիմա Միջին դարերու պատմության բաժնի վարիչն է։ Վերջերս Հայաստանի, Աթենքի և Հռոմի Թիբերինա ակադեմիաների թղթակից անդամ ընտրվեցավ։ Ան գրեթե ամեն օր կուգա ինձի տեսնալու, մինակ չձգեր ինձի։

## 65(281).
## ԱՖԻՈՆԳԱՐԱՀԻՍԱՐՑԻ ԲԵՐԲԵՐՅԱՆ ՍՄԲՅՈՒԼԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1909 Թ.)

Ես հորս չեմ հիշում։ Թուրքերը հորս սպանել էին։ Քեռուս ալ տանջանքներով մեռցրել էին։ Մեծ եղբորս թուրքական բանակ տարին, բայց նա փախավ, եկավ թուրքական բանակեն։ Մամաս եղբորս պահեց խոտի դեզի մեջ, իսկ դրացի թուրք կնիկը մատնեց կառավարությանը։ Եկան, գտան, նորեն տարին։ Մյուս եղբայրս փոքր էր, անոր ալ տարին։ Հետո իմացանք, որ տասնյոթ հայ տղաների հետ գիշերով սպանել, գցել էին գյուղի կամուրջին տակը։ Էնպես որ, տղամարդ չմնաց մեզ մոտ, երբ աքսոր էլանք։

Դեր Զորում հինգ մորաքույրներիս փախցրին, տարին, վերջն ալ անոնց գլուխները կտրեցին, խշտիկներու վրա ցցեցին, որ մենք տեսնանք, անոնց ջանդակներն ալ գցեցին Եփրատը։ Մամայիս հորաքույրին միայն կեսը գտանք, մամաս թաղեց հողին մեջը։ Բոլորին կոտորեցին, մարդ չթողին...

Լալեն մամայիս աչքերը կուրացան։ Եոքը մեզ հրաման տվին ետ էրթալ մեր տեղերը...

Հույնի օրոք լավ էինք։ Ամմա վերջը հույնի-թուրքի կռիվը սկսավ... Թուրքերը սկսան քրիստոնյաներուն կոտորել։

Մարիամ Աստվածածնի օրն էր. գնացի եկեղեցի՝ օրհնված խաղող բերելու։ Տերտերը քարոզ կուտար. «Հայե՛ր, եկե՛ք, վիրավորներուն վերքերը կապեցե՛ք»։ Ես ալ ըսի մորս՝ կէրթամ ջուր կուտամ վիրավորներուն։ Մամաս չթողեց։

Այդ ժամանակ հույնը քաշվեց։ Մենք ալ այդ հույն կռվող զինվորներուն հետ սկսանք փախչիլ։ Մի տեղ թուրքերը մեծ կրակ էին արել, մեջը հայերուն էին գցում։ Մամայիս բռնեցին, կրակի մեջ գցեցին, մենք՝ ես ու քույրս, սկսանք պոռալ, չըկրցանք մորս կրակի միջից ազատել։ Այդ միջոցին քրոջս ալ կորցրի։ Դաշտի մեջ մինակս մընացի։ Գիշերը հողը փորեցի, վրաս քաշեցի, քընեցի։ Առավոտյան տեսա զինվորներ են եկել, գլխիս կանգնել, ասացին.— Աղջի՜կ ջան, արի՛ մեզ հետ։

Ես վախեցա, ասացի.— Դուք թուրք եք, ես ձեզ հետ չե՛մ գա։

Ըսին.— Չէ՜, մենք հույն ենք, արի՛։ Լա՜վ, դո՛ւ գնա։ Էդտեղ երեք հատ թունել կա. որ մեկը որ լույս չկա, ան թունելը մտիր ու պոռա՝ «գաղթականներ, մուհաջիրներ»։

Ես ադանկ ալ ըրի, կին մը ինձի բռնեց, նայեց երեսս, ըսավ.

— Վո՜ւյ, ջեհենեմը գնաս, ես ալ իմ կորած աղջիկս կարծեցի քեզ։

Հույն զինվոր մը եկավ ադ կնոջը ըսավ.— Ինչո՞ւ չես վերցնում սս աղջկան, մեղք է, առ մխիթարվիր, հազիվ փախել, եկել է։

— Չէ՜, չե՛մ կրնար, ես իմ երեխեքին չե՛մ կարող պահել, նրան ինչպե՞ս պահեմ։

Էդ հույն զինվորը տեսավ ես լաց եմ լինում, սկսավ ինձ մխիթարել.— Մի լար աղջիկ, երևի քու մայրը չի մեռել, գնացել է, պիտի գա, քույրդ էլ կգտնաս, մի լաց։

Բայց ես չեմ հավատում անոր խոսքերուն, լաց եմ լինում։

Հույն զինվորը ինձ մի քիչ պաքսիմատ տվավ, իր ջուրի ամանեն ջուր տվավ, խմեցի, ինձի ալ մի ուրիշ կնիկի տվավ, որ ինձ տերություն ընե, բայց էս կնիկն էլ չպահեց։

Ես ժողովրդի հետ գնացի տեսնեմ մի կին նըստած էրկանք է աղում։ Ես գնացի էդ կնոջից մի քիչ հաց ուզեցի։ Ան ինձի ըսավ.— Հաց չկա, մի քիչ ալ գնա, անտեղը գիլգիլ կա բուսած, ա՛ռ, կե՛ր։

Ինձ վրա էլ հա՜լ չկար. անոթութենեն ուշքս գընաց, ընկա։ Երբ արթնացա, տեսա գետնին պառկած եմ, ականջիս ձայներ են գալիս։ Հույն զինվորներուն ըսի, որ հոս հոր է, մեջը մարդ կա։ Հույն զինվորները եկան էրկանքը անդին քաշեցին, տեսան խալի է փռված, անոր տակը, հորին մեջը լիքը թուրք չեթե կա, սպասում են, որ մեզ սպանեն։ Հույն զինվորները անոնց կոտորեցին։ Հետո ուրիշ թուրք զինվորներ եկան, մեզ գտան. Բոլորիս կանգնեցրին, երկու մարդու առանձնացրին մեզնից, պառկեցուցին գետնին, սկսան անոնց կաշիները քերթել և խնդալով ըսել. «կո՜վ ենք մորթում»։ Մարդոց կաշին դժվարությամբ հանեցին։ Էդ խեղճ մարդիկ ողջ-ողջ կտանջվեին, էդ

ի՞նչ ձայն էր, ի՞նչ բորբըդուք. մարդիկ բանգը՛ր-բանգը՛ր կբռռային։ Վերջապես անոնց մաշկահան արեցին և ըսին.— Քանի որ դուք՝ գյավուրնե՛ր, հայտնել եք Թուրք չեթեներուն տեղը, ձեր արժանի պատիժը ա՛ս է։

Մենք բոլորս ալ կուլանք, կողբանք, վախերնես կդողանք։ Ես հազիվ փախա, ոտքով սկսա քալել քանի մը հոգիներու հետ։ Մեզի գերի բռնեցին. չեն թողնում ոչ մի տեղ էրթալ։ Հազիվ տասներկու տարեկան տղա մը նստած կեղտոտում էր ճամփի եզրին։ Տանկ մը կար, տանկը պայթեց, աղ տղան ալ աչքիս առջևը անհետացավ։

Երբ Թուրքերը տեսան իրենց տանկը վառվեց, «գյավուր գե՛լդի» ըսելով փախան։ Թուրք զինվոր մը ինձի ուզեց իր հետը տանիլ։ Բայց աղ հույն զինվորը չթողեց, ինձ ըսավ.— Մի՛ գնա, քո մամայիդ պես քեզ ալ կվառեն։

Ես ան ատենը հասկցա, որ այդ հույն զինվորը տեսել էր մորս վառվիլը և ինձ խաբում էր. որ ինձ մխիթարի, միշտ ասում էր՝ մամադ պիտի գա։ Ես ալ հույսով էի մնում։

Հետո գնացք մը եկավ, մեջը լիքը մարդ, տեղ չկար նստելու։ Ես մենակ, ոչ ոք չունեմ, այնքան ժողովուրդ կա, որ դռնեն կախված են՝ խաղողի ողկույզի պես։ Ինձ ալ կապեցին դուռնեն, որ աստիճաններու վրայեն չընկնեմ։ Թուղթ մըն ալ ձեռքըս տվին և ըսին. «Աս թուղթը կտանես հայկական եկեղեցի, քեզ կտանեն մամայիդ քովը»։ Ճամփին բացօթյա գնացքը կերթա, քամին կփչե, կարծես հիմա պիտի պոկվեմ։ Կամուրջի մը վրա մեր գնացքը պայթեցուցին, բայց, քանի որ ես դուռնեն կապված էի, հրաշքով ազատվա, մեջի մարդիկ ջարդուխուրդ եղան։ Մի քանի հոգիի հետ նորեն սկսանք քալել։ Երկաթգծի ճամփով քալեցինք, վերջապես հասանք Իզմիր։ Իզմիրի շուկային մեջը կպտտվեի, որ գոնե մեկը ինձի մեղքնա, կըտոր մը հաց կամ ուրիշ բան մը տա։ Մեկ ալ ի՞նչ տեսնամ, աչքերուս չհավատացի, քույրիկս կնիկի մը հետ դիմացս ելավ, ըսի.— Քույրի՛կ,— փաթթվեցա։

— Գնա՛, դու իմ քույրը չես, իմ քույրը մարալի պես էր, անունը Սմբյուլ էր,— ըսավ՝ զզվելով ինձմե։

— Ա՜խ, քույրիկ, ե՛ս եմ, Սմբյուլն եմ, մեր մամային Թուրքերը այրեցին կրակի մեջ։ Ես անոթի-ծարավ, քալելեն հոգնած աս վիճակին եմ հասած,— ըսի։ Ան ժամանակ քույրս ինձի ճանչըցավ, առավ տարավ եկեղեցի Ս. Ստեփանոսը։ Հոն մարդ մը քյուֆլոտած հաց տվեց ինձի։ Կերա, շատ անոթի էի, բայց իրենց ունեցածն ալ աղ էր։

Հոն ըսին՝ պիտի էրթանք հաց ճարելու։ Քույրիկս ըսավ.— Քույրիկիս ալ տարեք ձեզի հետ։ Աղ մարդոց հաց հասավ, ինձի չհասավ։ Մինչև սպասեցի, որ նորեն հաց թխեն, իմ ընկերները գնացին, ես մնացի, սկսա լալ։ Նոր գտած քրոջս ալ կորցրեցի։ Հետո մի կնիկ մեղքցավ ինձի, շոր մը տվավ, հագա՝ թե չէ տկլոր էի։ Աղ կնիկը ինձի տարավ Ս. Ստեփանոս եկեղեցին։ Թուրքերը աղ ընթացքում եկեղեցին պայթեցրել էին։ Ավերակներուն մեջեն քույրիկիս նորեն գտա։ Իր վրա եղած ոսկեղենները իր վարտիքին մեջ պահեցինք, քանի որ Թուրքը որ տեսնա՝ կառնե. «Գյավո՛ւր, ներդե՞ գյոթիրիյորսըն» (Գյավո՛ւր, ո՞ւր ես տանում) ասելով, ունեցած-չունեցածը առնում էին։ Հայերուն, հույներուն ծովն էին գցում։ Ջահել, ահել, երեխա, մայր չէին նայում։ Թուրք զինվորները խշտիկներով ծակծկում էին բոլորին, երեխաներին բռնում գցում, մեծերին շպրտում էին ծովը։ Ջուրին վրա լիքը մարդ էր, ջուրը չէիր տեսնար։ Թուրքը Իզմիրում 1500 հայ երեխեք հավաքեց, բենզինը լցրեց, վառեց։ Ամերիկացին տեսավ՝ չօգնեց։ Ադոր համար ես ատելով ատում եմ ամերիկացուն, ադոր համար ալ ես Ամերիկա չե՛մ երթար։ 1924 թվին եկել եմ Հունաստանեն, դժվարություն շա՜տ եմ տեսեր. մազութ եմ լցրել գործարանում, բամբակ եմ քաղել դաշտերում, ամե՜ն գործ արել եմ, ամե՜ն։ Եթե օրը 100 մանեթ ալ տան նե՝ նորեն Ամերիկա չե՛մ երթա...

Մեզի բռնեցին գերի տարին. պահածո պատրաստելու տեղ մըն էր։ Հոն մնացինք։ Ջուր չկար։ Թեյաքեք պահածոյի բանկայով ջուր էին տալիս օրը մեկ անգամ, մի քիչ ալ՝ հաց։ Նոր ծնված երեխեքը սովից մեռնում էին. մայրերը կաթ չունեին, սեֆիլությո՜ւն...

Թուրք զինվորները, ձեռքերնին խշտի՛կներով, գալիս էին, մեզ ասում.— Գյավուրլա՛ր, նէ՞ էդիյորսըն (Գյավուրնե՛ր, ի՞նչ եք անում)։ Գալիս, տեսնում էին սիրուն աղջիկ կա, առնում, տանում էին, քի՛մ-քիմե՛ (ո՛վ-ո՛ւմ)։ Պզտիկ պատուհան մը կար, հեռուն աղբյուր մը տեսանք, բայց ով որ գնա՝ սպանում են։ Թուրք զինվոր մը ծառին ետևը կայնած է, ով գա ջուրին քովը՝ սպանում, փռում է գետնին։ Քույրս ինձ ըսավ.— Չէրթա՛ս աղբյուրը. կսպանեն...

Հետո եկան Թուրք զինվորները, ըսին.— Ձեզի ծովեզերք պիտի տանենք։ Ծովեզերքում լի՜քը մարդ, մրջյունի պես ծեփված են։ Մարդ մը եկավ մոտեցավ մեզի, թե՝ ես պատրաստ եմ ձեզի դրամով ազատել, նավ նստեցնել, միայն թե աղջիկս ձեզի հետ տարեք։

Դու մի ըսեր, աղ մարդը իր ընտանիքը ղրկել է, աղջիկը մնացել է, ուզում է անոր ալ ղրկել մեզի հետ։ Թուղթերնիս շինեց, եկավ, ըսավ.— Դուք հոն սոված չեք մնար, կնիկս հոն ձեզի կօգնի։

Ամմա նավի մոտ չեն թողնում, թուղթերը ըստուգում են։ Մեզի ծանոթ մարդու մը կնիկի շորեր էին հագցրել, որ փախնի, բայց այդ մարդուն կնիկին սպանեցին, անոր դիակը գետինը մնաց։ Մարդը գիժ կնիկի ձևանալով կծոտում էր ասոր-անոր։ Թուրքերը ըսին «Բու գյավուր դելի դըր» (Այս

գյավուրը խենթ է)։ Վեր ձգեցին, նավ ելանք, այդ մարդն ալ մեզի հետ։ Նավը շարժվեց։ Չգիտենք՝ ո՞ւր ենք գնում։ Նավը կանգնեց Սալոնիկ։ Հույնը մեզ շատ լավ դիմավորեց։ Պրասայով ճաշ տվին. չէ՞ որ ներսերնիս չորցած, ցամքած էր. պրասան մարդու ներսը կշինե եղեր։ Մեզի քանի մը օր պահեցին, կերցուցին, խմցուցին, ուժի բերեցին։ Քըրոջս ամուսինը երեք երեխայով հոն՝ այդ քաղաքն էր. եկավ մեզի գտավ։ Ինձի տարին հրեայի մը տունը։ Անոնք շատ հարուստ էին։ Պզտիկ երեխա ունեին, ես այդ երեխան սայլակով կպտտցնեի, ամանները կլվայի, տունին փոշիները կառնեի։ Օր մը հրեա տանտիկինս ինձի ըսավ.— Քեզի մեր հրեական դպրոցը պիտի դնենք, կերթա՞ս։

Ըսի.— Չէ՛ ես հայ եմ։

Օր մըն ալ ասոնց տանը սանր մը տեսա։ Ըսի.— Ինչո՞ւ գլուխ չեք սանրում։

— Ասով պիտի քուրդ գզենք,— ըսավ հոջան ու խնդաց։

Դու մի ըսեր այդով քրիստոնյա հայ կսպանեն, հայու արյունով հաց կշաղեն... Ես գիշերով անոնց քովեն ալ փախա...

Գացի, ֆաբրիկա մտա, աշխատեցա։

Վերջն ալ Հայաստան եկա, պսակվեցա, չորս զավակ ունեցա։ Անոնց ուսումի տվի, ամուսնացրի։ Հիմա յոթը թոռ ունեմ, բայց էլ առողջություն չունեմ։ Շա՜տ դարդ եմ տեսել, շա՜տ աշխատել, շա՜տ չարչարվել եմ, մինչև այս օրվան հասել եմ։ Փառքդ մե՛ծ լինի, Աստված...

## 66(282).
## ԱԴԱԲԱԶԱՐՑԻ ԱԶԱՐՅԱՆ ՀԱՅԿՈՒՀՈՒ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1908 Թ.)

Ադաբազարում թուրքերն անգամ հայախոս էին։ Երբ Առաջին համաշխարհային պատերազմը սկսավ, քաղաքի բոլոր մեծամեծերին լցրին ժամը և ծեծելով ստիպեցին զենքերը հանձնել։ Եկեղեցու դռները փակեցին։ Ներսը ամեն ինչ պիտի ըլլար՝ ուտել, խմել, պառկել, միզել։ Ալ հաշիվդ ըրե՝ եկեղեցու սրբությունը ինչպե՛ս պղծվեց։ Տասը-տասնհինգ օր տղամարդիկ մնացին եկեղեցիին մեջը։ Թուրքերը սկսան տունե-տուն զենք փընտըրել։ Գարտեզները անգամ՝ ծառ, ծաղիկ, տակնուվրա ըրին, հողի մեջ թաքցրած զենք էին փընտըրում։ Շատերն իրենց զենքերը հանձնեցին, որ փրկվեն։ Շատերն ալ ժամեն դուրս էկան այնքան ծեծված ու խոշտանգված, ոտքերնին, քիթ-բերաննին ուռած, չդիմացան՝ մեռան։

Մեր տունը, որը բարձր տուն էր՝ քարաշեն, կողքը բեռջեկլըկ՝ շերամատուն, ունեինք, որտեղ թուրք ասկյարներն էին տեղավորված, իսկ զաբիթն ու իր օգնականը մեր տանն էին տեղավորված։ Ամեն առավոտ թալիմի՝ մարզանքի էին դուրս գալիս մեր տունին պարտեզը։

Հայրիկիս ծեծել էին, բայց չէր խոստովանել, որ զենք ունի թաղված պարտեզին հողին մեջը։

Թուրք զաբիթը, որ մեր տունն էր ապրում, մեծ մայրիկիս օր մը կանչեց, ըսավ.— Մայրա՛մ հանըմ, ձեզի սաքիեթ՝ աքսոր պիտի ղրկենք, եկեք ձեզ ընտանիքով ղրկեմ իմ ընտանիքիս քովը՝ Պոլիս։

Ան գիտեր՝ մեր գլուխը ինչ պիտի գար։

Հայրիկս, որն արդեն եկեղեցիին մեջ կերած ծեծերեն ուժասպառ էր, ըսավ.— Ամա՛ն, աղա՛ն ժողովուրդ, ո՞ւր պիտի աքսորեն,— չհավատաց, Պոլիս չգնացինք։

Հետո սկսավ աքսորը։ Տուներեն դուրս էին հանում հայերին, պոռալով.— Քալքը՛ն, չըխը՛ն, յըխը՛ն, գիդը՛ն (Վե՛ր կացեք, դո՛ւրս գնացեք, վառե՛ք, գնացե՛ք)։ Աս խոսքերը լսեցինք մինչև Էրեյլի. իրենց լոզունգն էր։

Էկան ոստիկաններով տուներեն դուրս հանեցին։ Ո՞ւր էրթանք։ Սարերը չինգեններ կային։ Ամեն մարդ իր ապրանքը դուրս թափեց, որ վաճառի։ Ո՞վ է առնողը։ Տանող՝ տանողի, սկսվեց թալանը։ Գնչուները էկան, տեսան ամեն ինչ թափված է փողոցը, առին տարին ինչ-որ տեսան։

Ամբողջ քաղաքը դատարկվեց։ Ո՞ւր պիտի գընանք։

Հրաման էկավ.— Գնացե՛ք կայարան։

Մի թուրք դրացի ունեինք, ռանչպար էր, իր արաբան բերավ, ըսավ՝ ինչ կլեցնեք, լեցրեք, ձեզի տանեմ կայարան։ Ադաբազարի կայարանի անունը Արիֆիե էր։ Գնացինք կայարան։ Տեսանք ամեն մարդ իր բարեկամներով՝ հորեղբայրներով, մորեղբայրներով լեցված են հոն։ Գնացք չի հերիքի, որ տանի այդքան ժողովուրդին։ Վերջապես գնացք մը էկավ, հրաման էկավ, որ ունեցածնիս թողնենք, մտնենք վագոն։ Բոլորը լցվան մեջը՝ ամեն ինչ թողնելով կայարանում։ Իրար վրա լըցված հասանք Էսքիշեհիր։

Էսքիշեհիրում իջանք թե չէ մի անձրև սկսվեց, ժողովուրդը թրջվեց, ինչ կար-չկար՝ ջուրի երեսը կլողար։ Սոսկալի անձրև էր։ Էդ երևի առաջին քարավանն էր։ Ադաբազար երեք հարյուր հազար հայ կար։

Հաջորդ օրը արև արեց։ Ժողովուրդը իր թրջված իրերը արևի հանեց։ Կայարանում արևի տակ նստել ենք, ոստիկանն ալ գլուխնուս վերեն է։ Մայրիկս խնդրեց ոստիկանին, որ գնանք շուքին նստինք, քանի որ արևը վառում էր։ Ոստիկանը ըսավ.—

*Այքան աղջիկ ունես, մեկը տուր ինձի՝ թողնեմ քեզ շուքին նստես։*

*Մայրիկս ըսավ.— Ո՛չ մեկին ալ չե՛մ տար, արևին ալ կնստիմ...*

*Աղիկա աղեկ կհիշեմ։ Հոն քանի մը օր մնացինք։ Տեսանք էսքիշեհիրի հայերին ալ սկսան հավաքել, մեզի հետ գնացք դրին։*

*Հորեղբորս տղան՝ Ազարյան Վաղարշակը, էսքիշեհիրի կայարանում պաշտոնյա էր։ Երկու եղբայր միասին հոն կաշխատեին։ Մեզի տեսան, ըսին.*

*— Ձեզի պիտի աքսորեն։ Աղջիկներիդ մեկը գոնե հոստեղ ձգե։*

*Բայց մայրս ոչ մեկիս ալ չթողեց։*

*Հետո Վաղարշակը առաջարկած է նաև Գրիգոր Զոհրապին Պոլիս ղրկել, բայց նա մերժած է։*

*Հասանք Կոնիա։ Հոն ալ մի քիչ մնացինք։ Հետո Կոնիայի հայերուն ալ հավաքեցին, մեր՝ ադաբազարցիներիս, էսքիշեհիրցիների և ուրիշ տեղերե եկած հայերուն հետ խառնելով, մեզ նորեն գնացք դրին, հասանք Էրեյլի։ Անտեղի ժողովուրդին ալ հավաքեցին, բոլորիս միասին աքսոր ղրկեցին...*

*Մե՜ծ, ամայի՜ տարածություններ։ Աչքդ կտրածին չափ չոլ-անապատի մեջ լցրել են հայ ժողովրդին...*

*Էրեյլիեն ոտքով ճամփա հանեցին մեզի մինչև Բոզանդի։ Ան անցյալի Բյուզանդիոնն է եղել։*

*Հոն բավական մնացինք։*

*Լուրեր էին հասնում, որ եթե առաջ գնանք՝ պիտի մեզ մորթեն։ Անոր համար հայրս ոտքը կախ էր գցում, որ ուշանանք, չէրթանք առաջ...*

*Բաց տարածության վրա ամեն կողմեն հավաքված հայերը կարպետներով, գույնգույն շորերով շադըրներ են խփած, ճանճերը կըվխտան, ջուր չկա, հաց չկա, խոտ կքաղեինք կուտեինք, որ անոթի չմեռնենք...*

*Թուրքերը կուգային կհարցնեին.— Նէ՞ վար սաթըլըք (ի՞նչ կա ծախու)։*

*Մայրիկները կըսեին.— Բիթ վար սաթըլըք, ալըրսընը՞զ (Ոջիլ կա ծախու, կառնե՞ք),— որովհետև արդեն ոջլոտված էինք։*

*Թուրքերը ոստիկանի հագուստով, բայց հանցագործի երեսով, կուգային, կքանդեին մեր շադըրները.— Քալքը՛ն, յըխը՛ն, չըխը՛ն, գիդը՛ն (Վե՛ր կացեք, վառե՛ք, դուրս եկե՛ք, գնացե՛ք),— կըսեին։ Երբ շատերը կէրթային, մենք ոտքերնիս կախ կգցեինք, քանդված շադըրը նորեն կլարեինք, կմտնայինք տակը, որ չգնանք։ Հայրս ասում էր.— Առաջ չգնանք. ինչքան կրնանք ոտքերնիս կախ գցենք։*

*Արդեն մայրիկս ու քույրերս հիվանդացան տիֆով։ Միայն ես ու հայրս չհիվանդացանք։ Բայց հետո ես ալ սթմա՝ ջերմ, ընկա։*

*Հայրս մտածեց մի տուն վարձի՝ հիվանդներու խնամի։*

*Ոստիկանը ըսավ.— Ո՞ւր եք գնում։*

*Հայրս բացատրեց.— Տուն մը վարձեմ հիվանդներուն խնամեմ։*

*— Հիվանդ են՝ թող մեռնին,— ըսավ անզգա ոստիկանը։*

*Խամշիով հորս վզին տվեց, արյունը շռռաց...*

*Մեղքերնիս ան էր, որ հա՜յ էինք և ուզում էինք մեզ համար մի տուն վարձել։ Արդեն հիվանդներ պառկած են, ես ալ հետերնին։ Հայրս մինակ մեզ կխնամե։ Բայց հրաման կար, որ տղամար տանը չպիտի ըլլա։ Հայրս օրվա մեջ անտառներ կպտտեր, գիշերը գաղտնի տուն կուգար, չամի կբերեր։ Հետո լսեցինք, որ հացթուխներուն զինվորի ընտանիքներուն աքսոր չեն տանելու Անոր համար հայրս ամեն օր հինգ փարայի խմո կառներ, վրան կքսեր, իբր թե հացթուխ է...*

*Թիֆով հիվանդները չամիչ ու հաց կուտեին Հայրիկս, որ ողջ-առողջ գիշերը տուն կուգար, կուրախանայինք։ Ալ չգիտեմ չամիչ-հացը օգնեց, թե Աստված. կամաց-կամաց տիֆով հիվանդ մայրս և քույրերս բավական աղեկցան, բայց դեռ պառկած են։ Ես հազիվ ոտքի վրա հիվանդներին խնամում եմ, շուքալիները կթափեմ...*

*Օր մըն ալ գիշերը երազ մը տեսա. պետքարանին քովը մորուքով մարդ մը կար. «Աղջիկս մի՛ մտածեր. կփրկվե՜ք» ըսավ։ Ես անոր ճանչըցա եկեղեցու գմբեթի վրայի նկարեն։ Աղի ըսավ, ես՝ ուրախացա, եկա մայրիկիս ըսի.— Ասա՜նկ-ասա՜նկ երազ տեսա։*

*Մայրս ըսավ.— Աղի Աստված հայրիկն է, հիվանդները Աստծո հրամանով պիտի աղեկնան։— Եվ իսկապես էլ առանց դեղի լավացան։*

*Օր մը ասանկ պետքարանի վերևի բալկոնե մորաքրոջս աղջիկը կպոռա.— Հայկուհի՛, ո՞ւ կապրիք։*

*— Մենք ալ ձեղնահարկում ենք։*

*— Կուգամ՝ կտեսնամ։*

*Եկավ, բայց իրար օգնելու հնա՜ր չիկա։ Գոնե իրար գտնանք այդ ժխորին մեջ... Մորաքրոջս ամուսինը և իմ հայրիկը կմտածեն՝ աս հիվանդներ ո՞ւր տանենք։*

*Մորաքրոջս ամուսինը, իմ հայրիկը և Սուրեն Ցեսչյանի հայրը՝ Տիգրան էֆենդին, մորքուր օղլի են։ Կհանդիպին իրար, կըսեն, որ մի հույն կաշառքով, հույնի անունով մեզ կրնա տանիլ անցնել Տավրոսի լեռները, ուր Բեռլին—Բաղդա երկաթուղու վրա աշխատող են փնտրում, երկաթագործ որ աշխատի, բայց երեք հարյուր ոսկի են ուզում։ Բոլորս ընտանիքով՝ օլուխ-չոջուխ, միայն երեք տղամարդ ունեինք։ Այդ երեք արհեստավորները իբր պիտի երթան թունել բացեն Բեռլին—Բաղդադ երկաթգծի համար։ Տիգրան էֆենդին փող ուներ, երկու հարյուր ոսկին ինքը տը-*

վավ, հարյուր ոսկին ալ, հիսուն-հիսուն կիսելով, մենք ու մորաքրոջս ամուսինը տվեցինք, քեմերները պարպեցինք, նստեցինք էշերը։ Բոզանդիեն ադ հույնը մեզի վեզիկայով՝ այսինքն անցագրով պիտի դուրս հաներ։ Գիշերով, ջորիներով ճամփա էլանք։ Ունեցածնիս ալ ի՞նչ է, բախըր-չախըր, սըխը սանր, ուրիշ բան չկա։ Հիվանդ ենք, անկարող քայլելու։ Տավրոսի լեռը ո՞նց պիտի բարձրանանք։ Տիգրանենք չորս հոգի, մենք՝ տասըտասներկու հոգի։ Ջորիներն ու էշերը պիտի բարձրանան Թաշ դուրմազ՝ «Քար չի կանգնում» սարի գլուխը, որը Տավրոսի լեռներուն մեջտեղն է։ Թեոդիկն ալ մեզի հետ էր, ան որպես գրագետ մարդ դրամ տվեր էր, եկած էր մեզ հետ։ Շուրջերնիս գյուղ չիկա։ Միայն թունել բացող բանվորներն են։ Բոլորն ալ զինվորութենե ամիլե թաբուրից* փախած մարդիկ են։ Մենք Ղուշչուլար գյուղը պիտի բարձրանանք։ Մեզ լցրին մի կազարմայի մեջ։ Մենք երեք ընտանիք ենք՝ մորաքույրենքս, Ֆեսչյանները և մենք։ Մի սենյակի մեջ ենք լցված, բայց հոգիներնիս ազատած ենք աքսորեն...

Ֆեսչյանը կըսեր.— Աս քաշվելի՛ք բան չէ, չեքիչ է պետք, որ ոջիլները կոտրենք։ Այնքան շա՛տ ոջիլ կար զինվորներեն մնացած։

Առավոտյան մեր երեք տղամարդիկը էլան գացին երկաթագործության։ Հայրս դերձակ մարդ, մուրճով գործ չէ ըրած, մուրճը մատերուն խփել էր, սատիկ ցավացրել։ Ալ հաշիվդ ըրե, ադ ձևով թունել պիտի բացեն, որ Բեռլին—Բաղդադի երկաթգիծը անցնի։ Բոլոր մեհենդիզները գերմանացի էին։ Ես էլեկտրական լամպ առաջին անգամ հոն տեսա։ Թունելը փորեցին, մինչև պատերազմի վերջանալը երկաթգիծը միացուցին։

Սուրենի մայրը երկու քեռի ուներ՝ Ներսես և Պետրոս Էֆեյաններ։ Անոնք որպես գերմանացի սպա կաշխատեին, կերթային հեռուներեն հայ որբեր կբերեին մեծ մայրիկիս կուտային, որ պահի մինչև մի ճար գտնեին։

Օր մը ադ Պետրոսն ու Ներսեսը, որոնք Գերմանիայում էին ուսում ստացել ու լավ պաշտոնյա էին, եկան, որ Սուրենի պապային, մամային տանին ոծի վրա, որ Պոլիս փախցնեն։ Առաջ երկու երեխաներին, հետո՝ հորն ու մորը տարին հասցրին Խաչկըրըն (խաչակիր բառից էր այդ վայրի անունը), իսկ մենք մնացինք մինչև զինադադարը։ Բոլորիս ներում շնորհեցին։ Ի՞նչ մեղք էինք գործել չիմացանք։ Ետ եկանք, բայց շատ պակսած։ Մեկին մայրը չիկա, մեկին քույրը չիկա, մեկալին՝ հայրը, եղբայրը չիկան...։ Այդպես լացո՛վ, ողբո՛վ գնացինք ետ՝ Ադաբազար։

Մեր տունը քարուքանդ եղած էր, բայց թուրքեր էին մտել ապրում էին։ Մեծ մայրիկս անոնց դուրս հանեց, թուրքերը գնացին։ Էդ մեր ազնիվ, շինարար ժողովուրդը նորե՛ն սկսավ շինել տուները։ Հորեղբայրներուս, մորեղբայրներուս տուները դատարկ մնացին։ Հայրս կարի մեքենա առավ, խանութ բացավ։

Հազիվ ինքզինքնիս գտանք, միլլիչիները եկան։ Միլլիչիները ազգայնականներն էին՝ զինված։ Մենք զարմացանք։ Այլևս անցյալի խեղճ ու կրակ թուրքը չէր, որ պատերազմից պարտված էր դուրս եկել։ Մինչև ատամները զինված միլլիչիները եկան, սկսեցին իրենց գործը։ Քեմալը կազմակերպել էր հայերին, հույներին ու չերքեզներին, ովքեր մահմեդական չէին՝ քշել...

Էլի իմ հորեղբոր տղան՝ Ներսեսը, եկավ, ըսավ.— Շո՛ւտ ըրեք, փախե՛ք, միլլիչիները եկած են, պիտի կոտորեն...

Տուն, ունեցած-չունեցած ապրանքները, խանութը, որը հայրիկս նոր էր ստեղծել, թողինք, գնացինք Իզմիր։ Լավ է հույնը շոգենավերը բերեց, հայերուն և հույներուն օգնեց, որ փախչեն Հունաստան։ Քեմալականները վառում էին գյուղերը, ի՛նչ որ հանդիպում էին...

Մենք եկանք Հունաստան։ Ազատվեցանք։ Հույն կառավարությունը Ադաբազարից, Էսքիշեհիրից, Իզմիրից եկած հայ գաղթականներին տնավորեց, նույնիսկ դպրոցները փակեց, որ մեզ ապաստան տրվի։ Օրական երկու դրախմի կուտար՝ մարդ գլուխ։ Գաղթականներին տուն տվավ։ Մենք մընացինք Դրամայում, Կավալայում, հետո՝ Սալոնիկում...

1925 թվին ներգաղթով եկանք Հայաստան։

— Ամա՜ն, էրթա՛նք,— ըսավ հայրիկս,— թուրքին ձեռքեն ազատվի՛նք։ Էկանք հոս՝ Երևան։ Ուսում առի, գիշերային դպրոցում սովորեցի, կոմսոմոլ ընդունվեցի, հետո գնացի Թիֆլիզ սովորելու, քաղպարապմունքների էի գնում կիրակի օրերը, ЗКУ համալսարանում սովորեցի, այնտեղ ընդունվեցի պարտիայի շարքերը։ Հանդիպեցի Մացակին։ Ժիր, ճարպիկ աղջիկ էր, հազիվ էի ազատություն ստացել։ Ամուսնացանք։ Հանրակացարանում էինք ապրում։ Թիֆլիզում էլ մայրացա, եկանք Երևան։ Պարտիական աշխատանքի նշանակվեցի։ Առաջ կոմսոմոլի կենտկոմումն էի աշխատում, կուլակաթափման աշխատանքներին էի մասնակցում, կոլխոզ շարժմանն էի աջակցում։ Հետո եկավ 1937 թիվը։ Սկսեցին մարդկանց բռնել։ Ես կոմսոմոլի կենտկոմում ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչն էի. արտասահմանի հետ կապ ունենալուս համար ինձ մեղադրեցին։ Այդ ժամանակ Ա. Միկոյանը եկավ Երևան. արդեն Ամատունին, Ենգիբարյանը, Աբուլյանը բռնված էին։ Միկոյանը եկավ ըսավ՝ ի՞նչ է միայն մտավորականներին եք բռնել, կոմսոմոլի աշխատողների մեջ չկա՞ն ժողովրդի թշնամիներ։ Ամուսնուս ալ բռնեցին որպես ժողովրդի թշնամի։

* Թուրքական բանակում գործող աշխատանքային գումարտակ։

*Թուղթ մը կբերեն ամուսնուս առաջը կդնեն, որ ամուսինս ստորագրե։ Ամուսինս չի ստորագրեր, իսկ Շաղբաթյանը կստորագրե։ Ան ալ որբ էր եղած։ Քշեցին աքսոր՝ Սիբիր, անտառներում, ճահիճներում ծառ կտրելու։ Կինը ամուսնու համար սաբոկներ ճարեց, առավ, տարավ Սիբիր, որ ճահիճներուն մեջը աշխատելու ժամանակ հագնի։ Կինը մեծ դժվարությամբ գնում, հասնում է Սիբիրի լագերի դուռը։ Պահակը չի թողնում ներս մտնի։ Կասի՝ արի ինձ հետ եղիր, հետո՝ գնա ներս, ամուսնուդ տեսնելու։ Կինը չի համաձայնում, ետ է գալիս, սաբոկները ձեռքին՝ առանց ամուսնուն տեսնելու։*

*Այնպես որ, ամուսնուս ալ բռնեցին, ժողովով ինձ հեռացրին կուսակցությունից, որպես ժողովրդի թշնամի։ Ես դրսից լսում էի՝ իմ մասին ժողովը որոշում է հանում, լսում եմ ու լաց լինում։ Ինձ ծանոթ մի տղա եկավ ձեռքս բռնեց,*

*ուզեց ինձ տուն տանել, ըսի՝ գործ չունես, քեզ*
*կմեղադրեն, որպես ժողովրդի թշնամի...։ Ի*
*ցավ է, գիտե՞ս։ Այնքա՜ն հարգանքից հետո՝ ժ*
*ղովրդի թշնամիի անուն վաստակիլ։ Ամուսին*
*բանտարկված, ես՝ կուսակցությիններ հեռացվա*
*Մնացի անգործ։ Շատ սոված, դժվար օրեր ուն*
*ցանք զավակներիս հետ միասին։ Հետո ստիպվ*
*լուսանկարչություն սովորեցի։ Սկսա աշխատ*
*երեխաներս փոքր էին, շատ խեղճացել էին*
*Պատերազմը սկսվեց։ Տղամարդիկ ճակատ մե*
*նեցին։ Ես աշխատեցի, ընտանիքս պահեցի։ Հ*
*տո ամուսինս վերադարձավ։ Վերականգնեցին ի*
*ու նրան։ Սկսեցի աշխատել պետական արխիվո*
*որպես լուսանկարիչ։ Ամուսինս չդիմացավ ա*
*հուզումներին՝ վախճանվեց։*

*Հիմա թոշակառու եմ, աշխատանքի և կուսա*
*ցության վետերան եմ, ապրում եմ տղայիս ը*
*տանիքի հետ։*

## 67(288).
## ԲԻԼԵՋԻԿՑԻ ԹԵՐՋՅԱՆ ՄԵԼԻՆԵԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1905 Թ.)

*Մինչև Իզմիրի աղետը, մենք Բիլեջիկ կապրեինք։ Թուրքը եկավ, ուզեց հույնին դուրս հանել Իզմիրեն։ Հույնը ըսավ՝ ես ծախս եմ արել, որտեղ որ գրավել եմ, անտեղ ալ կվառեմ։ Էլեկտրական թելերը միացուցին և քաղաքը կրակի տվին։ Ես այդ ժամանակ տասնվեց տարեկան էի։ Հույնը ուզում էր, որ իր ըրած ծախսերը տանի։*

*Հետո մենք եկանք Բանդըրմա։ Մեկ գիշեր մընացինք ծովեզերքը, բաց երկնքի տակ։ Հետո բարեգործականը հատուկ նավ ղրկեց, որ մեզ՝ հայերուս ազատի։*

*Երկրորդ օրը նավը եկավ։ Հայերը լցվեցին մե-*
*ջը։ Նավը շղթաները վեր քաշեց, ծովեզերքը լի՜*
*էր հայերով։*

*Քեմալը բռնեց բոլոր հայերուն թունելի մը մ*
*լեցուց, երկու կողմեն նավթ լցրեց, վառեց բոլ*
*հայերուն։ Ես աչքովս տեսած եմ։ Ան երիտա*
*սարդները, որոնք լողալ գիտեին, սկսան լող*
*ջուրին մեջը։ Մեր նավը քաշվեց, երիտասարդն*
*րը լողալով ուրիշ նավի մը մոտեցան, որ ան*
*րենց վերցնե, բայց նավին մեջեն եռացած ջո*
*բացին վրանին, շոգին կելլա՜ր, բոլոր հայ եր*
*տասարդները ջուրին մեջ մեռա՜ն։ Ես այդ պա*
*կերը չե՜մ կրնա մոռնալ...*

## 68(284).
## ԲՈՒՐՍԱՑԻ ՍՐԱՊՅԱՆ ԱՆԺԵԼԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1905 Թ.)

*Այդ ժամանակ ես տասը տարեկան էի։ Քույրս վեց ամսական էր, երբ մեզ աքսոր հանեցին Բուրսայեն։ Ճամփին մեր բարեկամները կորսընցուցինք։ Մամաս լալեն ինձի կըսեր.— Նայե՛, ճամփուն վրա շուները հայերու լեշերը կուտեն կոր. մարդիկ դեռ հոգի չեն տված անգամ...*

*Ճամփուն պզտիկ քույրս, որ վեց ամսական էր, հիվանդացավ։ Մեզ հետ եկող կնիկները ըսին մորս.— Ո՜չ կաթ ունիս, ո՜չ հաց ունիս, որ երեխային կաթ տաս, ձգե՛ ճամփուն քովը, էրթանք...*

*Մամաս ըսավ.— Չէ՛, չե՛մ ձգեր.— փեշդիմալով կոնակը կապեց չոջուխը, գնացինք։ Ճամփին ալ սովածութենեն, թե հոգնածութենեն, չգիտեմ,*

*մորս աչքերը կուրացան։ Կոնիայի մոտ մեր ո*
*նեցած-չունեցածը գողցան, տարին։ Մայրս՝ կույ*
*կույր կուլա՜ր-կողբա՜ր, կըսեր.— Աստվա՜ծ ս*
*րեք, գոնե մի յորղան տվեք։*

*— Աստվածը մե՛նք ենք,— ըսին ու սկսա*
*ծեծել մորս...*

*Ճամփին արաբա մը տեսանք։ Ես խնդրեցի.*
*Ի՞նչ կըլլա, գոնե կույր մայրս և երեխան նստի*

*Արաբան քշող մարդը մեղքցավ մորս, ինձ*
*երեխային արաբայի վրա առավ։ Հազիվ քիչ*
*տեղ գնացել էինք, մեկ ալ ուրիշ արաբա մը դ*
*մացեն եկավ, կամուրջի վրա իրար զարնվեցա*

մեր արաբան ջուրը ինկավ։ Ես կրցա երեխային խունդախը բռնել, բայց ջուրին մեջն եմ...

— Ամա՜ն,— ըսավ մայրս,— ամեն ինչս կորսընցուցի, երեխեքս ալ գնացին։ Աղեկ քի անտեղ հայ տղաներ կային, ըսին.— Մի՛ վախնար,— իրենց նետեցին ջուրը, մեզի ազատեցին...

Ջուրեն էլանք, թաց-թաց կքալենք կոր։ Ջաբիթները մեր ետևեն-առջևեն զումանդա կընեն կոր։ Վերջապես կայարան մը հասանք...

Մենք մի բարեկամ ունեինք, գնացքի վրա կաշխատեր։ Հարցուցինք, ըսին՝ հիմա կգա։

Մարդը եկավ, դու մի ըսեր, ան մուդիրն է հոնտեղի, ըսավ՝ գիշերը անցուցեք։

Հոն լուսացուցինք, որ մեզի նորեն չտանին։ Մամայիս աչքերը սկսել էին քիչ-միչ տեսնալ։ Իմ մազերը կտրեց, երեսս ածուխով սևցուց, որովհետև արաբները, թուրքերը պզտիկ-մեծ աղջիկներուն փախցնում էին, մամաս մազերս տղայի պես կտրեց։ Ականջիս օղերը հանեց, ինձ տղայի պես հագցուց, որ չփախցնեն։

Այդ հայ մուդիրը մեզ շատ օգնեց։ Մեզ Էրեյլի ղրկեց՝ Կոնիայից հեռու։ Ոտքով ինը օր տևեց։ Մամաս հոն ասդին-անդին կաշխատեր։ Մենք գընացքի գծի վրայեն ածուխի կտորները կհավաքեինք, որ վառենք։ Չէ որ ան ժամանակ ածուխով կաշխատեր գնացքը։ Ածուխի որ կտորը, որ չէր վառվի, կնետեին, մենք ալ եղբորս հետ գնում, հավաքում էինք։ Օր մըն ալ եղբայրս ինկավ արտաքնոցին մեջը...։ Տեսա կեղտը կքաշե կոր վար, թևերը կերևար միայն...։ Պոռացի, կանչեցի, մարդիկ եկան հանեցին, հանած ատենին կզակը վիրավորվեց, եղբորս տարի ջրի մեջը լվանամ, նե՛ օճառ կա, նե՛ բան...

Երեք տարի ու կես Էրեյլի մնացինք։ Մամաս մեշոկ կկարեր, յոլա կերթայինք...

Աքսորեն ետքը ամերիկացիները էկան թուրքերուն տուներեն հայ շոջուխներուն հավաքեցին։ Անոնք առանձին որբանոցներ բացած էին, մեկը պզտիկներու, մյուսը՝ աղջիկներուն, մեկն ալ՝ տղաներուն համար։

Հայ տղաները կուզային բանակեն կամ որբանոցեն աղջիկներ կընտրեին, կամուսնանային, տուն-տեղ կըլլային։ Ամերիկացին ֆաբրիկաներ բացած էր. դեզգեհ կաշխատցներ, հայ որբերը հոն կաշխատեին կամ Ամերիկա կղրկեին՝ որբերուն տերություն կընեին։

Իմ մեծ մորեղբայրս պզտիկ խանութ մը ուներ, իրեն համար դերձակություն կըներ, քիչ մըն ալ մեզի կօգներ։ Մի օր աս մորեղբորս խանութին կտիրանա թուրք մը, իրեն դուրս կընե խանութեն։ Այնպես որ, մենք լրիվ տկլոր մնացինք...

Մեր ողորմածիկն ալ (իմա՝ ամուսինը) Անդրանիկ փաշայի զինվորը եղած էր։ Իմ ամուսինին կողմը յոթ եղբայր և երկու քույր էին։ Թուրքերը աս յոթ տղաներուն զինվոր էին տարել։ Ասոնք բոլորն ալ փախել, գնացել էին Էրզրում և միացել Անդրանիկի խմբին...

Ամուսինս կպատմեր, որ Անդրանիկը պզտիկ տղա է եղել։ Խոտերուն մեջը իր հորը թուրքերը կմորթեն, տղան կտեսնա հորը արյուններուն մեջը։

Աս Անդրանիկը գացեր է Նուպար փաշային ըսեր է.— Նուպա՛ր փաշա, ի՞նչ կըլլա, ինձի զինվոր առ։

Նուպար փաշան կըսե.— Դուն ի՞նչ կրնաս ընել, պզտիկ ես...

— Ես ձիերուն տակերը կմաքրեմ, բայց վրեժս կլուծեմ։

Ադպիսով Անդրանիկը զինվոր կըլլա, շատ դըժվար օրեր կանցնե։ Մյուս կամավորներուն հետ կերթա, կտեսնա տասը-տասնհինգ հայ աղջիկներ տանջված, ըկված կուլան, կըսեն.— Ամա՜ն, մեզի ազատեցեք։

Անդրանիկը կըսե իր զինվորներուն.— Ասոնց հագցուցեք։

Ով երկու ժակետ ուներ, մեկը կհանե, ով երկու շալվար ուներ կհանե, գլխարկ-մլխարկ կըհագցնեն անոնց, կըլլան տղա զինվորներ, Անդրանիկ փաշան կնայի, կըսե.— Զինվորներս շատցան։ Եթե թուրքերը խառնվեցան մեզի, բոլորին պիտի սատկեմ։

Աղջիկներուն անուններն ալ տղայի անուններ դրած են, մեկը՝ Պողոս, մյուսը՝ Մարտիրոս։

Անդրանիկը կհարցնե.— Դուն որտեղե՞ն ես։

— Ամա՜ն,— կըսեն զինվորները,— մենք ասոնց ազատել ենք, մեր հետը կտանինք կոր, թուրքերեն ազատեցինք։

Անտեղեն մեկ հատ տղա հագած աղջիկ դուրս եկավ, ըսավ.— Անդրանի՜կ փաշա, ոտքերդ լվամ ջուրը խմեմ. մեզի հետդ տար...

Անոնք ալ միացան մեզի։ Էլանք լեռը, սկսանք խոտ ուտել։ Վեց ամիս խոտով փորերնիս կլեցնեինք։ Քանի որ քուրդ մշակ մը ունեինք, որը մեզ ուտելիք կբերեր, անոր թուրքերը բռնել էին, նեղել, ըսել էին Անդրանիկի գլուխը եթե չբռնես, քո գլուխը պիտի կտրենք։ Անոր համար Անդրանիկը այլևս ադ քուրդին ուտելիքի չէր ղրկում, իր մոտ էր պահում, որ փորձանք չգա անոր գլխին։

Անդրանիկի խումբը շատ մը հերոսություններ կընե։ Հետո, որ Անդրանիկը Բուլղարիա՝ Սիմիոն թագավորին մոտ կերթա, կբարևե, ձեռքը կթոթվե, կտեսնա, որ թագավորը շատ տխուր է ու մտածկոտ, կըսե.— Ի՞նչ կմտածես։

— Ա՜խ, թուրքը կուգա կոր կհասնի մեզի։ Ռուսը մեր պապն է, կօգնե մեզի, բայց մինչև հասնի՝ ո՜ւշ կըլլա. թուրքը արդեն եկած կըլլա, իմ զինվորներս ալ քիչ են։

— Ադ զինվորներդ ինձ տուր,— կըսե Անդրանիկը,— ես անոնց աջ ու ձախ նետել կսորվեցնեմ, անանկ, որ ոնց որ մի քանի կողմից են կրա-

Թուղթ մը կբերեն ամուսնուս առաջը կդնեն, որ ամուսինս ստորագրե։ Ամուսինս չի ստորագրեր, իսկ Շաղբաթյանը կստորագրե։ Ան ալ որբ էր եղած։ Քշեցին աքսոր՝ Սիբիր, անտառներում, ճահիճներում ծառ կտրելու։ Կինը ամուսնու համար սաբոկներ ճարեց, առավ, տարավ Սիբիր, որ ճահիճներուն մեջը աշխատելու ժամանակ հագնի։ Կինը մեծ դժվարությամբ գնում, հասնում է Սիբիրի լագերի դուռը։ Պահակը չի թողնում ներս մտնի։ Կասի՝ արի ինձ հետ եղիր, հետո՝ գնա ներս, ամուսնուդ տեսնելու։ Կինը չի համաձայնում, ետ է գալիս, սաբոկները ձեռքին՝ առանց ամուսնուն տեսնելու։

Այնպես որ, ամուսնուս ալ բռնեցին, ժողովով ինձ հեռացրին կուսակցությունից, որպես ժողովրդի թշնամի։ Ես դրսից լսում էի՝ իմ մասին ժողովը որոշում է հանում, լսում եմ ու լաց լինում։ Ինձ ծանոթ մի տղա եկավ ձեռքս բռնեց, ուզեց ինձ տուն տանել, ըսի՝ գործ չունես, քեզ ալ կմեղադրեն, որպես ժողովրդի թշնամի...։ Ի՞նչ ցավ է, գիտե՞ս։ Այնքա՜ն հարգանքից հետո՝ ժողովրդի թշնամիի անուն վաստակիլ։ Ամուսինս՝ բանտարկված, ես՝ կուսակցութենեն հեռացված։ Մնացի անգործ։ Շատ սոված, դժվար օրեր ունեցանք զավակներիս հետ միասին։ Հետո ստիպված լուսանկարչություն սովորեցի։ Սկսա աշխատիլ, երեխաներս փոքր էին, շատ խեղճացել էինք։ Պատերազմը սկսվեց։ Տղամարդիկ ճակատ մեկնեցին։ Ես աշխատեցի, ընտանիքս պահեցի։ Հետո ամուսինս վերադարձավ։ Վերականգնեցին ինձ ու նրան։ Սկսեցի աշխատել պետական արխիվում որպես լուսանկարիչ։ Ամուսինս չդիմացավ այդ հուզումներին՝ վախճանվեց։

Հիմա թոշակառու եմ, աշխատանքի և կուսակցության վետերան եմ, ապրում եմ տղայիս ընտանիքի հետ։

## 67(283).
## ԲԻԼԵՋԻԿՑԻ ԹԵՐՋՅԱՆ ՄԵԼԻՆԵԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1905 Թ.)

Մինչև Իզմիրի աղետը, մենք Բիլեջիկ կապրեինք։ Թուրքը եկավ, ուզեց հույնին դուրս հանել Իզմիրեն։ Հույնը ըսավ՝ ես ծախս եմ արել, որտեղ որ գրավել եմ, անտեղ ալ կվառեմ։ Էլեկտրական թելերը միացուցին և քաղաքը կրակի տվին։ Ես այդ ժամանակ տասնվեց տարեկան էի։ Հույնը ուզում էր, որ իր ըրած ծախսերը տանի։

Հետո մենք եկանք Բանդըրմա։ Մեկ գիշեր մնացինք ծովեզերքը, բաց երկնքի տակ։ Հետո բարեգործականը հատուկ նավ ղրկեց, որ մեզ՝ հայերուս ազատի։

Երկրորդ օրը նավը եկավ։ Հայերը լցվեցին մեջը։ Նավը շղթաները վեր քաշեց, ծովեզերքը լի՜քն էր հայերով։

Քեմալը բռնեց բոլոր հայերուն թունելի մը մեջ լեցուց, երկու կողմեն նավթ լցրեց, վառեց բոլոր հայերուն։ Ես աչքովս տեսած եմ։ Ան երիտասարդները, որոնք լողալ գիտեին, սկսան լողալ ջուրին մեջը։ Մեր նավը քաշվեց, երիտասարդները լողալով ուրիշ նավի մը մոտեցան, որ ան իրենց վերցնե, բայց նավին մեջեն եռացած ջուր բացին վրանին, շոգին կելլա՜ր, բոլոր հայ երիտասարդները ջուրին մեջ մեռա՜ն։ Ես այդ պատկերը չե՛մ կրնա մոռնալ...

## 68(284).
## ԲՈՒՐՍԱՑԻ ՍՐԱՊՅԱՆ ԱՆԺԵԼԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1905 Թ.)

Այդ ժամանակ ես տասը տարեկան էի։ Քույրս վեց ամսական էր, երբ մեզ աքսոր հանեցին Բուրսայեն։ Ճամփին մեր բարեկամները կորսընցուցինք։ Մամաս լալեն ինձի կըսեր.— Նայե՛, ճամփուն վրա շուները հայերու լեշերը կուտեն կոր. մարդիկ դեռ հոգի չեն տված անգամ...

Ճամփուն պզտիկ քույրս, որ վեց ամսական էր, հիվանդացավ։ Մեզ հետ եկող կնիկները ըսին մորս.— Ո՛չ կաթ ունիս, ո՛չ հաց ունիս, որ երեխային կաթ տաս, ձգե՛ ճամփուն քովը, էրթանք...

Մամաս ըսավ.— Չէ՜, չե՛մ ձգեր.— փեշդիմալով կռնակը կապեց չոջուխը, գնացինք։ Ճամփին ալ սովածութենեն, թե հոգնածութենեն, չգիտեմ, մորս աչքերը կուրացան։ Կոնիայի մոտ մեր ունեցած-չունեցածը գողցան, տարին։ Մայրս՝ կույր-կույր կուլա՜ր-կողբա՜ր, կըսեր.— Աստվա՜ծ սիրեք, գոնե մի յորղան տվեք։

— Աստվածը մե՛նք ենք,— ըսին ու սկսան ծեծել մորս...

Ճամփին արաբա մը տեսանք։ Ես խնդրեցի.— Ի՞նչ կըլլա, գոնե կույր մայրս և երեխան նստին։

Արաբան քշող մարդը մեղքցավ մորս, ինձ ու երեխային արաբայի վրա առավ։ Հազիվ քիչ մը տեղ գնացել էինք, մեկ ալ ուրիշ արաբա մը դիմացեն եկավ, կամուրջի վրա իրար զարնվեցան,

մեր արաբան ջուրը ինկավ։ Ես կրցա երեխային խունդախը բռնել, բայց ջուրին մեջն եմ...

— Ամա՜ն,— ըսավ մայրս,— ամեն ինչս կորսընցուցի, երեխեքս ալ գնացին։ Աղեկ քի անտեղ հայ տղաներ կային, ըսին.— Մի՛ վախնար,— իրենց նետեցին ջուրը, մեզի ազատեցին...

Ջուրեն ելանք, թաց-թաց կքալենք կոր։ Զաբիթները մեր ետևեն-առջևեն ղումանդա կընեն կոր։ Վերջապես կայարան մը հասանք...

Մենք մի բարեկամ ունեինք, գնացքի վրա կաշխատեր։ Հարցուցինք, ըսին՝ հիմա կգա։

Մարդը եկավ, դու մի ըսեր, ան մուդիրն է հոնտեղի, ըսավ՝ գիշերը անցուցեք։

Հոն լուսացուցինք, որ մեզի նորեն չտանին։ Մամայիս աչքերը սկսել էին քիչ-միչ տեսնալ։ Իմ մազերը կտրեց, երեսս ածուխով սևցուց, որովհետև արաբները, Թուրքերը պզտիկ-մեծ աղջիկներուն փախցնում էին, մամաս մազերս տղայի պես կտրեց։ Ականջիս օղերը հանեց, ինձ տղայի պես հագցուց, որ չփախցնեն։

Այդ հայ մուդիրը մեզ շատ օգնեց։ Մեզ Էրեյլի ղրկեց՝ Կոնիայից հեռու։ Ոտքով ինը օր տևեց։ Մամաս հոն աղին-անդին կաշխատեր։ Մենք գընացքի գծի վրայեն ածուխի կտորները կհավաքեինք, որ վառենք։ Չէ որ ան ժամանակ ածուխով կաշխատեր գնացքը։ Ածուխի որ կտորը, որ չէր վառվի, կնետեին, մենք ալ եղբորս հետ գնում, հավաքում էինք։ Օր մըն ալ եղբայրս ինկավ արտաքնոցին մեջը...։ Տեսա կեղտը կքաշե կոր վար, թևերը կերևար միայն...։ Պոռացի, կանչեցի, մարդիկ եկան հանեցին, հանած ատենին կզակը վիրավորվեց, եղբորս տարի ջրի մեջը լվանամ, նե՛ օճառ կա, նե՛ բան...

Երեք տարի ու կես Էրեյլի մնացինք։ Մամաս մեշոկ կկարեր, յոլա կերթայինք...

Աքսորեն ետքը ամերիկացիները էկան Թուրքերուն տուներեն հայ չոջուխներուն հավաքեցին։ Անոնք առանձին որբանոցներ բացած էին, մեկը պզտիկներու, մյուսը՝ աղջիկներուն, մեկն ալ՝ տղաներուն համար։

Հայ տղաները կուգային բանակեն կամ որբանոցեն աղջիկներ կընտրեին, կամուսնանային, տուն-տեղ կըլլային։ Ամերիկացին ֆաբրիկաներ բացած էր. դեզգեհ կաշխատցներ, հայ որբերը հոն կաշխատեին կամ Ամերիկա կղրկեին՝ որբերուն տերություն կընեին։

Իմ մեծ մորեղբայրս պզտիկ խանութ մը ուներ, իրեն համար դերձակություն կըներ, քիչ մըն ալ մեզի կօգներ։ Մի օր աս մորեղբորս խանութին կտիրանա Թուրք մը, իրեն դուրս կընե խանութեն։ Այնպես որ, մենք լրիվ տկլոր մնացինք...

Մեր ողորմածիկն ալ (իմա՝ ամուսինը) Անդրանիկ փաշայի զինվորը եղած էր։ Իմ ամուսինին կողմը յոթ եղբայր և երկու քույր էին։ Թուրքերը աս յոթ տղաներուն զինվոր էին տարել։ Ասոնք բոլորն ալ փախել, գնացել էին Էրզրում և միացել Անդրանիկի խմբին...

Ամուսինս կպատմեր, որ Անդրանիկը պզտիկ տղա է եղել։ Խոտերուն մեջը իր հորը Թուրքերը կմորթեն, տղան կտեսնա հորը արյուններուն մեջը։

Աս Անդրանիկը գացեր է Նուպար փաշային ըսեր է.— Նուպա՛ր փաշա, ի՞նչ կըլլա, ինձի զինվոր առ։

Նուպար փաշան կըսե.— Դուն ի՞նչ կրնաս ընել, պզտիկ ես...

— Ես ձիերուն տակերը կմաքրեմ, բայց վրեժս կլուծեմ։

Այդպիսով Անդրանիկը զինվոր կըլլա, շատ դըժվար օրեր կանցնե։ Մյուս կամավորներուն հետ կերթա, կտեսնա տասը-տասնհինգ հայ աղջիկներ տանջված, ըկված կուլան, կըսեն.— Ամա՜ն, մեզի ազատեցեք։

Անդրանիկը կըսե իր զինվորներուն.— Ասոնց հագցուցեք։

Ով երկու ժակետ ուներ, մեկը կհանե, ով երկու շալվար ուներ կհանե, գլխարկ-մլխարկ կըհագցնեն անոնց, կըլլան տղա զինվորներ, Անդրանիկ փաշան կնայի, կըսե.— Զինվորներս շատցան։ Երևի Թուրքերը խառնվեցան մեզի, բոլորին պիտի ստուգեմ։

Աղջիկներուն անուններն ալ տղայի անուններ դրած են, մեկը՝ Պողոս, մյուսը՝ Մարտիրոս։

Անդրանիկը կհարցնե.— Դուն որտեղե՞ն ես։

— Ամա՜ն,— կըսեն զինվորները,— մենք ասոնց ազատել ենք, մեր հետը կտանինք կոր, Թուրքերեն ազատեցինք։

Անտեղեն մեկ հատ տղա հագած աղջիկ դուրս եկավ, ըսավ.— Անդրանի՛կ փաշա, ոտքերդ լվամ ջուրը խմեմ. մեզի հետդ տար...

Անոնք ալ միացան մեզի։ Ելանք լեռը, սկսանք խոտ ուտել։ Վեց ամիս խոտով, փորերնիս կլեցնեինք։ Քանի որ քուրդ մշակ մը ունեինք, որը մեզ ուտելիք կբերեր, անոր Թուրքերը բռնել էին, նեղել, ըսել էին Անդրանիկի գլուխը եթե չբռնես, քո գլուխը պիտի կտրենք։ Անոր համար Անդրանիկը այլևս աղ քուրդին ուտելիքի չէր ղրկում, իր մոտ էր պահում, որ փորձանք չգա անոր գլխին։

Անդրանիկի խումբը շատ մը հերոսություններ կընե։ Հետո, որ Անդրանիկը Բուլգարիա՝ Սիմիոն թագավորին մոտ կերթա, կբարևե, ձեռքը կթոթվե, կտեսնա, որ թագավորը շատ տխուր է ու մտածկոտ, կըսե.— Ի՞նչ կմտածես։

— Ա՛խ, Թուրքը կուգա կոր կհասնի մեզի։ Ռուսը մեր պապն է, կօգնե մեզի, բայց մինչև հասնի՝ ո՛ւշ կըլլա. Թուրքը արդեն եկած կըլլա, իմ զինվորներս ալ քիչ են։

— Աղ զինվորներդ ինձ տուր,— կըսե Անդրանիկը,— ես անոնց աջ ու ձախ նետել կսորվեցնեմ, անանկ, որ ոնց որ մի քանի կողմից են կրա-

*կում։ Աջ ու ձախ որ կրակեն, Թուրքը կվախնա, կըսե՝ աս ինչքա՞ն շատ զինվոր կա։*

*Ադպես ալ ըրավ։ Անդրանիկը Բուլգարիայի հերոս դարձավ, Բուլգարիան ազատվեցավ Թուրքին ձեռքեն։ Ադոր համար ալ Թագավորը մեզի հայերուս ընդունեց Անդրանիկին խաթեր համար, իսկ Անդրանիկին մեծ պալատ մը տվավ։ Անդրանիկը հոն ամուսնացավ։ Ան լավ Թագավոր էր, ամմա գերմանացին անոր գլուխը կերավ։*

*Անդրանիկը վերջը հիվանդացավ, Փարիզ մեռավ։ Մեռնելու ժամանակ ըսեր է.— Բութ մատս կտրեցեք, Հայաստան տարեք, թաղեցեք, շատ չարչարվեցա, բայց Հայաստանում ինձի չհասկացան։*

*Մեր տանտերը, որ բուլգար էր, կըսեր, որ պարադի ժամանակ Թագավորեն վերջը Անդրանիկին նկարը կտանեին։ Ժամանակ պիտի ըլլա Ջեր Հայաստանին դուռները պիտի բացվին։ Այն ատենն ալ Անդրանիկին պիտի ճանչնան։ Իրա՛վ ալ ելավ բուլգար տանտերին ըսածը։*

## 69(285).
## ՆԻԿՈՄԻԴԻԱՑԻ ՍԻԼՅԱՆ ԲԱՐՈՒՀՈՒ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1900 Թ.)

*Ծնվել եմ 1900 թ. Նիկոմիդիայի Օվաճըք գյուղում։*

*Մենք մեր տեղը լավ կապրեինք, տուն, տեղ ունեինք։ Ստամբուլում հայ փաշաները մեծ գործի վրա էին։ Թուրքերը վախենում էին հայերեն, քանի որ առևտուրը, ամեն ինչը իրենց ձեռքն էր։ Ուզեին նե, կառավարությունն ալ իրենց ձեռքը կառնեին..., անոր համար մեզի մեր տուն ու տեղեն հանեցին, գցեցին աքսորի ճամփաները։*

*Տասներկու ամիս անապատում ենք մնացել, ո՛չ հաց, ո՛չ ջուր, ո՛չ տուն, ո՛չ մի բան։ Ինը հոգինոց ընտանիքեն միայն ես ողջ մնացի. մամայիս սպանեցին աչքիս առջևը, քույրիկիս փախցուցին, մյուս քույրիկս փոքր էր՝ հիվանդացավ, մեռավ, միջնեկը՝ կորավ, իրար չգտանք, հարսիս փորը պատռեցին.— Գյավուրի փորինը աղջի՞կ է, թե՞ տղա,— ըսավ մի ասկյար։*

*— Գյավուրը տղա չի՛ ծներ, տե՛ս,— ըսավ ու պատռեց մեր աչքին առջև...*

*Ես, ուրիշ չորս աղջիկներու հետ, հազիվ փախա անտառները, այնտեղ գետ մը կար, լողալով անցանք։ Մի արաբ ինձ տարավ իր տունը, ըսավ.— Աղջի՛կս, ճիշտ է, ձեր օրենքին մեջ չկա, բայց արի՛ երեսդ մելանով ծեծեմ, որ քեզ հայ չկարծեն։*

*Ես ալ լացի. նե՛ տեղաշոր ունեմ, նե՛ հագուստ։ Երեսս ծեծեցին, հաստ հյուսերս խուզեցին։ Տունին գործերը կընեի...*

*Օր մը ադ արաբը էշուն վրա դրած մի հայ տղա բերավ, անոր անունը Աբդուլլա դրին, բայց նա ինձ գաղտագողի ըսավ, որ իր իսկական անունը Ավետիս էր, անոր ալ մեր տերը ոչխարները տվեց, որ տանի արածացնի։*

*Շամ քաղաքի մոտը զինվորական տեղ մը կար, հայտարարեցին, որ որուն տունը հայ կա՝ թող բերի հանձնի։ Իմ տերը մեզի չտարավ։ Օր մը ադ Ավետիսին հետ գիշերով փախանք, հայկական որբանոցը մտանք։*

*Անտեղեն մեզի տարին Հունաստան, թուզի ֆաբրիկան աշխատանք։ Հետո ալ՝ 1928-ին, Հայաստան եկանք։*

## 70(286).
## ՉԱՆԱՔԿԱԼԵՑԻ ՋՈՒԼԱԼՅԱՆ ԳԵՎՈՐԳԻ ՊԱՏՄԱԾԸ (ԾՆՎ. 1907 Թ.)

*Նախքան 1915 թ. հայերի զանգվածային տարագրությունը, Թուրք իշխանությունները բոլոր հայ տղամարդկանց հավաքագրեցին զինվոր և, նրանց ձեռքը ոչ մի զենք չտալով, շատ բնակավայրերում տարբեր ձևերով սպանեցին։*

*Մի քանի վայրերում, ինչպես և մեր քաղաքում, ուր հայոց կողմանե Թուրք իշխանության դեմ զենքով ապստամբության փորձ չէր եղած, հայ զինվորներին զենքով վարժություններ սորվեցուցին և Թուրքական բանակի մեջ պիտի մտցնեին, բայց հետո նրանց ձեռքեն ալ զենքերը վերցուցին և շատ քչերին բանակի մեջ պահեցին. անոնց որ լավ լեզուներ գիտեին, լավ Թնդանոթաձիգ էին կամ ինժեներ ու բժիշկ, իսկ մնացածներուն համար կազմեցին ամիլե Թաբուրը (աշխատանքային գումարտակ)։ Այս բոլորն, անշուշտ, գերմանացոց խորհրդով էր պատրաստված և, քրիստոնյա գերմանացիներուն քթին տակ ու աչքին առաջ հայ քրիստոնյա, անզեն մարդկանց, կաշվե մտրակների տակ, առանց շունչ առնելու, քարհանքերում և ճանապարհաշինություններում չարաչար աշխատեցնում էին։ Նրանք հիվանդանում էին, հյուծվում, հաշմանդամ դառնում։ Նրանց, շարքից հանելով, մեռցնում էին։*

Եվ ահա այդ ժամանակ Հորս ևս ամիլե Թաբուր կտանեն՝ աշխատցնելու մյուս Հայերու հետ։ Ձեռքի կառք մը կուտան՝ մի անիվով. ուրիշները հող պիտի լցնեին, ինքն ալ պիտի տաներ Թափեր։ Այնքան դաժանությամբ էին աշխատեցնում, պատմում էր Հայրս, որ հալից ընկնում էին։ Մի օր ալ նա այդ կարգով շուտ-շուտ չկրցել է աշխատել, և վերակացուն ըսեր է՝ Թող կառքը։ Եվ ձեռքը տվել է քլունգը, բայց արդեն ձեռքերը ուռել էին։ Աշխատելու ժամանակ վերակացուն նկատել է, որ ուրիշներուն շինածները հայրս փշացնում է, այս անգամ ավելի կբարկանա և ձեռքը կուտա մի բահ։ Հայրս շատ կնեղվի, բայց ի՞նչ կարող էր ընել։ Մի օր ալ, այդպես բահով հողը մի կողմից մյուս կողմը Թափելու ժամանակ, ստուգման կուգա ճանապարհաշինության ինժեներ հարյուրապետը։ Հայրս բահով հողը նետելու ժամանակ, հողը հարյուրապետին վրա կԹափի։ Սաստիկ բարկացած՝ նա Հորս վրա կուգա՝ մտրակով խփելու, Հայրս անմիջապես նրա Թևը բռնում է, դեռ ինքը չխփած, ասում, որ ինքը դերձակ է, որ արհեստավոր մարդ է, այսպիսի գործերից գաղափար չունի և նույնպես զինվորականներուն, ծովայիններուն հագուստ գիտե կարել։

Հարյուրապետը, լսելով այդ բոլորը, անմիջապես միտքը փոխում է, մտրակը իջեցնում է ու ասում.— Թո՛ղ այդ բահը և արի՛ ինձ հետ։

Բոլոր աշխատողները զարմանում են Հորս հանդգնության վրա և կարծում, որ Հայրս պիտի ծանր պատժվի, բայց պատահում է անսպասելին։ Հորս տանելով պահեստի պես մի տեղ՝ դուրս է բերում մի Թոփ կտոր և ասում.— Կրնա՞ս ինձի մի լավ կոստյում կարել։ Ան երևի, միևնույն ատեն ուզում էր ստուգել, Թե արդյո՞ք Հորս ըրածը խորամանկություն չէ՞, որ ԹեԹև գործի անցնեին իրեն։ Հայրս ուրախանում է, որ ամիլե Թաբուրից ազատվեց, ասում է.— Ամենայն սիրով, բե՛յ իմ, բայց ինչո՞վ պիտի ձևեմ, կարեմ. գործիք է պետք։

— Այդ բոլորը կլինի,— կըսե, Հորս կտանի պահեստին ներսի կողմը։

Ի՞նչ տեսնե՝ կարի մեքենաներ, այն էլ տեսա՜կ-տեսա՜կ, և ամե՜ն ինչ հայոց լքյալ գույքերից։ Հորս կըսե.— Ընտրի՛ր քեզի մի հարմար տեղ և աշխատի՛ր։

Հայրս մի տեղ կդասավորվի և կկարե, կհագցընե հարյուրապետին ու հետո կհասկնա, որ նա է եղել հայոց ամիլե Թաբուրի լիազոր ղեկավարը։

Հայրս այլևս սկսում է դերձակությամբ զբաղվիլ և ամբողջ պատերազմի շրջանին զինվորականներու համար հագուստներ կկարե։ Ինչ խոսք, վարձք չի ստանում, բայց դրամական նվերներ կուտան եղեր։

Հայրս պատմում է, որ մի գերմանացի օդանավորդ կար, անունը՝ Մանիկ։ Նա ամեն անգամ օդ բարձրանալիս անպայման մի անգլիական կամ ֆրանսիական օդանավ վար կառնե եղեր ու վար իջնելուց հետո, դրամական մեծ նվեր կստանա եղեր։ Ամեն անգամ այդ նվերը առնելուն պես, կուգա եղեր Հորս մոտ՝ կոստյում կարվելու և լավ դրամ կտա եղեր։ Հայրս ասում էր, երբ արդեն Գերմանիան պարտվելու մոտ էր, եկավ ինձ մոտ Մանիկը և ըսավ.— Գերման կապո՜ւտ (կապիտուլացիա)։ Արդեն հաղԹելու ոչ մի հույս չէր մնացած Թուրք զինվորի համար. սոված ու հյուծված բանակը սկսում է քայքայվել, ու զինվորները խումբ առ խումբ փախչում են։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին սաստիկ տուժած, ամեն ինչ կորցրած, ողջ մնացած հայերը, շշմած ու մոլորված, ցրվեցին աշխարհով մեկ։

Տեր ու տիրական չունենալով, իրենց կորցրածից, կողոպտվածից ո՛չ մի հատուցում չստանալով Թուրք ջարդարար, կողոպտիչ կառավարությունից, ի՞նչ պետք է ընեին, ինչո՞վ պետք է ապրեին այդ տուժյալ մարդիկ, և ո՛չ ոք չհոգաց նրանց մասին։ Բայց հայ ժողովուրդը չհուսահատվեց և սկսավ իր գլխուն ճարը նայել։

Առաջին համաշխարհային պատերազմը վերջանալու վրա էր, և ողջ մնացած հայերը ցրված էին տարբեր երկրներ։ Այդ մարդիկ ինչպե՞ս պիտի ապրեին, ինչպե՞ս պիտի իրենց գոյությունը պահպանեին, եԹե անոնցմե շատերը արհեստավորներ չըլլային։ 1915 Թ. աքսորի ժամանակ մեր հարազատներից հորեղբորս, մորեղբորս ընտանիքները մեր քարավանից բաժանեցին, նրանց քշեցին դեպի Սիրիա՝ Դամասկոսի մոտերքը։ Այդ ժամանակ Թուրքերն ու գերմանացիները կարիք ունեին արհեստավոր մարդկանց։ Մի նոր հրաման կուգա, Թե այդ քարավանում եղած արհեստավոր մարդիկ իրենց ընտանիքներով ջոկվեն ու բերվեն Շամ՝ Սուրիո մայրաքաղաքը։ Այդ արհեստավորներն իրենց ընտանիքներով ողջ մնացին։ Իսկ արհեստավոր չեղողներին քշեցին դեպի Ռաքքա և այնտեղից էլ ուրիշ քարավաններով տարան մինչև Դեր Զորի անապատները։ Այնպես որ, արհեստ գիտենալը փրկեց այդ մարդկանց։

Հնուց մարդիկ արհեստի ու արհեստավորի մասին ասել են. «Արհեստը ոսկե ապարանջան է մարդու բազկին», կամ՝ «Արհեստավորը երբեք սոված չի մնար. եԹե մինչև կեսօր հաց չճարե, կեսօրեն վերջ՝ անպայմա՛ն կճարե»։ Ավազակ մը արհեստավորի մը կողոպտելեն հետո, նրան ազատ կարձակե։ Մարդը շնորհակալություն կհայտնե ավազակին, որ միայն իր դրամները վերցրեց, որովհետև իր Թևին ունի ոսկի ապարանջան։ Ավազակը կզարմանա, Թե ինչպե՞ս է, որ նա ոսկի ապարանջան ունի իր Թևին, և ինքը չտեսավ։ Մարդը կըսե, որ իր արհեստն է իր Թևին և դա երբե՛ք չի՛ գողացվիր։

Եվ այսպես մի քանի ժամվա մեջ Հորս ազա-

տեցին ամիլե Թաբուրից (աշխատանքային գումարտակից), ու մենք հազիվ փախանք Թուրք խուժաններից։ Այնտեղ մնացինք որոշ ժամանակ։ Էլ ի՞նչ դպրոց, ի՞նչ բան, ով որ մի արհեստ ուներ՝ աշխատում էր, ով որ արհեստ չուներ՝ պարապսարապ ման էր գալիս, մինչև որ հունական նավերը եկան, մեզ տարան հունական Քեֆալոնիա կղզին։ Այնտեղ նույնպես հայ որբեր ու որբուհիներ բերին։ 1922 թ., սեպտեմբեր ամիս։ Ես արդեն բավական ընտելացել էի կարելու մեջ։ Հայրս խանութ մը բացավ, ես ալ հետը սկսա աշխատել, որ գոյությոնննիս պահենք։ Հույն պետությունը ֆիզիկական բնաջնջումից ազատեց մեզի։ Անոնք որ արհեստ ունեին՝ աշխատեցին, իսկ չունեցողները շատ տառապեցին, ինչ հետերնին բերել էին՝ ծախեցին ու կերան և, ի վերջո, հյուծվեցին ու մահացան, որովհետև այդ կղզում ոչ մի միջոց չկար, որ արհեստ չունեցողները աշխատանք մը ճարեին. նույնիսկ տեղացի ժողովուրդը շատ աղքատ էր։ Այս կղզին մոտիկ է Իտալիային, մանավանդ Սիցիլիային, ու միշտ երկրաշարժներն անպակաս էին. տարիներ հետո մենք իմացանք, որ մի ուժեղ երկրաշարժ մեծ վնաս է հասցրել կղզուն։

1922 թվին, նախ՝ հայրս գնաց Եգիպտոս։ Վերջապես, շատ ամիսներ հետո, հայրս երկու ոսկի ուղարկեց՝ մորս անունով, մուտքի հրավերով։ Այդ ժամանակ ոչ մի տերություն անցագիր չէր տալիս հայերուս։ Մեր ազգին համար հանձն առավ Տեր Նանսենը, և մենք նանսենյան լեսե-փասեյով անցանք Եգիպտոս, 1924 թ.։ Հայրս ինձի ընկեր բրավ ինձնից վարպետ մեկու մը հետ, որովհետև խանութը մերն էր։ Ու ես գրեթե մեկ տարի, առանց հորս օգնության, ընտանիքիս՝ մորս, հորս, եղբորս ապրուստը հոգացի, գրեթե անչափահաս տարիքիս. նյութապես բոլոր հայերն ալ տուժել էին եղեռնեն և Իզմիրի աղետեն։

Կնոջս՝ Շաքեի ոսկերիչ հայրը՝ Քերոբե Աղաչրաքյանը, Պոլսում մեծ ծառայություններ է բրած Մեծ եղեռնեն որբացած հայ որբերին ու որբանոցներին։ Չնայած ինքն ալ ուներ խնամքի կարոտ երեք աղջիկներ՝ Սիրարփին, Շաքեն և Ադրինեն, բայց իր շահածի մեծ մասը՝ ուտելիք, հագուստներ և շատ ուրիշ բաներ, կառնե կտանե եղեր իր «զավակներուն», որոնց այնքան նվիրված էր, որ նույնիսկ շատերուն իրար հետ ամուսնացուցած, տունտեղ բրած է՝ օժիտով, ամեն ինչով։ Եվ նրա երախտիքը այնքան բարձր են գնահատած, որ նույնիսկ «Որբերու հայր» տիտղոսին ու ոսկե մեդալի են արժանացուցած։

Իսկ կնոջս քրոջ՝ Սիրարփիին ամուսինը՝ Գառնիկ Սվազլյանը, տասնութ տարեկանին Իզմիրի աղետեն հազիվ փախած, ծովը նետված է և լողալով հասած հունական նավու մը, որը իրեն տարած է նախ՝ Հունաստան, հետո՝ Եգիպտոս։ Ան դեռ 30-ական թվերեն շատ հոդվածներ կգրեր թերթերուն մեջ, որ տարբեր երկրներու մեջ ցիր ու ցան եղած հայերը ներշնչվին ու գան հավաքվին Մայր Հայրենիքում։ Կհիշեմ անոր գրած «Ներգաղթը» պիեսը ի՜նչ խանդավառությամբ բեմադրվեց Ալեքսանդրիայում, Կահիրեում և ուրիշ տեղերում և հասույթը հատկացվեց ներգաղթի ֆոնդին ու Հայաստանի մեջ բնակարաններ կառուցելու նպատակին...։

Իրականության մեջ ալ աներևակայելի՜ ոգևորություն էր ներգաղթի նախօրեին. կհիշեմ, մարդիկ ոսկիներ էին տալիս, որ իրենց թիվը շուտ ելլա, որ շուտ գան Հայաստան...։

Եգիպտոսեն մեզի հետ շատ հայտնի ընտանիքներ եկան Հայաստան. ինչպես օրինակ՝ «Արև» թերթի խմբագիր Հակոբ Արամյանը, երգչուհիներ՝ Գոհար Գասպարյանն ու Արմինե Թյությունչյանը՝ իր ամուսին, հոգեբան Հովսեփ Թյությունչյանի հետ, երգիչ Միհրան Երկաթը, անոր բանաստեղծուհի մայրը՝ Պայծառ Երկաթը, քույրը՝ արվեստագետ Մարի Երկաթը, Վանի հերոսամարտի ղեկավար Արմենակ Եկարյանի տղան ու աղջիկը, պատմագիր Սմբատ Բյուրատի տղան, բժիշկ-մտավորականներ Գարեգին Ամատյանը, Շամլյանը, Զավեն Դոլաբչյանը, գրող Պերճ Զեյթունցյանը, քանդակագործ Արտո Չաքմաքչյանը, նկարիչներ Հակոբ Հակոբյանը, Աիդա Բոյաջյանը, լուսանկարիչ՝ Անդրանիկ Քոչարը, երաժշտագետ Նիկողոս Թահմիզյանը, Կարո Զալիկյանը, պատմաբաններ՝ Հակոբ Նալբանդյանը, Առաքել Պատրիկը, Արամ Տեր-Ղևոնդյանը և շատ ու շատ ուրիշ հայտնի ընտանիքներ ոչ միայն Եգիպտոսեն, այլև Ֆրանսայեն, Հունաստանեն, Սուրիայեն, Լիբանանեն, Իրաքեն, Բալկանյան երկրներեն, նույնիսկ Ամերիկայեն...։ Աշխարհի բոլոր կողմերեն հայրենադարձները եկան Հայրենիքը շենցնելու. շատերն իրենց հարստությունն ու ֆաբրիկաները բերին, շատերն ալ՝ իրենց ձեռքի և մտքի շնորհքը...



## ՊԱՏՄԱԲԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՈՒՄ

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը և հայկական եղեռնի գաղտնիքները, Երևան, 1990:

**Անդրեասյան Տ.**— Զեյթունի տարագրությունը և Սվեդիո ապստամբությունը, Հալեպ, 1935:

**Անտոնյան Ա.**— Մեծ ոճիրը, Բոստոն, 1921:

**Արամ Ասպետ**— Դրվագներ Հաճընո հերոսամարտեն, Բեյրութ, 1961:

**Արզումանյան Մ.**— Հայաստան. 1914—1917 թթ., Երևան, 1969:

**Գալուստյան Գր.**— Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, Նյու Յորք, 1934:

**Գարեգին Բ. կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո**— Անցյալը անցած չէ (Ուխտայց ի Դեր Զոր), Անթիլիաս, 1986:

**Գուշագճյան Մ.**— Հուշամատյան Մուսա լեռան, Բեյրութ, 1970:

**Թեմիրյան Ա.**— Քեսաբ (1909—1946), Բեյրութ, 1956:

**Թերզյան Ս. Յ.**— Հաճընի ութամսյա դյուցազնամարտը, Բուենոս-Այրես, 1956:

**Թորոսյան Ծ. Թ.**— Կիլիկիայի հայերի ազգային ազատագրական շարժումները 1919—1920 թթ., Երևան, 1987:

**Թումանյան Հովհ.**— Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1959:

**Լազյան Գ.**— Հայաստանը և Հայ Դատը (Վավերագրեր), Կահիրե, 1946:

**Կիրակոսյան Ջ.**— Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1965:

**Համբարյան Ա. Ս.**— Արևմտահայերի 1915 թ. կոտորածները և ինքնապաշտպանական մարտերը, Երևան, 1990:

**Հայկազ Ս.**— Ծային-Գարահիսարն ու իր հերոսամարտը, Նյու Յորք, 1957:

Հուշամատյան Մեծ եղեռնի, Բեյրութ, 1965:

**Միզմեճյան Մ.**— Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցությանց (1890—1925), Ֆրեզնո, 1930:

Հիշատակարան նվիրված Վասպուրականի 1890-ի և 1915-ի հերոսամարտերուն, Հյուս. Ամերիկա, 1945:

**Ներսիսյան Մ. Գ.**— Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում (Փաստաթղթերի-նյութերի ժողովածու), Երևան, 1991:

**Ներսիսյան Մ. Գ.**— Մի բանավեճ Զմյուռնիայի 1922 թ. ողբերգության մասին, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1992, № 2—3:

**Պողոսյան Կ. Պ.**— Հաճընի ընդհանուր պատմությունը, Լոս Անջելես, 1942:

**Պողոսյան Հ. Մ.**— Զեյթունի պատմությունը, Երևան, 1969:

**Սահակյան Ա.**— Դյուցազնական Ուրֆան և իր հայորդիները, Բեյրութ, 1955:

**Սահակյան Ռ. Գ.**— Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919—1921 թթ,: Երևան, 1970:

**Սարաֆյան Գ.**— Պատմություն Անթեպի Հայոց, հ. Ա և Բ, Լոս Անջելես, 1953:

**Սվազլյան Վ. Գ.**— Մուսա լեռ, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 16, Երևան, 1984:

**Սվազլյան Վ. Գ.**— Մեծ եղեռնի իրադարձություններն արտացոլող թուրքալեզու երգերը, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր, Հաս. գիտ.», Երևան, 1987, № 5: (Արտատպված՝ «Դրոշակ» պաշտոնաթերթ ՀՅԴ, Աթենք, 1987, թիվ 12):

**Սվազլյան Վ. Գ.**— Մեծ եղեռնը՝ ժողովրդական երգերու ընդմեջեն, «Նավասարդ», Լոս Անջելես, 1990, ապրիլ: (Արտատպված՝ «Զանասեր», Բեյրութ, 1991, ապրիլ, մայիս, հունիս):

**Սվազլյան Վ. Գ.**— Մեծ եղեռնի իրադարձություններն արտացոլող ժողովրդական երգեր, «Նորք», Երևան, 1990, № 12:

**Սվազլյան Վ. Գ.**— Ժողովրդագիտական դիտարկումներ ամերիկահայ համայնքի կյանքից, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր Հաս. գիտ.», Երևան, 1991, № 4:

**Սվազլյան Վ. Գ.**— Սասունից մինչև Արցախ, «Հանչակ Հայաստանի», Երևան, 1994, հունիս 4: (Արտատպված՝ «Լուսաբաց», Մոնրեալ, 1994, թիվ 66):

**Սվազլյան Վ. Գ.**— Կիլիկիա. արևմտահայոց բանավոր ավանդությունը, Երևան, 1994:

Տեր-Զոր, Փարիզ, 1955:

**Քելեշյան Միսաք**— Սիս-Մատյան, Բեյրութ, 1949:

A Crime of Silence. The Armenian Genocide, Cambridge, 1985.

**Pinon R.**— La suppression des arméniens. Méthode allemande-Travail turc. Paris, 1916.

## ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա.— Այնթապ
Ադ.— Ադանա
Անգլ.— Անգլերեն
Արաբ.— Արաբերեն
Բ.— Բեյլան
Բա.— Բալու
Դ.— Դյորտյոլ
Ջ.— Ջեյթուն
Խ.— Խարբերդ
Կ.— Կոնիա
Հ.— Հաճըն
Մ.— Մարաշ
Մ. լ.— Մուսա լեռ
Պ.— Կ. Պոլիս
Ռուս.— Ռուսերեն
Ս.— Սիս
Տ.— Տարսոն
Տգ.— Տիգրանակերտ
Ք.— Քեսաբ
Ֆ.— Ֆընդըջագ
Ֆր.— Ֆրանսերեն

## ԲԱՌԱՐԱՆ

Աբա[1]— *լայն թիկնոց, վերարկու*
Աբլա — *հորաքույր*
Աբրշում, աբրեշում — *մետաքս*
Աբուշ — *ափ, բուռ*
Ագար — *եթե*
Ադա — *կղզի*
Ազիզ— *1. ազնիվ, 2. հարազատ*
Աթ — *ձի*
Աթալէթ — *արդարություն*
Աթէշ — *կրակ*
Ալամ — *1. ամբոխ, 2. մարդկություն*
Ալայ — *ամբողջ*
Ալէֆ — *բոց*
Ալթուն — *ոսկի*
Ախպապ — *ընկեր*
Ախր — *վերջ, վախճան*
Ամմա, ըմմա — *բայց, սակայն*
Ամմի, էմմի — *հորեղբայր*
Ամմի օղլի, էմմի օղլի — *հորեղբորորդի*
Ամր, էմիր — *հրաման*
Այ — *1. լուսին, 2. ամիս*
Այիբ — *ամոթ*
Այիէվ (Հ.) — *արև*
Այրըլմըշ ըլլալ— *բաժանվել*
Անա — *մայր*
Անջագ, անջախ — *հազիվ*
Աշչի — *խոհարար*
Աշք — *սեր, զգացմունք*
Աջաբ — *միթե*
Աջէլէ — *արտորանք, հապճեպ*
Աջի — *դառը, լեղի, կծու*
Ասկյար — *թուրքական զինվոր*
Ավա — *կրկին*
Ավարա— *պարապ-սարապ*
Ավրադ — *կին*
Արաբա — *սայլ, կառք*
Արզահալ — *դատավճիռ*
Աֆէրիմ — *կեցցես, ապրես*
Աֆըրդ — *ներում*

Բադէմ, բադամ — *նուշ*
Բազը — *երբեմն*
Բաբանիլ (Արաբ.)— *բրդյա ծածկոց*
Բալ — *մեղր*
Բալա, բէլա — *փորձանք*
Բալըխչի — *ձկնորս*
Բալթա — *կացին*
Բալլաս — *կարաս*
Բալկոն (Ֆր.)— *պատշգամբ*
Բալոն (Ֆր.)— *փուչիկ*
Բախալ — *նպարավաճառ*
Բախըր — *պղինձ*
Բախշիշ — *դրամական պարգև*
Բախչա, բաղչա — *այգի*
Բահար — *գարուն*
Բաղըր — *երբ*
Բայըր — *զառիթափ*
Բայղուշ — *բու*
Բայրուխ (Մ. լ.), բայօխ (Ջ.), բայրաղ — *դրոշակ*
Բայօբ (Հ.) — *պարապ*
Բանկա (Ռուս.)— *ապակյա աման*
Բաշլըիլ — *սկսել*
Բաջը — *քույր*
Բառօբ (Հ.) — *պառավ*
Բաս (Անգլ.)— *ավտոբուս*
Բասմա — *չիթ*
Բաստօն — *գավազան*
Բատէխ (Արաբ.)— *սեխ*
Բարընբօբ (Մ.) — *պարոն պապ՝ սկեսրայր*
Բարընմէր (Մ.) — *պարոն մայր՝ սկեսուր*
Բարութ — *վառոդ*
Բեդել — *փրկագին*
Բէգիր — *ջորի*
Բէթար, բէթէր — *վատթար*
Բէլլու (Հ.), բէլլի — *հայտնի*
Բէլքի — *թերևս*
Բէշօյ (Ջ.)— *պաշար*
Բէջէրիքլի — *ճարպիկ*
Բէսլէմէ — *տիրոջ հաշվին ապրող ծառա*
Բէրբէր — *սափրիչ*
Բէքլէմիշ էնիէլ (Հ.) — *սպասել*
Բէքմէզ — *ռուփ, դոշաբ*
Բէքյար — *ամուրի*
Բեքչի, բաքչի — *պահապան*
Բըդիզ (Հ.) — *պզտիկ*
Բըթըն, բüթüն — *ամբողջ, բոլոր*
Բըլըթվիլ (Մ. լ.)— *փաթաթվել*
Բըյըխ — *բեղ*

1 *Բնագրերում հանդիպող և բառարանում ծագումը չնշված բառերը թուրքերենից և կամ թուրքերենի միջոցով այլ լեզուներից փոխառյալ են։*

Բըռընգ (Ք.) — *շուրթ*
Բիլազուգ, բիլէզիգ — *ապարանջան*
Բիլէ — *մինչև իսկ, նույնիսկ*
Բիլիէլ (Հ.) — *պտտվել, գլորվել*
Բին — *հազար*
Բինբաշի — *հազարապետ*
Բիմիշ ըլլալ — *ձանձրանալ*
Բոմբա — *ռումբ*
Բուդ — *ազդր*
Բուզ — *սառույց*
Բուրմա — *ոսկեհյուս ապարանջան*
Բօբ (Մ.) — *հայր*
Բօլուզ (Զ.), բէլուզ (Կ.), բըլուզ (Հ.), բուլուզ (Մ.) — *1. երեխա, 2. տղա զավակ*
Բօկ (Զ.) — *պագ, համբույր*
Բօղազ — *վիզ, կոկորդ*
Բօղչօ (Հ.), բօղչա — *ծրար, կապոց*
Բօյդf (Հ.) — *պարտք*
Բօշ — *պարապ*
Բօչկա (Ռուս.) — *տակառ*
Բօrօզան — *շեփոր*

Գաղրաչ (Զ.), գըդrէչ (Մ. լ.) — *կարիճ*
Գազյաղը — *քարյուղ, նավթ*
Գամօյ (Զ.) — *կամար*
Գայբիդ (Զ.) — *Կարապետ*
Գաշբօ (Հ.) — *գնում է*
Գառավ (Զ.) — *կռիվ*
Գարաժ (Ֆr.) — *մեքենան պահելու տեղ*
Գբըցիլ (Զ.) — *կպցնել, խփել, կրակել*
Գէզմէf — *ման գալ*
Գէբիրմէf — *բերել*
Գէլէչէ ընել — *խոսել*
Գէլին — *հարս*
Գէնէ — *կրկին*
Գէնչ — *երիտասարդ*
Գէրդան — *վիզ, պարանոց*
Գէրդանլըխ — *վզնոց*
Գիբի — *նման*
Գիյազի (Հ.) — *կիրակի*
Գյամի — *նավ*
Գüզüմ — *պղնձե կուժ, սափոր, կարաս*
Գüլաշ — *ըմբշամարտ*
Գüլլա — *գնդակ, փամփուշտ*
Գüնաշ, գüնէշ — *արև*
Գուշգօյ (Հ.) — *կոշկակար*
Գուչ (Բա.) — *1. մազ, վարս, 2. ճյուղ, տերև*
Գուվդօ (Զ.), գուվդա (Մ. լ.) — *մարմին*
Գուրգուդ (Հ.) — *կորկոտ*
Գöզալ — *գեղեցիկ, հրաշալի*
Գöլ — *լիճ*

Դաբան — *ներբան*
Դաբանչա — *ատրճանակ*
Դաբու (Հ.), դաբօ (Զ.), դաֆա — *հեղ, անգամ*
Դալ — *ճյուղ*
Դալալ — *1. մունետիկ, 2. միջնորդ*
Դալլաf — *սափրիչ*
Դալմըշ ընիլ (Զ.) — *ինքնամոռաց տարվել*
Դալու, դէլի — *խենթ*
Դանա — *դեռ*
Դաղ — *լեռ*
Դաղլաr (Բա.), դալղա (Գ.) — *ալիք, հորձանք*
Դամ — *պահ, ակնթարթ, ժամանակ*
Դամաr — *երակ*
Դայախ — *փայտ*

Դայի — *քեռի, մորեղբայր*
Դայմա — *միշտ*
Դասբ — *կաթսա*
Դավշօ (Զ.), դավշա — *նապաստակ*
Դավուլ, դաուլ — *թմբուկ*
Դաrա — *սանր*
Դաrաղաչ — *կախաղան*
Դաrմըդաղին — *ցիր ու ցան*
Դեֆդէr, դաֆբաr — *տետրակ*
Դէդէ — *մեծ հայր, պապ*
Դէմիrճի — *դարբին*
Դէյբօբ (Հ.) — *տեր հայր*
Դէնգ — *մեծ ծանրոց*
Դէնգէ — *պահակ, հսկիչ*
Դէնգսիզ — *անխորհուրդ*
Դէնիզ — *ծով*
Դէսբան — *վիպերգ*
Դէվէ — *ուղտ*
Դէվօմ էնիլ (Զ.) — *շարունակել*
Դէrէ — *ձոր*
Դէrման — *դարման, ճար*
Դըսդիլ (Զ.) — *նստել*
Դիբ — *հատակ*
Դիլան (մ. լ.), դիլաf — *խնդրանք*
Դիլէնմիշ էնիլ — *մուրալ*
Դիլիմ — *շերտ*
Դինէյ (Զ.), դինէrf (Բա.) — *տանիք*
Դիվան բաշի — *դատավոր*
Դիrազ (Մ. լ.), դիrէզ — *սյուն*
Դօլբանդ (Բա.), դüլբէնդ — *նուրբ հյուսվածքից գլխաշոր*
Դուդուկ, դüդüզ — *փողային նվագարան*
Դուզ — *ուղիղ, հարթ*
Դուզախ — *թակարդ*
Դüզան, դüզէն — *կարգուկանոն*
Դուբօմ (Հ.), դուբամ — *փունջ*
Դուլ (Զ.) — *այրի*
Դüլբին, դըլբին — *հեռադիտակ*
Դուշմօն (Զ.), դուշման — *թշնամի*
Դüշüմիշ էնիլ (Զ.) — *մտածել*
Դürգէr, դürգաr — *հյուսն*
Դöզüչ (Զ.), դօյուշ — *կռիվ*
Դօլաբ — *պահարան*
Դօխսան — *իննսուն*
Դօղմուշ ինիլ (Հ.) — *ծնվել*
Դօղօ (Հ.) — *տղա*
Դօնդուրմա — *պաղպաղակ*
Դöշ (Զ.) — *կուրծք*
Դöշագ (Զ.) — *ներքնակ*
Դօսը (Հ.) — *տասը*
Դöվլէթ — *1. հարստություն, ունեցվածք, 2. ընտանիք*

Զաբիթ — *սպա*
Զանաr — *գուցե*
Զայիֆ — *նիհար, նվազ*
Զանաութ (Մ. լ.), զէնանաթ (Գ.) — *արհեստ*
Զէհիr — *թույն*
Զէնգին — *հարուստ*
Զէնջիլ — *1. շղթա, 2. խարիսխ*
Զիբիլ — *աղբ*
Զիօն (Զ.), զիան — *վնաս*
Զուբուն — *արևելյան վերնազգեստ*
Զուլում — *փորձանք, պատիժ*

Էլ — *օտար*
Էլէմօն — *լիմոն, կիտրոն*

էղ (Մ.), յաղ— *յուղ*
էմէգ (Հ.), ամագ— *ջանք, երախտիք*
էյrէթի — *խախուտ*
էնգ — *ամենից*
էնըղըր (Հ.), էնըղար — *այնքան*
էնչվէնէլ (Հ.) — *խոսել*
էշիգ — *շեմ*
էշխիէ (Ձ.) — *հրոսակ*
էrթէսի — *հաջորդ*
էփիէ, էփէի — *բավականաչափ*
էfիգ — *զույգ*
էfմէգ — *հաց*

Ըլայր (Մ. լ.) — *մեջը*
Ըռախի — *օղի*
Ըռանօք (Հ.), ըռանաք — *հանգիստ*
Ըrգօգ (Հ.)— *ապրանք*
Ըrմուադ (Մ. լ.), ըrմադ — *գետ*
Թաալիմ — *վարժանք*
Թաբախ — *ափսե*
Թաբելա — *ցուցանակ*
Թաքիյօք (Ձ.), թաքիյէք — *բնավորություն*
Թազի — *շնիկ, որսաշուն*
Թախդա — *տախտակ*
Թային — *թռչակ*
Թայմօ (Ձ.), թարմա — *որթատունկ*
Թայս (Ձ.), թէrս — *հակառակ*
Թանէ — *հատիկ*
Թանըշ — *ծանոթ*
Թաշմըշ ըլլալ— *հորդել*
Թապտիլ — *ծպտվել*
Թաչ (Ձ.) — *թագ*
Թառլօ (Ձ.), թառլա— *հացահատիկի դաշտ*
Թասլիմ ըլնիլ — *հանձնվել*
Թասվիյ (Հ.), թասվիr — *նկար*
Թավա — *տապակ*
Թավան — *առաստաղ*
Թավլա — *գոմ, փարախ, ախոռ*
Թավլի — *նարդի*
Թաrօֆ (Ձ.), թաrաֆ — *կողմ*
Թաfա, թէf — *միայն*
Թելեյգrեյկա (Ռուս.)— *տաք բաճկոն*
Թէգ — *արագ, շուտ*
Թեզքեն— *ուլունքներով համրիչ*
Թեմբել, թամբալ — *ծույլ*
Թեյարա (Արաբ.)— *օդանավ*
Թենեfե — *թիթեղ*
Թենչիrե — *կաթսա*
Թեrքիե — *դաստիարակություն*
Թեփե — *գագաթ*
Թեփսի — *մատուցարան*
Թեfեr — *անիվ*
Թեfլիֆ — *հրավեր*
Թընդիյ (Ձ.), թինդիr — *թոնիր*
Թrաշել — *սափրել*
Թrէն (Ֆr.)— *գնացք*
Թrնախ — *եղունգ*
Թուքմաf — *բռնել*
Թüւքüւն — *ծխախոտ*
Թüմ — *բոլոր, լրիվ*
Թüւչ— *անագ*
Թուչօյ (Մ. լ.), թուչար — *վաճառական*
Թուrշի — *աղաջրով թթու*
Թüֆէնգ — *հրացան*
Թօզ — *փոշի*
Թօխմախ — *սանդի փայտյա մուրճ*

Թօխօ (Հ.), թօխա — *օղակ*
Թօփ — *1. հրանոթի արկ, 2. խաղալու գնդակ*
Թօփ ընել — *հավաքել*
Թօփուզ — *գուրզ*

Ժակետ (Ֆr.)— *բաճկոն*
Ժում — *մի անգամվա ուտելիք*
Ժօմ (Ձ.) — *ժամ, եկեղեցի*
Իզ — *հետք*
Իզին — *թույլտվություն*
Իք — *շուն*
Իլլէ — *անպայման*
Իլօչ (Ձ.), իլաչ — *գեղ, ճար, դարման*
Իման — *խիղճ*
Իմդադ — *օգնություն*
Իմէյլf, յէմէգ — *ուտելիք*
Իյգօն (Ձ.) — *իրիկուն*
Իյչօ (Ձ.), իrչա — *խնդրանք*
Ինադ — *1. ոխ, քեն, 2. ի հեճուկս*
Ինգիլիզ — *անգլիացի*
Ինքիfամ — *վրեժ*
Ինչվի (Հ.) — *մինչև*
Ինչիr — *թուզ*
Ինսաֆ — *խիղճ*
Իշգօն (Ձ.), իշդան — *ախորժակ*
Իշմար — *նշմար, նշան*
Իսդիfամ — *դիրք, խրամատ*
Իսկալա — *նավահանգիստ*
Իվայդա (Հ.) — *ճիշտ, իրական*
Իrիվգöն (Մ. լ.) — *ընթրիք*
Իփլիգ — *թել, դերձան*
Լագեr (Ռուս.)— *ճամբար*
Լափա— *շիլա*
Լէշ — *1. գեշ, 2. դիակ*
Լընէֆ — *վերմակ*
Լիդիլ (Մ. լ.)— *նետել, խփել*
Լիղընիլ (Մ. լ.)— *1. լեղիանալ, 2. ձանձրանալ*
Լիrա — *ոսկեդրամ*
Լուսվիզ — *փարչ*
Լօխմա — *պատառ*
Լօղօսա — *ծննդկան*

Խաքօյ (Ձ.), խաքաr — *լուր*
Խադիֆէ — *թավիշ*
Խազալ — *չորացած տերև*
Խազեին (Ռուս.)— *տեր*
Խազմա — *քլունգ*
Խազեօ (Ձ.), խազեա — *գանձ*
Խազօ (Ձ.), խազա — *փորձանք*
Խալդինօլ (Հ.) — *սխալվել*
Խալի — *գորգ*
Խալխա — *օղակ*
Խամազել — *մատնել*
Խամշի — *մտրակ*
Խայքան, ղայքան — *հյուսված պարան*
Խային — *դավաճան*
Խաշլըխ— *գրպանի դրամ*
Խաս — *ընտիր*
Խասաք — *հաշիվ*
Խաrչըլըխ — *ծախսելու դրամ*
Խափախ — *կափարիչ*
Խաֆա — *գլուխ*
Խզմաքfյաr (Թ.)— *սպասավոր*
Խէշ (Հ.) -- *մոտ*
Խէr — *լավություն, բարիք*
Խյախ — *հրաշալի*

Խըrխա — *բամբակյա բաճկոն*
Խըrս — *հերս, ջղայնություն*
Խrբաչ — *մտրակ*
Խույ — *բնավորություն*
Խուճղախ, ղուճղախ — *1. բարուր, 2. հրացանի փայտյա մաս*
Խուճչաճ, խոճչաճ — *վարտիք*
Խուշ, ղուշ — *թռչուն*
Խօմ (Հ.) — *նորից, կրկին*
Խօճ (Զ.), խաճ — *իշխան*
Խօշին գալ — *դուր գալ*
Խօջա — *1. ուսուցիչ, 2. հարուստ*
Խօջախաճում — *ուսուցչուհի*
Խօվա — *դույլ*
Խօվուշ — *ընդարձակ տեղ*
Խoroq — *աքլոր*
Խoroqխօս (Կ.) — *աքլորականչ*

Ծä (Զ.) — *ձի*
Ծօկ (Հ.) — *ձագ*

Կազա — *բնակավայր*
Կալյասկա (Ռուս.) — *կառք*
Կասլի (Մ. լ.) — *դափնի*
Կուդօ (Զ.) — *գոտի*
Կուզ կալ (Հ.) — *փնտրել*
Կäւկ (Զ.) — *գոգ, գիրկ*
Կօճօլ (Զ.) — *գնալ*

Հազըյիլ (Հ.), ճազըrիլ — *պատրաստել*
Հալալըխ (Հ.) — *հրաժեշտ*
Հալաչ — *բամբակագիզ*
Հալվույ (Զ.), ճալիվուէյ (Հ.), ճäլիվär (Մ. լ.) — *ալևոր*
Հախէճ գալ — *հաղթել, պատժել*
Համամ, ճամօմ — *բաղնիք*
Համօմ (Զ.), ճամամ — *բաղնիք*
Հայդուկ — *1. հրոսակ, 2. հերոս*
Հայսօբ (Հ.), ճասrաբ — *կարոտ*
Հայօբ (Զ.), ճայաբ — *1. կյանք, 2. բակ*
Հայօմ (Հ.), ճաrամ — *ապօրեն, անարդար*
Հաջի — *մահտեսի, Երուսաղեմ ուխտ գնացած*
Հավուզ — *ավազան*
Հավօ (Հ.), ճավա — *1. օդ, 2. եղանակ, 3. երկինք*
Հաr (Մ. լ.) — *մինչև*
Հաrամի (Աrաբ.) — *ավազակ*
Հաrբ — *կռիվ, պատերազմ*
Հէլլաf — *ուժասպառ*
Հէմէճ — *անմիջապես*
Հէյբէ, ճէյբա — *խուրջին*
Հէյէյ (Հ.) — *հարյուր*
Հէյիլ (Հ.) — *հայել, նայել*
Հէսօբ (Հ.) — *հաշիվ*
Հէտտիլ (Հ.) — *հրել*
Հէrfէշ — *ամեն ոք*
Հէfիմ — *բժիշկ*
Հըզըr — *հզոր*
Հուճօյ (Զ.), ճուճէյ (Հ.), ճուճաr — *շնորհք*
Հուrիէբ — *ազատություն*
Հօլ (Զ.), ճալ — *վիճակ*
Հօյս (Հ.), ճօrս (Զ.) — *հարս*
Հօվըխօսուճ (Հ.) — *հավախոսին, վաղ առավոտյան*
Հöfճամէբ — *պետություն*

Ղաբաճօբ (Հ.), ղաբաճաբ — *հանցանք*
Ղաբաղըլըխ — *դդմենի*
Ղաբուլ էճիէլ (Հ.) — *համաձայն լինել*
Ղադա — *ցավ*
Ղադը — *դատախազ*
Ղադըճ — *տիրուհի*
Ղազաճ — *կաթսա*
Ղազաճչը — *վաստակ, շահ*
Ղազէ (Հ.), ղազա — *փորձանք*
Ղազըխ, ղազօխ — *ցից*
Ղաբrօճ (Հ.), ղաբrաճ — *սև ձյութ, կուպր*
Ղալայիջի — *կլայագործ*
Ղալբ — *կեղծ*
Ղալէմ, ղալամ — *մատիտ, գրիչ*
Ղալըբ, ղալիբ — *կաղապար*
Ղամըշլըխ — *եղեգնուտ*
Ղամօ (Հ.), ղամա — *դաշույն*
Ղայբ ըլճիլ (Բ.) — *կորչել*
Ղայըղ, խայըխ — *մակույկ, նավակ*
Ղայմաղ — *սերուցք*
Ղայrօբ (Զ.), ղէյrաբ — *ջանք*
Ղաճայօբ ըճիէլ (Հ.) — *գոհանալ*
Ղաճօդ (Հ.), ղաճադ — *թև*
Ղասօբ (Հ.), ղասաբ — *մսագործ*
Ղասաբխաճէ — *սպանդանոց*
Ղասաբուrաճ — *լայնեզր սվին*
Ղաrավաշ — *աղախին*
Ղաrաr — *1. սահման, 2. որոշում*
Ղաrըճչա — *մրջյուն*
Ղաrիբ — *պանդուխտ*
Ղաrղա — *ագռավ*
Ղաrշա — *դիմաց*
Ղաrշըլաճմըշ ըճիէլ (Հ.) — *դիմավորել*
Ղափաղ — *կափարիչ*
Ղափմըշ ըճիէլ (Հ.) — *հափշտակել*
Ղաֆէս, (Գ.), ղաֆաս — *վանդակ*
Ղաֆօ (Հ.), ղաֆա — *գլուխ*
Ղէյֆէ (Հ.), ղայֆէ — *սուրճ*
Ղըդըr, ղադաr — *մինչև, չափ*
Ղըբըլըխ — *սով*
Ղըլավուզ — *առաջնորդ*
Ղըյմօբ (Հ.), ղըյմէբ — *հարգ, արժեք*
Ղշլա (Զ.) — *զորանոց*
Ղսմաբ — *բախտ*
Ղուզի — *գառնուկ*
Ղուբի — *արկղ, տուփ*
Ղուբճի — *մետաքսյա կերպաս*
Ղուբուխիլ (Մ. լ.) — *հետապնդել*
Ղուլ — *ծառա*
Ղուլաղ — *ականջ*
Ղում — *ավազ*
Ղումաճդա ըճէլ (Գ.), fօմաճդա ըճէլ — *հրամայել*
Ղույու, ղույի — *փոս, հոր*
Ղուճդուrաջի — *կոշկակար*
Ղուսույ (Հ.), ղուսուr — *հանցանք, սխալ*
Ղովաբլաճմըշ ըճիէլ (Հ.) — *զորանալ*
Ղուrբէբ — *օտար աշխարհ*
Ղուrշուճ — *արճիճ, փամփուշտ*
Ղուrուշ — *մանրադրամ*
Ղօբ (Զ.), ղաբ — *շերտ*
Ղօլբ (Հ.), ղալբ — *կեղծ*
Ղօլբուխ — *անութ*
Ղօյա, զօյա — *իբր*
Ղօճշու, ղօմշու — *դրացի*
Ղօճօխ (Հ.), ղօճախ — *1. պալատ, 2. իշխան, 3. հյուր*

Մադօղ (Հ.), մադաղ — *զոհ*
Մալ — *ապրանք*
Մախօրմ — *խեղճ*
Մաճաճօ (Հ.), մաճաճա — *տիպ, պատրվակ*
Մաղայէօ (Հ.), մաղաrա — *քարայր*

Մա̈յ (Զ.) — *մայր*
Մանաստըռ (Անգլ.) — *կուսանոց*
Մանղաք — *խուրջին*
Մանղիլ, մէնղիլ — *թաշկինակ*
Մանռօք (Զ.) — *մատղաշ*
Մաշա (Մ. լ.) — *1. մացառ, 2. ունելի*
Մաշալլա — *կեցցե*
Մասա — *սեղան*
Մասքյան — *բնակավայր, օթևան*
Մառաբա — *գութանավոր*
Մափուս — *բանտ*
Մեդե, միդե — *ստամոքս*
Մեզառ — *գերեզման*
Մեզառլըխ — *գերեզմանոց*
Մեթալիք — *մետաղադրամ*
Մեթարիս, մաթարիս — *դիրք, խրամատ, պատնեշ*
Մելան — *թանաք*
Մեհենդիզ — *ճարտարապետ*
Մեհլեմ — *սպեղանի, բալասան*
Մեհռամ — *խեղճ*
Մեհու̈ռ — *կնիք*
Մեյդան — *հրապարակ*
Մեշոկ (Ռուս.) — *տոպրակ*
Մէյվօ (Հ.), մէյվա — *պտուղ, միրգ*
Մէնզիլ — *կյանք*
Մէռդիվէն — *սանդուղք*
Մէքթէբ (Հ.), մաքթաբ — *դպրոց*
Մէքթուփ (Հ.), մաքթուփ — *նամակ*
Մըյզօխ (Զ.), մզռախ — *նիզակ*
Միլլօթ (Զ.), միլլէթ — *ազգ, ժողովուրդ*
Մինառէ — *մզկիթի աշտարակ*
Միշմիշ, մշմուշ — *ծիրան*
Մուբիլիա, մօբիլիա — *կահույք*
Մու̈դիռ — *վերակացու*
Մութլախա — *անպայման*
Մու̈լք — *ունեցվածք*
Մուխաննաթ — *նենգ*
Մուհաբէթ — *սեր, համերաշխություն*
Մուհաջիյ (Զ.), մուհաջիռ — *գաղթական*
Մուհդաջ — *ապավեն, հույս*
Մույօզ (Զ.), մույէօզ (Հ.), մուռազ — *իղձ, նպատակ*
Մուշամբա — *1. մոմլաթ, 2. անձրևանոց*
Մուշդարի — *հաճախորդ, գնորդ*
Մուսաֆաթ — *հավասարություն*
Մօդիստռա (Ֆր.) — *դերձակուհի*
Մօթ (Զ.) — *մութ*
Մօխդօյ (Զ.), մխդառ — *գյուղապետ*
Մօհ (Հ.) — *մահ*
Մօղ (Հ.) — *մաղ*
Մօյթ (Հ.) — *մարդ*

Յաբախտի — *բախտի բերմամբ*
Յաբանի — *վայրենի*
Յաբանջօ (Մ. լ.), յաբանջի — *օտար*
Յազմա — *կանացի գլխաշոր*
Յաթախ — *անկողին*
Յալվարմիշ ըլլալ — *աղաչել, աղերսել*
Յախըշըխլը — *տեսքոտ, շքեղ*
Յախօ (Զ.), յախա — *օձիք*
Յայդըմ (Հ.), յառդըմ — *օգնություն*
Յայօ (Զ.), յուռա (Թ.), յառա — *վերք, խոց*
Յայօհ (Հ.), յայան (Մ. լ.) — *հետիոտն*
Յան — *կողմ*
Յանի — *իբր*
Յասդըղ — *բարձ*
Յավռու — *ձագուկ, զավակ*

Յառամազ — *անպետք, անարժան*
Յափռախ — *որթատունկի տերև*
Յափու — *ծեփվածք*
Յաֆթա — *ցուցանակ*
Յէթմիշ — *յոթանասուն*
Յէթում (Հ.), յէթիմ — *որբ*
Յէլ — *քամի*
Յէշիլ — *1. կանաչ գույն, 2. մոլլայի կանաչ փաթթոց*
Յէռլի — *1. տեղացի, 2. ընտանի*
Յէսիռ — *գերի*
Յըղնվիլ — *կուտակվել*
Յուլառ — *սանձ*
Յուխա — *կլոր, բարակ հաց*
Յումռուխ — *բռունցք*
Յուվօ (Հ.), յուվա — *բույն*
Յու̈քլիզ — *պատի մեջ անկողիններ պահելու խորշ*
Յօլ — *ճանապարհ*
Յօլդաշ — *ընկեր*
Յօնջա — *առվույտ*
Յօռղան — *վերմակ*

Նալ — *պայտ*
Նաղդ — *կանխիկ*
Նամազ — *մահմեդական աղոթքի ծես*
Նամուս — *պատիվ*
Նաջօյ (Զ.), նաջառ — *հյուսն*
Նասիբ — *հաջողություն*
Նառգիլէ (Արաբ.) — *ջրով կլկլակ, ծխամորճ*
Նենե — *նան, մեծ մայր*
Նէիսէ — *ինչ որ է*
Նէֆէս (Հ.), նաֆաս — *շունչ*
Նըռս (Անգլ.) — *բուժքույր*
Նիզօմ (Հ.), նիզամ — *կարգուկանոն*
Նիսան — *ապրիլ ամիս*
Նումռօ, նու̈մէռօ — *համար, թիվ*
Նօխլ էնիլ (Հ.) — *պատմել*

Շաբխա — *գլխարկ*
Շամաթօ (Հ.), շամաթա — *աղմուկ*
Շաշըյմիշ էնիէլ (Հ.), շաշըռմիշ ընել — *զարմանալ*
Շավլօյ (Հ.) — *շալվար*
Շառաֆ — *պատիվ*
Շառթ — *պայման*
Շափլօխ (Հ.), շափլախ — *ապտակ*
Շաֆօխ (Զ.), շաֆախ — *արևածագ*
Շեմշիե (Արաբ.) — *հովանոց*
Շէյ (Հ.) — *գիշեր*
Շէյհիյ (Զ.), շէհիռ — *քաղաք*
Շիշգօ — *գեր*

Չաբալամիշ ըլլալ — *չարչարվել, տվայտել*
Չադըռ — *վրան*
Չալել — *նվագել*
Չախկալ — *շնագայլ*
Չախմօխ (Հ.), չախմախ — *կայծքար*
Չաղ, չաղ — *նպատակ*
Չամադան (Ռուս.) — *ճամպրուկ*
Չամուռ — *ցեխ*
Չայշօ (Հ.), չառշու — *շուկա*
Չայօխ (Հ.), չառըխ — *տրեխ*
Չանախ — *թրծված աման*
Չավդօյ (Հ.) — *սև ցորեն, տարեկան*
Չառշաֆ — *սավան*
Չարփըրմիշ ընիլ — *1. խփել, 2. ոլորել*
Չաուշ — *ենթասպա*
Չափալախ — *ապտակ*

Չափուտ — լաթ
Չաfմա — ճոքավոր կոշիկ
Չեթե — թուրք լեռնային հրոսակ
Չեմբեր — գլխաշոր
Չենգե, չենե — ծնոտ
Չեշիդ — տեսակ
Չեfիչ, չաfուչ — մուրճ
Չեfիրգե — մորեխ
Չըլըախ— մերկ
Չըխըն — կապոց, ծրար
Չինգենե — գնչու
Չիֆթէ — զույգ
Չüյ (Զ.) — չոր
Չüնքի — քանի որ
Չուվալ — պարկ
Չուվան, չվան — պարան
Չուfալի — միզաման
Չօբօն (Հ.), չօբան — հովիվ
Չöլ — անապատ, անմարդաբնակ վայր
Չօչուխ — երեխա
Չօրաբ — գուլպա
Չօրբա — արգանակ
Չօփ — 1. շյուղ, 2. աղբ

Պաժարնի կամանդա (Ռուս.) — հրշեջ խումբ
Պալատկա (Ռուս.) — վրան
Պայզօմ (Հ.) — բարեկամ
Պատվիլ (Մ. լ.) — պտտվել
Պատրօն— փամփուշտ
Պարադ (Ռուս.)— շքերթ
Պարախոդ (Ռուս.)— շոգենավ
Պարավոզ (Ռուս.)— շոգեքարշ
Պարտի (Ֆր.)— 1. խումբ, 2. հավաքույթ
Պարտիա (Ռուս.)— կուսակցություն
Պեչատ (Ռուս.)— կնիք
Պեչենի (Ռուս.)— թխվածքաբլիթ
Պըլլըցնիլ (Բ.) — ոլորել
Պրասա (Արաբ.)— սոխազգի բույս
Պոեզ (Ռուս.)— գնացք

Ջագուդ (Հ.) — ճակատ
Ջալլաբ — դահիճ
Ջախդ — ջանք
Ջահար — ճախարակ
Ջահիլ — 1. մատղաշ, 2. երիտասարդ
Ջամբազ — 1. լարախաղաց, 2. ճարպիկ
Ջամէfան — ապակյա ցուցափեղկ
Ջամըզ (Հ.), ջամուզ — գոմեշ
Ջամփօf (Հ.) — ճամփա
Ջան — 1. հոգի, 2. շունչ, 3. անձ
Ջանդազ — մարմին
Ջանդըրմա, ժանդարմա— ոստիկան
Ջապխանօ, ջեբխանե— զինամթերք
Ջառօ (Հ.) — հողե պտուկ, կուժ
Ջասադ — դիակ
Ջավահիր — գոհար
Ջաֆա — նեղություն, չարչարանք
Ջէբ — գրպան
Ջէզա — պատիժ
Ջէհէննէմ— դժոխք
Ջէհիզ — օժիտ
Ջէմի (Հ.), ջամի — մզկիթ
Ջէրախ, ջէրահ — վիրաբույժ
Ջէփէ — ռազմաճակատ
Ջիգյար — թոք, լյարդ
Ջիզմէ — երկարաճիտ կոշիկ

Ջին — չար ոգի
Ջհուդ — հրեա
Ջղարա, սիգարա — ծխախոտի գլանակ
Ջուղօբ (Հ.), ջուղաբ — պատասխան
Ջուվալ — պարկ
Ջօմօրդ (Հ.), ջօմարդ — առատաձեռն

Ռամազան — մահմեդական ամանոր
Ռէհին — գրավ

Սաբաբ, սէբէբ — պատճառ
Սաբադան (Հ.), սաբախդան — առավոտյան
Սաբահադարշը (Հ.) — լուսադեմ
Սաբըր — համբերություն
Սալլամիշ ըլլալ — օրորվել
Սալոմ (Ռուս.) — հարդ
Սալոն (Ֆր.)— դահլիճ
Սախալ — մորուք
Սախդել— վնասել, հաշմել
Սահաբ — տեր
Սահօթ (Զ.), սահաթ— 1. ժամ, պահ, 2. ժամացույց
Սաղանախ — հորդ անձրև
Սաղլօմ (Հ.), սաղլամ — ամուր
Սաղնօլ — առողջանալ
Սաման — հարդ
Սաշախ — ծոպ
Սաբուէն (Հ.), սաբօն — օճառ
Սաչ — 1. բարակ թիթեղ, 2. թավ
Սարը — դեղին
Սէլ — հեղեղ
Սէլամօբ (Հ.), սէլամէբ — ապահով, անվնաս
Սէյբ (Զ.), սէրբ — կոպիտ
Սէյին (Զ.), սէրին — զով
Սէյüդ — ուռենի
Սէյօյ (Հ.), սարայ — պալատ, ապարանք
Սէփէբ — քթոց
Սէfսէն — ութսուն
Սէֆիլ — խեղճ
Սըբմօ (Հ.), սըբմա— դողէրոցք
Սըըմ — առասան, կաշվե բարակ թել
Սըրըխ — երկար, բարակ փայտե ձող
Սըրմա — ոսկեթել
Սիլա — երկիր
Սիլահ — զենք
Սիլլէ — ապտակ
Սինյալ (Ֆր.) — ազդանշան
Սինսիլե — տոհմ
Սինօռ — սահման, եզր
Սյունետ ընել— թլփատել
Սոֆու — մոլեռանդ
Սու — ջուր
Սուզէզ — քամիչ
Սուբուֆ (Արաբ.) — տանիք
Սուչ — հանցանք
Սüրգüն — աքսոր
Սüրմիշ ընիլ (Բ.) —քշել
Սօբդէլ — կողոպտել
Սօլ — ձախ
Սօլուխ — շունչ
Սօղ (Հ.), սաղ — աջ (կողմ)
Սօմօն — փոքր երկարավուն հաց
Սօնգրօ, սօնրա — վերջ

Վազօ (Ֆր.) — ծաղկաման
Վաթան յօլդաշ — հայրենակից
Վալի — նահանգապետ
Վալիզ (Ֆր.)— ճամպրուկ

Վախըտ — ժամանակ
Վասիաթ — ավանդ, կտակ
Վեդրո (Ռուս.) — դույլ
Վեշ (Ռուս.) — բեռ
Վերգի — հարկ, տուրք
Վէյանօ (Հ.) — ավերակ
Վէռէլ (Մ. լ.) — հեղել
Վըլվըլուք (Դ.) — շշնջյուն, ցածրաձայն խոսակցություն
Վիրին (Մ. լ.) — արյուն
Վիյօ (Հ.) — վրա
Վիրա — անընդհատ
Վուրդուն, ֆուրգօն — սայլ, կառք
Վօխ (Հ.) — վախ
Վօղր (Հ.) — վագր

Տավարնի վագօն (Ռուս.) — ապրանքատար վագոն
Տատօյ (Հ.) — դադար, հանգիստ
Տէստի — կուժ, սափոր
Տիօլ (Հ.) — գդալ
Տվարոգ (Ռուս.) — կաթնաշոռ
Տօ̈ծօ̈խք (Ջ.) — դժոխք

Ուբօրնի (Ռուս.) — զուգարան, պետքարան, արտաքնոց
Ուղրամիշնօլ (Հ.) — հանդիպել
Ուղուր — բախտ, հաջողություն
Ուղօրթ (Ջ.), ուղուրթ — ուղիղ, ճիշտ
Ումէդ (Հ.), ումուդ — հույս, ապավեն
Ույմօն (Ջ.), օրման — անտառ

Փաբլիկա (Կ.), ֆաբրիկա (Ֆր.) — գործարան
Փադիշահ — թագավոր
Փարաբէս — գետնախնձոր, կարտոֆիլ
Փարասխուբբն (Հ.) — խառնաշփոթություն
Փալօն (Հ), փալան — համետ
Փախլա, բակլա — լոբազգի բույս
Փաշափօրթ, պասպորտ (Ֆր.) — անձնագիր
Փարա — դրամ
Փենջերե — լուսամուտ
Փէշ (Հ.) — ուս
Փէրդէ — վարագույր
Փէրիշան, փէրուշան — խեղճ, անտուն
Փիդէ — կլոր, բարակ հաց
Փիրէ — լու
Փույցօնք (Ջ.), փօյցօնք (Հ.) — փորձանք
Փուս — մշուշ
Փօթուր — փոթերով լայն շալվար

Քաթիբ — քարտուղար, գրագիր
Քամբանա (Ֆր.) — եկեղեցու զանգակ
Քամիոն (Ֆր.) — բեռնատար մեքենա
Քասաբա (Արաբ.) — ավան
Քարդաշ — եղբայր
Քաֆիա — գլխին փաթաթելու տղամարդու մեծ շալ
Քեզաբ — ազոտաթթու
Քեթեն, քաթան — 1. կտավհատ, 2. կտավ
Քել — ճաղատ
Քելեշ — գեղեցիկ
Քելեփչե — երկաթյա ձեռնակապ
Քեմփ (Անգլ.) — ճամբար
Քենքյուլ — մազափունջ
Քերփիչ — աղյուս
Քէմէյ (Հ.), քամար — գոտի
Քէնար — եզր
Քէնդիյ (Հ.), քէնդիր — կանեփի թելից պարան
Քէնդիր խալխա — օղակաձև պարան արաբական գլխաշորի վրա
Քէշիշ — տերտեր
Քէչէ — թաղիք

Քէսօ (Հ.), քէսա — քսակ
Քըզ, ղըզ — աղջիկ
Քըզքարդաշ — քույր
Քիլիմ — կարպետ
Քիյ (Հ.) — քույր
Քիրա — վարձ
Քիրէչ — կիր
Քյար — օգուտ
Քրավաթ (Ֆր.) — փողկապ
Քո̈ւթո̈ւզ — կոճղ
Քո̈ւլախ — փափախ
Քուլլի (Արաբ.) — ամբողջ, բոլոր
Քուրջ — ցնցոտի
Քո̈ւրք — մուշտակ
Քո̈ւքո̈ւրդ — ծծումբ
Քո̈ւֆ — բորբոս
Քո̈ւֆո̈ւր — հայհոյանք
Քօ̈թո̈ւ — վատ
Քօլա (Ֆր.) — օսլա
Քօմ (Հ.) — վատ
Քօ̈մո̈ւր — ածուխ
Քօ̈յ — գյուղ
Քօ̈շէ — անկյուն
Քօջա, հօջա — 1. ամուսին, 2. տեր, 3. ուսուցիչ
Քօ̈րփէ — մատղաշ, փոքրիկ
Քօրքմազ — վախենալ
Քօ̈փրո̈ւ — կամուրջ
Քօ̈ք — արմատ

Օթօ (Ֆր.) — ինքնաշարժ մեքենա, ավտոմոբիլ
Օլըրդիլ (Խ.) — շրջել
Օլուխ — առու
Օ̈լո̈ւմ — մահ
Օխպ (Հ.) — աղբ
Օղ (Հ.) — աղ
Օղլան, օղուլ — տղա
Օմուզ — ուս
Օ̈մո̈ւր (Հ.), ո̈ւմո̈ւր (Բ.), ումըր (Ք.) — կյանք
Օյծխ (Հ.) — մանգաղ
Օյօ (Հ.), օյա — ասեղնագործություն
Օն — տասը
Օնբաշի — տասնապետ
Օռ ու դույ (Ջ.) — առևտուր
Օսանմիշ ըլլալ — ձանձրանալ
Օրդազ — բադ
Օրթա — մեջտեղ
Օրման — անտառ
Օրս — կոշկակարի ներբանաձև երկաթյա գործիք
Օ̈քսո̈ւզ — որբ
Օֆիս (Ֆր.) — գրասենյակ

Ֆալաք — ճակատագիր
Ֆայդա — օգուտ
Ֆանդ — հնար
Ֆասուլիա — լոբի
Ֆելեք, ֆալաք — բախտ, ճակատագիր
Ֆելլահ (Արաբ.) — գյուղացի, հողագործ
Ֆեներ — լապտեր
Ֆես — կոնաձև կարմիր գլխարկ՝ սև ծոպով
Ֆեսիքա, վէսիքա — 1. կտրոն, 2. անցագիր
Ֆերման — հրաման
Ֆըրսօնդ (Հ.), ֆըրսանդ — առիթ
Ֆիլդիշի — փղոսկր
Ֆիստան — շրջազգեստ
Ֆուլ (Արաբ.) — խաշած բակլայով եփված արաբական ազգային կերակուր
Ֆուռուն — փուռ

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| Նյութի համարը | Վ. Ս. ֆոնդի համարը | Նյութի գրառման վայրը[1] և ծագումը | Գրառման տարեթիվը | Բանասացը | Ծննդյան տարեթիվը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| I. 1. | | | | | |
| 1 (1). | 418 | Նոր Արաբկիր<Արաբկիր | 1989 | Կիկիշյան Սրբուհի | 1909 |
| 2 (2). | 419 | Սարի թաղ<Ադաբազար | 1988 | Թոկատլյան Անիցա | 1908 |
| 3 (3). | 420 | Նոր Զեյթուն<Ադաբազար | 1990 | Երկաթ Մարի | 1910 |
| 4 (4). | 421 | Սարի թաղ<Ադաբազար | 1989 | Բոդուրյան Լուսիկ | 1909 |
| 5 (5). | 422 | Նոր Արեշ<Ադաբազար | 1989 | Կիրակոսյան Մաննիկ | 1929 |
| 6 (6). | 423 | Արարատյան գ.<Հաճըն | 1986 | Քարամյան Երվանդ | 1920 |
| 7 (7). | 424 | Նոր Մալաթիա<Մուսա լեռ | 1984 | Փաշայան Սողոմե | 1903 |
| 8 (8). | 425 | Նոր Մալաթիա<Մուսա լեռ | 1984 | Բաղդիշյան Մարիամ | 1909 |
| 9 (9). | 426 | Նոր Մալաթիա<Մուսա լեռ | 1984 | Բաղդիշյան Մարիամ | 1909 |
| 10 (10). | 427 | Նոր Մալաթիա<Ադանա | 1986 | Նեֆերյան Արուսյակ | 1906 |
| 11 (11). | 428 | Նոր Մալաթիա<Ադանա | 1983 | Մակարյան Սրբուհի | 1903 |
| 12 (12). | 429 | Նոր Զեյթուն<Զեյթուն | 1983 | Ջուլյան Եվա | 1903 |
| 13 (13). | 430 | Այգեստան<Այնթապ | 1983 | Նիդելյան Մարինե | 1925 |
| 14 (14). | 431 | Այգեստան<Բեյլան | 1987 | Փաշայան Հակոբ | 1907 |
| 15 (15). | 432 | Այգեստան<Եդեսիա | 1987 | Տեր-Պետրոսյան Հայկան | 1910 |
| 16 (16). | 433 | Այգեստան<Զեյթուն | 1986 | Սյուլահյան Հայկ | 1907 |
| 17 (17). | 434 | Նոր Զեյթուն<Մարաշ | 1986 | Վարդյան Զաբել | 1902 |
| 18(18). | 435 | Շենգավիթ<Բիթլիս | 1986 | Մելքոնյան Ռեբեկա | 1924 |
| 19 (19). | 436 | Նոր Զեյթուն<Զեյթուն | 1986 | Թոլլյան Կարապետ | 1903 |
| 20 (20). | 437 | Նոր Արեշ<Ադաբազար | 1989 | Կիրակոսյան Մաննիկ | 1929 |
| 21 (21). | 438 | Նոր Արաբկիր<Կեսարիա | 1989 | Երկաթ Պայծառ | 1887 |
| 22 (22). | 439 | Նոր Զեյթուն<Ադաբազար | 1989 | Երկաթ Մարի | 1910 |
| 23 (23). | 440 | Նոր Մարաշ<Բալու | 1989 | Դանիելյան Կիրակոս | 1923 |
| 24 (24). | 441 | Նոր Զեյթուն<Այնթապ | 1989 | Հեքիմյան Գևորգ | 1937 |
| 25 (25). | 442 | Նոր Մալաթիա<Մուսա լեռ | 1989 | Բաղդիշյան Մարիամ | 1909 |
| 26 (26). | 443 | Նոր Բութանիա<Էսքիշեհիր | 1986 | Փաթրյան Սամվել | 1900 |
| I. 2. | | | | | |
| 1 (27). | 444 | Նոր Մալաթիա<Մուսա լեռ | 1984 | Բաղդիշյան Մարիամ | 1909 |
| 2 (28). | 445 | Նոր Զեյթուն<Այնթապ | 1987 | Հեքիմյան Գևորգ | 1937 |
| 3 (29). | 446 | Արմավիր<Մուսա լեռ | 1976 | Ախոյան Կարապետ | 1895 |
| 4 (30). | 447 | Երևան<Ադանա | 1960 | Լուսինյան Օվսաննա | 1891 |
| 5 (31). | 448 | Նոր Զեյթուն<Զեյթուն | 1980 | Թոլլյան Կարապետ | 1903 |
| 6 (32). | 449 | Հրազդան<Կոնիա | 1980 | Գույումջյան Սաթենիկ | 1902 |
| 7 (33). | 450 | Նոր Մալաթիա<Մուսա լեռ | 1984 | Բաղդիշյան Մարիամ | 1909 |
| 8 (34). | 451 | Նոր Արաբկիր<Արաբկիր | 1972 | Վարժապետյան Լուիզ | 1900 |
| 9 (35). | 452 | Վարդաշեն<Էրզրում | 1983 | Տեր-Մկրտչյան Մարիամ | 1908 |
| 10 (36). | 453 | Նոր Մալաթիա<Կեսարիա | 1983 | Միկյան Հայկուհի | 1912 |
| 11 (37). | 454 | Վարդաշեն<Մուսա լեռ | 1956 | Քալաշյան Եղիսաբեթ | 1888 |
| 12 (38). | 455 | Էջմիածին<Մուսա լեռ | 1987 | Դերմիշյան Սառա | 1896 |
| 13 (39). | 456 | Նոր Մալաթիա<Մուսա լեռ | 1987 | Բաղդիշյան Մարիամ | 1909 |
| 14 (40). | 457 | Նոր Մալաթիա<Մուսա լեռ | 1987 | Փաշայան Սողոմե | 1903 |
| 15 (41). | 458 | Նոր Մալաթիա<Մուսա լեռ | 1987 | Անտոնյան Գարուն | 1910 |
| 16 (42). | 459 | Նոր Զեյթուն<Զեյթուն | 1983 | Թոլլյան Կարապետ | 1903 |
| 17 (43). | 460 | Նոր Զեյթուն<Զեյթուն | 1983 | Ջուլյան Եվա | 1903 |
| 18 (44). | 461 | Նոր Զեյթուն<Զեյթուն | 1983 | Ատուրյան Գայանե | 1909 |
| 19 (45). | 462 | Նոր Զեյթուն<Զեյթուն | 1983 | Գալաչյան Սիրանուշ | 1910 |
| 20 (46). | 463 | Նոր Զեյթուն<Մարաշ | 1983 | Վարդյան Մայրանուշ | 1900 |

[1] Նյութերի գրառման վայրերը նշված են ըստ քաղաքների, իսկ Երևանն ու նրա շրջակայքը՝ ըստ հայրենադարձների բնակեցված արվարձանների։

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 21 (47). | 464 | Նոր Զեյթուն<Մարաշ | 1983 | Հալաճյան Մաքրուհի | 1900 |
| 22 (48). | 465 | Նոր Զեյթուն<Մարաշ | 1983 | Վարդյան Զաբել | 1902 |
| 23 (49). | 466 | Նոր Զեյթուն<Մարաշ | 1983 | Ժամկոչյան Մարի | 1904 |
| 24 (50). | 467 | Նոր Զեյթուն<Մարաշ | 1986 | Դանիելյան Նվարդ | 1912 |
| 25 (51). | 468 | Նոր Արաբկիր<Հաճըն | 1976 | Դաքեսյան Խաչեր | 1896 |
| 26 (52). | 469 | Նոր Արաբկիր<Հաճըն | 1976 | Յահնիյան Սարգիս | 1898 |
| 27 (53). | 470 | Նոր Հաճըն<Հաճըն | 1976 | Բալբուչակյան Սրբուհի | 1905 |
| 28 (54). | 471 | Արարատյան գ.<Հաճըն | 1976 | Սաթամյան Նազենի | 1926 |
| 29 (55). | 472 | Էջմիածին<Քեսաբ | 1985 | Աբրահամյան Նազենի | 1900 |
| 30 (56). | 473 | Էջմիածին<Քեսաբ | 1985 | Դեդեյան Տիրուհի | 1903 |
| 31 (57). | 474 | Էջմիածին<Քեսաբ | 1985 | Այանյան Վարսիկ | 1907 |
| 32 (58). | 475 | Էջմիածին<Քեսաբ | 1985 | Գազազյան Վարսիկ | 1910 |
| 33 (59). | 476 | Էջմիածին<Քեսաբ | 1985 | Մուսոյան Գյուլինիա | 1912 |
| 34 (60). | 477 | Էջմիածին<Բեյլան | 1986 | Գյոզալյան Սիրվարդ | 1906 |
| 35 (61). | 478 | Էջմիածին<Բեյլան | 1986 | Գալեմքերյան Լուսածին | 1927 |
| 36 (62). | 479 | Արարատյան գ.<Բեյլան | 1986 | Բահարյան Քլարուհի | 1929 |
| 37 (63). | 480 | Նոր Զեյթուն<Այնթապ | 1986 | Քյուրքչյան Նուրիցա | 1903 |
| 38 (64). | 481 | Նոր Արաբկիր<Այնթապ | 1986 | Ջրչյան Արշալույս | 1905 |
| 39 (65). | 482 | Նոր Կիլիկիա<Այնթապ | 1978 | Կարամանուկյան Կարապետ | 1907 |
| 40 (66). | 483 | Այգեստան<Այնթապ | 1980 | Նիդելյան Մարինե | 1925 |
| 41 (67). | 484 | Նոր Արեշ<Հասան բեյ | 1960 | Հարմանդայան Նուրիցա | 1900 |
| 42 (68). | 485 | սոր Արեշ<Դյորտյոլ | 1982 | Բոյաջյան Մարիամ | 1909 |
| 43 (69). | 486 | Նոր Մարաշ<Դյորտյոլ | 1982 | Խալբուրչյան Մարիամ | 1909 |
| 44 (70). | 487 | Նոր Մարաշ<Եդեսիա | 1985 | Մուրադյան Սրբուհի | 1896 |
| 45 (71). | 488 | Նոր Արաբկիր<Եդեսիա | 1985 | Արլաբուտյան Նվարդ | 1903 |
| 46 (72). | 489 | Նոր Արաբկիր<Եդեսիա | 1985 | Տեր-Պետրոսյան Հայկան | 1910 |
| 47 (73). | 490 | Նոր Արաբկիր<Տարսոն | 1985 | Խրիմյան Ղազարոս | 1911 |
| 48 (74). | 491 | Նոր Կիլիկիա<Տարսոն | 1986 | Քեշիշյան Ալիս | 1920 |
| 49 (75). | 492 | Այգեստան<Սիս | 1986 | Աչապահյան Անահիտ | 1920 |
| 50 (76). | 493 | Նոր Մալաթիա<Ադանա | 1986 | Սինանյան Վիկտորիա | 1900 |
| 51 (77). | 494 | Նոր Մալաթիա<Ադանա | 1986 | Մակարյան Սրբուհի | 1903 |
| 52 (78). | 495 | Նոր Մալաթիա<Ադանա | 1986 | Նեֆերյան Արուսյակ | 1906 |
| 53 (79). | 496 | Նոր Մալաթիա<Ադանա | 1987 | Ջափարյան Երանուհի | 1912 |
| 54 (80). | 497 | Նոր Կիլիկիա<Մերսին | 1987 | Եթենեկյան Սողոմոն | 1900 |
| 55 (81). | 498 | Նոր Կիլիկիա<Մերսին | 1987 | Բաղչինյան Արշալույս | 1927 |
| 56 (82). | 499 | Նոր Խարբերդ<Խարբերդ | 1985 | Թուրուշիկյան Թագուհի | 1905 |
| 57 (83). | 500 | Նոր Մարաշ<Խարբերդ | 1985 | Մուրադյան Թրվանդա | 1905 |
| 58 (84). | 501 | Սարի թաղ<Խարբերդ | 1986 | Անտոնյան Եղսա | 1910 |
| 59 (85). | 502 | Նոր Մալաթիա<Մալաթիա | 1986 | Թաշճյան Արշալույս | 1908 |
| 60 (86). | 503 | Նոր Մալաթիա<Կեսարիա | 1986 | Միկյան Հայկուհի | 1912 |
| 61 (87). | 504 | Շենգավիթ<Սեբաստիա | 1958 | Տաղավարյան Վերժին | 1898 |
| 62 (88). | 505 | Նոր Արեշ<Սեբաստիա | 1986 | Խանզադյան Մելինե | 1908 |
| 63 (89). | 506 | Նոր Արեշ<Օրդու | 1986 | Հաճաոյան Համիկ | 1908 |
| 64 (90). | 507 | Շենգավիթ<Նիղդե | 1986 | Տեր-Եղիշյան Թագուհի | 1926 |
| 65 (91). | 508 | Հրազդան<Կոնիա | 1986 | Գույումչյան Սաթենիկ | 1902 |
| 66 (92). | 509 | Այգեստան<Աֆիոն Գարահիսար | 1986 | Բերբերյան Սմբուլ | 1909 |
| 67 (93). | 510 | Նոր Բութանիա<Նիկոմիդիա | 1986 | Աբիկյան Օվսաննա | 1893 |
| 68 (94). | 511 | Նոր Բութանիա<Նիկոմիդիա | 1986 | Աբիկյան Ազգանուշ | 1898 |
| 69 (95). | 512 | Նոր Բութանիա<Նիկոմիդիա | 1986 | Սիլյան Բարուհի | 1900 |
| 70 (96). | 513 | Նոր Բութանիա<Նիկոմիդիա | 1986 | Ջորջյան Օվսաննա | 1893 |
| 71 (97). | 514 | Նոր Բութանիա<Նիկոմիդիա | 1986 | Ջերեջյան Բարուհի | 1902 |
| 72 (98). | 515 | Սարի թաղ<Ադաբազար | 1982 | Բոդուրյան Լուսիկ | 1909 |
| 73 (99). | 516 | Երևան<Ադաբազար | 1982 | Ազարյան Հայկուհի | 1909 |
| 74 (100). | 517 | Նոր Արեշ<Ադաբազար | 1982 | Կիրակոսյան Մաննիկ | 1929 |
| 75 (101). | 518 | Նոր Բութանիա<Բուրսա | 1982 | Քյոմիրչյան Ծաղիկ | 1905 |
| 76 (102). | 519 | Նոր Բութանիա<Բուրսա | 1982 | Մուսուլյան Վարվառա | 1910 |
| 77 (103). | 520 | Երևան<Բանդըրմա | 1982 | Վերանյան Բեատրիս | 1924 |
| 78 (104). | 521 | Շենգավիթ<Կ. Պոլիս | 1980 | Զուլալյան Շաքե | 1914 |
| 79 (105). | 522 | Նոր Զեյթուն<Զեյթուն | 1980 | Թոլլյան Կարապետ | 1903 |
| 80 (106). | 523 | Նոր Զեյթուն<Զեյթուն | 1980 | Գալաչյան Սիրանուշ | 1910 |
| 81 (107). | 524 | Նոր Արեշ<Ադանա | 1986 | Սինանյան Վիկտորիա | 1900 |
| 82 (108). | 525 | Նոր Զեյթուն<Մարաշ | 1986 | Վարդյան Զաբել | 1900 |
| 83 (109). | 526 | Նոր Արաբկիր<Արաբկիր | 1986 | Կիկիչյան Սրբուհի | 1909 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 84 (110). | 527 | Նոր Արաբկիր<Այնթապ | 1987 | Ջրչյան Արշալույս | 1905 |
| 85 (111). | 528 | Նոր Մարաշ<Բալու | 1985 | Դանիելյան Կիրակոս | 1923 |
| 86 (112). | 529 | Նոր Արաբկիր<Տիգրանակերտ | 1973 | Շապշապյան Վահան | 1889 |
| 87 (113). | 530 | Նոր Արաբկիր<Ֆընդըջագ | 1987 | Ալբոյաչյան Հարություն | 1904 |
| 88 (114). | 531 | Նոր Զեյթուն<Մարաշ | 1987 | Վարդյան Մայրանուշ | 1900 |
| 89 (115). | 532 | Նոր Մալաթիա<Քեսաբ | 1987 | Աբրահամյան Նազենի | 1900 |
| 90 (116). | 533 | Նոր Արաբկիր<Եդեսիա | 1987 | Աբլաբուտյան Խորեն | 1893 |
| 91 (117). | 534 | Նոր Մալաթիա<Մուսա լեռ | 1987 | Բաղդիշյան Մարիամ | 1909 |
| 92 (118). | 535 | Նոր Կիլիկիա<Մերսին | 1986 | Եթենեկյան Սողոմոն | 1900 |
| 93 (119). | 536 | Նոր Կիլիկիա<Ադանա | 1986 | Կիրակոսյան Սարգիս | 1903 |
| 94 (120). | 537 | Նոր Մալաթիա<Կեսարիա | 1986 | Միկյան Հայկուհի | 1912 |
| 95 (121). | 538 | Էջմիածին<Մուսա լեռ | 1987 | Դերմիշյան Սառա | 1896 |
| 96 (122). | 539 | Շենգավիթ<Մարաշ | 1975 | Մայիկյան Վերգինե | 1898 |
| 97 (123). | 540 | Նոր Հաճըն<Հաճըն | 1976 | Դաքեսյան Խաչեր | 1896 |
| 98 (124). | 541 | Նոր Մալաթիա<Ադանա | 1986 | Թայմազյան Հովհաննես | 1886 |
| 99 (125). | 542 | Նոր Արաբկիր<Արաբկիր | 1982 | Կիկիշյան Սրբուհի | 1909 |
| 100 (126). | 543 | Նոր Մալաթիա<Մուսա լեռ | 1984 | Բաղդիշյան Մարիամ | 1909 |
| 101 (127). | 544 | Նոր Բութանիա<Նիկոմիդիա | 1982 | Հայրապետյան Մանիկ | 1915 |
| 102 (128). | 545 | Այգեստան<Աֆիոն-Գարահիսար | 1982 | Բերբերյան Սմբուլ | 1909 |
| 103 (129). | 546 | Այգեստան<Աֆիոն-Գարահիսար | 1982 | Բերբերյան Սմբուլ | 1909 |
| 104 (130). | 547 | Նոր Զեյթուն<Ադաբազար | 1982 | Երկաթ Մարի | 1910 |
| I. 3. | | | | | |
| 1 (131). | 548 | Նոր Բութանիա<Նիկոմիդիա | 1982 | Արիկյան Օվսաննա | 1893 |
| 2 (132). | 549 | Նոր Մալաթիա<Մալաթիա | 1986 | Թաշճյան Արշալույս | 1908 |
| 3 (133). | 550 | Սարի թաղ<Ադաբազար | 1985 | Թոկատլյան Անիցա | 1908 |
| 4 (134). | 551 | Սարի թաղ<Բուրսա | 1985 | Բանտիկյան Մարիամ | 1922 |
| 5 (135). | 552 | Սարի թաղ<Ադաբազար | 1985 | Թոկատլյան Անիցա | 1908 |
| 6 (136). | 553 | Սարի թաղ<Ադաբազար | 1985 | Թոկատլյան Անիցա | 1908 |
| 7 (137). | 554 | Նոր Արեշ<Ադաբազար | 1989 | Կիրակոսյան Մանիկ | 1929 |
| 8 (138). | 555 | Նոր Արեշ<Ռոդոսթո | 1985 | Գյուրջյան Հակոբ | 1925 |
| 9 (139). | 556 | Աթենք<Կեսարիա | 1984 | Միկյան Աննուկ | 1924 |
| 10 (140). | 557 | Նոր Արաբկիր<Արաբկիր | 1982 | Կիկիշյան Սրբուհի | 1909 |
| 11 (141). | 558 | Նոր Մարաշ<Մարաշ | 1984 | Հալապյան Թագուհի | 1922 |
| 12 (142). | 559 | Նոր Մալաթիա<Մուսա լեռ | 1984 | Բաղդիշյան Մարիամ | 1909 |
| 13 (143). | 560 | Նոր Զեյթուն<Զեյթուն | 1984 | Ջուլյան Եվա | 1903 |
| 14 (144). | 561 | Նոր Մալաթիա<Մուսա լեռ | 1984 | Բաղդիշյան Մարիամ | 1909 |
| 15 (145). | 562 | Աթենք<Ռոդոսթո | 1984 | Իզմիրլյան Մարի | 1903 |
| 16 (146). | 563 | Աթենք<Կեսարիա | 1984 | Միկյան Աննուկ | 1924 |
| 17 (147). | 564 | Շենգավիթ<Սեբաստիա | 1958 | Տաղավարյան Վերժին | 1898 |
| 18 (148). | 565 | Շենգավիթ<Սեբաստիա | 1958 | Տաղավարյան Վերժին | 1898 |
| 19 (149). | 566 | Նոր Մալաթիա<Մուսա լեռ | 1984 | Բաղդիշյան Մարիամ | 1909 |
| 20 (150). | 567 | Աթենք<Ռոդոսթո | 1984 | Իզմիրլյան Մարի | 1903 |
| 21 (151). | 568 | Աթենք<Կեսարիա | 1984 | Միկյան Աննուկ | 1924 |
| 22 (152). | 569 | Աթենք<Կ. Պոլիս | 1984 | Ալաճաճյան Ադրինե | 1923 |
| 23 (153). | 570 | Այգեստան<Բիլեջիկ | 1986 | Ջինանյան Հրաչուհի | 1919 |
| 24 (154). | 571 | Նոր Արաբկիր<Արաբկիր | 1972 | Վարժապետյան Նազարեթ | 1892 |
| 25 (155). | 572 | Նոր Արաբկիր<Արաբկիր | 1972 | Վարժապետյան Նազարեթ | 1892 |
| 26 (156). | 573 | Նոր Արաբկիր<Արաբկիր | 1972 | Վարժապետյան Լուիզ | 1900 |
| 27 (157). | 574 | Աթենք<Կ. Պոլիս | 1984 | Ալաճաճյան Ադրինե | 1923 |
| 28 (158). | 575 | Աթենք<Ռոդոսթո | 1984 | Գալֆայան Նվարդ | 1896 |
| 29 (159). | 576 | Աթենք<Ռոդոսթո | 1984 | Գալֆայան Հայկանուշ | 1898 |
| 30 (160). | 577 | Երևան<Բիլեջիկ | 1979 | Տեր-Մերկերյան Սիրվարդ | 1909 |
| 31 (161). | 578 | Այգեստան<Սիս | 1985 | Աջապահյան Անահիտ | 1920 |
| 32 (162). | 579 | Նոր Կիլիկիա<Տարսոն | 1986 | Քեշիշյան Ալիս | 1920 |
| 33 (163). | 580 | Հրազդան<Կոնիա | 1986 | Գույումջյան Սաթենիկ | 1902 |
| 34 (164). | 581 | Այգեստան<Աֆիոն-Գարահիսար | 1986 | Բերբերյան Սմբուլ | 1909 |
| 35 (165). | 582 | Այգեստան<Աֆիոն-Գարահիսար | 1986 | Բերբերյան Սմբուլ | 1909 |
| 36 (166). | 583 | Այգեստան<Աֆիոն-Գարահիսար | 1986 | Բերբերյան Սմբուլ | 1909 |
| 37 (167). | 584 | Նոր Բութանիա<Բուրսա | 1985 | Հաջի-Մինասյան Սառա | 1908 |
| 38 (168). | 585 | Նոր Արաբկիր<Տարսոն | 1985 | Խրիմյան Ղազարոս | 1911 |
| 39 (169). | 586 | Նոր Կիլիկիա<Տարսոն | 1985 | Քեշիշյան Ալիս | 1920 |
| 40 (170). | 587 | Նոր Բութանիա<Նիկոմիդիա | 1985 | Ջորեքյան Բարուհի | 1902 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 41 (171). | 588 | Հրազդան<Կոնիա | 1985 | Գույումջյան Սաթենիկ | 1902 |
| 42 (172). | 589 | Հրազդան<Կոնիա | 1985 | Գույումջյան Սաթենիկ | 1902 |
| 43 (173). | 590 | Սարի Թաղ<Ադաբազար | 1985 | Բողուրյան Լուսիկ | 1909 |
| 44 (174). | 591 | Նոր Արեշ<Կեսարիա | 1986 | Սվաճյան Արսեն | 1901 |
| 45 (175). | 592 | Նոր Արաբկիր<Ֆընդըջագ | 1986 | Ալբոյաջյան Հարություն | 1904 |
| 46 (176). | 593 | Սարի Թաղ<Ադաբազար | 1985 | Թոկատլյան Անիցա | 1908 |
| 47 (177). | 594 | Հրազդան<Կոնիա | 1985 | Գույումջյան Սաթենիկ | 1902 |
| 48 (178). | 595 | Նոր Արաբկիր<Տարսոն | 1985 | Խրիմյան Ղազարոս | 1911 |
| 49 (179). | 596 | Նոր Զեյթուն<Մարաշ | 1982 | Մոմջյան Արամ | 1909 |
| I. 4. | | | | | |
| 1 (180). | 396 | Նոր Զեյթուն<Զեյթուն | 1983 | Թոզլյան Կարապետ | 1903 |
| 2 (181). | 400 | Նոր Զեյթուն<Զեյթուն | 1983 | Թոզլյան Կարապետ | 1903 |
| 3 (182). | 402 | Նոր Կիլիկիա<Մուսա լեռ | 1985 | Ջիֆթջյան Գեորգ | 1909 |
| 4 (183). | 403 | Արարատյան գ.<Մուսա լեռ | 1984 | Դուդակլյան Դշխուհի | 1934 |
| 5 (184). | 404 | Նոր Արաբկիր<Եդեսիա | 1984 | Արլարուսյան Խորեն | 1893 |
| 6 (185). | 405 | Սարի Թաղ<Հաճըն | 1984 | Մանկրյան Ահարոն | 1903 |
| 7 (186). | 406 | Արարատյան գ.<Հաճըն | 1986 | Սաթամյան Նազենի | 1926 |
| 8 (187). | 407 | Նոր Զեյթուն<Այնթապ | 1987 | Հեքիմյան Գեորգ | 1937 |
| 9 (188). | 408 | Նոր Զեյթուն<Այնթապ | 1987 | Հեքիմյան Գեորգ | 1937 |
| 10 (189). | 409 | Նոր Սեբաստիա<Հասան բեյ | 1980 | Թայմազյան Հովհաննես | 1886 |
| 11 (190). | 410 | Արարատյան գ.<Հաճըն | 1986 | Սաթամյան Նազենի | 1926 |
| 12 (191). | 411 | Սարի Թաղ<Հաճըն | 1983 | Մանկրյան Ահարոն | 1903 |
| 13 (192). | 412 | Արարատյան գ.<Հաճըն | 1986 | Սաթամյան Նազենի | 1926 |
| 14 (193). | 413 | Արարատյան գ.<Հաճըն | 1986 | Սաթամյան Նազենի | 1926 |
| 15 (194). | 414 | Արարատյան գ.<Հաճըն | 1986 | Սաթամյան Նազենի | 1926 |
| 16 (195). | 415 | Արարատյան գ.<Հաճըն | 1986 | Սաթամյան Նազենի | 1926 |
| 17 (196). | 416 | Նոր Արեշ<Ադաբազար | 1989 | Կիրակոսյան Մաննիկ | 1929 |
| 18 (197). | 417 | Նոր Զեյթուն<Զեյթուն | 1983 | Թոզլյան Կարապետ | 1903 |
| I. 5. | | | | | |
| 1 (198). | 597 | Նոր Զեյթուն<Զեյթուն | 1983 | Թոզլյան Կարապետ | 1903 |
| 2 (199). | 601 | Նոր Մալաթիա<Քեսաբ | 1986 | Քիթաբըըղյան Փանոս | 1912 |
| 3 (200). | 602 | Սան Ֆրանցիսկո<Կ. Պոլիս | 1979 | Ճղաչրաքյան Սիրարփի | 1909 |
| 4 (201). | 603 | Այգեստան<Սիս | 1979 | Աչապահյան Անահիտ | 1920 |
| 5 (202). | 604 | Նոր Կիլիկիա<Մուսա լեռ | 1986 | Ջիֆթջյան Գեորգ | 1909 |
| 6 (203). | 605 | Վանաձոր<Քեսաբ | 1987 | Ղարագյոզյան Վարդան | 1916 |
| 7 (204). | 606 | Լոս Անջելես<Դյորտյոլ | 1989 | Տեր-Պողոսյան Հակոբ | 1925 |
| 8 (205). | 607 | Շենգավիթ<Նիղդե | 1978 | Տեր-Եղիշյան Թագուհի | 1926 |
| 9 (206). | 608 | Արարատյան գ.<Հաճըն | 1982 | Քարամյան Երվանդ | 1903 |
| 10 (207). | 609 | Արարատյան գ.<Բեյլան | 1985 | Գյոզալյան Գեորգ | 1925 |
| 11 (208). | 610 | Նոր Արաբկիր<Ադանա | 1988 | Հաճյան Աննիկ | 1910 |
| 12 (209). | 611 | Նոր Զեյթուն<Այնթապ | 1985 | Հեքիմյան Գեորգ | 1937 |
| II. | | | | | |
| 1 (210). | 94 | Շենգավիթ<Չանաքկալե | 1979 | Ջուլալյան Գեորգ | 1907 |
| 2 (211). | 87 | Նոր Զեյթուն<Զեյթուն | 1983 | Թոզլյան Կարապետ | 1903 |
| 3 (212). | 95 | Նոր Կիլիկիա<Այնթապ | 1987 | Քարամանուկյան Կարապետ | 1907 |
| 4 (213). | 97 | Նոր Խարբերդ<Խարբերդ | 1985 | Թուրուշիկյան Գարեգին | 1903 |
| 5 (214). | 98 | Նոր Զեյթուն<Այնթապ | 1985 | Քյուրքչյան Նուրիցա | 1903 |
| 6 (215). | 99 | Նոր Կիլիկիա<Մուսա լեռ | 1985 | Ջիֆթջյան Գեորգ | 1909 |
| 7 (216). | 100 | Նոր Կիլիկիա<Մուսա լեռ | 1985 | Ջիֆթջյան Գեորգ | 1909 |
| III. | | | | | |
| 1 (217). | 1392 | Նոր Զեյթուն<Զեյթուն | 1983 | Բշտիկյան Հովսեփ | 1903 |
| 2 (218). | 1393 | Նոր Զեյթուն<Զեյթուն | 1983 | Թոզլյան Կարապետ | 1903 |
| 3 (219). | 1394 | Նոր Զեյթուն<Զեյթուն | 1983 | Ջուլյան Եվա | 1903 |
| 4 (220). | 1395 | Նոր Զեյթուն<Զեյթուն | 1978 | Գայրակյան Սեդրակ | 1903 |
| 5 (221). | 1396 | Նոր Զեյթուն<Զեյթուն | 1978 | Ատուրյան Գայանե | 1909 |
| 6 (222). | 1397 | Նոր Մալաթիա<Մուսա լեռ | 1989 | Փանոսյան Մովսես | 1885 |
| 7 (223). | 1398 | Էջմիածին<Մուսա լեռ | 1958 | Բալաբանյան Մովսես | 1891 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 8 (224). | 1399 | Կումայրի<Մուսա լեռ | 1988 | Իփրեչյան Հովհաննես | 1896 |
| 9 (225). | 1400 | Նոր Կիլիկիա<Մուսա լեռ | 1976 | Գյոզալյան Գրիգոր | 1903 |
| 10 (226). | 1401 | Մուսա լեռ<Մուսա լեռ | 1975 | Ադամյան Սարգիս | 1906 |
| 11 (227). | 1402 | Նոր Մալաթիա<Մուսա լեռ | 1984 | Բաղդիշյան Մարիամ | 1909 |
| 12 (228). | 1403 | Էջմիածին<Մուսա լեռ | 1986 | Բալաբանյան Արտաշես | 1926 |
| 13 (299). | 1404 | Նոր Մալաթիա<Քեսաբ | 1973 | Արեւյան Հովհաննես | 1903 |
| 14 (230). | 1405 | Էջմիածին<Քեսաբ | 1977 | Բոյնմշակյան Հովհաննես | 1906 |
| 15 (231). | 1406 | Էջմիածին<Բեյլան | 1977 | Գյոզալյան Սիրվարդ | 1906 |
| 16 (232). | 1407 | Արարատյան գ.<Բեյլան | 1985 | Գյոզալյան Գևորգ | 1925 |
| 17 (233). | 1408 | Նոր Մալաթիա<Ադանա | 1985 | Մակարյան Սրբուհի | 1903 |
| 18 (234). | 1409 | Նոր Արաբկիր<Ադանա | 1975 | Քեշիշյան Միքայել | 1904 |
| 19 (235). | 1410 | Նոր Արաբկիր<Ցրնդրչագ | 1985 | Ալբոյաջյան Հարություն | 1904 |
| 20 (236). | 1411 | Էջմիածին<Դյորտյոլ | 1980 | Վարդանյան Հարություն | 1887 |
| 21 (237). | 1412 | Նոր Մարաշ<Դյորտյոլ | 1989 | Խալբուրջյան Մարիամ | 1909 |
| 22 (238). | 1413 | Էջմիածին<Դյորտյոլ | 1980 | Տեր-Սահակյան Գևորգ | 1909 |
| 23 (239). | 1414 | Շենգավիթ<Մարաշ | 1974 | Մալիկյան Վերգինե | 1898 |
| 24 (240). | 1415 | Նոր Զեյթուն<Մարաշ | 1974 | Հալաջյան Մաքրուհի | 1900 |
| 25 (241). | 1416 | Նոր Զեյթուն<Մարաշ | 1989 | Մոմջյան Արամ | 1909 |
| 26 (242). | 1417 | Սարի թաղ<Հաճըն | 1983 | Մանկրյան Ահարոն | 1903 |
| 27 (243). | 1418 | Արարատյան գ.<Հաճըն | 1986 | Սաթամյան Նազենի | 1926 |
| 28 (244). | 1419 | Նոր Արաբկիր<Այնթապ | 1980 | Ջրջյան Հակոբ | 1900 |
| 29 (245). | 1420 | Նոր Զեյթուն<Այնթապ | 1987 | Քյուրքչյան Նուրիցա | 1903 |
| 30 (246). | 1421 | Նոր Զեյթուն<Այնթապ | 1987 | Հեքիմյան Գևորգ | 1937 |
| 31 (247). | 1422 | Նոր Արաբկիր<Եդեսիա | 1987 | Աբլաբուտյան Խորեն | 1893 |
| 32 (248). | 1423 | Նոր Արաբկիր<Եդեսիա | 1987 | Աբլաբուտյան Նվարդ | 1903 |
| 33 (249). | 1424 | Այգեստան<Եդեսիա | 1987 | Տեր-Պետրոսյան Հայկանուշ | 1910 |
| 34 (250). | 1425 | Նոր Կիլիկիա<Մերսին | 1980 | Եթեննեկյան Սողոմոն | 1900 |
| 35 (251). | 1426 | Լոս Անջելես<Տիգրանակերտ | 1979 | Քյոռօղլյան Հովհաննես | 1904 |
| 36 (252). | 1427 | Շենգավիթ<Տիգրանակերտ | 1990 | Մկրտչյան Կարապետ | 1910 |
| 37 (253). | 1428 | Լոս Անջելես<Բիթլիս | 1989 | Անտոնյան Թագուհի | 1900 |
| 38 (254). | 1429 | Սարի թաղ<Ադիյաման | 1973 | Քարաջյան Մարիամ | 1903 |
| 39 (255). | 1430 | Վարդաշեն<Էրզրում | 1983 | Տեր-Մկրտչյան Մարիամ | 1903 |
| 40 (256). | 1431 | Նոր Մալաթիա<Մալաթիա | 1980 | Թաշճյան Արշալույս | 1908 |
| 41 (257). | 1432 | Նոր Մալաթիա<Մալաթիա | 1980 | Էքիզյան Գրիգոր | 1921 |
| 42 (258). | 1433 | Սարի թաղ<Խարբերդ | 1971 | Աճեմյան Հայկազ | 1892 |
| 43 (259). | 1434 | Նոր Մարաշ<Խարբերդ | 1985 | Մուրադյան Թրվանդա | 1905 |
| 44 (260). | 1435 | Սարի թաղ<Խարբերդ | 1978 | Անտոնյան Եղսա | 1910 |
| 45 (261). | 1436 | Նոր Խարբերդ<Քղի | 1985 | Թուրուշիկյան Գարեգին | 1903 |
| 46 (262). | 1437 | Նոր Մարաշ<Բալու | 1983 | Դանիելյան Կիրակոս | 1923 |
| 47 (263). | 1438 | Նոր Արաբկիր<Արաբկիր | 1977 | Կիկիշյան Պողոս | 1906 |
| 48 (264). | 1439 | Նոր Մարաշ<Յոզղատ | 1978 | Պետրոսյան Արշակուհի | 1903 |
| 49 (265). | 1440 | Նոր Արաբկիր<Կեսարիա | 1988 | Երկաթ Պայծառ | 1897 |
| 50 (266). | 1441 | Նոր Արեշ<Կեսարիա | 1986 | Սվաճյան Արսեն | 1901 |
| 51 (267). | 1442 | Էջմիածին<Շապին-Գարահիսար | 1978 | Խաչատրյան Մկրտիչ | 1907 |
| 52 (268). | 1443 | Սարի թաղ<Կ. Պոլիս | 1978 | Թերզյան Հակոբ | 1910 |
| 53 (269). | 1444 | Նոր Զեյթուն<Թոխատ | 1972 | Մարիկյան Աննիկ | 1892 |
| 54 (270). | 1445 | Նոր Սեբաստիա<Սեբաստիա | 1982 | Սարգսյան Սուրեն | 1902 |
| 55 (271). | 1446 | Նոր Արեշ<Սեբաստիա | 1988 | Խանզադյան Մելինե | 1908 |
| 56 (272). | 1447 | Նյու Յորք<Սեբաստիա | 1979 | Օնբաշյան Արաքսի | 1909 |
| 57 (273). | 1448 | Նոր Բութանիա<Էսքիշեհիր | 1979 | Պարոնյան Հովհաննես | 1890 |
| 58 (274). | 1449 | Նոր Բութանիա<Էսքիշեհիր | 1980 | Գավգավյան Եղիսաբեթ | 1900 |
| 59 (275). | 1450 | Նոր Բութանիա<Էսքիշեհիր | 1980 | Փաթըրյան Սամվել | 1900 |
| 60 (276). | 1451 | Նոր Բութանիա<Էսքիշեհիր | 1988 | Բերբերյան Սառա | 1905 |
| 61 (277). | 1452 | Նոր Բութանիա<Էսքիշեհիր | 1988 | Բուրսալյան Ֆարնըմ | 1908 |
| 62 (278). | 1453 | Շենգավիթ<Կոնիա | 1970 | Եղյայան Կարապետ | 1898 |
| 63 (279). | 1454 | Հրազդան<Կոնիա | 1985 | Գույումջյան Սաթենիկ | 1902 |
| 64 (280). | 1455 | Նոր Կիլիկիա<Աֆիոն-Գարահիսար | 1990 | Բարթիկյան Արփինե | 1903 |
| 65 (281). | 1456 | Այգեստան<Աֆիոն-Գարահիսար | 1989 | Բերբերյան Սմբուլ | 1909 |
| 66 (282). | 1457 | Երևան<Ադաբազար | 1988 | Ազարյան Հայկուհի | 1908 |
| 67 (283). | 1458 | Սարի թաղ<Բիլեջիկ | 1970 | Թերզյան Մելինե | 1905 |
| 68 (284). | 1459 | Այգեստան<Բուրսա | 1972 | Սրապյան Անժել | 1905 |
| 69 (285). | 1460 | Նոր Բութանիա<Նիկոմիդիա | 1982 | Սիլյան Բարուհի | 1900 |
| 70 (286). | 1461 | Շենգավիթ<Ջանաքկալե | 1980 | Ջուլալյան Գևորգ | 1907 |

# ГЕНОЦИД
## УСТНЫЕ СВИДЕТЕЛЬСТВА ЗАПАДНЫХ АРМЯН

## ВЕРЖИНЕ СВАЗЛЯН

### Резюме

За последние годы еще более возрос интерес к сыгравшим роковую роль в истории армянского народа событиям Геноцида, поскольку турецкая историография упорно искажает достоверные исторические события. В этом смысле, кроме опубликованных официальных документов, важный историко-фактологический интерес представляют также создававшиеся под непосредственным впечатлением названных событий народные песни и воспоминания, которые до сих пор у нас не были записаны и исследованы.

После Геноцида армян 1915 года, депортации из Киликии (1921 г.) и бедствия Измира (1922 г.), когда армяне Западной Армении, Киликии и Анатолии понесли около двух миллионов жертв, чудом уцелевшие, оставшиеся без дома и Родины вынужденно расселились в различных странах мира, создав Армянскую Диаспору как историческое явление.

После долгих странствий и скитаний многие из них репатриировали в Советскую Армению, поселившись во вновь отстроенных селениях, которые символизировали их былую колыбель.

Настоящий сборник включает воспоминания (мемораты) и народные песни исторического характера (армянские и туркоязычные), которые мы стали записывать начиная с 1950-ых годов в Армении и, частично, в Диаспоре, переданные нам депортированными из Западной Армении, Киликии и заселенных армянами губерний Анатолии чудом спасшихся от Геноцида свидетелей-очевидцев, представителей старшего поколения репатриантов.

Эти народоведческие материалы правдиво отображают организованные младотурkским и кемалистским правительствами воинские призывы, военные сборы, массовые высылки и бойни армян, а также вспыхнувшие в эти трагические дни героические самооборонительные сражения Вана, Сасуна, Муша, Шатаха, Шапин—Гараисара, Зейтуна, Муса Дага, Урфы и других мест, позднее (1920—1921 гг.) — Айнтапа и Аджна.

Хотя и освободительные движения были подавлены турецким самодержавием, самоотверженные герои, которые боролись за свои элементарные человеческие права и физическое существование нации, оставили блестящий след в истории армянской национально-освободительной борьбы.

В процессе записи материалов мы старались быть верны устной речи наших 230 информаторов, их языковым и диалектологическим особенностям; необходимые сведения даны отдельными примечаниями.

Помимо народоведческих материалов, сборник включает научное введение, где параллельно с историческими событиями исследованы записанные устные народные материалы, оригиналы и записи которых хранятся в Фонде Вержине Свазлян Фольклорного архива Института археологии и этнографии НАН Республики Армения.

Сборник имеет словарь диалектологических и иноязычных слов, карту, исторические снимки о Геноциде, нотированные песни, сведения об информаторах и их фотографии.

В течение десятилетий, слово за словом, фрагмент за фрагментом записанные и представленные данным томом устные народные материалы своей самобытностью и историко-познавательной ценностью становятся достоверными, фактологическими, документальными свидетельствами, простым народным языком отображающими события Геноцида армян.

**GENOCIDE**
**ORAL EVIDENCES OF WESTERN ARMENIANS**

**VERJINE SVAZLIAN**

## Summary

Recently, the interest around the Armenian nation's fatal Genocide increased, as far as the Turkish historiography obstinate to distort the reliable historical events. In a sense, except of the official published documents, the folk songs and memoires, created directly under the impression of the events mentioned above, have an exceptional historico-factual importance and were not inscribed and researched in Armenia until now.

After the Genocide of the Armenians in 1915, the deportation from Cilicia (1921) and the disaster of Ismir (1922), the Western Armenians lost about two million victims. The rest, which escaped and survived by miracle, remained homeless and unmotherland. So they were obliged to settle in different countries of the world, creating the Armenian Diaspora as a historical phenomenon.

After long wanderings, most of them repatriated to Soviet Armenia and settled in new localities which symbolized their past cradle.

This collection includes memoires and folk songs of historical character (in Armenian and Turkish languages), which, since 1950s, we have inscribed in Armenia and partly in the Diaspora, created by the Armenians deported from Western Armenia, Cilicia and the localities of Anatolia, who reproduced the eldest gerenation of eye-witness repatriants, salved by miracle from the Genocide.

These factual documents really reflect the military muster, the mass exile, massacre and slaughter organized by the Young Turks and Kemalists, also the heroique self defence and the overwhelms of Van, Sasoun, Moush, Shatakh, Shapin-Garahisar, Zeytoun, Moussa Dagh, Ourfa and other places, later in 1920—21 Ayntap, Hadjn.

In spite the movements were crushed by the Turkish autocracy, the fearless heroes, who struggled for their elementary rights and physical resistance of their nation, left a bright sign in the history of the national liberation struggle.

In the process of noting the materials we tried to be faithful to the oral speach of 230 narrators, to the specific dialogue of their languages. Some interpretations are given by special foot-notes.

Besides the folk materials, the collection includes a scientific introduction, where parallel to the historical events we researched the inscribed folk materials, the original texts and notes of which are kept in the fund of the folk-lore archive Verjine Svazlian at the Institute of Archaeology and Ethnography of Armenia's National Academy of Sciences.

The collection has a vocabulary of foreign words and dialects, foot-notes, a map, songs accompained by musical notes, historical photoes, informations about the narrators and their photographs.

In the course of tens of years period word by word, fragment by fragment the inscribed and presented oral materials, because of their original and valuable historical cognition remain reliable, factological and documental evidences,reflecting by a simple folk language the events of the Armenian Genocide.

# GENOCIDE
## TÉMOIGNAGES ORAUX DES ARMENIENS OCCIDENTAUX

### VERJINÉ SVAZLIAN


**Résumé**

Ces dernières années, l'intérêt ne cesse de grandir à l'égard des événements du Génocide ayant joué un rôle fatal dans l'histoire du peuple arménien, car l'historiographie turque altère obstinément les faits historiques dignes de foi. Dans cette optique, outre les documents officiels publiés, une grande valeur historique et factologique s'attache aux chants folkloriques et commémoratifs, composés sous l'impression immédiate des événements mentionnés, qui n'ont jamais encore été enregistrés ni étudiés chez nous.

Après le Génocide de 1915, la désertion de la Cilicie par les Arméniens (1921) et la catastrophe de Smyrne (1922), lorsqu'on compte près de 2 millions de victimes parmi les Arméniens d'Arménie Occidentale, de Cilicie et d'Anatolie, ceux qui échappent par miracle au massacre, restés sans abri et sans patrie, sont contraints à se disperser à travers le monde en créant la Diaspora Arménienne en tant que phénomène historique.

Après de longues errances, nombre de ces Arméniens se rapatrient en Arménie Soviétique et s'installent dans les localités nouvellement construites qui portent le nom de leur pays d'origine.

Le présent recueil inclut les oeuvres commémoratives et les chants folkloriques de caractère historique (en arménien et en turc), composés par les Arméniens déportés d'Arménie Occidentale, d'Arménie Cilicienne et des provinces peuplées d'Arméniens d'Anatolie, représentants de la génération aînée des rapatriés, témoins oculaires sauvés par miracle du Génocide, que nous avons enregistrés à partir des années 1950 en Arménie et partiellement dans la Diaspora.

Ces documents factologiques sont des témoignages authentiques des recrutements de soldats, des rassemblements militaires, des déportations en masse et des massacres organisés par les gouvernements des Jeunes Turcs et de Kémal pacha, ainsi que des héroïques batailles d'autodéfense livrées en ces jours tragiques par les Arméniens de Van, Sassoun, Mouch, Chatakh, Chapin-Garahissar, Zeytoun, Moussa Dagh, Ourfa et d'autres lieux, de même que plus tard (1920—1921) par ceux d'Ayntap et de Hadjen.

Bien que ces mouvements de libération nationale aient été écrasés par l'autocratie turque, les courageux héros ayant combattu pour les droits élémentaires de l'homme et l'existence physique de la nation ont brillé d'un éclat sans pareil dans l'histoire de la lutte de libération nationale du peuple arménien.

En enregistrant ces sujets, nous avons tâché de rester fidèle au langage oral de nos 230 narrateurs et à ses particularités linguistiques et dialectales; les renseignements indispensables sont donnés en annotations.

Outre les sujets ethnographiques, le recueil inclut une introduction scientifique où, parallèlement aux événements historiques, les sujets folkloriques oraux enregistrés sont analysés. Les originaux et leurs enregistrements sont conservés aux Archives folkloriques de l'Institut d'Archéologie et d'Ethnographie de l'Académie Nationale des Sciences d'Arménie, fonds Verjiné Svazlian.

Le recueil est muni d'un dictionnaire de mots dialectaux et étrangers, de commentaires, d'une carte, des photographies historiques, de notations des chants, de renseignements sur les narrateurs et de leurs photographies.

Le folklore oral enregistré au cours de plusieurs décennies mot par mot, phrase par phrase, et présenté dans ce recueil est d'une originalité et d'une valeur historique telles qu'il en devient un témoignage factologique et documentaire digne de foi, exprimant en simple langage populaire les événements du Génocide des Arméniens.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Խմբագրի կողմից . . . . . . . . . . . . . . ?

Ներածություն . . . . . . . . . . . . . . . 7

Պատմաբանագիտական ակնարկ . . . . . . . . . . 11


## I. ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԳԵՐ

### 1. Զորահավաքի, զինահավաքի և բանտարկյալի երգեր


1 (1). Զինվորի հրաժեշտը . . . . . . . . . . 27

2 (2). Մնա՛ս բարյավ, քա՛ղցր մայրիկ . . . . . . . . 27

3 (3). Ահա կերթամ, սիրելի՜ մայր . . . . . . . . . 27

4 (4). Սև ծովին վրա, մայրի՛կ . . . . . . . . . . . 27

5 (5). Մամի հավասը . . . . . . . . . . . . 28

6 (6). Թուրքի բանակ երթալու եմ . . . . . . . . . . 28

7 (7). Անա՛, օյանդըր բէնի, գիդէիմ թառալիմէ . . . . . . . 28

8 (8).—19 (19).— Ասքյարըն ավաշլարը . . . . . . . . 28

20 (20). Օլան գյավո՛ւր, դողրու սöյլէ . . . . . . . . 30

21 (21). Փրկիչին յօլլարը . . . . . . . . . . . 31

22 (22). Բանտարկյալի երգ . . . . . . . . . . . 31

23 (23). Բանտիս դռներն էին յոթը քարերով . . . . . . . 31

24 (24). Ղասաբ Միսաք . . . . . . . . . . . . 32

25 (25). Հանիյադա բէնիմ դուզ-էքմէկին յէյէնլէր . . . . . . 32

26 (26). Էֆէ Թօրօս . . . . . . . . . . . . . 33


### 2. Տեղահանության ու կոտորածի երգեր


1 (27). Օյա՛ն, Սուլթան Համի՛դ, օյա՛ն . . . . . . . . . 35

2 (28). Փադիշահ օթուրմուշ թախդընդան բաքար . . . . . . . 35

3 (29). Ղըյմա Ադանա . . . . . . . . . . . 35

4 (30). Ադանայի կոտորածը . . . . . . . . . . 36

5 (31). Ադանայի ողբը . . . . . . . . . . . . 36

6 (32). Վա՜յ, ամա՜ն . . . . . . . . . . . 36

7 (33). Հալածված ենք Հայաստանի լեռներեն . . . . . . . 37

8 (34). Բլբուլն ալ կկանչե. գարո՛ւն է, գարո՛ւն . . . . . . 37

9 (35). Դեր Զոր կերթանք շարվե շարան . . . . . . . . 37

10 (36). Սüրգüնըն բայրաղը ալդը . . . . . . . . . 38

11 (37)—78 (104). Դէր Զօր չöլլէրդա . . . . . . . . 38

79 (105)—93 (119). Սüրգüնըն ավազլարը . . . . . . . 48

94 (120). Էրմէնինին քադէրը . . . . . . . . . . 51

95 (121). Մուրադըն չէվրիսը . . . . . . . . . . 51

96 (122). Մարաշըն էրմէնիլէրի քöմüլդիլէր . . . . . . . 51

97 (123). Յազըխլա՛ր օլդու էրմէնիլէրը . . . . . . . . 52

98 (124). Շիմդիգ Ադանայա գէթմէլի դէյիլ . . . . . . . 52

99 (125). Գիդէրիմ էլինիզդէն . . . . . . . . . 53

100 (126). Նէլէ՛ր գէլդի էրմէնինին բաշընա . . . . . . . . . . . 53

101 (127). Ասլան բեկը վառեցավ . . . . . . . . . . 53

102 (128). Իզմիրըն զուլումը . . . . . . . . . . 53

103 (129). Իզմիրի աղետը . . . . . . . . . . . . 54

104 (130). Սապես ցրվանք ամե՛ն կողմ . . . . . . . . . 54


### 3. Որբեվայրույս մայրերի, որբի և որբանոցի երգեր


1 (131). Մուսան փախցրեց Շահնիկին . . . . . . . . . 55

2 (132). Մուսա-շուն տարավ հայոց Գյուլիզար . . . . . . . 55

3 (133). Առևանգված Գայծառիկը . . . . . . . . . 55

4 (134). Թուրքերը տարել են, որդի՛ս, հայոց կույսերը . . . . . . 55

5 (135). Համբարձումին վերջին խոսքը . . . 56
6 (136). Ես իմ յավրուիս կարո՜տ եմ, կարո՜տ . . . 56
7 (137). Քառսուն Մանկան քարերը . . . 56
8 (138). Ուրֆանըն էթրաֆը դումանլը դաղլար . . . 56
9 (139). Էրմէնի քըզլար ալդըլար, քաշըրդըլար . . . 57
10 (140). Իթիրմիշըմ մայրիկըմ . . . 57
11 (141). Էրմէնի քըզլար սէչիբ ալըներ . . . 57
12 (142). Էրմէնի գէլիյօր էլլէրի բաղլա . . . 57
13 (143). Քըզլար աղլըյօր՝ նամուսըմ դէյի . . . 58
14 (144). Դուշդիմ յէր զուրբէթդէ, մայրի՜կ . . . 58
15 (145). Էրմէնի քըզլար շադըրդան բաքար . . . 58
16 (146). Շու դաղըն արդընա էրմէնի քըզը վար . . . 58
17 (147). Շու դաղըն արդընա էրմէնի քըզը վար . . . 58
18 (148). Շու դաղըն բաշընդա բիր քուզու մէլէր . . . 58
19 (149). Նէլէ՜ր գէլդի էրմէնինին բաշընա . . . 58
20 (150). Նէ՛ անամ վար, նէ՛ բաբամ, նէ՛ քարդաշ . . . 59
21 (151). Գիդէն, գիդէն, էրմէնի քըզլա՜ր . . . 59
22 (152). Թուրք չաուշ ինան էրմէնի քըզը . . . 59
23 (153). Մուհաջըր քըզը . . . 59
24 (154). Առավոտուն կելամ, աչքս չի բացվիր . . . 60
25 (155). Երկու ճյուղի արանքում եմ մնացեր . . . 60
26 (156). Մորմեն ալ կզատեն քյորփե գառները . . . 60
27 (157). Դալղա-դալղա կընե Պոլիսա ծովը . . . 60
28 (158). Ցալաքը բաժանեց. զատվիլ չուզեցինք . . . 60
29 (159). Ամա՜ն, քույրի՜կ, ո՞ւր էրթանք . . . 60
30 (160). Թուրքին խոսքով, անոր զոռով . . . 60
31 (161). Ճամփա տվեք, Տավրոսի՜ լեռներ . . . 60
32 (162). Ճամփա տվեք, Գյավուրի՜ լեռներ . . . 60
33 (163). Ա՜խ, իմ սև բախտ . . . 60
34 (164). Որբը ուր կերթա, դուռը կդոցեն . . . 60
35 (165). Ես աս աշխարհ էկա. հե՜չ չխնդացի . . . 60
36 (166). Գեր ոչիլներ, նիհար ոչիլներ . . . 60
37 (167). Գլուխդ կոտրի, Քեմա՜լ փաշա, հողը մտնաս դուն . . . 60
38 (168). Ես որբ տղեկմ եմ անհայր ու անմայր . . . 60
39 (169). Որբանոցին ճամփան քարոտ է, քարոտ . . . 61
40 (170). Որբանոցին բակերը քարոտ են, քարոտ . . . 61
41 (171). Որբանոցին վրայեն սև ղուշ մը անցավ . . . 61
42 (172). Փարլիկային շեմիկը տաշած է, տաշած . . . 61
43 (173). Որբ հարսին հրաժեշտը . . . 61
44 (174). Ելե՛ք, ելե՛ք, հա՜յ որբեր . . . 62
45 (175). Մենք՝ Ջիբեյլի ազնիվ սաներ . . . 62
46 (176). Արմաշի հայ որբերը . . . 62
47 (177). Բեշկիթաշի որբանոցը . . . 62
48 (178). Անթիլիասի որբերն ենք մենք . . . 62
49 (179). Մեր շա՜տ սիրելի, գեղեցիկ Անթիլիաս . . . 62

## 4. Հայրենասիրական և հերոսամարտերի երգեր ու վիպերգեր

1 (180). Դուշման գօկօ, զէյթունցիդա՞ք . . . 63
2 (181). Զէյթունցա՜ ինք, զէյթունցա՜ . . . 63
3 (182). Մենք մուսալեռցի հայ կտրիճներ ենք . . . 64
4 (183). Մեր մուսալեռցիք լրիվ հերոս են . . . 64
5 (184). Ուրֆանըն իգիթլարը . . . 65
6 (185). Հաճըն էլի բաշ քալդըրմըշ . . . 65
7 (186). Հաճընըն ասլանլարը . . . 65
8 (187). Ադուր փաշա . . . 66

9 (188). Ճաշա՜, Մանուկ շաուշ . . . . . . . . . . 67
10 (189). Թոփալ Հագոփին իգիթլըխը . . . . . . . . . 67
11 (190). Հաճընըն քահրիմանլարը . . . . . . . . . . 67
12 (191). Դօղան բէյ իլան Արամ շաուշ . . . . . . . . 68
13 (192). Հաճընցի Մուրադը . . . . . . . . . . 68
14 (193). Քաջերն ահա շարան-շարան . . . . . . . . . 69
15 (194). Օդանավն էկավ մեծ հավետիսով . . . . . . . . . 69
16 (195). Ո՜վ, հաճընցի քաջ պատանի . . . . . . . . . 69
17 (196). Ա՜խ, Հայրենիք . . . . . . . . . . . 70
18 (197). Միացե՛ք, հայե՜ր, միացե՛ք . . . . . . . . . 70

## 5. Հայրենաբաղձ երգեր

1 (198). Ցանկամ տեսնել իմ Կիլիկիան . . . . . . . . . 71
2 (199). Մեր Քեսաբը . . . . . . . . . . . . 71
3 (200). Հայրենի տուն . . . . . . . . . . . 71
4 (201). Ներգաղթի լուրը . . . . . . . . . . . . 72
5 (202). Երևան երթալ կուզեմ . . . . . . . . . . 72
6 (203). Հայաստան երթալու եմ . . . . . . . . . . 72
7 (204). Հայաստան երթալ կուզեմ . . . . . . . . . 72
8 (205). Հե՜յ ջան, Երևան . . . . . . . . . . . 72
9 (206). Հայաստանըն դէմթանը . . . . . . . . . . 72
10 (207). Հայի երկիր, հայի հող . . . . . . . . . . 73
11 (208). Ա՜յ, քարավան, ջա՜ն քարավան . . . . . . . . 73
12 (209). Մերն է Կարսն ու Ղարաբաղ . . . . . . . . 73

## II. ՊԱՏՄԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ

1 (210). Թուրքիայի հայերը և գազազ Արթին ամիյան . . . . . . 77
2 (211). 1909 թվի Կիլիկիայի կոտորածը . . . . . . . . 79
3 (212). 1915 թվի ջարդի մահանան . . . . . . . . . 79
4 (213). Քղեցի Տիրուհին . . . . . . . . . . 79
5 (214). Փառանձեմին վրեժը . . . . . . . . . . 80
6 (215). Քեսաբցի Վիկտորը . . . . . . . . . . 81
7 (216). Հայուն ճակատագիրը . . . . . . . . . . . 82

## III. ՄԵԾ ԵՂԵՌՆԻՑ ՎԵՐԱՊՐԱԾՆԵՐԻ ՀՈՒՇԵՐ

1 (217). Զեյթունցի Բշտիկյան Հովսեփի պատմածը . . . . . . . 87
2 (218). Զեյթունցի Թոզլյան Կարապետի պատմածը . . . . . . 94
3 (219). Զեյթունցի Զուլյան Եվայի պատմածը . . . . . . . 99
4 (220). Զեյթունցի Գայբակյան Սեդրակի պատմածը . . . . . . 100
5 (221). Զեյթունցի Աստուրյան Գայանեի պատմածը . . . . . . 100
6 (222). Մուսալեռցի Փանոսյան Մովսեսի պատմածը . . . . . . 102
7 (223). Մուսալեռցի Բալաբանյան Մովսեսի պատմածը . . . . . 105
8 (224). Մուսալեռցի Իփրեջյան Հովհաննեսի պատմածը . . . . . 106
9 (225). Մուսալեռցի Գյոզալյան Գրիգորի պատմածը . . . . . . 108
10 (226). Մուսալեռցի Աղամյան Սարգսի պատմածը . . . . . . 122
11 (227). Մուսալեռցի Բաղդիշյան Մարիամի պատմածը . . . . . 123
12 (228). Մուսալեռցի Բալաբանյան Արտաշեսի պատմածը . . . . . 124
13 (229). Քեսաբցի Աբելյան Հովհաննեսի պատմածը . . . . . . 126
14 (230). Քեսաբցի Բոյնմշակյան Հովհաննեսի պատմածը . . . . . 128
15 (231). Բեյլանցի Գյոզալյան Սիռվարդի պատմածը . . . . . . 131
16 (232). Բեյլանցի Գյոզալյան Գևորգի պատմածը . . . . . . 131
17 (233). Ադանացի Մակարյան Սրբուհու պատմածը . . . . . . 132
18 (234). Ադանացի Քեշիշյան Միքայելի պատմածը . . . . . . 132
19 (235). Ֆընդըջագցի Ալբոյաջյան Հարությունի պատմածը . . . . 135
20 (236). Դյորտյոլցի Վարդանյան Հարությունի պատմածը . . . . 137

21 (237). Դյորտյոլցի Խալըուրչյան Մարիի պատմածը . . . . . 139
22 (238). Դյորտյոլցի Տեր-Սահակյան Գևորգի պատմածը . . . . . 140
23 (239). Մարաշցի Մայիկյան Վերգինեի պատմածը . . . . . . 140
24 (240). Մարաշցի Հալաչյան Մաքրուհու պատմածը . . . . . . 142
25 (241). Մարաշցի Մոմչյան Արամի պատմածը . . . . . . . 142
26 (242). Հաճընցի Մանկրյան Ահարոնի պատմածը . . . . . . 143
27 (243). Հաճընցի Սաթամյան Նազենիի պատմածը . . . . . . 143
28 (244). Այնթապցի Ջրչյան Հակոբի պատմածը . . . . . . . 144
29 (245). Այնթապցի Քյուրքչյան Նուրիցայի պատմածը . . . . . 145
30 (246). Այնթապցի Հեքիմյան Գևորգի պատմածը . . . . . . . 145
31 (247). Եդեսիացի Աբլաբուտյան Խորենի պատմածը . . . . . . 146
32 (248). Եդեսիացի Աբլաբուտյան Նվարդի պատմածը . . . . . . 147
33 (249). Եդեսիացի Տեր-Պետրոսյան Հայկուշի պատմածը . . . . . 148
34 (250). Մերսինցի Եթենեկյան Սողոմոնի պատմածը . . . . . . 148
35 (251). Տիգրանակերտցի Քյոռօղլյան Հովհաննեսի պատմածը . . . . 148
36 (252). Տիգրանակերտցի Մկրտչյան Կարապետի պատմածը . . . . 149
37 (253). Բիթլիսցի Անտոնյան Թագուհու պատմածը . . . . . . 152
38 (254). Ադիյամանցի Քարաչյան Մարիամի պատմածը . . . . . 153
39 (255). Էրզրումցի Տեր-Մկրտչյան Մարիամի պատմածը . . . . . 154
40 (256). Մալաթիացի Թաշճյան Արշալույսի պատմածը . . . . . . 154
41 (257). Մալաթիացի. Էքիզյան Գրիգորի պատմածը . . . . . . 155
42 (258). Խարբերդցի Աճեմյան Հայկազի պատմածը . . . . . . 156
43 (259). Խարբերդցի Մուրադյան Թրվանդայի պատմածը . . . . . 158
44 (260). Խարբերդցի Անտոնյան Եղսայի պատմածը . . . . . . 159
45 (261). Քղեցի Թուրուշիկյան Գարեգինի պատմածը . . . . . . 160
46 (262). Բալուցի Դանիելյան Կիրակոսի պատմածը . . . . . . . 161
47 (263). Արաբկիրցի Կիկիշյան Պետրոսի պատմածը . . . . . . . 162
48 (264). Յոզղատցի Պետրոսյան Արշակուհու պատմածը . . . . . . 165
49 (265). Կեսարացի Երկաթ Պայծառի պատմածը . . . . . . . . 168
50 (266). Կեսարացի Սվաճյան Արսենի պատմածը . . . . . . . . 171
51 (267). Շապինգարահիսարցի Խաչատրյան Մկրտիչի պատմածը . . . . 171
52 (268). Շապինգարահիսարցի Թերզյան Հակոբի պատմածը . . . . . 172
53 (269). Թոխաթցի Մարիկյան Աննիկի պատմածը . . . . . . . 173
54 (270). Սեբաստացի Սարգսյան Սուրենի պատմածը . . . . . . . 173
55 (271). Սեբաստացի Խանզադյան Մելինեի պատմածը . . . . . . 184
56 (272). Սեբաստացի Օնբաշյան Արաքսիի պատմածը . . . . . . . 185
57 (273). Էսքիշեհիրցի Պարոնյան Հովհաննեսի պատմածը . . . . . . 186
58 (274). Էսքիշեհիրցի Գավազավյան Եղիսաբեթի պատմածը . . . . . 187
59 (275). Էսքիշեհիրցի Փաթըրյան Սամվելի պատմածը . . . . . . 187
60 (276). Էսքիշեհիրցի Բերբերյան Սառայի պատմածը . . . . . . 189
61 (277). Էսքիշեհիրցի Բուրսալյան Ֆարնըմի պատմածը . . . . . . 189
62 (278). Կոնիացի Եղյայան Կարապետի պատմածը . . . . . . . 190
63 (279). Կոնիացի Գույումչյան Սաթենիկի պատմածը . . . . . . 191
64 (280). Աֆիոնգարահիսարցի Բարթիկյան Արփինեի պատմածը . . . . 192
65 (281). Աֆիոնգարահիսարցի Բերբերյան Սմբյուլի պատմածը . . . . 195
66 (282). Ադաբազարցի Ազարյան Հայկուհու պատմածը . . . . . . 197
67 (283). Բիլեջիկցի Թերզյան Մելինեի պատմածը . . . . . . . 200
68 (284). Բուրսացի Սրապյան Անժելի պատմածը . . . . . . . . 200
69 (285). Նիկոմիդիացի Սիլյան Բարուհու պատմածը . . . . . . . 202
70 (286). Ջանաքկալեցի Զուլալյան Գևորգի պատմածը . . . . . . 202
Պատմաբանագիտական ակնարկում օգտագործված գրականության ցանկ . . . 205
Բառարան . . . . . . . . . . . . 206
Ծանոթագրություններ . . . . . . . . . 213
Резюме . . . . . . . . . . . . 218
Summary . . . . . . . . . . . . 219
Résumé . . . . . . . . . . . . . 220

ՎԵՐԺԻՆԷ ԳԱՌՆԻԿԻ ՍՎԱԶԼՅԱՆ

# ՄԵԾ ԵՂԵՌՆ

## ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՑ ԲԱՆԱՎՈՐ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Հրատ. խմբագիր՝* Լ. Ս. Սարաֆյան
*Տեխն. խմբագիր՝* Լ. Կ. Հարությունյան
*Նկարիչ՝* Վ. Գ. Խախանյան

*Հանձնված է շարվածքի 21.11. 1994 թ.։ Ստորագրված է տպագրության՝ 1.03. 1995 թ.։ Չափսը՝ 60×84 1/8։ Թուղթ՝ № 1։ Տառատեսակը՝ «Գրքի սովորական»։ Տպագրությունը՝ բարձր։ Պայմ. 28,83 մամ., տպագր. 14 մամ.+1 մամ. ներդիր։ Ներկ. մամուլ 28,83։ Հրատ.-հաշվարկ. 25,2 մամուլ։ Տպաքանակ՝ 500։ Պատվեր՝ 613։ Գինը պայմանագրային։*

*ՀՀ ԳԱԱ Հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24գ։*
Издательство НАН РА, 375019, пр. Маршала Баграмяна 24 г.

*ՀՀ Կառավարության առընթեր Հրատարակչական գործերի վարչության № 1 տպարան, Երևան-10, Հանրապետության փող. 65։*

Типография № 1 Управления по издательским делам при Правительстве РА,
Ереван-10, ул. Анрапетутяна, 65

